



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԿՈՐԵԱՆ

ԶԱՍՏՈՒԱԾ ՏԵՍՆԵԼ

ԵՐԵՎԱՆ
2014

ՀՄԴ 23 / 28

ԳՄԴ 86.37

Կազմող՝ Յակոբ Քորթմոսեան

Ձ 370

Խմբագիր՝ Գեորգ Եազըճեան

Զարեհ Արք. Ազնաւորեան

Ձ 370 ՁԱստուած Տեսնել (ժողովածու) / Զարեհ Արք. Ազնաւորեան; կազմող՝ Յակոբ Քորթմոսեան.- Եր.: Հեղինակային հրատարակութիւն, 2014.- 544 էջ:

Ժողովածուն կը մէկտեղէ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի միաբան, Երջանկայիշատակ Զարեհ Արք. Ազնաւորեանի (1947-2004) զանազան բնոյթի գրութիւնները՝ Աստուածաշունչ Մատեանի մեկնութիւն, քրիստոնէական աստուածաբանութիւն, Հայ Եկեղեցւոյ եւ հայոց ազգային խնդիրներ, Մեծ Եղեռն եւ անոր նահատակներու սրբադասում, հայ եկեղեցական երաժշտութիւն, արդի աշխարհի հասարակութիւնը եւ հայութիւնը յուզող այլազան հարցեր եւ այլն:

Ժողովածուն մեծ օգտակարութիւն ունի Հայ Եկեղեցւոյ վերաբերող զանազան երեսներու, հայ եկեղեցական երաժշտութեան ու յարակից մարզերու ուսումնասիրողներուն համար: Հատորը օգտաշատ է նաեւ խորքային քրիստոնէական հաւատք ունեցող կամ անոր փնտռութիւն մէջ եղող ընթերցողներուն:

ՀՄԴ 23 / 28

ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-0-1225-4

© Քորթմոսեան Յակոբ, Եազըճեան Գեորգ
(կազմելու եւ խմբագրելու համար), 2014

Կը նուիրուի

Երանաշնորհ Զարեհ Արք. Ազնաւորեանի

պայծառ յիշատակին՝ վախճանման 10-ամեակին առթիւ

ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՍՈՒՐԲԸ



ԶԱՐԷՀ ԱՐՔ. ԱԶՆԱԲՐԵԱՆ
(1947-2004)

ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

30 Ապրիլ 2004, իր աչքերը այս աշխարհին յաւէտ փակեց եւ հանդերձնալ կեանքին յաւէտ բացաւ յուսահոգի Չարնի Արք. Ազնաւորեանը՝ վերջին հարիւրամնակի Հայ Եկեղեցւոյ մեծագոյն եկեղեցականներէն մէկը:

Ազնաւորեան Սրբազանին շիջումով, Հայ Եկեղեցին հսկայ ոյժ մը կորսնցուց: Արդարեւ, 19 Յունիս 1966-30 Ապրիլ 2004. 38 տարիներու անսակարկ նուիրում եւ ծառայութիւն: 38 տարի՝ նման 38 փայլող յոյսերու, որոնցմէ իրաքանչիւրը իր տնդն ու դերը ունեցաւ Սրբազանի ծառայական կեանքէն ներս: Դարեւմանքի աշակերտութեան տարիներէն արդէն նշմարուած էին պատանի Մինասի մէջ կապուածութիւնն ու ծառայութեան նուիրական ոգին: Իր կուսակրօն քահանայութեան 38 տարիները պիտի գային վկայելու եւ արդարացի հանելու իր ուսուցիչներուն ու դաստիարակներուն կարծիքը իր մասին:

Չարնի Սրբազանը, որպէս արժանաւոր յաջորդը Չարնի Ա. Փայասլեան Երջանկայիշատակ Կաթողիկոսին, իր կեանքով ու ծառայութեամբ եկաւ փաստելու Վեհափառին զգայացունց խօսքերը. «...Անձնական զգացում մըն է այն, գոր կ'ապրիմ ամէն անգամ, որ պատարագիչ կ'ըլլամ եւ Ս. Սեղանին առջեւ կը կանգնիմ Սկիհը ձեռքիս: Կարծէք բոլորովին ուրիշ մէկը կը զգամ, քան այն որ եմ եկեղեցիէն դուրս: Սկիհը անարժանաբար բռնած, կը կարծեմ որ ոչ թէ ես, այլ՝ ուրիշն է բռնած գայն, Մեծն Ներսէսը, Ս. Սահակը, իսկ երէկուան արքեպեպ, Չարնի Վարդապետը, Չարնի Եպիսկոպոսը եւ այսօրուան Չարնի Կաթողիկոսը փոխանորդաբար ներկայ է հոն: Աւելի քան խորհուրդ մըն է այս իրականութիւնը»: Սրբազանը, թէն կաթողիկոս չեղաւ, բայց իր մարդկային կերպարով կաթողիկոսացաւ բոլոր անոնց համար որոնք ճանչցան զինք եւ զգացին անոր մարդասիրութիւնն ու հայրութիւնը: Ոչ միայն Ս. Խորանին վրայ եղաւ փոխանորդը Ս. Սահակի եւ Ս. Ներսէսի, այլեւ գործնական գետնի վրայ ալ փոխանորդ հանդիսացաւ անոնց՝ իրագործելով Նոր Կտակարանի եւ Սաղմոսացի արդի աշխարհաբար թարգմանութիւնը եւ մշակելով շարականներն ու հոգեւոր երգեր: Եւ Երջանկայիշատակ Չարնի Կաթողիկոսին

օրինակով մինչև իր կենսափուլը վերջին վայրկեանը հաւատարիմ մնաց իր Եկեղեցիին ու Ազգին, որոնց ծառայելու յաջողութիւնը գտաւ՝ նախադասելով Աստուծոյ ծառայութիւնը եւ Քրիստոսի հաւատարիմ գինուոր ըլլալն ու Սուրբ Հոգիին առաջնորդութեան ապաւինիլը:

Այս հրատարակութիւնը լուսահոգի Սրբազանին յիշատակը յաւերժականացնելու ճիգ մըն է: Այս հատորին մէջ ամփոփուած գրութիւնները՝ իրենց ամբողջութեամբ, մեր դիմաց կը պարզեն Զարեհ Սրբազանին ամբողջական կերպարը՝ որպէս՝ մարդ, որպէս՝ հոգեւորական, որպէս՝ մեկնաբան, որպէս՝ ազգասէր, որպէս՝ քարոզիչ, որպէս՝ պատմաբան, որպէս՝ շարականագիր, որպէս՝ ուսումնասիրող, որպէս՝ գրող, եւ այլն:

Սոյն ժողովածուին անունը՝ «ԳԱՍՏՈՒԱԾ ՏԵՆՆԵՂ», Սրբազանին մէկ քարոզին վերնագիրն է: Հատորին մէջ տեղ գտած յօդուածներուն մեծամասնութիւնը միեւնոյն նպատակը կը հետապնդեն կարծէք՝ ԳԱՍՏՈՒԱԾ տեսնելու: Հաւատացած եմ, որ լուսահոգի Սրբազանին միակ նպատակակէտն ու տեսլականն ալ այդ եղած է՝ ԳԱՍՏՈՒԱԾ տեսնել, ինչը իր քարոզներուն եւ միւս աշխատութիւններուն մէջ յայտնապէս կը նշմարուի: Սրբազանը կ'ըսէ. «Գերագոյն բաղձանքը, զոր իւրաքանչիւր հաւատացող եւ մանաւանդ խորունկ հաւատացող անհատ կ'ունենայ - տիրանալ սիրտի սրբութեան եւ արժանանալ Աստուծոյ տեսութեան: Եւ Քրիստոս երանի՛ կը կարդայ անոնց, որոնք այդ շնորհքն ընդունելու պատրաստ են, որովհետեւ թոյլոյն տրուած չէ անիկա, այլ՝ անոնց, որոնք աստուածային սիրով ջերմացուցած իրենց հոգին, կը վանեն իրենց սիրտերէն ամէն շարմտածում, ամէն թշնամանք, ամէն թիծ, եւ սիրտի կատարելալ մաքրութեամբ, անկեղծ հաւատքով ու աղօթքով կը նուիրուին Աստուծոյ»:

Երանի՛ կարողանանք հասնիլ այդ պատիւին՝ Աստուծոյ տեսութեան: Ժողովածուն կը պարունակէ քարոզներ, ուսումնասիրութիւններ, խորհրդածութիւններ, գրական մէկ նմոյշ («Աղաւնիին Մահը»՝ յոյս տեսած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի «Գլաճոր» տարեգիրքին մէջ), երիտասարդութեան ուղղուած պատգամներ, Ապրիլեան Նահատակներուն նուիրուած շարական, խմբագրականներ («Գլաճոր» տարեգիրքին), մեկնութիւններ, եւ այլն:

Խունկ եւ աղօթք լուսապայծառ յիշատակիդ՝ ԶԱՐԵՀ ԱՐԵՆՉԵԼԻ ՍՐԲԱԶԱՆ:

Յակոբ Քորթմոսեան

ԶԱՐԵՀ ԱՐԲ. ԱՐԵՆՉԵԼԻ (Կենսագրական գիծեր)

Ա լագանի անունով՝ Մինաս: Ծնած է 1947-ին. Պէյրութ, արաբ-կիրցի ծնողներէ՝ Սարգիս եւ Անժէլ: Նախնական կրթութիւնն ստացած է Ս. Յակոբ Եկեղեցոյ Ազգ. Եփրեմեան վարժարանին մէջ: 1960-ին ընդունուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք, ուր ժառանգաւորաց բաժինը ւարստելով, 23 Յունիս 1963-ին ձեռնադրուած է սարկաւազ, ձեռամբ Երջանկայիշատակ Խորէն Ա. Կաթողիկոսին: Ընծայարանի բաժինը ւարստելով, 19 Յունիս 1966-ին կուսակրօն քահանայ ձեռնադրուած է, ձեռամբ Գարեգին Եպս. Սարգիսեանի, վերակոչուելով Տ. Զարեհ Արեղայ՝ Երանաշնորհ Զարեհ Ա. Կաթողիկոսին ի յիշատակ: Նոյն տարին նշանակուած է Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի դպրապետ եւ Դպրեվանքի հսկիչ: Միաժամանակ դասաւանդած է Կաթողիկոսարանի Մեսրոպեան վարժարանին մէջ: Աշխատակցած է Կաթողիկոսութեան պաշտօնաթերթ «Հասկ» ամսագիրին: 1966-69-ին Դպրեվանքին մէջ վարած է փոխտեսուչի պաշտօն: Նոյն տարիներուն հետեւած է Լիբանանի Պետական Երաժշտանոցէն ներս երաժշտական տեսական եւ գործնական դասերու: Նոյն տարիներուն դասաւանդած է նաեւ Պուրճ Համմուտի Սոֆիա Յակոբեան Ազգային Գոլէճին մէջ:

16 Մարտ 1969-ին, Խորէն Ա. Կաթողիկոսին ձեռամբ մասնաւոր վարդապետութեան աստիճան կը ստանայ: Աւարտաճառին նիւթը եղած է «Ս. Ներսէս Լամբրոնացի. Կենսաբնութիւնը եւ եկեղեցական բարեկարգութիւնը»:

1969-1972-ին ուսանած է Հռոմի Արեւելեան Ուսմանց Հիմնարկին մէջ: Հետեւած է հայրախօսական, աստուածաբանական եւ Եկեղեցոյ պատմութեան նիւթերուն: 1971-ին Պսակաւոր Աստուածաբանութեան տիտղոս ստացած է, իսկ յաջորդ տարին դոկտորայի թեկնածու դարձած:

Անթիլիաս վերադարձին դարձեալ նշանակուած է Դպրեվանքի հսկիչ: Դասաւանդած է հայոց լեզու, վարդապետական աստուածաբանութիւն, Ս. Գրքի մեկնութիւն եւ Նոր Կտակարանի ներածութիւն:

1973-ին երբ Խորէն Կաթողիկոսին նախաձեռնութեամբ Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը կազմուած է, խմբավար Պրն. Գեորգ

Գանտահարեանին հետ միասին խումբի հիմնադիրներէն մէկը հանդիսացած է եւ փոխ-խմբավարի պաշտօնը վարած է մինչեւ իր կիպրոս մեկնիլը:

1975-76-ին վարած է «Հասկ»-ի խմբագրապետի պաշտօնը:

3 Նոյեմբեր 1977-ին կիպրոսի Հայոց Թեմի կաթողիկոսական Փոխանորդ նշանակուած է, իսկ 30 Մայիս 1979-ին կիպրոսի Հայոց Թեմի առաջնորդ ընտրուած է:

17 Մայիս 1980-ին ծայրագոյն վարդապետութեան աստիճան ստացած է ձեռամբ Տ. Արտաւազդ Արք. Թրթռեանի: Յաջորդ օրը կիրակի, 18 Մայիսին նպիսկոպոս օծուած է՝ օժակից ունենալով Տ. Արամ Ծ. վրդ. (ներկայի Մեծի Տանն կիլիկիոյ կաթողիկոս), Տ. Կորիւն Ծ. վրդ. Պապեանը (այժմ Արք., Անթիլիասի Մայրավանք) եւ Տ. Եփրեմ Ծ. վրդ. Թապաք-եանը (այժմ Արք., Ա.Մ.Ն.):

Անթիլիաս վերադարձին զբաղած է գրական եւ ուսումնասիրական աշխատանքներով: Տ. Օշական Արք. Չոլոյեանի եւ վեր. Մանուէլ Ճինպաշեանի հետ երկար տարիներու աշխատանքէ ետք յաջողած է Նոր Կտակարանի եւ Սաղմոսացի արդի աշխարհաբարի թարգմանութիւնը արտոնել եւ հրատարակել: Տակաւին, այդ աշխատանքի կողքին, նշանակուած է Մեծի Տանն կիլիկիոյ կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչ:

1995-ին Երջանկայիշատակ Գարեգին Բ. Սարգիսեան կաթողիկոսը Զարնի Եպիսկոպոսին շնորհած է արքութեան տիտղոս, զոր մերժած է ընդունիլ:

1996-ին, մէկ տարիով ստանձնած է Ճիպէլի «Թռչնոց Բոյն»-ին տեսչութիւնը:

Անթիլիաս վերադառնալէ ետք, իր վարած բոլոր պաշտօններուն կողքին, շարունակած է դասաւանդել Մեծի Տանն կիլիկիոյ կաթողիկոսութեան Դպրեվանքէն ներս, մինչեւ իր անհանգստութեան տարիները: Վախճանած է 30 Ապրիլ 2004-ին:

Սրբազանը ձգած է հոգևոր, թարգմանական, նրաժշտական եւ ուսումնասիրական նիւթերու հարուստ ժառանգութիւն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԳՈՐԾԵՐ

- 1) Պահնցողութիւնը՝ Յաղթանակ Մեղքի (Ժամանակավրէպ Բանե՞ր):
- 2) Մանր Սրբագրութիւններ ԺԵ. Դարու կիլիկիոյ կաթողիկոսաց Ժամանակագրութեան մէջ:

- 3) Դիրին Գրաբար (Ա. դասագիրք):
- 4) Դիրին Գրաբար (Գ. եւ Դ. դասագիրք):
- 5) Ամենասուրբ Երրորդութիւն. Պատասխան Եհովայի վկաներուն:
- 6) Եհովայի վկանե՞ր, Թէ՞ Ստութեան վկաներ:
- 7) Եհովայի վկաներու Այլափոխուած Աստուածաշունչը:
- 8) Իմ Աղօթագիրքս:
- 9) Ուխտաւորին Աղօթագիրքը:
- 10) Կարգ Ժառանգաւորներու Ձեռնադրութեան Ըստ Կարգաւորութեան Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ:
- 11) Կարգ կիսասարկաւագներու եւ Սարկաւագներու Ձեռնադրութեան Ըստ Կարգաւորութեան Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ:
- 12) Օրհնութեան կարգ Եկեղեցւոյ Որմանկարներու եւ Պատկերներու:
- 13) Խորհրդատետր Սրբազան Պատարագի:
- 14) Աղօթք եւ Արարողութիւն Ս. Հռիփսիմեան կոյսերու Տօնին Առիթով:
- 15) Կանոնագլուխք եւ Ալէլուք Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ:
- 16) Կոչումն եւ Օրհնութիւն կրօնաւորուհեաց:
- 17) Կանոն Ձեռնադրութեան եւ Օծման կաթողիկոսի:
- 18) Օրհնութեան կարգ Եկեղեցւոյ Որմանկարներու եւ Պատկերներու Տէրունի եւ Սրբոց:
- 19) Կանոն Սուրբ Միւռնի Օրհնութեան:
- 20) Կանոն Ձեռնադրութեան եւ Օծման Եպիսկոպոսի:
- 21) Կանոն Ձեռնադրութեան Բահանայի եւ Օրհնութեան վնդարի:
- 22) Ժամագիրք Արեւագալի եւ Հսկումի:
- 23) Ինչպէ՞ս կը կատարուի Սրբացումը Հայ Եկեղեցւոյ մէջ:
- 24) Սուրբ Պատարագի Երգեցողութիւն:
- 25) կիլիկիա (Խառն Խումբի Համար):
- 26) Շարական Ապրիլեան Նահատակաց:
- 27) Ալէլուիա:

Հոգելոյս Սրբազանը ունի նաեւ բազմաթիւ եկեղեցագիտական, թարգմանական, ուսումնասիրական, նրաժշտական, աստուածաբանական ու մատենագիտական անտիպ գործեր, որոնք իրենց հրատարակիչը կը սպասեն:

Յիշատակն Արդարոյն՝ օրհնութեամբ նղիցի:

**ԱՄՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ-
ՄԵԿՆՈՂԱԿԱՆ**

ԱՄՏՈՒԾՈՅ ԽՕՍԲԸ
(Աստուածաշունչ Մատնանք)

**ԱՄՏՈՒԱԾԱԵՈՒՆԳԸ ԵՒ ԶԱՅՆ
ԿԱՐԴԱՆՈՒ ԿԵՐԳԵՐԸ**

ԱԻՆՏԱՐԱՆ

ՀԱՅՐ ՄԵՐ

ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻՆՏԱՐԱՆ
(26-28-րդ գլուխներու մեկնութիւն)

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ
(Աստուածաշունչ Մատեանը)

Ներկայ 1982 տարեշրջանը ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻ ՏԱՐԻ յայտարարուած է Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին (Middle East Council of Churches) կողմէ, որուն գործօն անդամն է Հայաստանեայց Առաքելական մեր Եկեղեցին: Այս կապակցութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր կեդրոնին Կաթողիկոսարանին մէջ կարգ մը ձեռնարկներ կազմակերպեց գրով եւ խօսքով Աստուածախունչը վեր առնելու եւ այսօրուան մեր կեանքին մէջ աւելի մօտիկ բերելու համար զայն մեզի:

Մեր կարգին, սոյն ուսումնասիրական ամփոփ պատկերացումով, կ'ուզենք որ մեր Եկեղեցւոյ իւրաքանչիւր գաւակ իրապէս եւ գործնապէս առիթ դարձնէ Աստուածաշունչի Տարին, հոգեշահ քննութեամբ եւ խորհրդածութեամբ խորացնելու համար Աստուծոյ Խօսքին մասին իր ծանօթութիւնները, գիտութեան ծարաւով հասնելու համար հոգիի կենդանարար ակունքին եւ հոգեւոր գիտութեան լոյսը ընպէտ իր ակնաղբիւրէն, ճշմարտութեան եւ արդարութեան քաղցը յագեցնելու համար Աստուծոյ Խօսքի հոգեւոր հացի ճոխ սեղանէն, եւ անով լուսաւորուած ու մխիթարուած, անով կենդանացած ու զօրացած, անով հոգեկերտուած ու վերացած վերածնած հոգիով մեր հայրերուն հետ մենք ալ անշարժ խոստովանութեամբ ըսենք. «Քանզի հայր մեր զսուրբ Աւետարանն գիտենք - Սուրբ Աւետարանը կը ճանչնանք որպէս մեր հայրը» (ԵՂԻՇԷ):

*
* * *

Աստուածաշունչ գիրքը Աստուծոյ Խօսքն է:
Եսայի Մարգարէի գիրքին առաջին գլուխը կը բացուի այս բաներով. «Լսէ՛, ո՛վ երկինք, ականջ դիր, ո՛վ երկիր, որովհետեւ Տէրը կը խօսի» (Ես 1.2): Դարեր եւ դարեր շարունակ այս ծայնը ներշնչեալ

այլ ծայներու հետ միասին հանդիպած է մեր ականջներուն՝ ըսելու համար. «Լսէ՛, ականջ դիր, որովհետեւ Տէրը կը խօսի»: Եւ միշտ հնչած է Տիրոջ Խօսքը, տրուած է Տիրոջ պատգամը, բարձրադաշտակ կրկնուած է Անոր կոչը, ընդերկար արձանագրուած է Անոր խոստումը եւ վերստին մեզի երկարած՝ Անոր հրաւերը: Եւ այսօր, մարգարէական փողը դարձեալ կը հնչէ՝ մեզի յիշեցնելու համար «Տէրը կը խօսի»:

Եկէ՛ք մտածենք, թէ ինչպէս Տէրը կը խօսի մեզի, ինչո՞ւ կը խօսի, եւ ի՞նչ բան ըսելու համար մեզի:

Շատեր թերեւս հարցնեն. «Աստուած կը խօսի՞ արդեօք, կամ երբեւիցէ խօսած է մարդուն»: Ուրիշներու համար թերեւս հարցումը ըլլայ տարբեր, թէ՛ արդեօք Աստուած միայն անցեալի՞ն մէջ կը խօսէր մարդուն եւ միայն անցեալի՞ն համար, թէ՞ նաեւ կը խօսի այսօր, այսօրուան մարդուն, այսօրուան համար:

ՊԱՏԱՍԽԱՆ

Հարցումի մը պատասխանը ոմանց համար կրնայ խնամուած բացատրութիւն մը ըլլայ, ուրիշներու համար՝ գիրի ու գիրքի ճամբով վկայութիւնը, այլոց համար՝ կեանքը եւ անձնական փորձառութիւնը: Հարցը այն է, թէ դուք որ մէկը կ'ուզէք կամ ինչպիսի՞ պատասխան մը կը փնտռէք, որովհետեւ բոլոր պատասխաններն ալ կան, տրուած են եւ կը տրուին ինչպէս պատմութեան մէջ՝ նոյնպէս եւ ներկայ ժամանակներուն:

Հարցը նաեւ այն է, թէ դուք հարցումը կ'ընէք պատասխան գտնելու համար, թէ՞ ատիկա պարզապէս պատրուակ մըն է, եւ դուք ձեր ականջները փակած էք արդէն, նախքան որեւէ պատասխան ստանալը: Այդպէս վարուեցան, օրինակ, հրեայ մեծամեծները Քրիստոսի կենդանութեան: Կը լսէին Յիսուսի աստուածային խօսքերն ու վկայութիւնները Իր անձին մասին եւ յամառ անհաւատութեամբ կը հարցնէին. «Մինչեւ ե՞րբ մեր հոգին պիտի հանես. եթէ դուն Քրիստոսն ես, յայտնապէս ըսէ՛ մեզի» (Յհ 10.24): Վկայութիւն կ'ուզէին, եւ Յիսուս անոնց կու տար վկայութիւնը Աստուծոյ՝ իր երկնաւոր Հօրը, վկայութիւնը մարդոց՝ Յովհաննէս Մկրտիչի եւ վկայութիւնը Աստուածաշունչ գիրքերուն (Յհ 5.31-47). բայց անոնք որպէս մերժում կը պատասխանէին ու կ'առարկէին. «Դուն քու անձիդ մասին կը վկայես, քու վկայութիւնդ ճշմարիտ չէ» (Յհ 8.13): Ի վերջոյ, հաւատալու համար անոնք հրաշք կամ նշան մը կամ բացառիկ գործ մը կը պահանջէին, եւ հակառակ անոր գործերուն սքանչելի վկայութեան, կը մնային իրենց թերահաւատութեան վրայ ամուր:

ՀԱՄԱՔԸ ԾՆՈՒՆԴ Կ'ԱՌՆԷ ԼՍԵԼԷՆ

«Հաւատքը լսելէն է» կ'ըսէ Պօղոս Առաքեալ (Հռ 10.17): Շատ կարեւոր, էական նշանակութիւն ունեցող հաստատում մըն է ասիկա: Ինչպէս ճանաչումի եւ գիտութեան, այսինքն՝ ճանչնալու եւ գիտնալու համար անհրաժեշտ է լսելը, նոյնպէս եւ նոյնքան կարեւոր է հաւատալու համար, որովհետեւ հաւատքը ծանօթութիւնը եւ գիտութիւնն է Աստուծոյ. հաւատալ կը նշանակէ ճանչնալ եւ սորվիլ, գիտնալ: Հետեւաբար ոեւէ մէկը որ իր հարցերուն եւ իր հարցումներուն պատասխան մը կ'ուզէ գտնել, նախ եւ առաջ **պէտք է լսէ**:

Բայց նախ ինչո՞ւ միայն լսել, եւ ի՞նչ կը նշանակէ «լսել»:

Անշուշտ Սուրբ Գիրքի վկայութիւններուն կը դիմենք, այնտեղ միայն լսելու մասին չէ որ կը խօսուի. երբեմն կարդալու մասին ալ խօսք կ'ըլլայ: Բայց եւ այնպէս, շեշտը միշտ լսելուն վրայ կը դրուի, եռեակ պատճառներով: Նախ՝ որովհետեւ հին ցեղապետական կեանքի շրջաններուն մարդիկ գիր եւ գրականութիւն չունէին. ամէն ինչ կը հիմնուէր **բերանացի աւանդութեան** վրայ եւ կը կատարուէր ու կը փոխանցուէր բերանացի, եւ հետեւաբար, Աստուծոյ Խօսքին ալ փոխանցումը կը կատարուէր ոչ թէ ընթերցումով, այլ՝ բերանով, որուն ունկնդիր, լսող կ'ըլլար ժողովուրդը: Երկրորդ, գիրի եւ գրականութեան որդեգրումէն ետք ալ, որ հաւանաբար սկիզբ առաւ թագաւորութեան հետ (Ն.Ք. ժԱ. դար), գրել-կարդալ գիտնալը հազուադիւրս երեւոյթ էր, շատ քիչերուն միայն յատուկ. հետեւաբար, գիրէն աւելի բերանացի խօսքն էր որ կրնար հասնիլ մեծ զանգուածներուն: Ասկէ գատ, գիրքը ինքը մատչելի ապրանք մը չէր եւ չէ եղած հինին մէջ, այդ պատճառով ալ, նոյնիսկ գրուելէն ետք Աստուծոյ Խօսքը գրաւորապէս դժուար էր ունենալ: Օրէնքի գիրքէն օրինակներ դուրսացնելը միայն ունէին եւ միայն թագաւորին համար յիշուած է, թէ պարտի «այս Օրէնքի գիրքին օրինակը դուրսացի քահանաներուն քով եղած օրինակէն՝ իրեն համար գիրքի մը մէջ» գրել, որպէսզի «անիկա իր քով մնայ եւ իր կեանքի բոլոր օրերուն մէջ կարդայ, որպէսզի իր Տէր Աստուծոմէն վախնալ սորվի, եւ այս Օրէնքին բոլոր խօսքերը ու այս կանոնները զգուշութեամբ ի գործ դնէ» (Բ. Օր 11.18-19): Երրորդ, Աստուծոյ Խօսքը հիմնականին մէջ ուղղուած ըլլալով Եկեղեցիին, որ հաւաքոյթն է իր ժողովուրդին, իր բնոյթով իսկ այս խօսքը **լսուելու սահմանուած** է առաւելաբար: Որովհետեւ, թէպէտ իւրաքանչիւր ոք ինք անհատաբար կը լսէ եւ կը պատասխանէ Աստուծոյ Խօսքին, բայց Աստուծոյ կամքը եւ նպատակը այն է, որ Իր Խօսքով՝ հաւատացեալներուն ամբողջութիւնը հասնի միասնական մէկ հաւատքի եւ այդ մէկ հաւատքին միատեղ ու միասնական խոս-

տովանութեամբ՝ մէկ միութիւն, **մէկ եկեղեցի** դառնայ:

Պէտք կը մնա՞յ ըսելու, թէ արդէն նշանակութիւն ունենալէ կը դադրի «ինչո՞ւ միայն լսելով» հարցումը: Անոր համար որ, ինչ որ ալ ըլլայ Աստուծոյ պատգամը մեր միտքերուն հասցնելու կերպը, աչքով եւ ականջով, թէ այլապէս, անոր մեր միտքին հասնելովն իսկ մենք զայն «լսած» կ'ըլլանք: Եւ այս լսելն է նախապայմանը, ինչպէս ըսինք, որեւէ ճանաչողութեան եւ գիտութեան:

Կա՞յ ուրիշ ձեւ գիտնալու, ճանչնալու:

Ուսումն է գիտութեան մայրը. եւ ուսումը կ'ըլլայ լսելով, սորվելով: Մեր չլսած եւ չգիտցած բաներուն չենք կրնար հաւատալ: Ասիկա շատ բնական եւ հասարակ ճշմարտութիւն մըն է:

Ճիշդ նոյնն է պարագան հաւատքին, այսինքն՝ Աստուծոյ ճանաչողութեան եւ գիտութեան: «Ինչպէ՞ս, - կ'ըսէ Առաքեալը, - մարդիկ օգնութեան պիտի կանչէին Քրիստոսը՝ առանց Անոր հաւատացած ըլլալու, կամ ինչպէ՞ս պիտի հաւատային Անոր՝ առանց Իր մասին լսած ըլլալու. կամ ինչպէ՞ս պիտի լսէին՝ եթէ քարոզող մը չկար» (Հռ 10.14): Ուրեմն, հաւատալու համար՝ մարդիկ նախ պէտք է լսէին: Ինչպէ՞ս եւ ուրկէ՞:

Եթէ մեր միտքերը բաց են եւ մեր հարցումները կը բխին մեր գիտնալու փափաքէն ու սորվելու տրամադրութենէն, աննախապաշար մօտեցումով քննենք թէ ի՞նչ է **Աստուածաշունչ** կոչուած գիրքը:

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԱՐՏԱՀՐԱՒԷՐԸ

Իր անձին եւ առաքելութեան չհաւատացող հրեաներուն Յիսուս կ'ըսէր. «Քննեցէ՛ք գիրքերը, քանի որ դուք կը կարծէք, թէ անոնցմով յաւիտենական կեանք ձեռք պիտի բերէք, եւ անոնք են որ կը վկայեն Ինծի համար» (Յհ 5.32):

Քննեցէ՛ք: Տէրը կ'ուզէ որ քննենք՝ որպէսզի սորվինք: Այստեղ անշուշտ «քննել»-ը Ս. Գիրքի վկայութիւններուն դիմել եւ քննութեամբ ստուգելն է: Բայց ինքնին ցոյց կու տայ մեզի, թէ ո՞չ միայն մեզի **արտօնուած է** քննել եւ ստուգել Աստուծոյ վկայութիւնները, այլ նոյնիսկ **հարկ է** որ քննենք եթէ կ'ուզենք սորվիլ:

Քննեցէ՛ք գիրքերը: Բայց որքա՞ն ճիշդ է Աստուծոյ Խօսքին քննութեան համար նոյնինքն Աստուծոյ Խօսքը վկայակոչել: Մենք մեզ խաբած չե՞նք ըլլար արդեօք:

Ո՛չ: Որովհետեւ ճշմարտութեան վկան ճշմարտութիւնը միայն կրնայ ըլլալ: Լոյսը կարելի չէ հասկնալ ու ճանչնալ առանց նոյնինքն լոյսին: Այլ խօսքով, լոյսին ճանաչումը կը սկսի իրմով՝ լոյսով: Եւ եթէ ասիկա ճշմարիտ է նիւթական լոյսին համար, ո՞րքան ատելի՝ Աստու-

ծոյ համար, որ «լոյսի արարիչն է, առաջին լոյսը» (Ներսէս Շնորհալի): Սաղմոսագիրը այս ճշմարտութիւնը կը պարզէ, ըսելով. «Դո՞ւն ես կեանքի աղբիւրը, ո՞վ Տէր, լոյսովդ է որ մենք լոյս կը տեսնենք» (Սղ 35.10):

Իրօք, առանց լոյսի ո՞վ կրնայ լոյսը ճանչնալ: Եթէ լոյսը ինքզինք չյայտնէ՝ ո՞վ կրնայ զայն տեսնել ու պատկերացնել: Նոյնն է պարագան Աստուծոյ եւ Անոր Խօսքին համար: Ինքն է լոյսը եւ Ինքն է Ինքզինք Իր Խօսքով յայտնողը: Ինքն է **յայտնութեան աղբիւրը**: Մարդիկ կրնան իրենց իմացականութեան ճամբով եւ տիեզերքի քննութեամբ հասնիլ Աստուծոյ գաղափարին, Աստուծոյ գոյութեան անհերքելի իրականութեան, ինչպէս իմաստասիրութիւնը կ'ընէ եւ հեթանոսութիւնն ալ գտած էր. բայց Աստուծոյ Խօսքին յայտնութիւնը չեն կրնար ունենալ եւ ճանչնալ եթէ Աստուած Ինք չյայտնէ Ինքզինք: Աստուծոյ Խօսքը քննելու համար ալ, ուրեմն, անհրաժեշտօրէն հարկ է դիմել Աստուծոյ յայտնութեան:

Ո՞ր կը գտնենք այդ յայտնութիւնը:

ՏԻՐՈՋ ԳԻՐԸ

Աստուածաշունչը, որ մենք ունինք մեր ձեռքերուն մէջ, ամբողջութիւնն է Աստուծոյ Խօսքին, Աստուծոյ հիմնական յայտնութեան ուղղուած մարդ անհատին առանձնապէս եւ ամբողջ մարդկութեան ընդհանրապէս:

Բացէ՛ք Եսայի Մարգարէին 34-րդ գլուխը եւ հոն՝ 16-րդ համարին տակ պիտի կարդաք. «ՏԻՐՈՋ ԳԻՐՔԻՆ մէջ փնտռեցէ՛ք ու կարդացէ՛ք...»: Ընդհանուր ակնարկութիւն մըն է ասիկա Տիրոջ կողմէ տրուած պատգամներուն, որոնք Աստուծոյ իսկ իրահանգով կ'արծանագրուէին տեսանող մարգարէներուն կամ անոնց ընկերացող դպիրներուն կողմէ:

Աստուածային Խօսքին արծանագրութեան եւ մարդոց փոխանցման կերպին մասին աղուոր պատկերացում տուող դրուագ մըն է Երեմիայի մարգարէութեան 36-րդ գլխուն մէջ պատմուածը.

Հրէաստանի (=Յուդա) Յովակիմ թագաւորի չորրորդ տարին, Տէրը Իր Խօսքը, Իր պատգամը կը դրկէ Երեմիայի, ըսելով. «Քեզի գիրքի գալարակ (=ուրորուած մագաղաթ կամ թուղթ) մը ա՛ռ եւ անոր վրայ գրէ՛ այն բոլոր Խօսքերը որ քեզի հետ խօսելու սկսած օրէս, այսինքն Յովսիայի օրերէն մինչեւ այսօր, Իսրայէլի եւ Յուդայի վերաբերմամբ եւ բոլոր ազգերուն վերաբերմամբ խօսեցայ» (36.2): Երեմիա կը կանչէ Ներիայի որդի Բարուքը, որ անոր բերանով Տիրոջ ըսած բոլոր Խօսքերը մագաղաթի գալարակի մը վրայ կ'արծանագ-

տիարակելու համար: Եւ ասիկա կ'ըլլայ չորս կերպերով. նախ՝ երագներով, ինչպէս Սողոմոնին եղաւ: Երկրորդ՝ տեսիլքով, ինչպէս Եսայիին եղաւ: Երրորդ՝ երեւակայութեամբ, ինչպէս եղաւ Եղիսէին, որ հրեշտակներու զօրքը տեսաւ, մինչ պատանին չտեսաւ: Չորրորդ՝ յայտնութեամբ միտքը լուսաւորելով, ինչպէս Աստուած Մովսէսին կ'ըսէր. «Տեսիլքով կամ երագով չէ որ պիտի երեւիմ ու խօսիմ քեզի, այլ՝ բերանէ բերան, դէմ դիմաց երեւելով» («Գիրք Հարցմանց», հատոր 9, պրակ 4):

Յայտնութեամբ տրուած այս օրէնքն ու պատգամը, տեսիլն ու աւետիսը ժամանակ առ ժամանակ արձանագրուեցան, ինչպէս տեսանք, երբեմն Աստուծոյ իսկ անմիջական թելադրութեամբ կամ հրահանգով: Եւ **Խօսքը** եղաւ **գիրք**: Այն Հոգին կամ Շունչը, որ լեցուցած էր մարգարէն՝ լեցուց նաեւ գիրը, գիրքը, եւ Իրմով շնչաւորեց զայն: Բովանդակութիւնը Տիրոջն էր, գրիչը՝ մարգարէ ծառաներունը: Միտքը Արարիչինն էր, արձանագրութիւնը՝ Բանին հաղորդ արարածներունը: Հոգին Աստուծունն էր, գիրը՝ հոգելից մարդոցը: Մարգարէներու խօսքերուն ու գրութիւններուն մէջ Աստուծոյ Շունչը, այսինքն Աստուծոյ ներշնչումը կայ, եւ ատոր համար է որ մենք ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ կը կոչենք այն՝ ինչ որ ուրիշ ժողովուրդներ ՍՈՒՐԲ ԳԻՐՔ կ'անուանեն: Արդարեւ **աստուածաշունչ** բառը, որ ածական մըն է, միայն մէկ անգամ կը գտնենք ամբողջ Հին եւ Նոր Կտակարաններուն մէջ: Պօղոս Առաքեալի կողմէ իր աշակերտ Տիմոթէոսին գրուած երկրորդ նամակին մէջ (3.16), գրաբար բնագիրով կը կարդանք. «Ամենայն գիրք Աստուածաշունչք» (յունարէն՝ Pasa graphē theopneustos - լատիներէն՝ Omnis scriptura divinitus inspirata), որուն աշխարհաբար բառացի թարգմանութիւնը կ'ըլլայ. «Բոլոր աստուածաշունչ գիրքերը». իսկ աւելի ազատ թարգմանութեամբ՝ «Աստուծոյ ներշնչումով գրուած բոլոր գիրքերը»:

Պօղոս Առաքեալ այս բացատրութեամբ անշուշտ կ'ակնարկէր այն գիրքերու ամբողջութեան, որ մենք այսօր կը ճանչնանք որպէս *Հին Կտակարան*. որովհետեւ տակաւին չկար եւ ամբողջութեամբ չէր արձանագրուած *Նոր Կտակարանը*: Իսկ եթէ Հին Կտակարանը Աստուծոյ ներշնչումով գրուած գիրքերուն գումարն է, ի՞նչ կը ներկայացնէ Նոր Կտակարանը:

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԻՆ ԱՍԲՈՂՋԱՑՈՒԽԸ

Աստուած չդադրեցաւ եւ չի դադրիր բնաւ մարդուն խօսելէ: Այդպէս ալ Հին Կտակարանով չփակուեցաւ ու վերջ չգտաւ Աստուծոյ Խօսքը, այլ՝ շարունակուեցաւ: Երբայեցիներուն գրուած Պօղոսի նա-

մակը կը սկսի հետեւեալ հաստատումով. «Անցեալին բազմաթիւ անգամներ բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ Իր Որդիին միջոցաւ» (1.1-2): Աստուծոյ Խօսքը ո՛չ միայն շարունակուեցաւ, այլ մանաւանդ նոր տարողութիւն ստացաւ եւ հասաւ իր ամբողջացման: Քրիստոսով՝ Աստուծոյ յայտնութիւնը հասաւ իր նշանակէտին եւ կատարելութեան:

Նախ՝ Քրիստոս Ինք Աստուծոյ Խօսքն էր (գրաբար լեզուով ԲԱՆ – յունարէն *Լոկոս* կոչուած): Այդ «Խօսքը սկիզբէն Աստուծոյ քովն էր եւ Խօսքը ինք Աստուած էր» (Յհ 1.1): Աստուծոյ ստեղծագործ Խօսքն էր ան, որով ամէն ինչ ստեղծուեցաւ: Եւ պատմութեան մէջ օր մը, երկու հազարամեակ առաջ, այդ «Խօսքը մարմին եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ» (Յհ 1.14):

Քրիստոսով Աստուծոյ Խօսքին ստացած նոր տարողութիւնը այն է, որ այդ Խօսքը եկաւ Ինքզինք յայտնելու եւ մարդոց մէջ բնակելու Իր լիութեամբը:

Աստուծոյ յայտնութիւնը աստիճանական զարգացման որոշ ընթացքով մը տրուեցաւ մարդկութեան. տրուեցաւ յառաջատուական որոշ ընթացքով մը՝ մարդիկը պատրաստելու համար յայտնութեան իրերայաջորդ մակարդակներուն, որոնց վերջինը եւ բարձրագոյնը պիտի ըլլար Քրիստոս: Արդ, «բոլոր մարգարէները եւ Օրէնքը մինչեւ Յովհաննէս (Մկրտիչ)՝ մարգարէացան» (Մտ 11.13): Այդ մարգարէական յայտնութեանց ընդմէջէն «Օրէնքը մեր դաստիարակը եղաւ՝ մեզ Քրիստոսի առաջնորդելով» (Գղ 3.24), «որովհետեւ Օրէնքին վախճանը Քրիստոսն է» (Հռ 10.4): Բայց ի՞նչ կը նշանակէ վախճան. «Օրէնքին վերջը» ըսելով Օրէնքին ջնջումը կը հասկնայ արդեօք առաքեալը: Ո՛չ անշուշտ. որովհետեւ Քրիստոս Ինք յստակօրէն պիտի յայտարարէր. «Մի՛ կարծէք թէ Օրէնքը կամ մարգարէութիւնները ջնջելու եկայ: Չեկայ ջնջելու, այլ՝ կատարելու» (Մտ 5.17): Բայց առաքեալը ըսել կ'ուզէ, թէ Քրիստոսով Օրէնքը հասաւ Աստուծոյ կողմէ առաջադրուած նշանակէտին, իր եզրակացութեան, յայտնութեան բարձրունքին: Օրէնքը միայն օրինակը եւ շուքն էր Աստուծոյ Խօսքին ճշմարտութեան, մինչ Քրիստոս նոյնինքն Աստուծոյ Խօսքն էր, հետեւաբար՝ **ճշմարտութիւնը**, իրականութիւնը: Օրէնքը աստուածային շնորհքին մասնիկը միայն կը պարգեւէր անոնց, որոնք կը յաջողէին կատարել Օրէնքը, մինչ Քրիստոս ամբողջութիւնն էր, լիութիւնն էր այդ շնորհքին: Ահա թէ ինչո՞ւ Յովհաննէս Աւետարանիչ պիտի ըսէր. «Անոր լեցունութենէն մենք բոլորս շնորհք շնորհքի վրայ առինք, որովհետեւ Օրէնքը Մովսէսի ձեռքով տրուեցաւ, մինչ շնորհքը եւ

Ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի միջոցաւ եկան» (Յի 1.16):

Այս ճշմարտութիւնը լոյս կը նետէ նաեւ Հին Ուխտին հասկացման վրայ: Օրէնքն ու մարգարէները, Հին Կտակարանի պատմութիւնն ու իմաստութեան գրականութիւնը իրենց ամբողջական իմաստը կը գտնեն միայն Քրիստոսով, Քրիստոսի յայտնութեան մէջ: Եւ հետեւաբար, զանոնք ճիշդ հասկնալու եւ ուղիղ մեկնաբանելու առաջին պայմանը զանոնք Քրիստոսի գալուստին եւ Քրիստոսով սկիզբ առած փրկագործութեան լոյսին տակ դիտելն է: Ճիշդ ինչպէս երեխայի մը ծնունդն է որ կ'իմաստաւորէ անոր սաղմնաւորումէն մինչեւ ծնունդ երկարող յղութեան շրջանի կեանքը, որ երեխային իրական կեանքին յարաբերաբար անորոշ ստուեր մըն է միայն եւ ինքնանպատակ չէ, այլ որուն նպատակը երեխան կազմաւորուած ծելով հասցնելն է իր ծննդեան, այնպէս ալ մինչեւ Քրիստոսի գալուստը երկարող դարաշրջանները մարդկութեան իրական հոգեւոր ծնունդը եւ փրկութիւնը կանխող «յղութեան» շրջանն էին, որոնք իրենց իմաստը եւ նպատակը գտան այդ հոգեւոր ծնունդին սկիզբը նշող Քրիստոսի գալուստով եւ յայտնութեամբ:

Ասիկա ինքնին կը նշանակէ, կրկին, թէ Քրիստոս է կեդրոնը եւ առանցքը Աստուածաշունչ Մատեանին, այսինքն՝ Աստուծոյ Խօսքին յայտնութեան. թէ Քրիստոս է կեդրոնը եւ առանցքը Հին եւ Նոր Կտակարաններուն, որոնք Անոր շուրջ կը դառնան ինչպէս ձգողութեան բեւեռի մը: Ահա թէ ինչու որեւէ ծելով կարելի չէ անջատել Աստուածաշունչին երկու բաժինները, որոնք իբրեւ իրարու շարունակութիւն՝ իրարու հետ մէկ ամբողջութիւն կը կազմեն: Ինչպէս կարելի չէ Հին Կտակարանը իմաստաւորել եւ իր վախճանական նպատակին մէջ հասկնալ առանց Նորին, այնպէս ալ կարելի չէ Նոր Կտակարանը իբրեւ Հինին կատարումն ու ամբողջացումը հասկնալ եւ լրիւ գնահատել առանց Հին Կտակարանին: Առաջինը եթէ **յարաջահայեաց** կանխասացութիւն մըն էր՝ իր կատարման ապացոյցին սպասող, երկրորդը իր կատարման ապացոյցովն իսկ **յետահայեաց** քննութեամբ կը հաստատէ Հինը եւ կը հաստատուի անկէ քաղուած վկայութիւններով:

ՆՈՐ ՈՒՏԸ

Ըսինք, որ Աստուծոյ Խօսքը չփակուեցաւ ու վերջ չգտաւ Հին Կտակարանով, այլ՝ շարունակուեցաւ Քրիստոսով: Քրիստոսով սկիզբը դրուեցաւ Նոր Կտակարանին:

Կտակարան կը կոչենք որեւէ գրութիւն կամ գիրք, որ կտակ մը կամ ուխտ, այսինքն համաձայնագիր մը կը պարունակէ: Հին Կտա-

կարանը Աստուծոյ կողմէ մարդուն հետ կնքուած առաջին ուխտը կը պարունակէր: Տեսակ մը **յոստմնագիր** էր անիկա Աստուծոյ կողմէ մարդուն տրուած - նախ՝ Նոյի, թէ աշխարհը եւ մարդկութիւնը անգամ մը եւս պիտի չքնաջնջուին (Ծն 9.11, եւայլն): Ապա Աբրահամի, թէ իր զաւակին ընդմէջէն ազգերու հայր պիտի ըլլայ եւ իր սերունդները պիտի ժառանգեն խոստացուած երկիրը (Ծն 17.2-8): Ապա, Մովսէսի միջնորդութեամբ իր ազատագրուած ժողովուրդին, թէ զայն կ'ընտրէ իր ժողովուրդը ըլլալու համար (Ելք 29.2-13): Ի վերջոյ Դաւիթի, թէ անոր սերունդէն յաւիտենական թագաւորութիւն մը պիտի տայ (Սղ 88.3-4) - այդ խոստումներուն դիմաց միայն Իրեն հանդէպ հաւատարմութիւն պահանջելով:

Բայց նոյն Հին Կտակարանին մէջ Աստուած արդէն նոր խոստումով մը յայտնած էր կնքուելիք Նոր Ուխտի մը (=Նոր Կտակարան) մասին: «Ահա՛ օրեր կու գան,- կ'ըսէ Տէրը,- որ Իսրայէլի տանը հետ եւ Յուդայի տանը հետ նոր ուխտ մը պիտի կնքեմ: Ոչ թէ այն ուխտին պէս, զոր անոնց հայրերուն հետ ըրի այն օրը երբ անոնց ձեռքէն բռնեցի՝ զանոնք Եգիպտոսի երկրէն հանելու համար. որովհետեւ անոնք իմ ուխտս դժժեցին եւ Ես մերժեցի զանոնք,- կ'ըսէ Տէրը: Այլ այն օրերէն ետք Իսրայէլի տանը հետ իմ կնքելիք ուխտս սա է,- կ'ըսէ Տէրը,- Իմ Օրէնքս պիտի դնեմ անոնց ներսիդին, անոնց սիրտին վրայ պիտի գրեմ զայն, եւ Ես անոնց Աստուած պիտի ըլլամ, եւ անոնք Իմ ժողովուրդս պիտի ըլլան: Անկէ ետք ոեւէ մէկը իր ընկերոջ կամ իր եղբոր պիտի չսորվեցնէ, ըսելով. “Տէրը ճանչցիր”. այլ՝ անոնց պզտիկէն մինչեւ մեծը բոլորն ալ զԻս պիտի ճանչնան,- կ'ըսէ Տէրը,- որովհետեւ անոնց անօրէնութիւնը պիտի ներեմ եւ անոնց մեղքը անգամ մը եւս պիտի չյիշեմ» (Եր 31.31-34): Եւ այդ Նոր Ուխտը կնքուեցաւ Քրիստոսի արիւնով, որ թափուեցաւ «շատերու համար, մեղքերու թողութեան համար» (Մտ 26.28): Այս Նոր Ուխտով Յիսուս Իր ժողովուրդին (=Եկեղեցիին) կու տար արդարութիւն, Ս. Հոգիին պարգեւը եւ յաւիտենական կեանքի ժառանգութեան խոստումը:

Արդ, Նոր Կտակարանով՝ Քրիստոսի կնքած Նոր Ուխտն ալ իբրեւ Աստուծոյ Խօսք եւ խոստում արձանագրուեցաւ առաքելական դարուն՝ Եկեղեցւոյ մէջ կենդանի քարոզութեամբ ստեղծուած աւանդութեան հիմամբ: Այսպիսով, Նոր Կտակարանը եւս դարձաւ մաս Աստուծոյ գրաւոր Խօսքին:

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԵԿԵՂԵՑԻՈՎ
Իսկ այնուհետե՞ւ, իսկ այսօ՞ր: Աստուած խօսեցա՞ւ այնուհետեւ, եւ կը խօսի՞ այսօր:

Այս հարցումներուն պատասխանը կու տայ Քրիստոսի Ս. Եկեղեցւոյ կեանքը, անոր պատմութիւնը: Եւ այդ պատմութիւնը Աստուծոյ խոստումին իրականացման պատմութիւնն է:

Քրիստոսով իրականացան այն խոստումները, զորս Աստուած տուած էր Աբրահամի եւ Դաւիթի: Քրիստոս, Աբրահամի եւ Դաւիթի մարմնաւոր շառաւիղը, Իր քաւարար մահէն ետք, հրաշափառ յարութեամբ գնաց Իր Հօրը մօտ՝ առնելու համար Իր անվախճան թագաւորութիւնը, եւ Իր բերած փրկութեան օրհնութիւնը տարածեց բոլոր ազգերուն վրայ: Այս էր առաքեալներու քարոզութեան ողնասիւնը: Այսպէս կը քարոզէր, օրհնակ, Պօղոս Առաքեալ՝ Պիսիդիայի Անտիոք քաղաքին մէջ, ուր կ'ըսէր. «Մենք ալ, ահա՛, ձեզի կ'աւետենք թէ Աստուած մեր հայրերուն տուած Իր խոստումը կատարեց մեր օրերուն, որ Անոր զաւակներն ենք: Այդ խոստումը կատարեց Յիսուսը յարուցանելով, ինչպէս երկրորդ սաղմոսին մէջ ալ գրուած է. “Իմ Որդիս ես Դուն, այսօր Քեզ ծնայ”: Նոյն այն իրողութիւնը, որ Աստուած զԱյն մեռելներէն յարուցեց եւ Անիկա այլեւս բնաւ մահ պիտի չտեսնէ, խոստում մըն է՝ մեզի ուղղուած, որովհետեւ Աստուած այսպէս կ'ըսէ. “Ձեզի պիտի տամ այն իսկական օրհնութիւնը զոր Դաւիթի խոստացայ”» (Գրծ 13.32-34): Իսկ զաղատացիներուն գրած իր նամակին մէջ կ'ըսէր. «Քրիստոս մեզ գնեց եւ ազատեց Օրէնքին անէծքէն՝ Ինք մեզի համար անէծք ըլլալով... որպէսզի Աբրահամի խոստացուած օրհնութիւնը հեթանոսներուն վրայ ըլլայ Քրիստոս Յիսուսով, եւ մենք ալ խոստացուած Հոգին ստանանք հաւատքով» (Գղ 3.13-14):

Յստակ է, թէ խոստումը չէր եղած Քրիստոսի, այլ եղած էր հաւատքի մեր հայրերուն եւ եղած էր **մեզի**, այլ խօսքով՝ **Քրիստոսի Եկեղեցիին**: Եւ առաջին բանը, որ Քրիստոսի Եկեղեցին կը ժառանգէր այդ խոստումներուն հետ եւ այդ խոստումներով՝ **Աստուծոյ կենդանի Խօսքն** էր:

Եկեղեցին այդ խօսքը կը ժառանգէր ո՛չ միայն Քրիստոսէ, այլ նաեւ Ս. Հոգիէն՝ ըստ Քրիստոսի խոստումին: Աստուած կանուխէն խոստացած էր Իր Հոգին՝ ըսելով. «Վերջին օրերուն», այսինքն երբ Իր կողմէ սահմանուած ժամանակը գար, «Իմ Հոգիս պիտի թափեմ մարդոց վրայ, ձեր տղաքն ու աղջիկները պիտի մարգարէանան, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի ունենան եւ ձեր ձերերը երագներ պիտի տեսնեն» (Յվլ 2.28): Իսկ Քրիստոս Իր Եկեղեցիին ըսաւ. «Բայց մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը ձեզի պիտի դրկէ Իմ անունովս, Անիկա ամէն ինչ պիտի սորվեցնէ ձեզի եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի» (Յհ 14.26): Ըստ այդ խոստումին, Ս. Հոգին Քրիստոսի Ե-

կեղեցին մշտապէս կը լեցնէ Աստուծոյ Խօսքով, կը սորվեցնէ եւ կը յիշեցնէ զԱյն եւ պտղաբեր կը դարձնէ Եկեղեցւոյ կեանքին մէջ:

Բայց Եկեղեցին ո՛չ միայն ժառանգորդը եւ պահապանն է աստուածային Խօսքին, այլ նաեւ զԱյն փոխանցողը եւ մեկնաբանողը: Արդարեւ, Ս. Հոգիով Եկեղեցիին տրուած հոգեւոր պարգեւներուն մէջ առաջին տեղերը կը գրաւեն իմաստութեամբ յորդորելու կարողութիւնը, հոգեւոր գիտութեամբ ուսուցանելը եւ մարգարէութիւնը (Ա. Կր 12.8,10): «Աստուած Եկեղեցիին մէջ բազմաթիւ անդամներ կարգեց զանազան ծառայութեանց համար. նախ առաքեալները, երկրորդ՝ մարգարէները, երրորդ՝ վարդապետները...», եւայլն (անդ, 28): Առաքեալին պաշտօնը Աստուծոյ Խօսքին ու կամքին յայտնութիւնը եւ փոխանցումն էր քարոզութեամբ. մարգարէին պաշտօնը Աստուծոյ պատգամներուն մեկնաբանութիւնը. իսկ վարդապետինը բարոյական ուսուցումն ու յորդորը: Այս պաշտօններով, եւ յատկապէս մարգարէական պատգամախօսութեամբ, Եկեղեցին ո՛չ միայն սոսկական կրկնողն է Աստուծոյ գրաւոր Խօսքին, այլ Ս. Հոգիին մղումով եւ առաջնորդութեամբ արտայայտիչը Աստուծոյ կենդանի Խօսքին եւ ներշնչեալ մեկնաբանութեամբ Աստուծոյ Խօսքը մշտանորոգ բխեցնողը: Եւ որովհետեւ Եկեղեցին միայն երէկ չէ, այլ նաեւ **այսօր** եւ **վաղը**, Աստուած այսօր ալ Իր Եկեղեցիին ընդմէջէն կը խօսի Իր ժողովուրդին եւ մարդկութեան:


Ամէն անգամ որ Եկեղեցւոյ մէջ Աւետարանը կը կարդանք կ'ըսենք. «**Ասէ** Աստուած - Աստուած **կը խօսի**»: Եւ Աստուած կը խօսի թէ Աստուածաշունչ Մատեանի էջերէն եւ թէ առաքելական ու մարգարէական հոգիով լեցուած Իր քարոզիչներուն բերանով, որոնք Երկինքի Արքայութեան աշակերտած եւ Աստուծոյ Հոգիով իմաստնացած որպէս դպիրներ՝ Եկեղեցիին վստահուած Աստուծոյ Խօսքի զանձարանէն տիրաբար կը հանեն հինն ու նորը (տես Մտ 13.52):

Աստուած այսօր ալ կը խօսի մեզի եւ մեր միջոցաւ՝ ամբողջ մարդկութեան: Մենք չենք կրնար բնաւ ըսել թէ Աստուծոյ Խօսքը հեռու եւ անհասանելի է մեզի համար, որովհետեւ Աստուծոյ Խօսքը Ինք պատասխան կու տայ ըսելով. «Այս պատուիրանը որ այսօր քեզի կու տամ՝ շատ դժուար բան մը չէ, եւ հեռու ալ չէ քեզմէ: Ոչ երկինքն է որ ըսես “ո՞վ երկինք պիտի ելլէ եւ զայն մեզի բերէ ու լսելի դարձնէ որ կատարենք զայն”: Այս պատգամը շատ մօտիկ է քեզի. քու բերանիդ ու սիրտիդ մէջ է. եւ քու ձեռքդ է զայն կատարելը» (Բ. Օր 30.11-14):

Լսենք առաքելական ազդարարութիւնը, որ կ'ըսէ. «Ձգոյ՛ջ եղէք որ չըլլայ թէ մերժէք Աստուծոյ Խօսքը լսել. որովհետեւ եթէ Անոր հրամանները մարդոց փոխանցող Մովսէսին չհնազանդողները ազատում

չունեցան, մենք բնաւ ազատում չենք ունենար եթէ կռնակ դարձնենք Աստուծոյ, որ Երկինքէն կը խօսի մեզի» (Եբր 12.25):

Եւ, ի վերջոյ, գիտնանք թէ մեր ձեռքն է կեանքի ընտրութիւնը, որովհետեւ Աստուած մեզի կ'ըսէ. «Քեզի ձգեցի ընտրել կեանքը կամ մահը, օրհնութիւնը կամ անէծքը: Կեանքը ընտրէ, որպէսզի թէ՛ դուն ապրիս եւ թէ՛ քու սերունդդ: Սիրէ՛ քու Տէր Աստուածդ, հնազանդէ՛ Անոր Խօսքին եւ հաւատարիմ մնա Անոր, որովհետեւ Անկէ կախում ունի քու կեանքդ» (Բ. Օր 30.19-20):



ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆԶ

ԵՒ ԶԱՅՆ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԵՐՊԵՐԸ

Ի՞ՆՉ ԿՐ ՆՇԱՆԱԿԷ ԿԱՐԴԱԼ

- Առհասարակ մենք կը կարդանք մեքենական եւ մակերեսային ձեւով: Ատիկա պատճառ է, որ մենք չտեսնենք շատ մը բաներ, չմտածենք անոնց մասին, եւ նաեւ՝ բնականօրէն՝ չհասկնանք:

- Աստուածաշունչի ճամբան ամենագեղ ու բազմաբուրեան ծաղիկներով զարդարուած է: Կը բաւէ միայն աչքերը բանալ, պահ մը կանգ առնել ու տեսնել Աստուծոյ հրաշալիքները:

ԿԱՐԴԱԼ ԵՒ ՀԱՍԿՆԱԼ

Կարդալուն եւ հասկնալուն տարբերութիւնը կը կայանայ հետեւեալ իրողութեան մէջ.

1) **Կարդալ** ըսելով կը հասկնանք ո՛չ միայն թուղթի վրայ արձանագրուածը մտովի կամ բարձրաձայն վերարտադրել, այլ նաեւ՝ այնտեղ արձանագրուածը հասկնալ ճիշդ եւ ճիշդ այնպէս ինչպէս որ արձանագրուած է: Այլ խօսքով, իւրաքանչիւր բառ հասկնալ իր բառացի կամ տառացի, այսինքն՝ բուն, սկզբնական կամ հիմնական իմաստով:

Այս բացատրութիւնը զուտ տեսական է, սակայն: Կրնա՞յ այսպիսի ընթերցում ըլլալ: Պատասխանը հարկաւ «ոչ» է: Որովհետեւ, ի՞նչ կը նշանակէ տառացի իմաստ: Մենք գիտենք, որ բառերն իրենց գործածութեան մէջ իմաստ ունին, եւ նայած թէ ինչպէս կը գործածենք, ըստ այնմ ալ կը ստանան իրենց առարկայական, ճշգրիտ նշանակութիւնը: Այսպէս, օրինակ, երբ կ'ըսեն «վարդագոյն երագ», «տխուր մթնոլորտ», «փուճ խօսքեր», «պարապ մարդ», «ծակ գրպան», «քար լռութիւն», կամ կ'ըսեն «երկու ոտքը մէկ մուճակի մէջ դնել», «հինգ մատերը մոմ ընել», «ճշմարտութիւնը մէկու մը աչքը խորթել», «այս մարդը աչքս մտաւ», «վրաս պաղ ջուր թափեցաւ», եւայլն, արդեօք գործածած բառերս տառացի՞ նշանակութեամբ կը հասկնամ: Բնա-

կանաբար ոչ: Եւ սակայն, ասոնք բոլորն ալ կը կոչենք բառի մը բնական իմաստները: Արդ, այսպիսի ընթերցումով մը կը հասկնանք ինչ որ գրուած է, կամ կը հասկնանք թէ **գրուածքը ի՞նչ կ'ըստ:**

2) **Հասկնալ** ըսելով թեթեւակիօրէն տարբեր բան կը հասկնանք: Ինչպէս կենդանի խօսքին մէջ, այնպէս ալ գրաւոր խօսքին մէջ, բառը կամ աւելի ճիշդ գրուածը ոչ միայն բան մը կ'ըստ, այլ նաեւ բան մը ըսել կ'ուզէ: Կարդալէ ետք հասկնալուն հիմնական տարբերութիւնը գտնելն է, թէ հեղինակը **ի՞նչ ըսել կ'ուզէ:**

ՀԱՍԿՆԱԼՈՒ ՏԱԳՆԱՊԸ

Սկսինք Առաքեալներու Գործերէն քաղուած օրինակով մը.

«Տիրոջ հրեշտակը Փիլիպպոսի խօսեցաւ, ըսելով.

- Ել, հարաւ գնա, այն ճամբան, որ Երուսաղէմէն Կազա կ'իջնէ եւ ամայի է:

Փիլիպպոս ելաւ գնաց: Եւ ահաւասիկ եթովպիացի ներքինի մը, որ եթովպիացիներու կանդակին, այսինքն թագուհիին բարձրաստիճան մէկ պաշտօնեան էր անոր ընդհանուր գանձապետը, եւ Երուսաղէմ եկած էր Աստուծոյ երկրպագելու, այնտեղէն դարձին իր կառքին մէջ նստած Եսայի Մարգարէի գիրքը կը կարդար: Սուրբ Հոգին ըսաւ Փիլիպպոսի.

- Մօտեցիր եւ այդ կառքին քովէն քալէ:

Երբ Փիլիպպոս վազելով հասաւ կառքին, լսեց որ անիկա Եսայի Մարգարէն կը կարդար բարձրաձայն: Հարցուց.

- Կը հասկնա՞ս ինչ որ կը կարդաս:

Իսկ անիկա պատասխանեց.

- Ինչպէ՞ս կրնամ հասկնալ, եթէ մէկը ինձի չբացատրէ:

Ապա խնդրեց որ Փիլիպպոս ելլէ իր քով նստի: Իր կարդացած հատուածը հետեւեալն էր.

*«Ոչխարի պէս մորթուելու տարուեցաւ.
եւ ինչպէս գառնուկ մը անմռունչ կը կենայ
զինք խուզողին դիմաց,
այնպէս իր բերանը չբացաւ:
Անիկա նուաստացաւ
եւ չունեցաւ մէկը որ զինք պաշտպանէր.
ո՞վ պիտի պատմէ իր սերունդին մասին,
որովհետեւ ահա իր կեանքը կը վերցուի այս աշխարհէն»:*

Ներքինին հարցուց Փիլիպպոսի.

- Կ'աղաչեմ, ըստ՝ որո՞ւ համար կ'ըստ մարգարէն այս բաները. իրե՞ն, թէ՞ ուրիշի մը համար:

Այն ատեն Փիլիպպոս Սուրբ Գիրքի այդ հատուածէն սկսելով անոր ատետարանեց Յիսուսը» (Գրծ 8.26-35):

Ինչո՞ւ եթովպիացի ներքինին չէր հասկնար Եսայի Մարգարէէն քաղուած յիշեալ հատուածը (Ես 53.7-8), եւ ինչո՞ւ յաճախ մենք եւս չենք հասկնար բազմաթիւ էջեր, հատուածներ, դրուագներ, խօսքեր:

Յատկապէս Հին Կտակարանը երբեմն դժուար կը թուի ընթերցանութեան համար: Եւ թերեւս լաւ կ'ըլլայ իննկէ սկսիլ:

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆԸ

Շատեր ոչ-արդարացի կեցուածք ունին ՀԿ-ի հանդէպ: Մինչդեռ ՀԿ-ը հիմն է եւ ապացոյցը ՆԿ-ին: Քրիստոնէական առաջին համայնքները այդ ապացոյցով էր որ դարձան Քրիստոսի: Օրինակ, երբ Պօղոս ու Շիղա առաքեալներ թեսաղոնիկէէն Բերիա անցան, Բերիայի հրեաները, որոնք «ազատամիտ էին քան թեսաղոնիկեցիները, մեծ յօծարութեամբ ընդունեցին Աստուծոյ խօսքը, եւ ամէն օր Սուրբ Գիրքերը կը քննէին՝ տեսնելու համար թէ ճշմարի՞տ են Պօղոսի քարոզածները» (Գրծ 17.11):

Քրիստոս Ինք մեզ կը մղէ, որ այդ քննութիւնը կատարենք մենք ալ: Առիթով մը, երբ հրեայ կրօնական իշխանաւորներու ներկայացուցիչները Քրիստոսի հետ կը վիճէին եւ Անոր հեղինակութեան վերաբերեալ վկայութիւն կը պահանջէին, մեր Տէրը ըսաւ. «Հայրը որ զԻս դրկեց Ինք է որ Իմ մասիս կը վկայէ: ... Քննեցէ՛ք Սուրբ Գիրքերը, քանի կը կարծէք, թէ անոնցմով յաւիտենական կեանք պիտի ունենաք, եւ նոյն գիրքերն են որ կը վկայեն Իմ մասիս» (Յի 5.37, 39):

Քրիստոս Ինք Իր երկրաւոր կեանքին եւ առաքելութեան ամէն մէկ քայլափոխին ցոյց տուաւ ՀԿ-ի մարգարէութեանց կատարումը Իր անձին վերաբերեալ, եւ Վերնատան մէջ վերջին ընթրիքին առիթով այս մասին ըսաւ. «Այս բոլորը ձեզի ըսի նախքան պատահիլը, որպէսզի երբ պատահին՝ այն ատեն հաւատաք» (Յի 14.29): Նոյնպէս, երբ յարութենէն ետք երեւցաւ դէպի Էմմաուս գացող իր երկու հետերդներուն, որոնք տակաւին յարութենէն անտեղեակ՝ տրտում-տխուր կը խօսէին եւ իրենց ճամբան կ'երթային, յանդիմանեց զանոնք, ըսելով. «Ո՞վ անմիտներ, որ կը դժուարանաք մարգարէներուն բոլոր ըսածներուն հաւատալու: Պէտք չէ՞ր որ Քրիստոսը չարչարուէր՝ փառաւորուելու համար»: Ապա սկսաւ բացատրել Սուրբ Գիրքերուն մէջ Իր մասին գրուած բոլոր գրութիւնները՝ սկսեալ Մովսէսի գիրքերէն մինչեւ բոլոր մարգարէութիւնները» (Ղկ 24.25-27): Յետոյ երբ Վերնատուն եկաւ Իր աշակերտներուն հանդիպելու, անոնց ըսաւ. «Այս բոլորը ձեզի ըսած էի արդէն, երբ ձեզի հետ էի, թէ

պէտք էր որ իրականանային Մովսէսի Օրէնքի գիրքին, մարգարէական գիրքերուն եւ սաղմոսներուն մէջ իմ մասիս գրուածները»: Յետոյ անոնց միտքերը բացաւ, որպէսզի հասկնան Սուրբ Գիրքերը, եւ ըսաւ անոնց. «Գրուած է, որ Քրիստոս այսպէս պէտք էր չարչարուէր եւ երեք օր ետք յարութիւն առնէր. Անոր անունով ապաշխարութիւն եւ մեղքերու թողութիւն պէտք էր քարոզուէր բոլոր ժողովուրդներուն Երուսաղէմէն սկսեալ» (Ղկ 24.44-47):

1) Ինչ կը վերաբերի մարգարէական շատ մը բացայայտ խոստումներու, մենք դժուարութիւն չունինք զանոնք անմիջապէս տեսնելու եւ հասկնալու:

Օրինակ, երբ Եսայի Մարգարէի գիրքին մէջ կը կարդանք. «Ահա կոյսը պիտի յղանայ եւ որդի մը ծնի, եւ զայն պիտի կոչեն Էմմանուէլ» (Ես 7.14), անմիջապէս կը հասկնանք, որ խօսքը կը վերաբերի մեր Տիրոջ բացառիկ կուսական ծնունդին: Կամ երբ Ջաքարիա Մարգարէի մէջ կը կարդանք. «Մեծապէս ուրախացիր, ով Սիոնի աղջիկ, ցնծութեամբ աղաղակէ, ով Երուսաղէմի աղջիկ. ահա քու Թագաւորդ քեզի կու գայ. Անիկա արդար է ու Փրկիչ է, հեզ է ու իշու վրայ հեծած եւ իշու ձագի, աւանակի վրայ» (Ջք 9.9), մեր միտքը դժուարութիւն չունենար զայն անմիջապէս կապելու Ծաղկազարդին օրը Յիսուսի Երուսաղէմ յաղթական մուտքին:

2) Ուրիշ մարգարէութիւններ կը հասկնանք կարգ մը ցուցմունքներով, որոնք կը գտնենք Աւետարաններուն մէջ, աւետարանագիրքներուն կողմէ, որոնք իրենք ալ նախ չհասկնալու եւ ապա հասկնալու այդ փորձառութենէն անցան (տես Յհ 12.12-16: Հմմտ. Ղկ 18.34):

Օրինակ, Յիսուսի կեանքին մէջ այդ բոլոր «գրուած»ներուն կատարումին ականատես աւետարանիչը Յովհաննէս, խաչելութեան առիթով կը պատմէ, թէ ինչպէ՛ս հռոմայեցի զինուորները, որոնք սովորութիւն ունէին խաչուած անձերը խաչէն վար առնելէ առաջ անոնց ծունկերը կոտրելու, որպէսզի փութացնեն անոնց մահը, Յիսուսի պարագային կ'ըսէ՝ թէ զանց առին այդ մէկը, երբ տեսան որ արդէն մահացած է: Եւ Աւետարանիչը կ'աւելցնէ. «Ան որ տեսաւ ասիկա՝ ինք վկայեց այս մասին եւ անոր տուած վկայութիւնը վաւերական է: Անիկա գիտէ որ ըսածը ճշմարտութիւն է, որպէսզի դուք ալ հաւատաք: Ասիկա պատահեցաւ՝ որպէսզի իրականանայ Սուրբ Գիրքերուն մէջ ըսուածը. “Անոր որեւէ մէկ ոսկորը պիտի չփշրուի” (Ելք 12.46: Ղու 9.12), ինչպէս նաեւ միւս գրուածը որ կ'ըսէ՝ “Պիտի նային անոր՝ որ խոցեցին” (Ջք 12.10)» (Յհ 19.35-37): Կը տեսնենք, որ այստեղ երկու մարգարէութեանց կատարումը ցոյց կու տայ, եւ այդ մարգարէութեանց Յիսուսի խաչալուծեան վերաբերիլը կրնայինք չհասկնալ, ե-

թէ աւետարանագիրը ինք չմատնանշէր:

3) Բայց տակաւին, ինչպէս Յիսուս ինք կ'ըսէր, ամբողջ ՀԿ-ը կը խօսի Անոր մասին: Եւ մենք առանց կարողալու յատուկ կերպի մը դժուար թէ կարենանք գտնել կապը մեր կարդացածին եւ Յիսուսի ճշմարիտ ինքնութեան, Անոր երկրաւոր առաքելութեան եւ փրկագործութեան հետ:

Առնենք մէկ-երկու օրինակ:

Ծնունդներու գիրքը կը բացուի Աստուծոյ ստեղծագործութեամբ: Ստեղծագործութեան այդ դրուագին մէջ ութը անգամ կը գտնենք «եւ Աստուած ըսաւ» բացատրութիւնը, դեռ չհաշուած «կոչեց», «անունը դրաւ», «օրհնեց ըսելով» կամ «օրհնեց եւ ըսաւ» բացատրութիւնները: «Աստուած ըսաւ»: Ասիկա պարզ ու յստակ հաստատում մըն է, թէ ամէն ինչ Աստուծոյ Խօսքովը գոյացաւ, ինչպէս 33-րդ սաղմոսին մէջ կը կարդանք. «Անիկա ըսաւ եւ [աշխարհը] գոյացաւ. հրամայեց եւ անիկա հաստատուեցաւ» (Սղ 33.9): Այժմ ուստում մը ընենք եւ երթանք ՆԿ: Նոյն բանը կը գտնենք եբրայեցիներուն նամակին մէջ. «Հաւատքով է որ կը հասկնանք տիեզերքին ստեղծումը Աստուծոյ Խօսքով, որով տեսանելի այս տիեզերքը ոչինչէն գոյացաւ» (Եբր 11.3):

Եւ հիմա կու գայ ճշդումը: Յովհաննէսի Աւետարանը կը բացուի սա խօսքով. «Աշխարհի ստեղծագործութենէն առաջ գոյութիւն ունէր Բանը: Բանը Աստուծոյ հետ էր եւ Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ հետ էր: Անով էր որ Աստուած ամէն ինչ ստեղծեց. առանց Անոր ո՛չ մէկ բան ստեղծեց» (Յհ 1.1-3), եւ քանի մը համար անդին կը շարունակէ. «Աշխարհը Իրմով ստեղծուեցաւ, սակայն աշխարհը զինք չձանչցաւ» (Յհ 1.10): Ի՞նչ բանի կամ որո՞ւ մասին կը խօսի աւետարանիչը: Գրաբարով «Բան» կը նշանակէ՝ բանականութիւն, միտք, խօսք: Բայց այստեղ յայտնի է, որ սովորական խօսքի կամ մտածողութեան մասին չէ խօսքը, այլ՝ անձի մը մասին, որ սկիզբէն է, Աստուծոյ հետ է, եւ Ինքը Աստուած է: Եւ այդ Բանը Քրիստոս Ինքն է, Աստուծոյ միածին Որդին: Առանց ՆԿ-ի լոյսին, մենք դժուար թէ Աստուծոյ ստեղծարար Խօսքին մէջ տեսնենք Որդիին ներկայութիւնը:

Ելքի գիրքին մէջ կը պատմուի, թէ Մովսէսի առաջնորդութեամբ Եգիպտոսէն դուրս գալէ ետք, եբրայեցի ժողովուրդը մտաւ Սինայի անապատը եւ հասաւ Սինա լեռան ստորոտը, Ռեֆիդիմ կոչուած վայրը: Նոր ծեռք բերուած ազատութեամբ գինովցած էին բոլորն ալ, բայց միւս կողմէ, անապատին մէջ ջուրի պակասը կը սկսէր զիրենք տանջել: Եւ սկսան տրտունջքները: Մովսէս դիմեց Աստուծոյ, եւ Աս-

տուժոյ իսկ ցուցմունքով, իր ձեռքի գաւազանը զարկաւ ժայռի մը, ուրկէ ջուր բխեցաւ, եւ բոլորը խմեցին ու յագեցան (Ելք 17.6: Թ՛ւ 20.11): Այս դրուագին ակնարկութիւն մը կը գտնենք կորնթացիներուն գրուած Ա. նամակին մէջ, ուր կը կարդանք. «Բոլորն ալ նոյն հոգեւոր ըմպելիքը խմեցին, որովհետեւ խմեցին հոգեւոր ժայռէ մը, որ իրենց հետ կ'երթար. եւ այդ ժայռը Քրիստոս ինքն էր» (Ա. Կր 10.4): Այս բացատրութիւնը մեզ անակնկալի դիմաց կը դնէ, որովհետեւ մենք առանց այս յայտնութեան բնաւ ալ պիտի չկարենայինք ջուր բխեցնող այդ ժայռին մէջ տեսնել Քրիստոսի ներկայութիւնը, որ Պօղոս Առաքեալ աստուածային յայտնութեամբ կը բացայայտէ մեզի, ցոյց տալով յիշեալ դրուագին խորունկ նշանակութիւնը ոչ միայն ՀԿ-ի պատմութեան մէջ, այլ նաեւ ՆԿ-ի ժողովուրդին, Քրիստոսի Եկեղեցիին, այսինքն մեզի համար:

ՀԱՍԿՆԱԼՈՒ ԲԱՆԱԽՆԵՐԸ

Դարձեալ հարցնենք. ինչո՞ւ Եթովպիացի ներքինին չէր հասկնար, եւ ինչո՞ւ յաճախ մենք չենք հասկնար:

Որովհետեւ, նախ եւ առաջ, հասկացողութիւնը պայմանաւոր է նախադրեալ ծանօթութիւններով:

1) Առաջին բանալին՝ նախ Աստուածաշունչը ճանչնալն է իբրեւ Աստուածաշունչ եւ ոչ թէ պարզապէս մարդկային միտքի արտադրութիւն եղող գործ մը պատմական, օրէնսդրական, բանաստեղծական, իմաստասիրական:

Բայց ատիկա բաւարար չէ «հասկնալու» համար:

2) Միշտ ալ հարկաւոր է բացատրող մը, որուն գործը կամ մասնագիտութիւնը ըլլայ ուսումնասիրել Աստուածաշունչը եւ անոր կապուած աշխարհը, անոր ամբողջ ենթահողը՝ մեզի մօտեցնելու համար զայն: Եւ ասիկա Աստուածաշունչին իսկ թելադրած կամ ուսուցած կերպն է:

- Անցեալին քահանաները ունէին բացատրելու եւ ուսուցանելու պատասխանատուութիւնը: Երկրորդ Օրէնք գիրքին մէջ կը կարդանք, որ Մովսէս Աստուծոյ կողմէ աւանդուած «այս օրէնքը գրեց եւ զանիկա Տիրոջ Ուխտին Տապանակը վերցնող ղեւտացի քահանաներուն եւ Իսրայէլի բոլոր ծերերուն տուաւ: Մովսէս անոնց պատուիրեց. “Ամէն եօթներորդ տարին, թողութեան տարիին ատենը, Տաղաւահարաց տօնին, երբ բոլոր Իսրայէլ կու գայ քու Տէր Աստուծոյդ առջեւ երեսնալու Անոր ընտրած տեղը, այն ատեն բոլոր Իսրա-

յէլին առջեւ այս օրէնքը պիտի կարդաք, որպէսզի լսեն: Հաւաքեցէ ք ժողովուրդը՝ այրերը, կիները, տղաներն ու քաղաքներուդ մէջ եղող օտարականները, որպէսզի լսեն եւ սորվելով՝ ձեր Տէր Աստուծմէն վախնան ու այս օրէնքին բոլոր խօսքերը պահեն ու կատարեն, անոնց չգիտցող տղաները, լսելով, ձեր Տէր Աստուծմէն վախնալ սորվին, բոլոր այն օրերուն մէջ որչափ որ պիտի ապրիք այն երկրին վրայ, որ ժառանգելու համար Յորդանանէն պիտի անցնիք”» (Բ. Օր 31.9-13):

- Յետագային բացատրելու եւ ուսուցանելու այդ պարտականութիւնն ստանձնեցին «դպիր» անունը կրող մարդիկը, որոնք Օրէնքը ընդօրինակող եւ զայն բացատրող ուսուցիչներն էին: «Բոլոր ժողովուրդը մէկ մարդու պէս Ջուրի դրան առջեւի հրապարակը հաւաքուեցան ու Եզրաս Դպիրին ըսին որ Մովսէսին Օրէնքներու գիրքը բերէ, որ Տէրը Իսրայէլին տուած էր: Եօթներորդ ամսուան առաջին օրը Եզրաս Քահանան Օրէնքներու Գիրքը ժողովուրդին առջեւ բերաւ, որ այր ու կին մարդոցմէ ու լսելու եւ հասկնալու կարողութիւն ունեցողներէ բաղկացած էր: Չանիկա Ջուրի դրան առջեւի հրապարակին մէջ առտուընէ մինչեւ կէսօր այր ու կին մարդոց ու հասկցողներուն առջեւ կարդաց եւ բոլոր ժողովուրդը իրենց ականջները Օրէնքներու Գիրքին տուեր էին: Եզրաս Դպիրը յատուկ ասոր համար շինուած տախտակէ բեմին վրայ կայնեցաւ ու անոր աջ կողմը Մատաթիան, Սեման, Անանիան, Ուրիան, Քեղկիան ու Մասսիան եւ ձախ կողմը կեցան Փաղայիան, Միսայէլը, Մեղքիան, Հասունը, Ասբաղանան, Չաքարիան եւ Մեսուղամը: Եզրաս գիրքը բացաւ բոլոր ժողովուրդին աչքերուն առջեւ. վասնզի ինք բոլոր ժողովուրդէն բարձր էր, ու զանիկա բացածին պէս բոլոր ժողովուրդը ոտքի ելաւ: Այն ատեն Եզրաս Եհովա մեծ Աստուածը օրհնեց ու բոլոր ժողովուրդը ձեռքերնին վերցուցին ու “Ամէն, Ամէն” ըսին եւ երեսնին գետինը ծռելով՝ Տիրոջը երկրպագութիւն ըրին: Յետուն, Բանին, Սարաբիան, Յամինը, Ակկուղը, Սաբեթան, Ովդիան, Մասսիան, Կովգիտան, Ազարիան, Յովզաբաղը, Անանը, Փաղայիան ու ղեւտացիները Օրէնքը ժողովուրդին կը հասկնէին եւ ժողովուրդը կարգով կեցեր էին: Անոնք Աստուծոյ Օրէնքին Գիրքը յստակ կերպով կարդացին, ու մեկնելով կարդացածնին հասկցուցին» (Նե 8.1-8):

- Քրիստոս:
- Առաքեալները:
- «Վարդապետները»:

3) Հասկնալու համար որոշ ճիգ մը հարկաւոր է: Որովհետեւ,

Աստուածաշունչին եւ մեր միջեւ կան քանի մը խրամատներ.

- Պատմական «խրամատը»

Օրինակ, հրէական վերաբերումը Հռոմէական Կայսրութեան հանդէպ, ատելութիւնը, մարդահամարը: Արդ, Մտ 5.41՝ «Եթէ մէկը քեզ բռնադատէ մէկ մղոն միասին երթալ՝ իր բեռը շալկելու համար, անոր հետ երկու մղոն ալ գնա՛» որո՞ւ համար կ'ըսէ:

- Լեզուական «խրամատը»

Օրինակ, «Երանի՛ հոգիով աղքատներուն, որովհետեւ անոնց է երկինքի Արքայութիւնը» (Մտ 5.3): Ի՞նչ կը նշանակէ «աղքատ» կամ «հոգիով աղքատ» բացատրութիւնը, որ ոմանց համար շփոթեցուցիչ է:

Կամ, ի՞նչ կը հասկնանք՝ երբ կ'ըսենք «Սուրբ եղիցի անուն Քո» (Մտ 6.9: Ղկ 11.2): Ի՞նչ կը նշանակէ «սուրբ» կամ «սրբել»: Ի՞նչ կը հասկնանք՝ երբ կը կարդանք Յիսուսի հետեւեալ խօսքերը՝ Իր աշակերտներուն համար. «Սրբէ՛ զանոնք քու ճշմարտութեամբդ», կամ Իր անծին համար՝ «անոնց համար Ես Իմ անծս կը սրբեմ, որպէսզի իրենք ալ ճշմարտութեամբ սրբացած ըլլան» (Յհ 17.17 եւ 19):

Կամ, ի՞նչ կը նշանակէ «Դժոխք»: Մեծահարուստի եւ աղքատ Ղազարոսի առակին մէջ Յիսուս այդ բառով ի՞նչ կը հասկնայ երբ կ'ըսէ. «Դժոխքին մէջ, մինչ մեծահարուստը կը տանջուէր, աչքերը բարձրացուց եւ հեռուն Աբրահամը տեսաւ, ինչպէս նաեւ Ղազարոսը՝ անոր քով» (Ղկ 16.23): Տանջանքի վա՞յր կը հասկնայ, թէ՞ պարզապէս՝ մեռելներու աշխարհ:

- Մշակութային «խրամատը»

Օրինակ, ի՞նչ կը հասկնանք երբ կը կարդանք «մաքսաւոր», «դպիր», «ծեր», «մաքուր», «պիղծ», եւայլն: Կամ որո՞նց համար Յիսուս կ'ըսէ. «Երանի՛ սգաւորներուն, որովհետեւ անոնք պիտի մխթարուին» (Մտ 5.4: Հմմտ. Եզ 9.4):

4) Հասկացողութեան համար նախապայման է նաեւ գիրքի մը (կամ լման բաժինի մը, կամ երբեմն ամբողջ Աստուածաշունչին) ամբողջական ընթերցումը կամ ծանօթութիւնը (ամէնէն դիւրինը, օրինակ, Յովնանի մարգարէութիւնը կամ Ա. Կորնթացիներուն 13-րդ գլուխը):

Նոյնիսկ յաճախ վտանգաւոր է ամբողջովին անտեսումով կատարուած ընթերցումը: Օրինակ, քրիստոնէական կրօնը կը հիմնուի

մարդուն ազատութեան վրայ [ատոր համար է որ Քրիստոս օրէնքներ չի սահմաներ, այլ միայն ազատ սկզբունքներ կու տայ, ինչպէս «Երանի»ները, եւ միակ օրէնք՝ սիրոյ օրէնքը]: Եւ Պօղոս Առաքեալ Կորնթոս գտնուած ատեն նոյն այդ ազատութիւնը բանաձեւած էր ըսելով. «Ամէն ինչ արտօնուած է ինձի» (հմմտ. Ա. Կր 6.12-13, 10.23, եւայլն): Կորնթացիներէն ոմանք այս խօսքը բռնագբօսիկ կերպով բացատրելով՝ զայն դրօշակ դարձուցած էին սանձարձակ անառակութիւն գործելու համար՝ ուրիշներն ալ համոզելով ու մոլորեցնելով: Պօղոսի զայրոյթը եւ ճշդումները (6-րդ գլուխ՝ թէ մարմինը պղծութեան համար չէ, այլ՝ զԱստուած փառաւորելու գործիք, տաճար Հոգիին: 10-րդ գլուխ՝ թէ ուտելն ու չուտելը կարելորդ չեն. կարելորդ եղբայր մը չգայթակղեցնելն է: Գղ 5.13-14, ազատութիւնը սիրով իրարու ծառայելու պէտք է մղէ եւ ոչ թէ իրար բզկտելու...):

5) Փնտռել գիրքին կամ հատուածին նպատակը.

- Ամէնէն աւելի ՀԿ-ի Օրէնքն է որ կրնայ մեր դիմաց հասկացողութեան դժուարութիւն հանել՝ եթէ չհասկնանք անոնց ընդհանուր եւ իւրաքանչիւրին մասնաւոր դիտումը կամ նպատակը:

- Պատուիրանները կը կարդանք եւ կը հասկնանք թէ ի՞նչ կ'ըսեն: Բայց ի՞նչ կ'ուզեն ըսել, ի՞նչ է նպատակը, կամ՝ միտք բանին: Օրինակներ.

ա) **Զոհերու Օրէնքը:** «Եւ զուարակը վկայութեան խորանին առջեւ պիտի մօտեցնես ու Ահարոն եւ անոր որդիները իրենց ձեռքը զուարակին գլխուն վրայ պիտի դնեն: Եւ վկայութեան խորանին դրան քով՝ Տիրոջը առջեւ պիտի մորթես զուարակը: Եւ զուարակին արիւնէն պիտի առնես ու մատովդ սեղանին եղջիւրներուն վրայ պիտի քսես եւ մնացած ամբողջ արիւնը սեղանին տակ պիտի թափես: Եւ փորոտիքը ծածկող ճարպն ու լեարդին վրայ եղած թաղանթը եւ երկու երիկամունքը ու անոնց վրայ եղած ճարպը պիտի առնես եւ սեղանին վրայ այրես: Բայց զուարակին միսը ու անոր մորթը եւ անոր աղբը բանակին դուրսիդին կրակով պիտի այրես՝ որպէս մեղքի պատարագ» (Ելք 29.10-14):

Նպատակ.- Սորվիլ՝ թէ մեղքը մահուան կ'առաջնորդէ եւ ամէն մեղաւոր ենթակայ է մահուան: Բայց Աստուած մեղաւորին մահը չ'ուզեր, այլ՝ անոր դարձն ու փրկութիւնը (Եզ 18.23): Աստուած Իր անսահման ողորմութեամբ մեր մեղքերուն փոխարէն կենդանիին կեանքը կ'առնէ, կենդանին մեր մահը կը փոխարինէ: Բայց կենդանիին զոհագործումը խորհրդանշական է միայն եւ պատկերացումն է ճշմարիտ Զոհին, որ Աստուած կու տայ՝ մեր բոլորին փոխարէն՝ աշ-

խարհի մեղքը վերցնելու եւ մեզի յաւիտենական կեանք պարգեւելու համար: Եւ այդ Չոհը Քրիստոս է:

բ) **Սուրբ եւ անսուրբ կենդանիներ:** «Որովհետեւ ես եմ Տէր Աստուածը, ուստի սրբեցէք անձերնիդ ու սուրբ եղէք, վասնզի ես սուրբ եմ: Բնաւ երկրի վրայ սողացող որեւէ գեռունով անձերնիդ մի՛ պղծէք: Քանզի ես եմ Եհովան, որ ձեզ Եգիպտոսի երկրէն հանեցի, որպէսզի ձեզի Աստուած ըլլամ. ուստի սուրբ եղէք, վասնզի ես սուրբ եմ: Չորքոտանիներուն եւ թռչուններուն ու ջուրերուն մէջ շարժող բոլոր շնչաւոր կենդանիներուն եւ երկրի վրայ սողացող բոլոր կենդանիներուն օրէնքը այս է. որպէսզի անմաքուրին ու մաքուրին մէջտեղ եւ ուտուելու անասունին ու չուտուելու անասունին մէջտեղ տարբերութիւն դնէք» (Ղւ 11.44-47):

Նպատակ.- Աստուած իր ժողովուրդին սրբութեան դաստիարակութիւնը կու տայ ժամանակաւոր կերպով արգիլելով որոշ ուտելիքներ, որոնք որեւէ չար կամ գէշ բան չունին իրենց մէջ (Հռ 14.14 եւ 20: Ա. Տմ 4.4-5: Հմմտ. Գրծ 10.11-15):

գ) **Տասանորդ:** «“Ամէն երրորդ տարուան վերջաւորութեան նոյն տարուան արմտիքներուն բոլոր տասանորդը հանէ՛ եւ զանիկա քու քաղաքացիներուդ մէջ պահէ՛: Որպէսզի երբ դելտացին (որ քեզի հետ բաժին ու ժառանգութիւն չունի) եւ դռներդ եղող օտարականը, որքն ու որբեայրին գան ուտեն, կշտանան, որպէսզի քու Տէր Աստուածդ քեզ եւ քու ձեռքերուդ կատարած բոլոր գործերը օրինէ՛» (Բ. Օր 14.28-29):

Նպատակ.- Տէրը ճանչնալ իբրեւ տուիչը բոլոր բարիքներուն, դուրս գալ եսասիրութենէն եւ Տիրոջ առատ պարգեւներէն բաժին հանել չունեւորներուն ու կարիքաւորներուն (այլասիրութիւն սորվիլ), բաշխելով Աստուծոյ օրհնութիւնը շահիլ, ուրախացնելով ուրախանալ սորվիլ:

դ) **Հանգստեան 7-րդ Տարին.**- «Տէրը խօսեցաւ Մովսէսին Սինա լեռը ըսելով. “Խօսէ՛ Իսրայէլի որդիներուն ու ըսէ՛ անոնց. “Երբ այն երկիրը մտնէք, որ ես ձեզի պիտի տամ, թող այն երկիրը հանգստութեան շաբաթ մը կապէ՛ Տիրոջը: Վեց տարի քու արտոյ ցանէ՛ եւ քու այգիդ վեց տարի յօտէ՛ ու անոր արդիւնքը հաւաքէ՛, բայց եօթներորդ տարին երկրին համար հանգստութեան շաբաթ, այսինքն՝ Տիրոջ համար շաբաթ պէտք է ըլլայ: Քու արտոյ պիտի չցանես եւ քու այգիդ պիտի չյօտես, քու արտիդ մէջ ինքնիրմէ՛ բուսածը պէտք չէ հնձես եւ քու յօտած այգիդ խաղողները պէտք չէ հաւաքես. հանգստութեան տարի պէտք է ըլլայ անիկա երկրին: Եւ երկրին շաբաթը թող կերակուր հայթայթէ քեզի եւ քու ծառայիդ եւ քու աղախինիդ ու քու վարձկանիդ

եւ քու քովդ պանդխտացած օտարականին: Եւ քու անասուններուդ ու քու երկրիդ մէջ եղած կենդանիներուն կերակուր թող ըլլայ անոր սմբողջ արդիւնքը”» (Ղւ 25.1-7: Հմմտ. Ելք 23.10-11):

Նպատակ.- Վստահիլ Աստուծոյ ճանչնալով Անոր նախախնամութիւնը, ժուժկալութիւն սորվիլ, ունեցած քիչը (յիշէ՛ այրիին լուման) բաժնել ուրիշներուն հետ, բաշխելով Աստուծոյ օրհնութիւնը շահիլ:

6) **Հասկացողութեան մակարդակներ.**

ա) **Բառացի** (նիւթական, սովորական, բնական) **իմաստ:**

բ) **Այլաբանական իմաստ:**

- Բարի Սամարացիին առակը (Ղկ 10.30-35) եւ անոր բառացի եւ այլաբանական իմաստները:

գ) **Փոխաբերական** (բարոյական) **իմաստ:**

- Փոթորիկին խաղաղեցման դրուագը (Մր 4.35-41) եւ անոր բառացի եւ փոխաբերական իմաստները:

դ) **Խորհրդական** (հոգեւոր) **իմաստ:**

- Մելքիսեդեկ եւ Քրիստոս (Ծն 14.18-20, Եբր 7.1-3) – խորհրդական իմաստ:

ե) **Տիպաբանական իմաստ:**

- Օրինակներ.- Իսահակ - խոյ - Քրիստոս:

Ջրհեղեղ՝ Նոյի տապան - Մկրտութիւն՝ Եկեղեցի:

Աղաւնի - Սուրբ Հոգի:

Ելք - Չատիկ - Եկեղեցի - փրկութիւն:

- Որոգինէսի եռամասնեայ հասկացողութիւնը:

- Մարմնաւոր իմաստ (Յիսուսի փորձութեան լեռը):

- Շնչաւոր իմաստ:

- Հոգեւոր իմաստ: (Դրախտէն բխող գետը իր 4 ճիւղերով):

7) **Հասկնալ ի վերջոյ, թէ ինձի համար գրուած են** (Հռ 15.4: Ա. Կր 10.11):

ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԻՄԱՍՏՆԵՐ

- Ինչո՞ւ տարբեր մարդիկ կամ տարբեր Եկեղեցիներ տարբեր ձեւով կը հասկնան...:

- Աստուծոյ Խօսքին անժամանակութիւնը եւ անսահման հարստութիւնը, եւ մեր սահմանափակուածութիւնը՝ մեր ժամանակով եւ հասկացողութիւններով. այնպէս որ հազիւ բուն նշանակութեան մէկ կամ քանի մը իմաստները կը յաջողինք բռնել (Ս. Օգոստինոս):

- Մեր աճումին հետ՝ հասկնալու կերպին փոփոխութիւնը (Հայոց

Պատմութիւն աւանդելու օրինակը՝ մանուկին, պատանիին, երիտասարդին՝ ըստ իրենց ընկալման մակարդակին):

5-րդ դարու նշանաւոր մատենագիր եւ Վարդանանց շարժման սքանչելի պատմագիրը՝ Եղիշէ Վարդապետ, իր «Վարդապետութիւն ըստ Յովհաննու սիրելոյ ի չարչարանս Տեառն» ճառին մէջ, այս կ'ըսէ այս մասին.

«Եթէ կ'ուզես հետեւեալ կատարեալ օրինակը առ, որով միտքդ կրնայ համոզուիլ եւ ճշմարիտ հաւանութեան գալ:

Երբ որ ծարաւած՝ դէպի աղբիւր կը դիմես, քեզի հետ նաեւ շատեր, [նոյնիսկ] եթէ տասնեակ հազար անգամ խմես՝ չես կրնար խմելովդ աղբիւրին ջուրը ցամքեցնել, ոչ ալ նախապէս խմած ջուրդ է որ կը խմես: Կամ երբ աղբիւրին քով նստիս՝ նոյն ջուրին չես հանդիպիր [չես տեսներ] բնաւ. ոչ անոր մէջ տարբեր բան խառնուած կը տեսնես, ոչ ալ երէկ տեսածդ այսօր դարձեալ կ'երեւի քեզի: Արդ, ուրեմն, եթէ ջուրը իբրեւ ջուր իր անընդհատ ընթացքովը այսպիսի մեծ խորհուրդներ կը պարզէ մարդուն, որքա՞ն աւելի մեծ [խորհուրդներ պիտի պարզէ] Աստուծոյ Խօսքը, երբ ծարաւ հոգիով խմես գայն: Երբեք ծանրութեամբ չես լեցուիր, այլ՝ կը թեթեւաս եւ դարձեալ կը փափաքիս խմել: Թէպէտ համն ու իսկութիւնը [=բնութիւն] նոյնն են, բայց անոնց բազմատեսակ իմաստները տարբեր-տարբեր ձեւերով կը ճաշակուին իմաստասէր միտքերուն մէջ [կողմէ՞], եւ բոլորն ալ բովանդակուած նոյն եւ մէկ ճշմարտութեան կ'առաջնորդեն» (Տես «Մատենագրութիւնք», Վենետիկ, 1859, էջ 244):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ահա թէ ինչո՞ւ մնայուն ճիգ պէտք է՝ հասկնալու, մնայուն պեղում Աստուծոյ Խօսքին, եւ Եկեղեցւոյ ուսուցման ու մեկնութեան տեսական նորոգութեան անհրաժեշտութիւնը, որպէսզի իւրաքանչիւր սերունդ իր ժամանակին համար գտնէ նոր իմաստը Աստուծոյ յաւերժական նոյն Խօսքին:

ԱՒԵՏԱՐԱՆ

Աստուածաշունչին մէջ գրական սեռ մըն է «Աւետարան»-ը:

Ինչպէս ծանօթ է, Նոր Կտակարանը ունի չորս Աւետարաններ: Անոնք գրուած են չորս տարբեր հեղինակներու կողմէ՝ Մատթէոս, Մարկոս, Դուկաս եւ Յովհաննէս:

Ինչո՞ւ համար այս գիրքերը «Աւետարան»-ներ կոչուած են:

Իր առաքելութեան առաջին իսկ օրէն, Յիսուս խօսեցաւ Աւետարանին մասին:

Մարկոս Աւետարանիչ գրած է. «Ան (Յիսուս) Աստուծոյ Աւետարանը կը քարոզէր՝ ըսելով. փրկութեան ժամանակը հասած է եւ եկած Աստուծոյ Արքայութիւնը. ապաշխարեցէ՛ք եւ հաւատացէ՛ք Աւետարանին» (Մր 1.14-15):

Ի՞նչ կը նշանակէ այս «Աւետարան»-ը:

Հարցումին պատասխանը Յիսուսի յայտարարութեան մէջն է: Յիսուսի յայտարարութիւնը բարի լուր մը կամ աւետիս մը կը բովանդակէ: Ուրեմն, Յիսուսի Աւետարանը բարի լուր մը կամ աւետիս մը կը ներկայացնէ: Շփոթութեան մը առաջը առնելու համար ըսեմ, որ Նոր Կտակարանին մէջ, «Աւետարան»-ը գիրքի իմաստ չունի, Աւետարանին իբր գիրք ընկալուիմը յետագայի երեւոյթ է եւ բնագրային չէ:

Յիսուսի քարոզած Աւետարանը մեզի կը յայտնէ, թէ փրկութեան եւ Աստուծոյ Արքայութեան ժամանակը հասած է եւ եկած: Այս քարոզութիւնը միաժամանակ կոչ է ապաշխարելու եւ հաւատալու Աւետարանին: Այդ կոչին ընդառաջելուն մէջ կ'ամբողջանայ Աւետարանին ճշմարիտ հասկացողութիւնը: Փրկութեան ժամանակը հասած եւ Աստուծոյ Արքայութիւնը եկած է այն մարդուն համար, որ կ'ապաշխարէ եւ կը հաւատայ: Հետեւաբար, Աստուծոյ Աւետարանը անոր համար բարի լուր կը ներկայացնէ, որ ապաշխարութեան եւ հաւտքի ճանապարհին վրայ է:

Փրկութիւնը եւ Աստուծոյ Արքայութիւնը մեզի մատուցուած են ձրիօրէն՝ առանց որեւէ պայմանի: Անոնք մեզի մատուցուած են իբր շնորհք:

Ե՞րբ է որ շնորհք մը շնորհք կ'ըլլայ: Եթէ ազատ մարդու մը ըսենք՝ «ազատ ես»՝ ի՞նչ շնորհք ըրած կ'ըլլանք: Ոչինչ: Բայց բանտարկեալ մարդուն եթէ ազատութիւն տանք այն ատեն շնորհք ըրած կ'ըլլանք: Նոյնպէս, երբ մահապարտին ազատութիւն տանք՝ շնորհք ըրած կ'ըլլանք, եւ ատիկա գերազանց շնորհք կ'ըլլայ, որովհետեւ ենթական մահուան դատապարտութեան առջեւ էր եւ իրեն նոր կեանք շնորհուեցաւ: Ճիշդ այս է շնորհքը: Ինչպէս Եսայի Մարգարէ ըսած էր եւ Մատթէոս Աւետարանիչ վերբերած խաւարի մէջ նստող ժողովորդն է, որ արժանի կ'ըլլայ մեծ լոյսը տեսնելու (հմտ. Ես 9.2: Մտ 4.16): Եւ Քրիստոսի ներկայութիւնը առաջին իսկ պահէն՝ այն մեծ լոյսն է որ կը ծագեցնէր: Արդ, Աւետարանին բարի լուրը իբր շնորհք կը հասնի այն մարդուն, որ զայն կը սպասէ: Մինչդէռ Աստուծոյ փրկութեան եւ արքայութեան սպասումը չունեցող մարդուն համար՝ Աւետարանը երբեք ալ բարի լուր չէ:

Քրիստոս կը զարմացնէ մեզ: Ան որեւէ բան չուզեց արձանագրել՝ հակառակ գրել-կարդալ գիտնալուն: Իսկ ինչո՞ւ զայն Իր աշակերտներուն վստահեցաւ, եւ առաքելները ինչո՞ւ համար ժամանակաւոր կերպով զայն գիրի վերածելու աշխատանք չըրին:

Անցեալին գրաւոր խօսքը յատուկ էր միայն քիչ թիւով անհատներու: Ո՞վ կրնար գիրք ունենալ, քանի՞ հոգի: Միայն իշխանաւորը, հարուստը: Իսկ Աստուծոյ Աւետարանը առաջին հերթին իշխանաւորներուն կամ հարուստներուն ուղղուած չէր: Ուստի, պահանջք կամ կարիքը չկար Աւետարանին անմիջականօրէն արձանագրութեան: Ընդհակառակը, ժողովորդին համեստ զանգուածները բերանացի քարոզութեան կամ խօսքին պէտք ունէին:

Բայց երբ առաքելներուն քարոզութեան սահմանները ընդարձակուեցան, առաքելները ամէն տեղ չէին կրնար հասնիլ, ուստի անհրաժեշտութիւնը զգացուեցաւ գրի առնելու Քրիստոսի առաքելութիւնը եւ պատգամը: Այդ անհրաժեշտութիւնը աւելի շեշտուեցաւ, երբ առաքելներուն հետեւորդները սկսան քարոզել: Մարդիկ անդրադարձան, որ բերանացի պահպանման մէջ կայ վտանգ մը, թէ ժամանակի ընթացքին Քրիստոսի առաքելութեան պատմութիւնը եւ խօսքերը կրնան խեղաթիւրման ենթարկուիլ: Հետեւաբար, կարելոր տեսան աւանդուածները արձանագրել՝ յաջորդող սերունդներուն անփոփոխ կերպով փոխանցելու համար: Արձանագրութեան երրորդ պատճառ մըն ալ այն էր, որ ոմանք սկսան աւանդուածներն իրենց

նպատակներուն ծառայեցնել եւ զանոնք այլափոխել: Ուստի, Եկեղեցին արձանագրութեան դիմեց նաեւ ինքնապաշտպանութեան համար, որպէսզի ապահովելով աւանդուածներուն անփոփոխութիւնը ինքզինք անայլայլ պահէ:

Քանի՞ աւետարաններ գրուեցան: Ճշգրիտ թիւի մը մասին չենք կրնար խօսիլ: Ղուկասի Աւետարանին առաջին երկու համարները մեզի կ'ըսեն, թէ աւետարանիչին օրով արդէն իսկ բազմաթիւ մարդիկ գրած էին Յիսուսի կեանքին վերաբերող դրուագները: Կը կարդանք. «Շատեր ծեռնարկեցին պատմելու եւ դասաւորելու այն բոլոր դէպքերը, որոնք մեր մէջ տեղի ունեցան եւ որ մեզի աւանդեցին անոնք, որոնք սկիզբէն իսկ անոնց ականատեսներ եւ Աստուծոյ խօսքին քարոզիչ եղան» (Ղկ 1.1-2):

Բազմաթիւ աւետարաններ գրուած են, սակայն Եկեղեցին բոլորը չընդունեց, որովհետեւ անոնց մէջ չգտաւ հարազատ արտայայտութիւնը այն աւանդութիւններուն, որոնք փոխանցուած էին Քրիստոսի առաքելութեան ականատեսներուն եւ Աստուծոյ խօսքին քարոզիչներուն կողմէ:

Եկեղեցին առաքելական աւանդութեան վրայ սեւեռեց իր նայուածքը, նախ՝ որովհետեւ այդ աւանդութիւնն էր վստահելին, եւ երկրորդ՝ որովհետեւ ատոր կողքին եղծուածները ծնան ու սկսան թափանցել Եկեղեցիէն ներս: Անոնց դիմաց Եկեղեցին պէտք ունէր կանգնելու ապահով գետնի մը վրայ: Այդ պատճառով, ընդունեց միայն այն, ինչ որ Առաքելական Աւանդութեան համաձայն էր, ու մերժեց այն միւսները՝ որոնք այդպէս չէին:

Բայց ինչո՞ւ համար Եկեղեցին անհրաժեշտ տեսաւ ո՛չ թէ միայն մէկ հատիկ Աւետարան ձանչնալ, այլ՝ որդեգրեց այն չորսը, որ մենք ունինք այսօր:

Եթէ չորսին ալ վկայութիւնները մօտաւորապէս նոյնն են, ապա ի՞նչ պէտք կար չորսին, մէկ հատը բաւարար չէ՞ր: Ինչո՞ւ համար Եկեղեցին չորս Աւետարանները ընդունեց եւ չուզեց համադրուած մէկ Աւետարան ունենալ: (Ասորիքի մէջ Տատիանոս անունով մէկը համադրեց չորսը Բ. դարու կիսուն: Այդ համադրութիւնը հայերէնի թարգմանուած ու պահուած է՝ Եփրեմ Խուրիի վերագրուելով):

Սակայն հարց մը կայ այստեղ: Չորս Աւետարաններէն իւրաքանչիւրը Յիսուսի կեանքին կապուած դրուագները փոքր կամ զգալի տարբերութեամբ մը կը ներկայացնէ, նոյնպէս Յիսուսի խօսքերը: Եւ այս իրականութիւնը դժուարութիւն կրնայ ստեղծել մեզի համար, բայց միաժամանակ զօրացուցիչ տուեալ մըն է: Այսպէս են մարդկային կեանքի բոլոր վկայութիւնները: Երբ մենք չորս վկաներ կանչենք

դատարան եւ նոյն դէպքին մասին ուզենք, որ իրենց վկայութիւնը տան, անկարելի է երեւակայել, թէ նոյն դէպքը ճիշդ նոյն ծելով տեսած ըլլան կամ դիտած ըլլան եւ ճիշդ նոյն ծելով ներկայացնեն: Իւրաքանչիւրը կը ներկայացնէ իրեն յատուկ կերպով մը, իր անկիւնէն: Դատաւորին համար դէպքի մը մասին վկայութիւններուն տարբերութիւնները կ'օգնեն, որ ան դէպքին իրականութիւնը առաւել ճանչնայ: Եկեղեցւոյ հայրերը այս ճշմարտութիւնը գիտէին: Բայց չորս Աւետարաններու իրենց ընտրութեան մէջ՝ անոնք հաստատօրէն հիմնուեցան Աստուածաշունչով արտայայտուած Աստուծոյ կամքին վրայ:

Եզեկիէլի մարգարէութիւնն իր առաջին գլուխին մէջ կը խօսի «չորս կենդանիի կերպարանք»-ի մասին: Մարգարէն գրած է, թէ «անոնք մարդու կերպարանք ունէին» կամ «չորսն ալ մարդու երես ունէին: Աջ կողմէն առիւծի երես, չորսն ալ ձախ կողմէն եզի երես ունէին, չորսն ալ արծիւի երես ունէին» (տես Եզ 1.5-10): Այս պատկերը խորհրդաւոր է: Մարգարէն նաեւ գրած է, թէ այս կենդանիները իրենց վրայ կը կրէին Աստուծոյ գահը, եւ որուն վրայ նստած էր Աստուած (1.26-27): «Չորս կենդանիի կերպարանք»-ին մենք կը հանդիպինք նաեւ Յովհաննէս Առաքեալի գրի առած Յայտնութեան մէջ: Այնտեղ գրուած է. «Հոն՝ կեդրոնը, գահին շուրջը, չորս կողմէն կային չորս կենդանիներ՝ առջեւէն ու ետեւէն աչքերով լեցուն: Առաջին կենդանին առիւծի կը նմանէր, երկրորդը՝ եզի, երրորդը կենդանիին դէմքը մարդու կը նմանէր եւ չորրորդը կենդանին թռչող արծիւի կը նմանէր» (Յտ 4.6-7): Գահին վրայ բազմած կը նկարագրուի Ան «որ կ'ապրի յաւիտեանս յաւիտենից» կամ Գառնուկը, այսինքն՝ Քրիստոս: Արդ, իւրաքանչիւր կենդանին ցոյց կու տայ գահին վրայ բազմողին մէկ յատկանիշը. մարդու նմանող կենդանին՝ Անոր մարդ ըլլալը, առիւծի նմանող կենդանին՝ Անոր թագաւոր ըլլալը, եզի նմանող կենդանին՝ Անոր ծառայ ըլլալը, եւ արծիւի նմանող կենդանին՝ Անոր Աստուած ըլլալը:

Իսկ չորս Աւետարաններէն իւրաքանչիւրը այդ մարգարէութիւններուն իրականացումն է. անոնցմէ ամէն մէկը Քրիստոսի քառեակ յատկանիշներէն մէկը կ'արտայայտէ. այսպէս՝ Մատթէոսի Աւետարանը զՔրիստոս կը ներկայացնէ որպէս Աստուծոյ ծառան, որ Օրէնքը ամբողջապէս կը յարգէ եւ կը գործադրէ, այդ պատճառով՝ անոր խորհրդանիշն է եզը: Մարկոսի Աւետարանը զՔրիստոս կը ներկայացնէ որպէս թագաւոր, այդ պատճառով՝ անոր խորհրդանիշ տրուած է առիւծը: Դուկասի Աւետարանին մէջ Քրիստոսի համար յաճախ գործածուած անունն է՝ Մարդու Որդի: Մարդու Որդին Աստուծոյ վախճանաբանական ծրագիրը իրականացնողն է եւ Աստուծոյ հա-

ւետարիմներուն ազատարարը. այդ պատճառով՝ Դուկասի Աւետարանին խորհրդանիշն է մարդադէմ հրեշտակ մը (հրեշտակները մարդոց փրկութեան օգնողներ են (Եբր 1.14): Յովհաննէսի Աւետարանը զՔրիստոս կը ներկայացնէ Իր Աստուածութեան մէջ. այդ պատճառով՝ անոր խորհրդանիշն է արծիւը:

Ամէն մէկ Աւետարանիչ Յիսուս Քրիստոսի Աւետարանը գրած է ըստ իր հասցէի ոգիին:

Այսպէս.

Ա) Մատթէոսի Աւետարանին հասցէն յատկապէս հրեայ քրիստոնեաներն են: Անոնք եւս՝ իրենց մովսիսական եղբայրներուն պէս մեծ կարեւորութիւն կու տային Օրէնքին եւ մարգարէներուն: Ուստի, Մատթէոսի Աւետարանին մէջ Յիսուս նկարագրուած է որպէս Օրէնքի անթերի եւ ամբողջական գործադրութեան ուսուցիչը եւ իբր մարգարէական խոստումներուն կատարումը: Յիսուս ըսած է. «Մի՛ կարծէք, թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու. չեկայ ջնջելու, այլ՝ ամբողջացնելու: Հաստատ գիտցէք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնները կ'էտ առ կ'էտ պիտի իրականանան՝ առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին: Ով որ ամէնափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ այդպէս սորվեցնէ՝ Երկինքի Արքայութեան մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով որ գործադրէ պատուիրանները եւ ուսուցանէ՝ մեծ պիտի ըլլայ Երկինքի Արքայութեան մէջ» (Մտ 5.17-19): Այս յայտարարութիւնը մենք ուրիշ Աւետարանի մէջ չենք գտներ: Այս Աւետարանին մէջ է, որ մենք ամէնէն աւելի կը գտնենք մէջբերումներ մարգարէներէն. Աւետարանիչը ամէն անգամ կը նշէ. «ասիկա եղաւ՝ որպէսզի կատարուի գրուածը: Կը բաւէ միայն կարողալ Յիսուսի ծննդեան վերաբերող պատմութիւնը կամ մկրտութեան եւ գործունէութեան մասին հաստատումները, եւ պիտի տեսնենք, թէ քանի՛ անգամ կը դիմէ մարգարէական վկայութիւններուն՝ երբեմն ակնարկելով եւ երբեմն բառացի մէջբերելով: Նոյնը՝ խաչելութեան եւ թաղման պարագային. ամէն քայլափոխի ցոյց կու տայ մարգարէութեանց կատարումը Յիսուսի կեանքին մէջ:

Աւետարանիչին միտքն է նաեւ՝ Յիսուսը ներկայացնել իբր իր ժողովուրդին սպասած Մեսիան: Աւետարանին սկզբնաւորութեան Յիսուս կը ներկայացուի որպէս Քրիստոս, այսինքն՝ Աստուծոյ Օծեալը, որ Աբրահամի Որդին է, որ Դաւիթի Որդին է: Յիսուսի ծագումը Աբրահամ Նահապետին կապելով՝ Աւետարանիչը ուզած է ցոյց տալ, թէ Յիսուս Իր ժողովուրդին հարազատ զաւակն է. իսկ Դաւիթ թագա-

ւորին կապելով՝ ուզած է ցոյց տալ, թէ Ան Ղաւիթի շառաւիղէն սպասուած Յաւիտենական Թագաւորն է:

Բ) Մարկոս Աւետարանիչ սկիզբը Պօղոս Առաքեալի գործակիցն էր: Յետոյ դարձաւ իր հօրեղբօր Բառնաբասի գործակից: Աւելի ուշ իբր Պետրոս Առաքեալի թարգման՝ անոր հետ Հռոմ գտնուեցաւ: Արդ, հաւանական է, որ Մարկոս իր Աւետարանը ուղղած է հռոմէացիներուն: Այդ պատճառով ալ՝ ան Յիսուսը կը ներկայացնէ իբր զօրաւոր Թագաւոր: Հռոմէացիները Յիսուսէ առաջ եւ Յիսուսի ժամանակ, ինչպէս անկէ ետքն ալ՝ հսկայ կայսրութեան մը տէր էին: Անոնք զինուորական մարդիկ էին եւ ոյժին, զօրութեան ու տիրապետութեան կը հաւատային: Մարկոս Աւետարանիչ ալ Յիսուսը ներկայացուցած է իբր տէր ոյժի եւ զօրութեան, այլեւ մէկը, որ կը տիրէ բնութեան եւ հոգեկան աշխարհին վրայ: Հրաշքները ամէնէն աւելի կը գտնենք այս Աւետարանին մէջ:

Նկատի ունենալով, որ հռոմէացիները նաեւ գործնապաշտ մարդիկ էին, Մարկոս Աւետարանիչ Յիսուսը ներկայացուցած է աւելի գործելու վրայ՝ քան թէ խօսելու կամ խորհրդածելու: Յիսուս միշտ գործի մէջ է. կը շրջի, կը քարոզէ, կը բժշկէ, կը հրաշագործէ, մեղաւորին հետ կ'ըլլայ: Արդ, Մարկոս Աւետարանիչ կը ներկայացնէ թագաւոր մը, որ իր ամբողջական իշխանութիւնը ի գործ կը դնէ եւ աստիճանաբար կը տարածէ զայն, այսինքն՝ նոր-նոր հետեւորդներ կը շահի:

Գ) Ղուկաս Աւետարանիչ անտիոքցի յոյն մըն էր եւ ընկերակից Պօղոս Առաքեալի, յատկապէս անոր Փոքր Ասիոյ մէջ ճամբորդութիւններուն ընթացքին: Հաւանաբար աւետարանիչին հասցէն այդ շրջանի յոյն համայնքներն էին: Յոյները գեղարուեստական շեշտուած ախորժակ ունէին, իսկ անոնց մտածողութիւնը մարդակեդրոն էր: Ղուկաս Աւետարանիչ յունական ոգիի այս երկու յատկանիշներուն գոհացում կու տայ: Այս Աւետարանին մէջ է, որ մենք կը գտնենք, օրինակ, Ջաքարիայի, Եղիսաբէթի եւ Մարիամ Աստուածամօր օրհներգութիւնները: Նաեւ աւետարանիչը Յիսուսը կը ներկայացնէ խորապէս մարդկային հետաքրքրութիւններով: Ան ընկերութեան վերնախաւին կողմէ՝ անտեսուած խոնարհ դասակարգին հետն է. այսպէս՝ մեղաւորներուն, աղքատներուն, զրկեալներուն, մաքսաւորներուն: Ղուկասի Աւետարանը մարդոց հանդէպ թէ՛ Յիսուսի եւ թէ՛ Աստուծոյ սէրը շեշտող աւետարանն է: Նայեցէ՛ք պարզապէս այն տարրերուն, որոնք չենք գտներ միւս Աւետարաններուն մէջ. Անառակ որդիին առակը, բարի սամարացիին առակը, Ջաքէոս մաքսա-

պետին դարձի պատմութիւնը, խաչեալ աւագակին դարձը եւ Արքայութեան արժանանալը: Մատթէոս Աւետարանիչին պէս Ղուկաս Աւետարանիչ եւս Յիսուսի ազգաբանութիւն մը կը ներկայացնէ: Մատթէոս Աւետարանիչ Յիսուսի ծագումը կը կապէ Ղաւիթ թագաւորին եւ Աբրահամ Նահապետին, իսկ Ղուկաս աւետարանիչ Ադամի: Ինչո՞ւ: Եբրայեցի ժողովուրդը իրեն Նահապետ կ'ընդունէր Աբրահամը, մինչդէռ Ադամէն սերած են նաեւ ուրիշ ազգեր: Յստակօրէն, Ղուկաս Աւետարանիչ կ'ուզէ Յիսուսի համամարդկային արժէքը ցոյց տալ:

Դ) Յովհաննէս Առաքեալ Յիսուսի տասներկու աշակերտներէն մէկն էր. ան տարիքով ամէնափոքրն էր: Աւետարանիչին հասցէն անմիջականօրէն Եփեսոսի քրիստոնէաներն էին, հաւանաբար: Այլ խօսքով՝ աւետարանիչը հելլէնական մշակոյթով հաւատացեալներու ուղղած էր իր գիրքը: Յովհաննէսի Աւետարանը շատ յստակօրէն կը տարբերի համատեսական աւետարաններէն: Մինչ համատեսականները Յիսուսի գործունէութիւնը գլխաւորաբար Գալիլիոյ մէջ կատարուած ներկայացուցած են, չորրորդ Աւետարանը, զարմանալիօրէն, կարծէք բաց մը գոցելու պէս, Յիսուսի գործունէութիւնը առհասարակ կը ներկայացնէ Երուսաղէմի շրջակայքին մէջ, այսինքն՝ Հրէաստանի: Տոկոսային համեմատութեամբ երբ նայինք, համատեսականները Յիսուսի գործունէութիւնը 90 առ հարիւրով ներկայացուցած են Գալիլիոյ մէջ, իսկ չորրորդ Աւետարանը զայն ներկայացուցած է ճիշդ հակառակ համեմատութեամբ: Համատեսականներուն մօտ աւելի ներկայացուած են Յիսուսի գործերը քան խօսքերը (թէպէտ Մատթէոսի քով խօսքի բաժինն ալ բաւական լայն է, սակայն ոչ Յովհաննէսի չափով): Յովհաննէսի Աւետարանին մէջ Յիսուսի գործերը կամ հրաշքները չենք տեսներ այնքան որքան մտածողութիւնը, եւ այն ալ մտածողութեան խորունկ մէկ եզրը, որ մենք կը կոչենք խորհրդածութիւն: Չորրորդ Աւետարանին մէջ Յիսուս Իր միտքերը կը խորացնէ, երկարօրէն կանգ կ'առնէ անոնց վրայ:

Յովհաննէս Առաքեալ իր Աւետարանին սկիզբէն մինչեւ վերջը առաջադրութիւնը ունեցած է Յիսուսի աստուածային ինքնութիւնը ցոյց տալ. Յիսուս Աստուած Բանն է:

Առաքեալին մէջբերած Յիսուսի խորհրդածութիւնները մեզ յաճախ կը հրաւիրեն ճանչնալու Աստուծոյ Որդին. Յիսուս ամէն անգամ կը յիշեցնէ Երկինքէն Իր իջած ըլլալը, Հօրմէն առաքուած եւ միաժամանակ Անոր հետ ըլլալը:

ՀԱՅՐ ՄԵՐ

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՂՕՔԻ ՄԱՍԻՆ

Նմանապէս, երբ կ'աղօթես՝ կեղծաւորներուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնները կեցած աղօթել, որպէսզի մարդիկ իրենց աղօթելը տեսնեն: Վստահ եղէ՞ք՝ միայն ատիկա է անոնց վարձատրութիւնը:

Դուս երբ կ'աղօթես՝ մտի՛ր սենեակդ, գոցէ՛ դուռը եւ ծածուկ կերպով աղօթէ՛ քու երկնաւոր Հօրդ: Եւ Հայրդ որ անտեսանելի է ու կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցէ յայտնապէս:

Տակաւին, երբ կ'աղօթէք, մի՛ շատախօսէք հեթանոսներուն նման, որոնք կը կարծեն որ եթէ շատ խնդրեն՝ լսելի պիտի դառնան: Արդ, մի՛ նմանիք անոնց, որովհետեւ ձեր Հայրը գիտէ ինչ որ պէտք է ձեզի, նոյնիսկ երբ տակաւին Իրմէ խնդրած չէք (Մտ 6.5-8):

Յիսուս, ճշմարտութիւնը ուսուցանելու համար, նախ սխալ ձեւը կը մատնանշէ, եւ ապա ուղիղին մէջ քալելու կը հրաւիրէ:

Ան առանձնական աղօթքին վրայ կը շեշտէ եւ ծածուկ կերպով աղօթելը կը գնահատէ:

Արդեօք ասիկա ըսել է, թէ Յիսուս հրապարակային աղօթքը կամ հրապարակայնօրէն կատարուած աղօթքը խոտելի՞ կը գտնէ: Ան արդեօք ծիսական աղօթքը կը մերժէ՞ր եւ միայն առանձնաբար կատարուած աղօթքը ընդունելի կը գտնէր:

Այս հարցումներուն պատասխանելէ առաջ, նախ հարց տանք, թէ աղօթքը անհրաժեշտ է մեզի համար: Մանաւանդ որ Յիսուս ըսած է, թէ Հայրն Աստուած սկիզբէն գիտէ մեր կարիքը, այսինքն՝ աղօթքով Իրմէ խնդրելէ առաջ: Քանի այդպէս է՝ «Ես ի՞նչ պէտք ունիմ աղօթելու» կրնան ըսել մարդիկ:

Եկէ՛ք պզտիկ շեղում մը ընենք նախ, ու տեսնենք, թէ որո՞նք են «աղօթք» բառին հոմանիշները: «Աղօթք» կը նշանակէ՝

- աղերս.
- հայցում.

- խնդրանք.
- աղաչանք:

Աղօթքը կը յայտնէ մարդուն կախուածութիւնը Աստուծմէ: Մեր կեանքը եւ անոր բոլոր երեսները կախում ունին Աստուծմէ: Աղօթքով է, որ Արարիչն ու արարածը փոխյարաբերութեան մէջ կը մտնեն: Մեր կախուածութիւնը Աստուծմէ մեզ կը մղէ Անոր աղերսելու, Անկէ հայցելու եւ խնդրելու, եւ Անոր աղաչելու:

Գուցէ ըսուի, թէ Աստուած կ'ուզէ, որ մենք Իրմէ կախուած մնանք, որպէսզի միշտ իրեն աղօթենք: Ասիկա եսասէր աստուծոյ մը պատկերացում է: Սակայն մեր հաւատքին Աստուածը եսասէր չէ:

Ըսի, որ աղօթքը մարդուն Աստուծմէ կախուածութիւնը կը յայտնէ: Բայց ասիկա ըսել չէ, թէ Աստուած կ'ուզէ, որ մարդը Իրմէ կախեալ վիճակի մէջ ըլլայ: Կայ առարկայական ճշմարտութիւն մը սակայն, որ անհերքելի է: Երբ մենք անօթի ենք, ուրեմն անօթի ենք: Անօթութիւնը երբ կը զգանք՝ ալ անիկա անժխտելի է: Մարդ էակին Աստուծմէ կախուածութեան զգացումը ոչ թէ Աստուծոյ ուզածն է, այլ կու գայ մարդուն արարած ըլլալէն, Աստուծմէ արարուած ըլլալէն: Կախուածութեան զգացումը այնքան բնական է, որքան անօթութեան զգացումը: Մարդ արարածը ամենաբաւական չէ, ան բազմաթիւ կարիքներ ունի: Անոնցմէ մէկն է Աստուծոյ օգնութիւնը ունենալու ցանկութիւնը: Աստուած չ'ուզէր մարդը նուաստացնել եւ Իր բարձրութիւնը ցուցադրել: Բայց Աստուած կ'ուզէ, որ մեր կարիքները աւելի լաւ գիտնանք, անոնց մասին մտածենք եւ խորհինք: Ան կ'ուզէ, որ մեր կարիքները գիտակցական մակարդակի բերենք, որպէսզի մենք մեզ աւելի լաւ ճանչնանք: Ինքնաճանաչումը կատարելութեան հասնելու միջոցն է: Եւ աղօթքը ինքնաճանաչման հասնելու լաւագոյն միջոցն է, որովհետեւ մեր կարիքները ոչ թէ միայն կը դնէ մեր գիտակցութեան լոյսին տակ, այլ նաեւ՝ զանոնք Աստուծոյ նայուածքին տակ կը դնէ:

Աղօթքը, ըստ Յիսուսի ուսուցումին, միայն մեր անձերուն համար չէ, այլ մեզմէ աւելի՛ ուրիշներուն համար է: Աղօթքը պէտք է ծառայէ Աստուծոյ ժողովուրդին հետ մեր միասնութիւնը զգալու եւ անոնց նկատմամբ մեր պատասխանատուութիւնը զարգացնելու: Աղօթքը պէտք է ծառայէ գիտնալու, թէ մեր կեանքը ինքնանպատակ չէ, այլ մենք կ'ապրինք ուրիշներուն համար, անոնց կարիքներուն հասնելու համար: Ինչպէս ողորմութիւնը, աղօթքն ալ ուրիշներուն համար կատարուած կամ կատարուող բարի գործ է:

Ողորմութեան եւ աղօթքի բարեգործութեան տարբերութիւնը այն է միայն, որ մինչ ողորմութեան բարի գործը մեր ձեռքով կը կատարուի, աղօթքին բարի գործը Աստուծոյ ձեռքով կը կատարուի:

Երբ մենք կ'աղօթենք հիւանդի մը համար, մեզմէ ի՞նչ կու տանք: Միայն աղօթելու պատրաստակամութիւնը: Սակայն Աստուած Ինքն է, որ կը պարգեւէ բժշկութիւնը, կամ Ինքն է, որ հիւանդին օգնելու կը հասնի:

Արդ, որպէսզի մարդոց հետ իմ միասնութիւնս զգամ, աղօթքը ամէնէն անհրաժեշտ եւ ամէնէն դաստիարակիչ մէկ կերպն է: Ուստի, մնայուն կերպով պէտք է աղօթել: Աղօթելով մենք մեր հոգին տեսականօրէն կը բարձրացնենք. աղօթելը բարձրացման ճանապարհն է:

Ինչպէ՞ս աղօթել:

Երբ կ'աղօթենք Աստուծոյ դիմաց կը կենանք: Անոր դիմաց կը կենանք իբր անհատ որդիներ, որոնք իրենց Հօր կը խօսին: Բայց ամէնէն կարեւոր աղօթական փոխարարութիւնը Աստուծոյ հետ իբր համայնք եւ իբր ժողովուրդ կենալով կ'ըլլայ:

Նոր Կտակարանը Եկեղեցիին մասին կը խօսի իբր Քրիստոսի մարմինը: Մենք այդ մարմինին անդամներն ենք: Քրիստոսի մարմինին անդամ ըլլալ կը նշանակէ, թէ իւրաքանչիւրս մեր առանձին արժէքը ունինք, մեր առանձին կապը ունինք Հօր հետ, սակայն միաժամանակ Աստուծոյ իսկ կամքով՝ կանք ամբողջութեան մը համար: Հետեւաբար, քրիստոնէական աղօթքը համայնքային եւ ժողովրդային աղօթք է:

Յիսուս երբ կը խօսի առանձնական աղօթքի մասին՝ չի մերժեր հաւաքական աղօթքը: Ինք եւս հաւաքական աղօթքի մասնակցող էր, եւ Իր աշակերտներուն ալ թելադրեց հաւաքականօրէն աղօթել: Ու գիտենք, որ աշակերտները Յիսուսի երկրաւոր առաքելութեան ավարտէն ետքը՝ շարունակեցին համայնքային աղօթքը թէ՛ տաճարին մէջ եւ թէ՛ յետոյ տուներու մէջ՝ երբ իրենց արգիլուեցաւ տաճարին մէջ աղօթելը:

«... Երբ կ'աղօթէք, մի՛ շատախօսէք հեթանոսներուն նման»: Հարցունը որ կը դրուի այս պատգամին առիթով՝ հետեւեալն է.- Աղօթքը կա՞րձ պէտք է ըլլայ:

Բայց Յիսուսի ըսածը կարձ աղօթք ընելո՞ւն կը վերաբերի:

Արդեօք Յիսուսի բացատրութեանց մէջ կա՞յ խօսք մը, որ մեզ կը լուսաբանէ:

Մտ 6.31-32-ին մէջ կը կարդանք. «...Մի՛ մտահոգուիք եւ ըսէք. "Ի՞նչ պիտի ուտենք, ի՞նչ պիտի խմենք կամ ի՞նչ պիտի հագնինք": Այդ մտահոգութիւնները հեթանոսներուն յատուկ են»: Հետեւաբար, հեթանոսներուն նման շատախօսելը երկար խօսիլը չէ, այլ՝ Աստուծո՛մէ աւելորդ բաներ խնդրելն է:

Մեզի համար շատ կարեւոր է տեսնել, թէ Յիսուս ինչպէ՞ս եւ որ-

քա՞ն կ'աղօթէր: Օրինակ, Ղկ 18.1-ին մէջ կը կարդանք. «...պէտք է միշտ աղօթել՝ առանց վիատելու»: Անշուշտ այս պատուէրը չի նշանակեր, թէ առտու, կէսօր, իրիկուն գործ քան ձգած պէտք է աղօթել, այլ՝ ըսել կ'ուզէ, թէ որեւէ մէկ ատեն, երբ որ ալ առիթը ներկայանայ՝ պէտք է աղօթելու յանձնել ինքզինք: Այլ բացատրութեամբ մը, Յիսուս կ'ուզէ, որ աղօթքը մեր կեանքին մնայուն բաժինը դառնայ: Աղօթքով է, որ Աստուծոյ հետ մեր սիրոյ կապը կը պահուի: Եւ աղօթքով է, որ քրիստոնէայ համայնքը մէկ ամբողջութիւն կը դառնայ:

Հիմա ոմանք կ'առարկեն, որ Եկեղեցւոյ արարողութիւնները երկար են, թէ Յիսուս ըսաւ՝ «Կարձ աղօթեցէք»:

Բայց արդե՞ք Եկեղեցւոյ արարողութիւնները երկար են. եւ Յիսուս՝ «Կարձ աղօթեցէք» ըսա՞ւ:

Աղօթքը մարդուն եւ Աստուծոյ միջեւ սիրոյ կապն է: Անիկա Աստուծոյ գոհութիւն յայտնելու համար է: Այս կեանքին մէջ մեր վայելած բարիքներուն համար աղօթքով է, որ առ Աստուած մեր երախտագիտութիւնը կը բարձրացնենք:

Մեր կեանքի թէ՛ դրական եւ ուրախ, թէ՛ ժխտական եւ տխուր փորձառութիւններուն համար երբ գոհութիւն կը յայտնենք, մենք մեզ Աստուծոյ նախախնամութեան յանձնած կ'ըլլանք եւ Անոր հանդէպ միշտ երախտագէտ սիրտ կ'ունենանք:

Մարդ արարածը ո՛չ թէ միայն աղերսներով, հայցուածներով, խնդրանքներով եւ աղաչանքներով Աստուծոյ պէտք է աղօթէ, այլ նաեւ Անոր տուած բոլոր բարիքներուն եւ իր ապրած բոլոր փորձառութիւններուն համար գոհութիւն պէտք է յայտնէ Աստուծոյ: Աղօթողը պէտք է գիտնայ միշտ փառաւորել զԱստուած: Ոչ թէ որովհետեւ Աստուած փառաւորուելու կարիքը ունի կամ փառաւորուիլ կը սպասէ, այլ անոր համար որ արարչութեան բարիքները վայելող եւ կեանքի փորձառութիւններէն անցնող սիրող սիրտը, երախտագէտ սիրտը այլ ճամբայ չի կրնար ունենալ:

Հետեւաբար, աղօթքը իբր սիրող եւ երախտագէտ սիրտի արտայայտութիւն՝ ժամանակով չի սահմանափակուիր:

9-րդ համարով, Յիսուս աղօթել սորվեցնելու կը սկսի, եւ կ'ըսէ. «Ուրեմն, այսպէ՛ս աղօթեցէք»: Ան «Հայր մեր»-ը կը սորվեցնէ:

Անցնինք «Հայր մեր»-ին:
«Ուրեմն, այսպէ՛ս աղօթեցէք.-
Հայր մեր երկնաւոր,
սրբաբանուի՛ անունդ,
թող զայ Արքայութիւնդ,

թող կատարուի Քու կամքդ,
 ինչպէս որ Երկինքի մէջ՝
 այնպէս ալ Երկրի վրայ:
 Ամէնօրեայ մեր հացը
 այսօր եւս մեզի տուր:
 Ներէ՛ մեր յանցանքները,
 ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝
 որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք
 գործած են:
 Եւ թոյլ մի՛ տար
 որ փորձութեան մէջ իյնանք.
 այլ՝ մեզ չարէն ազատէ՛:
 Որովհետեւ Քուկդ են միշտ
 արքայութիւնը, զօրութիւնը եւ
 փառքը: Ամէն» (6.9-13):

Ղուկասի Աւետարանին մէջ կը կարդանք. «Պատահեցաւ որ Յիսուս տեղ մը կ'աղօթէր: Երբ աղօթելը վերջացուց, իր աշակերտներէն մէկը ըսաւ.- Տէ՛ր, մեզի աղօթել սորվեցուր, ինչպէս որ Յովհաննէս Մկրտիչ իր աշակերտներուն սորվեցուց» (Ղկ 11.1):

Կը թուի, թէ ժամանակակից ռաբբիներ իրենց աշակերտներուն յատուկ աղօթք մը կը սորվեցնէին, աղօթք մը, որ իրենց ուղղութիւնը ցոյց տար եւ յայտնէր այն կերպը, որուն համաձայն կրնային Աստուծոյ դիմել: Ըստ երեւոյթին, այդպիսի ւսանողութեան մը հետեւած էր Յովհաննէս Մկրտիչ՝ իր աշակերտներուն աղօթել սորվեցնելով:

Նոյնպէս ալ, Յիսուսի աշակերտները եկած էին Իրեն եւ խնդրած, որ աղօթել սորվեցնէ:

Մատթէոսի Աւետարանը խնդրողական դիմումի մը մասին ակնարկութիւն չունի: Բայց շատ հաւանական է Ղուկասի Աւետարանին տեղեկութիւնը ընդունիլ իբր առիթ «Հայր մեր»-ի ուսուցումին:

Մատթէոս Աւետարանիչ թեմայական խմբաւորումներ ստեղծելու իր գրելաձեւին մէջ, «Հայր մեր»-ը առած է զուտ ուսուցումներ ընդգրկող բաժինին մէջ, որ Լերան Քարոզն է, եւ նաեւ ճիշդ քովը աղօթքի մասին պատգամի մը:

Ուրեմն, Մատթէոս Աւետարանիչ Տէրունական աղօթքի ծննդեան դրդապատճառը նկատի չէ առած եւ պարզապէս զայն տեղափոխած է ուսուցողական շրջագիծի մէջ:

Հրապարակային աղօթք մըն է «Հայր մեր»-ը: Ինչէ՞ն գիտենք, որ այդպէս է:

Քերականականօրէն «Հայր մեր» կ'ըսէ, «գիաց մեր» կ'ըսէ, եւ այլն:

Տէրունական աղօթքը հաւաքական նկարագիր ունի, այսինքն հաւաքականօրէն ասելի աղօթք մըն է: Թէեւ ասիկա չի նշանակեր, թէ միայն սահմանուած է հրապարակային գործածութեան:

Յիսուս այս աղօթքը սորվեցնելով մեզ կը քաջալերէ, որ աղօթելու ատեն՝ նոյնիսկ երբ առանձին ենք՝ առանձին չզգանք մենք մեզ, այլ՝ ուրիշներու հետ միասնութեան մէջ զգանք:

Եկեղեցին շէնքը չէ, Եկեղեցին Քրիստոսի մարմինն է, հաւատացեալներու ամբողջութիւնն է. երբ կ'աղօթեն՝ ինքզինքս միշտ անոր մասնակից զգալով պիտի աղօթեն:

«Հայր մեր»-ը սորվեցնելով՝ Յիսուս չի մերժեր հրապարակային աղօթքը, այլ՝ կը մերժէ աղօթքի այն տեսակը՝ որով աղօթող ենթական ինքզինք ցուցադրել կ'ուզէ, այլ խօսքով՝ ինքզինք կ'անջատէ այն ամբողջութենէն, որուն անդամ է:

Հիմա տեսնենք, թէ «Հայր մեր»ը ի՞նչ կառոյց ունի, որովհետեւ կառոյցը հասկնալը կ'օգնէ մեզի որ ըսուածը հասկնանք:

Կառոյցը:

- 1) Դիմում-կոչ.
- 2) Աստուծոյ վերաբերող խնդրանքներ.
- 3) Մարդոց վերաբերող խնդրանքներ.
- 4) Փառաբանանք:

Այս կառոյցը կարելի է երկուքի վերածել. առաջին երկու մասերը՝ մէկ բաժինի եւ վերջին երկու մասերը՝ ուրիշ բաժինի:

Դիմում-կոչը եւ Աստուծոյ վերաբերող խնդրանքները՝ Աստուծոյ յատկացուած բաժինն են, իսկ մարդոց վերաբերող խնդրանքները եւ փառաբանանքը՝ մարդ էակին յատկացուած բաժինը:

Կառոյցի այս կերպը նորութիւն մը չէր: Այս կերպը կիրարկուած էր Տասնաբանեայ պատուիրաններուն ալ պարագային: Տասնաբանեայ պատուիրաններուն կառոյցը եւս ունի Աստուծոյ վերաբերող պատուիրաններու բաժին մը եւ մարդոց կեանքին վերաբերող բաժին մը:

Համայնական այս աղօթքը «Տէրունական» կը կոչենք, որովհետեւ մեր Տէրը՝ Յիսուս է, որ սորվեցուցած է մեզի:

«Հայր մեր երկնաւոր»:

«Մեր»-ին մասին արդէն ակնարկեցի:

Եթէ այս աղօթքին ուրիշ բացատրութիւն մը ուզենք տալ՝ կրնանք «Եկեղեցւոյ աղօթք» ալ կոչել: «Հայր մեր»-ով Եկեղեցին իր ամբողջ

ջութեան մէջ կ'աղօթէ: Այսինքն՝ երբ «Հայր մեր»-ը կ'ըսենք, ոչ թէ միայն մենք անհատապէս Աստուծոյ հետ դէմ առ դէմ կը գտնուինք, այլ նաեւ Եկեղեցւոյ միւս անդամներուն հետ մեր միասնութիւնը կը զգանք: Աստուած մեզ առանձին-առանձին չէ կանչած, այլ՝ մեզ իբր ժողովուրդ կանչած է:

Աստուծոյ համար տրուած «Հայր» անունը Յիսուսի բերած նորութիւնն էր, թէ՞ Հին Կտակարանէն կու գար:

Բ. Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Ան քու Հայրդ չէ՞, որ քեզի կեանք տուաւ, քեզ ստեղծեց ու քեզ հաստատեց» (32.6): Կամ «Որպէսզի սրտիդ մէջ գիտնաս, թէ ինչպէս մարդ մը կը խրատէ իր որդին, քու Տէր Աստուածդ ալ քեզ այնպէս կը խրատէ» (Բ. Օր 8.5):

Եսայի Մարգարէ գրած է.

«Երկինքէն նայէ՛, Քու սուրբ ու փառաւոր բնակութենէդ տես: Ո՞ր է քու նախանձո՞ղ ու զօրութիւնդ: Քու աղիքներուդ գալարուիլը եւ ինձի ըրած ողորմութիւններդ արգիլուեցա՞ն: Քանզի մեր Հայրը Դուն ես, թէ՛ւ Աբրահամը մեզ չի գիտեր ու Իսրայէլ մեզ չի ճանչնար. Դո՛ւն, ո՞վ Տէր, մեր Հայրն ես ու սկիզբէն Քու անունդ մեր Փրկիչն է» (63.15-16):

Նաեւ՝

«Բայց հիմա, ո՞վ Տէր, Դուն մեր Հայրն ես: Մենք կաւ ենք ու Դուն մեր Բրուտն ես» (64.8):

Նաեւ՝

Երեմիա Մարգարէ գրած է.

«Բայց ըսի՛.- Քեզ ինչպէ՞ս որդիներուն մէջ դնեմ եւ քեզի այն ցանկալի երկիրը, ազգերուն շատ գեղեցիկ ժառանգութիւնը տամ: Ու ըսի՛.- Ինձի Հայր իմ պիտի աղաղակես եւ Ինձի հետեւելէն ետ պիտի չդառնաս» (3.19):

Ովսէ Մարգարէ գրած է.

«Երբ Իսրայէլը մանուկ էր, զանիկա կը սիրէի ու Իմ որդիս եզիպտոսէն կանչեցի: Որչափ զանոնք կանչեցի, այնչափ անոնք Ինձմէ հեռացան» (11.1-2):

Մաղաքիա Մարգարէ գրած է.

«Միթէ՞ ամէնքը մէկ Հայր չունի՞ն, միթէ՞ մէկ Աստուած չստեղծե՞ց մեզ» (2.10):

Սաղմոսներուն գիրքին մէջ կը կարդանք.

«Ինչպէս հայր մը կը գուրգուրայ իր զաւակներուն վրայ, այնպէս Տէրը կը գուրգուրայ Իրմէ՛ ալնածողներուն վրայ» (103.13): Եւայլն, եւայլն:

Այս մէջբերումներէն կը յայտնուի, թէ Աստուծոյ հայրութեան գա-

ղափարը շատ յստակ կերպով կայ:

Յիսուս եւս զԱստուած կը ներկայացնէ իբր Հայր: Արդեօք Յիսուս նոյն աւանդութիւնը կը շարունակէ զԱստուած Հայր կոչելով, թէ՞ Աստուծոյ հետ նոր փոխարաբերութիւն մը կը թելադրէ:

Թէ՛ւ Հին Կտակարանին մէջ Աստուած պարբերաբար «Հայր» կոչուած եւ համարուած է, սակայն Աստուծոյ հայրութիւնը երբեք հրեայ ժողովուրդի կրօնական փորձառութեան մէջ մնայուն եւ ընդհանրացած ապրում չէ եղած: ԶԱստուած Հայր կոչելը հրեայ ժողովուրդին համար անսովոր բան մըն էր:

Յիսուս զԱստուած իբր Իր ժողովուրդին Հայրը ներկայացնելով, կը յայտնէր Անոր անմիջական խնամատարութիւնը բոլոր անոնց համար, որոնք զինք կը խոստովանին: Աստուած հեռաւոր Զօրութիւնը չէ, այլ՝ շատ մօտիկ խնամատարն է: Այս հայրութիւնը եւ որդիութիւնը Աստուծոյ Հոգիին ստացման այնպիսի փորձառութիւն են, ուր Աստուծոյ խնամքը եւ մարդուն բարոյական եւ Յիսուսի հետեւելու պատասխանատուութիւնը միասնաբար կը զարգանան: Այդ է, որ ըսել ուզած է Պօղոս Առաքեալ երբ գրած է. «Ետեւաբար, եղբայրներ, պէտք չէ ապրինք մեր մարմինին համար եւ մարմնաւորապէս: Որովհետեւ եթէ մարմնաւորապէս ապրիք՝ պիտի մեռնիք. իսկ եթէ Հոգիին օգնութեամբ ձեր մեղքերը սպաննէք՝ պիտի ապրիք: Աստուծոյ որդիները անոնք են, որոնք Աստուծոյ Հոգիով կ'առաջնորդուին: Արդ, դուք Հոգին ստացաք՝ ոչ թէ ծառայ դառնալու եւ դարձեալ վախով ապրելու համար, այլ՝ Հոգին ստացաք Աստուծոյ որդիներ ըլլալու համար: Այդ Հոգիով է որ զԱստուած Աբբա, այսինքն Հայր կը կոչենք, եւ նոյն Հոգին Ինք վկայութիւն կու տայ մեր հոգիին, թէ Աստուծոյ որդիներ ենք: Իսկ եթէ որդի ենք, կը նշանակէ, թէ նաեւ ժառանգորդներ ենք: Այո՛, ժառանգորդներն ենք Աստուծոյ եւ ժառանգակից՝ Քրիստոսի, եւ Անոր չարչարանքներուն մասնակից կ'ըլլանք՝ որպէսզի Իր փառքին եւս մասնակից ըլլանք» (Հռ 8.12-17):

Ինչո՞ւ կ'ըսէ «երկնաւոր»:

Հայրն Աստուած վեր է աշխարհէն. պարզապէս գերազանցօրէն բարձր է բոլոր աստուածութիւններէն կամ աստուած համարուած բոլոր փայտեղէն, քարեղէն, պղնձեղէն կամ ոսկեղէն կուռքերէն: Աստուած անոնցմէ վեր էութիւնն է:

«Երկնաւոր»-ը նաեւ կը թելադրէ՝ «երկրէն անջատուած» իմաստը: Նոյն իմաստն է, որ կը կրկնուի «Սուրբ եղիցի անուն Քո»-ին առիթով: Աստուած Անջատուածն է: Ան նիւթական եւ անմաքուր իրականութիւններէն վեր եւ գատ էութիւնն է:

«Սրբաբանուի անունդ»:

Ի՞նչ կը նշանակէ ասիկա: Ինչո՞ւ, Աստուծոյ անունը սուրբ չէ՞ արդէն:

«Սուրբ» բառը չորս նշանակութիւն ունի.

- անջատ կամ անջատուած.
- մաքուր.
- Աստուծոյ նուիրուած. եւ
- փառաւոր:

Առաջին նշանակութեան առնչութեամբ

Աստուած նիւթական եւ անմաքուր իրականութիւններէն անջատուած էութիւնն է. այլ բացատրութեամբ մը՝ Աստուծոյ էութիւնը եւ նիւթական ու անմաքուր իրականութիւնները իրարմէ զատ են:

Երկրորդ նշանակութեան առնչութեամբ

Տասնաբանեայի երրորդ պատուիրանը կ'ըսէ. «Տիրոջ՝ քու Աստուծոյդ անունը պարապ տեղ բերանդ չառնես» (Ելք 20.7):

Ինչո՞ւ համար է այս պատուիրանը:

Որպէսզի Աստուծոյ անունը չանարգուի:

Եթէ սուտ նպատակներու համար գործածենք Աստուծոյ անունը՝ զայն անմաքուր դարձուցած կ'ըլլանք:

Երրորդ նշանակութեան առնչութեամբ

Հօր Աստուծոյ անուան սրբութիւնը յայտարարելը՝ մեզմէ առաքինի վարք եւ գործունէութիւն կը պահանջէ: Այդ յայտարարութիւնը նաեւ կեանքով ու գործով Աստուծոյ նուիրուած մնալու յանձնառութիւն է:

Պօղոս Առաքեալ Աստուծոյ անուան անարգում համարած է վատ վարքը եւ չար գործը, եւ պատգամած, որ քրիստոնէաներ ապրին եւ գործեն այնպէս, որ Աստուծոյ անունը չանարգուի (հմմտ Հռ 2.23-24, 29: Ա. Տմ 6.1-5): Ան նաեւ պատգամած է, որ անոնք ապրին այնպէս, որ Աստուած փառաւորուի (հմմտ. Ա. Կր 6.20):

Աստուծոյ անուան փառաւորումի կէտով՝ մենք հասած կ'ըլլանք

Չորրորդ նշանակութեան առնչութեամբ

Աստուծոյ անունը մաքուր պէտք է պահուի ո՛չ թէ լեզուի վրայ, այլեւ քրիստոնէայի կեանքին եւ գործին մէջ: Այդպէս է, որ Անոր անունը փոխանակ անարգուելու՝ կը փառաւորուի: «Սրբաբանուի՛ անունդ» խօսքը, ուրեմն, ո՛չ թէ միայն Աստուծոյ անուան մաքուր պահուելուն կը վերաբերի, այլ նաեւ Անոր անուան փառաւորումին («սրբաբանել» բայը թէ՛ Աստուծոյ անուան մաքրութիւնը կը թելադրէ, եւ թէ՛ զԱյն փառաբանելու իմաստը ունի):

«...Թող գայ Արքայութիւնդ»:

Ինչո՞ւ համար Յիսուս ուզեց, որ մենք այս աղօթքին մէջ Արքա-

յութեան գալը միշտ ըղձալով ըսենք «թող գայ»:

Գիտենք, որ Աստուծոյ Արքայութիւնը չորս հասկացողութիւն ունի.

1) Անիկա կը նոյնանայ Քրիստոսի անձին հետ: Քրիստոսի անձը այդ Արքայութեան գալուստն էր: Ան է արքան այդ տէրութեան, եւ Անոր մէջն է այդ Արքայութիւնը:

2) Անոր հպատակներն են բոլոր անոնք, որոնք Աստուծոյ կամքին համար կ'ապրին եւ կը գործեն: Որքան որ Աստուծոյ կամքը կ'ապրուի եւ կը գործադրուի՝ այնքան կը հաստատուի Աստուծոյ Արքայութիւնը այս երկրի վրայ եւ այս երկինքին ներքեւ:

3) Աստուծոյ Արքայութիւնը նաեւ հաւատացեալներու ամբողջութիւնն է, այլ խօսքով Եկեղեցին է անիկա: Բայց որպէսզի Եկեղեցին եւ Աստուծոյ Արքայութիւնը իրարու հետ չշփոթենք՝ յաճախ կը գործածուի սա բացատրութիւնը, թէ Եկեղեցին Աստուծոյ վախճանական Արքայութեան ներկայ պատկերն է կամ ներկայ հանգրուանն է, եւ կամ նախապատկերը:

4) Եւ վերջապէս Աստուծոյ Արքայութիւնը, ինչպէս ըսի վերելը, վախճանական իրականութիւն մըն ալ է. այսինքն՝ ապագայ այն «հանգր-ուան»-ն է, երբ Աստուծոյ կամքը վերջնականապէս պիտի տիրապետէ:

Հիմա, այս «թող գայ Արքայութիւնդ» խօսքը ո՞ր մէկ հասկացողութեան կը վերաբերի:

Վերջինին: Որովհետեւ առաջին երեքը պատմականօրէն իրականացած են եւ կ'իրականանան:

Աղօթքին յաջորդ խնդրանքը կու գայ լրացնելու. «Թող կատարուի Քու կամքդ, ինչպէս որ Երկինքի մէջ՝ այնպէս ալ Երկրի վրայ»:

Աստուծոյ Արքայութիւնը ինչպէ՞ս կրնայ գալ:

Աստուծոյ կամքին կատարումով:

Իսկ ինչպէ՞ս հասկնալ այն ակնարկութիւնը, թէ Աստուծոյ կամքը Երկինքի մէջ կը կատարուի արդէն:

Ինչպէ՞ս է որ կը կատարուի անիկա Երկինքի մէջ: Որո՞նք են, որ այդ կամքը կը կատարեն այնտեղ:

Հրեշտակները:

Կարդալ Եբրայեցիներու նամակին 1.4-14-ը:

Այս հատուածին մէջ թէեւ Յիսուսի հետ համեմատութեամբ կը ներկայացուին հրեշտակները, բայց մէկէ աւելի հաստատումներով կը պարզուի, թէ հրեշտակները Աստուծոյ կամքին հնազանդութեան մէջ են: Աստուծոյ կամքը անոնց կողմէ բացարձակապէս գործադրելի է: Անոնք թէպէտ «քիչ մը» բարձր են մարդոցմէ, սակայն անոնց կը

ծառայեն՝ որպեսզի Աստուծոյ կամքը կատարուի: Աստուծոյ կամքը հրեշտակներուն համար ամէն ինչ է:

Նետուաբար, ինչպէս Երկինքի մէջ կամ հրեշտակներուն կողմէ Աստուծոյ կամքը կը կատարուի, նոյնպէս ալ թող Երկրի վրայ կատարուի անիկա: Ինչպէս որ հրեշտակները Աստուծոյ կամքին բացարձակապէս հնազանդ են, Երկրի վրայ ալ մարդիկ պէտք է բացարձակապէս հնազանդ ըլլան Աստուծոյ կամքին, որպէսզի Աստուծոյ Արքայութիւնը գայ:

Իսկ ի՞նչ է Աստուծոյ կամքը:

Առաջին.

Ըստ Աստուածաշունչին, Աստուծոյ կամքը մարդ էակին արդարացումն է: Աստուած կ'ուզէ, որ մարդը արդարանայ եւ փրկութեան սահմանուի: Անոր կամքն է, որ մարդիկ հաւատան Իր զրկածին՝ Որդիին: Ան որ Քրիստոսի կը հաւատայ՝ «յաւիտենական կեանք պիտի ունենայ», գրուած է Յովհաննէսի Աւետարանին մէջ (6.40):

Երկրորդ.

Աստուծոյ կամքն է, որ մենք Քրիստոսի հաւատալով նորոգուինք եւ դառնանք նոր արարած կամ նոր մարդ մը, քանզի նոր մարդն է, որ Աստուծոյ կամքը կրնայ կատարել: Պօղոս Առաքեալին բացատրութեամբ, «նորոգուած միտքերով նոր մարդ»-ն է, որ կրնայ ընտրել լաւը, «այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է» Աստուծոյ (հմմտ. Հռ 12.2):

Երրորդ.

Աստուծոյ կամքն է, որ մենք սրբութեամբ ապրինք:

Պօղոս Առաքեալ քանի մը անգամ ըսած է, թէ Աստուծոյ կամքն է, որ մարդիկ սուրբ կեանք ունենան. օրինակ, թեսաղոնիկեցիներուն ուղղուած առաջին նամակին մէջ գրած է. «Աստուծոյ կամքն է՝ որ դուք սրբուիք» (4.3): Ոչ թէ միայն անհատ մարդիկ սրբութեան կեանք պէտք է ունենան, այլ նաեւ՝ Աստուծոյ նոր ժողովուրդը, իբր ամբողջութիւն, սրբութեամբ պէտք է ապրի:

«Ամէնօրեայ մեր հացը / այսօր եւս մեզի տո՛ւր»:

Մատթէոսի գրաբար թարգմանութիւնը կ'ըսէ՝ «զից մեր հանապազօրդ, տո՛ւր մեզ այսօր»։ Իսկ Ղուկասի գրաբար թարգմանութիւնը՝ «զից մեր հանապազօրդ, տո՛ւր մեզ զօրըստօրէն» (Ղկ 11. 3): Այս «զօրըստօրէն»-ը՝ օրէ օր կը նշանակէ: Թէ՛ «այսօր»-ը եւ թէ՛ «զօրըստօրէն»-ը սովորական հասկացողութեամբ պէտք չէ առնել: «Այսօր»-ը կը փոխաբերէ այս կեանքի ամբողջ տեսողութիւնը: Նոյնպէս՝ «զօրըստօրէն»-ը «կեանքի ամբողջ ընթացքին» կը նշանակէ:

Յիսուսի վարդապետութենէն գիտենք, որ հաւատացեալները մնայուն հացը պէտք է փնտռեն եւ ոչ թէ կորստական հացին ետեւէն ըլլան (հմմտ. Յհ 6.27): Եթէ Յիսուս այս խնդրանքը նիւթական հասկացողութեամբ սորվեցուցած ըլլար՝ միւս խնդրանքներն իրենց իմաստէն պիտի զրկուէին, կամ անոնց յարաբերաբար այս մէկը հակասութիւն մը պիտի ըլլար: Ճիշդ է, որ նիւթական ամէնօրեայ հացը մեր մարմնաւոր գոյութեան համար կարելի է: Յիսուս երբեք նիւթական հացին կարելորութիւնը չի ժխտեր, բնականօրէն: Սակայն «Հայր մեր»-ին հացը նիւթականը չէ: Ուրեմն, ի՞նչ հասկցած է Յիսուս «ամէնօրեայ մեր հացը» ըսելով:

Առաջին.

Իր Մարմինն իսկ է, որ բաշխուեցաւ խաչելութեամբ եւ կը բաշխուի ամէն Ս. Պատարագի մատուցմամբ:

Յիսուս Ինքզինք կոչած է «Կեանքի Հացը», եւ աւելցուցած. «Ան որ Ինծի կու գայ՝ բնաւ պիտի չանօթենայ» (Յհ 6.35):

Յիսուս-հացը Աստուծոյ հետ հաղորդութեան կամ յաւիտեան ապրելու միջոցն է. մենք Աստուծոյ հետ փոխյարաբերութեան կամ յաւիտենական կեանքին մէջ կը մտնենք Յիսուս-հացը ուտելով: Իսկ Յիսուս-հացը ուտել՝ կը նշանակէ Անոր երթալ: Յիսուս-հացը մեր ամէնօրեայ հացը կ'ըլլայ, երբ մենք Աստուծոյ հետ մեր յարաբերութիւնը կենդանի կը պահենք ամէն օր Յիսուսի դիմելով:

Երկրորդ.

Աստուծոյ կամքին կատարումը:

Յիսուս՝ «Ճշմարիտ Հացը» «Երկինք»-էն իր իջնելը մեկնաբանած է որպէս ոչ թէ Իր կամքին կատարումը, այլ կամքը Անոր, որ զԻնք զրկեց (հմմտ. Յհ 6.32, 38): Այլ տեղ մըն ալ ըսած է, թէ Իր «Կերակուր»-ը զԻնք զրկողին կամքը կատարելն էր եւ Անոր գործը «լրում»ին հասցնելը (հմմտ. Յհ 4.34):

Նետուաբար, Յիսուս ոչ թէ միայն Հօր կամքը կատարեց, այլ նաեւ անոնք, որ ամէնօրեայ հացը կը խնդրեն Աստուծմէ՝ իրենք զիրենք յանձնառութեան մէջ կը դնեն Անոր կամքը կատարելու եւ աշխատելու՝ որպէսզի Երկինքի Արքայութիւնը հաստատուի:

«Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք գործած են»:

Գրաբարը կ'ըսէ. «Թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց»: Ինչպէս կը տեսնուի, պարտքերու մասին կը խօսուի: Երբայական հասկացողութեան մէջ՝ յանցաւոր ըլլալը՝ Աստուծոյ պարտք ունենալ է. յանցանքները պարտքեր են:

Մարդոց դէմ մեր գործած յանցանքները՝ մեզ պարտաւոր կը դարձնեն Աստուծոյ առջեւ: Ուստի, հասկնալի է, թէ ինչո՞ւ «ներէ՛ մեր յանցանքները» կ'ըսենք, եւ կը շարունակենք «ինչպէս որ մենք կը ներենք անոնց, որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք գործած են»: Բայց այս «ինչպէս որ» բացատրականը պէտք չէ հասկնալ իբր պայման: Այսինքն՝ այս կամ այն բարի արարքը չենք գործեր որ Աստուած մեզ ներէ: Ըսել ուզուածը այն է, որ մեր վարմունքին համապատասխան վարմունք պիտի գտնենք Աստուծոյ մօտ: Մեզի հանդէպ յանցաւորները եթէ ներենք՝ մեր յանցանքներն ալ պիտի ներուին Աստուծոյ կողմէ: Յիսուս այլ առիթով մը ըսած է. «Մի՛ դատէք ուրիշները, որպէսզի Աստուած ալ ձեզ չդատէ» (Մտ 7.1): Որպէսզի մեր յանցանքները ներուին՝ նախ մենք ուրիշներուն մեզի հանդէպ գործած յանցանքները պէտք է ներենք:

«Աստուած պիտի ներէ» արտայայտութեան առնչութեամբ հետեւեալ յստակացումը անհրաժեշտ է կատարել:

Աստուած Իր ներումը չի պայմանաւորեր մեր ներելով: Աստուած Ինք ներողն է: Պօղոս Առաքեալ հռոմէացիներուն գրած իր նամակին մէջ ըսած է. «Աստուած մեզի հանդէպ Իր սէրը յայտնեց անով, որ երբ տակաւին մեր մեղքերուն մէջ էինք՝ Քրիստոս մեզի համար մեռաւ... Աստուած Իր Որդիին մահովը մեզ Իրեն հետ հաշտեցուց» (Հռ 5.8, 10): Աստուած Իր սէրը, կամ այս շրջագիծին մէջ՝ ներումը չի պայմանաւորեր մեր ընթացքով: Սակայն կը սպասէ, որ Իր ներողամտութեան դիմաց մենք ալ փոխուինք ի բարին:

Խնդրանքին այս կերպը կը թելադրէ նաեւ, որ Յիսուս կը շեշտէ նախ մեր ընելիքը: Ներելը Աստուծոյ որդիութեան, Աստուծոյ պատկերը ըլլալու, Աստուծոյ նմանութեան լաւագոյն մէկ արտայայտութիւնն է: Հետեւաբար, մենք առանց պայմանի մեր հոգիի աշխարհին հիմնական բաժին պէտք է դարձնենք զայն, պէտք է ամէն օր ներելու վարժուինք: Եւ երբ մենք ներենք՝ ինքնաբերաբար Աստուծմէ ներում գտած կ'ըլլանք աւելիով: Կը կրկնեմ. ո՛չ թէ Աստուած պայման կը դնէ, այլ ընդհակառակը՝ շատ աւելիով կը բաշխէ Իր ներումը, շատ աւելի առատօրէն կու տայ, ամբողջականօրէն ներողամիտ կ'ըլլայ նոյնիսկ մեր սխալներուն եւ թերութիւններուն հանդէպ: Բայց կ'ուզէ, որ մենք վարժուինք, դաստիարակուինք ներելու մէջ, որ մեզ աստուածացնող յատկութիւնն իսկ է:

«Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք»:

Խնդրայարոյց համար մըն է ասիկա: Աստուած է, որ թոյլ կու տայ կամ թոյլ չի տար որ մարդիկ փորձութեան մէջ իյնան: Աստուած Ի՞նքն

է, որ մարդիկը փորձութեան մէջ կը ձգէ: Ա՞յդ է ըսուածը:

Խօսքը երեւութապէս ասիկա կ'ըսէ:

Բայց մենք նախ սա հարցումները ընենք. Աստուած մարդոց փորձութիւններուն հետ կապ ունի՞: Փորձութիւնները ի՞նչ բանէ կու գան:

Կը հաւատանք որ Աստուած միշտ տեղեակ է փորձութիւններէն: Սակայն Աստուած Ի՞նքն է, որ կը փորձէ մարդիկը: Յակոբոս Առաքեալ գրած է. «Փորձութեան մէջ եղող ոեւէ մէկը թող չըսէ, թէ Աստուած է որ զինք կը փորձէ, որովհետեւ Աստուած մասնակից չէ փորձութիւններուն որոնք չարէն կու գան, ո՛չ ալ Ինք մարդիկը փորձութեան կ'ենթարկէ: Իւրաքանչիւր մարդ կը փորձուի իր իսկ ցանկութիւններէն տարուելով ու խաբուելով» (Յկ 1.13-14): Այս հատուածը մէկէ աւելի բան կ'ուսուցանէ մեզի փորձութեան մասին:

Դարձեալ դնենք հարցումը:

Աստուած մարդը կը փորձէ:

Ծնունդներու գիրքին մէջ կը կարդանք, օրինակ՝ «Աստուած փորձեց Աբրահամը» (22.1), Ելքի գիրքին մէջ՝ «Տէրը ըսաւ Մովսէսի.- Ահա ես ձեզի երկինքէն հաց պիտի տեղացնեմ եւ ժողովուրդը պիտի ելլէ ու ամէն օր հաւաքէ օրուան մը համար իրեն պէտք եղածը, որպէսզի փորձեմ զանոնք, թէ Իմ օրէնքիս համեմատ պիտի քալեն, թէ՞ ոչ» (16.4), Բ. Օրէնքին մէջ՝ «եւ անապատին մէջ քու հայրերուդ չճանչցած մանանայով քեզ կերակրեց, որպէսզի քեզ խոնարհեցնէ ու փորձէ» (8.16), եւ այլն, եւ այլն:

Թէպէտ Աստուծոյ փորձելուն մասին խօսքեր կան, սակայն Աստուած չէ, որ կը փորձէ: Աստուած թոյլ կու տայ, որ մարդիկ փորձուին:

Այս հաստատումին լաւագոյն օրինակը Յոբի պարագան է: Իմաստութեանական այդ գիրքին մէջ Աստուած կ'արտօնէ, որ չարը փորձէ Յոբը:

Գիրքը պատկերացումն է փորձութիւններու, որոնց ենթարկուեցաւ Աստուծոյ հաւատարիմ այդ մարդը չարին կողմէ, եւ սակայն անոնցմէ դուրս եկաւ յաղթական: Հակառակ Յոբի ծանրագոյն նեղութիւններուն՝ Աստուծոյ գերազանց արդարութիւնը կը ներբողուի գիրքին մէջ:

Աստուած Իրեն հաւատարիմներուն փորձուիլը թոյլ տալով՝ ոչ թէ զանոնք կը լքէ, այլ առիթ կ'ընծայէ, որ ի յայտ գան եւ փայլին որոշ ճշմարտութիւններ, որոնք անոնց կեանքին մաս կը կազմեն:

Առաջին՝ անոնց հաւատքը եւ հնազանդութիւնը:

Երկրորդ՝ անոնց արթնութիւնը եւ զղջումով ինքնասրբագրութիւնը. եւ

Երրորդ անոնց առաքինությունները:

Հարցումը որ կրնայ յարուցուիլ այստեղ՝ հետեւեալն է. եթէ փորձութիւնները ասոնց ի յայտ գալուն համար են, ինչո՞ւ համար խնդրենք եւ ըսենք՝ «եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն»:

Ինչո՞ւ կը խնդրենք, որ Աստուած թոյլ չտայ, որ փորձութեան մէջ իյնանք:

Փորձութիւնները թէեւ նեղութիւններ են, կարգ մը պարագաներու՝ անտանելի նեղութիւններ են, սակայն անոնցմով կը յայտնուին մարդոց ներքին զօրութիւնները կամ մարդոց ներքնապէս զօրաւոր ըլլալը: Նաեւ անոնցմով է, որ կը յայտնուին մարդոց տկարութիւնները կամ ներքին փտածութիւնը:

Ներքին զօրութիւններուն ի յայտ գալը հասկնալի է: Սակայն ինչո՞ւ կ'ուզէ որ մեր տկարութիւններն ալ ի յայտ գան: Ո՛չ թէ որպէսզի մեզ ծաղկէ, այլ՝ որպէսզի մենք ճիգ ընենք զանոնք ուղղելու եւ զօրանանք: Ճիշդ ինչպէս որ ուսուցիչ մը երբ գրաւորի թուղթի մը վրայ լեզուական, ուղղագրական, մտածումի եւ այլ սխալներ ցոյց կու տայ, ո՛չ թէ այդպէս կ'ընէ պարզապէս ըսելու համար, որ աշակերտը բան չի գիտեր, այլ ընդհակառակը՝ որպէսզի ան յետագային այդ սխալները սրբագրած ըլլայ:

Վերջ ի վերջոյ՝ կատարելութեան ընթացք մը կայ: Մենք գիտենք, որ մարդ էակը փորձառութեամբ եւ իր սխալները տեսնելով ու սրբագրելով է, որ կը սորվի:

Արդ, Աստուած կ'ուզէ մեր տկարութիւնները լուսարծակի տակ բերել, որպէսզի մենք տեսնենք զանոնք եւ մտածենք ու շարժինք զանոնք դարմանելու համար:

Որքան ալ մարդ պէտք է զգուշանայ փորձութենէն եւ խնդրէ, որ Աստուած զինք հեռու պահէ անկէ, բայց միաժամանակ պէտք է գիտնայ, որ փորձութիւններն իրեն համար են եւ թէ զանոնք պէտք է դիմագրաւէ քաջութեամբ:

Ան որ փորձութեան առջեւ կը տկարանայ՝ սկիզբէն դատապարտուած է պարտուելու: Իսկ այն մարդը որ գիտէ իր թերութիւնները, բայց քաջաբար կը դիմագրաւէ փորձութիւնը՝ կրնայ իր ներքին զօրութենէն աւելին իրագործել: Յաճախ հաստատուած իրողութիւն է, որ մեր կարողութիւններէն աւելին ի վիճակի կ'ըլլանք իրագործելու, երբ անվախօրէն պատրաստուած ենք:

«Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն»-ը, ուրեմն, պարզապէս խնդրանք մըն է, որ Աստուած կարելի եղածին չափ մեզ հեռու պահէ փորձութիւններէն: Իսկ թոյլ եթէ պիտի տայ՝ գոնէ «մեզ չարէն ազատէ»:

Պօղոս Առաքեալ քաջալերած է ըսելով. «Վստահեցէ՛ք Աստուծոյ. Ան թոյլ պիտի չտայ որ ձեր կարողութենէն աւելի փորձուիք, այլ փորձութեան մէջ իսկ ցոյց պիտի տայ զայն յաղթահարելու միջոցը, որպէսզի կարենաք տոկալ» (Ա. Կր 10.13):

«Որովհետեւ Քուկո եւ միշտ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը»:

Ինչո՞ւ փառաբանել զԱստուած: Արդեօք պատասխա՞ն մըն է այն բոլոր բարիքներուն, որ Ան մեզի պարգեւած է:

Ո՛չ:

Զաւակի օրինակով փորձենք հասկնալ ասիկա:

Զաւակ մը իր ծնողներուն հանդէպ երախտագէտ պէտք է ըլլայ ո՛չ թէ որովհետեւ ամէն օր զինք կը կերակրեն, հոգ կը տանին, կամ դրամ կու տան իրեն, եւ այլն, այլ՝ որովհետեւ զինք ծներ են, իրեն կեանք տուած են: Կեանք տալը ինքնին մեծագոյն պարգեւն է:

Մարդուն առ Աստուած երախտագիտութիւնը նոյնպէս կը բխի այն իրողութենէն, որ Աստուած է, որ զայն ստեղծած եւ անոր կեանք տուած է: Մարդ էակին գոյութիւնը Աստուծոյ մեծագոյն պարգեւն է: Եւ անիկա իսկ բաւարար է, որ մարդը երախտագէտ ըլլայ իր Արարիչին հանդէպ:

Հետեւաբար, երբ մարդը զԱստուած կը փառաբանէ՝ ինքնաբոլո՛ք կերպով իր երախտագիտութիւնը կ'արտայայտէ զինք Ստեղծողին: ԶԱստուած փառաբանելը պարտադրանք մը չէ, այլ՝ մարդ էակին մէջէն կու գայ:

Ան զԱստուած կը փառաբանէ նաեւ այլ պատճառով մը:

Այնպէս ինչպէս երբ գեղեցիկ պատկեր մը կը տեսնենք՝ կը հիանանք թէ՛ անոր վրայ եւ թէ՛ զայն ստեղծողին, նոյնպէս ալ երբ բնութիւնը կը դիտենք՝ կը հիանանք թէ՛ անոր փառաւորութեան վրայ եւ թէ՛ զայն Արարողին: Ուստի, Աստուած փառաբանելը կը բխի նաեւ այդ հիացումէն:

«Ամէն»:

Պարզագոյն իր իմաստով՝ «թող ըլլայ» կը նշանակէ: Ասիկա կ'եզրափակէ կամ կը հաստատէ խօսք մը կամ յայտարարութիւն մը:

Երբ նայինք Պօղոս Առաքեալի կորնթացիներուն ուղղած առաջին նամակի 14.13-17 համարներուն, կը տեսնենք որ «ամէն»-ը կը նշանակէ այն հաստատումը, որ ըսուածներուն հաղորդուած ըլլալ կը նշանակէ:

Բառը կարելի է հասկնալ «իսկապէս, ստուգապէս, ճշմարտապէս եւ իրաւամբ» իմաստներով ալ:

Յայտնութեան գիրքին 3.4-ին մէջ կը տեսնենք, որ անհկա իբրեւ յատուկ անուն գործածուած է Քրիստոսի համար: Այնտեղ «անսխալ ճշմարտութիւնը» կամ «հաւատարհիմը» իմաստներն ունի բառը:

Կարգ մը ձեռագիրներու մէջ «ամէն»-ը կը պակսի: Մենք չենք գիտեր, թէ Յիսուս երբ «Հայր մեր»-ը սորվեցուց «ամէն»-ով եզրափակե՞ց, թէ ոչ: Անհաւանական չէ, որ «ամէն»-ը ետքը եկած եւ միացած ըլլայ «Հայր մեր»-ին:

«Որովհետեւ եթէ մարդոց ներէք իրենց յանցանքները՝ ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի: Իսկ եթէ մարդոց չներէք իրենց յանցանքները՝ ձեր Հայրն ալ պիտի չներէ ձեր յանցանքները» (14-15):

Այս երկու համարները Յիսուս «Հայր մեր»-ը սորվեցնելէն անմիջապէս ե՞տքը ըսած է, թէ՞ ասոնք եւս խմբագրական դասաւորումով եկած եւ յարմարցուած են այստեղ:

Ստուգելու որեւէ կերպ ունի՞նք:

Այո: Համեմատենք Ղկ 11.5-ը եւ շարունակութիւնը: Ղուկասի Աւետարանին մէջ, Յիսուս «Հայր մեր»-ը սորվեցնելէ ետք՝ այլ ուսուցում մը ունի, որուն միտք բանին կոչ մըն է. «Խնդրեցէ՛ք Աստուծմէ՛ եւ պիտի տայ ձեզի, փնտռեցէ՛ք եւ պիտի գտնէ՛ք, բախեցէ՛ք եւ պիտի բացուի ձեզի»: Ինչպէս յստակ է, Ղուկասի մօտ «Հայր մեր»-ին ներումի ուսուցում չէ, որ կը հետեւի: Ուստի, անհաւանական չէ, որ Մատթէոս, ըստ իր սովորութեան «Հայր մեր»-էն վերջ՝ ներումի ուսուցումը աւելցուցած է՝ զայն ցոյց տալով իբրեւ «Հայր մեր»-ի ուսուցման եզրակացութիւն կամ նպատակ:

Հետաքրքրական է, որ ատիկա կը սկսի «որովհետեւ»-ով: «Որովհետեւ»-ը ցոյց կու տայ, ինչպէս ըսի, թէ ինչո՞ւ Յիսուս «Հայր մեր»ը սորվեցուցած է:

Տէրունական աղօթքին «եւ թող մեզ զպարտիս մեր որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց»-ը «Հայր մեր»-ին կարծէք բարձրակէտն է՝ ըստ մատթէոսեան մեկնաբանութեան: Եւ ճիշդ այդ կարելորութեան պատճառով է, որ կը շեշտուի մարդոց յանցանքները ներելու կենսականութիւնը:

Առանց ներող հոգիի՝ կարելի չէ աղօթել: Ներելն անհրաժեշտ է, որպէսզի մենք կարենանք աղօթքի հարազատ տրամադրութեան մէջ ըլլալ: Երբ կը ներենք՝ ուրիշներուն հանդէպ մեր ունեցած խեթը սրբած կ'ըլլանք մեր մէջէն: Եթէ երբեք այդպէս չընենք՝ մեր հոգին երկրաւոր կապերէն ազատած չենք ըլլար, եւ անհկա չի կրնար դէպի Երկինք սաւառնիլ:

Ներող հոգիին աղօթքն է, որ վաւերական է:

ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուրբ «Երանի»-ները ուրբ ճշմարտութիւններ կը յայտնեն մեզի կամ կը ներկայացնեն ուրբ յատկանիշներն անոնց, որոնք Երկինքի Արքայութեան ժառանգորդները պիտի ըլլան:

«Երանի»-ներու շարքը Երկինքի Արքայութեան քաղաքացիները ըլլալու պայմանները կը յայտարարէ: Յիսուս այս «Երանի»-ներով Երկինքի Արքայութեան ժառանգորդ դառնալու սկզբունքները կը յայտնէ: Ով որ այս սկզբունքներուն համաձայն կեանք չ'ունենար՝ չի կրնար Արքայութեան մէջ տեղ ունենալ:

Որեւէ երկիր, որեւէ քաղաքացիութիւն իրեն յատուկ պայմաններն ունի. մենք որպէսզի կարենանք քաղաքացիներն ըլլալ այսինչ երկրին՝ այդ երկրին պայմանները պէտք է լրացնենք:

Արդ, Յիսուս սկիզբէն կը պատգամէ եւ կ'ըսէ, թէ ով որ Երկինքի Արքայութեան քաղաքացի կ'ուզէ ըլլալ, այս պայմանները պէտք է լրացնէ: Եւ պայմաններէն առաջինն է՝ «հոգիով աղքատ» ըլլալը:

«Երանի՛ հոգիով աղքատներուն, որովհետեւ անոնց է Երկինքի Արքայութիւնը» (հմր. 3):

Ուրեմն, Յիսուս երանի կու տայ անոնց, որոնք «հոգիով աղքատ» են:

Ո՞վ է «հոգիով աղքատ»-ը:

Անկասկած, Յիսուս չ'ակնարկեր անոր, որ նիւթական ինչք կամ հարստութիւն չունի: Ղուկասի 6.20-ին մէջ գրուած է. «Յիսուս իր աչքերը աշակերտներուն յառելով՝ ըսաւ. «Երանի՛ աղքատներուդ»: Այստեղ «դ» ցուցական յօդը կայ, որ կը նշանակէ, թէ Յիսուս ո՛չ միայն տեսական սկզբունք մը կը յայտարարէ, այլեւ՝ Իր խօսքը կը պատշաճեցնէ դիմացիներուն: Իր դիմացը եղողներն առաջին հերթին իր առաքեալներն էին կամ աշակերտները, եւ յետոյ՝ բազմութեան մարդիկը, որ զԻնք կը շրջապատէին եւ կ'ունկնդրէին:

Անոնք ամենքն ալ նիւթապէս աղքատներ էին, հարուստներ չկային՝ անոնց մէջ: Բայց եկէ՛ք չշեղինք: Յիսուսի խօսքն ուղղուած էր թէ նիւթապէս աղքատներուն եւ թէ՛ նիւթապէս հարուստներուն:

Թերեւս կարելի է ենթադրել, որ նիւթապէս աղքատութեան մէջ բան մը երանելի կը գտնէր Յիսուս:

Աղքատները չունենալով նիւթական հարստութիւն՝ կրնան աշխարհի կապերէն կամ կաշկանդումներէն զերծ ըլլալ: Երբ աղքատ մը կանչուի Աստուծոյ կողմէ, ոչինչ ունի որ զինք կապէ այս աշխարհին, ուստի ան կրնայ վայրկեանին ինքզինքն առնել եւ երթալ: Նիւթական հարստութեան տէր անձը չի կրնար նոյնը ընել, որովհետեւ ետին ձգելիք ինչքեր ունի: Կամ այն է, որ իր աչքը Ղովտի կնոջ պէս ետեւ պիտի մնայ, նոյնիսկ իր ունեցածները ձգելու պարագային, կամ ալ նախքան զանոնք ձգելը՝ պէտք է կարգադրութիւններ ընէ: Յիշենք մեծահարուստ երիտասարդին օրինակը: Անոր հետ խօսակցութեան ընթացքին Յիսուս ըսաւ. «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա՛, ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղքատներուն տուր. այդպիսով Երկինքին մէջ գանձ պիտի ունենաս, եւ յետոյ հետեւէ՛ Ինձի» (Մտ 19.21): Այս խօսքով Յիսուս ըսել չէր ուզեր, թէ ով որ հարուստ է եւ կ'ուզէ Իրեն հետեւիլ՝ անպայման ստացուածքները պէտք է ծախէ, այլ ըսել կ'ուզէր, որ ան պէտք է նախ իր սիրտն անջատէ նիւթական հարստութիւններէն: Բայց հարուստին համար ասիկա ընելը դիւրին չէ: Այդ պատճառով ալ Յիսուս ըսած է. «Պարանը շատ աւելի դիւրին կը մտնէ ասեղի ծակէն, քան հարուստը՝ Աստուծոյ Արքայութիւնը» (Մտ 19.24): Աւետարանն այս խօսքին իբր հակազդեցութիւն՝ գրած է, թէ երբ աշակերտներն ասիկա լսեցին, շատ զարմացան եւ հարցուցին. «Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ»: Եւ Յիսուս պատասխանեց. «Մարդոց համար ասիկա անկարելի է, բայց Աստուծոյ համար ամէն բան կարելի է»: Աստուծոյ համար անկարելի բան չկայ: Այս դրուագին մարկոսեան տարբերակին մէջ ուշագրաւ բառ մը կայ: Յիսուս աշակերտներուն պատասխանելով՝ կ'ըսէ. «Որդեակներ, որքան դժուար է հարստութեան վրայ յոյս դնողներուն համար՝ Աստուծոյ Արքայութիւնը մտնել» (Մր 10.24):

Յոյս դնել:

Ով որ նիւթական հարստութեան վրայ կը դնէ իր յոյսը, չի կրնար Աստուծոյ Արքայութիւնը մտնել, որովհետեւ նիւթին կապուած է. իսկ ով որ իր յոյսը կը դնէ Աստուծոյ վրայ, նիւթէն կրնայ հրաժարիլ առանց սիրտի որբել կսկիծ ունենալու եւ առանց երկմտանքի: Աղքատները աւելի հնարաւորութիւնը ունին Աստուծոյ կամ Յիսուսի կոչը լսելու եւ Անոր հետեւելու: Դարձեալ՝ կ'ուզեմ ըսել, որ ասիկա չի նշանակեր, թէ

նիւթապէս աղքատները մեքենականօրէն երանելի են: Յիսուսի ըսածը այդ չէ: Անոր միտքը՝ աղքատը հարուստին հակադրելը չէ, ոչ ալ Յիսուս ըսել ուզած է, թէ նիւթականով հարուստը երանելի չէ: Ո՞վ ըսաւ, թէ այն աղքատը, որ Աստուծոյ չի յուսար՝ երանելի է: Ո՞վ ըսաւ, թէ այն աղքատը, որ չ'ուզեր Աստուծոյ մօտենալ, Աստուծոյ փրկութեան կանչը լսել երանելի է: Ո՛չ: Ինչպէս որ ռեւէ հարուստ մեքենականօրէն դատապարտութեան ենթակայ չէ, այնպէս ալ՝ ռեւէ աղքատ մեքենականօրէն երանելի չէ: «Հոգիով աղքատ»-ը ան է, որ ներքնապէս կամ հոգիով իր աղքատութիւնը կը զգայ, այսինքն Աստուծոմով հարստանալ կ'ուզէ: Ան է, որ երանելի է: Ան որ Արքայութեան կարօտ է՝ ան է աղքատը: Երբայեցի հոգեւոր առաջնորդներ իրենք զիրենք Արքայութեան ժառանգորդներ կը կարծէին, իրենք զիրենք Արքայութեան Որդիներ կը կոչէին, այսինքն իրենք զիրենք հարուստ կը զգային: Մինչդեռ ժողովուրդի խաւ մը կար, որ այդ վստահութիւնը չունէր, որովհետեւ հոգեւոր դաստիարակութեան մէջ ինքզինք զարգացած չէր տեսներ, սակայն ունէր Արքայութեան կարօտը: Յիսուսի «երանի»-ն անոնց ուղղուած է:

Առաւել բացատրութիւն մըն ալ:

Մաղմոս 34.6-ը կ'ըսէ. «Այս աղքատը աղաղակեց ու Տէրը լսեց զինք եւ զայն իր բոլոր նեղութիւններէն փրկեց»:

Մաղմոսին հեղինակը Դաւիթ թագաւորն է: Ան այս սաղմոսը երգած է, երբ Սաւուղի կողմէ հալածական փղշտացիներուն քով ապաստանած էր եւ Աստուծոյ օգնութեան կարօտն ունէր: Դաւիթի ակնարկած աղքատութիւնը կը վերաբերի՝ Աստուծոյ օգնութեան իր կարօտ ըլլալուն: «Աստուծոյ օգնութեան կարօտութիւն» իմաստով աղքատութեան կը հանդիպինք այլ սաղմոսներու մէջ ալ:

Երբայեցի ժողովուրդին մօտ «աղքատ»-ով կը հասկցուէր մեր այսօրուան բարեպաշտը:

Բարեպաշտը այն մարդն է, որ Տիրոջ կը յուսայ, պէտք ունի եւ ապաւինած է Անոր, կը զգայ որ ինք առանց Տիրոջ ոչինչ է: Տիրոջ օգնութեան կարօտեալի վիճակը՝ անոր մէջ շատ շեշտուած կերպով կայ, ներկայ է:

Հետեւաբար, Յիսուս աղքատներ կը կոչէ անոնք, որոնք իսկապէս Աստուծոյ կարօտը ունին: Ո՛չ այն փարիսեցիին պէս, որ տաճար կ'երթայ միայն որպէսզի իր ըրածները յիշեցնէ Աստուծոյ: Փարիսեցիին օրինակը Աստուծոյ օգնութեան կարօտ անձի մը պարագան չէ, այլ անոր, որ Աստուծոյ կարօտ չէ: Մինչդեռ մաքսաւորին օրինակը, պարագան է այն անձին, որ Աստուծոյ օգնութեան կարօտ է, որովհետեւ իր մեղաւոր ըլլալը կը խոստովանի եւ Աստուծոյ թողութիւնը

կը հայցէ (տես Ղկ 18.9-14):

Անշուշտ հոգիով աղքատ ըլլալը միայն Աստուծմէ թողութիւն հայցելու վիճակը չէ, այլ նաեւ Անոր ծարաւ ըլլալու վիճակն է՝ ըստ սաղմոսին որ կ'ըսէ. «Ծարաւ եմ Աստուծոյ, կենդանի՛ Աստուծոյ» (Սղ 42. 2):

«Երանի՛ սգաւորներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ մխիթարութիւն պիտի գտնեն» (4):

Կը հարցնենք. Յիսուս արդեօք կը խօսի ա՞յն սգաւորներուն մասին, որոնք իրենց տան մէջ սիրելի մը կամ հարազատ մը կորսնցուցեր են, թէ՞ ուրիշ բան մը կ'ըսէ:

«Երանի»-ներու հայեացքին մէջ, աշխարհի մեղքին, պղծութիւններուն, սպանութիւններուն եւ բոլոր միւս չարիքներուն համար սգացողներն են անոնք: Անոնք Աստուծոյ հաւատարիմներն են, այսինքն՝ հոգիով արքայութեան կամ բարեպաշտներն են անոնք:

Դարձեալ, բացատրելով բարեպաշտի հասկացողութիւնը, ըսեմ որ անիկա այն անձն է, որ ո՛չ միայն իր սեփական կարիքներուն հանդէպ զգայուն է, այլ նաեւ՝ ուրիշներու կարիքներուն. ան իր շրջապատի կամ մարդկային ընկերութեան չարիքները կը տեսնէ եւ անոնց դարմանումը կ'ուզէ: Բայց ան միաժամանակ գիտէ, որ աշխարհի չարիքները միայն մասնակիօրէն կարելի է դարմանել, եւ թէ անոնք ամբողջապէս երբեք պիտի չդարմանուին մինչեւ որ Աստուծոյ թագաւորութիւնը գայ: Երբ անիկա գայ եւ կատարելապէս հաստատուի այս աշխարհի վրայ՝ բոլոր չարիքներն արմատախիլ պիտի ըլլան, ինչպէս Որոմի առակով Յիսուս ըսած է:

Արդ, Յիսուսի «երանի»-ին արժանացած սգաւորները ո՛չ թէ միայն կը տեսնեն աշխարհի տխուր վիճակը եւ ցաւ կը զգան, այլ մանաւանդ կ'աղօթեն:

Սգաւորութեան առաջին օրինակին մենք կը հանդիպինք ջրհեղեղի պատմութեան մէջ: Դրուագը մեզի կ'ըսէ. «Եւ Տէրը երբ տեսաւ որ մարդոց չարութիւնը երկրի վրայ կը շատնայ եւ անոնց սիրտին խորհուրդներուն բոլոր գաղափարները չար էին ամէն օր, Երկրին վրայ մարդը ստեղծելուն զղջաց» (Շն 6.5-6): Այս «զղջաց»-ը ի տես աշխարհի մեղքին՝ Աստուծոյ սգաւոր ըլլալուն վիճակն է: Սգաւոր Աստուածը մեղքի աշխարհը կը բնաջնջէ:

Սգաւորութեան օրինակը մենք կը տեսնենք նաեւ Յիսուսի անձին մէջ, երբ Ան Երուսաղէմի վրայ ցաւելով կ'ըսէ. «Երուսաղէմ, Երուսաղէմ ... Բանի՛ անգամ ուզեցի որդիներդ հաւաքել, ինչպէս հաւր իր ձագերը կը հաւաքէ թելերուն տակ, բայց դուք՝ Երուսաղէմի

բնակիչներ՝ չուզեցիք» (Մտ 23.37): Ասիկա արտայայտութիւնն է աստուածային սգաւորութեան, որ մարդիկ իրենց ընծայուած Աստուծոյ օգնութեան ձեռքը կամ փրկութիւնը կամաւորապէս կը մերժեն:

Յիսուս առիթով մը ըսաւ, թէ Իր առաքելները, նաեւ բոլոր անոնք որոնք Իրեն կը հետեւին, աշխարհի մեղաւորութեան պատճառով պիտի տրտմին կամ պիտի սգան: Եւ Աստուած զիրենք պիտի մխիթարէ:

Հիմա հարցումը որ պիտի դնեմ՝ սա է. Աստուծոյ տալիք մխիթարութիւնը ներկա՞յ աշխարհին կապուած է:

Ներկայ աշխարհին մէջ Աստուծոյ պարգեւած մխիթարութիւնը մասնակի պիտի ըլլայ, եւ երբեք ամբողջական: Ամբողջական մխիթարութիւնը ապագային պիտի ըլլայ՝ Երկինքի Արքայութեան մէջ: Սգաւորներն իրենց ամբողջական մխիթարութիւնը պիտի գտնեն Երկինքի Արքայութեան մէջ:

Հետեւաբար, երանելի են անոնք, որոնք աշխարհի չարիքներուն մէջ ապրելով հանդերձ, անոնց չեն ենթարկուիր, այլ՝ կը սգան: Ո՛չ թէ իրենց անձերուն համար, այլ՝ ամբողջ աշխարհին: Եւ կ'աղօթեն, որ Երկինքի Արքայութիւնը շուտով գայ:

«Երանի՛ հեգերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն Երկիրը» (5):

Երրորդ երանին հեգերուն կը վերաբերի: Որո՞նք են հեգերը: Բայց հարցումին պատասխանելէ առաջ, տեսնենք թէ ի՞նչ կը նշանակէ հեգ:

Թւ. 12.1-5, 9-ին մէջ գրուած է հետեւեալը.

Մարիամ եւ Ահարոն Մովսէսի դէմ խօսեցան՝ անոր առած եթովպիացի կնոջ համար, քանզի անիկա եթովպիացի կին առեր էր: Ու ըսին. «Միթէ Տէրը միայն Մովսէսի՞ն միջոցով խօսեցաւ: Զէ՞ որ մեր միջոցով ալ խօսեցաւ»: Տէրը լսեց: Մովսէս շատ հեգ մարդ մըն էր՝ երկրի վրայ եղած բոլոր մարդոցմէ աւելի: Իսկոյն Տէրը ըսաւ Մովսէսին ու Ահարոնին ու Մարիամին. «Դուք երեքդ ալ Վկայութեան Խորանը ելէ՛ք»: Երեքն ալ ելան: Եւ Տէրը ամպին սիւնովը իջաւ ու խորանին դուռը կեցաւ եւ Ահարոնն ու Մարիամը կանչեց: ...Եւ Տիրոջ բարկութիւնը անոնց վրայ բորբոքեցաւ:

Մարիամի եւ Ահարոնի չարախօսութեան դիմաց՝ Մովսէս չի հակաձառեր, այլ՝ իրեն փոխարէն Աստուած է, որ կը պատասխանէ, որովհետեւ ան «երկրի վրայ եղած բոլոր մարդոցմէ աւելի» հեգ մարդ մըն էր: Հեզին պաշտպանը Աստուած Ինքն է:

Իսկ ո՞վ է հեզը:

Հեզութիւնն իրեն հոմանիշ ունի խոնարհութիւնը: Բայց պզտիկ տարբերութիւն մը կայ երկուքին միջեւ: Հեզութիւնը այն յատկանիշն է, որ մարդը կրնայ ունենալ ծնունդէն. ան բնութեամբ կամ խառնուածքով հեզ կ'ըլլայ: «Հեզ»-ին յունարէնը (փրաուս) Նոր Կտակարանին մէջ նաեւ «ազնիւ» թարգմանուած է: Հեզութիւնը, ուրեմն, նկարագիրի ազնուութիւնն է:

Աւելցնեմ, որ հեզութիւնը մարդոց հետ յարաբերութեան վերաբերող նկարագրային յատկանիշ է աւելի, քան թէ Աստուծոյ հետ:

Խոնարհութիւնը թէեւ իմաստով մօտիկ է հեզութեան, բայց տարբեր է անկէ: Խոնարհութիւնը այն առաքինութիւնն է, որ մենք գիտակցաբար եւ կամաւորաբար ձեռք կը բերենք: Մենք խոնարհ չենք ծնիր, այլ խոնարհ կ'ըլլանք: Երբ կ'ըսեն «կ'ըլլանք», ըսել կ'ուզեն, թէ մեր գիտակցութեամբ եւ ուզելով կը մերժենք չար տրամադրութիւններ ունենալ, մանաւանդ կը մերժենք հպարտութեան տրամադրութիւնը, եւ գիտակցաբար ու կամաւորաբար կը դառնանք խոնարհ: Եւ խոնարհութիւնը աւելի Աստուծոյ հետ յարաբերութեան վերաբերող բարոյական յատկանիշ է, քան թէ մարդոց հետ:

Մարդուն առաջին մեծագոյն յանցանքը հպարտութիւնն է, աստուածանալու ցանկութիւնը, եւ այդ պատճառով՝ մահացու մեղքերուն գլխաւորն է անիկա. անկէ է, որ ծնունդ կ'առնեն բոլոր միս մահացու մեղքերը: Եւ անոր դիմաց՝ առաքինութիւններուն մեծագոյնը խոնարհութիւնն է: Խոնարհութիւնը դարմանն է հպարտութեան: Միակ կերպը որով կարելի է մեր մէջ յաղթահարել «ես»-ը խոնարհութիւնն է, ինքզինք խոնարհեցնելու կամ խոնարհ պահելու ընթացքն է:

Խոնարհութեան ճամբան հեզութեան ճամբուն կը միանայ:

Հեզերը ո՛չ թէ միայն մարդոց հետ քաղցր են եւ բարի, հետեւաբար ընդունելի անոնց կողմէ, այլ՝ ամէն բանէ առաջ՝ իրենց նկարագրային այդ գիծով Աստուծոյ ընդունելի են: Մովսէսի օրինակը այդ ցոյց կու տայ: Երբ Աստուած կը վկայէ անոր հեզութեան մասին, բացայայտ կը դարձնէ, որ Իրեն համար այդպիսի մարդ մը պէտք է: Բայց այդ չի նշանակեր, թէ ով որ իր ծնունդով հեզ չէ՝ Աստուծոյ համար անընդունելի է: Այն մարդը որ հեզ չէ ծնած, սակայն գիտէ ապաշխարութեան ճամբով դարմանել իր սխալները, ան եւս կը մտնէ հեզութեան ճամբուն մէջ: Այնպէս ինչպէս որ մէկը կրնայ հարուստ ծնած չըլլալ, բայց կրնայ հարստանալ. այնպէս ինչպէս որ մէկը կրնայ հոգիի հարստութիւն չունենալ, բայց կրնայ հասնիլ այդ հարստութեան, նոյնպէս մէկը կրնայ հեզ չըլլալ, բայց ինքզինք խոնարհեցնելով եւ խոնարհ պահելով՝ կը հասնի հեզութեան ճամբուն, եւ կը

ժառանգէ Երկիրը:

«Հեզերը պիտի ժառանգեն Երկիրը» կ'ըսէ: Ի՞նչ Երկրի մասին կը խօսի Յիսուս:

Տեսնենք 37-րդ սաղմոսին 9-րդ, 11-րդ, 22-րդ, 29-րդ եւ 34-րդ համարները: Նախ յայտնեմ, որ այս գլուխը ընդհանրապէս բարեպաշտութիւն սորվեցնող սաղմոս է, ցոյց կու տայ մարդոց չար եւ բարի վարմունքները եւ կը յորդորէ չարիքէն կամ չարերու տուած օրինակէն հեռու մնալ եւ հետեւիլ բարիներու օրինակին:

Նշեալ համարներուն մէջ կը կարդանք. «Տիրոջ համբերողները Երկիրը պիտի ժառանգեն» (9).

«Հեզերը պիտի ժառանգեն Երկիրը» (11).

«Անոր օրինածները պիտի ժառանգեն Երկիրը» (22).

«Արդարները պիտի ժառանգեն Երկիրը» (29).

«Տիրոջ համբերէ՛ ու անոր ճամբան պահէ՛ եւ Ան քեզ պիտի բարձրացնէ, որպէսզի Երկիրը ժառանգես» (34):

Ո՞ր մէկ Երկիրն է ասիկա:

Սաղմոսին ատեն եբրայեցի ժողովուրդը արդէն կ'ապրէր իրեն խոստացուած Երկիրին մէջ: Ուրեմն, ինչո՞ւ Ղաւիթ «պիտի ժառանգեն» կ'ըսէր: Չէ՞ որ արդէն ժառանգեր էին Երկիրը եւ կ'ապրէին այնտեղ:

Իրականին մէջ ակնարկուած «Երկիր»ը Տիրոջ Օծեալին բերելիք Թագաւորութեան կը վերաբերի: Անիկա Նոր Երկիրը պիտի ըլլայ: Հետեւաբար, «Երկիրը ժառանգել»-ը կը նշանակէր Նոր Երկիրը ժառանգել:

Այդ Երկիրին ժառանգորդները պիտի ըլլան, կ'ըսէ սաղմոսերգուն, Տիրոջմով համբերողները, հեզերը, Անոր օրինածները եւ արդարները:

Կը հաւատանք, որ Աստուած Երկիրն ստեղծեց ո՛չ թէ որպէսզի անիկա ոչնչանայ, այլ՝ որպէսզի մնայ: Բայց ինչպէ՞ս պիտի մնայ անիկա: Ի՞նչ պիտի ըլլայ Երկիրին վախճանական վիճակը:

Յայտնութեան գիրքի 21-րդ գլխուն մէջ կը կարդանք հետեւեալը, թէ հրեշտակ մը Քրիստոսի ծառայ Յովհաննէսը հոգիով կը վերացնէ եւ առնելով գայն՝ բարձր ու հսկայ լեռան մը վրայ կը տանի, եւ ցոյց կու տայ սուրբ քաղաքը՝ Երուսաղէմը, որ Երկիրնքէն «Աստուծոյ մօտէն կ'իջնէր»:

Ո՞ր է որ կ'իջնէր Սուրբ Քաղաքը կամ Երկնաւոր Երուսաղէմը, որ մէկ ուրիշ անունն է Երկինքի Արքայութեան:

Անիկա կ'իջնէր մեր այս աշխարհին վրայ:

Ըսել ուզուածը այն է, թէ վախճանական ժամանակին՝ Երկիրը

պիտի վերափոխուի կամ վերանորոգուի:

«Երանի՛ անոնց, որոնք արդարութեան քաղցն ու ծարաւը ունին, որովհետեւ անոնք պիտի յազենան» (6):

Ի՞նչ կը նշանակէ «արդարութեան քաղցն ու ծարաւը» ունենալ: Մարմնաւոր օրինակով՝ հոգեւոր բան մը կ'ըսուի: Հոգեւոր կարօտութեան փոխաբերութիւն մըն է ասիկա: Աւելի ճշգրիտ բացատրութեամբ մը՝ հոգեւոր կարօտի փոխաբերութիւն է ըսուածը: Այդ կարօտը արդարութեան կարօտն է:

Իսկ ի՞նչ է արդարութիւնը: Ի՞նչ կը հասկնանք «արդարութիւն» ըսելով: Բայց նախքան այդ՝ ո՞վ է արդարը:

«Արդար» կը կոչենք այն մարդը, որ մեղքէ, անօրէնութենէ, չարիք գործելէ հեռու է: Ուրեմն, արդարը այն մարդն է, որ անմեղ է: Հետեւաբար, արդարութիւնը անմեղութիւնն է:

Ասկէ առաջ Յիսուսի մկրտութեան դրուագին մէջ տեսանք, որ արդարութիւնը կապուած է Աստուծոյ ծրագիրի իրագործման: Նաեւ Նոր Կտակարանէն զիտենք, որ Քրիստոս Ինքն է արդարութիւնը, որովհետեւ Ինքն է Աստուծոյ ծրագիրին ճշմարիտ իրականացումը:

Արդ, երբ կ'ըսուի՝ «Երանի՛ անոնց, որոնք արդարութեան քաղցն ու ծարաւը ունին», ըսել կ'ուզուի՝ երանի՛ անոնց, որոնք Աստուծոյ փրկութեան, Անոր ծրագիրին իրագործումը կը սպասեն, եւ իրենց անծով կը կապուին Յիսուսի՝ Անոր մէջ տեսնելով այդ արդարութեան քաղցին ու ծարաւին յազեցումը:

Այստեղ պէտք է ւաւելցնել, որ Յիսուսի մէջ արդարութեան քաղցին ու ծարաւին յազեցումը գտնելը մասնակի պիտի ըլլայ այս երկինքին ներքեւ եւ այս երկրի վրայ, բայց անոր կատարումը պիտի գայ երբ Նոր Երկինքն ու Նոր Երկիրը հաստատուին:

«Երանի՛ ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ՛ ողորմութիւն պիտի գտնեն» (7):

Որո՞նք են ողորմածները: Որո՞նց մասին կը խօսի Յիսուս:

Ի՞նչ կը հասկնանք, երբ «ողորմութիւն» կ'ըսենք:

Աստուած կ'ըսէ. «Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ թէ զոհ» (Ովս 6.6):

Ի՞նչ ողորմութիւն է, որ Աստուած կը պահանջէ:

Երբ Մատթէոս 6.1-4-ը կը կարդանք, կը տեսնենք որ «ողորմութիւն» բառը կը հասկցուի «բարեգործութիւն» իմաստով: Յիսուս երբ «ողորմութիւն» կ'ըսէ, կը հասկնայ բարեգործութիւնը:

Նախքան ողորմութեան մասին իր ուսուցումը՝ Յիսուս կոչ ուղղած է երկնաւոր Հօր պէս կատարեալ ըլլալու (5.48): Թէեւ Յիսուսի

կոչը այլ ուսուցումի մը իբր եզրակացութիւն տրուած է, սակայն չ'անջատուիր ողորմութեան մասին Անոր ուսուցումէն:

Աստուածաշունչին մէջ բուն ողորմածը Աստուած Ինքն է:

Հետեւաբար, այն մարդը որ Աստուծոյ նման ըլլալ կ'ուզէ, պէտք է ողորմած ըլլայ Անոր պէս:

Մատթէոս Աւետարանիչ իր 5-րդ գլխու վերջաւորութեան հրաւիրած է զինք լսողները կատարեալ սէր ունենալու եւ ըսած. «Այսպիսով դուք ձեր երկնաւոր Հօր զաւակները պիտի դառնաք, որովհետեւ Ան Իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ» (հմր 45):

Կատարեալ սիրոյ հրաւիրը կարելի է հասկնալ նաեւ որպէս հրաւիր կատարեալ ողորմածութեան: Երանելի են անոնք, որոնք Աստուծոյ պէս ողորմած են, այսինքն՝ մարդոց միջեւ խտրութիւն չեն դնել եւ իրենց օգնութեան ձեռքը կ'երկարեն բոլորին: Անոնց համար է, որ Յիսուս կ'ըսէ, թէ ողորմութիւն պիտի գտնեն, եւ այդ ողորմութիւնը պիտի գայ ոչ թէ մարդոցմէ, այլ՝ Աստուծմէ:

Աստուած Իր ողորմութիւնը օրէ օր կը շնորհէ, մեր մեղքերը, մեր յանցանքները կը ներէ, որպէսզի մենք ալ մեր ողորմութեան մէջ առատանանք: Սակայն միշտ ի մտի պէտք է ունենալ, որ Աստուծոյ տալիք կատարեալ ողորմութիւնը պիտի պարգեւուի հանդերձեալին մէջ, երբ ամբողջապէս հոգիով պիտի ապրինք:

«Երանի՛ անոնց, որոնք սիրտով մաքուր են, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն» (8):

Նախ՝ սկսինք վերջաւորութենէն:

«ԶԱստուած տեսնել» արտայայտութիւնն ի՞նչ կը նշանակէ:

Հին Կտակարանին մէջ կը շեշտուի, թէ կարելի չէ զԱստուած տեսնել ոչ թէ միայն նիւթական աչքով, այլ՝ նոյնիսկ տեսիլքի մէջ:

Միակ պարագան, որ Աստուծոյ առաւել մօտիկ դէմ յանդիմանական տեսողութիւնը ունեցած էր՝ Մովսէս Մարգարէն էր: Մովսէս, ըստ Թուոց գիրքին, երբ Աստուծոյ հետ կը խօսէր՝ Անոր կերպարանքը կը տեսնէր (Թւ 12.8):

Ինչպէ՞ս կարելի է հասկնալ ասիկա:

Սաղմոս 24-րդն ամբողջութեամբ փառաբանութիւն մըն է Աստուծոյ, բայց միաժամանակ Աստուծոյ սրբարանին մէջ կանգնելու մասին կը խօսի եւ անոր պայմանները կը նշէ: 6-րդ համարին մէջ սաղմոսերգուն արտայայտութիւն մը ունի, կ'ըսէ. «Երեսդ խնդրողը», այսինքն՝ ըսել կ'ուզէ ան որ զԱստուած տեսնել կ'ուզէ եւ կը փնտռէ:

Երեսը երբայերդնին մէջ կը նշանակէ նաեւ ներկայութիւն:

Պահ մը յիշենք Վկայութեան Խորանը:

Անիկա Աստուծոյ ներկայութեան խորհրդանշանն էր: Մարդիկ զայն տեսած էին միայն շինուած ատենը: Բայց երբ անիկա պաշտամունքին կեդրոնական վայրը կը դառնար, միայն քահանայապետը տարին անգամ մը այնտեղ մտնելու իրաւունքը կ'ունենար: Հոն միայն սրբազան առարկաներ եւ ընծաներ կային: Աստուծոյ ներկայութեան վայրն էր անիկա: Երբ քահանայապետը հոն կը մտնէր՝ Աստուծոյ ներկայութեան կը կանգնէր:

Հետեւաբար, սրբարանին մէջ Աստուծոյ երեսը տեսնելը՝ Աստուծոյ ներկայութեան կամ Անոր դէմ յանդիման կանգնիլը կը նշանակէր: Բայց ասիկա ըսել չէր, թէ կարելի էր մարդ էակին՝ Աստուծոյ փառքը կամ էութիւնը տեսնել: Միայն մարգարէներուն է, որ Աստուած Ինքզինք տեսիլքի մէջ կը ճանչցնէր կամ երագի մէջ կը խօսէր (Թւ 12.6):

Բանանք Եսայի Մարգարէին 6-րդ գլուխը:

Այնտեղ կը կարդանք այն նշանաւոր տեսիլքը, որ մարգարէն ունեցած էր: Ան գրած է. «Տէրը տեսայ, որ բարձր ու վերացած աթոռի վրայ նստեր էր: Անոր քղանցքը տաճարը կը լեցնէր: Վերի կողմը՝ սերովբէները կը կենային անոր առջեւ, որոնց ամէն մէկը վեց թել ունէր: Երկուքով երեսնին կը ծածկէին, երկուքով ոտքերնին կը ծածկէին ու երկուքով կը թռչէին: Եւ փոխնիփոխ կ'աղաղակէին ու կ'ըսէին.՝ Սուրբ, Սուրբ, Սուրբ է զօրքերու Տէրը» (Ես 6.1-3):

Հարցունը որ կ'ուզեն դնել այստեղ՝ սա է.

- Ինչո՞ւ համար սերովբէները իրենց վեց թելերէն երկուքով երեսնին կը ծածկէին:

Որովհետեւ չէին կրնար Աստուծոյ փառքը դիտել:

Արդ, եթէ սերովբէներն անգամ չեն կրնար Աստուծոյ փառքը դիտել, այլ խօսքով՝ չեն կրնար զԱստուած տեսնել, հապա ինչպէ՞ս պիտի կարենայ տեսնել մարդը:

Ուրեմն, այս բացատրութենէն ետք, ինչպէ՞ս հասկնալ Յիսուսի խօսքը, թէ անոնք որ սիրտով մաքուր են՝ զԱստուած պիտի տեսնեն:

Աստուած Ինք Սուրբն է եւ զԱյն կարելի է ճանչնալ միայն սուրբ սիրտով: Սիրտով մաքուր եղողը Աստուծոյ նմանութիւնը կը բերէ իր մէջ կամ «կը տեսնէ» զԱյն:

Բայց այս «տեսնել»ը ամբողջակա՞ն տեսնելն է:

Ո՛չ:

Պօղոս Առաքեալ հակառակ իր ունեցած բազմաթիւ տեսիլքներուն եւ փորձառութիւններուն, տեսէ՞ք թէ ի՞նչ կ'ըսէ. «Մենք այժմ զԱստուած կը տեսնենք աղօտ կերպով, կարծես հայելիի մը մէջէն.

բայց երբ ամէն բանի կատարումը գայ զԱյն պիտի տեսնենք դէմ առ դէմ: Այժմ միայն մասնակիօրէն կը ճանչնամ զԱստուած, բայց այն ատեն պիտի ճանչնամ ամբողջապէս, ճիշդ ինչպէս Ինք զիս կը ճանչնայ» (Ա. Կր 13.12): Առաքեալին ականարկած հայելին պղնձեայ կ'ըլլար եւ յստակ չէր ցուցնէր իր մէջ ինկածը: Այս փոխաբերութեամբ ան ըսել կ'ուզէր, թէ Աստուծոյ մասին ճանաչումը կամ ներկայ ժամանակին մէջ զԱստուած տեսնելը՝ միայն աղօտ կրնայ ըլլալ:

Անոնք որ սիրտով մաքուր են, երբ կատարումը գայ Աստուծոյ հետ պիտի ըլլան, այնպիսի սերտութիւն մը, այնպիսի մտերմութիւն մը պիտի ունենան, որ զիրենք Աստուծոյ բաժնող պատուար պիտի չըլլայ, որովհետեւ մեղքերը պիտի չըլլան:

«Երանի՛ անոնց, որոնք խաղաղութեան հաստատումին համար կ'աշխատին, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին» (9):

Առհասարակ խաղաղութիւնը կը կապենք վէճերուն եւ պատերազմներուն: Սակայն Յիսուսի այս խօսքը հասկնալու համար կարելորդ զիտնալն է, թէ Ինք ի՞նչ կը հասկնար երբ «խաղաղութիւն» կ'ըսէր:

Յիսուս ըսած էր. «Մի՛ կարծէք, թէ աշխարհին խաղաղութիւն բերելու եկայ: Ո՛չ. չեկայ խաղաղութիւն բերելու, այլ՝ սուր» (Մտ 10.34): Իսկ այստեղ կը տեսնենք, թէ երանի կու տայ անոնց որոնք խաղաղութեան հաստատումին համար կ'աշխատին: Հակասական չէ՞: Ինչպիսի՞ խաղաղութեան մասին կը խօսի Ան:

Յիսուսի ականարկած խաղաղութիւնը հոգեւոր է. անիկա սովորական կամ աշխարհի քաղաքական խաղաղութեան չի վերաբերիր: Ան Իր առաքեալներուն ըսաւ. «Ասոնք խօսեցայ ձեզի, որպէսզի Ինձմով խաղաղութիւն ունենաք: Աշխարհի վրայ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջալերուեցէ՛ք, որովհետեւ Ես յաղթեցի աշխարհին» (Յի 16.33): Յիսուսի խոստացած խաղաղութիւնը «Ի՛ր» խաղաղութիւնն է եւ ո՛չ թէ աշխարհի:

Յստակ է մեզի, որ Յիսուս երկրաւոր իր կեանքն ապրեցաւ այնպէս, որ խաղաղութեան հաստատումին համար էր: Նոյնիսկ երբ զԻնք նախատեցին, անարգեցին, հալածեցին՝ որեւէ կերպով չհակադարձեց:

Ան Իր աշակերտներուն պատուիրած էր՝ ըսելով. «Եթէ մէկը աջ երեսիդ ապտակ գարնէ՛ միւս երեսդ ալ դարձուր անոր» (Մտ 5.39): Ան ըսել կ'ուզէր՝ չարիքին չարիքով մի՛ պատասխանէր: Եւ Ինք չարիքին չարիքով չպատասխանեց:

Աշխարհի չարիքին դիմաց չար ճամբայ բռնելը հոգեւոր խաղաղութենէ չի գար եւ խաղաղութիւն չի տար, այլ չարիքէն կու գայ եւ չարիքի պատճառ կ'ըլլայ:

Արդ, խաղաղութեան հաստատումին համար աշխատողը ան է, որ Յիսուսի օրինակով՝ չարիքի ճամբուն մէջ չի մտնէր, այլ կը քալէ խաղաղութեան հաստատումի ճամբուն մէջ:

Իսկ ինչպէ՞ս հասկնալ Յիսուսի այն խօսքը, որուն ակնարկեցի. «Մի կարծէք, թէ աշխարհին խաղաղութիւն բերելու եկայ: Ո՛չ. չեկայ խաղաղութիւն բերելու, այլ սուր»: Ի՞նչ ըսել կ'ուզէր Յիսուս:

Պէտք չէ կասկածիլ Յիսուսի տուած խաղաղութեան պատգամին վրայ: Ան խաղաղութիւն ուսուցանեց, քարոզեց եւ ըրաւ: Հետեւաբար, արդար չ'ըլլար Իր այդ ըսածը բառացիօրէն առնելը:

Ինք Սէրն իսկ է: Սէրը չարիքի պատճառ կ'ըլլա՞ր: Ո՛չ: Սէրը չէ, որ պատճառ կ'ըլլայ չարիքի: Սակայն սիրոյ ներկայութեան դիմաց ատող հոգեբանութիւնը կը գայրանայ: Նոյնպէս, խաղաղարարը չէ, որ պատճառն է խռովութեան, այլ խաղաղարարին ներկայութեան խռովարար հոգին կը գայրանայ: Յիսուսի տուած խաղաղութիւնը չէ պատճառը խռովութեան, այլ մարդուն մէջ եղող չարիքի ցանկութիւնն է, որ այդ խաղաղութեան ներկայութենէն կը գայրանայ, կը բորբոքի եւ մահ կը պատճառէ:

Ճշմարիտ խաղաղութիւնը Յիսուս Ինքն իսկ է:

Ան Երկրի վրայ եկաւ, որպէսզի խաղաղութիւնը հաստատէ եւ Իր աշակերտներուն՝ խաղաղութեան համար աշխատիլ պատուիրեց: Յիսուսի պատուէրը կը բխէր այն հաշտութենէն, որ մենք Իր միջոցով ունեցանք Աստուծոյ հետ: Եւ ան որ հաշտուած է Աստուծոյ հետ՝ հաշտուած է նաեւ մարդոց հետ:

Հետեւաբար, Եկեղեցւոյ պաշտօնեաները, հոգեւոր առաջնորդները եւ հովիւները եւ ամէն քրիստոնեայ անհատ կոչուած է խաղաղարար ըլլալու, այսինքն՝ մէկ կողմէ՝ ինքզինք հաշտ պահելու Աստուծոյ հետ, եւ միւս կողմէ՝ անոնք որ հաշտ են՝ անոնց գործակցութեամբ քալելու, եւ Աստուծոյ հետ անհաշտ մարդիկը հաշտեցնելու Աստուծոյ եւ իրենց նմաններուն հետ:

Այստեղ մենք յստակօրէն կը տեսնենք Յիսուսի վարդապետութեան հիմնաքարը, որ սէրն է: Աստուծոյ եւ մարդոց հետ հաշտութիւնը կը հիմնուի սիրոյ վրայ. անիկա է, որ մարդիկը կը մղէ իրարու հետ հաշտ ապրելու, որովհետեւ կը յայտնէ, թէ իբր ըստ Աստուծոյ պատկերին ստեղծուած արարածներ՝ թէւ անկեալ սակայն պէտք է որ անպայմանաւոր սէրն ունենան իրենց մէջ՝ թէ՛ Աստուծոյ հանդէպ եւ թէ՛ իրենց նմաններուն:

«Երանի՛ անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, որովհետեւ անոնց է Երկինքի Արքայութիւնը» (10):

Յիսուս Ինքն է արդարութիւնը, եւ անոնք որ Իրեն կը հետեւին կը հալածուին:

Այս «Երանի»-ով Ան Իր բոլոր հետեւորդներուն կը յայտնէ, թէ անխուսափելիօրէն պիտի հալածուին: Ան Իր առաքելութեան սկիզբէն իսկ ուզեց, որ Իրեն եկողները սխալ տպաւորութեամբ եւ անիրական յոյսերով չհետեւին Իրեն, այլ՝ յայտնապէս ըսաւ, որ Իրեն հետեւիլը դիւրին չէ: Իրեն հետեւելու համար մէկը պիտի մտնէ նեղ դռնէն եւ քալէ նեղ ճամբուն մէջ, որ այնքան դժուարին է: Բայց այդ դուռն է, որ դէպի կեանք կը տանի. եւ քիչերն են միայն, որ կը գտնեն գայն (Մտ 7.14):

Ուրիշ տեղ մը Յիսուս Իրեն հետեւիլը նմանցուցած է սեփական խաչն առնելով՝ ըստ Իր օրինակին քալելու (հմմտ Մտ 10.38):

«Երանի՛ ձեզի, երբ մարդիկ նախատեն եւ հալածեն ձեզ, կամ ստելով ձեր մասին ամէն տեսակի զրպարտութիւն ընեն Իմ հետեւորդներս ըլլալնուդ համար: Ցնծացէ՛ք եւ ուրախացէ՛ք, որովհետեւ ձեր վարձատրութիւնը մեծ է Երկինքի մէջ: Յիշեցէ՛ք որ նոյն ձեւով հալածանքի ենթարկուեցան ձեզմէ՛ առաջ ապրող մարգարէներն ալ» (12-13):

Ուրեմն, Յիսուսի հետեւիլը կը նշանակէ հալածանքի ճամբուն մէջ ըլլալ: Ինչո՞ւ համար Աստուած թոյլ կու տայ, որ Իր Որդին հետեւողը կամ հետեւողները հալածանքի ենթարկուին: Ի՞նչ է հալածանքին եւ չարչարանքին դերը մեր կեանքին մէջ:

Նախ, առաջին դարու քրիստոնեաները, առաքելներէն սկսեալ, շատ զօրեղ հաւատքով մը իրենց հոգիին եւ միտքին մէջ ունեցած են այն խօսքը, որ Յիսուս ըսած էր Իր Եկեղեցիին համար, թէ դժոխքին դռները պիտի չյաղթեն անոր (հմմտ Մտ 16.18): Անոնք «դժոխքի դռներ» փոխաբերութեամբ կը հասկնային չարը իր ամբողջ զօրութեամբ: Հալածանքները յաղթահարելու համար՝ Յիսուս վստահութիւն ներշնչած է եւ կը ներշնչէ Իրեն հետեւորդներուն: Ան ըսած էր. «Քաջալերուեցէ՛ք, որովհետեւ Ես յաղթեցի աշխարհին» (Յհ 16.33):

Երկրորդ, հալածանքը փորձութիւն է, եւ հաւատացեալ անձին համար անիկա ո՛չ միայն հաւատքի մէջ աճման եւ ամրապնդման կը ծառայէ, այլ նաեւ մեղքերէ սրբուելու, առաքինութիւններ գտնելու եւ անոնցմով զօրանալու առիթ կ'ըլլայ:

Եբրայեցիներու նամակին հեղինակը հալածանքները եւ չարչարանքները որպէս Աստուծոյ կողմէ խրատ դիտելով՝ գրած է. «... յորդորը, որ ձեզի ուղղուած է իբրեւ որդիներու.- Որդեակս, մի արհամարհե՛ր Տիրոջ խրատը եւ մի վհատիր երբ քեզ յանդիմանէ, որովհետեւ Տէրը երբ կը խրատէ կը նշանակէ, թէ կը սիրէ քեզ. երբ կը պատժէ կը նշանակէ, թէ քեզ իբր զաւակ կ'ընդունի (Առ 3.11-12):

Ուստի համբերութեամբ ընդունեցէ՛ք Աստուծոյ խրատը, գիտնալով որ հոր մը պէս կը վարուի ձեզի հետ: Կա՞յ զաւակ մը որ իր հորմէն յանդիմանութիւն ստացած չըլլայ: Ընդհակառակը, եթէ Աստուած ձեզ յանդիմանէ, ինչպէս կ'ընէ Իր բոլոր որդիներուն, կը նշանակէ, թէ Իր զաւակները չէք եւ խորթ էք Իրեն: Մեր մարմնաւոր հայրերը երբ մեզ յանդիմանեն կը դադրի՞նք գիրենք յարգել: Ո՛չ: Ուրեմն որքան աւելի եւս հնազանդ պէտք է ըլլանք հոգիներու Հօր, որպէսզի կեանք ունենանք» (Եբր 12.5-9):

Իսկ Պետրոս Առաքեալ ըսած է. «Աստուած Իր զօրութեամբ կը պահէ ձեզ, որպէսզի ձեր հաւատքով հասնիք Իր պատրաստած փրկութեան, որ ժամանակի վախճանին պիտի յայտնուի: Ուրախացէ՛ք այդ փրկութեամբ, նոյնիսկ եթէ հարկադրաբար քիչ մը տրտմած էք հիմա՝ ձեր կրած պէս-պէս փորձութիւններուն համար: Այդպիսով փորձուած ձեր հաւատքը շատ աւելի թանկագին է, քան կորստական ոսկին, որ կրակին մէջ կը փորձուի, որուն համար ալ երբ Յիսուս Քրիստոս յայտնուի՝ պիտի գովէ ձեզ եւ փառքի ու պատիւի արժանացնէ» (Ա. Պտ 1.5-7):

Նաեւ թէ՛ «Աստուծոյ մէկ շնորհքն է, երբ Աստուծոյ կամքը գիտնալով մարդ կը համբերէ անիրաւ տեղ կրած նեղութիւններուն: Արդարեւ, ի՞նչ արժանիք կ'ունենաք, եթէ ձեր գործած յանցանքներուն համար տանջուիք եւ համբերէք. մինչդէռ երբ բարիք գործելով չարչարուիք եւ համբերէք Աստուծոյ քով շնորհք կը գտնէք:

Այդ համբերութիւնը ցուցադրելու կոչուած էք դուք, որովհետեւ Քրիստոս ալ ձեզի համար չարչարուեցաւ՝ օրինակ տալով ձեզի, որպէսզի Իր հետքերով քայլէք» (Ա. Պտ 2.19-21):

Եկեղեցիին համար հալածանքները եւ չարչարանքները աճման տուեալ կրնան ըլլալ, ուստի քրիստոնեան պէտք է ամուր մնայ իր հաւատքին մէջ: Հարկաւ տրտմութիւնը երբեմն-երբեմն կրնայ համակել զինք, բայց ան արթուն պէտք է ըլլայ, որպէսզի իր հաւատքին հորիզոնը չխաւարի: Ան միշտ լսելու է Յիսուսի կոչը, որ կ'ըսէ. «Ցնծացէ՛ք եւ ուրախ եղէք, որովհետեւ ձեր վարձատրութիւնը մեծ է Երկինքին մէջ»:

Կարելի է հարցնել. արդեօք կրնա՞յ մէկը հալածանքներուն եւ

չարչարանքներուն մէջ ցնծալ եւ ուրախ ըլլալ: Ինչպէ՞ս կարելի է մարմնական այդ նեղութիւններուն մէջ պահել ցնծութեան եւ ուրախութեան հոգեվիճակը:

Առաքեալներուն Գործերը գիրքի 5-րդ գլխուն մէջ կը պատմուի, թէ Պետրոս եւ Յովհաննէս Առաքեալները տաճարին մէջ քարոզելու ատեն կը ձերբակալուին ու ատեան կը տարուին: Ատեանը թէեւ իրենց վրայ դատապարտութիւն չ'արձակե՛ր, սակայն որպէսզի իրենց քարոզութիւնը նոյն թափով չձարունակեն, զիրենք ծեծի կը յանձնէ: Ղուկաս՝ գիրքին հեղինակը կ'ըսէ, թէ յետոյ առաքեալները ուրախանալով՝ որ Տիրոջ անունին համար անարգանքի արժանացան կը մեկնին:

Ուրեմն, ով որ հաւատքի նոյն հայեացքը ունի՝ կը ցնծայ եւ ուրախ կ'ըլլայ Յիսուսի անունով նեղութիւն կրելուն համար, որովհետեւ յոյս ունի, թէ Աստուած պիտի վարձատրէ զինք:

Անշուշտ, այս յոյսը վաճառականական սպասումը չէ: Յիսուսի համար նեղութիւն կրողը կը յուսայ աննիւթական վարձատրութիւն, այսինքն՝ կը յուսայ, որ Երկինքի Արքայութիւնը պիտի հաստատուի բոլոր նեղութիւններէն վերջ, եւ ինք եւ փրկուած մարդկութիւնը պիտի բնակին Նոր Երկինքի եւ Նոր Երկիրի հայրենիքին մէջ:

Մեր սովորական կեանքէն օրինակ մը տամ:

Երեւակայեցէ՛ք ծնողք մը: Եթէ պէտք ըլլայ իր զաւակը փրկելու համար նեղութիւն մը կամ նեղութիւններ յանձն առնել, այդ նեղութիւնը կամ նեղութիւնները ի՞նչ տրամադրութեամբ յանձն կ'առնէ: Յօժարութեամբ: Երբ յօժարութեամբ յանձն կ'առնէ, ցաւի կամ տրտմութեան տուեալը կը պակսի՞ իրմէ: Ո՛չ: Բայց որովհետեւ նպատակի մը գիտակցութիւնն ունի, իր ցաւը կամ տրտմութիւնը տանելի կը դառնան՝ նոյնիսկ եթէ այդ ցաւը կամ տրտմութիւնը այլ պայմաններու մէջ անտանելի ըլլային: Այս առնչութեամբ Յիսուս անմիջական օրինակ մը տուած է՝ ըսելով. «Կին մը երբ պիտի ծննդաբերէ՝ ցաւ կը քաշէ, քանի ծննդաբերութեան ժամանակը հասած է, բայց երախային ծնունդէն ետք այլեւս իր նեղութիւնները չի յիշեր այն ուրախութեան շնորհիւ, որ մարդ մը աշխարհ եկաւ» (Յհ 16.21):

Արդարութեան համար հալածուիլը՝ Քրիստոսի համար հալածուիլ է: Ան որ արդարութեան համար կը հալածուի՝ իր վարձատրութիւնը պիտի ստանայ Աստուծմէ: Անոր «վարձատրութիւնը մեծ է Երկինքին մէջ»:

ՄԱՏԹԵՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆ (մեկնություն)

ԳԼՈՒԽ 26

ԴԱԲ ՅԻՍՈՒՄԻ ԴԷՄ (1-5)

Երբ Յիսուս այս բոլոր խօսքերը վերջացուց, Իր աշակերտներուն ըսաւ.

- Ինչպէս գիտէք, երկու օրէն Ջատիկ է եւ Մարդու Որդին պիտի մատնուի խաչուելու համար: Այն ատեն աւագ քահանաները, Օրէնքին ուսուցիչները եւ ժողովուրդին երէցները հաւաքուեցան ապարանքը քահանայապետին, որ Կայիափա կը կոչուէր, եւ որոշեցին Յիսուսը նենգութեամբ ձերբակալել եւ սպաննել: Բայց կ'ըսէին.

- Այս տօնի ժամանակ թող չըլլայ, որպէսզի ժողովուրդին մէջ խռովութիւն չծագի:

Ուսուցողական բաժինը որ 23-րդ գլուխով սկսած էր՝ աւարտեցաւ 25-րդ գլուխով: Ահա՛ աւետարանիչը յստակ կը դարձնէ աւարտը՝ ըսելով. «Երբ Յիսուս այս բոլոր խօսքերը վերջացուց»:

26-րդ գլուխով կը սկսի Աւետարաններուն մէջ այն ընդարձակ բաժինը, որ Ս. Գիրքի բանասիրութեան մէջ կը ճանչցուի «Չարչարանքներու պատմութիւն» անունով: Այս բաժինին կեդրոնը Յիսուսի խաչն է, եւ այդ իսկ պատճառով մինչեւ Աւետարանին վերջաւորութիւնն ընդգրկուած դրուագները յիշեալ անունին տակն են:

Վաղ Եկեղեցւոյ համար Յիսուսի երկրաւոր կեանքին այս հանգրուանը մեծագոյն կարեւորութիւնը ներկայացուցած է: Ոմանք նոյնիսկ կ'ենթադրեն, որ ամէնէն կանուխ գրուած էջերը այս հանգրուանը ներկայացուցած են: Ապացոյցները շատ են: Օրինակ՝ Պետրոս Առաքեալի հոգեգալստեան ճառին (Գրծ 2.14-36) կորիզը: Առաքեալի պատգամին հիմքը կը վերաբերի Յիսուսի չարչարանքներուն, մահուան եւ յարութեան: Եւ ո՛չ միայն Առաքեալին, այլեւ վաղ Եկեղեց-

ւոյ քարոզութեան հիմքը եւս նոյնն էր: Յետոյ է, որ Յիսուսի երկրաւոր կեանքին միւս դէպքերն սկսան ուշադրութեան առարկայ դառնալ եւ գրուիլ:

Ուշագրաւ է, որ համատեսական Աւետարանները եւ Յովհաննէսի Աւետարանը յատկապէս կը միանան Յիսուսի երկրաւոր կեանքի վերջին հանգրուանին դրուագներով:

«...Երկու օրէն Ջատիկ է եւ Մարդու Որդին պիտի մատնուի խաչուելու համար»: Ջատիկին եւ Մարդու Որդիի խաչուելուն այս առնչումը մեզի կը յիշեցնէ Ջատիկին եւ գառնուկին պատուէրը, որ տրուած է Ելքի գիրքին 12.21-ին մէջ:

Ե՞րբ կը տօնուէր հրէական Ջատիկը:

Անիկա ծիսական տարուան առաջին ամսուան (Ապիպ կամ Նիսան) 14-ին կը տօնուէր: Առաւօտուն գառնուկը կը զենուէր, իսկ երեկոյեան սկիզբը պէտք է որ անիկա ուտուէր:

Քանի «երկու օրէն Ջատիկն է» կ'ըսուի, ուրեմն Յիսուս եւ Իր աշակերտները ամսուան տասներկրորդ, թէ՛ տասներեքերորդ օրուան մէջն էին: Գիտենք, թէ Յիսուսի վերջին Ջատիկը կու գար Հինգշաբթի օր: Արդեօք Իր խօսքը Երեքշաբթի՞ օր ըսած էր, թէ՛ Չորեքշաբթի օր: Ճշդելու դժուարութիւն ունինք: Բայց չ'արժեր այս նիւթին վրայ անելի կանգ առնել:

Ի՞նչ կը նշանակէ «Ջատիկ»-ը:

Հայերէն բառ է: Թերեւս կու գայ «գատ» արմատէն: Ելքի դրուագէն գիտենք, որ երբայեցի ժողովուրդը Եգիպտոսէն գատուելով՝ հեռացաւ անկէ: Այսինքն՝ գատուեցաւ ու հեռացաւ գերութենէն: Յետագային, այդ գատուիլը պիտի առնէր մեղքէն գատուելու կամ մեղքի գերութենէն փրկուելու իմաստը, որովհետեւ Եգիպտոսը պիտի տեսնուէր որպէս մեղքի երկիր:

Ջատիկին համապատասխան երբայերէն բառն է «փեսահ», որ կը նշանակէ «անցք»: Այդպէս ալ բացատրուած է Ելքի գիրքին 12-րդ գլխուն մէջ: Անունը կու գայ գատակական գառնուկը ուտելու կանոնին առնչուած պատուէրէն, որ կ'ըսէ. «Անոր արիւնէն առնեն ու տուներուն երկու կողմի դրանդիքներուն ու վերի սեմին վրայ քսեն... Այն գիշերը Եգիպտոսի երկիրէն պիտի անցնին ու Եգիպտոսի երկիրին մէջ բոլոր անդրանիկները, մարդ կամ անասուն, պիտի զարնեն... Արիւնը ձեր տուներուն վրան նշան պիտի ըլլայ, որպէսզի երբ արիւնը տեսնեն, ձեր վրայէն անցնին եւ հարուածը ձեր վրայ չգայ ձեզ կորսնցնելու» (Ելք 12.7,12,13): Այս վերջին համարով յայտնուած անցքին ակնարկութիւն է «փեսահ»-ը:

Ջատիկի տօնին պահպանումը շեշտուած պահանջ էր Տիրոջ

կողմէ: Ան ըսած էր. «Իսրայելի որդիները որոշուած ժամանակին թող ընեն Ջատիկը: Այս ամսուան տասնըչորրորդ օրը իրիկուան դէմ պէտք է ընէք զայն՝ որոշուած ժամանակին՝ անոր բոլոր կանոններուն ու անոր բոլոր կարգադրութիւններուն համեմատ» (Թւ 9.2-3): Անիկա պէտք է անպայման տօնուէր: Այլապէս, ան որ զայն զանց կ'ընէր՝ իր ժողովուրդին մէջէն պէտք է կորսուեր (նոյն հմր 13):

Մինչեւ այս դրուագը, Յիսուս երեք անգամ իր չարչարանքներուն կանխասացութիւնն ըրած էր, բայց երբեք Ջատիկին չէր կապած: Այստեղ կը կապէ ըսելով. «Երկու օրէն Ջատիկ է եւ Մարդու Որդին պիտի մատնուի խաչուելու համար»: Կ'ուզէ իր աշակերտներուն միտքին մէջ դրոշմել, թէ իր չարչարանքները կամ խաչելութիւնը եւ Ջատիկը իրարու առնչուած են: Ասիկա Աստուծոյ ծրագիրին մասին յատուկ խորհուրդ մը կը պատմէ մեզի:

Հայրն Աստուած ասի՝ պիտի ընծայէ իր Գառնուկը: Աստուած այս զոհը կը մատուցէ փոխարինելու համար հին գառնուկը: Նախկինը ազատագրութեան տօն էր, որ Օրէնքին պիտի տանէր, իսկ նորը ազատագրութեան տօն է, որ շնորհքին տարաւ եւ յաւիտեան կը տանի: Նախկինը՝ մարմնաւոր էր, իսկ նորը՝ հոգեւոր: Յիսուս-Գառնուկին ընծայումով՝ Աստուած պիտի փոխարինէր մարմնաւոր ազատագրութեան ծառայող Ջատիկը՝ հոգեւոր ազատագրութեան ծառայող Ջատիկով:

«Այն ատեն աւագ քահանաները, Օրէնքին ուսուցիչները եւ ժողովուրդին երէցները հաւաքուեցան ապարանքը քահանայապետին, որ Կայիափա կը կոչուէր, եւ որոշեցին Յիսուսը նենգութեամբ ձերբակալել եւ սպաննել»: Այս համարներով կը տեսնենք եբրայեցի ժողովուրդին կրօնական առաջնորդներուն դաւադիր որոշումը: Անոնք զգոյշ էին, որ Յիսուսի ձերբակալումը խռովութիւն կամ ըմբոստութիւն չառաջացնէ:

ՅԻՍՈՒՄԻ ՕԾՈՒՄԸ ԲԵԹԱՆԻՈՅ ՄԷՋ (6-13)

Եւ երբ Յիսուս Բեթանիա կը գտնուէր, բորոտ Սիմոնի տան մէջ, Իրեն մօտեցաւ կին մը, որ թանկագին իւղի շիշ մը ունէր, եւ իւղը թափեց Յիսուսի գլխուն, երբ Ան սեղանը բազմած էր: Աշակերտները ասիկա տեսնելով՝ բարկացան եւ ըսին.

- Ինչո՞ւ այդպէս վատնել անուշահոտը. կարելի էր զայն սուղ գինով ծախել եւ դրամը աղքատներուն տալ:

Յիսուս գիտցաւ ինչ որ կ'ըսեն եւ ըսաւ.

- Ինչո՞ւ կ'անհանգստացնէք այդ կինը, քանի լաւ բան մը ըրաւ Ինծի: Աղքատները միշտ ձեզի հետ ունիք, բայց զիս միշտ ձեզի հետ

չունիք: Իմ մարմինիս վրայ այդ իւղը թափեց իմ թաղումիս որպէս նշան: Լաւ գիտցէք, թէ աշխարհի վրայ ուր որ Աւետարանը քարոզուի, մարդիկ իր ըրածին մասին պիտի խօսին եւ յիշեն զինք:

Նշանակալից դրուագ է ասիկա:

Նախքան դրուագին մասին խօսիլը, ճշդում պէտք է, որովհետեւ անոնք որոնք յաճախ կը կարդան Աւետարանները, գիտեն, որ երկու այլ նման դրուագներ ալ կան: Այս դրուագը եւ Մարկոսի 14.3-9-ին ու Յովհաննէսի 12.1-8-ին մէջ տրուածները հաւանաբար նոյն դէպքին տարբերակ պատումներն են:

Ղուկասու 7.36-50-ին մէջ ունինք մէկ դրուագ, որ ասոր շատ մօտիկ է, բայց, անկասկած նոյն դէպքին չի վերաբերիր: Բաղդատութիւնը յստակօրէն կը յայտնէ ղուկասեան դրուագին եւ մատթոսեան, մարկոսեան ու յովհաննէսեան տարբերակներուն իրարմէ տարբեր դէպքերու վերաբերիլը:

Իսկ երբ Մատթէոսի եւ Մարկոսի դրուագը բաղդատենք Յովհաննէսի դրուագին հետ՝ կը տեսնենք, որ նախորդներուն տուածը Յիսուսի գլխուն իւղ թափող կնոջ անունը չի յիշեր, մինչդեռ Յովհաննէս՝ Ղազարոսի քրոջ՝ Մարիամի անունը կու տայ:

Դէպքը տեղի կ'ունենայ ոմն բորոտ Սիմոնի տան մէջ: Բորոտ Սիմոնին ինքնութիւնը Աւետարաններէն կամ ուրիշ աղբիւրէ յայտնի չէ մեզի: Ենթադրութիւններ շատ կան անշուշտ:

Ղազարոսի քոյր Մարիամը իր տունէն դուրս, ուրիշի տան մէջ ինչպէ՞ս պիտի համարձակէր մօտենալ Յիսուսի եւ թանկագին իւղով օծէր Անոր գլուխը: Անհասկնալի է Մարիամի այս արարքը կատարուած տեսնել ուրիշի տան մէջ: Արդ, մեկնիչներէն ոմանք բորոտ Սիմոնին համար կ'ըսեն, թէ Ղազարոսի, Մարիամի եւ Մարթայի հայրն էր ան:

Մարիամին արարքը անսովոր էր: Վստահաբար, հոն ներկայ եղող այդ մարդիկը ցնցուած էին այդ յանդուգն արարքէն, եւ եթէ ոչ բոլորը, գէթ ոմանք՝ զայրացած ալ էին: Կին մը ինչպէ՞ս կը համարձակէր այրերուն մէջ գալ եւ այդպիսի արարք գործել:

«Աշակերտները ասիկա տեսնելով, բարկացան եւ ըսին.- Ինչո՞ւ այդպէս վատնել անուշահոտը. կարելի էր զայն սուղ գինով ծախել եւ դրամը աղքատներուն տալ»: Աշակերտներուն մտահոգութիւնը դատապարտելի չէ: Գիտենք, որ Յիսուս յաճախակիօրէն կ'օգնէր աղքատներուն: Կ'օգնէր այն նուէրներով, որ բարեպաշտներու կողմէ Իրեն եւ աշակերտներուն կը տրուէին: Հետեւաբար, աշակերտներուն խօսքը կու գար աղքատներուն օգնելու իրենց Վարդապետին

ցուցմունքներին:

Յիսուսի պատասխանը կ'ըլլայ. «Ինչո՞ւ կ'անհանգստացնէք այդ կինը, քանի լաւ բան մը ըրաւ ինձի: Աղքատները միշտ ձեզի հետ ունիք, բայց զիս միշտ ձեզի հետ չունիք»: Այս պատասխանը թէ՛ հետաքրքրական է, թէ՛ կրնայ գարմանքի մատնել: Կը թուի, թէ Յիսուս ասելի ինքն իր մասին կը մտածէ, քան աղքատներուն: Բայց ըսի կը թուի: Ճշմարտութիւնն այդ չէ: Աշակերտները չեն տեսներ արարքին խորհրդանշական իմաստը: Ուստի Յիսուս կը շարունակէ խօսքը եւ կը բացատրէ՝ ըսելով. «Իմ մարմինիս վրայ այդ իւրը թափեց իմ թաղումիս որպէս նշան»: Ասիկա աշակերտներուն համար անակնկալ բացայայտութիւն էր:

Անցեալին, օծման արարողութիւն կը կատարուէր թագաւորներուն, քահանաներուն եւ մարգարէներուն վրայ: Ղուկասու Աւետարանէն նաեւ գիտենք, թէ հրէական սովորութիւն էր պատուական հիւրին գլուխը օծելը (տես՝ Ղկ 7.46): Այդ սովորութիւնը ոչ միայն յարգանք կ'արտայայտէր. այլեւ՝ սէր ու երախտագիտութիւն (Ղազարոսի քոյր Մարիամը Յիսուսի գլուխը օծելով կ'ուզէր սէրն ու երախտագիտութիւնը արտայայտել Անոր, որ իր չորս օրուան մեռած եղբայրը վերակենդանացուցած էր):

Յիսուս Մարիամի արարքին մէջ կը տեսնէ իր թաղումէն ետքը՝ իր մարմինին օծումը: Մարիամ ինք, անկասկած, այդ գաղափարը չունէր իր միտքին մէջ, երբ Յիսուսի գլուխը կ'օծէր: Ուստի, անգիտակից կերպով պարտականութիւն կատարած էր ան. արարք, որ ան վերջը պիտի ուզէր ընել, սակայն առիթը պիտի չունենար: Ինչպէս գիտէք, իւղաբեր կիները երբ գացին գերեզման՝ հրէական այդ սովորութիւնը կատարելու՝ չկրցան, որովհետեւ Յիսուս արդէն յարութիւն առած էր:

Հետեւաբար, Մարիամ կանուխէն այդ օծումը կ'ընէր:

«Լաւ գիտցէք, թէ աշխարհի վրայ ուր որ Աւետարանը քարոզուի, մարդիկ իր ըրածին մասին պիտի խօսին եւ յիշեն զինք»: Յիսուս այս կանխասացութեամբ ի՞նչ ըսել կ'ուզէ:

Նախ, կարեւոր է նկատի ունենալ, որ իր մահուան ակնարկութեամբ՝ շփոթութիւն, կամ նոյնիսկ խռովք անցաւ տան մէջէն, որովհետեւ ոչ ոք կ'ակնկալէր, թէ Յիսուս իր մահուան մասին պիտի խօսէր: Ապա ոչ ոք կրնար մտածել, թէ իրենց մօտ նստած Ռաբբիին ուսուցածը աշխարհի վրայ պիտի քարոզուէր, ու այդ յաղթանակին հետ նաեւ յիշուէր Մարիամի ինքնաբոլիս եւ արտասովոր արարքը:

Աւարտելով այս հատուածին սերտողութիւնը, արդար է ըսել, թէ Մարիամին արարքը խորհրդանշանն է սիրոյ եւ երախտագիտու-

թեան այն բոլոր արարքներուն, որոնք Յիսուսի համար եւ Յիսուսի անունով կատարուած են եւ կը կատարուին:

ՅՈՒՂԱ ԿԸ ՀԱՄԱԶԱՅՆԻ ՅԻՍՈՒԲԸ ՄԱՏՆԵԼ (14-16)

Ապա տասներկու աշակերտներէն մէկը, որ Յուդա Իսկարիովտացի կը կոչուէր, գնաց աւագ քահանաներուն մօտ եւ ըսաւ.

- Ի՞նչ կու տաք ինձի, եթէ Յիսուսը յանձնեմ ձեզի:

Անոնք երեսուն արծաթ դահեկան հաշուեցին եւ տուին Յուդային: Անկէ ետք, ան յարմար առիթի մը կը սպասէր՝ Յիսուսը մատնելու համար:

Այս դրուագը եթէ համեմատենք նախորդին հետ, շատ զօրաւոր կերպով կը տեսնենք ասոր հակադրական նկարագիրը: Այնտեղ ունէինք դրուագ, որ սիրոյ ու երախտագիտութեան արարք կը ներկայացնէր, իսկ այստեղ ունինք դրուագ, որ մարդկային ստոր հաշիւներու արարք կը ներկայացնէ: Առաջինը Յիսուսի հանդէպ նուիրումի պատմութիւն է, իսկ երկրորդը՝ անհաւատարմութեան: 20 դարերէ ասդին հիացումով կը յիշենք Մարիամին կատարածը, իսկ Յուդայի կատարածն ալ՝ խորշանքով:

Մեզ բոլորս տագնապեցնող հարցումն է.

Արդեօք Յուդա ինչէ՞ մղուած գնաց Յիսուսը մատնելու:

Աւետարանները մեզի կու տան մէկ պատասխան, որ ըստ Ս. Գիրքի քննական կարծիքներու՝ ամբողջական չէ:

Աւետարաններուն ըսածը այն է, որ Յուդա դրամասէր էր եւ դրամի սիրոյն մատնեց Յիսուսը:

Միսալ չ'ըլլար նայիլ Յուդայի ստացած գումարին, եւ անկէ մեկնելով մեր կարծիքը զարգացնել: Անոր ստացած վարձը երեսուն արծաթ դահեկան էր: Այն ատեն արծաթ դահեկանը խոնարի աշխատաւորի մը օրավարձքն էր: Հետեւաբար, Յուդայի առածը՝ մէկ ամսականն էր խոնարի աշխատաւորի: Մտածեցէ՛ք: Ամսական վարձի համար արդեօք մէկը իր յարգած ու սիրած ուսուցիչը յանկարծ մատնելու կ'ելլէ՞: Աննշան վարձի համար մատնելու պարագային իսկ, նիւթականէն գատ այլ պատճառ պէտք է ըլլայ:

Հաւանական է այն կարծիքը, թէ Յուդայի քայլը նիւթականէն գատ այլ պատճառ ունէր:

Ենթադրուած է, որ Յուդա Իսկարիովտացի պատկանած էր հրեայ ազգայնական շարժումի մը: Թէ՛ Յուդա եւ թէ՛ Յիսուսի հետեւորդներէն շատեր մեսիական ազատագրութեան պատկերացում ունէին, եւ իրենց Ռաբբին կը տեսնէին որպէս խոստացուած մեսիան:

Այդ ընկալումով է, որ անոնք շատ կառչեցան Յիսուսի: Կայ այն կարծիքը նաեւ, որ Յուդա ինք Յիսուսը մատնելու քայլը առած էր այն ակնկալութեամբ, որ պիտի արագացնէր իր ժողովուրդին ազատագրութեան ժամանումը: Այսինքն, Յիսուսը մատնելով զԱյն մղած պիտի ըլլար յառաջանալիք խռովութեան գլուխը անցնելու, յեղափոխութեամբ տապալելու հռոմէական լուծը եւ իր ժողովուրդը ազատելու:

Կայ նաեւ այն ենթադրութիւնը, թէ Յուդա այդ քայլին դիմած էր, որովհետեւ յուսախաբ դարձած էր Յիսուսէ, որ փոխանակ Իրմէ սպասուածը ընելու, ընդհակառակը, կը շեշտէր Իր Թագաւորութեան ապաքաղաքական բնոյթը:

Այստեղ կ'ուզեն շեշտել, թէ ամէն ոք ազատ է այս կարծիքները ընդունելու կամ պարզապէս գոհանալու Աւետարաններուն ըսածով:

«Անոնք երեսուն արծաթ դահեկան հաշուեցին եւ տուին Յուդային: Անկէ ետք, ան յարմար առիթի մը կը սպասէր Յիսուսը մատնելու համար», կ'ըսէ: Նախապէս տեսանք, թէ կրօնական իշխանաւորները զգոյշ էին եւ չէին ուզեր Յիսուսը ձերբակալել տօնին ատեն, որպէսզի ատիկա խռովութեան պատճառ չըլլար: Յուդայի կողմէ իրենց եղած առաջարկը անակնկալ էր: Եւ որովհետեւ Յուդա իր Ուսուցիչին յաճախած վայրերը լաւ գիտէր եւ կրնար զիրենք առաջնորդել առանց ձայնի ձեռք անցնելու Յիսուսը, անոնք անմիջապէս կ'ուզեն իրենց ընծայուած պատեհութիւնը չկորսնցնել: Ուստի, գործի կը լծուին՝ նախ նիւթապէս վարձատրելով Յուդան:

Ուշագրաւ է երեսուն արծաթ դահեկանի վարձատրութիւնը: Այդ առնչութեամբ կարելի է ըսել, թէ կատարումն է Աստուծոյ մէկ նախաձայնութեան:

- Չաքարիայի մարգարէութեան մէջ կը կարդանք.
- «Անոնց ըսի.
- Եթէ ձեր աչքերուն հաճոյ կ'երեւնայ, իմ վարձքս տուէ՛ք, ապա թէ ոչ՝ զանց ըրէ՛ք:
- Իմ վարձքիս համար երեսուն արծաթ կշռեցին:
- Տէրը ինձի ըսաւ.
- Չայն բրուտին նետէ:
- Ասիկա յարմար գին մըն է, որ անոնք ինձի համար կտրեցին» (Ձք 11.12-13):

ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔԸ (17-30)

Բաղարջակերաց տօնին առաջին օրը աշակերտները, մօտենալով Յիսուսի, ըսին.

- Ո՞ր կ'ուզես որ Քեզի համար զատկական ընթրիքը պատրաստենք:

Ան պատասխանեց.
- Քաղաք գացէ՛ք, այսինչ մարդուն մօտ, եւ ըսէ՛ք անոր. «Վարդապետը կ'ըսէ՛ ժամանակս մօտեցած է. քու տունդ պիտի ուտեմ զատկական ընթրիքը, աշակերտներուս հետ»:

Աշակերտները կատարեցին Յիսուսի հրահանգը եւ պատրաստեցին զատկական ընթրիքը: Երեկոյեան, Յիսուս Իր տասներկու աշակերտներուն հետ ընթրիքի նստաւ: Մինչ անոնք կ'ուտէին, Յիսուս ըսաւ.

- Կ'ըսեմ ձեզի, որ ձեզմէ մէկը պիտի մատնէ զԻս: Աշակերտները խռովքի մատնուեցան եւ իւրաքանչիւրն սկսաւ հարցնել Անոր.

- Տէ՛ր, միթէ՛ ե՞ս եմ:
- Յիսուս պատասխանեց.
- Ան որ իր ձեռքը Ինձի հետ պնակին երկնցուց ան է մատնիչը:

Մարդու Որդին պիտի մեռնի, ինչպէս որ գրուած է սրբազան գիրքերուն մէջ, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով Մարդու Որդին պիտի մատնուի: Երանի՛ ան ծնած չըլլար:

- Յուդան, որ պիտի մատնէր զԻնք, հարցուց Յիսուսի.
- Վարդապետ, միթէ՛ ե՞ս եմ:
- Յիսուս պատասխանեց.
- Ահա դուն ըսիր:
- Եւ մինչ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց առաւ, օրհնեց, կտրեց եւ բաժնեց աշակերտներուն՝ ըսելով.
- Առէ՛ք, կերէ՛ք, ասիկա Իմ մարմինս է:

Ապա առաւ բաժակը, գոհութիւն յայտնեց Աստուծոյ եւ տուաւ Իր աշակերտներուն՝ ըսելով.

- Բոլորդ խմեցէ՛ք ասկէ. ասիկա Իմ արիւնս է, որով Աստուծոյ հետ նոր ուխտ կը կնքուի, եւ որ շատերու համար կը թափուի՝ իրենց մեղքերու թողութեան համար: Բայց նաեւ կ'ըսեմ ձեզի.- Այլեւս այս գինիէն պիտի չխմեմ մինչեւ այն օրը, երբ ձեզի հետ պիտի խմեմ նոր գինին՝ Իմ Հօրս արքայութեան մէջ:

Ապա գոհաբանական սաղմոսներ երգելէ ետք՝ ելան Չիթենեաց լեռ:

Եբրայական տօներուն մէջ՝ Բաղարջակերացը երկրորդն է: Առաջինը՝ Չատիկն է: Այս երկու տօները անմիջապէս իրարու կը յաջորդեն: Ղեւտացիներու գիրքին մէջ անոնց վերաբերող կանոնները

այսպէս կ'ըսեն. «Տիրոջ տօները, որոնք իրենց սահմանուած աստեմին սուրբ ժողովներ պիտի գումարէք, ասոնք են: Առաջին ամսուան տասնըջորրորդ օրը, իրիկուան դէմ, Տիրոջ Չատիկն է: Եւ նոյն ամսուան տասնըհինգերորդ օրը Բաղարջակերաց տօնն է Տիրոջ: Եօթը օր բաղարջ պիտի ուտէք: Առաջին օրը սուրբ ժողով պիտի ունենաք. բնաւ ծառայութեան գործ պէտք չէ գործէք: Եւ եօթը օր պատարագ պիտի մատուցէք Տիրոջ. եօթներորդ օրը սուրբ ժողով պիտի ըլլայ. բնաւ ծառայութեան գործ պէտք չէ գործէք» (Ղու 23.4-8): Այս կանոնին զարգացուած տարբերակը կը կարդանք նաեւ Թուոց գիրքին մէջ (տես Թու 28.16-25):

Չատիկի անջատ կանոն կայ Ելքի գիրքին մէջ: Անիկա կ'ըսէ, թէ Ապիպ կամ Նիսան ամսուն, իւրաքանչիւր տուն մէկ գառնուկ պէտք է առնէ: Եթէ գառնուկը մէկ տան համար շատ ըլլայ, այդ տունը սակաւաթիւ անդամներով իր դրացիին ընտանիքը մօտը պէտք է հրաւիրէ, որպէսզի միասնաբար ճաշակեն գառնուկը: Անարատ, արու եւ մէկ տարեկան պէտք է ըլլայ գառնուկը: Չայն գատելու են ոչխարներէն կամ այծերէն ու պահելու՝ մինչեւ ամսուան տասնըջորրորդ օրը, ապա զայն պէտք է մորթեն եւ իրիկուան դէմ ուտեն: Կը պահանջուի գառնուկը ամբողջապէս խորովել եւ բաղարջ հացով, լեղի խտտերով ուտել: Մինչեւ առաւօտ՝ գառնուկէն ոչինչ մնալու է: Եւ եթէ մնայ զայն պէտք է այրել (տես Ելք 12.1-10):

Չատիկի կանոնին մէջ բաղարջ հաց ուտելու պահանջը պատճառ եղած է, որ ժողովուրդը շփոթէր եւ Չատիկի տօնն ալ ներառէր Բաղարջակերաց տօնին մէջ: Այս շփոթութեան կը նպաստէր նաեւ Բաղարջակերացին աւելի երկար ըլլալը:

Արդ, հասկնալի է, թէ ինչո՞ւ համատեսական Աւետարանները «Բաղարջակերաց տօնին առաջին օրը» (Մարկոս եւ Մատթէոս), «Եկաւ Բաղարջակերաց օրը» (Ղուկաս) տեղեկութիւններով կը սկսին հատուածը:

Ըստ վկայութիւններու, Վերջին Ընթրիքին Չատիկը Հինգշաբթի իրիկուն էր:

Այստեղ մէկ հարցի անդրադառնամ արագօրէն:

Ըստ համատեսական Աւետարաններուն, Չատիկուան առիթով մորթուած գառնուկն է, որ Յիսուս Իր աշակերտներուն հետ կերաւ Վերջին Ընթրիքին: Մինչդեռ Յովհաննէսի Աւետարանին մէջ, գառնուկը տակաւին չէր մորթուած, երբ Յիսուս Իր աշակերտներուն հետ ընթրեց: Չորրորդ աւետարանիչը կը տեղեկացնէ, թէ այդ ընթրիքը կատարուած էր «Չատիկի տօնի նախօրեակին» (Յի 13.1), իսկ Յիսուսի խաչելութիւնը եւ խաչին վրայ մահը՝ այն ժամերուն մէջ, երբ

գառնուկները կը մորթուէին:

Մի քանի մեկնիչներ ի նպաստ Յովհաննէսի Աւետարանին ըլլալով՝ բացատրած են, թէ այն օրերուն որոշ կրօնական խմբակներ գատկական գառնուկը մէկ օր առաջ կը ճաշակէին: Եւ հաւանաբար, Յիսուս այդ աւանդութիւնն օգտագործած էր, որովհետեւ գիտէր, թէ յաջորդ իրիկուն պիտի չկարենար Իր աշակերտներուն հետ սեղան նստիլ, որովհետեւ Իր խաչելութիւնը եւ մահը տեղի պիտի ունենային այն ժամուն, երբ գառնուկները կը մորթուէին:

Համատեսականներուն տուած տեղեկութիւնն է ճիշդը, թէ՞ Յովհաննէսի Աւետարանին տուածը: Արդարեւ, դժուարութեան դիմաց կը գտնուինք: Այստեղ, ես լուծում չեմ ուզեր առաջարկել, այլ միայն հարցը կը ներկայացնեմ, որպէսզի տեղեակ ըլլաք:

Արդ, գատկական ընթրիքի պատրաստութեան համար, Յիսուս Իր աշակերտները քաղաք դրկեց, կ'ըսէ Մատթէոս: Մինչդեռ Մարկոս միայն երկու աշակերտ դրկելուն կ'ակնարկէ (Մր 14.13), իսկ Ղուկաս՝ Պետրոսի ու Յովհաննէսի առաքումը կը յիշէ (Ղկ 22.8): Կը թուի որ Յիսուս մէկու մը հետ ընթրիքին կարգադրութիւնը նախապէս ըրած էր:

Կ'ըսէ. «Ժամանակս մօտեցած է»: Այսպէս Յիսուս կը յայտարարէ, թէ Իր երկրաւոր կեանքին վերջին օրերը հասած են:

Աշակերտները կ'երթան եւ կը պատրաստեն ընթրիքը: Երեկոյեան ալ կը նստին ընթրելու:

Գիտէք, որ գատկական գառնուկին ճաշակումը կապուած էր Եգիպտոսէ ազատագրութեան դէպքին: Կը յիշէք Եգիպտոսի անդրանիկներուն կորսուիլը եւ այն մեծ հրաշքը, որ Աստուած Իր ժողովուրդը գերութենէն դուրս բերաւ:

Բաղարջ հացը նախ կը յիշեցնէր մեղքի թագաւորութեան մէջ իրենց ստրկութիւնը, ապա նաեւ Եգիպտոսէն իրենց ազատագրութիւնը: Ինչպէս գառնուկին պատրաստութեան եղանակը, որ խորովելն էր, Ելքի արտօրանքին իմաստը կ'արտայայտէր, նոյնպէս ալ՝ բաղարջ հացը արագ կը պատրաստուէր եւ խմորումի չէր կարօտեր: Ելքի ատեն, անոնք երկար ժամանակ չունէին, եւ ինչ որ պիտի պատրաստէին՝ արագ պէտք է ընէին, որովհետեւ ազատագրութեան պահը հասած էր:

Լեղի խտտերով ալ կը յիշէին իրենց գերութեան ատեն ապրած դառնութիւնը:

Աւանդութիւն էր, որ գառնուկին քով դրուած ըլլային պտուղներու խառնուրդ, մէկ թաս աղով խառնուած ջուր եւ չորս բաժակ գինի:

Պտուղներու խառնուրդը առհասարակ կը պատրաստուէր խնձորով, արմաւով, նուռով եւ կաղինով: Չայն կը ճաշակէին միսին,

բաղարջ հացին եւ լեղի խոտերուն հետ: Պտուղներուն խառնուրդը գերութեան տակ իրենց ճգնուածութիւնը կը յիշեցնէր, մէկ թաս աղով խառնուած ջուրը գերութեան ատեն իրենց թափած արցունքները, նաեւ Կարմիր ծովէն անցքը:

Գինիով լեցուն չորս բաժակներէն ամէն մէկը ընթրիքի որոշ մէկ հանգրուանին կը խմէին: Եւ տրուած հանգրուանին համաձայն բաժակը նշանակութիւն կ'արտայայտէր:

Ընթրիքը կը սկսէին նախ գոհութիւն յայտնելով Աստուծոյ, եւ անմիջապէս առաջին բաժակէն հերթով կը խմէին բոլոր սեղան բազմողները: Առաջին բաժակը նախ կը յիշեցնէր գառնուկին արիւնը, որ Ջատիկի գիշերը իրենց հայրերը տուններուն երկու կողմի դրանդիքներուն ու սեմին վրայ քսեցին, եւ երբ Տիրոջ հրեշտակը անցաւ փրկուեցան:

Ետքը կը ճաշակէին գառնուկը: Այս հանգրուանին, օրուան խորհուրդը կը լուսաբանուէր: Տան ամէնէն կրտսերը աւագին կամ նահապետին կը հարցնէր, թէ ի՞նչ խորհուրդ ունի այդ իրիկունը: Եւ ան ալ կը պատասխանէր, թէ ասիկա յիշատակն էր իրենց գերութեան եւ Աստուծոյ ձեռամբ ազատագրութեան:

Յիսուսի ժամանակ այդ յիշատակին կը միացնէին նաեւ Աստուծոյ ձեռամբ կատարուած ազատագրութեան այլ դրուագներ ալ: Կ'անդրադարձնային նաեւ Հռոմի բռնատիրութեան տակ իրենց վիճակին եւ ազատագրութեան մաղթանքներ կ'ընէին, ու կ'երգէին 113-114-րդ սաղմոսները:

Ապա կը խմէին երկրորդ բաժակը, որուն կը յաջորդէր ձեռքերու լուացումը եւ գառնուկին ճաշակումը: Աւարտին՝ դարձեալ ձեռքերու լուացում տեղի կ'ունենար: Կը բերուէր հացին մնացորդը եւ կ'ուտուէր: Մեսիայի գալստեան ակնկալութեամբ աղաչանքներ կը մատուցուէին, ապա երրորդ բաժակը կը խմէին: Կը լեցուէր չորրորդ եւ վերջին բաժակը եւ կ'երգէին 115-118-րդ սաղմոսները, եւ գոհաբանութեամբ իր լրումին կը հասցնէին ընթրիքը:

«Մինչ անոնք կ'ուտէին, Յիսուս ըսաւ. - Կ'ըսեմ ձեզի, որ ձեզմէ մէկը պիտի մատնէ զիս»:

Յիսուս յանկարծ կը խռովէ իր աշակերտները, երբ կը յայտարարէ. «Կ'ըսեմ ձեզի, որ ձեզմէ մէկը պիտի մատնէ զիս»: Այս խօսքին վրայ, աշակերտներուն միտքին մէջ մտավախութիւն կ'իյնայ, եւ իւրաքանչիւրը կը սկսի հարցնել Վարդապետին, որ միթէ ի՞նք պիտի ըլլայ մատնիչը:

Չորրորդ Աւետարանին մէջ կը տեսնենք, թէ Պետրոս նշան կ'ընէ այն աշակերտին, «զոր Յիսուս կը սիրէր», այսինքն՝ Յովհաննէսի,

որպէսզի ան հարցնէ, թէ ո՞վ պիտի ըլլայ մատնողը (Յի 13.23-25): Այս հարցումին Յիսուսի պատասխանը եղած է. «Պատառը թաթխելով որուն որ տամ՝ ան է» (նոյնը, հմր 26): Մատթէոսի Աւետարանին բացատրութիւնը, որ Մարկոսէն քաղուած է, տարբեր է: Հասկնալի է տարբերութիւնը, մանաւանդ երբ նկատի ունենանք, որ Մարկոսի աղբիւրներէն մին եղած է Պետրոս Առաքեալ, որ կը թուի թէ Վերջին Ընթրիքի ատեն քիչ մը անդին էր Յիսուսէ եւ խռովեալ աշակերտներու ձայներուն ընդմէջէն լսած էր Վարդապետին խօսքը: Այս տարբերութիւնը, սակայն, մեծ հարց չէ: Յստակ է հիմնական գաղափարը՝ Յիսուս պիտի մատնուէր Յուդայի ձեռքով:

«Ան որ իր ձեռքը Ինծի հետ պնակին երկնցուց ան է մատնիչը: Մարդու Որդին պիտի մեռնի, ինչպէս որ գրուած է սրբագան գիրքերուն մէջ, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով Մարդու Որդին պիտի մատնուի: Երանի՛ ան ծնած չըլլար»: Ենթադրելի է, որ Յիսուսի մէկ կողմը նստած էր Յովհաննէս, իսկ միւս կողմը՝ Յուդա Իսկարիովտացին: Յիսուս զայն Իր կողքին նստեցնելով յատուկ պատիւ ըրած էր, բայց ան իրեն տրուած պատիւի մակարդակին չգտնուեցաւ ու ինկաւ:

Ոմանք այս յայտարարութեան վրայ կը մտածեն, թէ որովհետեւ Մարդու Որդին մահը կանխատեսուած էր՝ ի՞նչ էր Յուդային յանցանքը:

Մարդու Որդին մատնողը եւ զԱյն մահուան յանձնողը կրնար Յուդան չըլլալ, սակայն եղաւ, որովհետեւ ան իր սեփական ցանկութիւններէն տարուեցաւ ու փորձուեցաւ: Անոր մէջ մտած էր սատանան, ինչպէս Յովհաննէս ըսած է (Յի 13.27):

Յուդա ինքն ալ Յիսուսի կը հարցնէ, թէ արդեօք ի՞նք պիտի ըլլայ մատնողը: Եւ Յիսուս ալ կը պատասխանէ. «Ահա դո՛ւն ըսիր»:

Անկասկած, Յուդա կը ծածկէր իր որոշումը:

Յովհաննէսի Աւետարանին բացատրութիւնը, թէ երբ Յիսուսի տուած պատառը ճաշակելէ ետքը իր մէջ մտած էր սատանան, ըսել կ'ուզէ, որ ան մատնելու իր որոշումին մէջ այն ատեն հաստատուած էր:

Վերջին Ընթրիքի դրուագին բուն խորհուրդը այստեղ կը սկսի:

«Եւ մինչ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց առաւ, օրհնեց, կտրեց եւ բաժնեց աշակերտներուն՝ ըսելով.- Առէ՛ք, կերէ՛ք, ասիկա Իմ մարմինս է»: Արդ, Յիսուս կ'առնէր բաղարջ հացը, որ խորհրդանշանն էր հրեաներու գերութեան օրերուն, նաեւ որպէս անխմոր եւ արագ պատրաստուած հաց՝ Եգիպտոսէ ելլելու աճապարանքը կը վերապատմէր:

Այս պահուն, Յիսուս բաղարջ հացին նոր նշանակութիւն կու տայ: Ի՞նչ է այդ նշանակութիւնը:

Չայն կը կոչէ Իր մարմինը, ապա՝ զայն կ'օրհնէ, կը կտրէ եւ կը բաժնէ: Յիսուսի ձեռքին մէջ բաղարջը նոր ազատագրութեան հրաւեր է եւ առիթ:

Չայն օրհնելով՝ կը յայտնէ Իր յանձնուիլը Աստուծոյ կամքին: Չայն կտրելով՝ կը նախապատմէ Իր չարչարուիլը, խաչուիլն ու մահը, իսկ բաժնելով կը վստահեցնէ, թէ մինչեւ աշխարհի վախճանը զինք «ճաշակող»-ներուն հետ պիտի ըլլայ, այսինքն՝ անոնց, որոնք հաղորդակից են Իր գոհագործութեան:

Որոշ մեկնիչներ «ասիկա Իմ մարմինս է»-ն միայն ու միայն նկատի կ'ունենան որպէս պարզ փոխաբերութիւն: Ըստ անոնց, Յիսուս Իր աշակերտները կը հրաւիրէր, որ զինք եւ Իր գոհագործումը յիշեն: Արդեօ՞ք այդ իմաստով է, որ Յիսուս «ասիկա Իմ մարմինս է» ըսած է:

Յովհաննէսի Աւետարանին մէջ յստակ բացատրութիւն ունինք: Կը կարդամ. «Աստուծոյ տուած հացը ան է, որ Երկինքէն կ'իջնէ եւ կեանք կու տայ աշխարհին... Ես եմ կեանքի հացը: Ան որ Ինձի կու գայ բնաւ պիտի չանօթենայ... Ես եմ կեանքի հացը: Ձեր հայրերը մանանան կերան անապատին մէջ, բայց մեռան. մինչդեռ ով որ ուտէ Երկինքէն իջած հացէն՝ պիտի չմեռնի: Ես եմ կենդանի հացը, որ Երկինքէն իջած է. ով որ այս հացէն ուտէ՝ յաւիտեան պիտի ապրի: Հացը որ Ես պիտի տամ՝ Իմ մարմինս է, որպէսզի աշխարհը կեանք ունենայ» (6.33, 35, 48-51): Որեւէ մէկ փոխաբերութիւն չի կրնար կեանք տալ: Այո՛, կրնայ առաջնորդել գիտակցութեան եւ հաւատքի, բայց երբեք չի կրնար կեանք տալ:

Եթէ Յիսուսի խօսքը լոկ փոխաբերութիւն ըլլար, Պօղոս Առաքեալ կորնթացիները պիտի չզգուշացնէր (տե՛ս Ա. Կր 12.27-32):

Յիսուսի կտակը յատկապէս Իր գոհագործութեան հօգի ներկայութեան կը վերաբերի: Չայն կատարելով՝ գոհագործութեան փրկարար ներգործութիւնն ունենայ է:

«Ապա առաւ բաժակը, գոհութիւն յայտնեց Աստուծոյ եւ տուաւ Իր աշակերտներուն՝ ըսելով. - Բոլորդ խմեցէ՛ք ասկէ. ասիկա Իմ արիւնս է, որով Աստուծոյ հետ նոր ուխտ կը կնքուի, եւ որ շատերու համար կը թափուի՝ իրենց մեղքերու թողութեան համար»: Բաղարջը կտրելէ եւ բաժնելէ ետքը՝ կը խմէին երրորդ բաժակը, որ յատուկ անուն ունէր եւ «Գոհութեան բաժակ» կը կոչուէր:

Նոր Ուխտին մասին Երեմիա գրած է.

«Ահա՛ օրեր կու գան,- կ'ըսէ Տէրը,- երբ Իսրայէլի տան հետ եւ

Յուդայի տան հետ Նոր Ուխտ պիտի կնքեն. ո՛չ թէ այն ուխտին պէս, որ անոնց հայրերուն ըրի այն օրը՝ երբ անոնց ձեռքէն բռնեցի, որպէսզի Եգիպտոսէն հանեմ զիրենք: Քանի որ անոնք Իմ ուխտս զանց ըրին՝ Ես ալ զանոնք մերժեցի,- կ'ըսէ Տէրը: Բայց օրերէն ետք Իսրայէլի տան հետ կնքելիք ուխտս այս պիտի ըլլայ. Իմ օրէնքս անոնց ներսիդին պիտի դնեմ ու զայն անոնց սիրտին վրայ պիտի գրեմ: Ես անոնց Աստուած պիտի ըլլամ եւ անոնք ինձի ժողովուրդ պիտի ըլլան» (Եր 31.31-33):

Յիսուս կը յիշեցնէ, թէ Իր գոհագործութեամբ՝ մարգարէացուած ուխտն է, որ կը կնքուի: Ինչպէս Հին Ուխտը կնքուած էր արեան հեղումով, Նոր Ուխտն ալ պիտի կնքուէր արեան հեղումով: Այս մասին կը լուսաբանէ եբրայեցիներուն ուղղուած նամակը, երբ կ'ըսէ. «Որեւէ ուխտի, այսինքն՝ որեւէ կտակի պարագային, նախ անհրաժեշտօրէն կտակագիրին մահը պէտք է հաստատուի, որովհետեւ կտակ մը միայն կտակագիր անձերուն մահէն ետք ի գօրու կը դառնայ. իսկ որքան ատեն որ կտակը գրողը դեռ ողջ է՝ կտակը չի կրնար ի գօրու ըլլալ: Ահա թէ ինչո՞ւ առաջին ուխտը եւս չկնքուեցաւ՝ մինչեւ որ արիւն չթափուեցաւ... Ըստ Օրէնքին գրեթէ ամէն ինչ արիւնով կը սրբուի. մեղքերու թողութիւնն ալ առանց արեան հեղումի չ'ըլլար» (Եբր 9.16-18, 22): Յիսուս խաչին վրայ Ինքզինք պէտք է ընծայէր, որպէսզի Աստուծոյ կնքած Նոր Ուխտը իր գօրութիւնն առնէր ի գործ դրուելով, եւ մեղքերու թողութիւնը կատարուէր:

«Բայց նաեւ կ'ըսեն ձեզի.- Այլեւս այս գինիէն պիտի չխմեն մինչեւ այն օրը, երբ ձեզի հետ պիտի խմեն նոր գինին՝ Իմ Հօրս Արքայութեան մէջ»:

Այն ինչ որ հացին համար ըսի, նոյնը կը վերաբերի նաեւ գինիին: Անիկա Յիսուսի քաւարար գոհողութեան հաղորդակից դառնալու կերպն է:

Կ'ենթադրուի, որ Յիսուս զեղչեց չորրորդ բաժակը, եւ անոր ըմպումին վախճանաբանական իմաստ տուաւ: Եթէ Յիսուս զեղչած էր չորրորդ բաժակը, թերեւս այս միտքը ուզած էր թելադրել:

Հին Չատիկը երկրաւոր ազատագրութեան համար էր, իսկ Նոր Չատիկը՝ հոգեւոր ազատագրութեան համար: Հին Չատիկը խոստացուած նիւթական երկիրը երթալու սպասումն ունէր, Նոր Չատիկն ալ խոստացուած Երկնային Երկիրը երթալու սպասումն ունի: Ուստի, նոր գինին այնտեղ է որ պիտի խմուի՝ Երկնային Խնձոյթին կամ Հօր Արքայութեան մէջ:

«Ապա գոհաբանական սաղմոսներ երգելէ ետք՝ ելան Չիթենեաց լեռ»: Դարձեալ, եթէ Յիսուս զեղչած էր չորրորդ բաժակը, հետեւա-

բար նաեւ գեղջուած էր 115-118-րդ սաղմոսներուն երգեցողութիւնը: Գուցէ այդ սաղմոսները երգեցին դէպի Չիբենեաց լեռ ճամբուն վրայ:

ՅԻՍՈՒՍ ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՆԱԼԸ ԿԸ ԳՈՒՇԱԿԷ (31-35)

Հոն Յիսուս ըսաւ անոնց.

- Այս գիշեր դուք բոլորդ ալ պիտի լքէք զիս, որովհետեւ Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Պիտի սպաննեն հովիւը, եւ հօտին ոչխարները պիտի ցրուին»: Բայց յարութիւն առնելէս ետք՝ ձեզմէ առաջ Գալիլիա պիտի երթամ:

Պետրոս պատասխանեց.

- Նոյնիսկ եթէ բոլորը լքեն Քեզ, ես պիտի չլքեմ:

Յիսուս ըսաւ անոր.

- Կ'ըսես թեզի, որ այս գիշեր, աքաղաղը չկանչած, դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս:

Պետրոս ըսաւ.

- Նոյնիսկ եթէ մեռնիլ պէտք ըլլայ Քեզի համար՝ Քեզ պիտի չուրանամ:

Նոյնը կ'ըսէին բոլոր աշակերտներն ալ:

Յիսուս Իր աշակերտներուն հետ ճաշակեց գատկական գառնուկը, որովհետեւ զանոնք որպէս Իր ընտանիքը կը ճանչնար: Գիտէք որ Չատկուան կանոնը կը պահանջէր, որ ամէն ոք իր ընտանիքին հետ ճաշակէր զայն (Ելք 12.3):

Մենք ալ, որ Իր ընտանիքն ենք, ամէն անգամ որ Ս. Պատարագին կը մասնակցինք, Տիրոջ Չատկը կը կատարենք. թէ՛ Յիսուսի հետ Վերջին Ընթրիքի սեղանը կը նստինք, թէ՛ ալ Անոր Մարմինէն կը ճաշակենք ու Արիւնէն կ'ըմպենք: Այդ սեղանակցութիւնը մեր հոգեւոր ազատագրութեան կը ծառայէ: Ուստի, Անոր Մարմինէն ճաշակելու եւ Արիւնէն ըմպելու մէջ մեզմէ ոեւէ մէկը պէտք չէ դանդաղի:

Յուդայի արարքին դարձեալ անդրադառնալով, ըսեմ, որ մեր գաղափարները եւ համոզումները մեզ կը մոլորեցնեն:

Յաճախ երկուութեան դիմաց կը գտնենք մենք զմեզ: Անկարելի է սեփական գաղափարներ եւ համոզումներ չունենալը: Սակայն մեր անհատականութիւնը երբեմն մեզ կը տանի առանձին ուղիով, եւ մենք կը կորսնցնենք ճշմարտութիւնը տեսնելու կարողութիւնը: Յուդայի օրինակը մեզի այդ կ'ըսէ:

Անհատականութեան առանձին ուղիին մէջ ընթանալով, մենք կը զոհենք շատ բաներ: Որքան իմաստութիւն է խոտորումի ճամբուն կէսէն ետ դառնալը: Այդ իմաստութիւնն ունենալու համար՝ հոգիին

աչքերը պէտք է բաց պահուին: Եւ այդ արթնութիւնը ապաշխարութիւնն է: Ապաշխարութեամբ է, որ հոգիին աչքերը բաց կը մնան: Անիկա մեզի սկզբունքային յիշեցումներ կ'ընէ, որպէսզի մենք սայթաքելով չիյնանք:

Իր մատնութեան մասին ցնցիչ յայտարարութենէն ետք ահա՛ այլ ցնցիչ յայտարարութիւն մըն ալ կ'ընէ Յիսուս, երբ կ'ըսէ. «Այս գիշեր դուք բոլորդ ալ պիտի լքէք զիս, որովհետեւ Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Պիտի սպաննեն հովիւը, եւ հօտին ոչխարները պիտի ցրուին»»:

Աշակերտները տակաւին տկար էին եւ չունէին հոգեւոր այն քաջութիւնը, որ զիրենք Յիսուսի կողքին պիտի պահէր: Անոնց քաջութեան պակասը կու գար հաստատելու Չաքարիա Մարգարէին կանխասացութիւնը (Չք 13.7):

Կարեւոր է նշել, թէ մարգարէութեան մէջ խօսքը այսպէս կը ներկայանայ. Տէրը կ'ըսէ. «Հովիւը զարկ, որ ոչխարները ցրուին»: Տիրոջ խօսքը ուղղուած է սուրին: Նախքան այդ, Տէրը սուրին ըսած է. «Արթնցիր, ո՛վ սուր, իմ հովիւիս դէմ» (Նոյնը):

Ո՞վ է սուրը կամ ի՞նչ է:

Երեմիայի մարգարէութեան մէջ կը կարդանք հետեւեալը. «Ձեր սուրը գիշատիչ առիծի պէս ձեր մարգարէները կերաւ» (Եր 2.30):

Արդ, Յիսուս Չաքարիայի մարգարէութեան խօսքը վերաքաղելով, ըսել կ'ուզէ, որ Իսրայէլի քաղաքական եւ կրօնական ղեկավարները ո՛չ թէ միայն մարգարէներն սպաննեցին, այլ նաեւ պիտի սպաննեն Աստուծոյ առաքած Հովիւը:

«...Հօտին ոչխարները պիտի ցրուին», կ'ըսէ: Աւետարանիչը գրած է, թէ յետ Յիսուսի ձերբակալութեան, «աշակերտները բոլորն ալ ձգեցին զԻնք ու փախան» (Մտ 26.56), այլ բացատրութեամբ՝ անոնք ցրուեցան:

«Բայց յարութիւն առնելէս ետք՝ ձեզմէ առաջ Գալիլիա պիտի երթամ», կ'ըսէ: Յիսուս Իր մահուան եւ յարութեան մասին խօսած էր, նաեւ՝ Իր վախճանական գալստեան մասին, սակայն այստեղ կը տեսնենք, թէ յարութեան յաջորդելիք հանդիպումին համար ժամադրութիւն կու տայ: Այս ժամադրութեան դրուագը արձանագրուած է Աւետարանի վերջին գլուխի աւարտին: Հատուածը շատ ծանօթ է: Անիկա կը գտնուի 28.16-20-րդ համարներուն մէջ:

Պետրոս ահա՛ անմիջապէս կը յոխորտայ, որ նոյնիսկ եթէ բոլորը լքեն, ինք պիտի չլքէ իր Վարդապետը:

Ան չէր չափած մարդկային տկարութիւնը: Նաեւ չէր անդրադառնար, թէ այդ խօսքով Իր աշակերտակիցներէն աւելի կարող եւ դիմացկուն կը տեսնէր ինքզինք: Չափազանցուած ինքնավստահու-

թեան հով է, որ ահա՛ իր մէջէն կ'անցնէր:

Ղուկասի մօտ, Պետրոսի այդ փորձութիւնը մեկնաբանուած է որպէս սատանայէն փորձութիւն (տես Ղկ 22.31): Չիտենք, որ ան պիտի տկարանար եւ պիտի ուրանար Յիսուսը: Բայց գիտենք նաեւ, որ յետ Յիսուսի խաչելութեան, կրկին պիտի դառնար եւ աշակերտակիցները քաջալերէր իրենց հաւատքին մէջ:

«Կ'ըսեմ քեզի, որ այս գիշեր, աքաղաղը չկանչած, դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս»: Այսպէս, Յիսուս ո՛չ թէ միայն կանխաւ կը յայտնէ անոր ուրացումը, այլ նաեւ կ'ըսէ, թէ ան քանի՞ անգամ պիտի ուրանայ: Մարդկային տկարութիւնն այնքան մեծ է, որ մինչեւ կատարեալ ուրացումի ալ կը հասնի:

Պետրոս, սակայն, կը շարունակէ իր կեցուածքին անխորտակելիութեան վրայ յոխորտալ եւ կը պնդէ՝ ըսելով. «Նոյնիսկ եթէ մեռնիլ պէտք ըլլայ Քեզի համար՝ Քեզ պիտի չուրանամ»: Հակառակ այս պնդումին՝ ան պիտի տկարանար: Սակայն, գիտենք, որ Պետրոս Առաքեալ իր կեանքը պիտի աւարտէր արեան նահատակութեամբ: Յիսուսի համբարձումէն ետք, ան վաղ Եկեղեցւոյ կազմակերպումին համար հսկայ աշխատանք պիտի տանէր: Պիտի ունենար փորձութեան պահեր, սակայն արժանի պիտի ըլլար զանոնք յաղթահարելու՝ ի վկայութիւն Քրիստոսի եւ Անոր Աւետարանին:

«Նոյնը կ'ըսէին բոլոր աշակերտներն ալ», կ'ըսէ Բարտոլոմէոսը: Հետեւաբար, չափազանցուած ինքնավստահութեան հովը կը փչէր նաեւ անոնց մէջ: Արդարեւ, անոնք եւս արեան նահատակութեամբ պիտի աւարտէին իրենց կեանքը, սակայն բոլորովին զերծ պիտի չըլլային վարանումներէ:

Դէպի նահատակութիւն դիմելը քաջութիւն է, բայց այդ քաջութիւնը եւս անխառն վիճակ չէ: Ո՞վ է այն մարդը, որ փորձութեան չենթարկուիր: Սակայն Յիսուսի հաւատարիմներուն վերջնական յաղթանակ ապահովուած է, անշուշտ այնքան ատեն, որ անոնք հաղորդակից կը մնան իրենց Տիրոջ աղօթքին: Ղուկասի մօտ, Յիսուս Պետրոսի կ'ըսէ. «Ես քեզի համար աղօթեցի, որ հաւատքդ չտկարանայ» (տես Ղկ 22.32): Այս աղօթքը ո՛չ թէ միայն Պետրոսի համար էր, այլ նաեւ՝ բոլոր միւս աշակերտներուն, եւ բոլոր ժամանակներու Քրիստոսի հաւատարիմներուն:

ՅԻՍՈՒՍ ԳԵԹՍԵՄԱՆԻԻ ՄԷՋ (36-46)

Ապա Յիսուս իր աշակերտներուն հետ եկաւ տեղ մը, որուն անունը Գեթսեմանի էր, եւ ըսաւ անոնց.

- Հոս նստեցէք, մինչեւ որ Ես երթամ աղօթեմ:

Եւ իրեն հետ առաւ Պետրոսը եւ Չեբեղէոսի երկու որդիները: Տրտում էր ու կը տագնապէր: Այն ատեն ըսաւ անոնց.

- Հոգիս մեռնելու աստիճան տրտում է. հոս կեցէք եւ Ինձի հետ արթուն մնացէք:

Ապա քիչ մը առաջ գնաց եւ երեսին վրայ գետին փռուելով աղօթեց ըսելով.

- Հայր Իմ, եթէ կարելի է՝ այս բաժակը հեռացուր Ինձմէ, բայց ոչ թէ ինչպէս որ Ես կ'ուզեմ, այլ ինչպէս որ Ղո՛ւն կ'ուզես:

Յետոյ վերադարձաւ երեք աշակերտներուն մօտ եւ զանոնք քնացած գտաւ:

Եւ Պետրոսի ըսաւ.

- Չկրցա՞ք ժամ մը արթուն մնալ Ինձի հետ: Արթուն մնացէք եւ աղօթեցէ՛ք, որպէսզի փորձութեան մէջ չիյնաք: Հոգին յօժար կրնայ ըլլալ, բայց մարմինը տկար է:

Կրկին, երկրորդ անգամ ըլլալով, Յիսուս գնաց աղօթելու եւ ըսաւ.

- Հայր Իմ, եթէ կարելի է՝ այս բաժակը թող հեռանայ Ինձմէ, ապա թէ ոչ՝ պիտի խմեմ զայն. Քու կամքդ թող ըլլայ:

Վերադարձաւ եւ դարձեալ իր աշակերտները քնացած գտաւ. անոնց աչքերը չէին բացուեր: Յիսուս դարձեալ ձգեց զիրենք ու գնաց եւ երրորդ անգամ աղօթեց՝ նոյն խօսքերը ըսելով: Ապա վերադարձաւ իր աշակերտներուն մօտ եւ ըսաւ.

- Ասկէ ետք քնացէ՛ք եւ հանգստացէ՛ք. բայց ահա ժամը հասած է եւ Մարդու Որդին մեղաւոր մարդոց ձեռքը պիտի յանձնուի: Ելէք երթանք այստեղէն, որովհետեւ զիս մատնողը ահաւասիկ հասաւ:

«Գեթսեմանի» անունը արամերէն է, եւ «ծիթահան մամլիչ» կը նշանակէ: Վայրը կը գտնուի Չիթենեաց լեռան ստորոտին, մօտիկ՝ Քետրոն հովիտին: Երուսաղէմ իր այցելութեանց ընթացքին, Յիսուս սովորութիւն ունէր այս պարտէզին մէջ առանձնանալու եւ աղօթելու:

Յիսուս իր աշակերտները տեղ մը կը ձգէ՝ անոնց պատուիրելով, որ նստին եւ զինք սպասեն մինչեւ աղօթելէն իր վերադարձը: Եւ իրեն հետ կ'առնէ Պետրոսն ու Չեբեղէոսի երկու որդիները՝ Յակոբոսն ու Յովհաննէսը: Կը տեսնենք, որ զանոնք եւս իր աղօթքի տեղին մօտիկ կը ձգէ ու կը պատուիրէ արթուն մնալ իրեն հետ, եւ Ինք կ'առանձնանայ:

Այս երեքին տուած պատուէրէն կարելի է հասկնալ, թէ միւս աշակերտներուն ուղղած զինք սպասելու պատուէրով՝ զանոնք եւս կը հրաւիրէր իրեն հետ արթուն մնալու եւ աղօթելու:

Թէ ինչո՞ւ համար Պետրոսը, Յակոբոսն ու Յովհաննէսը Իրեն հետ կ'առնէ: Գիտենք, որ զանոնք այլ առիթով ալ Իրեն հետ առած էր. այլակերպութեան դրուագին մէջ, այս երեքը յիշուած են որպէս այդ դէպքին վկաներ (Մտ 17.1-2, եւայլն): Ըստ համատեսականներուն՝ Պետրոս եւ Ջեբեդէոսի որդիները Յիսուսի ընտրած առաջին աշակերտներն էին (Մտ 4.18-22: Մր 1.16-22: Ղկ 5.1-11): Արդեօք անոնց առաջնութի՞ւնն էր պատճառը, որ Յիսուս զանոնք Իրեն հետ կ'առնէր կարելոր պահերու...

«Եւ Իրեն հետ առաւ Պետրոսը եւ Ջեբեդէոսի երկու որդիները», կ'ըսէ աւետարանիչը, ու կ'աւելցնէ, թէ ան տրտում էր ու կը տագնապէր: Կատարելապէս մարդկային վիճակ կը յայտնուի մեզի: Յիսուս ոչ թէ միայն կատարեալ Աստուածն էր եւ է, այլ նաեւ՝ կատարեալ մարդը՝ հոգիով, միտքով եւ մարմինով, ինչպէս Ուղղափառ Հաւատքի դաւանութիւնը կը բանաձեւէ: Արդ, մահուան դիմաց բնական է, որ Ան տրտմէր ու տագնապէր:

«Հոգիս մեռնելու աստիճան տրտում է. հո՞ն կեցէք եւ Ինծի հետ արթուն մնացէք», կ'ըսէ: Ահաւոր վիճակի մէջ էր Յիսուս: Եւ այդ փորձութեան յաղթելու համար, Իր աշակերտներէն կը խնդրէ, որ անոնք Իրեն հետ աղօթական արթնութեան մէջ մնան:

«Ապա քիչ մը առաջ գնաց եւ երեսին վրայ գետին փռուելով աղօթեց, ըսելով. «Հայր Իմ, եթէ կարելի է՝ այս բաժակը հեռացո՛ւր ինձմէ, բայց ոչ թէ ինչպէս որ Ես կ'ուզեմ, այլ ինչպէս որ Պա՛նն կ'ուզես»»:

Երեսի վրայ արթուն փռուելով աղօթելը խորհրդանշական ծել է, որ կը յայտնէ անձին բացարձակ խոնարհումը Աստուծոյ կամքին առջեւ: Թէեւ Յիսուս Իր խօսքին սկիզբը կը խնդրէ, որ Աստուած Իրմէ հեռացնէ մահուան դառն բաժակը, բայց գետին փռուելովն իսկ կը խոստովանի Իր յօժարակամութիւնը Աստուծոյ: Իր խօսքին երկրորդ բաժինը յայտարարութիւնն է այդ յօժարակամութեան:

«Յետոյ վերադարձաւ երեք աշակերտներուն մօտ եւ զանոնք քնացած գտաւ: Պետրոսին ըսաւ. «Չկրցա՞ք ժամ մը արթուն մնալ Ինծի հետ: Արթուն մնացէք եւ աղօթեցէ՛ք, որպէսզի փորձութեան մէջ չիյնաք: Հոգին յօժար կրնայ ըլլալ, բայց մարմինը տկար է»»: Հաւանաբար, աշակերտները յոգնած էին գիշերուան այդ ուշ ժամուն, եւ չդիմանալով՝ քունի անցած:

Որովհետեւ այդպէս է, ապա ինչո՞ւ Յիսուսի զգաստացնող հարցումը: Չէ՞ր գիտեր մարդկային մարմինին տկարութիւնը:

Յիսուս զանոնք հետը առած էր, որպէսզի ճիգ ընեն եւ Իրեն հետ արթուն մնան ու աղօթեն: Սակայն, փոխանակ այդ առաւել ճիգին՝ անոնք յանձնուած էին մարմինին տկարութեան:

Իրեն հետ ըլլալը միշտ ալ աւելի ճիգ կը պահանջէ: Չես կրնար գերագոյն զոհողութեան օրինակին հետ ըլլալ եւ ապրիլ այնպէս ինչպէս սովորական կեանքով կ'ապրիս:

Յիսուս Իր աշակերտներուն արթուն մնալ եւ աղօթել կը պատուիրէ, որպէսզի անոնք փորձութեան մէջ չիյնան: Նախորդ հատուածի սերտողութեան մէջ տեսանք, որ Ան Իր խօսքը Պետրոսին ուղղելով ըսած էր. «Ես քեզի համար աղօթեցի, որ հաւատքդ չտկարանայ» (տես Ղկ 22.32), եւ հասկցանք որ ատիկա միայն Պետրոսի համար չէր, այլ նաեւ բոլոր միւս աշակերտներուն եւ բոլոր ժամանակներու Քրիստոսի հաւատարիմներուն: Արդ, Յիսուս թէ անոնց համար աղօթած է եւ թէ՛ ալ բոլոր դարերու Իր Եկեղեցիին: Թէ՛ անոնք կոչուած էին արթնութեամբ աղօթելու, եւ թէ՛ մենք:

«Հոգին յօժար կրնայ ըլլալ, բայց մարմինը տկար է»: Յիսուս գիտէր, որ մարդկային մարմինը տկար է. գիտէր նաեւ, որ թէ՛ Իր աշակերտները եւ թէ՛ ալ բոլոր Իրեն հետեւողները կ'ուզեն արթնութեամբ աղօթել, սակայն կը տկարանան եւ կը քնանան: Այդ տկարութեան եւ քունին յաղթելու համար աւելի ճիգը որ կը պահանջուի, ոչ թէ մէկ անգամուան յանձնառութիւն պէտք է ըլլայ, այլ՝ մնալուն:

Հոգիի յաղթանակը կրթութեամբ պայմանաւորուած է: Ասիկա չի նշանակեր, թէ մարմինին տկարութիւնը կը դադրի խուժելէ մարդուն վրայ: Ո՛չ: Անիկա միշտ ալ կայ: Սակայն հոգիին կրթութիւնը՝ գիտակից կը պահէ ենթական, թէ ինք կը վայելէ Յիսուսի աղօթքին զօրութիւնը, եւ անոր օգնականութեամբ՝ ինք կրնայ յաղթել սեփական մարմինին տկարութեան:

«Կրկին, երկրորդ անգամ ըլլալով, Յիսուս գնաց աղօթելու եւ ըսաւ. «Հայր Իմ, եթէ կարելի է՝ այս բաժակը թող հեռանայ ինձմէ, ապա թէ ոչ՝ պիտի խմեմ զայն. Քու կամքդ թող ըլլայ»»: Յիսուս դարձեալ կ'երթայ աղօթելու եւ կը կրկնէ Իր նախկին ըսածը: Նախորդը եւ ատիկա բոլորովին նոյն խօսքը չեն, տարբերութիւն կայ: Եւ այդ տարբերութիւնը հետեւեալն է: Նախորդին մէջ Աստուծոյ կամքին կը ձգէ բաժակը խմելը: Այստեղ ալ Աստուծոյ կամքին կը ձգէ, սակայն նաեւ՝ «պիտի խմեմ»-ով մէկ քայլ եւս կ'առնէ իր պատրաստակամութեան մէջ՝ չարչարանքներուն եւ մահուան ընդառաջելու:

«Վերադարձաւ եւ դարձեալ Իր աշակերտները քնացած գտաւ. անոնց աչքերը չէին բացուեր: Յիսուս դարձեալ ձգեց զիրենք ու գնաց եւ երրորդ անգամ աղօթեց՝ նոյն խօսքերը ըսելով»: Ինչպէս ըսի, Յիսուս գիտէ մարդկային մարմինին տկարութիւնը եւ չ'ուզէր, որ մարդիկ Իրենց գերագոյն կարողութենէն աւելի ճիգ ընեն: Այդ պատճառով

ալ, այս անգամ երբ կը տեսնէ, որ աշակերտները քնացած են, զգաստացումի որեւէ խօսք չ'ուղղեր անոնց: Եւ երրորդ անգամ կը դառնայ աղօթելու: Աւետարանիչը վերջին աղօթքը չէ արձանագրած: Աղօթքէն ետք աշակերտներուն ուղղած խօսքը մտածել կու տայ, թէ արդէն Ինքզինք կատարելապէս յանձնած էր Աստուծոյ կամքին, որովհետեւ «ժամը հասած» էր եւ Ինք պիտի յանձնուէր մեղաւոր մարդոց ձեռքը:

ՅԻՍՈՒՄԻ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ (47-56)

Տակաւին կը խօսէր, երբ ահա՛ եկաւ Յուդան՝ տասներկու աշակերտներէն մէկը: Իրեն հետ էր սուրերով եւ բիրերով զինուած մեծ ամբոխ մը՝ աւագ քահանաներուն եւ ժողովուրդի երէցներուն կողմէ ղրկուած: Յիսուսը մատնողը անոնց նշան տուած էր՝ ըսելով.

- Չով որ համբուրեմ՝ Անիկա է Յիսուսը, ձերբակալեցէ՛ք զԱյն:

Յուդա շուտով մօտեցաւ Յիսուսի եւ ըսաւ.

- Ողջո՞յն, Վարդապետ,- եւ համբուրեց զԱյն:

Յիսուս ըսաւ անոր.

- Բարեկամ, ասո՞ր համար եկար:

Ապա մօտեցան, բռնեցին Յիսուսը եւ ձերբակալեցին: Եւ ահա՛ Յիսուսի հետ եղողներէն մէկը ձեռքը երկարեց եւ սուրը քաշելով՝ զարկաւ քահանայապետի ծառային եւ անոր ականջը կտրեց: Յիսուս ըսաւ անոր.

- Սուրդ տեղը դիր, որովհետեւ ով որ սուր կ'առնէ՝ սուրով պիտի մեռնի: Կը կարծես, թէ չե՞մ կրնար Հօրս աղաչել, որ հիմա աւելի քան տասներկու գունդ հրեշտակ ղրկէ Ինձի: Սակայն ինչպէ՞ս պիտի իրականանան Սուրբ Գիրքերուն մէջ գրուածները, թէ այսպէս պէտք է ըլլայ:

Ապա Յիսուս ամբոխին դառնալով՝ ըսաւ.

- Աւագա՞կ եմ որ այդպէս սուրերով եւ բիրերով վրաս կը յարձակիք՝ զիս ձերբակալելու համար: Ամէն օր ձեզի հետ տաճարին մէջ կը նստէի եւ կ'ուսուցանէի ու չձերբակալեցիք զիս: Բայց այս բոլորը կը պատահին, որպէսզի Սուրբ Գիրքերուն մէջ մարգարէներուն ըսածներն իրականանան:

Այն ատեն՝ աշակերտները բոլորն ալ ձգեցին զԻնք ու փախան:

«...Չիս մատնողը ահաւասիկ հասաւ», կ'ըսէր, երբ Յուդան կու գար աւագ քահանաներուն եւ ժողովուրդի երէցներուն կողմէ ղրկուած զինուած մեծ ամբոխի հետ: Այդ ամբոխը՝ անոնց ծառաներն էին եւ տաճարին զինուորներէն մէկ խումբ:

Ամբոխին զինուած ըլլալը մտածել կու տայ, թէ զանոնք ղրկողները մտավախութիւնն ունէին, որ գուցէ դիմադրութեան հանդիպին: Ասիկա ցոյց կու տայ, թէ անոնք, ներառեալ Յուդան, չէին հասկցած Յիսուսը: Սիրոյ վարդապետութեան Ուսուցիչն էր Յիսուս, եւ դէմ էր ամէն բռնարարքի:

Գեթսեմանիի պարտէզը մութ էր, եւ ամբոխը չէր ճանչնար Յիսուսը: Նոյնիսկ եթէ անկէ ոմանք զԻնք տեսած էին, մութին մէջ դժուար թէ կարենային զԱյն ճանչնալ: Այդ էր պատճառը, որ Յուդա համբուրելով ուզած էր ցոյց տալ, թէ ով է Յիսուսը:

Ռաբբիներուն աշակերտները իրենց ուսուցիչները ողջունելու համար անոնց հետ կը համբուրուէին եւ այդպէս կ'արտայայտէին իրենց երախտագիտութիւնն ու սէրը: Յուդա այս կերպը կ'օգտագործէ, որպէսզի նաեւ իր մտադրութիւնը յայտնի չըլլայ Յիսուսի: Սակայն Յիսուս կը տեսնէ անոր մտադրութիւնը, եւ կ'ըսէ. «Բարեկամ, ասո՞ր համար եկար»: Ըսել կ'ուզէ՝ համբուրելո՞ւ համար եկար: Ղուկասի մօտ Յիսուսի պատասխանը այս է. «Յուդա, համբուրելո՞վ կը մատնես Մարդու Որդին» (Ղկ 22.48):

Յիսուսի հարցումը «Բարեկամ, ասո՞ր համար եկար»-ը բնագիրին մէջ «Բարեկամ, ինչի՞ համար որ եկար» է: Հետեւաբար, միտքը նախ հարցական ձեւով չէ դրուած, ու նաեւ առկախ է, այսինքն բան մը կը պակսի, որ «ըրէ» բայն է: Հետեւաբար, եթէ ուզենք ամբողջացնել ըսուածը՝ ասիկա կ'ունենանք. «Բարեկամ, ինչի՞ համար որ եկար, ըրէ»:

Յուդայի համբոյրէն ետք, կը մօտենան, կը բռնեն Յիսուսը եւ կը ձերբակալեն: Եւ ահա՛ Յիսուսի հետ եղողներէն մէկը ձեռքը կ'երկարէ եւ սուրը քաշելով՝ կը զարնէ քահանայապետին ծառային ու անոր ականջը կը կտրէ:

Յիսուսի հետ եղողներէն մէկը ո՞վ էր արդեօք: Համատեսականները անուն չեն տար, իսկ Յովհաննէսի Աւետարանը Պետրոսին անունը կը յիշէ:

Ըստ Ղուկասի, Յիսուս Վերջին Ընթրիքէն ետք այս պատուէրը տուած է. «Ան որ սուր չունի՝ թող իր վերարկուն ծախէ եւ իրեն համար սուր գնէ» (Ղկ 22.36): Այս խօսքը աշակերտները սխալ հասկցած էին: Յիսուսի կոչն էր, որ աշակերտները իրենք զիրենք հոգեւորապէս զինեն, որպէսզի կարենան բարի պատերազմը պատերազմիլ: Աշակերտներուն սխալ հասկացողութեան նշան էր Պետրոսին արարքը, որ Յիսուսի համար անընդունելի էր: Յիսուս բրտութեան հետ չէր: Անոր մնայուն սկզբունքը եղած էր՝ չարիքին բարիքով պատասխանել: Եւ այդ իսկ պատճառով անմիջապէս կը սաստէ՝ ըսելով. «Սուրդ

տեղը դիր, որովհետև ով որ սուր կ'առնէ սուրով պիտի մեռնի»: Ժողովրդական առած է ասիկա: Սուրը անիրաւութեան գործիք է: Անիկա երբեք արդարութիւն չէ բերած եւ չի կրնար բերել:

Մարդիկ յաճախ կ'ուզեն հարցերը կամ խնդիրները սուրով լուծել: Յաճախ ալ չեն անդրադառնար, որ սուրը երբեք արդարութիւն չի գործեր: Որովհետև սուրը անարդարութիւն կը գործէ, ապա անարդարութիւններու շարքը կ'երկարի: Անիկա պատճառ կ'ըլլայ, որ վրէժխնդրութեան շղթան երկարի:

«Կը կարծես, թէ չե՞մ կրնար Հօրս աղաչել, որ հիմա ւաւելի քան տասներկու գունդ հրեշտակ դրկէ Ինձի: Սակայն ինչպէ՞ս պիտի իրականանան Սուրբ Գիրքերուն մէջ գրուածները, թէ այսպէս պէտք է ըլլայ», կ'ըսէ: Յիսուս կը յայտնէ, թէ Ինք անպաշտպան չէ, թէ եւ աշխարհը կրնայ զինք այդպէս տեսնել:

Ինք չէր եկած ոյժի ցուցադրութեան, որ այնքան կը զինովցնէ մարդիկը եւ կը մոլորեցնէ: Ինք եկած էր Աստուծոյ ճամբով կամ ծրագիրով փրկութիւն ըլլալու մարդկութեան: Ոյժի ցուցադրութիւնը եւ բրտութիւնը փրկութիւն չեն կրնար ըլլալ, այլ միայն կը խաբեն: Փրկութիւնը կը կայանայ Աստուծոյ կամքին կատարեալ հնազանդութեան մէջ: Ասիկա տկարութիւն կը թուի, բայց հզօրութեան նշան է: Յիսուս կը հրաւիրէ բացարձակապէս Աստուծոյ վստահելու, որովհետև Անոր ճամբան կամ ծրագիրն են՝ որ մարդիկը ճշմարտապէս կ'ազատագրեն եւ զանոնք յաղթանակի պսակին կ'արժանացնեն:

Ապա Յիսուս կը յանդիմանէ ամբոխը ըսելով. «Աւագա՞կ եմ որ այդպէս սուրերով եւ բիրերով վրաս կը յարձակիք՝ զիս ձերբակալելու համար: Ամէն օր ձեզի հետ տաճարին մէջ կը նստէի եւ կ'ուսուցանէի ու չձերբակալեցիք զիս: Բայց այս բոլորը կը պատահին, որպէսզի Սուրբ Գիրքերուն մէջ մարգարէներուն ըսածները իրականանան»: Ամբոխին ուղղուած խօսքը՝ իրականութեան մէջ ուղղուած է զայն դրկողներուն: Անոնք, ինչպէս ըսի, կը զգուշանային հրապարակաւ ձերբակալել Յիսուսը, որովհետև կը վախնային, որ այդպիսի քայլ մը կրնար ժողովրդային մեծ խռովութիւն յարուցել: Անոնք խաւարի գործերով տարուած էին, ուստի քաջութիւնը չունէին ցերեկ աչքով իրենց որոշումը գործադրել տալու: Իր խօսքի աւարտին, Յիսուս անոնց ընթացքը կը մեկնաբանէ՝ յիշեցնելով մարգարէները: Արդեօք մարգարէական ո՞ր կանխասացութիւններուն կ'ակնարկէ:

Անմիջականօրէն երկու մարգարէներու խօսքեր յարմար է յիշել այստեղ:

Առաջինը Դաւիթ Մարգարէինն է, որ կ'ըսէ. «Ի նանիր ատեցին զիս» (Սղ 25.19), այսինքն՝ առանց պատճառի զիս ատեցին: Յիսուսի

հանդէպ հրեայ կրօնական իշխանաւորներուն ատելութիւնը անարդարանալի էր, որովհետև Յիսուս չարիք չէր գործած, այլ եկած էր կատարելու Երկնաւոր Հօր կամքը:

Երկրորդը Եսայիի մարգարէութեան մէջ արձանագրուած է. «Ընդ անօրէնս համարեցաւ» (Ես 53.12), այսինքն՝ անօրէններու կարգին դասուեցաւ: Պիտի տեսնենք, թէ զԻնք շուտով պիտի ձերբակալեն՝ ինչպէս աւագակ մը, եւ երկու աւագակներու մէջ տեղ խաչեն:

Վերջին համարով ալ, որ կ'ըսէ, «Այն ատեն աշակերտները բոլորն ալ ձգեցին զԻնք ու փախան», ւետարանիչը կը յիշեցնէ Ջաքարիայի մարգարէութեան (Ջք 13.7) կատարումը:

ՅԻՍՈՒՍ ՀՐԵԱՆԵՐՈՒ ԱՏԵԱՆԻՆ ԱՌՋԵԻ (57-68)

Անոնք ձերբակալեցին Յիսուսը եւ տարին Կայիափա քահանայապետին տունը, ուր Օրէնքին ուսուցիչները եւ երէցները հաւաքուած էին: Պետրոս հեռուէն կը հետեւէր Յիսուսի, մինչեւ քահանայապետին տան գաւիթը, ուր մտնելով նստաւ սպասաւորներուն հետ տեսնելու համար, թէ վերջը ինչ պիտի ըլլայ: Մինչ այդ, աւագ քահանաները եւ ամբողջ ատեանը կը ջանային Յիսուսի դէմ սուտ վկայութիւն գտնել, որպէսզի զԱյն սպաննեն: Բայց չգտան, հակառակ անոր, որ շատ մը սուտ վկաներ ալ եկան: Ի վերջոյ, երկու սուտ վկաներ եկան եւ ըսին.

- Այս մարդը կ'ըսէր. «Ես կրնամ Աստուծոյ տաճարը քանդել եւ երեք օրէն շինել զայն»:

Քահանայապետը ոտքի ելաւ եւ հարցուց Յիսուսի.

- Քեզի դէմ եղած այս ամբաստանութիւններուն պատասխան մը պիտի չտա՞ս:

Բայց Յիսուս լուռ կը մնար: Քահանայապետը դարձեալ հարցուց Յիսուսի.

- Կենդանի Աստուծոյ անունով՝ ըսէ՛ մեզի թէ Դո՞ւն ես Քրիստոսը, Աստուծոյ Որդին:

Յիսուս պատասխանեց.

- Դո՞ւն կ'ըսես: Բայց կ'ըսեմ ձեզի. ասկէ ետք պիտի տեսնէք Մարդու Որդին՝ ամենագոր Աստուծոյ աջ կողմը նստած. եւ պիտի տեսնէք որ կու գայ երկինքի ամպերուն մէջէն:

Ասոր վրայ քահանայապետը իր վերարկուն պատռեց եւ ըսաւ.

- Հայիոյեց: Ալ ի՞նչ պէտք ունինք վկաներու. ահա՛ հիմա լսեցինք ըրած հայիոյութիւնը: Ի՞նչ կը մտածէք:

Անոնք պատասխանեցին.

- Մահապարտ է:

Ապա սկսան թքնել Անոր երեսին եւ ծեծեցին զԱյն. ոմանք

Կ'ապտակէին զԻնք ու կը հարցնէին.

- Քրիստոս, գիտցիր, ո՞վ է քեզի զարնողը:

Յիսուսը կը տանին քահանայապետին՝ Կայիափայի տունը, որ ապարանք էր եւ կը գործածուէր նաեւ որպէս ժողովավայր: Կը տեսնենք, որ այնտեղ արդէն հաւաքուած էին Օրէնքին ուսուցիչներն ու երէցները:

Յանկարծ նիւթէն շեղումով կ'ակնարկուի Պետրոսի, որ հեռուէն կը հետեւէր Յիսուսի, մինչեւ քահանայապետին տան գաւիթը, ուր մտնելով կը նստի սպասաւորներուն հետ եւ կը սպասէ, թէ վերջը ի՞նչ պիտի ըլլայ:

Հին տուները բացօթեայ բակեր ունէին: Այդ բակերը գաւիթ կը կոչուէին: Պետրոս, ուրեմն, կը նստի ապարանքի բակին մէջ, ուր հաւաքուած էին քահանայապետին սպասաւորները:

Այստեղ նշեմ, որ սպասաւորները ծառաները չէին:

Այն ժամանակներուն, ծառայութիւնը ստրուկներուն գործն էր: Սպասաւորութիւնը գործն էր պաշտօնեաներուն: Սպասաւորները ազատ մարդիկ էին, որոնք վարձատրութեամբ գործ կը տեսնէին:

Պետրոսի այս հետեւելուն եւ քահանայապետին տունը մտնելուն մասին մանրամասնութիւն կը գտնենք Յովհաննէսի Աւետարանին մէջ: Չորրորդ աւետարանիչը գրած է. «Սիմոն Պետրոս եւ ուրիշ աշակերտ մը կ'երթային Յիսուսի ետեւէն: Այս աշակերտը ծանօթ ըլլալով քահանայապետին՝ Յիսուսի հետ քահանայապետին տան գաւիթը մտաւ, մինչ Պետրոս դուրսը դրան քով կեցաւ: Միւս աշակերտը, որ ծանօթ էր քահանայապետին, դուրս ելաւ եւ խօսելէ ետք դռնապանին հետ, որ կին մըն էր, ներս առաւ Պետրոսը... Օղը ցուրտ ըլլալուն, ծառաները եւ սպասաւորները կրակ վառած էին հոն ու կը տաքնային: Պետրոս ալ անոնց քով կեցած էր ու կը տաքնար» (Յի 18.15-16, 18): Յիշուած աշակերտը Յովհաննէսն էր:

Շեղումէն ետք, դարձեալ բուն նիւթին դառնալով, կ'ըսուի թէ ժողովուածները ջանքին մէջն էին Յիսուսի դէմ սուտ վկայութիւն գտնելու, որպէսզի զԱյն սպաննեն: Անոնք ժողովի կանչած էին նաեւ բազմաթիւ սուտ վկաներ:

Կանչուած վկաները չէին կրցած հասարակաց ընդունելի վկայութիւն տալ, այլ՝ իրարու հակասական յերիւրանքներու մէջ ինկած էին: Եւ ահա երկու սուտ վկաներ կու գան ու կը միանան ժողովուածներուն եւ կ'ըսեն. «Այս մարդը կ'ըսէր. “Ես կրնամ Աստուծոյ տաճարը քանդել եւ երեք օրէն շինել զայն”»: Ասոնց համաձայնութիւնը կը մղէ, որ այս սուտ վկայութիւնը որդեգրուի ժողովուածներուն կողմէ:

Հարցումը որ այստեղ կը դնենք սա է.

Յիսուս այդպիսի խօսք ըսա՞ծ էր:

Այո:

Յովհաննէսի Աւետարանին մէջ կը կարդանք, թէ Յիսուս Իր առաքելութեան սկիզբը տաճարին մէջ մաքրագործում կատարած է: Եւ նախանձախնդրական այդ արարքէն ետք, երբ հրեայ ղեկավարներ Իրեն հարց տուած էին, թէ ի՞նչ նշանով կրնար ապացուցել Իր իրաւունք ունենալը, Յիսուս պատասխանած էր. «Քանդեցէ՛ք այս տաճարը, եւ երեք օրէն Ես պիտի վերաշինեմ զայն» (Յի 3.19): Ապա աւետարանիչը բացատրած է, թէ Յիսուս կը խօսէր Իր մարմնիին մասին, եւ աւելցուցած. «Եւ երբ Ինք մեռելներէն յարութիւն առաւ, աշակերտները յիշեցին, թէ այդ էր ըսածը» (նոյնը, հմր 22):

Ահա քահանայապետը ոտքի ելլելով հարց կու տայ Յիսուսի ըսելով. «Քեզի դէմ եղած այս ամբաստանութիւններուն պատասխան մը պիտի չտա՞ս»:

Յիսուս, սակայն, լուռ կը մնայ: Ինչպէ՞ս կարելի է բացատրել այդ լռութիւնը: Յիսուս կը տեսնէր, թէ որեւէ պատասխան Իր կացութեան ազատում պիտի չբերէր: Ատեանը որոշած էր զԻնք մահուան դատապարտել: Հետեւաբար, Իր կողմէ ապարդիւն ճիգ պիտի ըլլար յոյժ կամակորութեան մէջ ճշմարտութիւնն ըսել:

Նաեւ աւելի կարեւոր է յիշել այն կանխասացութիւնը, որ դարեր առաջ կատարուած էր եւ աստուածային կամքը կը յայտնէր:

Եսայիի մարգարէութեան մէջ գրուած է.

«Ան անիրաւութիւն կրեց ու չարչարուեցաւ, բայց Իր բերանը չբացաւ: Մորթուելու տարուող ոչխարի պէս ... Իր բերանը չբացաւ» (Ես 53.7):

Հետեւաբար, Յիսուսի լռութիւնը՝ Իր կատարեալ հնազանդութիւնն էր աստուածային կամքին:

Քահանայապետը կը շարունակէ այլ հարցումով. «Կենդանի Աստուծոյ անունով ըսէ՛ մեզի թէ Դո՞ւն ես Քրիստոսը, Աստուծոյ Որդին»: Ան խոստովանութիւն կ'ուզէ Յիսուսէ: Աստուծոյ անունը օգտագործող հարցումի այս ձեւը կը ստիպէ, որ Յիսուս Իր լռութենէն դուրս գայ: Ուստի, Յիսուս կը պատասխանէ անոր ըսելով. «Դո՞ւն կ'ըսես». ու կ'աւելցնէ. «Բայց կ'ըսեմ ձեզի. ասկէ ետք պիտի տեսնէք Մարդու Որդին՝ ամենագոր Աստուծոյ աջ կողմը նստած. եւ պիտի տեսնէք որ կու գայ երկինքի ամպերուն մէջէն»:

Հարցումին ոգին չարամիտ էր: Քահանայապետը պատասխան կ'ակնկալէր, որ դատապարտողական իր յայտարարութիւնը արծակէր:

Յիսուս խուսափողը չէր ճշմարտութիւնն ըսելէ, եւ նախ հաստատական պատասխան կու տայ: Ապա որպէսզի Իր բնութիւնը որպէս Որդի Աստուծոյ բացայայտէ, Անոր նոյնութիւնը ցոյց կու տայ «Մարդու Որդի» մեսիական եւ վախճանաբանական տիպարին հետ: Ինչպէս գիտէք, ամէն հաւատացեալ Աստուծոյ որդի է: Սակայն Յիսուսի Որդիութիւնը աստուածային է. Ան Աստուծմէ առաքուած Քրիստոսն է, որ կրկին պիտի գայ աշխարհի վախճանին Ղատաստանի Օրը:

Յիսուսի խօսքին մէջ կարելի է տեսնել նաեւ դատումը թէ հրէական ատեանի կամակորներուն եւ թէ բոլոր ժամանակներու կամակորներուն, որոնք Աստուծոյ Որդիին մահը կ'ուզեն:

Յիսուսի պատասխանէն ետք, քահանայապետը իր վերարկուն կը պատռէ եւ կ'ըսէ. «Հայիոյեց: Ալ ի՞նչ պէտք ունինք վկաներու. ահա հիմա լսեցինք ըրած հայիոյութիւնը: Ի՞նչ կը մտածէք»:

Պատասխանը կ'ըլլայ. «Մահապարտ է»:

Ինչո՞ւ քահանայապետը կը պատռէ իր վերարկուն:

Չենք գիտեր, որ այդ վերարկուն քահանայապետական զգե՞ստն էր, թէ՞ գիշերային վերարկու էր, որ ան իր վրայ առած էր:

Հինէն եկած խորհրդանշական արարք է, որ կ'արտայայտէ որեւէ խօսքի, կեցուածքի կամ գործի անընդունելի ըլլալը: Նաեւ կ'արտայայտէ իր վերարկուն պատռողին անհամաձայնութիւնը ըսուածին, առնուած կեցուածքին կամ կատարուած գործին:

Այստեղ կ'ուզեմ անդրադառնալ այն իրողութեան, որ մինչեւ այս պահը Յիսուս Իր մեսիայութեան մասին չխօսեցաւ կամ ծածուկ պահեց: Հիմա կրնար դարձեալ լուռ մնալ, բայց չմնաց, որովհետեւ յայտնի էր Իրեն, որ ժամանակը հասած էր եւ Ինք «մորթուելու» պիտի տարուէր: Ալ ծածուկ պահելու ժամանակն աւարտած էր, եւ Աստուծոյ Որդին վերջնականապէս կը գտնուէր Իր մահը ցանկացողներուն դիմաց: Իր լռութենէն դուրս գալով՝ Իր ինքնութիւնը կը յայտարարէր անոնց, որոնց անհաւատութիւնը իրենց դատապարտութիւնը պիտի ըլլար:

ՊԵՏՐՈՍ ԿՈՒՐԱՆԱՅ ՅԻՍՈՒՍԸ (69-75)

Մինչ Պետրոս դուրսը գալիթին մէջ նստած էր, աղախին մը մօտեցաւ եւ ըսաւ.

- Դուն ալ Քալիլիացի Յիսուսին հետ էիր:

Պետրոս բոլորին դիմաց ուրացաւ եւ ըսաւ.

- Չեմ գիտեր, թէ ինչ բանի մասին կը խօսիս:

Երբ գալիթէն դուրս կ'ելլէր, դրան առջեւ ուրիշ կին մը տեսաւ զինք, եւ հոն եղողներուն ըսաւ.

- Ասիկա՛ ալ Նազովրեցի Յիսուսին հետ էր: Պետրոս դարձեալ ուրացաւ եւ ըսաւ.
- Կ'երդնում որ չեմ ճանչնար այդ մարդը: Քիչ ետք հոն գտնուողները մօտեցան եւ ըսին Պետրոսի.
- Իրապէս որ դուն ալ անոնցմէ ես, քանի խօսակցութեանդ շեշտը քեզ կը մատնէ:

Պետրոս ինքզինք անիծելով՝ սկսաւ երդում ընել եւ ըսել.

- Այդ մարդը չեմ ճանչնար:

Եւ նոյն պահուն աքաղաղը կանչեց: Պետրոս յիշեց Յիսուսի խօսքը, թէ «Տակաւին աքաղաղը չկանչած երեք անգամ պիտի ուրանաս զԻս»: Եւ դուրս ելլելով՝ լացաւ դառնագին:

Ինչպէս Յիսուս կանխատեսած էր, ահա Պետրոս կ'ուրանայ Յիսուսը:

Անկասկած, ձերբակալուած իր Վարդապետին հետեւիլը քաջութեան արարք էր, բայց քաջութիւնը այժմ նուազած կ'երեւայ, մինչեւ իսկ ուրացման մէջ ինկած: Վտանգին դիմաց՝ ան դիմաւորութիւն կ'ունենայ. մահուան երկիւղը զինք բռնած էր իր թաթերուն մէջ:

«Դուն ալ Քալիլիացի Յիսուսին հետ էիր», կ'ըսէ աղախիններէն մէկը: Պետրոս ուրացման առաջին ճիգով՝ իրեն ուղղուած խօսքը չհասկնալ կը ձեւացնէ: Եւ անմիջապէս գալիթը ձգելով՝ դուրս ելլել կ'ուզէ:

Ահա՛ գալիթի դրան առջեւ է, եւ ուրիշ կին մը շուրջը գտնուողներուն կ'ըսէ. «Ասիկա՛ ալ Նազովրեցի Յիսուսին հետ էր»: Պետրոս դարձեալ կ'ուրանայ՝ ըսելով, թէ «այդ մարդը» չի ճանչնար: Ինքզինք Յիսուսի անծանօթ ցուցնելով՝ անունը անգամ չի տար: Այս անգամ ուրացումը հրապարակային է, այսինքն ի դիմաց մարդոց:

Երկրորդ ուրացումով՝ ան ո՛չ թէ միայն կը մերժէ Յիսուսի հետ որեւէ կապ ունենալը ցոյց տալ, այլեւ երդում կ'ընէ, թէ չի ճանչնար զԱյն: Եւ այդպիսով՝ աւելի կը խստացնէ իր ուրացումը:

«Իրապէս որ դուն ալ անոնցմէ ես, քանի խօսակցութեանդ շեշտը քեզ կը մատնէ», կ'ըսեն հոն գտնուողները: Պետրոս գալիլիացի էր, եւ իր շեշտէն մեկնելով՝ ենթադրութիւն է, որ կ'ընեն անոնք: Եւ Պետրոս երրորդ ճիգով՝ առաւել եւս կը խստացնէ իր ուրացումը, որովհետեւ ո՛չ թէ միայն «այդ մարդը» չեմ ճանչնար» կ'ըսէ, այլեւ անէծքով երդում կ'ընէ:

Անէծքով երդում ընելու օրինակներ շատ կը լսենք մենք. կ'ըսուի օրինակ՝ «երկինքը թող գլխուս թափի՛՛ եթէ ըսածս սուտ է»: Այսպիսի երդում էր Պետրոսին ըրածը: Ան կը ցանկար ինքզինք ամբողջապէս

անջատել Յիսուսին: Եւ ատիկա պիտի ըլլար իր ծանրագոյն ուրացումը:

Ճիշդ այդ պահուն, կ'ըսէ անտարանիչը, աքաղաղը կանչեց:

Պետրոսի տագնապը ահա՛ հասած էր իր բարձրակէտին:

Ինք ինչպէ՞ս կրնար իր սիրելի Վարդապետը այսպէս ուրանալ: Ինքզինք անիծելով ուրանալը անոր տագնապը շատ անտանելի պիտի դարձնէր: Պետրոսի մէջ կուտակուող խաւարը աստիճանաբար զինք գրաւած էր՝ մինչեւ կատարելապէս տիրելը:

Այդ խաւարին մէջ է, որ շանթի նման կը հարուածէ աքաղաղին կանչը:

Իր տագնապին մէջ, Պետրոս մոռցած էր Յիսուսի առջեւ իր ըսածները: Եւ յանկարծ աքաղաղին կանչով կը վերոյիշէր Վարդապետին խօսքը թէ՛ «Տակաւին աքաղաղը չկանչած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս»:

Վերոյիշումին վրայ, իր խիղճը կ'արթննայ. կը վերադառնայ իր մէջ իր Վարդապետը այնքան շատ սիրող աշակերտը: Եւ զղջումի խորունկ գիտակցութեամբ ու դառնագին լացով կը հեռանայ գաւիթէն:

ԳԼՈՒԽ 27

ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԿԸ ՏԱՐՈՒԻ (1-2)

Առաւօտ կանուխ, բոլոր աւագ քահանաները եւ ժողովուրդի երէցները որոշում տուին՝ սպաննելու Յիսուսը: Կապեցին զԱյն եւ տարին յանձնեցին կառավարիչ Պոնտացի Պիղատոսին:

Ճիշդ ժամը չենք գիտեր: Բայց կ'ենթադրուի, որ կէս գիշեր էր կամ կէս գիշերը քիչ անց, երբ ատենան հաւաքուած էին հրեայ իշխանաւորները: Այնտեղ եղած սուտ վկայութիւնները եւ վերջ ի վերջոյ Յիսուսի հասցէին արձակուած վճիռը՝ զիրենք հասցուցած էին մինչեւ վաղ առաւօտ:

Ինչո՞ւ սպասեցին առաւօտ ըլլալը:

Որպէսզի օրինականութիւն տան իրենց հաւաքումին:

Օրէնքը չէր արտօներ գիշեր ատեն դատ քննել եւ վճիռ տալ: Ուստի, մինչեւ առտու սպասեցին, եւ կանուխ ժամուն անմիջապէս իրենց որոշումը տուին, որ Յիսուսը սպաննեն:

Այս Պիղատոսը ծանօթ է որպէս բիրտ կառավարիչ: Անոր իշխանա-

նութիւնը արիւնալից եղած է, որովհետեւ բազմաթիւ խռովութիւններ եւ ըմբոստութիւններ ձգմած է խստագոյն կերպերով:

Պաղեստինի կառավարիչներուն նստավայրը Երուսաղէմը չէր: Անոնք ծովեզերեայ Կեսարիա քաղաքը կը նստէին: Բայց ամէն անգամ որ մեծ տօն մը կը մօտենար, կառավարիչները Երուսաղէմ կու գային, որպէսզի անձամբ հսկէին կացութեան, եւ եթէ խռովութիւն կամ ըմբոստութիւն պատահէր՝ արագօրէն կարենային գայն կասեցնել:

Ահա՛ Պիղատոս կը գտնուէր Երուսաղէմ եւ կը մնար տաճարի հիւսիս-արեւմուտքին կառուցուած միջնաբերդ-պալատին մէջ: Յիսուսը կապելով այնտեղ է որ կը տանին եւ կառավարիչին կը յանձնեն:

ՅՈՒՂԱՅԻ ՄԱՀԸ (3-10)

Այն ատեն Յուդա, որ մատնած էր Յիսուսը, երբ տեսաւ որ Յիսուս դատապարտուեցաւ, զղջաց եւ իր ստացած երեսուն արծաթ դրամը աւագ քահանաներուն եւ ժողովուրդի երէցներուն վերադարձնելով ըսաւ.

- Մեղք գործեցի արդար մէկը մատնելուս համար: Անոնք ըսին.

- Մեզի ի՞նչ, ատիկա քու գիտնալիքդ է:

Յուդա դրամը նետեց տաճարին մէջ եւ հեռացաւ: Ապա գնաց եւ ինքզինք կախեց:

Աւագ քահանաները առին դրամը եւ ըսին.

- Մեր Օրէնքը թոյլ չի տար, որ այդ դրամը ձգենք տաճարի գանձանակին մէջ, որովհետեւ արեան գին է:

Եւ խորհրդակցելէ ետք՝ այդ դրամով Բրուտին արտը գնեցին իբրեւ օտարներու գերեզման գործածելու համար: Այս պատճառով մինչեւ այսօր այդ արտը Արեան Արտ կը կոչուի: Այս ձեւով ահա՛ իրականացաւ Տիրոջ խօսքը Երեմիա Մարգարէին բերանով ըսուած. «Առին երեսուն արծաթ դահեկանը, զինը վաճառուածին, որուն գին տուին Իսրայէլի ժողովուրդէն ոմանք, եւ գայն տուին Բրուտի արտին համար, ինչպէս որ Տէրը հրամայեց ինձի»:

Յուդա իր Վարդապետը հրեայ իշխանաւորներուն ձեռքը յանձնելէ ետք երբ կը տեսնէ Յիսուսին դատապարտութիւնը՝ կը զղջայ եւ իր ստացած դրամը վերադարձնելով՝ կ'ըսէ. «Մեղք գործեցի արդար մէկը մատնելուս համար»:

Յուդայի մատնութիւնը, հետեւաբար, միայն դրամասիրութեամբ բացատրելը բաւարար չէ: Ենթադրուած է, որ ան յատուկ համոզումի

հետեւելով որոշած էր մատնել Յիսուսը, եւ մատնեց: Ինծի կը թուի, որ այս համարը այդ ենթադրութեան իրաւունք կու տայ: Կարծէք թէ Յուդա կը սպասէր, որ դէպքերը տարբեր ընթացք ստանան, բայց յանկարծ տեսաւ, որ իր սպասածը չեղաւ: Ու զղջաց:

Իր ստացած դրամը սկսաւ զինք այրել: Ուստի, անմիջապէս փութաց զայն վերադարձնել: Աւագ քահանաներն ալ ամենայն անտարբերութեամբ պատասխանեցին իրեն. «Մեզի ի՞նչ, ատիկա քու գիտնալիքդ է»: Անոնց նպատակն էր Յիսուսը ձեռք անցընել առանց աղմուկի, եւ հասած էին անոր: Հետեւաբար, Յուդայի ներքին խռովութիւնը եւ տառապանքը զիրենք չէին հետաքրքրեր:

Աւետարանիչը դէպքին նկարագրութիւնը շարունակելով, կ'ըսէ. «Յուդա դրամը նետեց տաճարին մէջ եւ հեռացաւ: Ապա գնաց եւ ինքզինք կախեց»:

Կը կարծուի, որ Յուդա աւագ քահանաներուն մօտ երթալով՝ ոչ թէ դրամը նետած էր տաճարին մէջ, այլ՝ տաճարի գանձանակին մէջ ձգած էր զայն, հաւանաբար ըսելով՝ որ այս դրամը ինծի չի պատկանիր. ահա՛ տաճարին դրամը տաճարին կը վերադարձնեմ:

Ոմանք ալ ըսուածը բառացիօրէն կ'առնեն, այսինքն՝ այնպէս ինչպէս որ գրուած է:

Առաքելներուն Գործերը զիրքին մէջ, Յուդայի վախճանին վրայ տարբեր պատում ունինք: Երբ Աւետարանին պատումը եւ այն մէկը բաղդատենք, կը տեսնենք որ իրարմէ բոլորովին տարբեր են:

Առաքելներուն Գործերը զիրքին մէջ գրուած է. «Իր անիրաւ մատնութենէն ետք, որուն վարձքով ազարակ մը գնեց, երեսն ի վար ինկաւ այնտեղ եւ փորը ճեղքուելով՝ փորոտիքը դուրս թափեցաւ» (Գրծ 1.18):

Ինչպէ՞ս հասկնալ այս մեծ տարբերութիւնը:

Հաւանաբար պատահածը այս էր:

Յուդայի ձգած կամ նետած դրամը առնելով՝ գացին եւ ազարակ գնեցին, եւ զայն արձանագրեցին իր իսկ անունով: Այդ իրականութեան տարածայնութիւնն է դուկասեան երկրորդ հատորին ըսածը:

Յուդա ինքզինք կախեց, եւ երբ ինկաւ՝ փորը ճեղքուեցաւ ու փորոտիքը դուրս թափեցաւ: Եզրակացնելով՝ կարելի է ըսել, թէ երկու պատումները զիրար կ'ամբողջացնեն:

Օրէնքը կ'արգիլէր տաճարին նուիրել որեւէ դրամ կամ առարկայ, որ անիրաւ ձեւով ձեռք բերուած էր:

«Եւ խորհրդակցել է ետք՝ այդ դրամով Բրուտին արտը գնեցին՝ իբրեւ օտարներու գերեզման գործածելու համար: Այս պատճառով մինչեւ այսօր այդ արտը Արեան Արտ կը կոչուի: Այս ձեւով ահա՛ ի-

րականացաւ Տիրոջ խօսքը Երեմիա Մարգարէին բերանով ըսուած. “Առին երեսուն արծաթ դահեկանը, զինը վաճառուածին, որուն զին տուին Իսրայէլի ժողովուրդէն ոմանք, եւ զայն տուին Բրուտի արտին համար, ինչպէս որ Տէրը հրամայեց ինծի”»: Հրեաները չէին հանդուրժեր, որ օտարներ իրենց գերեզմաններուն մէջ թաղուին: Այդ պատճառով ալ, արտը կամ ազարակը կը գնեն եւ կ'որոշեն զայն օտարներուն համար որպէս գերեզման գործածել: Անոնք չէին անդրադարձած, որ իրենց այդ արարքով կատարած եղան երկու մարգարէի կանխասացութիւն (Չք 11.12-13: Եր 18.2-3, 19.1-2, 32.6-9), որ, հետաքրքրականօրէն, Մատթէոս Աւետարանիչ միայն Երեմիայի վերագրած է:

ՊԻՂԱՏՈՍ ԿԸ ՀԱՐՑԱՔՆՆԷ ՅԻՍՈՒՍԸ (11-14)

Երբ Յիսուս կառավարիչին դիմաց կանգնեցաւ, կառավարիչը հարցուց իրեն.

- Դո՞ւն ես հրեաներուն թագաւորը:

Յիսուս պատասխանեց.

- Ահա՛ դո՞ւն կ'ըսես:

Եւ երբ աւագ քահանաներն ու երէցները զինք կ'ամբաստանէին, ինք պատասխան չէր տար: Ուստի, Պիղատոս ըսաւ.

- Չե՞ս լսեր ասոնց ըրած ամբաստանութիւնները Քեզի դէմ:

Սակայն Յիսուս պատասխան չտուաւ, ոչ իսկ բառ մը, ինչ որ մեծ զարմանք պատճառեց կառավարիչին:

Այս պարզուկ հատուածը մեզի կը ներկայացնէ Յիսուսի դատավարութեան այն պահը, երբ Ան կառավարիչին դիմաց է:

Նախապէս ըսի, որ կառավարիչը միշտ Երուսաղէմ չէր ըլլար: Ան Երուսաղէմ կու գար միայն տօնական առիթներով: Գիտենք, որ անոր նստավայրը ծովափնեայ Կեսարիա քաղաքն էր:

Հետեւաբար, կառավարիչը քաղաքի միջնաբերդ-պալատին մէջն էր: Միջնաբերդին կեդրոնը բացօդեայ տարածութիւն կար, որ ատեն կամ դատաստանի սրահ կը կոչուէր: Այնտեղ կար նաեւ բարձր բեմ, ուր կը բազմէր կառավարիչը եւ հարցերուն իր վճիռը կ'արձակէր:

Այս վայրը Աւետարանին մէջ Քարայատակ, իսկ եբրայերէնով Կապպաթա անունը ունի: Այդպէս կոչուած էր, որովհետեւ մեծ-մեծ տաշուած քարերով շինուած էր գետինը:

Հրեայ իշխանաւորները իրենց որոշումը տալէ ետքը՝ պիտի գային եւ կառավարիչին փոխանցէին զայն: Թէ ինչպէ՞ս փոխանցեցին ի-

րենց որոշումը՝ Աւետարանիչը մեզի չ'ըսեր: Սակայն հաւանական է, որ միայն մէկ ամբաստանութեամբ չէ, որ Յիսուսը տարին կառավարիչին առջեւ: Յովհաննէսի Աւետարանէն գիտենք, որ Պիղատոս չէր հետաքրքրուած հրեաներուն կրօնական հարցերով (տե՛ս Յի 18.30-31-ը): Ուստի, անոնք Յիսուսի մեսիական յայտարարութիւնը խեղաթիւրեցին եւ քաղաքական մարդուն առջեւ զԻնք ներկայացուցին որպէս մէկը, որ ինքզինք թագաւոր կը տեսնէ, հետեւաբար՝ հակառակ է Հռոմի կայսրին:

Արդ, Պիղատոսի հարցումը կ'ըլլայ. «Դո՞ւն ես հրեաներուն թագաւորը»:

Յովհաննէսի Աւետարանէն հասկնալի է, թէ կառավարիչին մօտ Յիսուսը ներկայացուած է որպէս մէկը որ այդ յաւակնութիւնը ունի: Այնտեղ, Յիսուս կառավարիչին այսպէս կը պատասխանէ. «Այդ հարցումը դուն քեզմէ՞ կ'ընես, թէ ուրիշներ ըսին քեզի Իմ մասիս» (Յի 18.34):

Յետ կառավարիչին հարցման, Յիսուս կը պատասխանէ. «Ահա դո՞ւն կ'ըսես»: Այս պատասխանը շատ խիտ է, եւ եթէ մէկը ծանօթ չըլլայ Յիսուսի միտքին՝ դիւրաւ կրնայ սխալ հասկնալ:

Յովհաննէսի Աւետարանին մէջ Յիսուսի հաստատական պատասխանը տրուած է կառավարիչին երկրորդ անգամ հարցնելէն ետքը, եւ յետ այն բացատրութեան, որ կը պարզէ Իր թագաւորութեան մասին Յիսուսի հասկացողութիւնը:

Այնտեղ Յիսուս Իր թագաւորութեան մասին հետեւեալը ըսած է. «Իմ Թագաւորութիւնս այս աշխարհէն չէ: Եթէ Իմ Թագաւորութիւնս այս աշխարհէն ըլլար՝ անշուշտ հետեւորդներս պիտի կռուէին, որպէսզի հրեաներուն ձեռքը չիյնամ: Բայց ո՞չ, Իմ Թագաւորութիւնս այստեղէն չէ» (Յի 18.34):

Նաեւ թէ՛ «Ես ծնած եւ աշխարհ եկած եմ մէկ բանի համար՝ որպէսզի վկայեմ ճշմարտութեան մասին» (նոյնը, հմր 37):

Արդարեւ, Յիսուս Թագաւորն է հոգեւոր աշխարհին կամ ճշմարտութեան, հետեւաբար՝ Թագաւորն է բոլոր ազգերուն:

Մատթէոս գրած է, թէ Յիսուսի պատասխանէն ետք աւագ քահանաներն ու երէցները զԻնք կ'ամբաստանէին, իսկ Ինք լուռ կը մնար: Յիսուսի լռութեան դիմաց, Պիղատոս ըսած է. «Չե՞ս լսեր ասոնց ըրած ամբաստանութիւնները քեզի դէմ»: Սակայն Յիսուս շարունակած է լուռ մնալ, «ոչ իսկ բառ մը» ըսած է՝ մեծապէս զարմացնելով կառավարիչը: Ան պիտի հասկնար, թէ Յիսուս նախանձի գոհ է:

ՅԻՍՈՒՍ ՄԱՀՈՒԲԱՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԻ (15-26)

Կառավարիչը սովորութիւն ունէր ամէն Չատիկի տօնին ազատ արծակել բանտարկեալ մը, նայած թէ ժողովուրդը ո՞վ կ'ուզէր: Այդ ժամանակ նշանաւոր բանտարկեալ մը կար, որուն անունը Յեսու Բարաբբա էր:

Երբ ամբոխը հաւաքուեցաւ, Պիղատոս հարցուց.

- Այս երկուքէն ո՞ր մէկը կ'ուզէք որ ազատ արծակեմ. Յեսու Բարաբբա՞ն, թէ՞ Քրիստոս կոչուած Յիսուսը:

Պիղատոս գիտէր, որ նախանձի պատճառով մատնած էին զԱյն: Եւ մինչ Պիղատոս ատեան նստած էր, կինը լուր դրկեց իրեն՝ ըսելով.

- Այդ արդար մարդուն հետ գործ մի՛ ունենար, որովհետեւ գիշերը երագիս մէջ Իր պատճառով գլուխէս շատ բաներ անցան:

Սակայն աւագ քահանաները եւ երէցները ժողովուրդը համոզեցին, որ խնդրեն Բարաբբան ազատ արծակել եւ Յիսուսը մահուան դատապարտել: Եւ երբ կառավարիչը հարցուց անոնց «այս երկուքէն ո՞ր մէկը կ'ուզէք որ ազատ արծակեմ», անոնք պատասխանեցին.

- Բարաբբան:
Պիղատոս հարցուց.

- Բայց ի՞նչ ընեմ Յիսուսը, Քրիստոս կոչուածը:

- Թող խաչուի՛, - պատասխանեցին բոլորը:
Ան ըսաւ.

- Ի՞նչ չարիք գործած է:
Բայց անոնք աւելի բարձր աղաղակելով կ'ըսէին.

- Թող խաչուի՛:
Պիղատոս երբ տեսաւ որ օգուտ չունի շարունակելը, ընդհակառակը, ամբոխը աւելի կը խռովի, ջուր առնելով՝ ժողովուրդին դիմաց ձեռքերը լուաց եւ ըսաւ.

- Անպարտ եմ ես այս արդար մարդուն արիւնէն. ձեր գիտնալիքն է:

Ամբողջ ամբոխը պատասխանեց.
- Անոր արիւնը թող մեր եւ մեր զաւակներուն վրայ ըլլայ:
Այն ատեն Պիղատոս ազատ արծակեց Բարաբբան, իսկ Յիսուսը խարազանել տալէ ետք՝ զինուորներուն յանձնեց, որպէսզի խաչեն:

Աւետարանիչը կառավարիչին մէկ սովորութեան կ'ակնարկէ: Չորս աւետարանիչներն ալ ատոր կ'ակնարկեն: Պիղատոս, ըստ իր սովորութեան, ամէն Չատիկի տօնին մէկ բանտարկեալ ազատ կ'արծակէր: Ուստի, հասկցած ըլլալով Յիսուսի արդար ըլլալը, առաջին

փորձ մը կ'ընէ գայն ազատ արծակելու:

Այն ատեն անուանի բանտարկեալ մը եղած է, որ Յեսու Բարաբբա կը կոչուէր: Մատթէոսի Աւետարանը մեզի տեղեկութիւն չի տար անոր մասին: Մարկոսի եւ Դուկասու Աւետարաններէն կը տեղեկանանք, թէ ան բանտարկուած էր խռովարարներու հետ, որոնք մէկը սպաննած էին:

Ողբերգութիւն է, որ տեղի կ'ունենայ: Ընտրութիւն կը կատարուի, որ իրարու բոլորովին հակադիր երկու անձնաւորութիւններէ՝ ժխտականին ի նպաստ կ'ըլլայ: Բարաբբա քաղաքական ապստամբ եւ մարդասպան էր, մինչդեռ Յիսուս արդար էր:

Յեսու Բարաբբայի անուան մասին բացատրութիւն տամ:

Յեսու անունը հայերէնի մէջ տարբեր է քան Յիսուս անունը: Սակայն յունարէն բնագիրին երբ նայինք, կը տեսնենք, որ թէ՛ Յիսուսի անունը եւ թէ՛ Յեսուի անունը նոյն ձեւով գրուած են: Յիսուս եւ Յեսու երկուքն ալ «Յիսուս» կոչուած են: Իսկ ինչո՞ւ մեր հայրերը անուններուն միջեւ տարբերութիւն դրած են: Պարզապէս՝ որպէսզի տարբերեն մէկը միւսէն: Յիսուսի անունը այնքան սրբազան էր, որ կարելի չէր նոյն անունը գործածել նաեւ ապստամբ մարդասպանի համար: Այստեղ նաեւ յիշեմ, որ մեր թարգմանիչները նոյնը ըրած են Մովսէսի յաջորդ Յեսուի անուան ալ հետ: Ան ալ Յիսուս կը կոչուէր: Անոր պարագային սակայն, տարբերումի սկզբունքը ուզած էր գայն ցոյց տալ որպէս խոնարհ անձնաւորութիւն, քան Աստուծոյ Որդին:

Իսկ Յեսու Բարաբբայի անուան երկրորդ մասը ի՞նչ կը նշանակէ:

«Բարաբբա»-ն արամերէն անուն է, որ «հօրը որդին» իմաստը ունի:

Յիսուսի եւ Յեսու Բարաբբայի ատեան քով-քովի բերուիլը՝ ուշագրաւ հանդիպում է: Երկու հայրերու որդիներ, որոնց ազատ արձակումը ձգուած է ամբոխի ընտրութեան: Յիսուս երկնաւոր Հօր Որդին է, իսկ Յեսու՝ չարութեան հօր կամ սատանայի որդին: Ասկա պատահակա՞ն երեւոյթ է, թէ՞ աստուածային կանխագիտութեան դասաւորումը:

Պիղատոս երկուքէն մէկը ընտրելու առաջարկը կ'ընէ, որովհետեւ գիտէր թէ անոնք նախանձի պատճառով Յիսուսը իր ձեռքը մատնած էին: Յիսուսի անմեղութեան մասին Պիղատոսի համոզումը հաստատող վկայութիւն մը եւս արծանագրուած է: Ըստ ավետարանիչին, մինչ Պիղատոս ատեան նստած էր, իր կինը լուր կը դրկէ իրեն՝ ըսելով. «Այդ արդար մարդուն հետ գործ մի՛ ունենար, որովհետեւ գիշերը երագիս մէջ Իր պատճառով գլուխէս շատ բաներ անցան»:

Պիղատոսի կնոջ մասին շատ բան չենք գիտեր: Ըստ ավանդութեան, անունը Պրոգուլա եղած է: Ան ետքը քրիստոնեայ դարձած է:

Թէ՛ անոր տեսած երագին մանրամասնութիւնները ի՞նչ էին չենք գիտեր: Որեւէ տեղ երագը չէ արծանագրուած: Սակայն յստակ է, որ այդ երագով իրեն յայտնուած էր Յիսուսի արդար ըլլալը:

Պիղատոս չի յաջողիր Յիսուսը ազատել, որովհետեւ ավագ քահանաները եւ երէցները ամբոխը համոզած էին, որ անիկա Բարաբբայի ազատ արծակուիլը ուզէ, եւ Յիսուսի դատապարտուիլը մահուան:

Յիսուսը խաչ բարձրացնելու ամբոխին կատաղի աղաղակին դիմաց Պիղատոս կը վախնայ, որ եթէ ընդդիմանայ առիթ տուած կ'ըլլայ ըմբոստութեան, ուստի կը նախընտրէ ձեռքերը լուալով ըսել. «Անպարտ եմ ես այս արդար մարդուն արիւնէն. ձեր գիտնալիքն է»։ Յովհաննէսի Աւետարանէն գիտենք նաեւ, որ հրեայ ղեկավարները Պիղատոսը նեղ կացութեան կը մատնեն կամ կը վախցնեն զինք ըսելով. «Եթէ ազատ արծակես (Յիսուսը) կայսրին բարեկամ չես: Ով որ ինքզինք թագաւոր կը կոչէ՝ հակառակ է կայսրին» (Յի 19.12): Այս սպառնալիքին վրայ Պիղատոսի համար անկարելի կը դառնար ճիգ ընել եւ ազատել Յիսուսը: Ան ինքզինք անպարտ կը յայտարարէր: Իսկ ամբոխը, որ Յիսուսի դէմ ատելութեամբ կը բորբոքէր, կուրցած ծանրակշիռ խօսքով մը («Անոր արիւնը թող մեր եւ մեր զաւակներուն վրայ ըլլայ») ինքզինք եւ իր սերունդները պատասխանատու կը կեցնէր: Անկասկած, ամբոխը իրաւունք չունէր այդպիսի պատասխանատուութիւն բեռցնել իր սերունդներուն վրայ, որովհետեւ Յիսուսի մահուան դատապարտուիլը միայն ու միայն մեղքն էր ավագ քահանաներուն, երէցներուն կամ այն օրերու հրեայ ղեկավարներուն ու ամբոխին:

Այն ատեն,- կ'ըսէ Աւետարանիչը,- Պիղատոս ազատ արծակեց Բարաբբան, իսկ Յիսուսը խարազանել տալէ ետք՝ զինուորներուն յանձնեց, որպէսզի խաչեն:

ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԿԸ ԾԱՂԻՇՆ ՅԻՍՈՒՍԸ (27-31)

Զինուորները Յիսուսը տարին կառավարիչին պալատը, ուր անոր շուրջ հաւաքուեցաւ զինուորներու ամբողջ գունդը: Ապա մերկացուցին Յիսուսը եւ Անոր ուսերուն նետեցին կարմիր քղամիդ մը: Փուշէ պսակ մը հիւսելով՝ դրին Անոր գլխուն եւ եղէգ մըն ալ տուին աջ ձեռքին: Զինուորները ծունկի կու գային Անոր առջեւ եւ ծաղրելով կ'ըսէին. «Ողջո՞յն, հրեաներո՞ւ թագաւոր»: Կը թքէին Անոր երեսին, եղէգը ձեռքէն կ'առնէին եւ գլխուն կը գարնէին: ԶԱյն ծաղրելէ

ետք, վրային հանեցին քղամիդը եւ հազցուցին Իր զգեստները, եւ ապա տարին զԱյն խաչելու:

Դէպի չարչարանքներ եւ խաչելութիւն Յիսուսի ճամբան՝ այս անգամ կը հանդիպի հռոմայեցի զինուորներուն: Յիսուսը նուաստացնելու կարգը հասած էր անոնց: Յիսուս դատապարտուած է արդէն եւ սահմանուած խաչուելու:

Ան որ խաչելութեամբ մահապատիժի պիտի ենթարկուէր՝ նախ դաժանօրէն կը խարազանէին: Յիսուս եւս այդպէս խարազանուեցաւ:

Յիսուս արիւնլուայ դարձած էր: Ջինուորները զԱյն խաչելութեան տանելէ առաջ՝ ահա կ'ուզեն ծաղրել: ՋԱյն կառավարիչին պալատը կը տանին, Անոր շուրջ կը հաւաքուին, կը մերկացնեն եւ ուսերուն կը նետեն կարմիր քղամիդ մը (քղամիդը հռոմայեցի բարձրաստիճան զինուորականներու ուսին դրուող պատուական լաթ էր): Որպէս թագ փուշէ պսակ հիւսելով կը դնեն Անոր գլխուն, եւ որպէս մական՝ եղէգ մը կու տան աջ ձեռքին, ապա ստորադասներու պէս ծունկի գալով Անոր առջեւ՝ վրան կը խնդան ըսելով. «Ողջո՛յն, հրեաներո՛ւ թագաւոր»:

Յետոյ, ծաղրելէ բաւականացած զինուորները կը հանեն քղամիդը, կը հազցնեն Իր զգեստները, ու զԱյն խաչելու կը տանին:

ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ (32-44)

Երբ դուրս կ'ելլէին, Սիմոն անունով Կիրենացի մէկը գտան եւ ստիպեցին որ Յիսուսի խաչը շալկէ: Երբ եկան այն վայրը, որ կը կոչուէր Գողգոթա, որ կը նշանակէ զանկի վայր, հոն լեղիով խառն գինի տուին որ խմէ: Երբ համը առաւ՝ չուզեց խմել: Ապա խաչ հանեցին զԻնք եւ վիճակ ձգելով հագուստները իրենց միջեւ բաժնեցին: Ահա այսպէս իրականացաւ Տիրոջ Խօսքը՝ մարգարէին բերանով ըսուած. «Հագուստներս իրենց միջեւ բաժնեցին եւ Իմ վերարկուիս վրայ վիճակ ձգեցին»: Ջինուորները հոն նստած՝ պահակութիւն կ'ընէին Իր վրայ: Իր գլխուն վրայ դրին նաեւ Իր դատապարտութեան արձանագրութիւնը, որ կ'ըսէր. «Ասիկա է Յիսուսը՝ հրեաներու թագաւորը»: Այն ատեն Իրեն հետ խաչեցին երկու աւազակներ ալ, մէկը Իր աջ կողմը, իսկ միւսը՝ ձախ:

Անոնք որոնք կ'անցնէին խաչին առջեւէն, կը նախատէին զԻնք եւ իրենց գլուխը շարժելով՝ կ'ըսէին.

- Դուն տաճարը պիտի քանդէիր եւ երեք օրէն շինէիր, հա՞. եթէ Աստուծոյ Որդի ես՝ Դուն Քեզ ազատէ՛ եւ վար իջիր խաչէն:

Նոյնպէս աւագ քահանաները Օրէնքի ուսուցիչներուն եւ երեք-

ներուն հետ կը ծաղրէին զԻնք ու կ'ըսէին.

- Ուրիշները ազատեց, բայց Ինքզինք չի կրնար ազատել: Եթէ Իսրայէլի թագաւորն է՝ թող հիմա խաչէն վար իջնէ, որպէսզի հաւատանք Իրեն: Աստուծոյ վրայ յոյսը դրած էր, չէ՞, եւ կ'ըսէր՝ թէ «Աստուծոյ Որդի եմ»: Շատ աղէկ, Աստուած թող զԻնք ազատէ հիմա, եթէ զԱյն կը սիրէ:

Նմանապէս, Իրեն հետ խաչուած աւազակներն ալ կը նախատէին զԻնք:

Ջինուորները Յիսուսի կու տան խաչափայտը:

Սկիզբը Յիսուս գայն կը կրէ, սակայն չարչարանքներէն սպառած՝ հաւանաբար չի դիմանար խաչափայտի ծանրութեան: Ուստի, զինուորները տեսնելով որ Յիսուս ի վիճակի չէ մինչեւ Գողգոթա գայն կրելու, կը բռնեն Սիմոն Կիրենացի անունով մէկը, որ ըստ Մարկոսի եւ Դուկասի՝ արտէն կու գար (Մր 15.21: Դկ 23.26), եւ կը ստիպեն որ Յիսուսի խաչը շալկէ:

Կիրենիան այսօրուան Լիպիոյ մէջ ծովեզերեայ նահանգ մըն էր, ուր Քրիստոսէ կարճ ժամանակ առաջ, յետ Հռոմի դէմ ապստամբութեան, պարտուած հրեաներ աքսորուած էին: Սակայն աքսորավայրը վերածուած էր գաղութի: Սիմոն Կիրենացի այնտեղէն էր:

Համատեսական Աւետարանները Սիմոն Կիրենացին կը յիշեն: Մարկոս արձանագրած է նաեւ անոր գաւակներուն անունները (Մր 15.21): Ան իրեն վիճակուած խաչաբարձութեամբ՝ Յիսուսի հետեւորդ դարձաւ: Թերեւս ալ՝ անկէ առաջ արդէն հետեւորդ էր, ու այնտեղ փութացած էր՝ տեսնելու համար իր Վարդապետը:

Սիմոն Կիրենացի Յիսուսի խաչը վերցնելով՝ փրկութեան պատմութեան մէջ յաւիտեան յիշատակութեան արժանի եղաւ: Քրիստոնէաներ սկիզբէն մինչեւ այսօր զինք օրհնութեամբ կը յիշեն:

«Երբ եկան այն վայրը որ կը կոչուէր Գողգոթա, որ կը նշանակէ զանկի վայր ...», կ'ըսէ: «Գողգոթա» անունը արամերէնէն կու գայ: Իսկ ի՞նչ կը նշանակէ «զանկի վայր», ինչի՞ ալկնարկութիւն է: Կան տարբեր բացատրութիւններ:

Երեք տարբեր բացատրութիւններ առաջարկուած են.

- 1) Փոքրիկ բլուր է, որ զանկի կը նմանէր: Այդ պատճառով ալ գայն «Գողգոթա» կոչած էին:
- 2) Բլուրը կառափնարան եղած է, այսինքն՝ գլխատումի վայր: Ատկէ ալ՝ անունը:
- 3) Ըստ աւանդութեան, այն տեղը ուր Յիսուս խաչուեցաւ, Ադամի մահուան տեղը եղած է: Յիսուսի խաչելութեան պատկերներուն

մէջ խաչին տակ գանկ նկարուած կ'ըլլայ: Այդ գանկը տեսնուած է որպէս Ադամի գանկը, հետեւաբար խորհրդանշանը Ադամի մահուան եւ մարդկային սեռին մահկանացութեան:

«...Հոն լեղիով խառն գինի տուին որ խմէ: Երբ համը առաւ չուզեց խմել», կ'ըսէ: «Լեղի»-ն զմուռսն է, որ տարբեր-տարբեր նպատակներով գործածուած է:

Զմուռսը որպէս անուշահոտ կը գործածուէր:

Որպէս թմրեցնող հեղուկ գայն գինիին կը խառնէին, որպէսզի գինիին ազդեցութիւնը աւելի զօրանար: Զմուռսով խառնուած գինին սովորութիւն էր տալ անոնց, որոնք մահապատիժի պիտի ենթարկուէին: Չայն կու տային մահուան պատժապարտներուն, որպէսզի անոնք, թմրելով, նուազ ցաւ զգային ու տառապէին:

Յիսուս չուզեց խմել Իրեն տրուած լեղին:

Այդ մերժումը գիտակցական արարք էր: Իր ամբողջ առաքելութիւնը կամաւոր յանձնառութիւն եւ զոհողութիւն էր: Որովհետեւ Ինք Իր կամքով յօժարած էր յանձն առնել Իր ճամբան, ուստի ճշմարիտ ընթացք պիտի չըլլար յանձնառութեան ծանրութենէն եւ զոհողութեան ցաւերէն խուսափիլը: «Լեղիով խառն գինի»-ն խմելը խուսափիլ պիտի ըլլար, եւ Ինք Իր ստանձնած յանձնառութեան եւ զոհողութեան մակարդակէն նահանջած պիտի ըլլար:

«Ապա խաչ հանեցին զԻնք», կ'ըսէ: Հռոմէական Կայսրութեան մէջ, խաչի մահը ամէնէն դառն մահապատիժներէն մէկն էր: Չորս տեսակ խաչեր կային: Այդ տեսակներէն մէկը պարզ գերան էր, որ առանց թելի կ'ըլլար: Երկրորդ տեսակը կը նմանէր լատինական T տառին: Երրորդ տեսակը մեր գիտցածն էր: Իսկ չորրորդը լատինական X տառին կը նմանէր:

Խաչի մահուան դատապարտուածները՝ անոր վրայ դանդաղօրէն կը մահանային: Ոմանք կը կապուէին խաչին վրայ, ուրիշներ ալ կը գամուէին: Կապուածները երկար ժամանակ մնալէն (ոմանք՝ մինչեւ եօթը օր) ֆիզիքապէս կը սպառէին. անոնց մկանները եւ ոսկորները կը քայքայուէին ու պատճառ կ'ըլլային, որ շնչահեղձ ըլլան: Գամուածներուն պարագային՝ մկաններու եւ ոսկորներու սպառումէն առաջ՝ արինաքամութիւնը պատճառ կ'ըլլար անոնց մահուան:

Գիտենք, որ Յիսուս շատ շուտ մահացաւ, հաւանաբար՝ որովհետեւ խիստ խարազանահարութենէ սպառած էր արդէն:

«...Վիճակ ձգելով՝ հագուստները իրենց միջեւ բաժնեցին: Ահա այսպէս իրականացաւ Տիրոջ Խօսքը, մարգարէին բերանով ըսուած. «Հագուստներս իրենց միջեւ բաժնեցին եւ Իմ վերարկուիս վրայ վիճակ ձգեցին»: Հռոմէական աշխարհին մէջ ոեւէ մահապարտի հա-

գուստները դահիճին իրաւունքն էին: Ուստի, զինուորները Յիսուսի հագուստները ունենալու համար վիճակ կը ձգեն:

Ըստ իր ապացուցական եղանակին, աւետարանիչը Յիսուսի հետ պատահածին կանխասացութիւնը կը յիշեցնէ՝ մէջբերելով Սղ 22.18-ը:

22-րդ սաղմոսը այն կարեւոր կանխասացութիւններէն մէկն է, որ Քրիստոսի խաչելութիւնը կը ներկայացնէ զարմանալի մանրամասնութիւններով: Օրինակ՝ 16-18-րդ համարները կ'ըսեն. «Չարերու ամբողջ բանակ մը զիս պատեց, չորս կողմս բոլորուեցան շուներու պէս, ձեռքերս ու ոտքերս ծակծկեցին: Բոլոր ոսկորներս կրնամ համրել, իսկ թշնամիներս չարախնդութեամբ կը դիտեն զիս: Հագուստներս իրենց վրայ վիճակ կը ձգեն» (Սղ 22.16-18):

«Իր գլխուն վրայ դրին նաեւ Իր դատապարտութեան արծանագրութիւնը, որ կ'ըսէր. “Ասիկա է Յիսուսը՝ իրեաներուն թագաւորը”»: Սովորութիւն էր, որ խաչին վրայ կախուէր պատժեալին դատապարտութեան արծանագրութիւնը: Ասիկա կը բացատրէր մահապատիժին պատճառը: Յիսուսի խաչին վրայ կախուած արծանագրութիւնը հեզնական բնոյթ ունէր: Հասկնալի է, որ Պիղատոսի հեզնանքը ուղղուած էր իրեաներուն:

Ապա դրուագը կը յիշէ, թէ Յիսուսի աջ եւ ձախ կողմը երկու աւազակ ալ կը խաչեն: Ասիկա կատարուան էր Եսայի Մարգարէի այն խօսքին, որ կ'ըսէ. «Չարագործներու կարգին դատուեցաւ» (Ես 53.12):

«Անոնք որոնք կ'անցնէին խաչին առջեւէն, կը նախատէին զԻնք եւ իրենց գլուխը շարժելով՝ կ'ըսէին. “Դուն տաճարը պիտի քանդէիր եւ երեք օրէն շինէիր, հա՞” Եթէ Աստուծոյ Որդի ես՝ Դուն Քեզ ազատ եւ վար իջիր խաչէն”»: Ահա ժողովուրդն ալ կը նախատէ Յիսուսը: Նախատած էին իրէից Ատեանը, Հերովդէս ու իր զինուորները եւ Պիղատոսի զինուորները:

Ժողովուրդին նախատինքը երկու տարր ունի. առաջինը իրէից Ատեանին ամբաստանութեան կրկնութիւնն է, իսկ երկրորդը՝ մեզի կը յիշեցնէ Յիսուսի փորձութիւնը անապատին մէջ: Փորձութեան դրուագը երբ կը կարդանք, կը տեսնենք որ սատանան Յիսուսի կը դիմէ ըսելով. «Եթէ Աստուծոյ Որդի ես»: Դրուագը կարծէք ըսել կ'ուզէ, թէ սատանան ժողովուրդին ճամբով կու գար Յիսուսը փորձելու: Յիսուս եթէ մտիկ ընէր ժողովուրդին ըսածը եւ Իր խաչելութենէն իրաժարէր իրաժարած պիտի ըլլար Իր առաքելութենէն:

Յիսուս չի պատասխաներ փորձութեան, այլ՝ կը մնայ առ Աստուած կատարեալ հնազանդութեան մէջ: Հօր կամքն էր, որ Ինք մահուան բաժակը ըմպէր: Յիսուս անկէ իրաժարիլ չկամեցաւ:

Հրաժարիլ Աստուծոյ կամքէն՝ հրաժարիլ պիտի ըլլար մարդոց փրկութեան աստուածային ծրագիրէն: Ան խաչին մահը ստանձնելով իր արեամբ գնեց մարդոց փրկութիւնը եւ զանոնք վերստին սահմանեց յաւիտենական կեանքին:

Կը տեսնենք, որ աւագ քահանաներն ալ Օրէնքի ուսուցիչներուն եւ երէցներուն հետ կը ծաղրեն Յիսուսը: Անոնց միտքը այնքան խաւարած էր, որ կը յամառէին մնալ մեսիական թիւր ակնկալութեան մէջ: Ըստ իրենց, Մեսիան այնպիսի գօրութեան տէր մէկը պիտի ըլլար, որ նման խայտառակ մահուամբ պիտի չաւարտէր իր կեանքը, այլ՝ յաղթականօրէն ամէն ինչ իրեն պիտի ենթարկէր, իր ժողովուրդին ազատագրութիւն բերէր եւ յաւիտենական երկրաւոր բարիքներով լեցնէր անոր կեանքը:

«Նմանապէս,- կ'ըսէ դրուագը,- Իրեն հետ խաչուած աւագակներն ալ կը նախատէին»: Մատթէոս Աւետարանիչ, իր աղբիւրին՝ Մարկոս Աւետարանիչին պէս, նոյնը գրած է, մինչդեռ Ղուկաս Աւետարանիչ՝ հետեւեալը. «Կախուած չարագործներէն մէկը կը նախատէր զԱյն՝ ըսելով. «Ղուն չե՞ս Քրիստոսը, ազատէ՛ թէ՛ Ղուն Քեզ, թէ՛ մեզ»:

Բայց միւս չարագործը սաստեց զայն եւ ըսաւ. «Աստուծմէ չե՞ս վախնար, դուն՝ որ նոյն պատիժը կը կրես: Տակաւին մեր պատիժը իրաւացի է, որովհետեւ մենք մեր ըրածին արժանի հատուցումն է որ կը ստանանք, մինչդեռ Ասիկա գէշ բան մը չէ ըրած» (Ղկ 23.39-41): Հաւանական է, որ Ղուկաս Աւետարանիչ իր այս տեղեկութեան համար ունեցած է այլ աղբիւր: Ղուկասի գրածով՝ Յիսուսի անսահման գթառատութիւնը կը յայտնուի մեզի:

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՀՐ (45-56)

Կէսօրին խաւարը պատեց ամբողջ երկիրը, մինչեւ ժամը երեք: Ժամը երեքի ատենները Յիսուս բարձրածայն աղաղակեց, ըսելով.

- «Էլի՛, էլի՛, լամա՛ սաբաքթանի», որ կը նշանակէ. «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ լքեցիր զիս»:

Հոն գտնուողներէն անոնք որոնք լսեցին՝ ըսին.

- Եղիան կը կանչէ:

Անոնցմէ մէկը անմիջապէս գնաց եւ սպունգը քացախին մէջ թաթխելով՝ եղէգին ծայրը անցուց եւ տուաւ Յիսուսի, որ խմէ: Ուրիշներ ալ կ'ըսէին.

- Չգեցէ՛ք տեսնենք Եղիան պիտի գա՞յ զինք ազատելու:

Իսկ Յիսուս դարձեալ բարձրածայն աղաղակեց եւ հոգին աւանդեց: Եւ ահա՛ տաճարին վարագոյրը պատռուեցաւ եւ վերէն վար եր-

կու մասի բաժնուեցաւ, երկիրը շարժեցաւ եւ ժայռերը ձեղքուեցան, գերեզմանները բացուեցան, եւ շատ մը սուրբ ննջեցեալներ յարութիւն արին: Անոնք գերեզմաններէն ելան եւ Յիսուսի յարութենէն ետք Սուրբ Քաղաքը մտան, ուր շատերու երեւցան:

Երբ հարիւրապետը եւ անոր հետ գտնուող զինուորները, որոնք պահակութիւն կ'ընէին, տեսան երկրաշարժը եւ պատահածները, սաստիկ վախցան եւ ըսին.

- Իրապէս որ ասիկա Աստուծոյ Որդին էր:

Հոն բազմաթիւ կիներ ալ կային, որոնք, հեռուն կեցած, կը դիտէին. անոնք Գալիլիայէն հետեւած էին Յիսուսի ծառայելու համար Անոր: Անոնց մէջ էին Մարիամ Մագդաղենացին, Յակոբի եւ Յովսէփ մայրը՝ Մարիամը, ինչպէս նաեւ Ջերեղէոսի որդիներուն մայրը:

Գրաբար թարգմանութիւնը, հետեւելով յունարէն բնագիրին, գրած է. «Եւ ի վեց ժամէ աւուրն՝ խաւար եղեւ ի վերայ ամենայն երկրի մինչեւ ցիւն ժամ»: Ասիկա հին ժամանակացոյցն է: «Վեց ժամ»-ը այսօր կը համապատասխանէ կէսօրին: Հետեւաբար, Յիսուսի խաչելութեան յաջորդած է երկինքի խաւարումը, որ տեսած է կէսօրէն մինչեւ յետ միջօրէի ժամը երեքը:

Մատթէոս մեզի չէր ըսած, թէ Յիսուս ո՞ր ժամուն խաչ բարձրացաւ: Մարկոսի Աւետարանին մէջ կը կարդանք, որ անիկա եղաւ առաւօտեան ժամը իննին (Մր 15.25):

Կ'ըսէ. «Խաւարը պատեց ամբողջ երկիրը»: Ասով ի՞նչ հասկնալ: Ամբողջ աշխարհը: Արդեօք Պաղեստինը, կամ միայն Հրէաստան նահա՞նգը:

Այն ժամանակներու պատմագրութեան մէջ, ո՛չ ամբողջ աշխարհի խաւարման մասին որեւէ տեղեկութիւն ունինք, ո՛չ ալ Պաղեստինի: Ուստի, կարելի է ըսել, թէ «ամբողջ երկիր»-ով հասկցուած է Հրէաստան նահանգը:

Գիտենք, որ Ջատկուան ժամանակն էր: Ըստ Ելքի գիրքին, Ջատկկին թուականը 14 Նիսանի երեկոն է: Այդ թուականը կը հանդիպի լուսինի լրման: Բնականօրէն, լուսինի լրման ժամանակ խաւարում երբեք կարելի չէ, որովհետեւ արեւը եւ լուսինը իրարու դիմաց կը գտնուին: Արդ, Յիսուսի խաչելութեան ատեն պատահած խաւարումը՝ Աստուծոյ կողմէ տրուած բացառիկ նշան է:

Ղրուագին առաջին գերբնական նշանն է խաւարման այս երեւոյթը: Անոր երեք ժամերը կը խորհրդանշեն Յիսուսի նախատուած եւ մերժուած ըլլալը: Սակայն, միաժամանակ, դատաստանը բոլոր զի՞նք նախատողներուն եւ մերժողներուն, նաեւ ու մանաւանդ՝ խաւարի իշ-

խանին:

«Յիսուս բարձրածայն աղաղակեց՝ ըսելով. «Էլի՛, էլի՛, լամա՞ սաբաբթանի», որ կը նշանակէ՝ «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ լքեցիր զիս»»: Շատերու համար այս աղաղակը անհասկնալի է: Ան որ Աստուծոյ համագոյակից էր՝ ինչպէ՞ս կրնար Աստուծոյ ըսել. «Էլի՛, էլի՛, լամա՞ սաբաբթանի»:

Մակերեսային դատումով, Յիսուսի այս աղաղակը մեկնաբանուած է որպէս արտայայտութիւն խորունկ յուսահատութեան կամ Աստուծոյ դէմ ընդվզումի: Սակայն, ճշմարտութեան մէջ, այդպէս չէ, այլ՝ ճիշդ հակառակն է: Կարելի է գէթ երկու բան մատնանշել.

Յիսուս յանձն առաւ մարդկութեան մեղքերը կրել: Ան Ինքզինք զոհ ընծայեց ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Այն պահուն երբ Իր վրայ առաւ մարդկութեան մեղքերը՝ ինքնաբերաբար պիտի ունենար Աստուծմէ խզուելու փորձառութիւնը: Մեղքերը մեզ կը խզեն Աստուծմէ: Յիսուս մէկ պահուան համար զգաց Աստուծմէ խզուելուն ահաւորութիւնը եւ բարձրածայն աղաղակեց:

Յիսուսի աղաղակը յուսահատութիւն չի պատմեր, այլ՝ յոյս, որ Աստուծոյ վրայ անխախտելի վստահութիւն ունի: Պէտք չէ մոռնալ, որ աղաղակը 22-րդ սաղմոսին առաջին համարն է: Ամբողջ սաղմոսը աղօթքն է բարեպաշտ հոգիի մը, որ առ Աստուած հաստատուն վստահութիւն ունի: Յիսուս, հետեւաբար, կ'արտասանէ Իր մասին ըսուած սաղմոսին առաջին համարը: Այդ արարքով, հակառակ Իր յոյժ անտանելի վիճակին, յայտնած կ'ըլլայ Աստուծոյ վրայ Իր անխախտելի վստահութիւնը: Ասիկա նաեւ կը հաստատուի, երբ կը կարդանք Ղուկասու եւ Յովհաննէսի Աւետարաններուն մէջ արծանագրուած Յիսուսի վերջին խօսքը (Ղկ 23.46: Յհ 19.30):

«Հոն գտնուողներէն անոնք լսեցին ըսին. «Եղիան կը կանչէ՞»: Որո՞նք էին հոն գտնուողները: Ենթադրուած է, թէ հռոմայեցի զինուորներ էին: Իսկ ինչո՞ւ եւ ուրկէ՞ Եղիա Մարգարէին անունը:

«Էլի» բառը «Աստուածս» կը նշանակէ: Բայց ասիկա ընկալելի էր նաեւ որպէս մարգարէին անունը: Այդ ընկալումին երկու պատճառ կար: Հրէական յայտնութենական ավանդութեան մէջ ակնկալութիւնը կար, թէ Եղիա Մարգարէն դարձեալ պիտի գար: Նաեւ Յիսուսի ժամանակ կը տիրէր այն հաւատալիքը, թէ երբ մարդիկ նեղութեան մէջ ըլլային եւ Եղիա Մարգարէն կանչէին՝ ան օգնելու կը փութար: Ուստի, խաչին վրայէն «Էլի՛, էլի՛»-ն լսելով՝ հոն գտնուողները խորհեցան, որ Յիսուս Եղիա Մարգարէն Իրեն օգնութեան կը կանչէ:

«Անոնցմէ մէկը անմիջապէս գնաց եւ սպունգը քացախին մէջ թաթխելով՝ եղէգին ծայրը անցուց եւ տուաւ Յիսուսի, որ խմէ»:

Յիսուսի տրուածը զինիի քացախ էր: Հռոմայեցի զինուորները միշտ զինի կ'ունենային իրենց մօտ: Եւ որովհետեւ չէին կրնար յարմար պայմաններու մէջ պահել զայն կը քացխէր, ու իրենք, կարենալ խմելու համար, ջուր կը խառնէին անոր: Յիսուսի տրուածն ալ ջրախառն քացախ ըլլալու էր: Հաւանական է, որ Յիսուս զայն չխմեց: Սպունգը երկարողը չէր անդրադառնար, թէ ինք մարգարէութեան մը իրականացնողը կ'ըլլար: 69-րդ սաղմոսին մէջ ըսուած էր. «Երբ ծարաւ էի՝ քացախ տուին խմելու» (Սղ 69.21):

Այս արարքին հետեւած հեզնական խօսքէն ետք, Յիսուս դարձեալ բարձրածայն կ'աղաղակէ եւ հոգին կ'աւանդէ: Ապա ւաւետարանիչը կը գրէ, թէ տաճարին վարագոյրը պատռուեցաւ եւ վերէն վար երկու մասի բաժնուեցաւ, երկիրը շարժեցաւ եւ ժայռերը ձեղքուեցան, գերեզմանները բացուեցան եւ բազմաթիւ սուրբ ննջեցեալներ յարութիւն առին: Անոնք գերեզմաններէն ելան եւ Յիսուսի յարութենէն ետք Սուրբ Քաղաքը մտան, ուր շատերու երեւցան:

Թէ՛ Մատթէոսի եւ թէ՛ Մարկոսի մօտ կ'ակնարկուի աղաղակին, սակայն անոր բովանդակութիւնը չ'ըսուիր: Ղուկասու մօտ կը կարդանք, թէ Յիսուս աղաղակելով ըսած է. «Հա՛յր, ձեռքերուդ մէջ կ'աւանդեմ հոգիս» (Ղկ 23.46): Յովհաննէսի մօտ ալ թէ՛ «ամէն ինչ վերջացած է» (Յհ 19.30): Այս երկուքը Յիսուսի աղաղակին բովանդակութիւնն են:

«Հա՛յր, ձեռքերուդ մէջ կ'աւանդեմ հոգիս» խօսքով, Յիսուս կը յայտնէ Իր ծայրագոյն խոնարհութիւնը: Մինչ Իր շուրջ սատանայական ոյժը գիւնք կը հրաւիրէր հպարտութեան արարքի («Եթէ Աստուծոյ Որդի ես՝ Ղուս Քեզ ազատէ՛ եւ վա՛ր իջիր խաչէն», կամ «Եթէ Իսրայէլի թագաւորն է՝ թող հիմա խաչէն վար իջնէ, որպէսզի հաւատանք Իրեն»), Ինք բացարձակապէս մնաց հաւատարիմ Աստուծոյ կամքին, եւ այդպէս՝ դատապարտութեան սահմանեց սատանան, որ հպարտութեամբ անկեալ հրեշտակ է ու մարդոց անկումին համար ալ՝ հոգիներուն մէջ հպարտութիւն կը սերմանէ: Ուստի, առաջին հերթին, Յիսուսի աղաղակը դատապարտութիւնն է սատանային:

«Ամէն ինչ վերջացած է» խօսքով ալ կը յայտնէ կատարումը Աստուծոյ փրկագործական ծրագիրին: Յիսուսի խաչուելով՝ իր լրումին կը հասնի Աստուծոյ ծրագիրը: Խաչին վրայ կատարուեցան Յիսուսի մասին Հին Կտակարանին բոլոր նախածայնութիւնները:

Տէրունական խաչը Աստուծոյ վախճանաբանական նշանն է, որով կը դատապարտուի սատանան: 5-րդ դարու երզը այդ մասին այսպէս կ'ըսէ.

«Աղաղակէր աստուածային բարբառովն Տէր՝ Յիսուս ի խաչին,

եւ ընդդէմ աստեղաց կնքէր հրացեալ աստուածային սուրբ ծեռօքն, եւ բարկութեամբ զարթուցեալ ի վերայ խաւարասէր իշխանին», այսինքն թէ

«Տէրը Յիսուս խաչին վրայ աստուածային բարբառով կ'աղաղակէր, եւ խստագոյն յառնումով խաւարասէր իշխանին ու անոր հետեւորդներուն դատապարտութիւնը կը կնքէր կրակի վերածուած Իր աստուածային սուրբ ծեռքերովը»:

«Եւ ահա տաճարին վարագոյրը պատռուեցաւ եւ վերէն վար երկու մասի բաժնուեցաւ»:

Ասիկա երկրորդ գերբնական նշանն է:

Տաճարը երկու վարագոյր ունէր: Մէկը տաճարին դուռը կը ծածկէր, իսկ միւսն ալ «Սրբութիւն Սրբոց» կոչուած սենեակը՝ «Սրբութիւն» կոչուած սրահէն:

«Սրբութիւն Սրբոց»-ը խորհրդանիշն էր Աստուծոյ ներկայութեան: Ջայն ծածկող վարագոյրը կը յայտնէր դէպի Աստուած ճամբուն փակ ըլլալը: Այդ ճամբան փակ էր, որովհետեւ մարդիկ չէին դադրեր մեղանչելէ:

Արդ, Տաճարի վարագոյրին պատռուելովը Աստուծոյ մօտենալու ճամբան կը բացուէր: Յիսուսի խաչին շնորհիւ՝ Աստուծոյ մօտենալու որեւէ արգելք չկայ այլեւս: Խաչը այդ արգելքին բարձունքն է:

Վարագոյրին պատռուելուն վերաբերեալ երկրորդ բացատրութիւն ալ կարելի է տալ: Վարագոյրը խորհրդանշանն է կրօնական հին դրութեան: Անոր պատռուելովը՝ մեզի յայտնուած է հին կրօնականութեան դադրիլը:

Հրէական աւանդութեան մէջ հետաքրքրական մանր դրուագ կայ:

Նշանաւոր ռաբբի մը՝ Եոհանան Պէն Ջաքբա, վարագոյրին պատռուելուն դիմաց այս խօսքը ըսած է. «Ո՛վ տաճար, ինչո՞ւ կը խռովիս, գիտե՞մ որ քու վախճանդ հասած է»: Հետեւաբար, ռաբբին վարագոյրի պատռուելուն մէջ տեսած է Տաճարին վախճանը, կամ հին կրօնականութեան վախճանը:

Երրորդ գերբնական նշանը երկրաշարժն է:

Հին Կտակարանին մէջ բազմաթիւ տեղեր երկրաշարժը կապուած կը գտնենք Աստուծոյ յայտնութեան: Առաջին անգամ Ելքի 19-րդ գլուխին մէջ կը տեսնենք, որ երբ Աստուած կը խօսի՝ ամբողջ լեռը կը ցնցուի:

Յիսուսի աղաղակը աստուածային է: Անով ո՛չ թէ միայն նիւթական աշխարհը կը ցնցուի, այլ նաեւ՝ մեռեալներու աշխարհը: Ճշմարտութեան մէջ, մեռեալներու աշխարհի ցնցումին խորհրդանշանն է

նիւթական աշխարհին ցնցումը: Այս մասին է Պետրոս Առաքեալին այն միտքը, որ գրուած է անոր առաջին նամակին մէջ: Առաքեալը ըսած է. «Եւ թէպէտ մեռաւ մարմինով, բայց կենդանի մնաց հոգիով: Եւ հոգիով ալ գնաց քարոզեց բանտարկուած հոգիներուն, որոնք ատենօք չհնազանդեցան Աստուծոյ, երբ Ան ներողամտութեամբ կը համբերէր» (Ա. Պտ 3.18-20): Թէեւ մենք այդ քարոզութիւնը չենք կրնար ներկայացնել, սակայն վստահութեամբ կրնանք ըսել, թէ անիկա փրկութեան լրումին աւետումն էր: Նոյնպէս, Պօղոս Առաքեալ եփեսացիներուն ուղղուած նամակին մէջ գրած է. «Ահա սրբազան գիրքը կ'ըսէ. «Բարձունքները ելաւ՝ բազմաթիւ գերիներ տանելով Իրեն հետ հետ, եւ պարգեւներ բաշխեց մարդոց»:

«Ելաւ» ըսելով ի՞նչ ըսել կ'ուզէ: Ըսել կ'ուզէ թէ նախ երկրի ստորին կողմը իջաւ: Ան որ իջաւ՝ նոյնինքն է որ բոլոր երկինքներէն վեր բարձրացաւ. Իրմով լեցնելու համար ամբողջ տիեզերքը» (Եփ 4.8-10):

Այդ երկրաշարժին վրայ, կ'ըսէ աւետարանիչը, «գերեզմանները բացուեցան, եւ շատ մը սուրբ ննջեցեալներ յարութիւն առին: Անոնք գերեզմաններէն ելան եւ Յիսուսի յարութենէն ետք Սուրբ Քաղաքը մտան, ուր շատերու երեւցան»: Չորրորդ եւ հինգերորդ նշաններն են ասոնք:

«Սուրբ ննջեցեալները» Հին Կտակարանեան ժամանակներէն աստուածային այս ազատագրութեան սպասողներն էին: Հետեւաբար, անոնք Երուսաղէմ մտան եւ շատերու յայտնուեցան: Անոնք «Սուրբ Քաղաք» մուտքի ակնարկութեան մէջ՝ երկնային Յաւիտենական Քաղաք մուտքը եւս կարելի է հասկնալ:

Հարիւրապետը եւ իրեն հետ գտնուող զինուորները այս նշաններէն մի քանին տեսնելով սաստիկ վախցան եւ ըսին. «Իրապէս որ ասիկա Աստուծոյ Որդին էր»: Այս մարդիկը անդրադարձան, որ իրենց տեսած նշանները պատահականութիւններ չէին, եւ խոստովանեցան ճշմարիտ խոստովանութեամբ:

Յիշուած են «բազմաթիւ կիներ», որոնք «հեռուն կեցած կը դիտէին»: Ապա աւետարանիչը անոնցմէ երկուքին անունները (Մարիամ Մագդաղենացի, Յակոբի եւ Յովսէսի մայրը՝ Մարիամ) տուած է, իսկ երրորդին ալ մայր ըլլալը Անդրէաս եւ Յովհաննէս առաքեալներուն՝ առանց անուան յիշատակութեան: Այս վերջինը Յիսուսի մօրաքոյրն էր՝ Սողոմէն:

Մարկոս կ'ակնարկէ Երուսաղէմէն կիներուն ալ (Մր 15.41): Դուկաս՝ «Յիսուսի բոլոր ծանօթներ»-ուն (Ղկ 23.49): Իսկ Յովհաննէս՝ նաեւ Յիսուսի մօր՝ Մարիամին (Յհ 19.25):

ՅԻՍՈՒՄԻ ԹԱՂՈՒԲԸ (57-61)

Երբ երեկոյ եղաւ, Յովսէփ անունով հարուստ մէկը, որ Արիմաթ-
իայէն էր եւ որ ինք ալ աշակերտած էր Յիսուսի, գնաց Պիղատոսի
մօտ եւ խնդրեց, որ Յիսուսի մարմինը իրեն տրուի: Պիղատոս հրա-
մայեց որ տան մարմինը: Յովսէփ մարմինը առնելով մաքուր կտա-
ւով պատանքեց եւ դրաւ ժայռափոր, նոր բացուած գերեզմանի մը
մէջ: Ապա գերեզմանի մուտքին մեծ քար մը գլորեց որպէս կափարիչ
եւ գնաց: Հոն էին Մարիամ Մագդաղենացի եւ միւս Մարիամը, որոնք
նստած էին գերեզմանին դիմաց:

Կարելի է այս հատուածին վրայէն արագ անցնիլ: Սակայն միայն
քանի մը յստակացումներ.

Ինչո՞ւ ուզեցին Յիսուսի թաղումը խաչելութեան նոյն երեկոյին
կատարել:

Հրէական օրէնքը կը սահմանէր, եւ ժամանակի սովորութիւնն ալ
կը պահանջէր, որ ոեւէ մահապարտ իր մահացած օրն իսկ թաղուի:
Զէին ձգեր որ անշնչացած մարմինը խաչին վրայ ապականի: Յիսուսի
պարագային, այլ կարելոր պատճառ ալ կար. խաչելութեան հետեւած
երեկոյի արեւամուտէն ետքը Զատկուան պատրաստութիւնը կը
սկսէր: Ուստի, Անոր անշնչացած մարմինը աճապարանօք պէտք էր
տանէին եւ թաղէին:

«Երբ երեկոյ եղաւ»: Այս պահը հրէական օրուան այն ժամանակն
է, որ մեր այսօրուան երեքէն վեցին միջեւ կ'երկարի: Ասոր կը հետեւի
երեկոյի երկրորդ բաժինը, որ մինչեւ արեւուն մար մտնելը կ'երկարի,
այսինքն ժամը ութի շուրջ:

Այստեղ միայն յիշուած է Յովսէփ Արիմաթացին: Յովհաննէսի Ա-
ւետարանին մէջ, անոր հետ նաեւ կը տեսնենք Նիկողեմոսը (Յհ
19.39): Այս մարդիկը շատ լաւ դիրք ունէին եւ անդամ էին Ատեանին:

Մարկոս Յովսէփ Արիմաթացին պարկեշտ անձնաւորութիւն
ճանչցած է (Մր 15.42-43), Ղուկաս բարեգործ եւ արդար (Ղկ 23.50-
51): Ղուկաս նաեւ արձանագրած է, թէ ան Յիսուսի վրայ Ատեանի
որոշումին եւ կատարածին համաձայն չէր եղած (նոյն): Նիկողեմոսի
մասին գիտենք նաեւ Յովհաննէսի Աւետարանին 3.1-21-էն եւ 7.50-
52-էն:

Պիղատոս Յիսուսի մարմինը Յովսէփի կու տայ: Յովսէփ անձնա-
պէս խաչէն կ'իջեցնէ զայն (Ղկ 23.53), կը պատանքէ ու ժայռի մէջ իր
փորել տուած նոր գերեզմանին մէջ կը դնէ եւ մեծ քարով ալ գերեզ-
մանին մուտքը կը ծածկէ: Յովսէփ Արիմաթացիի այս արարքով
իրականացած պիտի ըլլար Եսայիի այն խօսքը, թէ «երբ մեռաւ հա-

րուստին հետ եղաւ» (Ես 53.9):

Ղուկաս կ'ըսէ, թէ հոն ուր Յիսուս թաղուեցաւ, ոչ ոք այնտեղ թաղ-
ուած էր:

Եկեղեցոյ հայրերը այս տեղեկութեան մէջ խորհուրդ կը տեսնեն:
Ըստ անոնց, այդ խորհուրդը իրարու կապուած չորս իրականութիւն
կը պատմէ.

- 1) Յիսուսի երկրաւոր կեանքը սկիզբ կ'առնէ Ս. Կոյսէն:
- 2) Ան երբեք մեղքի մէջ չմտաւ, այլ կուսական կեանք ապրեցաւ:
- 3) Կոյս գերեզման դրուեցաւ:
- 4) Յարութիւն առաւ կոյս գերեզմանէն:

Այս հատուածին վերջաւորութեան դարձեալ կը յիշուին Մարիամ
Մագդաղենացին եւ Յակոբի եւ Յովսէփ մայրը Մարիամ:

ՅԻՍՈՒՄԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ (62-66)

Յաջորդ առաւօտ, այսինքն Ուրբաթին յաջորդող օրը, աւագ
քահանաները եւ փարիսեցիները հաւաքուեցան Պիղատոսի մօտ եւ
ըսին.

- Տէ՛ր, յիշեցինք որ այդ մուրեցուցիչը Իր կենդանութեան կ'ըսէր.
«Երբ օրէն յարութիւն պիտի առնեմ»: Արդ, հրամայէ՛ որ գերեզմանը
մինչեւ երրորդ օրը զգուշութեամբ պահեն, որպէսզի չըլլայ որ աշա-
կերտները գիշերով զան ու գողնան զկէն եւ ժողովուրդին ըսեն, թէ
մեռելներէն յարութիւն առաւ: Այս վերջին մուրութիւնը առաջինէն
աւելի գէշ կ'ըլլայ:

Պիղատոս ըսաւ անոնց.

- Զինուորներ ունիք, գացէ՛ք եւ զգուշութեամբ պահեցէ՛ք, ինչպէս
որ գիտէք:

Անոնք ալ գացին եւ գերեզմանը հսկողութեան տակ առին, քարը
կնքեցին եւ զինուորներ պահակ դրին:

Այս դրուագը յատուկ է Մատթէոսի Աւետարանին: Աւագ քահա-
նաներուն եւ փարիսեցիներուն մօտ մտահոգութիւն կար: Ուստի,
Պիղատոսի մօտ կ'երթան եւ իրենց մտահոգութիւնը կը յայտնեն,
խնդրելով որ ան իր զինուորներուն հրամայէ ու անոնք Յիսուսի գե-
րեզմանին վրայ հսկեն:

Պիղատոսի պատասխանը կ'ըլլայ. «Զինուորներ ունիք, գացէ՛ք
եւ զգուշութեամբ պահեցէ՛ք, ինչպէս որ գիտէք»: Այս խօսքը երկու ձե-
ւով կարելի է հասկնալ.

Տաճարը իր զինուորներն ունէր: Անոնք Տաճարին պահակներն
էին: Գուցէ Պիղատոս անոնց կ'ակնարկէր, եւ ըսել կ'ուզէր, թէ դուք

ծեր Տաճարին զինուորները ունիք. գացէ՛ք եւ զանոնք պահակ կարգեցէ՛ք գերեզմանին:

Նաեւ կարելի է այսպէս հասկնալ, թէ գացէ՛ք եւ իմ զինուորներէս արնելով՝ զանոնք գերեզմանին պահապան կարգեցէ՛ք:

Ապա կը տեսնենք, որ աւագ քահանաները եւ փարիսեցիները կ'երթան եւ Յիսուսի գերեզմանին վրայ պահակներ կարգելով՝ խիստ հսկողութեան տակ կ'առնեն:

ԳԼՈՒԽ 28

ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ (1-15)

Շաբաթ երեկոյէն ետք, երբ Կիրակին կը բացուէր, Մարիամ Մագդաղենացին եւ միւս Մարիամը գերեզմանը տեսնելու եկան: Յանկարծ զօրաւոր երկրաշարժ մը եղաւ, եւ Աստուծոյ հրեշտակը երկինքէն իջնելով՝ գլորեց գերեզմանի մուտքին դրուած քարը եւ նստաւ անոր վրայ: Անոր տեսքը փայլակի կը նմանէր եւ հագուստները ծիւնի պէս ձերմակ էին: Պահապանները երբ ասիկա տեսան, սարսափեցան եւ մեռելի պէս եղան: Հրեշտակը կիներուն ըսաւ.

- Դուք մի՛ վախնաք. գիտեմ որ խաչուած Յիսուսը կը փնտռէք: Հոս չէ, որովհետեւ յարութիւն առաւ, ինչպէս ըսած էր: Եկէ՛ք եւ տեսէ՛ք այն տեղը, ուր դրուած էր: Անմիջապէս գացէ՛ք եւ ըսէ՛ք Իր աշակերտներուն, թէ յարութիւն առաւ: Ան ձեզմէ՛ առաջ Գալիլիա կը հասնի եւ հոն պիտի տեսնէ՛ք զինք. ահա՛ ըսի ձեզի:

Կիները վախով, բայց միեւնոյն ատեն մեծ ուրախութեամբ դուրս ելան գերեզմանէն եւ վազեցին՝ պատմելու համար աշակերտներուն: Յանկարծ Յիսուս հանդիպեցաւ անոնց եւ ըսաւ.

- Ողջոյն ձեզի:

Կիները մօտենալով՝ փարեցան Անոր ոտքերուն եւ երկրպագեցին Անոր: Յիսուս ըսաւ.

- Մի՛ վախնաք, գացէ՛ք եւ ըսէ՛ք իմ եղբայրներուս, որ Գալիլիա երթան. Հոն պիտի տեսնեն զիս:

Երբ կիները գացին, պահապաններէն ոմանք քաղաք եկան եւ ինչ որ պատահած էր՝ պատմեցին աւագ քահանաներուն: Աւագ քահանաները եւ երէցները հաւաքուելով՝ խորհրդակցեցան եւ առատ դրամ տուին պահապաններուն եւ ըսին.

- Ըսէ՛ք, որ «Իր աշակերտները գիշերով եկան եւ գողցան մարմինը, երբ մենք քնացած էինք»: Եւ եթէ կառավարիչին ականջը հասնի ասիկա, մենք զայն կը գոհացնենք. անհոգ եղէ՛ք դուք:

Պահապանները դրամը առին եւ ըրին ինչ որ պատուիրուած էր իրենց: Եւ այսպիսով, այս լուրը տարածուեցաւ հրեաներուն մէջ մինչեւ այսօր:

Աստուծոյ կամքով եւ ողորմութեամբ, Մատթէոսի Աւետարանին սերտողութեան վերջին գլուխը հասած ենք ահա՛:

Բոլորիս ծանօթ դրուագ է ասիկա:

«Շաբաթ երեկոյէն ետք, երբ Կիրակին կը բացուէր», կ'ըսէ: Այս առնչութեամբ եթէ Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի Աւետարաններուն նայինք, կը կարդանք հետեւեալները.

1) «Մարիամ Մագդաղենացի, Յակոբոսի մայրը՝ Մարիամ եւ Սողոմէ՛ գացին խունկեր գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի երթան եւ օծեն Յիսուսի մարմինը: Կիրակի առաւօտ կանուխ, արեւածագին, գերեզման եկան» (Մր 16.1-2):

2) «Կիրակի առաւօտ շատ կանուխ, Մարիամ Մագդաղենացին, Յովհաննան եւ Յակոբոսի մայրը՝ Մարիամը, ուրիշ կիներու հետ գերեզման եկան՝ իրենց հետ բերելով իրենց պատրաստած խունկերը» (Ղկ 24.1):

3) «Կիրակի առաւօտ կանուխ, մթնշաղին, Մարիամ Մագդաղենացի գերեզման գնաց» (Յհ 20.1):

Երեք աւետարանիչներուն «առաւօտ կանուխ, արեւածագին»ը, մէկուն «առաւօտ շատ կանուխ»-ը, միւսին ալ «առաւօտ կանուխ, մթնշաղ»-ը կը լուսաբանեն Մատթէոսի «Շաբաթ երեկոյէն ետք, երբ Կիրակին կը բացուէր»-ը: Հետեւաբար, կիներուն այցելութիւնը Յիսուսի գերեզմանին՝ ո՛չ թէ տեղի ունեցած էր երեկոյին յաջորդած ժամերուն, այլ՝ լուսաբացին:

Ըստ Մատթէոսի, ուրեմն, Մարիամ Մագդաղենացի եւ Յակոբի եւ Յովսէսի մայրը՝ Մարիամ, Յիսուսի գերեզմանը կ'այցելեն:

«Յանկարծ զօրաւոր երկրաշարժ մը եղաւ, եւ Աստուծոյ հրեշտակը երկինքէն իջնելով՝ գլորեց գերեզմանի մուտքին դրուած քարը եւ նստաւ անոր վրայ», կ'ըսէ: Ոմանց միտքին մէջ այն տպաւորութիւնը կրնայ ստեղծուիլ, թէ Յիսուս յարութիւն առաւ այս «երկրաշարժ»-ի պահուն: Սակայն աւետարանիչը Յիսուսի յարութեան մասին չի խօսիր: Գուցէ՛ հարց տրուի, որ եթէ Յիսուս յարութիւն չառաւ այս «երկրաշարժ»-ի պահուն, հապա ինչո՞ւ հրեշտակը գլորեց գերեզմանի մուտքին դրուած քարը: «Պէտք է քարը գլորուէր որ Յիսուս յարութիւն

առնելով դուրս գար գերեզմանէն» կը մտածեն ոմանք:

Յարութիւն առնելու համար Յիսուս քարի գլորուելուն պէտքը չունէր: Քարը հրեշտակին կողմէ գլորուեցաւ ոչ թէ Յիսուսի համար, այլ կիներուն համար: Յիշեցէք Մարկոսի տուած տեղեկութիւնը, թէ մինչ կիները գերեզման կ'երթային իրարու կը հարցնէին. «Ո՞վ պիտի գլորէ գերեզմանի մուտքին դրուած քարը» (Մր 19.3): Արդ, հրեշտակին ըրածը անոնց համար էր: Հետեւաբար, յարութիւնը տեղի ունեցած էր քարին գլորուելէն առաջ:

Ե՞րբ յարութիւն առաւ Յիսուս:

Ոչ ոք գիտէ կամ կրնայ գիտնալ:

Եկեղեցական աւանդութիւններուն նայելու պարագային, կրնանք հասկնալ, թէ իւրաքանչիւր Եկեղեցի որ ժամուն կատարուած կը համարէ Յիսուսի յարութիւնը:

Օրինակ, ըստ Հայ Եկեղեցւոյ աւանդութեան, Զատկուան Ճրագալոյցի Ս. Պատարագը կը մատուցուի երեկոյին աւարտելէն անմիջապէս ետք, եւ յարութեան աւետիսը այն ատեն կը տրուի: Ուստի, Հայ Եկեղեցին այդ ժամուն կատարուած կը համարէ Յիսուսի յարութիւնը: Գիտենք, որ ուրիշ Եկեղեցիներ կէս գիշերին կը մատուցեն իրենց Ս. Պատարագը: Անոնց համար ալ, Յիսուս յարութիւն առած է այդ ժամուն:

Անշուշտ ժամերու տարբերութիւնը էական չէ: Մեզի համար կարեւորը այն է, որ Յիսուս յարութիւն առաւ մեռելներէն, եւ վստահաբար նախքան հրեշտակին կողմէ քարին գլորուիլը:

«Երկրաշարժ»-ը մեզի կը յիշեցնէ այն պահը, երբ Յիսուս խաչին վրայ իր հոգին աւանդեց: Տեսանք որ այն ատեն ալ «երկրաշարժ»-ի մը պատահիլը արձանագրուած է: Յիսուսի մեկնումը երկրաշարժով եղաւ: Արդեօք կրնա՞նք այս երկրաշարժին առիթով ալ տեսնել «վերադարձ»-ը յարուցեալ Յիսուսի, որ քառասուն օր պիտի մնար երկրի վրայ մինչեւ համբարձումը (տե՛ս Ղկ 1.3-9):

«Աստուծոյ հրեշտակը երկինքէն իջնելով՝ գլորեց գերեզմանի մուտքին դրուած քարը եւ նստաւ անոր վրայ»: Հրեշտակին յանկարծական երեւումը թերեւս ոմանց համար հարց կը յարուցէ: Անոնք որ Աւետարաններուն պատումները քով-քովի կը դնեն եւ զանոնք բաղդատաբար կը կարդան՝ շատ փոքրիկ տարբերութիւններ կը նշմարեն:

Մատթէոս եւ Մարկոս կը յիշեն, որ մէկ հրեշտակ միայն երեւցաւ, մինչդեռ Ղուկաս եւ Յովհաննէս երկու հրեշտակներու կ'ակնարկեն: Այս եւ այլ տարբերութիւններ պարզապէս հետաքրքրական են եւ օգտագործած աւանդութիւններու տարբերութիւնները կը թելադրեն: Ա-

ւանդութիւնները հնարուած չեն, այլ ճշմարիտ փորձառութիւններ կը պատմեն: Այնպէս ինչպէս յետ Յիսուսի մկրտութեան հրեշտակները կը սպասարկէին Անոր, յետ յարութեան ալ շուրջը կը յածէին նոյնպէս սպասաւորութեան համար: Արդ, բնական է, որ զանոնք տեսնող մարդկային փորձառութիւնները տարբեր ըլլային եւ տարբեր աւանդութիւններ կտակէին:

«Անոր տեսքը փայլակի կը նմանէր, եւ հագուստները ծիւնի պէս ճերմակ էին»: Տեսքին փայլակի կամ կայծակի նմանիլը պահապաններուն խիստ սարսափ պատճառելու համար էր: Հրեշտակը, սակայն, չէր ուզեր որ իր այդ տեսքը սարսափեցնէր նաեւ Յիսուսի գերեզմանը այցելող կիները: Ուստի, անմիջապէս կ'ըսէ. «Դուք մի վախնաք»:

Իսկ Անոր հագուստներուն ծիւնի պէս ճերմակութիւնը:

Այցելու կիներուն նկատմամբ խաղաղութիւնը կ'արտայայտէ:

«...գիտեմ որ խաչուած Յիսուսը կը փնտռէք: Հոս չէ, որովհետեւ յարութիւն առաւ, ինչպէս ըսած էր»: Եւ հրեշտակը այսպէս կ'աւետէ Յիսուսի յարութիւնը:

Հետաքրքրական է խօսքին հոգեբանական կառոյցը: Հրեշտակը կիներուն նախ կը խօսի ըստ անոնց ցանկութեան, որ էր խաչուած Յիսուսի մարմինը գտնել: Ապա կը յայտնէ Յիսուսի մարմինին չըլլալը այնտեղ, որովհետեւ յարութիւն էր առած: Այս յայտնութեան կը կապէ Յիսուսի կանխասացութիւնը, թէ Ինք յարութիւն պիտի առնէր. կը յիշեցնէ գայն: Հրեշտակը իր յայտնութիւնը առաւել հաստատելու եւ կիներուն կասկածը փարատելու համար՝ անոնց կ'ըսէ. «Եկէք եւ տեսէք այն տեղը, ուր դրուած էր»:

Կիները գերեզման կը մտնեն եւ Յիսուսի մարմինը այնտեղ չեն գտներ: Եւ հրեշտակը անոնց կու տայ հետեւեալ պատուիրը. «Անմիջապէս գացէք եւ ըսէք իր աշակերտներուն՝ թէ յարութիւն առաւ: Ան ձեզմէ առաջ Գալիլիա կը հասնի եւ հոն պիտի տեսնէք զինք. ահա՛ ըսի ձեզի»:

Կիները վախով լեցուած էին: Թէեւ հրեշտակը չվախնալ յորդորած էր անոնց, սակայն իրապէս անկարելի էր այսպիսի փորձառութեան մէջէն անցնիլը առանց վախ ունենալու: Անշուշտ հասկնալի է, որ կիներուն ունեցած վախը զիրենք «մեռելի պէս» չէր դարձներ: Անոնց վախը զինուորներուն սարսափը չէր, այլ՝ այն երկիւղը որ կ'արթննայ հաւատացեալ հոգիին մէջ՝ ի տես հրաշալի դէպքի մը: Անոնք ըմբռնած էին Յիսուսի յարութեան յայտնութիւնը, այդ պատճառով ալ մեծ ուրախութեամբ դուրս կու գային գերեզմանէն եւ աշակերտներուն պատմելու կը փութային, երբ յանկարծ Յիսուս կը

հանդիպելը իրենց եւ ողջոյն կու տար: Յարութենէն ետք՝ առաջին ողջոյնն է ասիկա. կեանքի յաղթանակին յայտարարութիւնը:

Յիսուսի այս յանկարծական երեւումին վրայ, կիները կը մօտենային եւ գետին իյնալով կը փարէին Անոր ոտքերուն ու կ'երկրպագէին: Այս կիները յաճախ գտնուած էին Յիսուսի շուրջ եւ Անոր սպասարկած: ՉԱյն երբեք չէին տեսած մարդկային ընկալման սովորական պարունակէն դուրս: Անկասկած, ճանչցած էին Անոր մէջ աստուածայինին ներկայութիւնը, սակայն անկարելի էր որ պատկերացնէին այն, որուն առջեւ կը գտնուէին յարութեան այս պահուն: Անբացատրելի վիճակի մէջ էին, եւ երկիւղը զիրենք անմիջապէս կը մղէր պաշտամունքային արտայայտութեան, որ երկրպագութիւնն էր:

Յիսուս Ինք եւս քաջ ըլլալ կը յորդորէ անոնց եւ կը պատուիրէ, որ երթան ու Իր աշակերտներուն ըսեն, թէ Գալիլիա ուղղուին զԻնք տեսնելու համար:

Ինչ նշանակալից է Յիսուսի արտայայտութիւնը, որ Իր աշակերտները Իր «եղբայրներ»-ը կը կոչէ: Յարուցեալ Յիսուսի հետ ո՛չ թէ միայն կեանքը կը յաղթանակէ, այլեւ՝ հաւատացեալներուն եղբայրութիւնը կը հիմնաւորուի:

Սկզբնապէս, անոնք Իր աշակերտներն էին: Նաեւ սկզբնապէս անոնք ծառաներու պէս էին: Վերջին Ընթրիքին ատեն, կը տեսնենք որ Յիսուս կը յայտարարէ, թէ ալ զիրենք «ծառայ» չի ճանչնար, որովհետեւ Վերջին Ընթրիքին սեղանակցութեամբ՝ անոնց վերջնականապէս յայտնած էր Տիրոջ կամքը: Այն ատեն զանոնք Իր «բարեկամներ»-ը կոչած էր (Յի 15.14-15): Իսկ ահա, յարութեան այս պահուն, զանոնք Իր «եղբայրներ»-ը կը կոչէ:

Ըստ մարդկային սովորական ընկալումին, Յիսուս հակառակ ընթացքով պէտք է ճանչնար Իր աշակերտները, այսինքն՝ նախ՝ եղբայրներ, ապա՝ բարեկամներ, եւ վերջապէս՝ ծառաներ: Վերջ ի վերջոյ, Ինք Իր յարութեամբ փառաւորեալ Տէրն էր: Սակայն Յիսուսի ճանաչման ընթացքը այլ է եղած: Քրիստոս աշխարհ եկած էր մարդը փրկելու: Աստուծոյ ընտանիքէն դուրս ինկած մարդը՝ ետ Աստուծոյ ընտանիքին մէջ առնելու: Անոնք որ անդամ են այդ ընտանիքին՝ եղբայրներ են: Աստուծոյ փրկագործական ծրագիրն է մարդոց եղբայրութեան հաստատումը՝ Իրեն հետ մտերմութեան մէջ:

Պօղոս Առաքեալ այս հոգեւոր եղբայրութեան առնչաբար գրած է. «Աստուած բարիին համար գործակից կ'ըլլայ անոնց, որոնք կը սիրեն զԻնք եւ Իր ծրագիրին համաձայն Իրեն կանչուած են: Որովհետեւ, Աստուած զանոնք սկիզբէն կը ճանչնար եւ սկիզբէն ալ սահմանեց, որ Իր Որդիին հարազատ պատկերը ըլլան, որպէսզի

Յիսուս բազմաթիւ եղբայրներու մէջ անդրանիկը ըլլայ» (Հռ 8.28-29):

Կիներուն մեկնելէն ետք, պահապաններէն ոմանք քաղաք կ'երթան եւ պատահածը կը պատմեն աւագ քահանաներուն: Աւագ քահանաները եւ երէցները Ատեանը ժողովի կը կանչեն, կը խորհրդակցին, առատ դրամ կու տան պահապաններուն եւ կ'ըսեն.

- Ըսէ՛ք, որ «Իր աշակերտները զիշերով եկան եւ գողցան մարմինը, երբ մենք քնացած էինք»: Եւ եթէ կառավարիչին ականջը հասնի ասիկա, մենք զայն կը գոհացնենք. անհոգ եղէ՛ք դուք:

Պահապանները շատ մտահոգ էին, որովհետեւ զիտէին, թէ Յիսուսի մարմինին անյայտացման հետեւանքով կրնային մահուան դատապարտուիլ: Ուստի, աւագ քահանաները եւ երէցները կը հանդարտեցնեն զանոնք խոստանալով, որ եթէ կառավարիչին ականջը հասնէր լուրը զայն կը գոհացնէին եւ հարցը կը փակէին:

Պահապանները դրամը կ'առնեն եւ կ'երթան:

«Այս լուրը տարածուեցաւ», կ'ըսէ: Ո՞ր լուրը: Եղելութիւնը ծածկելու ճիգի՞ն լուրը, թէ՞ ամբողջ պատահածին լուրը, այսինքն՝ Յիսուսի յարութեան նաեւ: Աւետարանիչի խօսքին մէջ ճիշդ կ'ըլլայ տեսնել թէ Յիսուսի յարութեան մասին շշուկները եւ թէ՛ շշուկները կրօնական իշխանաւորներուն եղելութիւնը ծածկելու ճիգին:

ՅԻՍՈՒՍ Կ'ԵՐԵՒԻ ՏԱՄՆԸՄԷԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ (16-20)

Իսկ տասնըմէկ աշակերտները զացին Գալիլիա, այն լեռը ուր Յիսուս ժամադրուած էր իրենց հետ: Երբ տեսան զԻնք՝ երկրպագեցին Իրեն, բայց ոմանք տարակուսեցան: Յիսուս, մօտենալով, խօսեցաւ անոնց հետ: Ապա ըսաւ.

- Ամէն իշխանութիւն տրուեցաւ Ինծի Երկինքի մէջ եւ Երկրի վրայ: Ինչպէս որ Հայրը զԻս դրկեց, այնպէս ալ Ես ձեզ կը դրկեմ: Հետեւաբար, զացէ՛ք եւ բոլոր ժողովուրդները Ինծի աշակերտ դարձուցէ՛ք: Չանոնք մկրտեցէ՛ք Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին անունով: Անոնց սորվեցուցէ՛ք այն բոլոր պատուիրանները որ Ես ձեզի տուի. եւ ահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ՝ մինչեւ աշխարհիս վախճանը:

Յետ յարութեան, Յիսուս երեւումներ կամ յայտնութիւններ ունեցաւ: Եկեղեցւոյ կեանքին համար մեծ կարեւորութիւն ներկայացնող երեւում է ասիկա:

Հատուածը կը սկսի տասնըմէկ աշակերտներուն ականարկութեամբ: Ուստի, կը մտածենք թէ անոնցմէ զատ ուրիշներ չկային Յիսուսի հետ այն հանդիպման ատեն:

Կորնթացիներու առաջին նամակին 15-րդ գլխուն սկիզբը, Պօղոս

Առաքեալ կը յիշէ իրեն հասած աւանդութիւն մը, եւ կ'ըսէ. «Ես ձեզի փոխանցեցի այն հաւատքը որ նախ ես ընդունեցի. այն որ Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ, ինչպէս Սուրբ Գիրքերը կ'ըսէին, թաղուեցաւ եւ երրորդ օրը յարութիւն առաւ, դարձեալ ըստ Սուրբ Գիրքերուն, ու երեւցաւ Պետրոսին եւ ապա տասնըմէկ առաքեալներուն: Յետոյ երեւցաւ միատեղ խմբուած հինգ հարիւրէ աւելի հետետորդներու...: Այնուհետեւ երեւցաւ Յակոբոսին եւ ապա բոլոր առաքեալներուն: Ի վերջոյ, բոլորէն յետոյ երեւցաւ նաեւ ինծի վիժածիս» (Ա. Կր 15.3-8): Թէ հինգ հարիւրէ աւելի հետետորդներուն հետ պատահած երեւումը ո՞ր տեղի ունեցաւ՝ չէ ըսուած: Ոչ նամակին, ոչ ալ Նոր Կտակարանեան այլ էջի մէջ այդ դէպքին ակնարկութիւն կայ:

Գուցէ զարմանալի թուի, որ աւետարանիչները ինչո՞ւ այնքան կարեւոր դէպքի վրայ լռած են, մինչդէռ պէտք է արձանագրած ըլլալին: Սակայն կարեւոր է անդրադառնալ, որ աւետարանիչները Յիսուսի կապուած շատ դէպքեր եւ շատ խօսքեր չեն արձանագրած: Միայն այն դէպքերը եւ խօսքերը յիշած են, որոնք իրենց նպատակին մէջ կը մտնէին: Օրինակ, Մատթէոսի նպատակը չէր եղած Յիսուսի բոլոր երեւումները թուել, ուստի ան միայն յիշած էր առաջին եւ վերջին երեւումները. առաջինը՝ որովհետեւ յարութեան դէպքին անմիջապէս կը յաջորդէր եւ յատուկ կարեւորութիւն կը ներկայացնէր, իսկ վերջինը՝ որովհետեւ անմիջապէս կը կանխէր համբարձման դէպքը եւ Եկեղեցւոյ առաքելութեան համար Յիսուսի ուղեցուցիչ պատգամը կը բովանդակէր:

Վստահաբար, Մատթէոս եւ Յովհաննէս Առաքեալները այն հինգ հարիւրին մէջն էին: Իսկ Ղուկաս եւ Մարկոս նոյնիսկ եթէ մէջը չէին բայց այդ երեւման մասին տեղեակ ըլլալու էին: Դէպքը իրենց Աւետարաններուն մէջ չէին արձանագրած՝ որովհետեւ իրենց գրութեան նպատակը ապացոյցներ կուտակել չէր: Նաեւ կարելի է մտածել, թէ Աւետարաններուն գրառման թուականին եւ վայրին մէջ, ու հասցէին մօտ, Յիսուսի յարութիւնը իրականութիւն էր, որուն վրայ կասկած չկար: Մինչդէռ Պողոս Առաքեալի ժամանակ, որ Աւետարաններուն գրառման թուականէն առաջ էր, Յիսուսի յարութեան շուրջ կասկածներ շրջան կ'ընէին: Եւ առաքեալին կը մնար՝ փարատելու համար ապացուցել:

Եկեղեցւոյ կանուխ ժամանակներէն, բազմաթիւ մեկնիչներ հինգ հարիւրին երեւումը կապած են Գալիլիոյ մէջ Յիսուսի երեւումին: Ըստ անոնց, Գալիլիոյ լեռան վրայ Յիսուս միայն տասնըմէկին չերեւցաւ, այլ նաեւ գաւառի այն բոլոր հետետորդներուն, որոնք առաքեալներուն հետ փութացած էին իրենց Տէրը տեսնելու:

Լեռան մասին երկու ենթադրութիւն կայ. ըստ ոմանց անիկա Ալլակերպութեան լեռն է՝ Հերմոնը, եւ ըստ ուրիշներու՝ այն լեռը, ուրկէ Յիսուս Լեռան Քարոզը խօսած էր, որ Գալիլիոյ լիճին մերձակայ բարձունք էր:

Գալիլիա գալը խորհրդանշական արարք է: Այն ժամանակ Գալիլիան մեծ մասամբ հեթանոսներով լեցուն էր, ուստի Իր երկրաւոր հանդիպման վերջին ժամադրավայրը դարձնելով զայն հեթանոսներուն մէջ աւետարանչութեան ուղղութիւնը ցոյց կու տար: Իր աշակերտները դէպի հեթանոսները առաքելու համար Գալիլիա ժամադրուիլը միաժամանակ կը պատմէ աւարտը Հին Ուխտին եւ սկզբնաւորումը Նոր Ուխտին: Գալիլիան դուռն է հեթանոս աշխարհին: Յիսուս Իր աշակերտները կը հրաւիրէ, որ աւետարանչութիւնը չսահմանափակեն միայն եբրայեցի ժողովուրդին մէջ, այլ՝ զայն տանին բոլոր ազգերուն:

«Երբ տեսան զինք, երկրպագեցին Իրեն», կ'ըսէ: Աշակերտներէն ոմանք պաշտամունքային երկրպագութեամբ կը խոնարհին Յիսուսի առջեւ, որովհետեւ իրենց յարուցեալ Տիրոջ մէջ կը տեսնեն Աստուածութիւնը:

Գրաբարը յունարէն բնագիրին նրբօրէն հաւատարիմ՝ «եւ ոմանք յերկուացան» կ'ըսէ: «Յերկուանալ» կը նշանակէ երկու միտքի մէջ ըլլալ, վարանիլ: Ոմանք երկու միտքի մէջ էին կամ կը վարանէին: Անոնք դեռ չէին ճանչցած յարուցեալ Յիսուսի Աստուածութիւնը: Ուստի ներքին մղումը չունէին Անոր առջեւ երկրպագելու եւ զԱյն պաշտելու:

Այդ երկմտանքը տեսնելով է, որ Պողոս Առաքեալ Տիմոթէոսի առաջին նամակին մէջ գրած էր. «Անհերքելիօրէն մեծ է աստուածապաշտութեան խորհուրդը, որովհետեւ Աստուած մարմինով երեւցաւ, եւ հոգիով արդարացաւ, հրեշտակներուն յայտնուեցաւ, ազգերուն քարոզուեցաւ, աշխարհի մէջ հաւատացուեցաւ, փառքով երկինք բարձրացուեցաւ» (Ա. Տմ 3.16): Այսօր ալ կարելի է նոյնպէս յայտարարել աստուածապաշտութեան խորհուրդին մեծութիւնը, եւ հասկնալ մարդկային կարողութեան անբաւարարութիւնը զայն ըմբռնելու: Կարելի չէ միտքով ըմբռնել խորհուրդը, այդ պատճառով ալ անոնք որ հաւատքի խմորը ունին, սակայն իրենց միտքին կը վստահին՝ կ'իյնան երկմտանքի մէջ:

«Ամէն իշխանութիւն տրուեցաւ Ինծի Երկինքի մէջ եւ Երկրի վրայ: Ինչպէս որ Հայրը զԻս դրկեց, այնպէս ալ Ես ձեզ կը դրկեմ»: Սկիզբէն ըսեմ, որ խօսքին երկրորդ բաժինը յունարէն հնագոյն ձեռագիրներուն մէջ չկայ: Անշուշտ որեւէ հարց չի յարուցեր յաւելումը,

որովհետև նախ կը համաձայնի յաջորդ համարին, եւ երկրորդ Յիսուս Իր առաքելութեան կէսէն սկսեալ աշակերտները քարոզելու եւ ուսուցանելու կը դրկէր:

«Ամէն իշխանութիւն տրուեցաւ Ինծի երկինքի մէջ եւ երկրի վրայ»:

Ի՞նչ իշխանութեան մասին կը խօսի Յիսուս:

Յարութեամբ տրուած իշխանութեան:

Իսկ յարութեամբ ի՞նչ իշխանութիւն տրուեցաւ Յիսուսի:

Որպէսզի յարութեամբ տրուած իշխանութիւնը ճիշդ հասկնանք յիշենք այն երկու խօսքերը, որ Յիսուս ըսած էր:

Առաջինը Իր այլակերպութենէն անմիջապէս առաջ. «Վստահ եղէք, որ հոս գտնուողներէն ոմանք պիտի չմեռնին՝ մինչեւ տեսնեն Մարդու Որդին որ կու գայ Իր Թագաւորութեամբ» (Մտ 16.28):

Երկրորդը Ատենին մէջ. «Ասկէ ետք պիտի տեսնէք Մարդու Որդին ամենազօր Աստուծոյ աջ կողմը նստած. եւ պիտի տեսնէք որ կու գայ երկինքի ամպերուն մէջէն» (Մտ 26.64):

Այս երկու խօսքերը մեր դիմաց իրարմէ տարբեր նշանակութիւններ բանալով հանդերձ, հիմնական միտք մը կը բերեն մեզի, եւ այդ միտքը կապ ունի յարութեան հետ: Յիսուս Իր յարութեամբ ստացաւ Թագաւորութիւնը, որ յաւիտեաններուն մէջ եւ Իր Աստուածութեամբ ունէր, որովհետեւ Ինք Որդին է՝ ամենազօր Աստուծոյ աջ կողմը նստած:

Յիսուսի իշխանութիւնը Իր Թագաւորութիւնն է: Այդ Թագաւորութիւնը այս աշխարհի վրայ պիտի հասնի իր վախճանական տիրութեան, երբ Իր երկրորդ գալուստին՝ Հօր փառքով պիտի յայտնուի, եւ չարն ու անոր գործութիւնները նուաճէ վերջնականապէս, եւ ամէն ինչ իրեն ենթարկուի:

«...զացէ՛ք եւ բոլոր ժողովուրդները ինծի աշակերտ դարձուցէ՛ք»:

Յիսուս Իր աշակերտները կ'առաքէ համայն մարդկութիւնը Իրեն աշակերտ դարձնելու: Նախապէս Իր աշակերտներուն առաքելութիւնը սահմանափակած էր երբայցի ժողովուրդին մէջ, իսկ հիմա զանոնք կ'առաքէ բոլոր ազգերուն մօտ տարածելու Աւետարանը, որ հրաւիր է մաս կազմելու Աստուծոյ Թագաւորութեան:

Եկեղեցւոյ պատմութենէն գիտենք, որ աշակերտները սկզբնապէս պիտի տատամսէին դէպի հեթանոս աշխարհ աւետարանչութիւն կատարելու մէջ: Այդ տատամսումը ցեղային-կրօնական եւ հոգեբանական պատճառներ ունէր: Ինչպէ՞ս կարելի էր երթալ ու քարոզել եւ ուսուցանել անոնց, որոնք պիղծ կը համարուէին: Ինչպէ՞ս կարելի էր «ընտրեալ ժողովուրդ»-ին խոստացուած Աստուծոյ փրկութիւնը տա-

նիլ ուրիշներուն: Եւ ինչպէ՞ս կարելի էր յարաբերութիւն ունենալ եւ գործել օտար ազգերուն հետ եւ մէջ: Սակայն վերջ ի վերջոյ պիտի շարժէին ըստ Յիսուսի պատուէրին, եւ անկէ քաջալերուած:

«Չանոնք մկրտեցէ՛ք Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին անունով»:

Ասկէ առաջ, Յիսուս Իր աշակերտներուն երբեք մկրտելու հրահանգ տուած էր: Եթէ նկատի առնենք Մատթէոսի Աւետարանը այդպիսի հրահանգ չենք գտներ: Մարկոսի եւ Ղուկասու Աւետարաններուն մէջ եւս չենք գտներ: Իսկ Յովհաննէսի Աւետարանին մէջ կը կարդանք, որ Յիսուսի աշակերտները կը մկրտէին (Յհ 4.2): Եթէ կը մկրտէին, ապա ի՞նչ բանաձեւով կը մկրտէին: Այստեղ Յիսուս կու տայ բանաձեւ մը, որ է մկրտել Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին անունով:

Հետաքրքրական է նայիլ Առաքելներուն Գործերը գիրքին: Անոր մէջ մկրտութիւններուն բանաձեւերն են. «Տէր Յիսուս Քրիստոսի անունով» (Գրծ 2.38), «Տէր Յիսուսի անունով» (նոյնը, 8.16), «Յիսուս Քրիստոսի անունով» (նոյնը, 10.48), «Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունով» (նոյնը, 4.10,12) է: Հոն Ս. Երրորդութեան բանաձեւը չկայ: Ինչո՞ւ այս տարբերութիւնը, ինչպէ՞ս բացատրել:

Առաքելներուն Գործերը գիրքին յիշած բանաձեւերը հերքումը չեն Ս. Երրորդութեան: Գիտենք, որ մկրտութեան նախապայմանը առ Յիսուս Քրիստոս հաւատքն է, առանց Անոր հաւատալու՝ կարելի չէ մկրտուիլ: Քրիստոնէական մկրտութիւնը պայմանաւորուած է Յիսուսի վրայ հաւատքով: Ան որ այդ հաւատքով կը մկրտուի՝ անդամ կը դառնայ Եկեղեցւոյ անկախ բանաձեւին տարբերութենէն: Առաքելներուն Գործերը գիրքին մէջ տրուած բանաձեւերը՝ քրիստոնէական մկրտութեան նախապայմանը կը յայտնեն, ըստ որուն առանց առ Յիսուս հաւատքին՝ կարելի չէ անդամ ըլլալ Եկեղեցւոյ: Ան որ Յիսուսի անուամբ մկրտուած է կամ կը մկրտուի՝ միաժամանակ Ս. Երրորդութեան անունով մկրտուած կ'ըլլայ: Աստուծոյ Որդին անանջատելի է Հօրմէն եւ Ս. Հոգիէն:

Յիսուս Ս. Երրորդութեան անունը տալով, նոր յայտնութիւն է որ կը կատարէ:

«Անոնց սորվեցուցէ՛ք այն բոլոր պատուիրանները որ Ես ձեզի տուի»:

Այս Աւետարանին սկիզբը, կամ 4-րդ գլխուն վերջաւորութեան, մենք տեսանք որ աւետարանիչը դիտումնաւոր կերպով կը շեշտէր Յիսուսի գործունէութեան երեք կարեւոր երեսները. ուսուցում, քարոզութիւն եւ բժշկում: Ուշագրաւ է, որ այստեղ Յիսուս Իր աշակերտներուն կ'ըսէ, որ ուսուցանեն, եւ քարոզելու պատուէր չի տար: 10-րդ գլխուն մէջ, անոնց իշխանութիւն տուած էր նախ բժշկելու, ապա՝ քարոզելու (Մտ 10.1,7): Իսկ այստեղ իշխանութիւնը կու

տայ ուսուցանելու: Մինչ Իր գործունեությունը ուսուցում էն կ'անցնէր քարոզութեան եւ ապա բժշկումին, աշակերտներուն գործունեութիւնը բժշկութենէն կ'անցնէր քարոզութեան, ապա ուսուցումին: Այս ընթացքներուն տարբերութիւնը ինչպէ՞ս կարելի է հասկնալ:

Յիսուս երկինքէն էր, ուստի նախ երկնաւոր ճշմարտութիւնը բերաւ մարդոց, ապա զայն աւետեց քարոզելով ու մարդիկը հաւաքեց Իր փրկութեան ուռկանին մէջ, եւ բժշկութեամբ ալ ապացոյցը տուաւ Իր յայտնած բարի լուրին եւ երկնաւոր ճշմարտութեան, միաժամանակ յայտնելով գալիք կեանքին անապականութիւնը եւ ցաւերէ ու հեծութիւններէ ազատ լինելակերպը:

Աշակերտներուն տրուած առաջին իշխանութիւնը բժշկութիւնն է, որովհետեւ մարդոց կողմէ առաջին սպասուածն է անիկա: Նախ պէտք է ծառայել մարդոց, ապա անցնիլ անոնց միտքերն ու հոգիները գրաւելու: Առանց ծառայութեան խօսքերը օդին մէջ կը ցնդին: Ուստի, աշակերտները նախ կ'ունենան իշխանութիւնը բժշկելու կամ բժշկութեամբ ծառայելու, եւ ետքը իշխանութիւնը մարդիկը խանդավառելու Աւետարանին հիմնական գաղափարներով, եւ վերջապէս ուսուցմամբ խորացնելու անոնց հոգեւոր տեսողութիւնը:

«...Եւ ահա՛ միշտ ձեզի հետ պիտի ըլլամ՝ մինչեւ աշխարհիս վախճանը»: Մատթէոսի Աւետարանը այսպէս կը կնքուի: Յիսուսի այս խոստումը քաջալերանք էր թէ՛ Իր աշակերտներու անմիջական շրջանակին եւ թէ՛ քաջալերանք է բոլոր ժամանակներու Եկեղեցիին:

Յիսուս կը խոստանայ միշտ Իրեն հաւատարիմներուն հետ ըլլալ, մինչեւ աշխարհի վախճանը: Եկեղեցին կայ այս խոստումով:

ՔԱՐՈՉԱՌՕՍԱԿԱՆ

ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

ԾՆՈՒՆԳ, ԱՍՏՈՒԱԾԱԶԱԹՏՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԿԲՏՈՒԹԻՒՆ

ՈՐԳԷՍՁԻ ԶՄՆԱՆՔ ԱՌԱՆՑ ՄՅՈՒՐԻ ԵՒ ԽԱՆՉԱՐՈՒՐԻ

ԿԵԱՆՔԸ ՏԱԼՈՎ՝ ԿԵԱՆՔ ԳՏՆԵԼ

ՔԱՌԱՍՆՕՐԵԱՑ ԱԳԱՇԱՐՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՒԹԵԱՄԲ՝ ՅԱՐՈՒՑԵԱԼԻՆ ՀԱՄԱՐ

ԳԱՅՄԱՌԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՆԾԱՆՕԹ ՍՈՒՐԲ ՀՁԳԻՆ

ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԻՆԻ

**ՎԵՐԱՓՈՒԹԻՒՆ ՏԻՐԱՄՕՐ ՀԵՏ՝ ՏԻՐԱԶ ՀԵՏ
ԸԼԼԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՅԱՒԻՏԵԱՆ**

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԸ՝ ԿԻՆ ԵՒ ՄԱՅՐ

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

ՋԱՍՏՈՒԱԾ ՏԵՍՆԵԼ

ՍԷ՛ՐԸ

**Ի՛ՆՉ ԲԱՆԵՐՈՎ ԿՐՆԱՑ ԳԱՐՄԵՆԱԼ
ՔՐԻՍՏՈՆԵԱՆ**

ԺԱՄԱՆԱԿԱՎՐԷՊ ԲԱՆՆ՞Ր

ԿԵԱՆՔԸ ԱՋԱՏՈՒԹԵԱՄԲ Է ԿԵԱՆՔ

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՄՐՐՈՒԹԻՒՆ

**ՀՁԳԵՒՈՐ ՏԱԳԱՆԸ՝ Ս. ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՒՈՐԻՉ**

ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

«Նորոգող հնութանց,
Նորոգեա եւ զիս,
Նորոգ զարդարեա» (Ժամագիրք)

Բացուող այս տարուան հետ մեր առաջին մտածումը կ'ուզենք դարձնել Շնորհալի Հայրապետին այս բառերը, որոնցմով մենք, մեր Եկեղեցին եւ իւրաքանչիւր հաւատացեալ կը խնդրէ Աստուծմէ, որ Աստուած մեր հնութիւնը, մեր մէջ հին մարդը նորոգէ ամբողջական նորութեամբ եւ այդ նորութեան գեղեցկութեամբը զարդարէ:

Մեր կեանքին մէջ դարձեալ կը բացուի տարի մը, որ բոլորիս համար յուսալից երազի, նոր հորիզոններու, նոր կեանքի եւ ամէն տեսակի նորութեանց, եւ այդ նորութեանց հետ նաեւ ամէն տեսակի բարիքներու ու բարութեանց տարին պիտի ըլլայ, գէթ այնպէս, ինչպէս որ մենք կ'ակնկալենք: Շատեր մեզմէ, եւ աշխարհը ամբողջ, ինչ-ինչ երազներ կը կապէ ամէն մէկ եկող նոր տարիի հետ, ուզելով եւ իր շնորհաւորութեանց հետ մաղթելով ուրիշներուն, որ այդ տարին բերէ բոլոր այն բաները, որոնց պակասը ունեցաւ ինք նախորդ տարիներուն: Բերէ բոլոր այն բաները, որոնք իրեն համար քաղցրութեան, բարութեան եւ երջանկութեան խորհրդանիշը եւ, միաժամանակ, առարկայացումը պիտի ըլլան, եւ ծելով մը մենք, այդ մաղթանքներէն անդին, կը սպասենք նաեւ իրապէս, որ եկող տարին եւ եկող օրերը մեզի բերեն այդ բոլորը:

Եւ սակայն զիտենք բոլորս ալ, առանց ինքնախաբէութեան, որ կեանքը, ժամանակը ինք եւ եկող օրերը իրենք չէ որ բան մը կը բերեն: Սպասումը կեանքին մէջ ամէնէն գեղեցիկ եւ ամէնէն դրական բանն է: Այն մարդը որ կ'ապրի՝ անպայմանօրէն կեանքէն սպասելիք ունի: Այն մարդը որ կը գործէ՝ կեանքէն շատ բան կ'ակնկալէ: Բայց

միաժամանակ մենք գիտենք, որպէս գիտակից մարդիկ, որ մենք է որ այդ ժամանակին եւ մեր օրերուն կու տանք, եւ մենք է որ ձեռով մը մեր ճիգով ու աշխատանքով մեր կեանքին կը բերենք այն ինչ որ մենք կը կամենանք, ինչ որ մենք կ'ուզենք: Սպասումը դրական է, բայց կրնայ նաեւ ժխտական տրամադրութեան եւ վիճակի վերածուիլ եթէ երբեք մենք մեզ գործնական կեանքէն կտրենք եւ այդ սպասումը դարձնենք միայն երազ, մեր կեանքը երազներու կապենք իրականութենէն մենք մեզ կտրելով: Կեանքը ապրուած օրերուն հետ գործ է. կեանքը կրնայ երազ ըլլալ եւ երազ է այնքանով, որ մարդ իր կեանքին մէջ նպատակ կը դնէ: Եւ ամէն մարդ, որ գիտակից, խելացի, իմաստուն մարդ է իր կեանքին մէջ պէտք է այդ երազը եւ նպատակը դրած ըլլայ: Կեանքի հորիզոնին վրայ միշտ բարձր պէտք է մնայ նպատակը, որ կը լեցնէ մարդը: Եւ այդ նպատակին նախելով մարդ ըստածը պէտք է կարենայ նաեւ ծրագրել ու կազմակերպել իր կեանքը եւ լեցնել գործերով, այնպէս որ այդ նպատակը հետզհետէ մարմին առնէ, դառնայ իրականութիւն յաջորդ օրերուն մէջ: Այն ատեն է որ սպասումը ձեռով մը կապուած կ'ըլլայ իրական կեանքին, կապուած կ'ըլլայ գործին, եւ կեանք ու երազ, նպատակ եւ իրականութիւն գիրար կը գրկեն եւ իրարմով կը դառնան ամբողջութիւն եւ հարուստ լեցունութիւն: Այն ատեն է որ մենք մեր կեանքը իրագործած կ'ըլլանք ճիշդ մեր սպասումներուն համաձայն: Իսկ եթէ այդ սպասումին կողքին չըլլայ յստակ նպատակը եւ անոր ուղղուած ծրագրուած ու կազմակերպ կեանք մը չորոշենք ու չսկսինք ապրիլ, չենք կրնար ակնկալել, որ մեր կեանքը մեզի բերելիք նորութիւն ունենայ: Այլ խօսքով պիտի ըստինք մենք եթէ կը դիմենք Աստուծոյ որ օրինէ մեր կեանքը եւ ամէն տեսակի յաջողութեամբ լեցնէ, եւ սակայն չունենանք մեզի համար նպատակ եւ ծրագիր, ի՞նչ բանը կ'ուզենք որ Աստուած օրինէ: Աստուած նոյնինքն մեր այդ նպատակադրածը եւ մեր ծրագիրներն է որ պիտի օրինէ, եւ այդ նպատակին ուղղուած մեր ճիգերուն յաջողութիւն տայ: Այլապէս, Աստուծոյ օրհնութիւնը չ'իջներ մեր կեանքին վրայ ամէն եկող տարուան հետ եւ նաեւ իր նորութիւնը չի բերեր մարդուն:

Եկէ՛ք խորհինք սակայն, թէ նպատակին եւ գործին առընթեր ուրիշ ի՞նչ բաներ կը նորոգեն մեզ, ի՞նչ բաներ նորութիւն կու տան մեր կեանքին: Մեր կեանքը հին է շատ մը բաներով, եւ այդ բոլորին նորոգութիւնն է, որ կը խնդրենք Աստուծմէ, եթէ երբեք հետեւեալ քանի մը բաները ունենանք մեր միտքին մէջ եւ զանոնք խնդրենք, զանոնք փորձենք առարկայացնել մեր կեանքին մէջ:

1) ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԱՅ ԴՐՈՒԾ ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆԸ, այլ խօսքով ՀԱՒԱՏՔԸ, առաջին բանն է որ կրնայ մարդը նորոգել իսկական հասկացողութեամբ: Աստուծոյ դարձած մարդը գտած կ'ըլլայ այն աղբիւրը, որմէ ըմպելով միայն ինք իր կեանքը կրնայ նորոգել: Մարդիկ ի զուր կեանքին մէջ իրենց հայեացքը կը դարձնեն այնպիսի բաներու, որոնք միայն երկրորդական կրնան ըլլալ, բայց ոչ բնաւ էութիւնը: Մարդկային կեանքի էութիւնը, նոյնինքն կեանքը, ապրելու իր իրականութիւնը կապուած է Աստուծոյ: Եւ մարդը այն ատեն միայն իր կեանքի նորոգութեան գաղտնիքին կը հասնի, երբ կը դառնայ Աստուծոյ եւ կը փորձէ Աստուծոյ լեցնել ինքզինք եւ իր օրերը:

Այդ վստահութիւնը կը հասկցուի հետեւեալ կերպով:
 Գիտենք, որ մարդկային մեր կեանքը յատկանշող երեւոյթներէն մէկը այն է, որ մարդ ըստածը ԿԸ ՄՏԱՀՈԳՈՒԻ: Կը մտահոգուի իր ամէնօրեայ ուտելիքով եւ խմելիքով, իր հագուելիքով ու զարդարուելիքով, իր ըսելիքով ու խօսելիքով, իր գործով ու շահով, իր առողջութեամբ ու ապահովութեամբ: Այս բոլոր մտահոգութիւնները կը լեցնեն ու կը ծանրացնեն իր սիրտը այնպէս, որ մարդը ինքզինք կը զգայ հնացած: Բայց այս մտահոգութիւնները նոյնինքն հակասութիւնն են հաւատքին, Աստուծոյ հանդէպ վստահութեան, եւ ընդհակառակը կը նշանակեն ԱՆՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԱՅ: Պէտք չէ մոռնալ անշուշտ որ չմտահոգուիլ չի նշանակեր չմտածել: Մտածել եւ մտահոգուիլ երկու տարբեր բաներ են: ՄՏԱԾԵԼ կը նշանակէ Աստուծոյ այդ վստահութեամբ լեցուած յստակ կերպով նայիլ ու խորհիլ, թէ ինչ բան զինք ուղիղ ճանապարհով կ'առաջնորդէ դէպի յաջողութիւն: Բայց ՄՏԱՀՈԳՈՒԻԿԸ կը նշանակէ աւելորդ ծանրութիւններով եւ դառնութիւններով ինքզինք, իր սիրտը, իր միտքը եւ հոգին խճողել այնքան, որ այլեւս նոյնինքն այդ վստահութեան, այդ հաւատքին եւ այդ հաւատքին բերած ամրութեան ու հաստատութեան տեղ չմնայ մարդու կեանքին մէջ:

Անվստահութեան այդ մեղքին մէջ պէտք չէ մնայ մարդը, պէտք է կարենայ ինքզինք դուրս բերել անկէ իր հնութենէն դուրս եկած ըլլալու եւ Աստուծոյ վրայ դրած իր վստահութեամբ նորոգուելու, նոր մարդ դառնալու համար: Այն մարդը որ Աստուծոյ վրայ դրած է իր վստահութիւնը, այդ մարդը թեթեւ սիրտով գիտէ քալել կեանքին մէջ, եւ պարզօրէն ընկալել կեանքին բերած բոլոր տեսակի անակնկալները, որովհետեւ գիտէ որ այդ անակնկալներէն անդին եւ կեանքին յարուցած բոլոր խոչընդոտներէն անդին ինք յաջողութիւն պիտի ունենայ անպայման, որովհետեւ ինք առանձին չէ որ կը գործէ. իր բոլոր ծրագիրները Աստուծոյ օրհնութեան յանձնած է եւ Աստուծոյ

օգնականությունը պիտի ունենայ իր իւրաքանչիւր քայլափոխին:

2) ՈՒՐԱԽ ԸԼԼԱԸ երկրորդ սկզբունքը եւ գաղտնիքն է նորոգութեան:

Շատերու համար ուրախ ըլլալը, ուրախ եւ զուարթ երեւնալու տրամադրութիւնը յատուկ է միայն մանուկներուն: Մենք գիտենք որ մանուկները, երեխաները, կեանքին մէջ անոնք են, որոնց համար մենք կ'ըսենք ինչ ուրախ են: Անոնց կեանքին մէջ վերոյիշեալ մտահոգութիւնները գոյութիւն չունին: Իրենց ծնողներուն վրայ այնքան մեծ վստահութիւն ունին, որ պէտք չունին մտահոգուելու իրենց ուտելիքին եւ հագուելիքին համար, ուստի թեթեւ են եւ ուրախ: Եւ մենք յաճախ կը կարծենք որ ատիկա այնքան յատուկ է պզտիկներուն, որ մենք որպէս հասուն մարդիկ կարծես չենք կրնար կեանքին մէջ թեթեւ եւ ուրախ սիրտով ըլլալ ու ապրիլ: Մինչդեռ քրիստոնէական կեանքի ճիշդ հակապատկերը պիտի ըլլար ծանրութեամբ եւ միտքերով լեցուն կեանք մը ունենալը: Ընդհակառակը, Աստուծոյ կամքը եւ Աստուծոյ հրահանգն է նոյնիսկ, որ մենք ուրախ ըլլանք, ուրախութեամբ լեցնենք մեր կեանքը: Եւ ճիշդ ասոր համար, Քրիստոս Ինք թէրբեք դուք այդ մանուկներուն չնմանիք, անոնց սիրտը չունենաք, անոնց պէս չըլլաք՝ չէք կրնար Երկինքի Արքայութիւնը մտնել»:

Մանուկներուն նմանիլ առաջին հերթին Աստուծոյ վրայ վստահութիւն ունենալ կը նշանակէ: Այդ վստահութեամբ լեցուն մարդը, որ ինքզինք քրիստոնէայ կը կոչէ, պէտք է կարենայ ուրախ անցընել իր կեանքին օրերը: Եւ ուրախ անցընելու սկզբունքը՝ ԳՈՀԱՆԱԼ ԳԻՏԱԼՆ Է կեանքին մէջ: Այն մարդը, որ իր պայմաններէն եւ իրեն ներկայացած բոլոր բաներէն գիտէ գոհ ըլլալ եւ նաեւ փառք տալ Աստուծոյ, այդ մարդը դժգոհութեամբ չի լեցներ ինքզինք, այդ մարդը դժգոհութեանց բերած ու ձգած դառնութիւնները չի կուտակեր իր սիրտին մէջ. որովհետեւ եթէ դառնութիւնները երկար ժամանակ լեցնեն մեզ մեր միտքն ու սիրտը, այն ատեն Աստուծոյ իսկ մեր մէջ նետած հաւատքի, սիրոյ եւ երջանկութեան հունտերը կը խեղդուին այդ դառնութեան փուշերուն մէջ եւ չեն կրնար մեր կեանքերը ծաղկեցնել նոյնինքն այդ հաւատքով, սիրով եւ երջանկութեամբ: Մինչդեռ մեր կեանքերուն մէջ եթէ մենք միշտ գոհութեան տեղ տանք, ուրախութեամբ կը բանանք մեր միտքի եւ սիրտի ակօսները, եւ Աստուծոյ նետած այդ հունտերը կը ծլին ու կը ծաղկին եւ կը լեցնեն մեզ հաւատքով, սիրով, սրբութեամբ եւ երջանկութեամբ: Եւ այն ատեն նաեւ մենք կը զգանք, որ այդ ուրախութեամբ մենք կ'երիտասարդա-

նանք, այդ ուրախութեամբ կը նորոգուի մեր կեանքը:

3) ՄԵՐԸ, Աստուծոյ այդ հատիկը որ մեր մէջ դրուած եւ տրուած է՝ որպէսզի զայն աճեցնենք մեր մէջ, արդէն յիշեցինք, հիմնական տուեալ մըն է նորոգութեան:

Մարդկային մեր կեանքի պայմաններէն գիտենք, թէ սէրը ներքին այն բխումն է մարդուն, որ նախ իրեն սիրոյ յստակ առարկայ մը կու տայ, եւ անոր կ'ուղղէ, անոր համար կը լարէ իր բոլոր ոյժերը, իր բոլոր տրամադրութիւնները, իր ամբողջ ուշադրութիւնը: Կեանքին մէջ այն մարդը որ սէր ունի եւ սիրոյ առարկայ մը, այն մարդն է, որուն մէջ քնացած բոլոր տեսակի ոյժերն ու կարողութիւնները կ'արթննան կարծէք: Մարդը ինք իր թմբիւնէն կ'արթննայ եւ ինքզինք կը լարէ՝ ինքզինք տալու համար այն առարկային կամ անձին, զոր ինք կը սիրէ: Եւ ասիկա եթէ ճշմարիտ է կեանքին մէջ միակ առարկայի մը համար, միակ անձի մը կամ միակ ընտանիքի մը համար որ մերն է կամ մերը կը դարձնենք, որքան աւելի ճշմարիտ կրնայ ըլլալ անիկա, երբ նոյն այդ սէրը Աստուծոյ կ'ուղղենք՝ Աստուծոյ լեցուած՝ ուրիշներուն դարձնելու համար զայն: Եւ Աստուած կ'ուզէ եւ կը հրահանգէ նոյնիսկ, որ մեր մէջ այդ սիրոյ ոյժը մենք օգտագործենք՝ զայն ուժակա-նութիւն եւ գործ դարձնելու համար՝ բոլոր մարդոց հանդէպ: Կ'ուզէ, որ մենք կեանքին մէջ մեզ լարենք ու տրամադրենք ոչ միայն մեր սեփական ընտանիքին, այլ՝ Աստուծոյ ամբողջ ընտանիքին՝ ամբողջ Եկեղեցիին եւ համայն մարդկութեան: Եւ այդ սիրոյ ոյժը եթէ երբեք մենք զգանք, Աստուած կ'օգնէ որ զայն արծարծենք այնպէս, որ անիկա իսկապէս մեր մէջ դառնայ կենսատու սկզբունք, կեանք տուող սկզբունք, սաղմոսագիրին բացատրութեամբ՝ արծիւի մը կեանքին պէս նորոգէ մեր կեանքը եւ մեր թեւաբեկ սիրտերուն թեւ ու թռիչք տայ դարձեալ. այնպէս, որ կեանքին մէջ մենք այդ նպատակով եւ սիրով հարստացած՝ ուղղուինք դէպի մարդիկը:

4) ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ դէպի մարդիկը այդ ուղղութիւնն է, որ իբրեւ եզրափակիչ սկզբունք՝ կեանքին մէջ մեզի նորոգութիւն եւ նորութիւն կրնայ բերել:

Գիտենք վստահաբար, թէ ոչ միայն մեր զգացած ուրախութիւնն է որ մեզ կը նորոգէ, այլ մանաւանդ՝ այն ուրախութիւնը, որ մենք ուրիշներուն կու տանք մեր բարեգործութեամբ: Մեր մէջ թերեւս ամէնօրեայ փորձառութիւն կը դառնայ անիկա, երբ կը տեսնենք թէ մեր տուած իւրաքանչիւր նուէրը, մեր բերած իւրաքանչիւր նորութիւնը մեր զաւակներուն եւ ուրիշներուն կեանքին մէջ՝ այնքան երջանկութեամբ եւ ուրախութեամբ կը համակէ, ժպիտով ու սիրով կը լեցնէ

զանոնք մեզի հանդէպ, երախտագիտութեան ջերմութիւնը եւ շնորհակալութեան քաղցրութիւնը կը ծաղկեցնէ անոնց դէմքերուն վրայ, ինչպէս անոնց սիրտերուն խորը, որովհետեւ ամէն անգամ որ մարդ բան մը ստանայ ստացուածին հետ ինք կը լեցուի նաեւ հոգեպէս: Նիւթէն անդին, տրուած հոգեկան ջերմութիւնն է որ կը լեցնէ զինք: Եւ փոխադարձաբար, երբ ուրիշներուն մէջ մենք կը տեսնենք այդ ուրախութիւնը, այն ուրախութիւնը որ մենք կը պարգեւենք մեր իրենց տուածով, մենք ալ կը թեթեւանք մեր մտահոգութիւններէն ու մեր նեղութիւններէն, որովհետեւ, բնականաբար, մեր ցաւերն ու վիշտերը կը նահանջեն այն ուրախութեան դիմաց, որ մենք կը պարգեւենք ուրիշին: Այդ մեր ուրիշին տուածը կը վերադառնայ մեզի, այս անգամ մեզ լեցնելու համար անոր բերած նորոգութեամբ: Եւ վստահաբար իւրաքանչիւրս ունինք փորձառութիւնը այն ուրախութեան ու թեթեւութեան, որ այդ նուիրումին, բարեգործութեան ուրախութիւնը կրնայ բերել մեր կեանքին:

Նոր Տարուան առիթով փոխանակ ամենազգի նիւթական բարիքներ հայցելու Աստուծմէ, խնդրեցէ՛ք որ ձեր կեանքին հնութիւնը նորութեան փոխակերպուի կեանքի նոր աւիշով, թարմութեամբ:

Հաւատքի վստահութիւնը ուզեցէ՛ք Աստուծմէ, ո՛վ մարդիկ. թող այդ վստահութիւնը լեցնէ ձեր սիրտերը, որովհետեւ անիկա խաղաղութիւն կը բերէ միտքերուն:

Սէ՛ր ուզեցէ՛ք Աստուծմէ, ո՛վ մարդիկ. որովհետեւ սէրն է միայն որ կեանքին մէջ կը զգացնէ, թէ դուք լեցուն էք, լեցուն այնքան, որ չէք կրնար չպարպուիլ, չէք կրնար ձեր գեղուն բաժակէն չիրամցնել ու չխմցնել նաեւ ուրիշներուն:

Աստուծմէ երջանկութիւն ուզեցէ՛ք, ո՛վ մարդիկ, այն երջանկութիւնը սակայն, որ բարեգործութեամբ կու գայ: Ուզեցէ՛ք, որ Աստուած ձեր քայլերը բարեգործութեան ճամբուն ուղղէ, եւ այն ատեն ձեր երջանկութիւնը ինքնին կու գայ՝ ձեր պարգեւելովը եւ ձեր բաշխելովը: Եթէ դուք չբաշխէք՝ չէք կրնար այդ ուրախութիւնը ունենալ:

Եւ, սորվինք բոլորս, որ եթէ մենք չծրագրենք մեր կեանքը, չօգնենք մենք մեզի եւ չլեցնենք մեր կեանքը, չենք կրնար Աստուծոյ օրհնութիւնը հայցել մեր կեանքին վրայ:

Այս մտածումներով ձեզի կը մաղթենք նորոգուած, հաւատակամ, յուսալից ու սիրազեղ կեանք մը, լի բարօրութեամբ եւ երջանկութեամբ:

Հնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ բոլորիդ:

ԾՆՈՒՆԴ, ԱՍՏՈՒԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

* Երեք անուններ, բայց խորքին մէջ երկու տօներ, որոնք Հայաստանեայց Եկեղեցին միշտ միասին կը տօնէ՝ ամօրոյն պահպանելով սկզբնական Եկեղեցւոյ հնագոյն աւանդութիւնն ու սովորութիւնը, որ միաժամանակ պայքարելու համար էր քրիստոնէական հաւատքին սպառնացող սխալ եւ աղանդաւորական ըմբռումներու դէմ:

ԱՍՏՈՒԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

* Քրիստոսի ծնունդը առաջին հերթին Յայտնութիւն կամ Աստուածայայտնութիւն կը կոչուի, որովհետեւ Աստուած եկաւ մեզի հետ ըլլալու եւ մեր մէջ բնակելու, ինչպէս Մատթէոս Աւետարանիչ Ս. Կոյս Մարիամի յղութեան եւ Յիսուսի ծննդեան դէպքերը պատմած ատեն կ'ըսէ. «Այս բոլորը պատահեցան, որպէսզի կատարուի այն ինչ որ Տէրը ըսաւ Եսայի Մարգարէին միջոցաւ. *“Ահա՛ կոյսը պիտի յղանայ եւ որդի մը ծնի, եւ զայն պիտի կոչեն Էմմանուէլ”*, որ կը նշանակէ՝ Աստուած մեզի հետ» (Մտ 1.22-23):

* Հին Կտակարանին մէջ Աստուած բազմաթիւ ուրիշ կերպերով յայտնուած էր (հմմտ. Եբր 1.1), բայց հիմա կու գար կատարեալ յայտնութիւնը: Աստուած կու գար ուղղակի մեր մէջ բնակելու, մեզի պէս ըլլալու, մարդկային բնութիւնը ամբողջապէս Իր վրայ առնելու: Քրիստոսի ծնունդը մարդուն եւ Աստուծոյ հանդիպումը պիտի ջըլլար պարզապէս, այլ՝ մարդուն եւ Աստուծոյ սերտ միութիւնը՝ անսկզբնական Բանին (Աստուածորդիին) կատարեալ անձնաւորութեան մէջ, այնպիսի անշփոթ եւ կատարեալ միութեամբ մը, որ այնուհետեւ մեր հայրերը մեր Տիրոջ՝ մարդացեալ Քրիստոսի մասին արտայայտուած ատեն զԱյն պիտի սահմանէին իբրեւ «միաւորեալ մէկ բնութիւն»:

* Այս յայտնությունը կրկնակ նպատակներ ունի:

1) Մարդուն տալ Աստուծոյ ճշմարիտ ճանաչողութիւնը:

2) Ինքզինք պարզել մարդուն:

3) Փրկութեան պարզելը տալ մարդուն:

ԾՆՈՒՆԴՆ ԵՒ ՄԵՆՔ

* Քրիստոս մարդացաւ եւ մանկացաւ՝ մեզի տալու հիմնական քանի մը ճշմարտութիւններ:

Ա) ՄԱՐԴԱՑԱԻ

1) Աստուած մարդացաւ որպէսզի անհայելին ըլլայ հայելի, որպէսզի մարդը անձնական, «դէմ առ դէմ» կապ մը հաստատէ իր Արարիչին հետ (անցեալին՝ Մովսէս եւ կարգ մը մարգարէներ միայն): Առանց անհատական եւ անձնական այս կապին՝ ծնունդը ոչ մէկ իրական նշանակութիւն կ'ունենայ մեզի համար, որովհետեւ զայն ընդունիլն ու տօնելը մեր մէջ բան չեն փոխեր: Կը տօնենք, բայց խորքին մէջ կը մնանք անհաղորդ: Բայց երբ Քրիստոսի հետ մեր կապը կը դառնայ անձնական մեր ամբողջ կեանքը կը փոխուի: Տօնը նոր նշանակութիւն կը ստանայ, յեղափոխիչ զօրութիւն ձեռք կը բերէ:

2) Աստուած մարդացաւ, որպէսզի մենք սորվինք Իր կամքը: Եւ այդ կամքը այն է, որ մարդը «մարդանայ» ինքն իր մէջ:

3) Աստուած մարդացաւ, որպէսզի մարդը «մարդանայ» նաեւ իրեն նման մարդոց հանդէպ իր մտածողութեան ու կեցուածքին մէջ:

4) Աստուած մարդացաւ, որպէսզի մարդը «աստուածանայ», կատարեալ նմանութիւնը դառնայ իր երկնաւոր Հօրը:

Բ) ՄԱՆԿԱՑԱԻ

1) Աստուած մանկացաւ որպէսզի մարդուն սիրտի պարզութիւն սորվեցնէ (անկեղծութիւն, պարկեշտութիւն, ազնուութիւն, բարութիւն):

2) Աստուած մանկացաւ որպէսզի մարդուն սիրտի մաքրութիւն սորվեցնէ (սրբութիւն, վեհութիւն):

3) Աստուած մանկացաւ որպէսզի Անբովանդակելին ըլլայ մարդկային գիրկին մէջ ծրարելի, որպէսզի մեզի սորվեցնէ, թէ Աստուած կ'ուզէ անսահմանօրէն մօտիկ ըլլալ մեզի եւ մեզ Իր գիրկին մէջ առնել վերստին, որպէսզի մենք ալ զԱյն մեր սիրտին մօտիկ եւ սիրտին մէջ ունենանք միշտ, ինչպէս մանուկ մը սիրով կը գրկենք ու մեր սիրտին վրայ կը սեղմենք:

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՆՔ

* Մարդեղութեան եւ Աստուածայայտնութեան խորհուրդին ու նպատակին լրացուցիչն է Քրիստոսի մկրտութիւնը մեզի տալու համար կարելորդ պարզել մը եւ աւետիս մը: Ինքզինք ամբողջապէս նոյնացնելու համար բոլոր մարդոց հետ, եւ բոլորին փոխարէն մկրտուելու, ջախջախելով մարդկութեան թշնամի Առաջին Օծին գլուխը, եւ սկիզբէն իսկ խորհրդանշականօրէն ջնջելով բոլորին մեղքերը, որոնք Իր վրայ առաւ՝ զանոնք Իր անձին մէջ սպաննելու համար խաչափայտին վրայ:

ՓՐԿԻՉԻՆ ԿԱՐԻՔԸ ԿՐ ԶԳԱՆՔ

* Բոլոր ժամանակներէն աւելի մեր դարը տագնապներու դարն է: Եւ այդ տագնապներուն մէջ մարդիկ իրենք իրենց հարց կու տան, թէ ի՞նչ ուղղութեամբ եւ ի՞նչ բանի մէջ պիտի փնտռեն փրկութիւնը կամ փրկիչ մը: Եւ գործնապէս կը փնտռեն ալ, նոյնիսկ եթէ յաճախ երեւութապէս կը մերժեն փրկիչի մը կարիքը կամ գաղափարը:

* Ինչպիսի՞ փրկիչի մը կարիքը կը զգայ աշխարհը:

1) Շատեր Փրկիչի մը մասին կը մտածեն զուտ քաղաքական հայեացքով, ճիշդ՝ Քրիստոսի ժամանակակից հրեաներուն պէս: (**Քաղաքական տագնապ, ազգային տագնապ**):

2) Շատեր Փրկիչի մը մասին կը մտածեն զուտ ընկերային հայեացքով: (**Ընկերային տագնապ, տնտեսական տագնապ, մարդու տագնապ**):

3) Շատեր Փրկիչի մը մասին կը մտածեն զուտ բարոյական հայեացքով: (**Բարոյական տագնապ, արժէքներու տագնապ**):

4) Շատեր Փրկիչի մը մասին կը մտածեն զուտ իմաստասիրական հայեացքով: (Միտքի կամ մտաւորական տագնապ):

* Վերոյիշեալ բոլոր տագնապները եւ անոնց դիմաց զգացուած կարիքները, սակայն, կապ չունին Քրիստոսի հետ, Եկեղեցւոյ ճանցցած եւ ընդունած Փրկիչին հետ, եւ հոգիներու փրկութեան հետ: Անոնք, նոյնիսկ ամենէն վերացականները, միշտ կապուած են նիւթական հասկացողութեանց, որոնք արհամարհելի չեն, որոնք իրենց լուծումները պէտք է ունենան, բայց պէտք չէ շփոթուին այն փրկութեան հետ, որուն կեդրոնը մարդ անհատը ինքն է իր ներկայով ու գալիք յաւիտեանով, որուն յարաբերաբար միայն կ'արժեւորուին միւսները, իսկ առանց անոր՝ կը կորսնցնեն իրենց ամբողջ նպատակը եւ ուստի նշանակութիւնը:

5) Մենք Փրկիչին մասին կը մտածենք հոգեւոր հայեացքով՝ Անոր մէջ տեսնելով մեր ճշմարիտ ազատագրութիւնը: (**Հոգեւոր տագ-**

նապ):

ա) Աստուծոյ ճշմարիտ գիտութիւնը - Հաւատք: Ծնունդին եւ Աստուածայայտնութեան առաջին նպատակն էր մարդուն տալ Աստուծոյ ճշմարիտ ճանաչողութիւնը, ոչ թէ տեսական հաւատք մը, աստուածաբանական կամ իմաստասիրական խորհողութիւն մը Աստուծոյ մասին, որ վերացական, կեանքէն կտրուած եւ անպտուղ գիտութիւնը կրնայ ըլլալ Աստուծոյ մասին, այլ ճշմարիտ, իրական եւ անձնական ճանաչողութիւնը (Ճիշդ ինչպէս տարբեր է մէկու մը մասին գիտնալը եւ ուղղակի անձնապէս զայն ճանչնալը):

բ) Մարդուն տալ փրկութեան պարգեւը: Խօսքը երբեք ալ վերացական պարգեւի մը մասին չէ, այլ՝ իրական, շօշափելի ու գործնական: Այս կապակցութեամբ յիշենք ինչ որ Պօղոս Առաքեալ Ամբակում Մարգարէին բառերով կը շեշտէ, թէ «արդարը իր հաւատքով պիտի փրկուի» (Ամբ 2.4: Հռ 1.17): Բայց յաճախ մենք հաւատք բառը կ'առնենք իր առաջին իմաստով միայն, որ է՝ Աստուծոյ եւ յաւիտենական ճշմարտութիւններուն մասին գիտնալ եւ զանոնք ընդունիլ: Կը մոռնանք երկրորդ կարեւոր նշանակութիւնը, որ է՝ գիտցուածն ու ընդունուածը կիրարկել, գործադրել: Առանց ասոր հաւատքը կը մնայ հաւատք, բայց ծնունդ չի տար փրկութեան (ի՞նչ օգուտ, օրինակ, եթէ գիտեմ եւ նոյնիսկ համոզուած եմ որ իմ ցաւերուս դարմանը այսինչ դեղն է, բայց զայն չեմ առներ...): Շատ դիպուկ է Յակոբոս Առաքեալին դիտողութիւնը այս մասին. «Դուն կը հաւատաս, թէ մէկ Աստուած կայ, չէ՞. շատ լաւ կ'ընես: Բայց դեւերն ալ նոյն բանին կը հաւատան եւ կը սարսափին: Հետեւաբար, հասկցիր, անմիտ մարդ, որ առանց գործերու հաւատքը անօգուտ է» (Յկ 2.19-20): Արդ, Աստուածորդին իբրեւ մարդ յայտնուեցաւ, «որպէսզի Իրեն հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ» (Յհ 3.16):

գ) Սէր: Հաւատքի գործնական պտուղներէն առաջինն ու կարեւորագոյնը: Բայց միաժամանակ սէրը ինք ազատագրող է: Դժուար է թերեւս Քրիստոսի պահանջած սէրը կիրարկել, ինչպէս յաճախ կ'ըսենք ու կը լսենք մեր շրջապատէն (յիշէ՛ Մտ 5.44): Բայց երբ սորվինք զայն կիրարկել, անհկա մեզ դուրս կը բերէ մեր բոլոր պայմանականութիւններէն ու կը բարձրացնէ Աստուծոյ կամեցած որդիութեան մակարդակին:

դ) Հաճութիւն (բարի հայեացք մարդոց հանդէպ, բարութեան յաղթանակի հաւատք):

ե) Խաղաղութիւն: Ներքին անդորր:

զ) Յոյս՝ նոր կեանքի եւ նորոգեալ աշխարհի, Աստուծոյ Թագաւորութեան:

ՈՐՊԷՍՋԻ ՉՄՆԱՆՔ ԱՌԱՆՑ ՄԱՌԻԻ ԵՒ ԽԱՆՁԱՐՈՒՐԻ

«Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով ի Հօրէ՛ ի սուրբ այրին բազմեցաւ» (Շարական)

Լուսաւոր աստղ չկար այն գիշեր: Երեկոն կանուխ իջեր էր, եւ արդէն մութ գիշեր էր, պարզկայ ու ցուրտ գիշեր մը, երբ երկինքի բոլոր աստղերը բոցավառած էին կարծէք, եւ իրենց փոխնիփոխ փայլփլունով կը զարդարէին երկնային աներեւոյթ ծառը, կարծէք Կեանքի Ծառին յաւիտենաբուխ պտուղներուն թոյրն ու թովջանքը ունենային:

Երեկոն կանուխ իջեր էր, եւ արդէն մութ գիշեր էր, բայց տակաւին տեղ չէին հասած անոնք: Երկու ճամբորդներ էին, երիտասարդ այր մը հետիոտն, եւ դեռատի կին մը, իշու մը քամակին նստած: Ամբողջ օրը քալած էին արդէն, եւ յոգնութիւնը կը ծորէր իրենց վրայէն. բայց կարելի չէր կանգ առնել, ամէն գնով պէտք էր տեղ մը գտնել: Տեղ մը փոքրիկ քաղաքին մէջ, որ սակայն կը յորդէր եկուոր բազմութեամբ, եւ ամէն իջեւան եւ նոյնիսկ ամէն տուն արդէն լեցուն էր Յուդայի զարմերով:

Մարդահամարի օրեր էին: Կիրենիոս կառավարիչին հրահանգն էր, որ ամէն մարդ երթայ իր ցեղախումբին եւ ազգատոհմին բնիկ քաղաքը կամ վայրը՝ հոն արձանագրուելու համար: Բեթղեհէմը Դաւիթի քաղաքն էր, եւ անոնք որոնք Դաւիթի սերունդէն էին՝ հոն պէտք էր արձանագրուէին: Եւ ահա՛ Դաւիթի համեստ մէկ զարմը՝ Յովսէփ, իր դեռատի նշանածին հետ միասին կու գար այնտեղ արձանագրել տալու իր նորակազմ ընտանիքը:

Եւ ինչ ընտանիք: Յոգնութեան չափ եւ աւելի՛ ուրիշ հոգ մը կը բեռնաւորէր Յովսէփ անուն այս ազնուական հոգին: Ահա՛ հետը բե-

րեր էր իր նշանածը, իր հարսնցուն, որ արդէն յղի էր իննը ամիսներէ ի վեր: Երբ առաջին անգամ իմացաւ անոր յղի ըլլալը, քիչ մնաց որ պայթեր իր սիրտը: Բայց անսահմանօրէն բարի իր սիրտը կտրակա- նապէս հրաժարեցաւ ամէն չար խորհուրդէ: Կը բաւէր կարճ կապել եւ լռիկ մնջիկ արծակել իր նշանածը: Բայց այն ինչ տեսիլք էր որ ու- նեցաւ, երբ հրեշտակը եկաւ իրեն աստեղիւ, թէ ծնելիք մանուկը մարդկային ծնունդ չէ, այլ Աստուծոյ, Սուրբ Հոգիէն, եւ ինք, ըստ Աս- տուծոյ հրամանին, պէտք է Յիսուս դնէ Անոր անունը, «որովհետեւ Անիկա իր ժողովուրդը պիտի փրկէ իրենց մեղքերէն» (Մտ 1.20-21): Եւ հիմա, լռութեան մէջ, արդէն քանիերորդ անգամն ըլլալով կը խոր- հէր անիմանալի երկիւղածութեամբ, թէ ինչպիսի՞ մանուկ մը պիտի ըլլայ Անիկա աստուածային այս ծնունդը:

Յոգնութենէն սպառած վիճակի մէջ էր յղութեամբ եւ սպասումով ծանրաբեռն նորատի մայրը, որ իշուն քամակին կ'օրօրուէր, աղօթե- լով որ վայրկեան առաջ գտնեն յարմար տեղ մը, պատսպարան մը գէթ, ուր կարենայ հանգիստ տալ իր խոնջած մարմինին: Իննամսեայ յղութեան վերջին օրերը, թերեւս ալ վերջին ժամերն էին, եւ արդէն նախազգացումը կ'ըսէր, թէ մօտ է ծնունդը Անոր, որ Գաբրիէլ հրեշ- տակը աստեղեր էր իրեն: Ինչ անըմբռնելի խորհուրդ մըն էր, որ հա- ղորդուած էր իրեն, եւ հիմա իր մէջ կը կրէր՝ առանց երբեք կարենալ չափելու խորհուրդին խորութիւնը: Եւ ո՞վ կրնար հասկնալ աստուա- ծային տնօրինումը, եւ հաւատալ, թէ «Կոյսը պիտի յղանայ եւ որդի մը պիտի ծնի, եւ զայն պիտի կոչես Էմմանուէլ», որ կը նշանակէ՝ Աստուած մեզի հետ (Ես 7.14: Հմմտ. Մտ 1.23):

«Աստուած մեզի հետ»: Ինչպէ՞ս կամ ի՞նչ ձեւով պիտի ըլլար ա- տիկա: Եւ հիմա իր որովայնին մէջ շարժկտացող այս երեխան ի՞նչ անբացատրելի կապով կապուած է անհասանելի եւ անիմանալի Աս- տուծոյ հետ, որուն ահաւոր անունն իսկ արտասանելու կը վախնար: Բայց միաժամանակ իր որովայնին մէջ Անոր իւրաքանչիւր խլրտու- մը ի՞նչ երջանկութեամբ կը համակէր զինք: Ու կը մտածէր, թէ Ա՞ն ա- տիկ անհամբեր դարձեր էր աշխարհի գալու, թէ՞ ինք դարձեր է անհամբեր եւ կ'ուզէ վայրկեան առաջ տեսնել քնքոյշ դէմքը Անոր, որ իր մարմինէն մարմին ու ոսկորէն ոսկոր առաջին սիրասուն ծնունդը պիտի ըլլայ. երկնահանգոյն դէմքը Անոր, որուն ծնունդը իր ժողովուր- դին եւ ամբողջ աշխարհին փրկութեան աստիս պիտի բերէ, ըստ հրեշտակին պատգամին. երկնալոյս դէմքը Անոր, որուն պիտի դառ- նան այս աշխարհի խաւարին մէջ տուայտող լուսակարօտ աչքերն ու սիրտերը բոլոր:

Ու կը շարունակէին քալել, մտնել թաղէ թաղ, զարնել բոլոր իջե-

ւաններուն դռները եւ տեղ հայցել, հայցել թախանձագի՛ն: Եւ, ի վեր- ջոյ, իջեւանատէր մը գթաց անոնց, երբ մանաւանդ տեսաւ յղի ման- կամարդին յոգնատանջ վիճակը: Սենեակ չունէր, սակայն. միայն ախոռին մէջ տեղ կար՝ եթէ կ'ուզէին գիշերը հոն պատսպարուիլ: Եւ Յովսէփ ու Մարիամ ընդունեցին առաջարկը: Կը բաւէր որ տաքուկ էր այնտեղ եւ հանգիստի ամէն յարմարութիւն կարելի էր գտնել:

Եւ հոն մտան ճիշդ ատենին, որովհետեւ հասած էր Մարիամի ծննդաբերութեան ժամանակը: Շատ չանցած, խեղճուկ ախոռը պի- տի դառնար մարդկային առաջին յարկը, ուր պիտի հնչէր մարդաց- եալ Աստուածորդիին երկնաբարբառ առաջին կանչը՝ երանական ուրախութեամբ թնդացնելով Մարիամի եւ Յովսէփի աստուածավախ սիրտերը:



Այսպէս ծնաւ Քրիստոս: Եւ այդ ծնունդը այսօր, ինչպէս միշտ, մեզ կը լեցնէ ցնծութեամբ, մեր փրկութեան բերկրանքովը, եւ միաժամա- նակ հիացումովն ու յափշտակութեամբը այն անբացատրելի բայց յաւէտ պաշտելի խորհուրդին, որ այսօր մեզի յայտնուեցաւ հրեշտակ- ներուն երկնային աստիսով եւ հովիւներուն անպաճոյճ եւ անսուտ վկայութեամբ:

Այդ խորհուրդը այսօր երեք երեսներով կը բացուի մեր դիմաց՝ ուշադրութիւն հրաւիրելով երեք իրողութիւններու վրայ.

1) ԾՆՈՒՆԴԸ ՄԵՐ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀՐԱԻՐԷ ԵՐԿ- ՆԱՏՈՒ ԸՆԾԱՅԻՆ՝ ԾՆՈՂ ՄԱՆՈՒԿԻՆ ԿՐԱՅ

Ոչ միայն Մարիամ ու Յովսէփ այդ խորհուրդը իրենց հոգիներուն մէջ որոճացին անդադար, փորձելով հասկնալ այն ինչ որ Աստուած կը կատարէր մարդկային պատմութեան մէջ՝ այդ պատմութիւնը յե- ղաշրջելու եւ փրկութեան ելքը ցոյց տալու համար, այլ անոնց հետ եւ անոնց պէս իրենց ժամանակակից թէ յետագայ մարդկութեան բոլոր սերունդները տեսաբար իրենց խորհրդածութեան նիւթ դարձուցին այն գերազանց պարզեւր, այն երկնատուր ընծան, որ Աստուած կա- տարեց մարդ արարածին, Իր Միածին Որդին զրկելով աշխարհ, որ- պէսզի մարմին առնէ, մարդանայ եւ ըլլայ «Աստուած մեզի հետ»:

Ինչպէ՞ս Աստուած կրնայ ըլլալ մեզի հետ, մեր միջեւ: Թէպէտ Աստուած բազմիցս խոստացած էր ատիկա, եւ թէպէտ Հին Կտակա-

րանին մէջ բազմաթիւ կերպերով ալ պատկերացուցած էր զայն, բայց մարդկային միտքը չէր կրնար իրարու հետ հաշտեցնել երկուքը բացարձակ սրբութիւնն ու բացարձակ ճշմարտութիւնը եղող Աստուածութիւնը եւ մեղսավարակ անմաքրութեան եւ եղծուած բնութեան մը ճահիճին ու ստութեան մէջ ապրող մարդ արարածը: Մարդկային միտքը չէր կրնար մարդը կամ մարմինը տեսնել եւ անոր մէջ տեսնել զԱստուած: Մարդկային միտքը չէր կրնար միաժամանակ երկինքն ու երկիրը տեսնել, եւ մանաւանդ զանոնք միախառնուած տեսնել մարդկային անձի մը մէջ:

Եւ սակայն, «Ան որ երկինքն ու երկիրը չէին կրնար բովանդակել, խանձարուրի մէջ փաթուեցաւ. առանց Հօրմէն բաժնուելու սուրբ քարայրին մէջ բազմեցաւ», ինչպէս կը բանաձեւէ սրբազան շարականազիրը քերթողահայր մեծն Մովսէս Խորենացին: Խանձարուրի մէջ փաթուած պարզուկ մանուկը նոյնինքն այս սքանչելի եւ ահաւոր Տէրն ու Աստուածն էր, որուն քերովբէներն իսկ չեն համարձակիր նայիլ, եւ որուն փառքը ամբողջ տիեզերքը կը լեցնէ, եւ երկինքն ու երկիրը ոչ իսկ կրնան բովանդակել զայն: Իբրեւ մանուկ յայտնուեցաւ Ան, որ սուրբ քարայրին մտորին մէջ հանգչած ըլլալով հանդերձ միաժամանակ անբաժան է Իր Հօրմէն, ինչպէս կը ճշդէ աստուածաբան աւետարանիչը Յովհաննէս (Յհ 1.18):

Բայց ճիշդ այդ էր գաղտնիքը: Աստուած կու գար մարդկային մարմինին մէջ հաշտեցնելու զԱստուած եւ մարդ, եւ մարդը վերստին կանչելու աստուածանմանութեան: Աստուած կու գար մարդկային մարմինով յաղթահարելու մեղքը մեղքի անէծքէն մեզ փրկելու եւ անմահութեան յոյսը մեզի պարգեւելու համար (հմմտ. Եփ 2.14-16: Կղ 1.14 եւ 20): Ով որ մարդացեալ եւ մանկացեալ Յիսուսին մէջ կը տեսնէ զԱստուած եւ կը հաղորդուի Անոր հետ, փրկութիւնը եւ անմահութիւնը կ'առնէ իր մէջ: Իսկ ով որ մտորին մէջ կը տեսնէ միայն մարդը անիկա դատապարտուած է իր մեղքերուն մէջ մնալու, զուրկ երկնատուր պարգեւէն եւ անմահական Հացէն, որ մեզ կը կապէ յաւիտենական կեանքին:

2) ԾՆՈՒՆԴԸ ՄԵՐ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀՐԱԻՐԷ ԱՇ-ԽԱՐՀԻ ԿԱՐԻՔՆԵՐՈՒՄ ԿՐԱՅ

Անտեսուած քարայրի մը եւ արհամարհուած ախոռի մը մէջ ծնելով եւ օրօրոցի փոխարէն մտուր մը ունենալով՝ մեր Տէրն ու Փրկիչը մեր ուշադրութիւնը կը հրաւիրէ երեւոյթներու վրայ, որոնք յաճախ մեր ուշադրութենէն կը վրիպին կամ որոնք մեր ուշադրութեան արժանի

իսկ չենք սեպեր: Յիսուս ուշադրութիւն կը հրաւիրէ փոքր բաներուն եւ մանաւանդ աշխարհի փոքրերուն վրայ, աննշան եւ անծանօթ մնացածին, խեղճին եւ անտեսուածին, տկարին ու լքուածին, չքաւորին ու կարօտեալին վրայ: Եւ մանուկ մը խորհրդանիշն է այդ բոլորին: Աշխարհի մէջ փոքր է ան եւ աննշան ու անծանօթ, խեղճ եւ անկարելոր, տկար եւ անտեսուած, եւ միշտ ուրիշներու օգնութեան ու խնամքին կարօտ:

Արդ, նայեցէ ք աշխարհին, որպէսզի ձեր շուրջը տեսնէք մարդկային ընկերութեան վերաբերումը բոլոր տկարներուն ու խեղճերուն, աննշաններուն եւ անտեսուածներուն, չքաւորներուն ու կարօտեալներուն հանդէպ: Կա՛յ այդպիսիներուն, որովհետեւ աշխարհը առհասարակ անտարբեր ու սառն է անոնց հանդէպ, արհամարհող ու դառն է անոնց հանդէպ, անողոք ու չար է անոնց հանդէպ: Աշխարհի տարածքին միլիոնաւոր են սովահար ու լքուած մանուկները, իւրաքանչիւր տարի հարիւր հազարներով կը հաշուուին սնունդի ու դեղօրայքի ու խնամքի պակասէն մահացողները, նոյնպէս տարեկան հարիւր հազարներով կը հաշուուին չարաշահումի եւ ծանր աշխատանքի բռնադատուած երեխաները, առանց ուսումի եւ փողոցները մնացած մանուկները, յաճախ իրենց ծնողներուն կողմէ իսկ լքուած: Մեզմէ քանի՞ հոգի երբեմն կանգ կ'առնէ մտածելու համար նման երեխաներու մասին: Եւ անոնք անպայման հեռաւոր աշխարհներու մէջ չեն: Յաճախ, մեր քթին տակ են անոնք, մեր աչքին դիմաց եթ ուզենք մեր աչքերը բանալ եւ տեսնել մեզ շրջապատող ընկերութեան տգեղ ու տխուր երեսները: Ո՞վ տէր պիտի կանգնի անոնց: Ո՞վ խանձարուր մը պիտի տայ անոնց, ո՞վ մտուր մը կամ օրօրոց մը պիտի հայթայթէ անոնց:

Մեր Տէրն ու Փրկիչը կամաւորապէ՛ս ընտրեց խեղճ պայմաններու մէջ ծնիլ՝ Ինքզինքը նոյնացնելու համար բոլոր խեղճերուն եւ անօգնականներուն հետ, որոնց տէրը եւ օգնականը Աստուած ինքն է: Անոնց հանդէպ Իր անսահման սէրը եւ գուրգուրանքը յայտնեց այդ ձեւով Ինքզինքը վիճակակից ու բախտակից դարձնելով անոնց: Բայց ատիկա ըրաւ նաեւ, որպէսզի բոլոր Իրեն հաւատացողներս Աստուծոյ նոյն սէրը եւ գուրգուրանքը մեր սիրտերուն մէջ արծարծած, Իր Ս. Ծնունդը տօնած եւ զԻնք պաշտելու խոնարհած ատեն՝ Իր օրինակով խոնարհինք դէպի բոլոր փոքրիկները, բոլոր լքեալները, բոլոր կարօտեալները՝ անոնցմէ իւրաքանչիւրին մէջ տեսնելով մէկական Յիսուս մանուկներ, եւ անոնց ընծայենք այն, ինչ որ պիտի ուզէինք Աստուծոյ ընծայել, որպէսզի այն օրը լսենք Իր երանական ձայնը, որ կ'ըսէ. «Ճշմարիտ կ'ըսես՝ ձեզի, որովհետեւ Իմ այս փոքր

եղբայրներու մէկուն ըրիք, ինծի ըրած եղաք» (Մտ 25.40):

3) ԾՆՈՒՆԴԸ ՄԵՐ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀՐԱԻՒՐԷ ՄԵՐ ՀՈԳԻԻ ԿԱՐԻՔՆԵՐՈՒՆ ԿՐԱՅ

Յիսուսի ծնունդը ո՛չ միայն աշխարհին, այլ՝ մեր անձերուն մասին ալ մեզի ըսելիք մը ունի անպայման: Մեր ուշադրութիւնը մեր ներսիդին կը դարձնէ անհկա, մեզի յիշեցնելով նաեւ մեր հոգիին կարիքները, որոնք նոյնքան անտեսուած են յաճախ մեր կողմէ:

Մարդ արարածը շատ յաճախ նկատի կ'առնէ իր շրջապատը եւ երբեմն նոյնիսկ կ'աշխատի այդ շրջապատին համար, զայն իր մտապատկերով վերաշինելու, զայն բարեփոխելու, անոր մէջ իր ներդրումը ունենալու համար: Կը զբաղի ուրիշներով, կը փորձէ տիրութիւն ընել, ուղղութիւն եւ առաջնորդութիւն տալ անոնց, երբեմն նոյնիսկ դրականօրէն օգնելով եւ անոնց կեանքը լեցնելով: Եւ յաճախ այնքան կը զբաղի աշխարհով, իր շրջապատով եւ ուրիշներով, որ մարդս կը մոռնայ իր անձին, իր հոգիին կարիքները, իր սեփական պակասները եւ կարօտութիւնները, իր ուղղութիւնը եւ առաջնորդութիւնը, եւ իր փրկութիւնը:

Ըսէ՞ք ինծի, ո՞վ հայրեր եւ մայրեր, որքա՞ն ընտանիքներ կան, որոնք ամէն հանգստաւէտ պայմաններ ունին, բայց որոնք չեն կրցած իրենց ընտանեկան յարկը մտորի վերածել եւ ներսը պահել իրենց գաւակները՝ անոնց ներկայութեան քաղցրութեամբ եւ ուրախութեամբ ջերմացնելու համար իրենց բոյնը:

Ըսէ՞ք, ո՞վ երիտասարդ քոյրեր ու եղբայրներ, ինչքա՞ն է թիւն անոնց, որոնք ամէն գեղեցիկ խտէրներով եւ հոգիի ու մարմինի բարեմասնութիւններով օժտուած ըլլալով հանդերձ, չեն կրցած գտնել մտոր մը՝ անոր շուրջ իրենց բոյնը կերտելու համար:

Ըսէ՞ք, ո՞վ Քրիստոսի հաւատացեալ գաւակներ, ձեր մէջ քանի՞քանի սիրտեր ու հոգիներ կան, որոնք իրենք զիրենք աշխարհի ամէնէն շռայլ լոյսերով ու պատկերներով հարստացուցած ու լեցուցած են, բայց մոռցած են անոնց մէջ մտոր մը պատրաստել եւ խանձարուր մը պահել Յիսուս Մանուկին:

Սքանչելի բան է տէր կանգնիլ ուրիշներուն, մանաւանդ անօգնականներուն: Երիցս երանութեան արժանի է խանձարուր մը տալ չունեցողին, մտոր մը կամ օրօրոց մը հայթայթել անտուն եւ անպատսպար երեխաներուն: Բայց անոր կողքին կայ մեր մտորը, մեր սիրտը, մեր հոգին: Արդեօք այդ մտորը դատա՞րկ է, թէ՞ լեցուն: Արդեօք Յիսուս մանուկ մը ունի՞նք այնտեղ պառկած, Յիսուս Մանուկ

մը, որ իր ներկայութեամբ Երկինքը բանայ մեր հոգիին մէջ, երկնային փրկութեան աւետիսին դօղանջը հնչեցնէ մեր խոհքին ու խօսքին մէջ, եւ իր լոյս ներկայութեամբ փարատէ մեր ներաշխարհին մէջ կուտակուած հոգերու եւ տրտմութեանց խաւարը՝ մնայուն առաւօտի վերածելու մեր օրերը:

Ես պիտի ուզէի որ հոգիս ծանրաբեռնուած չըլլար առօրեայ հազարումէկ հոգերով, գրաւուած ու խճողուած չըլլար աշխարհին վերաբերող մտահոգութիւններով, որպէսզի հոգիս խորը կարեւնայի ունենալ ազատ անկիւն մը, ուր մանկացեալ ու մարդացեալ իմ Փրկիչ Աստուածս ունենար մտորանման իր գահը եւ դառնար կեանքիս ամբողջական տէրը, առաջնորդը եւ հովիւը, եւ ես այլեւս որեւէ բանի կարօտ պիտի չմնայի:

Ես պիտի ուզէի որ միտքս ծանրաբեռնուած չըլլար աշխարհի գիտութիւնը ամբարելու մոլուցքով, բայց կարենայի գԱստուած ճանչնալ, իմ մանկացեալ ու մարդացել Փրկիչ Աստուածս ճանչնալ մարդկային իմ խեղճ միտքիս ամբողջ զօրութեամբը, այնպէս, որ այդ ճանաչողութիւնը ըլլար մտածողութիւնս լուսաւորող եւ առաջնորդող միակ ջահը եւ զայն արբեցնող կենդանարար աղբիւրը, եւ ես այլեւս միտքով պիտի չթափառէի աշխարհի անապատներուն մէջ՝ պապակս յագեցնելու համար:

Ես պիտի ուզէի որ սիրտս ծանրաբեռնուած չըլլար խառնափնթոր ու դառնացուցիչ զգացումներով, այլ՝ կարենայի մանուկ սիրտի մը ամբողջ պարզութեամբն ու ամբողջական անկեղծութեամբը՝ իմ խեղճ, բայց մտորացեալ սիրտիս խորը ընկալել, գրկել ու համբուրել եւ երախտագէտ ու երկիւղած սիրտով խոնարհիլ ու պաշտել մանկացեալ ու մարդացեալ իմ Փրկիչ Աստուածս, որ ինծի համար օր մը եկաւ աշխարհ, որպէսզի իմ սիրտս չմնայ առանց սիրոյ եւ կրակի, եւ ես իր ներկայութեամբը հրացած՝ կարենամ իր սէրը ճառագայթել աշխարհին:

Այսօր մանկացեալ մեր Փրկիչը անգամ մը եւս հրաւեր կը կարդայ բոլորիս, որ կրկին անգամ խորհինք իր խոնարհումին եւ մարդեղութեան մասին, եւ իրմով գԱստուած ճանչնանք այնպէս, ինչպէս ինք եկաւ ճանչցնելու զայն:

Մանկացեալ մեր Փրկիչը այսօր անգամ մը եւս հրաւեր կը կարդայ բոլորիս, որ աշխարհի վրայ ուեւէ երեխայ չմնա՞յ առանց խանձարուրի եւ առանց օրօրոցի, աշխարհի մէջ ուեւէ երեխայ չմնա՞յ անտուն եւ առանց պատսպարող յարկի:

Մանկացեալ մեր Փրկիչը այսօր անգամ մը եւս հրաւեր կը կարդայ բոլորիս, որ մեր հոգիին մտորը չմնա՞յ առանց Յիսուս Մանուկի:

Եւ մանաւանդ հրաւիր կը կարդայ մեզի, որ տիրութիւն ընենք մեր մտորներուն, որպէսզի մարդիկ մեր մտորը չխլեն եւ չդատարկեն իր Յիսուս Մանուկէն. բողոքի ծայն բարձրացնենք, որպէսզի մարդիկ մեր հայրերու կերտած եկեղեցիները չխլեն եւ մզկիթներու չվերածեն անխիղճ ու անպատկառ կերպով. արդարութեան պահանջի ծայնը հնչեցնենք շարունակ, որովհետեւ Յիսուսի ծնունդով արդարութեան զինուորագրեալներ ենք մենք, եւ արդարութեան դատին անդու պայքարը պիտի մղենք շարունակ, մինչեւ հասնի արշալուսումը ամբողջական արդարութեան եւ կատարեալ խաղաղութեան



ԿԵԱՆՔԸ ՏԱՆՈՎ՝ ԿԵԱՆՔ ՉՏՆԵԼ

«Որ գտանէ զանձն իւր՝ կորուսցէ զնա, եւ որ կորոյս զանձն իւր վասն Իմ՝ գտցէ զնա» (Մտ 10.39)

Առաջին անգամ, երբ Յիսուս Իր տասներկու աշակերտները ընտրել էտք զանոնք պիտի դրկէր առաքելութեան Իր ժողովուրդի զաւակներուն, աւելի ուշ միայն սահմանելու համար ամբողջ աշխարհին, անոնց տուաւ կարգ մը կարելոր պատուէրներ, որոնք միաժամանակ ցոյց կու տային այն դիմագիծը կամ պատկերը, որ պէտք էր ունենար կամ ներկայացնէր Իրեն հաւատացող եւ Իրեն հետեւող իւրաքանչիւր մարդ անհատ, եւ մանաւանդ ան, որ կը հաւատայ իր կեանքին մէջ իրեն վստահուած դերի մը, առաքելութեան մը: Եւ Յիսուս խօսքը ուղղելով անոնց, ըսաւ. «Ահա կը դրկեն ձեզ իբրեւ ոչխարներ՝ զայլերու մէջ: ... Չգո՞յշ եղէք, որովհետեւ պիտի գտնուին մարդիկ, որոնք ձեզ դատարան պիտի տանին...: Իմ պատճառովս ձեզ կառավարիչներու եւ թագաւորներու դիմաց պիտի հանեն, որպէսզի անոնց եւ բոլոր ազգերուն Իմ մասիս վկայութիւն տաք: ... Մի՛ վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ սակայն հոգին չեն կրնար սպաննել: Բայց դուք վախցէ՛ք մանաւանդ անկէ, որ կրնայ թէ՛ հոգին եւ թէ՛ մարմինը կորուստի մատնել դժոխքին մէջ» (Մտ 10.16-18 եւ 28): Եւ Յիսուս Իր մտածումները ւարտեց սա խօսքով. «Ան որ իր կեանքը կը գտնէ, ան որ իր կեանքը իրեն կը պահէ՛ պիտի կորսնցնէ՛ զայն. իսկ ան որ Ինձի համար, Իմ սիրոյս համար իր կեանքը կը կորսնցնէ՛ պիտի գտնէ՛ զայն»:

Յիսուսի կողմէ վերը յիշատակուած խօսքերուն մէջ ընդհանրապէս, եւ իբրեւ բնաբան ընտրուած այս խօսքերուն մէջ մասնաւորապէս, մենք այսօր կը տեսնենք դիմաստուերը Վարդանանց սուրբ զօրավարներուն եւ զինուորներուն, այն 1036 նահատակներուն, որոնք իրենց կեանքը տուին Յիսուսի եւ իրենց հայրենիքին համար, ո-

րովհետեւ այս բառերուն մէջ տեսեր եւ կարդացեր էին այն գերագոյն առաքելութիւնը, որ Աստուածորդին իր Սուրբ Եկեղեցիին ընդմէջէն իրենց տուեր էր, եւ որուն կատարիչները, իրագործողները կ'ըլլային եւ պիտի ըլլային այժմ իրենք:

Արդարեւ, եթէ ուզենք զանոնք տեսնել իրենց ժամանակին եւ իրենց գործունէութեան մէջ, ճշդիւ կը ճանչնանք անոնց մէջ այն մարդիկը, որոնք գայլերու մէջ գացին ոչխարներու պէս: Ոչխարներու պէս ոչ թէ զէնքէ հրաժարելու իմաստով, ոչխարներու պէս ոչ թէ «միամիտ» իմաստով, այլ՝ ոչխարներու պէս, որովհետեւ իրենք իրենց վրայ առեր էին իրենց Տիրոջ եւ Վարդապետին նկարագիրը. որովհետեւ զՔրիստոս հագեր էին, ինչպէս Պօղոս Առաքեալ պիտի ըսէր (Գղ 3.27): Եւ Քրիստոս Ինք Աստուծոյ Գառը, ցոյց տուեր եւ սորվեցուցեր էր անոնց, թէ այս աշխարհի անօրէնութեան եւ չարութեան դիմաց անմեղութեան խորհրդանիշները պիտի ըլլան իրենք: Իրենց «հագած», իրենց նկարագիրին խառնած այդ անմեղութիւնն էր որ պիտի կազմէր ոչխարի այն դիմագիծը, որ իրենք պիտի ունենային՝ երբ երթային աշխարհին խօսելու եւ պատմելու իրենց հաւատքին մասին. այն աշխարհին, Աստուծոյ ընդդիմացող, Աստուծոյ հակառակող աշխարհին մէջ, որ կը նմանէր գայլերու, յափշտակիչ եւ վտանգաւոր, պատառող, բզկտող գայլերու, որոնց դիմաց իրենք պիտի կանգնէին ոչ անպայման անմռունչ, այլ՝ խօսելով եւ վկայութիւն մը տալու համար: Վկայութիւն մը, որ իրենցմէ պիտի պահանջէր «օծերու պէս խորագէտ» ըլլալ, այսինքն՝ իմաստուն եւ զգուշաւոր ըլլալ՝ չիյնալու համար անոնց նենգութեան, անոնց խարդաւանքներուն մէջ, դաւադրութեանց զոհ չերթալու համար ակամայ կերպով, բայց կամաւորաբար կանգնելու, աղանիի անկեղծութեամբ եւ «միամտութեամբ», այսինքն՝ ամուր հաւատքով՝ իրենց վկայութիւնը տալու նաեւ ատեաններու դիմաց, ինչպէս Վարդանանք իրենք ըրին՝ երբ բազմիցս կանչուեցան արքայական ատեան, եւ այնտեղ թագաւորին եւ իր արքունիքին դիմաց չվախեցան երբեք վկայութիւն տալէ քրիստոնէական իրենց հաւատքին մասին: Որովհետեւ այդ հաւատքը իրենց համար տկարութեան նշան չէր երբեք, այդ հաւատքը աշխարհէն պարտուողականութեան խորհրդանիշ մը չէր իրենց համար, այլ՝ ընդհակառակը՝ յաղթանակի այն զէնքը եւ ամուր ժայռն էր, որուն վրայ կը կանգնէին իրենք, եւ որով զօրացած, Քրիստոսի խօսքերուն կատարումը կը տեսնէին իրենց արարքին մէջ, երբ իրենց ունեցած հաւատքին համար ներքին հպարտութեամբ եւ ամենայն արժանապատուութեամբ կը կանգնէին խօսելու համար, նոյնիսկ յանդիմանելու համար Յազկերտ թագաւորը եւ անոր արքունիքը այն թիւր

կարծիքներուն համար՝ որոնցմով կը մեղադրէին զիրենք:

Վարդանանց այդ սերունդը ցոյց տուաւ նաեւ, որ երբեք չի վախնար մարմնաւոր մահէն: Այն մարդիկը, որոնք քրիստոսական ճշմարտութեան հաղորդ են, որոնք գիտեն թէ մեր մարմնաւոր, ֆիզիքական այն տկար գոյութեան ետին կայ գոյութիւնը հոգիին, որ մարմինէն անդին կը պահէ իր գոյութիւնը, իր կեանքը, եւ որ Աստուծոյ սահմանուած այն գոյութիւնն է, որուն պահպանութեան համար մարմինը ի հարկին պէտք է տայ: Այդ համոզումով ալ չվարանեցան երբեք իրենց կեանքը տալու, չփորձեցին իրենց կեանքը «շահիլ», այսինքն չփորձեցին սակարկել այս երկրաւոր, նիւթական, մարմնաւոր իրենց գոյութեան համար, եւ չփորձեցին այս կեանքին վերաբերող խաբէական խոստումներու դիմաց ամեն միայն խեղճուկ, քաջջուած կեանքի մը հեռանկարը: Այլ, ընդհակառակը, գիտցան բարձր մնալ իրենց արժանապատուութեան մէջ, այն խորունկ գիտակցութեամբ, թէ հաւատքէ պարպուած կեանք մը դատարկ այն կեանքն է, որ որքա՞ն ալ լեցնէք ոսկիով ու արծաթով եւ երկրաւոր ինչքերով եւ ստացուածքներով, կը մնայ տեւականօրէն դատարկ, որովհետեւ կը դառնայ իր ներքին ինքնութենէն, իր ներքին էութենէն պարպուած կեանքը:

Այդ վստահութեամբ էր որ Վարդանանք վկայեցին արքունիքին դիմաց եւ վկայեցին բոլոր ժողովուրդներուն: Եւ այսօր, ինչպէս ամէն տարի, մենք այդ վկայութիւնն է որ կ'ունկնդրենք, այն վկայութիւնը, որուն ընդմէջէն թէ՛ Քրիստոսի խօսքերը կը կարդանք եւ թէ՛ մեր հայրերուն կեանքի օրինակը: Այս երկութիւն հրաշալի զուգադրումը հրաշալի միախառնումն է, որ տեւականօրէն կը սքանչացնէ եւ կը զարմացնէ մեզ, եւ միաժամանակ, մտածել կու տայ այսօրուան մեր կեանքին մասին:

Գիտենք, որ Վարդանանց ժամանակներուն կար քաղաքականութիւն մը պարսից արքունիքին կողմէ, որ ամէն ձեւով մեր ժողովուրդին բնաջնջումը կամ ծուլումը կը կամենար ու կը պատրաստէր: Պարսից արքունիքին այդ քաղաքականութիւնը բազմաթիւ կերպով ինքզինքը արտայայտեց թէ՛ քաղաքական ճակատի վրայ, թէ՛ զինուորական, թէ՛ տնտեսական եւ թէ՛ կրօնական:

1) Քաղաքական գետնի վրայ պարսից արքունիքը փորձեց վերցնել ափ մը հայ ժողովուրդին պատկանող այն պետականութիւնը, որ կարծէր իր շահերուն կ'ընդդիմանար տեւականօրէն՝ հակառակ իրեն ենթարկուած եւ հպատակ ըլլալուն: Բայց անոր գոյութիւնն իսկ, անոր կիսանկախութիւնն իսկ անցանկալի խոչընդոտ մըն էր իրեն համար, որ կ'արգելակէր իր առաւել ազատ տարածումը, իր կայսերապաշտական մեծ ծրագիրները, եւ ատոր համար ալ՝ ամէն

զնով պետք էր զայն ծուլել իր մէջ: Եւ կարծեց թէ ատիկա կրնար յաջողիլ՝ եթէ երբեք վերցնէր մեր պետականութիւնը: Կորսուեցաւ մեր պետութիւնը, կորսնցուցինք մեր թագաւորութիւնը եւ ղեկավարուեցանք պարսիկ մարզպաններով, որոնք փորձեցին մեր երկիրին մէջ ամէն տեսակի խաղեր սարքել՝ մեր ժողովուրդն իրենց կամեցած ճակատագիրին ենթարկելու համար: Բայց ի զուր:

2) Զինուորական ոյժ էր Հայաստանը, հակառակ իր փոքրութեան. եւ պարսից արքունիքը փորձեց այդ զինուորական ոյժը արմատախիլ ընել՝ նախ անոր հիմնական տարրը՝ այրուծին կանչելով եւ բանտարկուած պահելով Պարսկաստանի խորերը, ինչպէս շրջակայ ժողովուրդներուն հետ վարուեցան նոյնպէս: Յետոյ, կամաց-կամաց փորձեց մեր հայրենիքին ոյժը եւ ամրութիւնը կազմող նախարարները մէկ առ մէկ տապալել բազմաթիւ կերպերով՝ երեսանց սիրաշահելով զանոնք եւ ապա փորձելով իրարու դէմ հանել՝ տկարացնելու համար Հայաստան աշխարհը այն ներքին պառակտումով, որ, ինչպէս լաւ գիտենք, միշտ ալ արտաքին թշնամիէն աւելի շատ եւ աւելի մեծ աւեր կը գործէ որեւէ երկիրի մէջ: Եւ յաջողեցան մասամբ, բայց ոչ ամբողջապէս:

3) Յետոյ դիմեցին տնտեսական ճնշումներուն: Հայաստան Աշխարհը ենթարկեցին այնպիսի ծանր հարկերու, տեսակ-տեսակ տուրքերու, որոնց լուծին տակ այս ժողովուրդը պիտի կքէր հարկաւ, պիտի չկարենար դիմանալ, եւ պարզապէս ազատելու համար այդ անկրելի ծանրութենէն՝ պիտի ենթարկուէր իրենց կամքին: Բայց հայ ժողովուրդը ցոյց տուաւ, որ որեւէ լուծ եւ որեւէ ճնշում չի՝ կրնար երբեք իր հոգին ենթարկել: Մարմինները կարելի է ենթարկել, եւ սակայն ոչ մարդուն միտքը, մարդուն հոգին, որոնք կը մնան անկաշկանդ եւ անկապտելի, եթէ երբեք այդ միտքն ու հոգին իրենք զիրենք սնուցած են այն բարձրագոյն եւ գերագոյն ճշմարտութիւններով, որոնք մարդու գիտակցութեան թեւ ու թռիչք կու տան եւ այդ թռիչքը կը դարձնեն անկապտելի:

4) Ի վերջոյ, դիմեցին կրօնական ճնշումներու: Բարոյական եւ կրօնական ամէն տեսակի հալածանքներ յարուցին, եւ, ինչպէս գիտէք, նոյնիսկ արքունական հրաման եկաւ՝ պաշտօնապէս հրաժարելու քրիստոնէական հաւատքէն եւ ընդունելու մոզական կրօնը, որ պարսից արքունիքին համար՝ փոքրիկ ժողովուրդները ծուլելու լաւագոյն մէկ կերպն էր:

Եւ այնտեղ՝ յորդեցաւ բաժակը: Այն ժողովուրդը, որ մեծագոյն համբերութեամբ կրէր էր բոլոր տեսակի մարմնաւոր հալածանքները, չտարաւ եւ չհանդուրժեց իր խիղճի ազատութիւնը կապող, իր

հաւատքին դաչող, իր գոյութեան միջնաբերդին սպառնացող այդ վտանգը: Ընդվզեցաւ, եւ ինքզինք նետեց պատերազմի դաշտ, հաւատալով ոչ թէ քաղաքական կամ զինուորական յաղթանակի մը, որ պիտի տարուէր պատերազմի դաշտին վրայ, այլ՝ պարզապէս ցոյց տալու համար բռնաւոր թշնամիին, թէ կարելի չէ՝ հոգին ընկճել եւ ենթարկել, ուստի, հոգիին սպառնացող այդ վտանգին իրենց հոգիի եւ մարմնիի գէնքերով դիմադրեցին զօրեղապէս:

Որովհետեւ

Ոչ միայն հայրենիքն էր խնդրոյ առարկան, այն հայրենիքը, որուն իրենց արիւնը տուեր էին իրենց եւ մեր հայրերը եւ որմէ կարելի չէր հրաժարիլ:

Ոչ միայն ազատութիւնն էր խնդրոյ առարկան, որ միայն մասնակիօրէն գոյ կամ ներկայ էր իրենց կեանքերուն մէջ:

Այլ նաեւ՝ մարդկային պատիւը կամ արժանապատուութիւնը, ոչ միայն ընտանեկան պատիւը, այլ այն մարդկային հիմնական արժէքները, առանց որոնց հաւատալիքին ժողովուրդ մը չի կրնար երբեք ուրիշ ժողովուրդներու կարգին կենալ եւ իր գոյութեան իրաւունքին մասին խօսիլ:

Եւ ի վերջոյ հաւատքը, որ այդ բոլորը պայմանաւորող, որ այդ բոլորը լուսաւորող, որ այդ բոլորը դաստիարակող եւ յառաջ բերող մղիչ ոյժն է՝ այդ բոլորին ետին կեցող:

Այդ բոլորն էին խնդրոյ առարկան, եւ այդ բոլորին պաշտպանութիւնը զօրեղապէս կատարեցին Վարդանանք՝ իրենց մարմինները ձգելով պատերազմի դաշտին վրայ, բայց իրենց հոգիները յանձնելով ազատութեան, տալով միայն Արարիչին, որ այդ կեանքերուն եւ հոգիներուն տուիչն էր եղած իրենց:

Այդպէս շարժեցան, այդպէս ապրեցան Վարդանանք եւ այդ կտակեցին նաեւ մեզի: Եւ այսօր, երբ աւետարանական այդ ճշմարտութեանց լոյսին տակ նկատի կ'առնենք Վարդանանց սերունդի այդ օրինակը, այսօրուան մեր կեանքի հորիզոնին վրայ կը փորձենք զայն տեսնել, գիտենք եւ կը տեսնենք, սիրելիներ, թէ ինչպէ՛ս այսօր եւս նոյն եւ բոլոր տեսակի ճնշումները մեր ժողովուրդին ու մեր հայրենիքին վրայ կը ծանրանան:

Դարձեալ կան մեր շուրջը այն թշնամիները, բազմաթիւ, մէկէ աւելի, տեսանելի եւ անտեսանելի, որոնք ոչ միայն քաղաքականօրէն, ոչ միայն զինուորականօրէն, ոչ միայն տնտեսականօրէն, այլ նաեւ հաւատքի՝ գետնին վրայ կը փորձեն սպառնալ մեր երկրին: Քաղաքական գետնի վրայ գիտենք, թէ ինչպիսի ճնշումներու ենթակայ է այսօր մեր հարազատ երկիրը՝ Հայաստան, եւ այն փոքրիկ աշխար-

իր Արցախ, որ փոքրիկ Հայաստանն է կրկին, անոր զուգակից: Քաղաքական եւ զինուորական ճնշումներ, որոնց դիմաց մեր ժողովուրդը երկընտրանքն ունի պահելու իր գոյութիւնը կամ ոչ, ենթարկուելու կամ ոչ՝ դուրսէն եկող այդ ճնշումներուն եւ այդ ճնշումներուն տեղ տուող նպատակին, իսկական նպատակին:

Տեղի տա՞լ, թէ՞ ոչ:

Հիմնական այն հարցումն է, որուն պիտի պատասխան տայ մեր ժողովուրդը տեւականօրէն: Եւ այսօրուան կեանքին մէջ քաղաքական եւ զինուորական այդ ճնշումները մասնաւոր կերպով կ'արտայայտուին այն երրորդ ձեւով, որ այնքան զգալի եւ երեւելի ձեւով կը պատկերանայ բոլորիս. տնտեսական ճնշումը՝ կատարեալ շրջափակումով, որ միայն մեր երկրի փակ սահմաններ ունենալուն հետեւանքը չէ, այլ՝ արդիւնքն է յստակ քաղաքականութեան մը՝ մեր ժողովուրդը ծունկի բերելու եւ օտար աշխարհակալութեանց եւ տիրապետութեանց կամքին ենթարկելու:

Եւ այդ նետուած ձեռնոցին կամ ասպարէզին դիմաց մեր ժողովուրդը այսօր եւս իր պատասխանն է որ կու տայ, եւ պիտի տայ նաեւ վաղը:

Այսօր եւս մեր ժողովուրդը Վարդանանց սերունդին պէս կը պատասխանէ այդ բոլորին՝ իր հոգիին ամբողջ զօրութեամբ մաքառելով, պայքարելով բոլոր տեսակի այդ ճնշումներուն դէմ, որոնք կը սպառնան մեր բուռ մը հայրենիքին: Եւ պահելու համար մեր հայրերու արիւնով օծուած եւ նուիրագործուած այդ սուրբ հողը, մեր երկիրը, այսօրուան մեր սերունդը նոյնպէս կանգ պէտք չէ առնէ որեւէ բանի առջեւ, որ մեզմէ կը պահանջէ ամէն տեսակի զոհողութիւն, զոհողութիւններ՝ որոնք ոսկիէն, արծաթէն անդին կ'անցնին եւ որոնք յաճախ, եւ ամէնէն աւելի, մեր կեանքերուն պէտք կ'ունենան, մեր կեանքերը կը պահանջեն մեզմէ: Եւ եթէ երբեք այսօրուան մեր սերունդը եւ մեր ժողովուրդը չգիտակցի, ինչպէս Վարդանանք գիտակցեցան, թէ ով որ կը փորձէ իր կեանքը պահել, ով որ կը փորձէ իր կեանքը «գտնել» անմիջական ներկային, այս պահուն համար միայն, անիկա կը կորսնցնէ զայն յաւերժօրէն, յաւիտենականօրէն: Իսկ այն ժողովուրդը, որ կ'ուզէ յաւերժօրէն ապրիլ, որ կ'ուզէ իր գոյութիւնը տեւականացնել, պէտք է այդ տեւականացումին համար յանձն առնէ ժամանակաւոր մահը, ներկային մէջ՝ այժմին մէջ այն մահը, որ կրնայ մեր մարմինները առնել մեզմէ, բայց ոչ երբեք՝ մեր հոգին, որ սահմանուած է յաւիտենականութեան, սահմանուած է յաւերժութեան:

Վարդանանք, հաւատքով դաստիարակուած, զօրաւոր հաւատքի այդ մարդիկը եղան, որոնք գիտակցեցան՝ թէ հաւատքը երկնա-

տուր եւ երկնահաստատ այն ամրութիւնն է, որ երկրաւոր կեանքին եւ երկրաւոր հայրենիքին համար մարդ կը պատրաստէ, զօրեղ, ամուր զինուորներ կը պատրաստէ: Վարդանանք այդ արի, քաջարի զինուորութիւնն էր որ կատարեցին, առանց երբեք յանձնուելու թշնամիին, եւ ազատութեան սրբազան կտակը սերունդէ սերունդ փոխանցելով աւանդեցին մեզի, որ այսօր պիտի փորձենք նոյն այդ ազատութեան մարտիկները ըլլալ՝ մեր հայրենիքին սիրոյն. նոյն այդ մարդկային պատիւին եւ արժանապատուութեան համար պայքարող մարտիկները ըլլալ՝ բարձր պահելու համար մեր ժողովուրդին գլուխները ո'չ միայն այսօր, այսօրուան գայլացեալ մարդոց դիմաց, այլ նաեւ՝ բոլոր ժամանակներուն, քրիստոսական նկարագիրով, անմեղութեամբ, բայց նաեւ՝ իմաստութեամբ եւ զգուշաւորութեամբ եւ զօրութեամբ՝ այդ ձեւով մնայուն պայքարի դրօշի վերածելու համար Վարդանանց սերունդին պատգամը եւ անով ապահովելու համար մեր յաղթանակը թէ՛ այժմ, թէ՛ յաւիտեանս յաւիտենից:



ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

«Ապաշաւեցէք եւ դարձարուք ի ջնջել զմեղս ձեր, որպէս զի եկեց-
ցեն ժամանակք հանգստեան յերեսաց Տեառն» (Գրծ 3.19-20)

Մեր կեանքին մէջ ունինք սա շրջանը, որ կը կոչուի Եկեղեցա-
կան Մեծ Պահք: Քառասնօրեայ շրջան մըն է անիկա, ուր Աստուծոյ
հաւատացող մարդը կը հրաւիրուի ժամանակի մը համար ինքնամ-
փոփուելու եւ խորհելու իր մասին՝ որոշ մտահոգութեան մը լոյսին
տակ:

Ինչպէս նուազագոյն գիտակցութիւնն ունեցող մարդը անպայ-
մանօրէն կը խորհի ու կը մտահոգուի իր մարմինի առողջ պահպա-
նութեան համար, նոյնպէս ալ հաւատքի գիտակցութեան եկած ռելե
անհատ բնականօրէն պէտք է խորհի եւ մտահոգուի իր հոգիին ա-
ռողջ պահպանութեան համար: Գիտենք թէ որքա՞ն հրատարակու-
թիւններ կան առողջապահական կանոններու մասին, որոնց
նպատակն է մարդուն մարմինը որոշ կշռոյթի եւ կարգապահութեան
ենթարկելով ապահովել անոր առողջութիւնը եւ հնարաւորին չափ
ցաւէ ու տառապանքէ զերծ կեանք մը: Խորհող անձը անպայմանօ-
րէն կ'անդրադառնայ, թէ պէտք է ըլլան նաեւ, ինչպէս արդարեւ կան,
առողջապահական կանոններ եւ պայմաններ՝ մարդուն հոգիին հա-
մար, կանոններ, որոնց նպատակն է մարդուս հոգեկան ձգտումները
կարգապահութեան ենթարկելով եւ ուղղելով՝ ապահովել անոր հո-
գեկան առողջութիւնը եւ երջանկութիւնը:

Աստուծոյ Շունչէն քաղուած այդ կանոններուն մասին է, որ կը
հրաւիրուինք մտածելու՝ Մեծ Պահքի քառասնօրեայ այս շրջանին:

Կեդրոնացնենք մեր մտածումները երկու հիմնական կէտերու
Մեծ Պահքի ապաշխարութեան օրերու 40 թիւին եւ ապաշխարու-
թեան իւրեան շուրջ:

Տեսնենք նախ, թէ ինչո՞ւ մեր Եկեղեցին քառասուն օրերու եր-

կար այս շրջանը սահմանած է ապաշխարութեան եւ պահեցողու-
թեան համար, եւ զայդ սահմանած է Ջատիկի տօնէն անմիջապէս ա-
ռաջ:

Օրերու 40 թիւը խորհրդանիշ թիւ մըն է պարզապէս: Մեր ապաշ-
խարութեան քառասունքը նմանութիւնն է Իսրայէլի ժողովուրդին ա-
նապատին մէջ անցուցած քառասնամեայ շրջանին: Այդ նմանութիւնը
մենք կրնանք տեսնել հետեւեալ հինգ կէտերուն մէջ.

1) ՓԱԽՈՒՄՏ ԵԳԻՊՏՈՍԻ ԳԵՐՈՒԹԵՆԵՆ: Եբրայեցի ժողովուր-
դը Եգիպտոսի մէջ ստրկութեան կապանքներուն մէջ տառապելով
հանդերձ, չմտածեց այդ գերութենէն դուրս գալու մասին, մինչեւ որ
եկաւ Աստուծոյ սահմանած ազատարարը եւ զիրենք ազատեց
ստրկութեան կապանքներէն: Բայց ազատութեան իրաւունքը վայե-
լելու համար Իսրայէլը պէտք էր զին մը վճարէր՝ արժանի ըլլալու հա-
մար անոր, եւ այդ զինն էր որ ձեւով մը վճարեց 40 տարիներու
անապատային իր կեանքով: Մեր ազատագրութիւնը Քրիստոսի ձեռ-
քով ստացած ենք մենք, ծրի որպէս շնորհք. բայց այդ ազատութեան
արժանի ըլլալու եւ անոր յարգը գիտնալու համար մենք քառաս-
նօրեայ կամաւոր մեկուսացում մըն է, որ կը փորձենք ապրիլ:

2) ԹԱՓՈՒՌԻՄ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ: Եբրայեցի ժողովուրդը 40
տարի թափառեցաւ անապատին մէջ՝ սորվելու համար թէ ինչպէ՞ս
Աստուած անապատի ամայութեան մէջ իսկ կը կերակրէ իր ժողո-
վուրդը մանանայով եւ ամուլ ժայռէն իսկ ջուր կը բխեցնէ՝ անոնց պա-
պակը անցընելու համար: Մեր քառասունքը նոյնպէս թափառում մըն
է, թափառում՝ մեր հոգիներու անապատին մէջ, որպէսզի սորվինք,
թէ ինչպէ՞ս Աստուած մեր ամուլ հոգիներն իսկ կրնայ ջրարբի պար-
տէզի եւ պտղաբեր երկրի վերածել եւ հոգեղէն Հացով առատացնել
եթէ մենք մեզ Իր առաջնորդութեան յանձնենք:

3) ՀԻՆ ԲԱՐՔԵՐՈՒ ԹՕԹԱՓՈՒՄ: Աստուած նպատակաւոր կեր-
պով երկարեց Իսրայէլի թափառումը անապատին մէջ, որպէսզի ա-
նոնք թօթափեն իրենցմէ Եգիպտական բարքերը, Եգիպտական
կուռքերը, Եգիպտական շալլութիւնները, Եգիպտական ցոփութիւն-
ները եւ որպէս նոր ժողովուրդ մտնեն իրենց Խոստացուած Երկիրը:
Նոյնպէս մեր քառասունքը բաւարար ժամանակ է եւ առիթ, որ կարե-
նանք քննել եւ թօթափել մեզմէ մեր օտարոտի բարքերը, Աստուծոյ
սրբութեան եւ սիրոյն անհաշտ եղող մեր բոլոր մտածումները, ցան-
կութիւններն ու գործերը, որպէսզի նորոգուած հոգիներով կարենանք

մտնել մեզի խոստացուած ժառանգութիւնը:

4) ԱՍՏՈՒԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ: Եբրայեցի ժողովուրդին համար անապատային քառասնամեայ շրջանը առիթ էր նաեւ, որ անոնք Մովսէսի ձեռքով սորվին աստուածային օրէնքները եւ հետզհետէ հաստատուին ճշմարիտ աստուածապատկերան մէջ: Իրենք Սինա լեռ չբարձրացան, եւ լեռը ինքը ամպի մշուշով ծածկուեցաւ անոնց աչքերէն: Բայց Աստուծոյ մարդուն՝ Մովսէսի միջնորդութեամբ հաղորդ դարձան Աստուծոյ խորհուրդին եւ խօսքին: Նոյնպէս, մեր քառասունքը առիթ է, որ մենք առանձնութեան մէջ խոկանք եւ Աստուծոյ պատուիրանները սերտենք: Եւ թէպէտ 40 օրերու վրայ մեր Սինա լեռը՝ այսինքն Աստուծոյ Սուրբ Խորանը ծածկուած կը մնայ աչքերէն, վարագոյրով պատուած, բայց Աստուծոյ պաշտօնեաներուն ձեռքով կը պահենք մեր հաղորդութիւնը Աստուծոյ խորհուրդին եւ յաւիտենական խօսքին հետ:

5) ԶԱՍԻԿԻ ՃԱՇԱԿՈՒՄ ԱԲԵՏԵԱՑ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ: Անապատային քառասնամեայ շրջանը՝ անդադար քայլք մըն էր դէպի յատուկ նպատակակէտ մը, եւ որ ի վերջոյ յանգեցաւ Զատիկը Աւետեաց Երկրին մէջ ուտելու արժանանալուն: Նոյնպէս, մեր քառասունքը անընդհատ քայլք մըն է դէպի բարձրունք, մագլցում մըն է դէպի նոր Սինա, եւ որ պէտք է մեզ յանգեցնէ արժանաւորապէս մտնելու Աստուծոյ սրբարանը եւ արժանաւորապէս ճաշակելու մեր Զատիկը:

Յիշեալ բաղդատական պատկերին ընդմէջէն արդէն ինքնին բնորոշուած եղաւ ԱՊԱՇՏԱՐՈՒԹԻՒՆԸ, որ քրիստոնէայ անհատին ամբողջ կեանքը պէտք է ըլլայ, բայց մեր հայրերը տարուան մէջ յատուկ օրեր սահմանած են անոր համար՝ այդ մասին վերամտածելու առիթ տալու համար միշտ:

Ի՞նչ է իսկական իմաստը եւ հասկացողութիւնը ԱՊԱՇՏԱՐՈՒԹԵԱՆ:

Մեր լեզուին մէջ ունինք երկու իրարու մօտիկ բառեր՝ *ապաշաւել* եւ *ապաշխարել*, որոնք նոյն երեւոյթին երկու տարբեր երեսները կը մատնանշեն: ԱՊԱՇՏԱՐՈՒԹԵԱՆ կը նշանակէ ետ դառնալ իր ըրածէն, ետ դառնալ իր որոշումէն, ետ դառնալ չար մտածումէ մը, ուստի՝ կը նշանակէ միտքը, մտադրութիւնը փոխել /յունարէն Μετανοια բառէն/ կամ միտքով փոխուիլ: Հիմնապէս կեցուածքի մը փոփոխութիւնն է ապաշաւելը, եւ գործածուած է նոյնիսկ Աստուծոյ համար: Օրինակ, երբ Յովնան Մարգարէ գնաց եւ նիւնուէցիներուն փոխանցեց Աստուծոյ սպառնազին պատգամը, անոնք ծոմ բռնեցին եւ քուրձ հագան եւ իս-

կական զղջումով Աստուծոյ դարձան, մտածելով այսպէս. «Ո՞վ գիտէ, թերեւս Աստուած Իր մտադրութիւնը փոխէ, Իր սաստիկ բարկութենէն դառնայ եւ չկորսուինք: Եւ Աստուած տեսաւ անոնց գործերը, թէ ինչպէս իրենց չար ճամբաներէն դարձան, եւ Աստուած գթաց ու այն չարիքը, որ անոնց վրայ պիտի բերէր, չբերաւ» (Յվն 3.9-10: Հմմտ. Յվլ 2.14: Ամն 7.3, 4): Բայց մանաւանդ ապաշաւելը մարդոց յատուկ արարք մըն է, արարք մը, որով մարդիկ կը հրաւիրուին իրենց նախկին մտածելակերպը եւ ապրելակերպը փոխելու եւ նոր ուղղութեան մը դառնալով՝ նոր կեցուածք մը որդեգրելու: Առաքեալներուն բերանով քարոզութեանց մէջ առաջին կոչերը ԱՊԱՇՏԱՐՈՒԹԵԱՆ կոչեր են՝ նոր կեանքի մը դառնալու որոշումը առնելու մղող (տես Գրծ 2.38-39, 3.19-20, 8.22):

Գալով ԱՊԱՇՏԱՐՈՒԹԵԱՆ բառին, անհկա կը նշանակէ գործուած յանցանքին համար զղջալ. ցաւ զգալ, մեղքը լալ եւ այդ մեղքը կամ յանցանքը քաւելու համար որոշ պատիժ մը կամ նեղութիւն մը կրել: Այս մէկն արդէն միայն մարդուն յատուկ կրնայ ըլլալ: Պարզ մտադրութիւն մը փոխել չէ ասիկա, պարզապէս նոր կեցուածք մը ճշդելը չէ, այլ նաեւ՝ գործնականացումը մտածումին: Այսպէս, տարբեր բան է անդրադառնալ թէ տունը աղտոտած է արդէն եւ ուստի մտածել թէ պէտք է մաքրել զայն, եւ տարբեր է՝ գործնականօրէն աւելը ձեռքը առնելն ու տունը մաքրելը: Նոյնպէս, տարբեր բան է որոշ լոյսի մը տակ իր անձին վրայ ծանրացած բարոյական արատն ու թերիները տեսնելով զայն սրբագրելու մասին խորհիլը կամ նոյնիսկ որոշելը, եւ տարբեր է՝ նոյն այդ սրբագրութեան համար գործի անցնիլը եւ զայն արարքներով արտայայտելը: Ապաշխարելը քայլ մը աւելի անդին է քան ապաշաւելը: Անոր մէջ յանձնառութիւն մը կայ, որ յաճախ ծանր կրնայ ըլլալ: Ապաշխարութիւն չի նշանակէր անշուշտ սենեակ փակուիլ եւ անվերջ լալ ու ողբալ, կամ՝ մարդոց մէջ ապրիլ անժպիտ, կախ ու տրտում երեսով: Բայց նաեւ պէտք է մոռնալ որ անոր մէջ անպայմանօրէն կայ ցաւին ու տառապանքին յանձնառութիւնը: Ինչպէս տան մաքրութեան համար աւել վերցնողը շատ լաւ գիտէ, թէ պիտի յոգնի, փոշոտի ու քրտնի, բայց այդ բոլորը յանձն կ'առնէ՝ մաքրութեան բերած վայելքով ուրախանալու համար, նոյնպէս իր անձին թերութիւնները սրբագրելու համար ճամբայ ելած մարդը գիտէ, թէ յաճախ պիտի ցաւի, երբեմն զրկանք պիտի զգայ, որոշ իրականութիւններ ու ճշմարտութիւններ պիտի վիրաւորեն զինք, այսպէս կոչուած իր արժանապատուութիւնը, զղջումը յաճախ մինչեւ իր կոկորդը պիտի բարձրանայ, իր տկարութեանց գիտակցումը յաճախ զինք լալու չափ պիտի խարանէ. այդ. բայց վերջնական արդիւնքին պատկերը

Եւ Աստուծոյ բուռն սիրոյ քաշողութիւնը մոռցնել կու տան այդ բոլորը:

Ամէն մաքրութիւն ճիգով ու նեղութեամբ կ'ըլլայ: Ոսկին կրակին տառապանքէն կ'անցնի՝ իր զօրութիւնն ու փայլքը գտնելու համար: Տառապագին երկունք մը անհրաժեշտ է, որպէսզի մայր մը կարենայ նոր ծնունդ մը տալ աշխարհին: Նոյնպէս ալ, Աստուծոյ սիրոյն դարձող ամէն մէկ անհատ նոր ծնունդ մըն է, որ պէտք է նոյնպիսի երկունքէ մը անցնի՝ ըլլալու համար նոր արարած:

Այդ երկունքն է ահա՛ ապաշխարութիւնը:

Իսկական ապաշխարողը, հետեւաբար, ան է, որ զոջալով ու ցաւելով իր նախկին սխալներուն ու թերացումներուն համար, կ'որոշէ ՓՈՒՏԵԼ ԻՐ ԸՆԹԱՏՔԸ, եւ դառնալ իր նախկին ճանապարհէն դէպի նոր ուղղութիւն եւ նոր կեանք:

- Մոլութեանց ու մեղքին գերի՞ն էր. արդ, կը դառնայ Քրիստոսի շնորհքով ազատագրուած մարդ:

- Կեանքէն դառնացած ու յուսահատա՞ծ մըն էր. կը դառնայ տառապանքով քաղցրացած եւ իմաստնացած, եւ յոյսով զուարթացած անձնաւորութիւն:

- Սիրոյ պակասը ունեցող սառն հոգի՞ մըն էր. իր կեանքը կը լեցնէ գեղուն սիրոյ ջերմութեամբ:

- Բարեգործութեան պտուղներէն ամլացա՞ծ մըն էր. իր կեանքը կը պտղաւորէ բարութեամբ:

Այնուհետեւ մարդուն կը մնայ գիտնալ ու պահել Աստուծոյ պատուիրանները, որոնք ամբողջութիւնն են հոգիի առողջապահական կանոններուն եւ պայմաններուն, եւ որոնք տրուած են մարդուն հոգեկան խաղաղութիւն եւ մնայուն երջանկութիւն պարգեւելու համար:

Գիրքը ձեր մօտն է միշտ, կանոնները՝ բաւական պարզ ու դիրին. կը մնայ պարզապէս քիչ մը կամեցողութիւն ունենալ՝ զանոնք կարդալու կամ լսելու, եւ կամեցողութիւն՝ զանոնք փորձով կիրարկելու:

Եւ Մեծ Պահքը լաւագոյն առիթ մըն է գեղեցիկ սկիզբ մը դնելու՝ մեր իսկ խաղաղութեան եւ երջանկութեան համար:

ՅԱՐՈՒԹԵԱՄԲ՝ ՅԱՐՈՒՅԵԱԼԻՆ ՀԱՄԱՐ

«Եւ Քրիստոս բոլորին համար մեռաւ, որպէսզի հաւատքով կենդանացողները այլեւս չապրին իրենք իրենց համար, այլ՝ Անոր համար, որ իրենց փոխարէն մեռաւ եւ յարութիւն առաւ» (Բ. Կր 5.15)

Յարութեան առաւօտ:

Մթութեան թանձր ու թախծոտ ստուերները կը փարատին եւ ծագող արեգակին հետ մահուան թագաւորութիւնը ցոյց կու տայ իր խորտակուած դարպասները, որոնց ետին ալ չկայ կապեալ, որովհետեւ մարմնացեալ եւ խաչեալ Հօգօրն Աստուածը մահուան զօրութենէն խլեց ու կորզեց անոնք, որոնք աւար առնուած եւ մահուան տիրապետութեան տակ կը պահուէին (հմմտ. Ես 53.12: Ղկ 11.21-22), եւ այժմ մարգարէական ծայները շեփորի պէս զիլ ու պայծառ կ'աղաղակեն անդադար. «Մահը կլանուեցաւ. յաղթանակը շահուեցաւ» (Ես 25.8). «Ո՞ր է, մահ, յաղթանակդ. ո՞ր է, մահ, քու խայթոցդ» (Ովս 13.14): Այո՛, մահը կլանուեցաւ կեանքին մէջ եւ յարութեան աւետիսն է որ հիմա սիրտերը կը գրաւէ ուրախութեան արշաւով:

Կեանքի՛ առաւօտ:

Սուգով ու տրտմութեամբ լեցուն, բայց մանաւանդ ծանր յուսախաբութեամբ պատրանաթափ կանացի սիրտեր կու գան իրենց սիրոյ եւ երախտագիտութեան պարտքը կատարելու Անոր հանդէպ, որուն կեանքը այս աշխարհի երկնակամարը յանկարծօրէն իր լուսաշաւիղով պատռող ասուպի մը սրարշաւ գնացքը եղած էր, եւ մահը նոյնքան անակնկալ ու արագ, որով պատեհութիւնն իսկ չէին ունեցած իրենց վերջին յարգանքը մատուցելու Անոր: Եւ ահա՛ նոյն անակնկալը կը դիմաւորէր զիրենք, որովհետեւ գերեզման դրուածը գերեզմանին մէջ չէր հիմա, Կենդանին՝ ալ մեռելներուն մէջ չէր,

Կեանքը մահուան մէջ կարելի չէր փնտռել. որովհետեւ Ան, որ յայտարարեր էր, թէ երկրի վրայ Իր գլուխը հանգչեցնելու տեղ մը չունի (Ղկ 9.58), մահուան մէջ հիմա Իր գլուխը բարձրացուցեր էր աշխարհէն վեր՝ մինչեւ երկինք Իր աշակերտներուն եւ աշխարհին կողմէ ճանչցուելու համար իբրեւ Տէրը կեանքին, որովհետեւ ճիշդ աստոր համար էր, որ «Քրիստոս մեռաւ եւ վերակենդանացաւ, որպէսզի Տէրը ըլլայ բոլորին, թէ ապրողներուն եւ թէ մեռածներուն հաւասարապէս» (Հռ 14.9):

Հաւատքի առաւօտ:

Թերահաւատ ու տարտամ զգացումներով, բայց մանաւանդ շփոթ մտածումներով յաճախուած երկու առաքեալներ դէպի գերեզման կը փութան՝ ստուգելու համար այն, ինչ որ Մարիամ Մագդաղենացին եւ միւս կիները ըսեր էին, թէ՛ գերեզման դրուած իրենց Վարդապետին Յիսուսի մարմինը իր տեղը չէր: Բարբաջա՞նք էր, թէ՞ իրականութիւն: Եւ ո՞վ առած կրնայ ըլլալ արդեօք մեռեալի մը մարմինը: Հակասական մտորումներու լարուածութեան մէջ բռնուած անոնց քայլերը անզգալաբար կ'արագանան հետզհետէ, գրեթէ կը վազեն՝ վայրկեան առաջ իրենց աչքերով տեսնելու համար թափուր գերեզմանը: Եւ երբ կը հասնին, իրապէս բացուած կը տեսնեն գերեզմանը՝ նախ կը ծռին եւ աչքէ կ'անցընեն դատարկ քարայրը, յետոյ ներս կը մտնեն եւ կը տեսնեն պատանքին կտաւները՝ հոն ինկած, եւ Յիսուսի գլուխը ծածկող վարշամակը խնամքով ծալուած ու մէկ կողմ դրուած: Դիակը գողնալ կամ փոխադրել ուզող մարդը ինչո՞ւ պիտի մերկացնէր զայն, ինչո՞ւ պիտի հանէր պատանքը եւ բանար անոր գլուխը: Ո՛չ, այստեղ ուրիշ բան մը կայ: Եւ յանկարծ մտածումներու գորշ երկնակամարը կը կայծակովի պայծառ լոյսովը յարութեան ճշմարտութեան: Չէ՞ որ Աստուածորդին քանիցս ըսած էր իրենց, թէ Իր մահէն ետք երրորդ օրը յարութիւն պիտի առնէր: Ինչքա՞ն անմիտ պէտք էր ըլլալ անմիջապէս չհասկնալու համար, թէ արդէն կատարուած էր Անոր ըսածը, ինչպէս այնքան ճշգրտօրէն կատարուեր էին Անոր բոլոր ըսածները՝ մարգարէական վկայութիւններով հաստատուած: Եւ յանկարծական խուժումով մը հաւատքի շողը ներս կը թափանցէ իրենց հոգիներէն՝ զիրենք բոցավառելով ստուգութեան վստահութեամբն ու ցնծութեամբը:

Հաւատքի կենդանութեան առաւօտ:

Արեգակը կը բարձրանայ հետզհետէ, օրը ջերմանալ կը սկսի, բայց ցուրտ է հոգին Մագթաղենացի Մարիամին, որ չի կրնար հաշտուիլ կորուստին հետ այն սքանչելի Վարդապետին ու Մարգարէին, որ Աստուծոյ Շունչն ունէր Իր վրայ, որ անհուն բարութեան ու քաղց-

րութեան շողն ունէր Իր վրայ, որ աստուածային ներողամտութեան շնորհքին բաշխումով զինք մեղքի տիղմէն հաներ էր վեր եւ անչափօրէն բարձրացուցեր եւ Աստուծոյ հաղորդ դարձուցեր իր հոգին իր մեռած հոգին կենդանացնելով աստուածային կեանքի յոյսով: Կրնա՞ր ըլլալ, որ կենդանացնողը ինք մեռելութեան հետ շաղախուէր. կրնա՞ր ըլլալ, որ հոգին շող տուողը ինք անշող խաւարին հետ խառնուէր. կրնա՞ր ըլլալ, որ մարդիկը Աստուածային ստեղծագործ Շունչով վերստին շնչաւորողը անշնչութեան գիրկը լուծուէր: Եւ հոգիի ցուրտէն ցօղուած եղեամանման արցունքները շղարչէ վարագոյր դարձեր էին իր աչքերուն առջեւ, այնպէս, որ այդ շղարչին մէջէն չճանցցաւ իր դիմաց կանգնած պարթեւ հասակը, ու զԱյն շփոթեց պարտիզպանին հետ: Բայց հազիւ Անոր բերանէն իր անունը լսած փարատեցաւ իր մէջ մշուշը, հալեցաւ ցուրտ եղեամը, կենդանացաւ, գարուն դարձաւ իր հոգին, ու ծաղկեցաւ հաւատքի ծառը հազարաւոր բողբոջներով: Այո՛, Տէրն էր, յարուցեալը՝ մեռելներէն: Եւ հիմա կը փութայ առաքեալներուն եւ իր ընկերակից կիներուն մօտ՝ հաւատքի կենդանութեան նոր աւետիսը տալու համար անոնց՝ ականատեսի իր վկայութեամբ. «Տէ՛րը տեսայ...»:

*
* * *

Կեանքի յարութեան ըղծանքով եւ հաւատքի կենդանութեան նոյն ապրումներով է, որ Քրիստոսի յարութեան այս առաւօտը կ'ողջունենք՝ հաւատքի մեր կեանքին անցեալ, ներկայ եւ ապագայ երեք գլխաւոր հանգրուանները վերադիտելու համար Պօղոս Առաքեալի բառերուն դիտակով. «Քրիստոս բոլորին համար մեռաւ, որպէսզի հաւատքով կենդանացողները այլեւս չապրին իրենք իրենց համար, այլ Անոր համար, որ իրենց փոխարէն մեռաւ եւ յարութիւն առաւ»:

Ա) Քրիստոս բոլորին համար մեռաւ:

Արդեօք մեզմէ՞ քանի՞ն կը հասկնայ այս կարեւորագոյն հաստատումը իր ամբողջ խորութեամբ, իր ամբողջ տարողութեամբ: Աստուած Ինք՝ մեզի համար յանձն առաւ մահը, այն ալ՝ խաչի անարգ մահը: Հրէական միտքով դատողներուն համար՝ մեծագոյն հայիոյութիւնն ու գայթակղութիւնն է՝ խօսիլ Աստուծոյ խաչուելուն ու խաչի վրայ Անոր մահուան մասին. Աստուծոյ անունին ու փառքին անպատուութիւն չէ՞ ատիկա, անարգանք չէ՞ այսպէս խօսիլ Աստուծոյ մասին: Յունական միտքով, այսինքն՝ զուտ մարդկային մտածողու-

թեամբ ու տրամաբանութեամբ դատողին համար՝ մեծագոյն յիմարութիւնն է Աստուծոյ խաչուելուն ու մահուան մասին խօսիլը: Անմտութիւն չէ՞ այդպիսի բան մը խորհիլն իսկ:

Եւ սակայն Աստուած մարդկային ամբողջ իմաստութեան ու տրամաբանութեան ասպարէզ կարդաց ցոյց տալու համար անոնց սին ու դատարկ ըլլալը եւ մարդուն փրկութեան միակ կարելիութիւնը: Եւ ցոյց տուաւ, թէ փրկութեան այդ միակ ճամբան՝ մարդը ինքզինքէն ազատագրելն է:

Մարդը ինքզինք բացարձակացնելու եւ աստուածացնելու ձգտումով ինքն իր անկումը բերաւ, եւ դեռ կը շարունակէ ամբարտաւանութեան նոյն ճամբով ընթանալ իր ճակատագիրն ու փրկութիւնը ինք տնօրինելու յամառ ու կործանարար յաւակնութեամբ, սակայն առանց երբեք ինքզինք փրկել կարենալու: Եւ ահա՛, Աստուած մարդուն ուզեց տալ փրկութեան Իր ճամբան՝ մարդկային ամէն մտածողութենէ տարբեր: Եւ այդ նոր կերպը նոյնինքն Աստուածորդիին աշխարհ գալուստը, մարդեղանալը եւ մարդկային պայմաններուն մէջ մեղքը յաղթահարելը պիտի ըլլար: Իսկ որպէսզի մեղքին եւ մահուան վրայ յաղթանակը բոլոր մարդոց տրուած յաղթանակ ըլլայ, Աստուած տնօրինած էր, որ Իր Որդին բոլոր մարդոց փոխարէն մահը ճաշակէ իբրեւ մեղքին դատապարտութեան անհրաժեշտ գինը՝ Իր մահուամբ վճարուած, «Իր սեփական արիւնով մեզի համար յափտենական փրկութիւն ապահովելով» (Եբր 9.12), որպէսզի ատով նաեւ կեանքի եւ անմահութեան Իր կտակին ժառանգորդները դառնանք: Եւ ինչպէս ոեւէ ժառանգորդ հօրը մահէն ետք միայն կրնայ կտակով որոշուած ժառանգութեան տիրանալ, այնպէս ալ Աստուած ուզեց որ մենք Իր Որդիին մահուամբը դառնանք ժառանգորդները Երկինքի Թագաւորութեան: Այս ճշմարտութիւնը մեզի կը յայտնէ Պօղոս Առաքեալ, երբ կ'ըսէ. «Մինչ անկարող էինք փրկութեան հասնելու՝ Քրիստոս յարմար ժամանակին մեռաւ մեզի մեղաւորներուս համար: Արդարեւ, ... Աստուած մեզի հանդէպ Իր սէրը յայտնեց անով, որ երբ տակաւին մեր մեղքերուն մէջ էինք՝ Քրիստոս մեզի համար մեռաւ» (Հռ 5.6-8):

Մինչ մարդկային միտքը կամ տրամաբանութիւնը հիասթափ ու շմլոր կրնան մնալ Աստուծոյ այսօրինակ փրկութեան ճշմարտականութեան դիմաց, հաւատքի աչքով ու տրամաբանութեամբ մօտեցող մարդն անոր մէջ կը տեսնէ Աստուծոյ գերազանց իմաստութիւնը եւ զօրութիւնը, մարդուն հանդէպ Աստուծոյ անհուն սէրը եւ զայն անպայման ազատագրուած, փրկուած ու բարձրացած տեսնելու կամեցողութիւնը: Եւ այդ բոլորին դրսեւորումն ու բացայայտումն է

Քրիստոսի փոխանորդական մահը մեզի համար:

Բ) Քրիստոսի հաւատալով՝ կենդանացանք:

Հաւատքն է փրկութեան բանալին, եւ հաւատքի աչքով ու տրամաբանութեամբ դիտող ու դատող մարդը Աստուծոյ ընծայած փրկութիւնը կ'ընդունի բացարձակ վստահութեամբ ու երկիւղածութեամբ, եւ մանաւանդ՝ սիրով ու պաշտումով:

Արդ, Քրիստոս մեզի բոլորիս համար մեռաւ, որպէսզի հաւատքի ճամբով մեզ կենդանացնէ (տես Ա. Թս 5.10): Այսպիսի հաւատք մը մասնակցութիւն կամ բաժնեկցութիւն է Քրիստոսի մահուան եւ յարութեան: Մասնակցութիւն ու բաժնեկցութիւն ոչ թէ տեսականօրէն ու վերացականօրէն, ոչ թէ պարզ խորհրդանշական առումով, այլ իրական հասկացողութեամբ, հոգեւոր մակարդակի վրայ: Պօղոս Առաքեալ հաւատքի այդ փորձառութիւնը կ'արտայայտէ այսպէս. «Քրիստոսի հետ խաչին վրայ մեռայ եւ այլեւս կենդանի եմ. ես չէ որ կ'ապրիմ, այլ Քրիստոս է որ կ'ապրի իմ մէջս: Այս կեանքը, որ այժմ կ'ապրիմ մարմինով, կ'ապրիմ՝ հաւատալով Աստուծոյ Որդիին, որ զիս սիրեց եւ Իր կեանքը զոհեց ինձի համար» (Գղ 2.20):

Սակայն ինչպէ՞ս կրնանք ըսել «ես մեռայ խաչին վրայ», երբ մեռած չենք: Ճիշդ է որ մեր մարմինները մահ չեն ճաշակեր այս պարագային, բայց հոգին մասնակից կը դառնայ մարդոց համար յանձն առնուած Քրիստոսի մահուան, որ մերը կը դառնայ այս նոյնացումով, եւ անոր կենդանարար ներգործութիւնը կու գայ տեղ գտնելու մեր կեանքերուն մէջ: Այդ նոյնացումը մենք կը կատարենք եկեղեցւոյ Սուրբ Աւագանին մէջ մեր մկրտութեան պահուն: Արդարեւ, ինչպէս Առաքեալը կ'ըսէ, «մկրտուելով՝ Անոր հետ միասին թաղուեցաք եւ Անոր հետ ալ յարութիւն առիք, քանի հաւատացիք Աստուծոյ զօրութեան, որ զԱյն մեռելներէն յարուցեց: Քրիստոսի հետ Աստուած ձեզ ալ կենդանացուց, քանի դուք հոգեւորապէս մեռած էիք ձեր մեղքերուն պատճառով» (Կղ 2.12-13: Հմմտ. Եփ 2.4-6): Այո, բոլորս ալ «մկրտութեամբ Անոր (Քրիստոսի) հետ թաղուեցանք, որպէսզի ինչպէս Քրիստոս Հօրը փառքով յարութիւն առաւ մեռելներէն, նոյնպէս ալ մենք նորոգուած կեանքով ապրինք» (Հռ 6.4):

Քրիստոսի մահուան մասնակցութիւնը կը նշանակէ նաեւ Անոր յարութեան բաժնեկցութիւն: Եւ հաւատքի ճամբով Քրիստոսի հետ մեր միութիւնը այդ յարութիւնն է որ կը բերէ մեզի այսօր: Յարութիւն մը հոգիով, մեր ներքին մարդով, որ իր մեռելութենէն դուրս կու գայ, կը կենդանանայ, կը վերանորոգուի եւ կը դառնայ նոր ստեղծուած մը: «Ոեւէ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլեւս չէ՛

այն ինչ որ էր նախապես, որովհետև ամբողջությամբ նորոգուեցաւ» (Բ. Կր 5.17):

Գ) Այլ միայն մենք մեզի համար չենք ապրիր, այլ՝ Քրիստոսի:

Նորոգուած մարդը, «նոր ստեղծուած» կամ «նոր արարած» դարձած մարդը ալ պէտք չէ ապրի ինքզինքին համար, այլ՝ Տիրոջ համար, ինչպէս ուրիշ առիթով եւս կը շեշտէ Պօղոս, երբ կ'ըսէ. «Մեզմէ ոեւէ մէկը ինքն իր անձին համար չ'ապրիր, ոչ այլ ինքն իրեն համար կը մեռնի: Եթէ կ'ապրինք՝ Տիրոջ համար կ'ապրինք: Եւ եթէ կը մեռնինք՝ Տիրոջ համար կը մեռնինք, որ կը նշանակէ թէ ըլլայ կեանքի եւ ըլլայ մահուան մէջ՝ Տիրոջ կը պատկանինք» (Հռ 14.7-8): Առաքեալին այս հաստատումը կարելոր ճշմարտութիւն մը կը բերէ մեզի:

Եսասիրութիւն եւ քրիստոնէական հաւատք՝ անհամատեղելի են, անհաշտելի են:

Քրիստոս եկաւ մեզ ազատելու մեղքէն, չարէն եւ աշխարհէն. իսկ մեղքը հիմնականին մէջ «ես»-ն է, եսասիրութիւն է: Աստուածաշունչը մեզի կը սորվեցնէ, թէ մեղքին իբրեւ դարման Աստուծոյ մեզի տուած գլխաւոր դասը՝ սիրոյ դասն է. սէր, որ իր անձէն դէպի դուրս բացուած ըլլայ երկու գլխաւոր բեւեռներով. առաջինը՝ դէպի Աստուած ուղղուած. «Սիրէ քու Տէր Աստուածդ ամբողջ սիրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ միտքովդ» (Բ. Օր 6.5), եւ երկրորդը՝ դէպի մարդը դարձած. «Սիրէ ընկերդ քու անձիդ պէս» (Ղւ 19.18): Մարդ արարածէն Աստուծոյ գլխաւոր պահանջը սա է, որ անիկա իրաւունք ընէ, ողորմութիւն սիրէ, եւ իր Աստուծոյն կամքին համաձայն ապրի՝ խոնարհութեամբ (տես Մք 6.8):

Բոլոր այս հիմնական պահանջները մեզ կը տանին մէկ եւ նոյն ուղղութեամբ. մարդը չէ՛ ստեղծուած առանձին ըլլալու եւ ինքնանպատակ ապրելու համար, այլ ստեղծուած է աշխարհի մէջ ու մարդոց հետ ապրելու եւ Աստուծոյ համար ըլլալու նպատակով: Այն մարդը, որ իր հայեացքը Աստուծմէ կը կտրէ եւ միայն ինքզինքին կը նայի, անիկա կը մոռնայ զԱստուած, կը մոռնայ Աստուծոյ պատկեր ըլլալը, կը տեսնէ միայն ինքզինք եւ իր մէջ բոյն դրած մեղքին պատկերը: Իսկ կուռքի վերածուած այդ «ես»-ը ամէն ինչ կը պահանջէ միայն իրեն համար՝ մարդը դարձնելով ինքզինքին գերի եւ զայն խաւարեցնելով ու խեղդելով իր իսկ ստեղծած սահմանափակումներուն մէջ: Մինչդեռ մարդը ստեղծուած է Աստուծոյ օրինակով ճառագայթելու համար: Ճառագայթելու կեանք, սէր, բարութիւն, ազնութիւն, խնդութիւն, խաղաղութիւն, քաղցրութիւն, աստուածգիտութիւն, ար-

դարութիւն ու սրբութիւն:

Քրիստոսի յարութիւնը մեր մէջ ոտքի կը կանգնեցնէ հարազատ մարդը, քրիստոնէայ մարդը, որ Աստուծոյ նմանելու եւ մարդոց նուիրուելու եւ ծառայելու կոչուած մարդն է, որ կ'ապրի Տիրոջ եւ Անոր մարմինը կազմող Եկեղեցիին համար, եւ Քրիստոսի ընդմէջէն բոլոր մարդոց համար:

Այդպիսին ըլլալու կը կոչէ մեզ այսօր Քրիստոս, իբրեւ Իր հրաշափառ Սուրբ Յարութեան լոյսէն վառած ճրագներ, որպէսզի Իր փառքը ճառագայթենք մեր վարմունքով, գործով ու խօսքով. որովհետև նորոգուած մարդուն, «նոր ստեղծուած» կամ «նոր արարած» դարձած մարդուն «պարտականութիւնն է քարոզել զօրութիւնը Անոր, որ մեզ խաւարէն Իր սքանչելի լոյսին կանչեց» (Ա. Պտ 2.9):

Եւ այն ատեն մեր ամբողջ կեանքը կը վերածուի՝ հաւատքի եւ կենդանութեան լուսաշող առաւօտի, նոր կեանքի եւ յարութեան անանց առաւօտի:



ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

«Տէ՛ր, բարօք է մեզ աստ լինել» (Մտ 17.4)

Պայծառակերպութեան տօնի ամիսն է Յուլիսը:

Վստահաբար, նախ կը մտածենք Քրիստոսի պայծառակերպութեան մասին: Այդ դրուագին որոշ, յատկանշական գիծերը անմիջապէս մարմին կ'առնեն մեր միտքերուն մէջ: Կը յիշենք թէ ինչպէս այն օրը Յիսուս Ինք առաւ Իր աշակերտներէն երեքը՝ Պետրոսը, Յակոբոսը եւ Յովհաննէսը եւ զանոնք Իրեն հետ տարաւ հանեց լեռան մը բարձունքը, ուր կրնային առանձին ըլլալ եւ աղօթել: Եւ մինչ կ'աղօթէր, Յիսուս այլակերպեցաւ, այսինքն՝ Իր դէմքը արեգակի փայլը ստացաւ եւ Իր հանդերձները լոյսի սպիտակութիւնը հագան: Եւ ահա՛ աշակերտները տեսան Մովսէս ու Եղիա Մարգարէները, որոնք Յիսուսի կողքին կանգնած՝ Անոր հետ կը խօսէին Իր չարչարանքներուն, մահուան եւ յարութեան մասին: Յափշտակութեան մէջ՝ Պետրոս բացականչեց. «Տէ՛ր, ինչ լաւ է այստեղ, հո՛ս մնանք: Եթէ կ'ուզես երեք վրան կանգնենք հոս, մին Քեզի, իսկ միւսները Մովսէսի եւ Եղիայի համար» (Մտ 17.4): Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը եկաւ ծածկեց աշակերտները եւ ամպին մէջէն լսուեցաւ ձայն մը. «Ատիկա է Իմ սիրելի Որդիս, որուն հաճեցայ: Մտի կ'ըրէք զԱյն» (Մտ 17.5): Աշակերտները ահով երեսն ի վար խոնարհութիւն կ'ընէին, երբ Յիսուս մօտեցաւ, դպաւ անոնց ու ոտքի հանեց: Եւ տեսան, թէ Յիսուս առանձին էր:

Աւետարանական այս համառօտ պատումին մէջ խտացած է այլակերպութեան մեծ դրուագը: Անոր մէջ բաւական նիւթ կը գտնենք կրօնական մեր խորհրդածութեան համար:

1) Նախ՝ ինչ որ կը դիտենք այն է, թէ պատահաբար չէր որ Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննէս Քրիստոսի հետ գտնուեցան կամ մնացին, այլ Յիսուս Ինք ԱՌԱՒ զանոնք եւ լեռ ՀԱՆԵՑ: Ինքն էր որ

զանոնք առանձնացուց եւ Իրեն հետ լեռ առաջնորդեց մասնաւոր դիտումով: Շեշտը դրուած չէ ընտրուած անձերուն վրայ, թէ ինչու այս երեքը եւ ոչ ուրիշներ: Շեշտը դրուած է Քրիստոսի կողմէ առնուելուն եւ լեռ հանելուն վրայ:

Անմիջապէս ճշմարտութիւն մը կը յայտնուի՝ Աստուած Ինքն է որ կ'ընտրէ այն անձերը կամ անձը, որուն Ինքզինք պիտի յայտնէ կամ Իր յայտնութիւնը պիտի ընէ: Այդ յայտնութիւնը տեղի չունենար մեր կամքով կամ փափաքով: Ինչպէս այս դէպքէն քիչ մը առաջ, Պետրոսի խոստովանութեան առիթով Քրիստոս Ինք պիտի ըսէր. «Մարմինը եւ արիւնը չէր որ ատիկա քեզի յայտնեցին, այլ Հայրս որ Երկինքն է» (Մտ 16.17): Աստուած Ինք կ'ընտրէ անձը եւ այն պահը երբ Իր յայտնութիւնը պիտի տայ, եւ ըստ այնմ ալ կ'առաջնորդէ կամ կը պատրաստէ ենթական, ինչպէս Յիսուս Իր աշակերտները առաջնորդեց դէպի լեռ:

2) Քրիստոս Իր առաքեալները հանեց լեռ, ուր կրնային առանձին ըլլալ: Այստեղ ունինք լեռ բարձրացումը եւ առանձնանալու պահանջը: Խորհրդանշական բան մը կայ այս լեռ բարձրացումին մէջ: Աստուծոյ յայտնութիւնը անպայմանօրէն լեռան մը բարձունքին չի տրուիր կամ չի կատարուիր: Բայց միաժամանակ, ասիկա խորհրդանշական յիշեցում մըն է, թէ մարդս Աստուծոյ յայտնութիւնը վայելելու համար պատրաստուած պէտք է ըլլայ մարմինով թէ հոգիով: Բարձրացումը այստեղ՝ վերացումն է մարդուն, ոչ թէ այլաբանօրէն, այլ՝ իրական ու վաւերական կերպով վեր ըլլալը ամէն բանէ որ ստորին է, մեր մարմինը, միտքն ու հոգին կաշկանդող ու սահմանափակող: Զգացումներու եւ մտածումներու մաքրութեան բարձրունքն է անիկա՝ առաքինութեան սանդուխներով աստիճանաբար վեր տանող: Հոն հասնողը արդէն առանձնացած կ'ըլլայ ինքնաբերաբար, հեռացած կ'ըլլայ զինք շրջապատող, իր ուշադրութիւնն ու միտքը գրաւող երեւոյթներէն ու դէմքերէն եւ կրնայ առանձնութեան մէջ գտնել իր կապն ու մտերմութիւնը Աստուծոյ հետ:

3) Յիսուս այլակերպեցաւ աղօթքի պահուն: Որպէս մարդ՝ Քրիստոս Իր մարմինով պայծառակերպուեցաւ աղօթքի պահուն: Ան սովորութիւն ըրած էր յաճախ առանձնանալ եւ աղօթել, երբեմն՝ աղօթել Իր աշակերտներուն հետ միասին: Բայց պայծառակերպութեան այս դրուագին աղօթքի կապուած ըլլալը նոր եւ առանձին դաս մըն է աղօթքի մասին: Ան Իր աշակերտներուն եւ մեզի կը սորվեցնէր, թէ ինչպիսի փոխակերպող ոյժ է աղօթքը մարդու մը կեանքին մէջ: Եւ երբ մարդ յաջողի իսկապէս առանձնանալ եւ Աստուծոյ հետ իր կապն ու մտերմութիւնը գտնել՝ ինքզինք գտած կ'ըլլայ Աստուծոյ ափին մէջ, եւ

Աստուծոյ ստեղծագործ ձեռքին հպումը իր մէջ կը կերտէ նոր մարդը, ամբողջութեամբ փոխակերպուած, լուսազարդուած, պայծառացած:

4) Յիսուս այլակերպեցաւ աշակերտներուն առջեւ: Առաքեալներու աչքին Յիսուսի կերպարանքը փոխուեցաւ յանկարծ: Դէմքը արեւու փայլը ստացաւ, հանդերձները լոյսի պայծառութիւնը: Եւ յատկանշական է, որ Պետրոս ու Յակոբոս եւ Յովհաննէս չկրցան այդ լոյսին դիմաց բաց պահել իրենց աչքերը: Ոչ մէկ մարմնաւոր մահկանացու կրնայ տեսնել զԱստուած Իր իսկութեան մէջ: Աստուածախօս մարգարէն իսկ, Մովսէս, երբ ուզեց Աստուծոյ փառքը տեսնել, Աստուած ըսաւ. «Դուն Իմ երեսս չես կրնար տեսնել, որովհետեւ մարդ չի կրնար գիտեսնել ու ապրիլ» (Ելք 33.20): Աստուածորդին, որ Աստուծոյ փառքին ճառագայթն է (Եբր 1.3) մարմին առաւ, այսինքն ծածկեց Իր փայլատակող փառքը, Աստուծոյ կերպարանքը ունենալով հանդերձ կամաւորաբար Ինքզինքը ունայնացուց եւ ծառայի կերպարանք առաւ (Փլպ 2.6-7), որպէսզի կարենայ մարդոց մէջ ապրիլ, որովհետեւ, այլապէս, մարդիկ պիտի չկարենային տանիլ Անոր լոյս ներկայութիւնը: Եւ ահա այսօր Իր մարմինին մէջ իսկ Ինքզինք կը յայտնէ որպէս Աստուծոյ փառքին ճառագայթը, Ինքզինք կը յայտնէ որպէս Որդի Աստուծոյ:

Բայց կայ նաեւ ասելին: Կարծէք Քրիստոսի նպատակը ո՛չ միայն Իր մարմինին մէջ Աստուծոյ փառքը յայտնել է, այսինքն Իր Աստուածութեան սոսկական ապացոյցը տալ, այլ կ'ուզէ նաեւ սորվեցնել մեզի, թէ մենք եւս Իր երկրորդ գալուստին մեր մարմիններով պիտի փոխակերպուինք եւ Իրեն նման պիտի ըլլանք (Ա. Յի 3.2) աստուածային լոյսին փառաւորութիւնը հագնելով: Քրիստոս երկրաւոր Իր կեանքը իր բոլոր մանրամասնութիւններով որպէս օրինակ կու տայ մեր կեանքին եւ մեր ըլլալիքին: Ուստի եւ Իր պայծառակերպութիւնը աստուածային փառքի յայտնութեան կողքին նաեւ պատկերացումն է մեր պայծառակերպութեան ներկայ թէ հանդերձեալ կեանքին մէջ:

5) Այլակերպութեան պահուն յայտնուեցան Հին Կտակարանին երկու մեծ մարգարէները՝ Մովսէս եւ Եղիա: Երկուքն ալ բացառիկ հանգամանքով, զօրաւոր դէմքեր են եւ Աստուծոյ դատին նախանձաւոր պաշտպանները: Մին Օրէնքի միջնորդ տուիչն է, միւսը՝ կենդանի Աստուծոյ ոգեղէն ներկայութեան թարգմանը: Պայծառակերպութեան պահուն անոնց ներկայութիւնը կարծէք կենդանի վկայութիւնն է Հին Կտակարանին: Մովսէսէն սկսեալ բոլոր մարգարէները Աստուծոյ խոստումներուն կատարումը ցոյց կու տային Օծեալ Մեսիայի մը ձեռամբ: Եւ հիմա Քրիստոսի ցոյց տուած աստ-

ուածային գործերու վկայութեան հետ Անոր աստուածային հանգամանքին եւ առաքելութեան վկայելու կու գան Օրէնքն ու մարգարէութեան ոգին: Երկուքն ալ այս աշխարհէն կենդանի յափշտակուած հիմա կու գան վկայելու յաւիտենական կեանքին Քրիստոսի մասին, որ Հօրը քով էր եւ մեզի յայտնուեցաւ (Ա. Յի 1.2): Պայծառակերպուած Տիրոջ կողքին անոնց ներկայութիւնը յաւելեալ յիշեցում մըն է, թէ մենք եւս կոչուած ենք նոյն պայծառակերպութեան հաղորդ դառնալու:

6) Յատկանշական արտայայտութիւն մըն է Պետրոսի խօսքը. «Տէ՛ր, ինչ լաւ է այստեղ, հո՛ս մնանք»: Յափշտակութեան պահու մը արտայայտիչն է անիկա: Թաքոր լերան այդ կատարին որպէս բնական միջավայր ոչինչ կար այնքան գրաւիչ որ Պետրոսի մէջ արթնցնէր փափաքը հոն մնալու, թերեւս ընդմիշտ: Իրողութիւնն այն է, որ Քրիստոսի պայծառակերպուած ներկայութիւնը, աստուածային ներկայութիւնը պահու մը համար յաւիտենականին ճաշակը կու տար առաքեալներուն, եւ այդ լոյս ներկայութիւնը այնքան ցանկալի էր եւ առինքնող, որ մարդկային կեանքի բոլոր պայմանները կը մոռցուէին այնտեղ՝ այդ վայելքին դիմաց: Աստուծոյ կոխած տեղը երկիրը երկինքի կը փոխուէր, լերկ լեռը դրախտ կը թուէր եւ Պետրոս կ'ուզէր ընդմիշտ այդ ներկայութիւնը վայելել այնտեղ:

7) Ի վերջոյ, եզրափակող տարրն է լուսեղէն ամպը, որ կը ծածկէ Աստուծոյ փառքը աշակերտներու տեսողութենէն, եւ որուն մէջէն կու գայ դարձեալ Հօր Աստուծոյ վկայութիւնը. «Ատիկա է Իմ սիրելի Որդիս որուն հաճեցայ: Մտիկ ըրէք զԱյն»: Նոյն այն վկայութիւնը, որ լսելի եղած էր մկրտութեան ատեն: Աստուածային տեսիլներու եւ յայտնութեանց մէջ շատ յաճախ ներկայ տարր մըն է ամպը, որ բացուող ու փակուող վարագոյրի մը պէս կարծէք երկինքի ու երկրի սահմանազատումը կ'ընէ: Սահմանազատումը ժամանակաւորին ու յաւիտենականին: Եւ Քրիստոսի պայծառակերպուած տեսիլքին վրայ եւս կ'իջնէ ամպեղէն այդ վարագոյրը, կարծէք թելադրելով մտածել Պօղոս Առաքեալի բառերով. «Ինչ որ հիմա տեսանք՝ հայելիի մէջ տեսնուած աղօտ պատկեր մըն էր. բայց յետոյ պիտի տեսնենք երես առ երես» (Ա. Կր 13.12):

Քրիստոսի պայծառակերպութեան դրուագին այս վերլուծումը մտածել կու տայ մեզի հետեւեալ կէտերուն մասին.

ա) Ամէն տօն նպատակ ունի տօնախմբութեան մաս առնող անհատները մասնակից դարձնել տօնին էութեան: Այլ խօսքով, իւրաքանչիւր տօնի նպատակն է իր ներկայացուցած խորհուրդը, իրմով փառաբանուած գաղափարականը վերամարմնաւորուած տեսնել իւրաքանչիւր անհատ հաւատացեալի անձին վրայ կամ անոր կեան-

քին մէջ: Առանց այս արդիւնքին տօնախմբութիւնը վրիպած կ'ըլլայ իր նպատակէն եւ պարպուած իր իմաստէն, մինչ տօն մը «կենդանի» կ'ըլլայ եւ իմաստալից երբ տօնախմբողին կեանքին մէջ տեղ գրաւէ, ներգործող ուժականութիւն դառնայ:

բ) Քրիտսոս պայծառակերպուեցաւ որպէսզի պայծառակերպող իր լոյսին ճառագայթները իյնան նաեւ բոլոր մարդոց վրայ: Որպէսզի մենք եւս այժմէն պայծառակերպուինք լուսաւորուած միտքով հաւատքի ջահով լուսաւորելով մեր կեանքը եւ միշտ Աստուծոյ լոյսին մէջ քալելով, մեր կեանքը դարձնելով հարազատ պատկերը Քրիստոսի երկրաւոր կեանքին, որպէսզի այս անգամ մեր կեանքին ու գործերուն հայելիին մէջէն մարդիկ կարենան Աստուծոյ պատկերն ու Աստուծոյ գործերը ճանչնալ ու զկյն փառաւորել:

գ) Որքան անհատ մարդուն, նոյնքան անհրաժեշտութիւն է, մանաւանդ մեզի համար, մեր համայնական, ազգովին պայծառակերպութիւնը: Անհատական պայծառակերպութիւնը պայման է ու միաժամանակ սկիզբը կրնայ ըլլալ ազգային հաւաքական այդ պայծառակերպութեան: Ժողովուրդ մը անհատներէ կը կազմուի, եւ ուստի, պայծառակերպուած անհատներ շատ բան կը փոխեն եւ շատ բան կրնան ընել իրենց ժողովուրդի պայծառակերպումին համար: Իսկ ժողովուրդի մը պայծառակերպութիւնը կը հասկնանք որպէս


1) ԿԵՆՑԱՂՈՎ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒՄ: Աշխարհի բազմազան ժողովուրդներու այլատեսակ բարքերու եւ ըմբռումներու բաւիղէն դուրս գալ, ԱՌԱՆՁՆԱՆԱԼ եւ մեր ներքին ճակատի ամրութիւնն ու միութիւնը ամէն բանէ առաջ խարսխել բարոյական զօրաւոր ըմբռումներու եւ հաւատքի վրայ ընտանեկան թէ ընկերային յարաբերական կեանքի առանցք դարձնելով զանոնք:

2) ՄԻՏՔՈՎ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒՄ: Անհատական եւ հատուածական նեղ հասկացողութիւններու եւ շահերու կաշկանդումներէն դուրս գալ, պատուարը յաղթահարել եւ ԲԱՐՁՐԱՆԱԼ նոր մակարդակի մը, որ ազգային-ընդհանրական նպատակի մը եւ շահերու հասարակաց գիտակցումն է լուսաւոր, առողջ հասկացողութեամբ:

3) ԳՈՐԾՈՎ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒՄ: Բարձրագոյն այդ նպատակի եւ անոր հրամայական պահանջներու լոյսին մէջ դիտել բոլոր հին գործելակերպերը եւ զանոնք փոխել, ԱՅԼԱԿԵՐՊԵԼ նոր ոգիի առաջնորդութեամբ, զանոնք ո՛չ միայն նոր ու ցանկալի, այլեւ ներքին ու արտաքին ճակատներու վրայ աւելի ազդու եւ նպատակասլաց դարձնելու համար, լուսաւոր գործունէութեան մը սանդուխներով բարձրանալու եւ հասնելու համար համազգային պայծառակերպուած կեանքի գոյավիճակին եւ համազգային իրաւունքներու ան-

տեղիտալի հետապնդումին:

Այն ատեն տօնը կը դադրի Եկեղեցւոյ ծիսական նեղ սահմանին մէջ պարփակուած կարգ մը ըլլալէ, եւ կը դառնայ մեր պատկերը արտացոլացնող հայելին, իսկական պայծառասիրտ տօնախմբութիւն:



ԱՆԾԱՆՕԹ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Տարիներ առաջ, Հոգեգալուստի տօնի նախօրեակին, քրիստոնեայ երիտասարդներու խմբակ մը Հռոմի մէջ ազատ հարցախուզութիւն մը կատարած էր գիտնալու համար, թէ մարդոց, նոյնիսկ եկեղեցի յաճախողներու որ տոկոսը ինչ գիտէ Ս. Հոգիի մասին: Երեւան եկած էր, թէ առհասարակ, մարդիկ կամ ոչինչ գիտեն եւ կամ շատ ընդհանուր եւ աղօտ ու յաճախ սխալ ծանօթութիւն մը ունին միայն:

Վստահաբար, մենք եւս շատ քիչ մտածած ենք Ս. Հոգիին եւ Անոր գործին մասին: Կամ մտածա՞ծ ենք արդեօք երբեւիցէ: Մինչդեռ մեր հաւատքի կեանքին մէջ անասելիօրէն մեծ է Անոր դերը՝ աւելի քան երեւակայած կրնանք ըլլալ:

Վարժուած ենք նիւթական աշխարհի մը մէջ նիւթական աշխարհի մը չափանիշերով խորհելու եւ հասկնալու, եւ անտես ընելու ինչ որ անմիջականօրէն մեր մարմնաւոր զգայարանքներուն չի հանդիպիր: Բայց կայ ներքին զգայարանք մըն ալ, որ մարմնաւորին հետ ու մարմնաւորէն անկախ ունի իր ընկալչութիւնը եւ ճանաչողութիւնը: Եթէ առաջիններով չենք կրնար հասնիլ Ս. Հոգիի ճանաչման, երկրորդը, սակայն, անպայմանօրէն մեզի կու տայ այս հասողութիւնը:

Անմիջապէս կը խուժեն հարցումները. ինչպէ՞ս կ'ըլլայ ատիկա: Ի՞նչ է Ս. Հոգին: Ի՞նչ է Անոր դերը: Ինչպէ՞ս կը ներկայանայ Անիկա մարդոց: Ի՞նչ են Անոր արդիւնքները:

Մեր հաւատքը, Քրիստոսի ուսուցմամբ մեզի տրուած, զկյն մեզի կը ներկայացնէ որպէս Ամենասուրբ Երրորդութեան եւ մէկ Աստուածութեան երրորդ անձը: Յիսուս քանիցս խօսեցաւ Անոր մասին՝ միշտ ալ Իր փառաւորման կապելով Անոր առաքումը, Անոր դերը Եկեղեցւոյ կեանքին մէջ:

Մեր Եկեղեցւոյ հանգանակը՝ «Հաւատամք»-ը, Ս. Հոգիին համար կը հաստատէ. «Որ խօսեցաւ յՕրէնս եւ ի մարգարէս եւ յԱւետարանս», այսինքն՝ Ս. Հոգին խօսեցաւ Օրէնքին ու մարգարէներուն

(Հին Կտակարան) եւ Աւետարաններուն (Նոր Կտակարան) ընդմէջէն: Այլ խօսքով, ամբողջ Աստուածաշունչին ընդմէջէն հոսող ու խօսող Աստուծոյ Շունչն է անիկա, Աստուծոյ խօսքին կենդանի խողովակը, Աստուծոյ յայտնութիւնը տպաւորող Հոգին: Անշուշտ Աստուածաշունչի ամէն մէկ գիրք ունի իր հեղինակը եւ կը կրէ իր ժամանակին ու հեղինակին անձին կնիքը: Բայց իւրաքանչիւր գիրքի ետին որպէս առաջին հեղինակ կայ Ս. Հոգին, Անոր գործօն թելադրութիւնը, Անոր դրոշմը: Օրէնքի ամբողջութեան եւ մարգարէական պատգամներուն մէջ նոյն շունչն է որ ինքզինք կ'արտայայտէ ժամանակին կնիքով՝ բոլորին ալ ընդմէջէն, մարդիկը նախապատրաստելու եւ անոնց միտքը գալիք փրկութեան եւ Փրկիչի անձին վրայ սեւեռելու համար: Ապա, երբ Օրէնքը դաստիարակի իր դերը կատարեց եւ հասաւ հաւատքի ժամանակը, այսինքն երբ Քրիստոսով հաստատուեցաւ Եկեղեցին որպէս ամբողջութիւնը Աստուծոյ խոստումին ժառանգորդներուն, Ս. Հոգին մեզի յայտնուեցաւ Իր գործունէութեան նորանոր երեսներով.

1) Ս. ՀՈԳԻՆ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՆԵՐՈՒ ԾՆՈՂ

Քրիստոնեայի մեր կեանքը սկիզբ կ'առնէ Ս. Հոգիով: Մարմնաւոր մեր ծնունդը մեր ծնողներուն կը պարտինք, բայց Ս. Հոգին է մեր հոգեւոր ծնողը, Ան է որ մեզ երկրորդ եւ հոգեւոր ծնունդով մը աստուածակերպ կը ծնանի: Քրիստոս ատիկա Նիկողեմոսին կը յիշեցնէր պայմանի մը ձեւով. «Եթէ մէկը ջուրէն (մկրտութեամբ) եւ Հոգիէն չձնի՝ չի կրնար Աստուծոյ Արքայութիւնը մտնել» (Յհ 3.5):

2) Ս. ՀՈԳԻՆ՝ ՄԻՍԻԹԱՐԻՉ

«Երբ գայ միսիթարիչը գոր Ես Հօրմէն ձեզի պիտի դրկեմ, ճշմարտութեան Հոգին, որ Հօրմէն կ'ելլէ» կ'ըսէր Յիսուս: Միսիթարիչ բառը օտար թարգմանութեանց մէջ արտայայտուած է նաեւ «Օգնական» անունով, ինչ որ պարզապէս կը բացայայտէ Անոր դերը հաւատացեալի մը կեանքէն ներս որպէս կեանքի ոյժ բերող աղբիւրի, յատկապէս դժուարութեանց եւ ալեկոծութեանց մէջ որպէս սպեղանի տալով Իր օգնութիւնը, խաղաղութիւն շնորհելով տագնապած սիրտերուն ու միտքերուն, ինչ որ արդէն կը գտնենք միսիթարութեան իմաստին մէջ:

3) Ս. ՀՈԳԻՆ՝ ԴԱՍՏԻԱՐԱԿ

Յիսուս Ս. Հոգին դրկելու խոստումը ըրաւ՝ ըսելով. «Միսիթարիչը՝ Ս. Հոգին, գոր Հայրը Իմ անունովս պիտի դրկէ, Անիկա ձեզի պի-

տի սորվեցէ եւ յիշեցնէ այն ամէնը որ ծեփի խօսեցայ» (Յհ 14.26): Ահաւասիկ ուրիշ մէկ օգնութիւնը Մխիթարիչին: Քրիստոս շատ բաներու մասին խօսեցաւ ու շատ բաներ բացատրեց: Որքա՞նը կրնային յիշել զինք լսող աշակերտները: Ս. Հոգին պիտի յիշեցնէր այդ բոլորը իր հիմնական կորիզին մէջ: Բայց տակաւին, բաւարա՞ր էր միայն յիշելը: Չէ՞ որ առաքելները շատ բան չհասկցան անմիջապէս: Կարելոր էր հասկնալ, սորվիլ տակաւին եւ հասկնալ սորվիլ: Ահա այս հասկացողութեան ուսուցման գործն է որ կը կատարէ Ս. Հոգին վերադաստիարակելով Իրմով ծնած եւ Քրիստոսի վարդապետութեամբ սնած հոգիները:

4) Ս. ՀՈԳԻՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ

Աստուծոյ Եկեղեցւոյ առաջնորդութիւնը վարողը եւ առաքելութեան մղիչ ոյժը Ս. Հոգին ինքն է: Նախքան Իր համբարծումը՝ Քրիստոս աշակերտներուն ըսաւ. «Երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուիք եւ Իմ վկաներս պիտի ըլլաք Երուսաղէմի, ամբողջ Հրէաստանի եւ Սամարիայի մէջ եւ մինչեւ աշխարհի ծայրամասերը» (Գրծ 1.8): Առաքելութիւնը վկայութիւնն է՝ Քրիստոսի եւ Աստուծոյ Թագաւորութեան մասին: Վկայութեան այդ առաքելութիւնը կը սկսի Ս. Հոգիի ստացումէն ետք միայն, ամենոր զօրութեամբ լեցուելէ յետոյ, Անոր շնորհքներով զինուելէ եւ զարդարուելէ ետք: Բացէ ք Գործք Առաքելոցի Բ. գլուխը եւ տեսէ՞ք նոյնին իրական արդիւնքը Հոգեգալուստի դրուագին մէջ: Առաքելներ քարոզութեան չսկսան մինչեւ Հոգեգալուստի օրը, մինչ Ս. Հոգիի էջքէն անմիջապէս վերջ Պետրոս տուաւ առաջին քարոզը, առաջին վկայութիւնը Աստուծոյ փրկութեան ծրագիրին եւ Փրկիչին՝ Յիսուսի մասին, մարգարէական կանխագուշակութիւններու վկայութեամբ միասին: Եկեղեցին առաքելութեան կոչող զօրութիւնն է Ս. Հոգին: Առանց Անոր առաջնորդութեան Եկեղեցին կը դադրի վաւերականօրէն ապրող ու գործող իրականութիւն ըլլալէ, կը դադրի վկայութիւն եւ առաքելութիւն ըլլալէ եւ կը դադրի կեանքին Իր նպաստը բերելէ:

5) Ս. ՀՈԳԻՆ՝ ՇՆՈՐՀԱՐԱՇԵՆ

Ամէնէն աւելի գործունէական այս երեսն է, քրիստոնէայի մը ամբողջ կեանքը լեցնող, որ շեշտուած կը գտնենք առաքելական թուղթերուն եւ Եկեղեցւոյ Հայրերու գրականութեան մէջ, թերեւս նաեւ անոր համար, որ այդ անուան հասկացողութեան մէջ կրնան ընդգրկուիլ նաեւ նախորդ երեսները: Ս. Հոգին Ինքն է որ իւրաքանչիւր անհատի կը բաշխէ աստուածային շնորհները՝ զանոնք կեանքի բոլոր

պայմաններուն դիմաց որոշ առաքինութիւններով զինելու համար:

Բայց ինչպէ՞ս կը բաշխէ Ան այդ շնորհները: Ի՞նչ ձեւով կը ներգործէ Անիկա, ինչպէ՞ս կրնանք զգալ զԱյն: Այս հարցերուն պատասխանը կարելի է քաղել Նոր Կտակարանէն, ուր արտաքին որոշ նշաններով ու պատկերներով կը բացատրուին այդ ներգործութեան կերպերը:

Նոր Կտակարանին մէջ Ս. Հոգին համեմատուած է նախ կրակին հետ: Յովհաննէս Մկրտիչ իր մկրտութիւնը Քրիստոսով գալիք մկրտութեան հետ բաղդատելով, կ'ըսէ. «Ես ձեզ ջուրով կը մկրտեմ ապաշխարութեան համար... Ան ձեզ պիտի մկրտէ Ս. Հոգիով ու կրակով» (Մտ 3.11): Խօսքը նիւթական ԿՐԱԿԻՆ հետ կապ չունի անշուշտ: Հոգեգալուստի օրը կրակէ լեզուներ երեւցան եւ հանգչեցան առաքելներուն վրայ խորհրդանշելով անոնց ստացած խօսքի զօրութիւնը:

Ս. Հոգին համեմատուած է ՋՈՒՐԻՆ հետ: Կոչուած է Կեանքի Ջուր, որ պիտի բխի իւրաքանչիւր հաւատացողի ներսիդին (Յհ 7.38-39): Պատկերը կը խորհրդանշէ մարդոց հոգեկան ծարաւին յագեցումը մէկ կողմէ, եւ միւս կողմէ՝ հոգեկան անդաստանին ծաղկումն ու կենսաւորումը Ս. Հոգիի մշտանորոգ եւ մշտաբոլս զօրութեամբ:

Տակաւին, Ս. Հոգին համեմատուած է ՀՈՎԻՆ կամ ՇՈՒՆՉԻՆ հետ: «Հովը ուր որ ուզէ՝ կը փչէ. դուն անոր ծայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին» (Յհ 3.8): Ս. Հոգիի ներգործութեան կերպն է որ Քրիստոս կը ջանայ բացատրել Նիկողեմոսի: Ինչպէս հովին ներկայութիւնը կը զգացուի իր անցքով եւ սուլոցով, այնպէս ալ Ս. Հոգիին ներկայութիւնը կը զգացուի իր յառաջ բերած ներքին արդիւնքով, իր պտուղներով: Իսկ այդ պտուղները, զորս ՇՆՈՐՀՔ բառով կ'որակենք ու կը հասկնանք, կարելի է երկու ընդհանուր խմբաւորումներու ենթարկել.

ա) Կենցաղավարական շնորհքներ (կրաւորական արդիւնքներ): «Սուրբ Հոգիին արդիւնքներն են սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերատարութիւն, ազնուութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն» (Գղ 5.22-23):

բ) Առաքելական շնորհքներ (ներգործական արդիւնքներ): «Սուրբ Հոգին ամէն մէկուն մէջ կը յայտնուի տարբեր ձեւով մը՝ հասարակաց օգուտին համար: Այսպէս, Սուրբ Հոգին մէկուն կարողութիւն կու տայ իմաստութեամբ յորդորելու, միւսին նոյն Հոգին կարողութիւն կու տայ հոգեւոր գիտութեան հասնելու եւ ուսուցանելու: Նոյն Հոգին երրորդի մը հաւատք կու տայ, ուրիշի մը՝ բժշկելու

գորութիւն. ուրիշի մը հրաշագործութեան կարողութիւն կու տայ, ուրիշի մը մարգարէական պատգամախօսութիւն, ուրիշ մէկուն՝ Հոգիէն տրուած պարգեւները ճանչնալու կարողութիւն, ուրիշի մը՝ յափշտակութեան մէջ լեզուներ խօսելու շնորհք, իսկ ուրիշի մը՝ այդ լեզուներով խօսուածը մեկնաբանելու կարողութիւն: Միեւնոյն Հոգին է որ այս բոլորը կը կատարէ՝ իւրաքանչիւրին յատուկ շնորհք մը տալով, ինչպէս որ Ինք կ'ուզէ» (Ա. Կր 12.7-11):

Ահա ասոնք են Ս. Հոգիին յայտնութեան կերպերը եւ ներգործութիւնները:

Անտեսանելի, բայց իմանալի եւ զգալի գորութիւնն է Անիկա ուրեմն, որ Իրմով կը պայմանաւորէ ամբողջ Եկեղեցւոյ գործունէութիւնը որպէս Քրիստոսի խորհրդական Մարմինը: Ներգործող ոյժ է Անիկա հաւատացեալին կեանքին մէջ՝ զայն Աստուծոյ կամքին իրագործման մղող: Կերակենդանացնող ոյժ է նաեւ Անիկա, գաղտնիքը Եկեղեցւոյ կենդանութեան, նոյնիսկ երբեմն հակառակ արտաքին երեւոյթներուն:

Այդ կենդանութիւնն է որ կը հայցենք Հոգեգալուստի տօնախմբութեամբ՝ զայն մերը դարձնելու համար:

ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆԻ

«Իմաստութիւն շինեաց իւր տուն, եւ կանգնեաց սիւնս եօթն» (Իմաստութիւնը իր տունը շինեց, եօթը սիւներու վրայ կանգնեց զայն) (Առ 9.1)

3 ունիսի 8-ին, մեր Եկեղեցին կը տօնէ յիշատակը Վաղարշապատի Կաթողիկէ Մայր Եկեղեցիին՝ Էջմիածինի հիմնադրութեան:

Ս. Գրիգոր Լուսաւորիչի կեանքին քիչ թէ շատ ծանօթ ամէն հայ գիտէ, թէ Հայաստան Աշխարհը քրիստոնէական կրօնին դարձաւ եւ անոր պետական ճանաչում տուաւ 301 թուականի աշնան: Կարճ ժամանակ մը ետք, 302 թուականի Յունուար 25-ի գիշերը, Գրիգոր Լուսաւորիչ իր նշանաւոր տեսիլքը ունեցաւ, որուն մէջ տեսաւ երկինքին բացուիլը եւ երկնային լոյսին առատահոս ծաւալումը մեր աշխարհին մէջ, տեսաւ հրեշտակներու էջքը եւ միախառնումը մեր ժողովուրդի ծոցէն ելած բազմաթիւ վկաներու գունդին եւ ի վերջոյ տեսաւ էջքը Աստուծոյ Միածին Որդիին, որ Իր ձեռքին մէջ ոսկի ուռնակ մը բռնած՝ Վաղարշապատ քաղաք, եւ այնտեղ արքունի պալատին մօտիկ Սանդարամետ կոչուած գետնափոր մեհեանին վայրին զարկաւ: Մեհենավայրը դարձաւ տափարակ դաշտ, որուն վրայ ոսկեայ հսկայ խարիսխ մը դրուեցաւ, եւ այդ ոսկի խարիսխին վրայ կանգնեցաւ հրեղէն սիւն մը՝ իր գագաթին ամպերէն խոյակով ու խաչով, ինչ որ կը խորհրդանշէ Քրիստոսի հիմին վրայ կառուցուած Եկեղեցին: Եւ ահա, 302 թուականի գարնան նետուեցան առաջին հիմերը այն կաթողիկէ տաճարին, որ Ս. Աստուածածին պիտի կոչուէր, բայց պատմութիւնը յետոյ զայն պիտի վերանուանէր ԷԶՄԻԱԾԻՆ՝ ընդմիշտ յիշելու համար Միածինին էջքով կատարուած անոր աստուածային հիմնադրութիւնը:

Կը հրաւիրուինք, հետեւաբար, մտածելու առհասարակ Եկեղեց-

ւոյ եւ անոր հիմնադրութեան մասին: Այս ուղղութեամբ խորհելու կը մղէ նաեւ Առակաց Գիրքին այսօրուան ընթերցուածը, որ կը սկսի ճիշդ այս բառերով. «Իմաստութիւնը իր տունը շինեց, եօթը սիւներու վրայ կանգնեց գայն»:

Անձնաւորուած իմաստութիւնը Քրիստոս Ինքն է: Հին Կտակարանի գիրքերուն մէջ յաճախ կը կրկնուի, թէ «Աստուած ամէն ինչ իմաստութեամբ ստեղծեց» (Սղ 103.24). «Իր իմաստութեամբ երկինքը ստեղծեց» (Սղ 135.5). «Իմաստութեամբ երկրին հիմերը նետեց» (Առ 3.19): Իմաստութիւնն է, հետեւաբար, ստեղծագործ զօրութիւնը եւ ոյժը, իմաստութիւնն է արարիչը երեւելի եւ աներեւոյթ ամբողջ ստեղծագործութեան: Այս իմաստութիւնը պարզ մէկ յատկանիշը կամ ստորոգելին չէ Աստուծոյ, այլ իմաստութիւնը ինք Աստուծոյ հետ է եւ ինք Աստուած է. ինչպէս Յովհաննէս Աւետարանիչ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ կոչումին տեղ ԲԱՆ կամ ԽՕՍՔ անուանումը կ'առնէ եւ կ'ըսէ. «Աշխարհի ստեղծագործութենէն առաջ գոյութիւն ունէր Բանը (Խօսքը): Բանը (Խօսքը) Աստուծոյ հետ էր եւ Բանը (Խօսքը) Աստուած էր: Անկա սկիզբէն Աստուծոյ հետ էր: Անով էր որ Աստուած ամէն ինչ ստեղծեց. առանց անոր ո՛չ մէկ բան ստեղծեց» (Յհ 1.1-3): Պօղոս Առաքեալ պարզօրէն կը յայտարարէ, թէ Աստուծոյ փրկութեան կոչին անսացողներուն համար «Քրիստոս է Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը» (Ա. Կր 1.24): Արդարեւ, Հօր Աստուծոյ իմաստութիւնը կը ճանչցուի Քրիստոս, ինչպէս Ներսէս Շնորհալիի գողտրիկ աղօթքով մենք կը կրկնենք միշտ. «Իմաստութիւն Հօր Յիսուս»: Հետեւաբար, Քրիստոսի համար է որ Առակաց Գիրքը կ'ըսէ. «Իր տունը շինեց»:

Ի՞նչն է այդ տունը:

Աստուածորդին յաւիտենական Աստուածը եւ Հօր իմաստութիւնը Յիսուս, աշխարհ եկաւ հիմնական առաքելութեամբ մը, որ էր զԱստուած ճանչցնել մարդոց եւ Աստուծոյ Թագաւորութիւնը բերել աշխարհ, այսինքն մարդիկը ազատագրել չարին տիրապետութենէն եւ ենթարկել Աստուծոյ կամքին, Աստուծոյ տիրապետութեան, Աստուծոյ Թագաւորութեան հոգեղէն օրէնքներուն: Փրկութեան այս գործը Երկիրին վրայ տեւականացնելու համար, Քրիստոս նաեւ հիմերը դրաւ նոր տունի մը՝ ԻՐ տունին, որուն նիւթեղէն դռները Երկինքի յաւիտենականութեան վրայ կը բացուէին, որուն աշխարհասփիւռ երդիքին տակ անտուն մարդիկ Երկինքի հովանին կը գտնէին, որուն շնորհածոր աւագանին ջուրէն մարդիկ նոր կեանքով կը վերածնէին, որուն փրկարար ծէթին օծումով մարդիկ մեղքի խորախոց վերքերէն կը բուժուէին, որուն սեղանին հաղորդութեամբ մարդիկ երկնային ան-

մահարար հացին ճաշակը կ'ունենային, եւ որուն խաղաղ յարկին տակ իրենց յոգնաբեռն աչքերը փակելով՝ մարդիկ յաւիտենական կեանքի դուռը ափ կ'առնէին:

Եկեղեցին է Իմաստութեան շինած այդ տունը. Եկեղեցին ո՛չ որպէս շէնք, ո՛չ որպէս փայտ կամ քար, այլ Եկեղեցին որպէս Աստուծով բնակուած սիրտ ու միտք, Եկեղեցին որպէս կենդանի հաւատքի վկայութիւն, Եկեղեցին որպէս անծէ-անծ նետուած եւ սիրով զօղուած յոյսի կամար, Եկեղեցին որպէս Քրիստոսով իր աճումը եւ միութիւնը գտած նոր ժողովուրդ մը, մարդկային կենդանի քարերով հիստուած կառոյց ու շինութիւն Տիրոջմով եւ Աստուծոյ մէջ իր ներդաշնակ միասնութիւնը եւ ամբողջականութիւնը գտած, այնպէս ինչպէս շէնք մը իր ամբողջութիւնը կը գտնէ իր բաղկացուցիչ տարրերուն միասնութեամբը:

Մարդկային այդ կառոյցին աստուածային հեղինակն է իմաստութիւնը Քրիստոս, որ Իր տունը կամ Եկեղեցին կանգնեց ու հաստատեց եօթը սիւներու վրայ:

Ի՞նչ են կամ ի՞նչ կը ներկայացնեն եօթը սիւները: Արդեօք եօթը թիւը խորհրդանշակա՞ն իմաստ ունի միայն, թէ՞ ակնկալութիւն է եօթնեակ թիւով որոշակի բանի մը:

Իւրաքանչիւր մեկնիչ փորձած է գտնել իմաստ մը՝ այս եօթը սիւները բացատրող: Մեր Եկեղեցին անոր բացատրութիւն փորձած է տալ: Առաջին հասկացողութեամբ Եկեղեցւոյ սիւները առաքեալներն են, ինչպէս շարականը կը բացատրէ. «Առաքեալք Աստուծոյ, սիւնք հաւատոյ Կաթողիկէ Եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ»: Այստեղ, անշուշտ, եօթը թիւը իր նշանակութիւնը կը կորսնցնէ, կարելորութիւն կը տրուի առաքեալներու դերին, անոնց առաքելութեան, փրկագործութեան ծաւալումին մէջ անոնց ունեցած առանցքային կարելորութեան: Այս հասկացողութեամբ է նաեւ, որ մեր եկեղեցիներուն իւրաքանչիւր սիւնը առաքեալի մը անունով կը կոչուի եւ կ'օծուի, որովհետեւ ինչպէս շէնքին կառոյցը սիւներուն վրայ կը հանգչի, այնպէս ալ որեւէ եկեղեցիի հոգեւոր կառոյցը կը հիմնուի առաքեալներու քարոզութեան եւ անոնց հաւատքի ճշմարտութեան վրայ:

Երկրորդ հասկացողութեամբ Եկեղեցիին եօթը սիւները Ս. Հոգիի եօթնարփեան զօրութիւնը կամ շնորհքներն են (հմտ. Յտ 1.4 եւ 3.1): Մեր շարականներէն մէկը, Քրիստոսի 72 առաքեալներուն նուիրուած, համառօտակի մեկնաբանելով Առակաց Գիրքին յիշուած համարը, կ'ըսէ. «Իմաստութիւն Հօր Յիսուս, շինեցիր Քու տունդ՝ Եկեղեցին եւ անոր մէջ որպէս սիւն կանգնեցիր Ս. Հոգիի եօթնարփեան զօրութիւնը». իսկ ուրիշ շարական մը, Ս. Հոգիին ուղղուած, Քրիստո-

սի ակնարկելով կ'ըստ գեղեցկօրէն. «Տէրը Սէրէն քեզ Սէրդ առաքեց. Քեզմով Իր անդամները Իրեն կապեց, Իր շինած Եկեղեցին Քու եօթը սիւներուդ վրայ հաստատեց եւ անոր տնտես կարգեց առաքեալները, զորս Քու եօթնեակ շնորհքներովդ զարդարեց» (Հոգ. Բ. աւուր): Ս. Հոգիի շնորհքները բազմազան են անշուշտ, բայց եօթնեակ այս զօրութեան կամ շնորհքներու գաղափարը կու գայ Եսայի Մարգարէին (11.2), որ գալիք Մեսիային համար կը գուշակէ, թէ անոր վրայ պիտի հանգչի Աստուծոյ Հոգին՝ որպէս Իմաստութեան, Հանճարի, Խորհուրդի, Զօրութեան, Գիտութեան, Աստուածապաշտութեան եւ Աստուածավախութեան Հոգի:

Եօթը սիւներու մասին երկու այս հասկացողութիւններն ալ մօտաւորապէս նոյն եզրակացութեան կը տանին մեզ: Եթէ սիւները շէնքը իրենց վրայ պահող խարխիւներն են եւ չի կրնար կանգուն շէնքը ըլլալ առանց սիւներու, նոյնպէս է պարագան Քրիստոսի Եկեղեցիին համար: Սիւները առաքեալներուն քարոզած հաւատքի ճշմարտութիւնները նշանակեն, թէ՞ Ս. Հոգիին կենդանարար շնորհքները, երկու պարագային ալ անոնք է որ Եկեղեցւոյ շինուածքն իրենց վրայ խարխուլած կը պահեն, եւ չի կրնար հարագատ եւ կենդանի, ապրող Եկեղեցի մը ըլլալ՝ առանց հաւատքի հիմնական ճշմարտութիւններուն եւ առանց Ս. Հոգիի շնորհքներուն մշտական ներգործութեան: Անոնք է որ Եկեղեցին կանգուն կը պահեն եւ աւիշով գեղուն, իր գլուխին՝ Քրիստոսի հետ հաղորդութեամբ:

Ս. Էջմիածինի կաթողիկէ Մայր Տաճարի հիմնադրութեան յիշատակին առիթով Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակներս պէտք ունինք անպայմանօրէն խորհելու եւ քննելու, թէ մենք որպէս մասնիկ Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցիին եւ անդամներ Քրիստոսի Ս. Եկեղեցիին՝ որքանով կը մնանք հաւատարիմ մեր գլուխին՝ Քրիստոսի Աստուծոյ իմաստութեան, որ պատմութեան մէջ օր մը Հայաստան Աշխարհի իջաւ՝ այնտեղ եւս Իր տունը շինելու: Պէտք ունինք խորհելու եւ քննելու, թէ որքանով Քրիստոսի Եկեղեցին մեր մէջ կենդանի է ու կանգուն՝ հիմնուած հաւատքի եւ Ս. Հոգիի շնորհքներու սիւներուն վրայ, առանց որոնց Եկեղեցին Հայկական կը դառնայ իր բուն ինքնութենէն պարպուած գոյութիւն, կը դադրի ըլլալ «ծննդավայրը մեր հոգւոյն», կը դադրի ըլլալ «մեր պապերուն բարձր բերդը հաւատքին», կը դադրի «դէպի երկինք բարձրացող ճամբայ» մը ըլլալէ եւ ի վերջոյ կը դադրի «Հայ հոգիին եւ մարմնոյն գրահանդերձը փայլուն» ըլլալէ:

Միածնաէջ եւ Աստուածահիմն Հայ Եկեղեցիին հանդէպ մեր հաւատարմութիւնը այն ատեն միայն կ'ըլլայ ճշմարիտ եւ ամբողջական,

երբ քարէն ու շէնքէն անդին անիկա մեզի համար կը դառնայ Աստուծոյ հետ հանդիպման վայր, հաւատքի ներշնչարան, յոյսի վկայարան, սիրոյ վառարան, կամքի ջրղեղարան եւ, ի վերջոյ, կեանքի մատուցարան:

Այն ատեն միայն մենք ճշմարիտ հասկացողութեամբ կրնանք երգել շարականգիր հեղինակին հետ. «Եկայք շինեսցուք սուրբ գիտրանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան Աշխարհի»:



ՎԵՐԱՓՈԽՈՒԻԼ ՏԻՐԱՍՕՐ ՀԵՏ՝

ՏԻՐՈՋ ՀԵՏ ԸԼԼԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՅԱԻՏԵԱՆ

«Երբ հրամանը լսուի, հրեշտակապետը ազդարար է և Աստուծոյ փողը հնչէ, Տէրը Ինք Երկինքէն պիտի իջնէ, և նախ յարութիւն պիտի առնեն անոնք, որ Քրիստոսի հաւատացին և մեռան: Եւ ապա, մեզմէ անոնք որ այն ատեն դեռ ողջ պիտի ըլլան՝ անոնց հետ միասին ամպերու վրայ Երկինք պիտի յափշտակուին Տէրը դիմաւորելու համար. և այնուհետեւ Տիրոջ հետ միասին պիտի ըլլանք յաւիտեան» (Ա. Թս 4.16-17)

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին իր տարեկան տօներու շարքին մէջ սահմանած է հինգ «տաղաւարներ», այսինքն՝ հինգ գլխաւոր տօներ, որոնք եթէ մէկ կողմէ մեր Եկեղեցւոյ տօնակարգը առաւել կամ նուազ հինգ հաւասար մասերու կը բաժնեն, սակայն միւս կողմէ կը ներկայացնեն Եկեղեցւոյ հաւատալիքներու հիմնականագոյն ճշմարտութիւնները.

ա) Քրիստոսի Ա. Ծնունդը, որ մարդկութեան խորհուրդն է, յարացոյցը մեր մարդեղութեան, և փրկութեամբ մեր վերանորոգութիւնը և վերընծայումը Իր Հօր:

բ) Անոր հրաշափառ Ա. Յարութիւնը, որ աստուածաստեղծ մարմինին փառքին ցուցադրումն է և մեր մարմիններու յարութեան երջանիկ սպասումը:

գ) Քրիստոսի պաժառակերպութիւնը, որ Իր աստուածային փառքին հրաշալի յայտնութիւնն է և այդ անվախճան փառքին մասնակից դառնալու հրաւերը մեզի:

դ) Ա. Աստուածածինի վերափոխումը, որ Աստուծոյ անմիջական ներկայութեան ու հաղորդակցութեան մէջ ապրելու մարդուն կոչումն է և ժամանակներու վախճանին՝ Երկինք մեր փառաւոր յափշտակումին պատկերացումը:

ե) Ի վերջոյ, բարձրացումը Ա. Խաչին, որ Քրիստոսի խոնարհութեան նշանն է, աստուածային Թագաւորութեան հովուական մականը և քրիստոնէական մեր հաւատքին վերջնական յաղթանակը այս աշխարհի բոլոր իշխանութեանց և զօրութեանց վրայ:

Այսօր մեր Եկեղեցին կը տօնախմբէ տաղաւարներու այս շարքին չորրորդը, որ Ա. Աստուածածինի վերափոխման, այսինքն՝ մահէն ետք հրեշտակներու ձեռքով մարմինով Երկինք փոխադրութեան յիշատակն է: Յիշատակ մը, խորհրդալից, որ մեզի մտածել կու տայ քրիստոնէական մեր հաւատքի հիմնականագոյն մէկ ճշմարտութեան մասին, որ մարմիններու յարութիւնն է, մարմնաւորապէս Երկինք յափշտակութիւնը և մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի դիմաւորումն է, և այնուհետեւ մնայուն կերպով Աստուծոյ փառքին ու երանութեան վայելքը՝ Իր լոյս Արքայութեան մէջ:

Եւ այս պահուն կ'ուզենք մեր բոլորին հոգեւոր մօրը, մեր կեանքի և փրկութեան պտուղի ծառին, մեր անմահութեան Հացը մեզի պարգեւող անձրեւաբուխ երկինքին, մեր ճշմարիտ Մանանային ոսկեայ սափորին, մեր կենդանութեան Ջուրի աղբիւրին, մեր յաւերժական ուրախութեան ու երանութեան օրհնեալ Գինիի շքեղ սրուակին, Տիրական Մարմինին անձառելի մարդեղութեան յաւէտ պաշտելի մարմնարանին՝ Աստուածամօր վերափոխման տօնին կապուած մեր խորհրդածութիւնը ուղեգծել Ա. Պօղոս Առաքելի վերոյիշեալ խօսքերով, որոնք մտածման չորս երեսներ կը բանան մեր դիմաց.

1) ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ ՄԵՐ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Քրիստոնէական կրօնին յատկանշական մէկ երեսն է մարմիններու յարութեան հաւատալիքը, որ Հին թէ՛ Նոր Կտակարանները իբրեւ խոստում և աւետիս կ'ընծայեն մեզի: Եթէ Աստուած մարդը ստեղծեց հոգի ու մարմին, զանոնք երկուքն ալ սահմանեց անմահութեան, ուստի, հոգիին հետ մարմինը եւս կոչուած է յաւիտեանական կեանքը բաժնելու՝ Քրիստոսի երկրորդ գալուստով յարութիւն առնելէ ետք:

«Ես եմ յարութիւնը և կեանքը: Ան որ Ինձի կը հաւատայ, նոյնիսկ եթէ մեռնի՝ պիտի ապրի: Իսկ ան որ ողջ է և Ինձի կը հաւատայ՝ երբեք պիտի չմեռնի», ըսաւ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, Իր մտերիմ չորեքօրեայ մեռած բարեկամին՝ Ղազարոսի գերեզմանին դիմաց կանգնած (Յհ 11.25-26): Եւ երբ տեսաւ անոր քոյրերուն ու բարեկամներուն յուզումն ու լացը և կապուածութիւնը իրենց ֆիզիքական տեսողութենէն առնուած սիրելիին, Ինք եւս յուզուեցաւ մարդկային սիրտին ջերմ զգացումներուն դիմաց, և աստուածային Իր հեղինա-

կութեամբ մեղանչական բնութեան պարտադրած մահուան օրէնքը լուծելով՝ իր չորսօրեայ մահաքունէն դուրս կանչեց Ղազարոսը զայն ժամանակաւոր կերպով կրկին պարգեւելով աշխարհին, իր սիրելիներուն:

Ատով Քրիստոս իր Աստուածութիւնը կը յայտնէր իրեններուն եւ աշխարհին:

Ատով Քրիստոս իր բացարձակ հեղինակութիւնը կը յայտնէր կեանքին ու մահուան վրայ ըսելով. «Ես եմ յարութիւնը եւ կեանքը»:

Ատով Քրիստոս կը նախապատկերացնէր այն յարութիւնը, որ ապրող եւ Աստուծոյ հաւատացող իւրաքանչիւր մարդու բաժինը պիտի ըլլայ այս աշխարհի օրերը աւարտելէ ետք՝ իր երկրորդ գալուստով:

Նոյն այդ խոստումը Քրիստոս կու տար նաեւ իր պաշտելի մօրը՝ Ս. Կոյս Մարիամին: Ո՞ր մէկ որդին պիտի ուզէր ընդմիշտ բաժնուիլ իր ծնողէն: Ո՞ր մէկ որդին մահուան գիրկը պիտի թողուր իր ծնողը եթէ իշխանութիւն ունենար մահուան վրայ: Ո՞ր մէկ որդին պիտի չուզէր միշտ, յաւիտենապէս իր կողքին ունենալ իր ծնողը: Ղազարոսի ընդմէջէն Քրիստոս կարծէք իր մայրն էր որ կը տեսնէր գերեզմանի սառն առանձնութեան մէջ դրուած, եւ աստուածային սէրն ու գթութիւնը մարդկային արցունքներով իրենք զիրենք կ'արտայայտէին՝ իրենց ջերմութեամբ ջնջելու համար մահուան անէծքը եւ կեանքի բերկրանքը պարգեւելու համար մարդուն, ինչ որ առաջին հերթին բաժինը պիտի ըլլար Աստուածամօր:

2) ԿԵՐԱՓՈԽԵԱԼ ՄԱՐՄԻՆԸ՝ ՄԵՐ ՅԱՐՈՒՅԵԱԼ ՄԱՐՄԻՆԻՆ ՊԱՏԿԵՐԸ

Աստուածաստեղծ եւ կատարեալ մեր բնութիւնը մեղքի անէծքին ենթարկուելէ ետք ինքնաբերաբար ենթարկուեցաւ նաեւ ապականութեան, փճացման օրէնքին:

Մարդը, որ ստեղծուած էր անեղծ, դարձաւ եղծանելի:

Մարդը, որ ստեղծուած էր փառաւոր, դարձաւ անարգ:

Մարդը, որ ստեղծուած էր զօրաւոր, դարձաւ տկար:

Մարդը, որ ստեղծուած էր անմահ հոգեւոր մարմին, դարձաւ շնչաւոր ու մահկանացու:

Եւ սակայն Քրիստոս իր մարդեղութեամբ եկաւ օրէնքին լուծը իր վրայ առնելու եւ ջնջելու օրէնքին անողոք բերումը եղող մահը եւ ապականութիւնը: Ինք մահուան ենթարկուեցաւ՝ մեզի համար կոխկռտելու եւ բնաջնջելու համար յաւիտենական մահը, եւ մեզ վերստին սահմանելու համար կեանքին, որ Աստուած կամեցաւ մարդուն

համար:

Այդպէս ալ, մենք, որ մեր հաւատքի կեանքին մէջ կը փորձենք Քրիստոսի կատարեալ նմանութիւնը ըլլալ, մահուան մէջ եւս պիտի ըլլանք իր կատարեալ նմանութիւնը: Եւ ինչպէս Ինք յարութիւն առաւ, անեղծ ու փառաւորեալ, աստուածային զօրութեամբ յատկանշուած եւ անմահ մարմինով, նոյնպէս պիտի ըլլայ նաեւ մեր յարութիւնը, ինչպէս Պօղոս Առաքեալ կը բացատրէ. «Մարմինը հող կը դրուի եղծանելի վիճակով, եւ յարութիւն կ'առնէ անեղծ. հող կը դրուի անարգ, եւ յարութիւն կ'առնէ՝ փառաւոր. հող կը դրուի տկար, եւ յարութիւն կ'առնէ զօրաւոր. հող կը դրուի իբրեւ շնչաւոր մարմին, եւ յարութիւն կ'առնէ իբրեւ հոգեւոր մարմին» (Ա. Կր 15.42-44):

Այդպէս կամեցաւ Տէրը նաեւ իր ամենասուրբ Մօրը համար, որ ճիշդ իր մահուան նմանութեամբ միայն երեք օր մնաց գերեզմանի մէջ: Երեք օր ետք՝ իր սիրասուն մօրը ըղծակաթ սիրով լեցուն Որդին, աստուածային Սէրը, հրեշտակներու բազմութեամբ եւ քերովբէական կառքով՝ ամպերու վրայ զայն իր երկնաւոր թագաւորութիւնը փոխադրեց:

3) ԿԵՐԱՓՈԽՈՒՄԸ՝ ՄԵՐ ԵՐԿԻՆՔ ՅԱՓՇՏԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Քրիստոս անդադար ուսուցանեց մեզի, թէ իր երկրորդ գալուստը պիտի ըլլայ Հօրը փառքով եւ զօրութեամբ, բոլոր հրեշտակներով շրջապատուած (Մտ 24.30, 25.31: Հմտ. Մր 13.24-31: Ղկ 21.25-33): Եւ աւելցուց. «Երբ մեծածայն փողը հնչէ, Ան (Մարդու Որդին) իր հրեշտակները պիտի ղրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը» (Մտ 24.31):

Հաւատքի այս ճշմարտութիւնը մեզի կը պարզէ նաեւ Պօղոս Առաքեալ, թեսաղոնիկեցիներուն գրած իր առաջին նամակին մէջ, ուր կ'ըսէ. «Երբ հրամանը լսուի, հրեշտակապետը ազդարարէ եւ Աստուծոյ փողը հնչէ, Տէրը Ինք Երկինքէն պիտի իջնէ, եւ նախ յարութիւն պիտի առնեն անոնք, որ Քրիստոսի հաւատացին եւ մեռան: Եւ ապա, մեզմէ անոնք որ այն ատեն դեռ ողջ պիտի ըլլան անոնց հետ միասին ամպերու վրայ Երկինք պիտի յափշտակուին Տէրը դիմաւորելու համար. եւ այնուհետեւ Տիրոջ հետ միասին պիտի ըլլանք յաւիտեան» (Ա. Թս 4.16-17):

Ինչպէս երկրաւոր իր առաքելութեան աւարտին Քրիստոս Ինք Երկինք համբարձաւ՝ իր Հօրը աջ կողմը բազմելու եւ իր թագաւորութիւնը ստանձնելու համար, նոյնպէս ալ տնօրինեց այնպէս, որ բոլոր

Իրեն հաւատացողները իրենց վերակենդանացած մարմիններով Երկինք յափշտակուին, զինք Իր գալուստին մէջ դիմաւորելու եւ Իր շուրջը բոլորուելու համար, որպէսզի տառացիօրէն իրականանայ իրեններուն տուած Իր խոստումը. «Ով որ ուզէ ինծի ծառայել պէտք է Ինծի հետեւի, եւ Ինծի ծառայողը պիտի ըլլայ հոն ուր ես կը գտնուիմ» (Յհ 12.26):

Մեր Տէրն ու Փրկիչը Իր երկրաւոր ծնողին ամենասրբուհի Կոյսին համար կամեցաւ, որ անիկա Երկինք յափշտակութեան այս բացառիկ երանութիւնը ունենայ ոչ թէ բոլոր հողեղէններուս հետ, երկրորդ գալուստին օրը, որուն ժամանակը ծածուկ կը մնայ մարդկային մեր գիտութենէն, այլ ասիկա տեղի ունենայ անմիջապէս, առանց յապաղումի: Ատով Աստուածորդին թէ կը ցուցնէր այն գերագանց յարգանքը, սէրն ու գուրգուրանքը, որ կը տածէր իր ծնողին հանդէպ, եւ թէ, միաժամանակ, անով կ'ուզէր ընդգծել այն իրողութիւնը, թէ այդ վերացումը կամ Երկինք յափշտակութիւնը յատուկ չէր միայն Իրեն Աստուածորդիին, այլ յատուկ է եւ պիտի ըլլայ բոլորիս, Աստուծոյ որդեգրուած բոլոր արարածներուս, որ նոյն սիրոյն եւ անանց ուրախութեան կանչուած ենք:

4) ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ ԸՆԴՄԻՇՏ ՏԻՐՈՋ ՀԵՏ ԸԼԼԱԼՈՒ ՊԱՏԿԵՐԸ

Երկինք յափշտակութիւնը առանց նպատակի չէ ինչպէս նշուեցաւ արդէն: Պարզապէս գեղեցիկ եւ առինքնող գեղարուեստական պատկեր մը չէ անիկա: Առաքելալին բացատրութիւնը բնական իր լրացումը ունի նախադասութեան երկրորդ բաժինին մէջ, ուր կ'ըստի. «Եւ այնուհետեւ Տիրոջ հետ միասին պիտի ըլլանք յաւիտեան»:

Աշխարհին եւ մանաւանդ մարդ արարածին ստեղծման ամբողջ նպատակն է որ անգամ մը եւս կը շեշտուի այս արտայայտութեան մէջ:

Աստուած Իր սիրով ստեղծեց տիեզերքը եւ մեր աշխարհը, եւ Իր սիրով ստեղծեց մարդը, որպէսզի մարդը, հոգեղէն ստեղծագործութեան հետ միասին, տաճարանայ Աստուծոյ համար եւ Աստուած Իր բնակութիւնը հաստատէ նոյնինքն տաճարացեալ մարդուն մէջ, ատով իսկ իրագործելով Աստուած եւ մարդ միութիւնը, որուն կատարեալ օրինակը Իր անծով ընծայեց մեր Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս, որ կատարեալ Աստուած ըլլալով՝ ճշմարտապէս մարդացաւ եւ դարձաւ նաեւ կատարեալ Մարդ Իր անծին մէջ ցոյց տալով այդ սքանչելի միութիւնը տաճարացեալ մարդուն եւ անոր հետ կատարելապէս ինքզինք միաւորած եւ զայն Իր բնակութեամբ լեցնող

Աստուածութեան:

Երկրաւոր կեանքի մեր օրերը պէտք է ըլլան այն ժամանակաշրջանը, ուր մենք կարենանք մեր հողեղէն այս շինուածքին կաւը յանձնել Աստուծոյ Հոգիին խորհրդագգած բրուտագործութեան, որպէսզի անկէ Աստուծոյ պիտանի ընտիր անօթներ ծեւկերպէ:


Այս աշխարհի մեր օրերը պէտք է կարենանք օգտագործել այնպէս, որ մեր մէջ մթերուած մեղքի տիղմը վերափոխուի աստուածային անդաստանը պտղաւորող շնորհքի պարարտացուցիչին, որպէսզի մեր ներկայացուցած փոքրիկ ածուն Աստուծոյ կամեցած առաքինութեան տունկերով լեցուի եւ մեր այգին քաղցր խաղող մատակարարէ Աստուծոյ բաժակին:

Մեզի տրուած տնտեսութեան մեր ժամանակը պէտք է կարենանք տնտեսել այնպէս, որ օրէ օր մեր մարմինը հոգիանայ, մինչեւ հասնինք Քրիստոսի կատարեալ նմանութեան, եւ Երկինք յափշտակութենէն իսկ առաջ, այս աշխարհէն սկիզբ առնէ մեր բնակութիւնը մեր Տիրոջ եւ Աստուծոյն հետ յաւիտեանականին մէջ գտնուելու համար իր ամբողջական կատարումը: Հոն ուր մենք պիտի բոլորուինք մեր երկնաւոր Հօրը շուրջ, վայելելու համար Անոր ծնողական անվախճան սէրը: Հոն ուր պիտի բազմինք Անոր կողքին, ինչպէս առաքելները Վերնատան մէջ ապրելու համար մտերմութիւնը մեր Աստուծոյն, որ ըսաւ, թէ այլեւս ծառայ չի կոչեր մեզ, այլ բարեկամ (տես Յհ 15.14-15): Հոն ուր մեր սիրտին անսահման ուրախութիւնը եւ յորդուն երախտագիտութիւնը ճշմարիտ պաշտամունքի պիտի վերածուին մեր Տիրոջ հանդէպ՝ երկնաւոր եւ երկրաւոր բոլոր արարածներուն հետ ընդմիջտ փառաբանելու համար զԱյն Իր փառքին, Իր մեծութեան, Իր կարողութեան, բայց մանաւանդ մեզի ընծայած Իր սիրոյն, փրկութեան եւ անհունօրէն մեծ պատիւին համար:

Աստուածամայր Ս. Կոյսը իր վերափոխումով այս ճշմարտութիւնը եւս կը պատկերացնէ մեզի, որովհետեւ ամպերու վրայ Երկինք փոխադրուած, արդէն իսկ Ամենասուրբ Երրորդութեան հետ է, Աստուծոյ անմիջական սիրոյն ու մտերմութեան մէջ, եւ հրեղէն գունդերուն միախառնուած, անոնց հետ զԱստուած կը փառաբանէ տեւաբար իր անդադար աղօթքներուն մէջ մեզի համար զօրեղ բարեխօսութիւն ընծայելով եւ միջնորդութիւն կատարելով Տիրոջ մօտ:

Այսօր մեր խորին խնդրանքը եւ աղօթքն է, որ Իր ամենաերջանիկ Կոյս մօրը վերափոխման այս տօնին առիթով, Տէր Յիսուս Քրիստոս մեր հոգիներուն յարութիւն եւ նոր կեանք տայ, եւ հաւատքի զօրութեամբ լեցնէ մեզ, որպէսզի կարենանք ըստ այնմ կենցաղավարել այս աշխարհին մէջ, մինչեւ հասնի լուսաշող այն օրը, որ պիտի

բացուի մեր դիմաց, երբ Տիրամօր օրինակով մենք եւս արժանի ըլլանք լսելու Տիրոջ երանաւէտ ձայնը, որ կ'ըստ. «Եկո՛ւր եւ մասնակից եղի՛ր Տիրոջդ ուրախութեան» (Մտ 25.21), որպէսզի մենք եւս երջանկութիւնը ապրինք՝ երկնային յարկերը վերափոխուելու՝ անեղծութիւն հազած, իր տկարութենէն մերկացած եւ զօրութիւն զգեցած փառաւոր մարմինով, եւ մուտք գործենք անմահութեան սեմէն ներս դիմաւորելու համար Փառաց Թագաւորը եւ այնուհետեւ Իրեն հետ միասին ըլլալու համար յաւիտեանէ մինչեւ յաւիտեան: Ամէն:



ԱՍՏՈՒԾԱԾԻՆԸ՝ ԿԻՆ ԵՒ ՄԱՅՐ

«Իբրեւ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին Իւր, որ եղեւ ի կնոջէ» (Գղ 4.4)

Կրկին յիշատակն է Աստուածածինի Վերափոխման:

Ճիշդ ինչպէս Խաչի, Եկեղեցոյ եւ սրբոց յատուկ տօները, այնպէս ալ Աստուածածինին նուիրուած որեւէ տօնախմբութիւն ինքնանպատակ չէ: Բոլորն ալ առիթներ են պարգապէս, մեր մտածումին սլաքը դարձնելու դէպի Քրիստոսի տնօրինական կեանքը եւ անով մեզի պարգետուած ազատութիւնը, անով ընծայուած շնորհքի կեանքը, անով խոստացուած փրկութիւնը:

Աստուածածինի տօնին առիթով, մեր Եկեղեցոյ մեզի ընծեռած աստուածաշնչական ընթերցումներէն մէկն է Գաղատացոց թուղթի Դ. գլխուն մէկ հատուածը, ուր ի միջի այլոց կը կարդանք. «Երբ յարմար ժամանակը հասաւ, Աստուած աշխարհ ղրկեց Իր Որդին, որ եղեւ ի կնոջէ»: Մեր մտածումը կ'ուզենք կեդրոնացնել այս փոքրիկ նախադասութեան վրայ. ՈՐ ԵՂԵՒ Ի ԿՆՈՋԷ, զոր կարելի է թարգմանել կամ բառացի. «Կնոջմէ մը ծնաւ», եւ կամ աւելի ազատ թարգմանութեամբ ըսել. «Մարդկային մօրմէ մը ծնաւ»: Թէպէտ երկուքն ալ նոյն իմաստը կը բերեն, սակայն իւրաքանչիւր ձեւին մէջ տարբերքան մը կը թուի շեշտ ստանալ:

Տեսնենք զանոնք առանձին-առանձին:

ՈՐ ԿՆՈՋՄԷ ՄԸ ԾՆԱՒ: Հակառակ իր երեւութական պարզութեան, այս բացատրութիւնը մեծ խորք մը ունի:

Առաջին իսկ ակնարկով անոր մէջ կարելի է տեսնել մարդ էակին ներկայութիւնը, շեշտ մը, թէ Աստուծոյ Որդւոյն մարմնաւոր ծնունդը եղաւ կնոջմէ մը, որ իր մասնակցութիւնը բերած եղաւ Աստուծոյ յաւիտենական ծրագրին իրականացման: Բայց նոյնինքն Աստուծոյ

փրկագործական այդ ծրագիրին մէջ կնոջ բաժինը այդքանը չէր միայն. այլապէս մեքենական եւ կրաւորական պիտի ըլլար անոր բաժինը, պիտի չըլլար գործնական մասնակցութիւն եւ բնաւ կարելորութիւն ալ պիտի չստանար: Մինչ իրականութիւնը տարբեր է: Յատկանշական է որ Պողոս Առաքեալ չ'ըսեր. «Մարիամ ծնաւ», հակառակ անոր որ ատիկա աւելի պարզ ու դիւրին պիտի դարձնէր իր խօսքին իմացումը. այլ կը նախընտրէ ըսել «կնոջմէ մը ծնաւ», որովհետեւ հակառակ իր երեւութական անորոշութեան, այստեղ ԿԻՆ բառը անմիջական զուգորդութիւն մը կը ստեղծէ միտքերուն մէջ: Չէ՞ որ փրկագործութեան ծիրին մէջ է որ կը մտածենք, եւ փրկութեան մասին խօսքը ինքնին մտածել կու տայ նաեւ մարդուն անկումին մասին: Եւ անմիջապէս, այսպէս կոչուած «առաջին մարդ»-ուն անկման դրուագին մէջ կը տեսնենք այն միւս, առաջին կինը, զոր Եւա անունով սովոր ենք յիշելու:

Արդ, հետաքրքրական զուգակշիռ մը կը ստեղծուի յիշեալ երկու դրուագներուն մէջ առկայ երկու կին տիպարներուն միջեւ. մարդուն անկման պատմութեան մէջ Եւան, իսկ մարդուն փրկութեան պատմութեան մէջ Մարիամը:

Եւա Աստուծոյ ստեղծագործութեան մէջ յիշուած առաջին կինը, ուղղակի յարաբերութեան մէջ էր Աստուծոյ հետ եւ Անոր շնորհքներուն ամբողջութիւնը կը վայելէր: Բայց երբ չարին դրդումով Աստուծոյ պատուիրաններուն անհնազանդ գտնուեցաւ, կորսնցուց Աստուծոյ ներկայութեան ըլլալու եւ շնորհքներով պսակուած մնալու առանձնաշնորհեալ վիճակը, եւ իրեն հետ ինկաւ նաեւ աստուածաստեղծ առաջին մարդը՝ Ադամը, որ կորսնցուց կեանքի խոստումը: Ասոր դիմաց, ստեղծիչն Աստուած կամենալով մարդը փրկել իր անկեալ վիճակէն, վերստեղծել զայն Իր պատկերով եւ կրկին կեանքի խոստումը տալ անոր, Իր երկրորդ ստեղծագործութիւնը սկսաւ ապահովելով մարդուն կամաւոր եւ ամբողջական գործակցութիւնը: Այսպէս, նոր ստեղծագործութեան սկիզբը Աստուած դիմեց երկրորդ կնոջ մը, որ Իր պատուիրաններուն բացարձակ եւ անվերապահ հնազանդութիւն ցուցաբերեց եւ ծնաւ Հնազանդութեան Որդին՝ նոր Ադամը՝ զՔրիստոս:

Եւայի անհնազանդութեան տեղ՝ Մարիամ բացարձակ հնազանդութեան օրինակ եղաւ:

Եւայի պատճառած մեղքի անէծքին տեղ՝ Մարիամ պատճառ եղաւ օրհնաբեր արդարութեան:

Եւայով սկիզբ առած մարդկային ցաւատանջ կեանքի մը դատապարտութեան կնիքը լուծուեցաւ Մարիամով, որ երջանիկ կեանքի

մը մարմնացեալ խոստումը տուաւ մարդկութեան:

Եւայի ապրած մահուան երկունքին տեղ - որ մահուան երկունքը եղաւ նաեւ եւայածին ամբողջ մարդկութեան - Մարիամ բերաւ կեանքի երկունքը, այն երկունքը, որմէ ծնունդ պիտի առնէր նոր արարածը նոր մարդը:

Այս զուգահեռ համեմատութիւնը ունենալէ վերջ դիւրին է հասկնալ, թէ ինչու մեր Եկեղեցին եւ մեր Եկեղեցւոյ սրբազան հեղինակները Աստուածածինին կ'ըսեն. «Օրհնաբանեալ Տիրուհի. Եւայի երկունքին լուծիչ եւ կեանքի մայր», «Անէծքի վերացուցիչ եւ մեղքերու քաւիչ Սուրբ Կոյս», «Քեզմով լուծուեցաւ դատապարտութեան կնիքը, եւ քեզմով կանգնեցաւ մեղքերով գլորած մարդը», «Դուն մարդկային սեռի անթառամ ծաղիկը եւ մեր բնութեան նախածնողին օրհնութեան շառաւիղը» եւ կամ «Դրախտի բոյրը մեզի կրկին բերող գերահրաշ ծաղիկը»:

Նոյն պատկերները եթէ ուզենք աւելի բանալ Մարիամի դերը բացայայտելու համար, կրնանք ըսել, թէ մարդը մեղքին վարակով Աստուծոյ ընտրութենէն հեռացած ու խորթացած վայրի տունկ մը դարձեր էր Աստուծոյ այգիին մէջ, եւ Մարիամ եղաւ այն ընտանի եւ ազնիւ պատուաստը, որ մարդկութեան հին արմատին եւ հին բունին վրայ նոր ճիւղ արծակեց եւ տուաւ անմահութեան պտուղը՝ Քրիստոս եւ իր վրայ պատուաստեց նաեւ զՔրիստոս ճաշակող համայն մարդկութիւնը:

Եթէ երկրորդ ծելով կարդանք Պողոսի մտածումը, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՕՐՄԷ ՄԸ ԾՆԱԼ, այս անգամ կը մղուինք տարբեր ուղղութեամբ մտածելու: Այստեղ անպայմանօրէն մեր ուշադրութիւնը կը գրաւէ պարզ այս հաստատումին տուն տուող այն բացառիկ երեւոյթը, ուր Աստուած եւ մարդ ոչ միայն կը հանդիպին, ոչ միայն կը յարաբերին, ոչ միայն ուխտով կը կապուին, այլ մանաւանդ կը միանան: Աստուածօրդին, տիեզերքի արարիչ Աստուած Բանը կը մարմնանայ, որպէս մարդ կը ծնի Սուրբ Կոյս Մարիամէն՝ ամէն բանէ առաջ կարծէք անգամ մը եւս հաստատելու համար մարդկային մայրութեան աստուածային սրբազան հանգամանքը:

Արդարեւ, Աստուածօրդին պարզապէս մարդկային մարմին մը չհագաւ մարդոց պէս ըլլալու եւ մարդոց մէջ բնակելու համար, այլ ինչպէս Իր կեանքով մեր կեանքը օրհնեց՝ անոր աստուածապարգեւ հանգամանքը շեշտելով, նոյնպէս ուզեց իր ծնունդով մեր ծնունդը օրհնել եւ Իր Կոյս ծնողին մայրութեամբ մարդկային մայրութիւնը օրհնել նոյն այն օրհնութեամբ որով օրհնած էր նախածնողները իրենց

մեղանչում են և անկում են առաջ ըսելով. «Աձեցէ ք եւ բազմացէ ք» (Ծն 1.28): Քրիստոս ուզեց իր նոր ստեղծագործութիւնն սկսիլ եւ իր նոր արարածները բազմացնել դարձեալ մարդկային ծնունդներով, պարզապէս շառաւիղը օրհնելով, աղբիւրը սրբելով, ճիւղը պատուաստելով: Եւ այդ նոր ստեղծագործութեան առաջին մայրը, անոր օրհնեալ առաջին շառաւիղը, սրբուած առաջին աղբիւրը, քաղցրաբեր առաջին ճիւղը եղաւ Աստուածամայրը Մարիամ:

Երկրորդ, Աստուածածինին մայրութիւնը յատուկ շեշտ մը կը դնէ Քրիստոսի մարդեղութեան իրողութեան վրայ: Քրիստոս ուզեց մարդկային կեանքի բոլոր պայմաններն ապրիլ իր անձը նախօրինակ դարձնելու համար նորոգուած մարդկութեան, նոր արարածներուն: Եւ մարդկային իր կեանքին մէջ Քրիստոս առաջին ու բարձրագոյն տեղը տուաւ իր ծնողին, իր մօրը՝ ծնողական յարգանքի աստուածատուր հին պատուիրանը իր անձին օրինակով նոր պատգամի ու վարքագիծի վերածելու համար իր Թագաւորութեան կանչուածներուն, որովհետեւ հարազատ ծնողը այս աշխարհի վրայ պատկերն է Աստուծոյ եւ Անոր նախախնամութեան: Աստուած մեզ հրաւիրած է իր Թագաւորութեան մաս կազմելու, եւ գիտենք, թէ միակ նախապայմանն է անսալ իր կոչին, հաւատքով ընդառաջել եւ հնազանդիլ իր պատուէրներուն այն բացարձակ հնազանդութեամբ, զոր Քրիստոս ցուցաբերեց երկրաւոր իր կեանքի ամբողջ տեսողութեան ընթացքին: Արդ, Աստուծոյ հանդէպ այդ հնազանդութեան կը վարժուինք եւ անոր մէջ կը կրթուինք միայն այն ատեն, երբ մեր կեանքին մէջ վարժուած ենք յարգելու մեր ծնողները եւ հնազանդելու անոնց:

Յստակ է, թէ այս հասկացողութիւնը եւ գիտակցութիւնը որոշակի եւ շատ պատասխանատու պարտք մը կը դնեն նոյնինքն ծնողներուն վրայ: Ծնողներ առհասարակ իրենց պարտականութեան մարդկային կողմը միայն կը մտածեն եւ կը փորձեն կատարել, մոռնալով այն միւս աստուածային կողմը, որ շատ աւելի կարեւոր է: Ծնողներ, մանաւանդ այսօր, տրամադիր են խորհելու, թէ իրենց պարտականութիւնը կատարած կ'ըլլան, երբ զաւակ մը կամ երկուք ունենան, եթէ քիչ մը սէր ու գորով շռայլեն անոնց, իրենց զգացական խնամքը բազմապատկեն, եթէ անոնց բարձր ուսում ու զարգացում կարենան տալ եւ երբեմն ալ նիւթապէս անոնց գործը կամ այսպէս կոչուած «ապագան» ապահովեն: Այն ինչ որ կորսուելու վտանգին ենթակայ է ծնողներու ամբողջական հովանին է, իրենց բարոյական ազդեցութիւնը զաւակներուն վրայ, յստակ ուղղութեան մը մէջ անոնց դաստիարակութիւնը, ամբողջական հնազանդութեան ու կարգապահութեան ոգիի մը մէջ անոնց աճումը եւ, ի վերջոյ, դրական եւ օգտա-

ւէտ գործերով անոնց պտղաւորումը:

Ծնող մը իր զաւակին կամ զաւակներուն համար Աստուծոյ ներկայացուցիչն է: Ան իր զաւակը պէտք է դաստիարակէ այնպէս, որ ունէ քրիստոնեայ զաւակ երբ ընտանեկան սեփական յարկէն անցնի Եկեղեցւոյ ընտանիքը, այլ խօսքով՝ երբ երկրաւոր հօրենական յարկէն ետք քայլ նետէ երկնաւոր Հօր տան մէջ, ինքզինքը զգայ ընտանի ու հարազատ, պատրաստ հնազանդելու Աստուծոյ ծայնին:

Այսպիսի ծնող մը եղաւ Մարիամ Քրիստոսի մայրը իր զաւակին համար: Բայց մարմնացեալ մեր Տէրը ուզեց նաեւ, որ Մարիամ ըլլայ նաեւ մայրը իր Մարմինին Եկեղեցիին, մայր ըլլայ բոլոր հաւատացեալներուն, եւ որդիաբար իրեն դիմողներուն շռայլէ իր սէրը, գորովը, խնամքն ու մայրական հովանին:

Այսօր, երբ մեր Եկեղեցին կ'ուզէ որ դարձեալ Աստուածածինին յիշատակով լեցուինք, մեր միտքը գրաւող մտածումը պէտք է ըլլայ Աստուածածինին մայրութենէն իսկ բխող սա եզրակացութիւնը.

Հողեղէն կին մըն էր Սուրբ Կոյսը մեզի պէս. Աստուծոյ շնորհքներովը լեցուն էւայի պէս: Բայց մինչ Եւա նախօրինակն եղաւ անոնց, որոնք աւելի իրենք գիրենք ուզեցին եւ կ'ուզեն դեռ լսել, Մարիամ Աստուծոյ ծայնը լսեց եւ հնազանդութեամբ ենթարկուեցաւ Անոր կամքին: Եւ մինչ Եւա իր անհնազանդութեամբ պարպուեցաւ Աստուծոյ Հոգիէն, Մարիամ հնազանդեցաւ եւ տաճար դարձաւ Բանին Աստուծոյ:

Մեր Եկեղեցւոյ իսկ կոչն է, որ մենք այսօր Աստուածամայրը Մայր դաւանինք մեզի, եւ անոր օրինակով ու անոր հետ կարենանք Աստուծոյ հնազանդութեան խոնարհիլ՝ մեր մէջ բնակութիւն տալու համար Աստուծոյ: Եւ հոն ուր Աստուած ներկայ է՝ հոն անպայմանօրէն կայ հոգեւոր պտղաբերում, այսինքն՝ հոգեւոր ծնողութիւն եւ հոգեւոր ծնունդներ, մտածութեամբ, բանիւ եւ գործով:

ԹԱՐԳՄԱՆԶԱՑ

«Աստուծոյ եկեղեցիներուն մէջ մենք կը պարծենանք ծեզմով, այն համբերութեան եւ հաւատքին համար, որ դուք ցուցաբերեցիք ձեր կրած բոլոր հալածանքներուն եւ նեղութիւններուն մէջ» (Բ. Թս 1.4)

Բուռ մը մարդիկ: Պատմութեան դիմագիծը փոխելու կոչուած մարդիկ:

405 թուականն էր: Դէպի Վաղարշապատ մայրաքաղաք տանող ճամբուն վրայ, Ռահ գետի ափին, խռնուեր էր ժողովուրդը իր Սահակ Հայրապետով ու հոգեւորականաց դասով, իր Վռամշապուհ թագաւորով եւ արքունիքով միասին: Կը դիմաւորէին հրաշքն իրենց հետ բերող մեծ Սուրբը՝ Մեսրոպ Մաշտոցը՝ իր պանծալի աշակերտներով: Պանծալի էր դիմաւորումը ինք, արժանավայել, եւ յաւէտ յիշատակելի:

405 թուականին հայոց պատմութիւնը յեղաշրջուեցաւ յանկարծօրէն: Պատերազմ չմղեցինք, աշխարհակալութիւն չհաստատեցինք: Բայց յետագայ բոլոր դարերու պատերազմները շահելու աննիւթեղէն գաղտնի գէնքին տիրացանք: Աշխարհացրիւ մեր ժողովուրդին տեսականութիւնը ապահովեցինք:

Իրօք հրաշալի էր գէնքը, աննուաճելի գէնքը, որ միայն երեսունվեց բերան ունէր իր մէջ, բայց որոնք կրնային բացուիլ աշխարհի բոլոր լեզուներուն եւ մշակոյթներուն վրայ՝ զանոնք հիւրընկալելու եւ անոնց հետ հաւասարէ-հաւասար գրոյցի նստելու համար:

405: Յաղթանակի թուական, որ մեր օրացոյցները կը նշեն իբրեւ «Տօն ազգային եւ եկեղեցական»:

Այդ յաղթանակին կերտիչներն են մեր թարգմանիչները, Ս. Մեսրոպ Մաշտոց, Ս. Սահակ Պարթեւ Հայրապետ, Յովսէփ Հողոցմեցի, Եղիշէ Վարդապետ, Եզնիկ Կողբացի Եպիսկոպոս, Յովսէփ Պաղնացի, Յովհան Եկեղեցացի, Ղեւոնդ Երէց եւ Կորին Սքանչելի վարդապետներ, Մովսէս Քերթողահայր Եպիսկոպոս, Դաւիթ Անյաղթ

Փիլիսոփայ Վարդապետ եւ դեռ շատ ուրիշներ:

Մեր մշտական հերոսներն են մեր թարգմանիչները, որոնց մէջ կը տեսնենք.

1) Ճճմարիտ աշակերտները Աստուծոյ Խօսքին

Աստուծոյ մարդ եղան անոնք՝ նախքան ժողովուրդի մարդ ըլլալը:

Ո՛չ միայն սերտեցին ու սորվեցան, այլ իւրացուցին եւ ապրեցան Աստուծոյ Խօսքը՝ Աստուածաշունչ Մատեանը: Չայն իւրացուցին այնպէս, որ անոր տողերուն ընդմէջէն Աստուած հայերէն սկսաւ խօսիլ իրենց, եւ իրենք ալ Հայրաբարբառ այդ կենդանացուցիչ ծայնը ուզեցին նաեւ հայերէնով արծանացած տեսնել մագաղաթի վրայ նախքան իրենց ազգակիցներուն սիրտի տախտակին վրայ արծանագրելը: Եւ այդպէս ալ դարձան հաւատքի լոյսին հրավառ ջահերը, Աստուծոյ լոյսին բարձր աշտանակները, ճրագարանները:

2) Ճճմարիտ ուսուցիչները

Լոյսը իր մէջ առնողը չի՛ կրնար զայն իր մէջ խաւարեցնել, ոչ ալ իր շրջապատի խաւարին դիմաց կրնայ անտարբեր մնալ: Ճճմարտութիւնը ճանչցողը եւ ընդունողը չի կրնար անոր ծայնը իր մէջ լռեցնել, ոչ ալ կրնայ ստութիւնը հանդուրժել: Աստուածային իմաստութեան ակէն ըմպողը չի կրնար զայն իր մէջ փակել եւ ամլացնել ու թաղել, ոչ ալ կրնայ իմաստութեան ծարաւ հոգիներուն ի տես՝ չաղբիւրանալ եւ չբաշխել առատօրէն:

Աստուծոյ Խօսքին Ճճմարիտ աշակերտները եղան նաեւ Ճճմարիտ ուսուցիչները: Անլոյս էր Հայաստան Աշխարհը. միտքի, հոգիի եւ սիրտի լոյս պէտք էր պարգեւել: Եւ Ճճմարիտ գիտութիւնը ճանչցած սքանչելի մեր հայրերը այդ գիտութեամբ պայծառակերպ նորոգեցին մեր երկիրը՝ զայն հայախօս ու հայագիր դպրոցներով ողողելով, եւ ուսման ատակ բոլոր մեր գաւակները սնուցանելով «Բան»ին քաղցրութեամբ, արբեցնելով լոյսին գինիով:

3) Ճճմարիտ յեղափոխականները

Յեղափոխականը սոսկ գաղափարի մարդը չէ, այլ նաեւ՝ տեսիլքի մարդը, նախածեռնութեան մարդը, խիզախ ծրագրումներու մարդը, գործի մարդը:

Մեր թարգմանիչ վարդապետները խաւարին մէջ լոյսը տեսնողներ չեղան միայն, այլ նաեւ եղան լոյսով սնանող եւ լոյսին տարածման ի խնդիր ամէն զոհողութիւն յանձն առնող մարդիկ, ապագային

մասին խորհող, ապագան իրենց միտքին մէջ պայծառօրէն գծագրող, եւ այդ ուղղութեամբ համապատասխան ծրագրում կատարող մարդիկ, որոնք որեւէ արգելքի դիմաց կանգ չառին՝ իրագործելու համար իրենց լուսեղէն տեսիլքը:

Ատով իսկ՝ յեղափոխեցին հայ կեանքը, յեղափոխեցին մեր պատմութիւնը:

Զինեցին հայ հոգին, վառեցին հայուն ազգային գիտակցութիւնը, իր արժէքներուն հպարտութիւնը տուին անոր, եւ յաւերժութեան պայքարի ու յաղթանակի վստահութիւնը ներարկեցին անոր արեան մէջ:

4) Ընդարիտ նորարարները

Թարգմանչաց սերունդով եւ աշխատանքով՝ Հայոց Պատմութեան մէջ նոր դարաշրջան բացուեցաւ: Անոնք մեր կեանքը եւ պատմութիւնը նորոգեցին, բաժանման որոշակի լուսագիծով մը սահմանազատելով հինն ու նորը, անգիր գրականութեան եւ նորագիր դպրութեան ժամանակաշրջանները, նախա-Մեսրոպեանն ու Մեսրոպեանը: Ընդարիտ նորարարներ եղան անոնք, որոնք իւրայատուկ եւ անանց դրոշմ, գոյն ու բոյր տուին իրենց դարուն եւ յետագայ բոլոր դարերուն: Անոնք մեր լեզուն արծանացնելով եւ գիրի ճամբով բիրեղացնելով՝ պայքարի գէնք ու միաւորիչ հզօր շաղախ պարզեցին հայութեան:

Թարգմանչաց խիզախումը եւ նուաճումը կը մնան յաւերժ ուսանելի եւ օրինակելի, եւ անոնց յիշատակը՝ յաւիտ օրհնելի:

Այսօր աշակերտութիւնն ու ուսուցչութիւնը կորսնցուցեր են իրենց որակն ու բարձրութիւնը, յեղափոխական անուանումը շահաբեր դիմակ դարձեր է մակաբոյծ բախտախնդրութեան, նորարարութիւնը կը շփոթուի աճապարարութեան եւ անճարակ ներկարարութեան հետ:

Մինչդեռ՝ հայ կեանքը պէտք ունի ճշմարիտ նորութեան, եւ ատոր համար պէտք ունի ճշմարիտ յեղափոխականների: Պէտք ունի Լոյսին ու Ընդարտութեան աշակերտած եւ հաւատացած նոր ուսուցիչներու, նոր թարգմանիչներու, որոնք կարենան ընդարմացած հայ միտքը վերստին արթնցնել եւ լուսաւորել, որոնք կարենան ժամանակի ոգին ճշմարտապէս, ազգախօս լեզուով թարգմանել ամէնօրեայ մեր կեանքին մէջ, այդ կեանքը նորովի յեղաշրջելու, յեղափոխելու, նոր ժամանակին համապատասխան նոր՝ բայց ճշմարիտ դիմագիծ մը տալու անոր, եւ շաղախիչ նոր ու հզօր հրաշքով մը վերստին միաւորելու հայութեան կոտորակեալ հատուածները:

ԶԱՍՏՈՒԾ ՏԵՍՆԵԼ

«Երանի՛ այնօցիկ, որք սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն» (Մտ 5.8)

Գերագոյն բաղձանքը, զոր իւրաքանչիւր հաւատացող եւ մանաւանդ խորունկ հաւատացող անհատ կ'ունենայ - տիրանալ սիրտի սրբութեան եւ արժանանալ Աստուծոյ տեսութեան: Եւ Քրիստոս երանի կը կարդայ անոնց, որոնք այդ շնորհքը ընդունելու պատրաստ են, որովհետեւ բոլորին տրուած չէ անիկա, այլ անոնց, որոնք աստուածային սիրով ջերմացուցած իրենց հոգին, կը վանեն իրենց սիրտերէն ամէն չար մտածում, ամէն թշնամանք, ամէն բիծ, եւ սիրտի կատարեալ մաքրութեամբ, անկեղծ հաւատքով ու աղօթքով կը նուիրուին Աստուծոյ:

«Սուրբ սիրտ» արտայայտութեամբ կը հասկնանք մարդկային սիրտի, հոգիի եւ միտքի այն մաքրագոյն եւ պարզագոյն վիճակը, որ վիճակն է երկրաւոր բիծերէ եւ ախտերէ զերծ մարդուն, առաջին մարդուն, որ աստուածային արարչագործ մատներուն դրոշմը կը կրէր իր վրայ, իսկ իր ներսիդին՝ անապակ աղբիւրներու վճիտ հայելին, որուն մէջ կը ցոլանար Աստուծոյ պատկերը, աստուածային նմանութիւնը:

Ըստ Արեւելեան Եկեղեցիներու աստուածաբանական մտածողութեան, մարդը իր անկումին հետեւանքով չկորսնցուց կամ իր մէջ չջնջեց պատկերը աստուածային այդ նմանութեան: Թէեւ մեղքին պատճառով այս պատկերը աղօտացաւ հետզհետէ եւ ծածկուեցաւ, սակայն իրեն մնացին մաքրուելու, առաջին վիճակին դառնալու հնարաւորութիւնը եւ Աստուծոյ տեսութիւնը վայելելու շնորհքը: Եւ Քրիստոս Իր քարոզութեանց ընթացքին ջանաց մարդոց գիտակցութիւնը արթնցնել՝ ցոյց տալով այդ հնարաւորութիւնները որպէս փրկութեան միջոց եւ առիթ:

«Երանի՛ անոնց, որոնք սիրտով սուրբ են, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն»:

Սակայն մարդ էակը ինչպէ՞ս կրնայ զԱստուած տեսնել, եւ ի՞նչ է արդեօք զԱստուած տեսնելը:

Գիտենք բոլորս, որ Աստուած անքննելի է եւ անիմանալի՝ Իր էութեանը մէջ եւ անտեսանելի մարդկային մեր աչքերուն համար: Քրիստոս յստակօրէն ըսաւ. «Ո՛չ որ Հայրը տեսած է, բացի Անկէ որ Աստուծմէ է» (Յհ 6.46), ինչ որ Յովհաննէս Առաքեալ կը կրկնէ իր առաջին թուղթին մէջ (4.12): Բայց «ինչ որ անհնարին է մարդոց համար, հնարաւոր է Աստուծոյ համար» (Ղկ 15.27): Ինչ որ պարզ միտքով եւ բանականութեան լոյսով կը մնայ անտեսանելի եւ անիմանալի աստուածային լոյսով եւ հաւատքով կը դառնայ տեսանելի եւ իմանալի: Ինչպէս արեւը միայն ինքն իր լոյսովը կը տեսնուի, այնպէս ալ անիմանալին Աստուած Իր տուած հաւատոյ շնորհքներուն լոյսովը կը տեսնուի («Գիրք Հարցմանց»): Ինքը՝ Քրիստոս, Իր բոլոր հետեւորդներուն ըսաւ. «Ով որ կ'ընդունի Իմ պատուիրաններս եւ կը գործադրէ զանոնք, ան է որ զԻս կը սիրէ: Եւ Հայրս պիտի սիրէ զԻս սիրողը: Ես ալ պիտի սիրեմ զայն եւ Ինքզինքս յայտնեմ անոր» (Յհ 14.21): Իսկ ան որ կը տեսնէ զՔրիստոս տեսած կ'ըլլայ Հայրը, ինչպէս Ինքն իսկ ըսաւ. «Ով որ զԻս տեսաւ՝ Հայրը տեսաւ» (Յհ 14.9):

Աստուածային այս կամաւոր յայտնութիւնը մեր մարմնաւոր աչքերուն համար չէ սակայն, այլ մեր միտքին եւ հոգիին աչքերուն, որովհետեւ «Հոգի է Աստուած» (Յհ 4.24): Այս մտածումը գեղեցիկ կերպով բանածեւած է Ե. դարու մեր մատենագիրներէն Եղիշէ Վարդապետ, որ կ'ըսէ. «Աստուած նիւթական ձեւով չի պատկերանար եւ աչքին չի տեսնուիր: ... Բայց եթէ Ինքը կամենայ՝ Իր արժանաւորներուն միտքին իմանալի կ'ըլլայ, թէ եւ աչքին չ'երեւիր: Կ'երեւի այն միտքերուն, որոնք ոչ թէ երկրաւոր ճշմարտութեանց, այլ Աստուծոյ հաւատացած են ճշմարիտ կերպով»:

Մտովի եւ իմացական աչքերով այս տեսնելը, սակայն, զգալ չի նշանակեր: Մեծ է տարբերութիւնը զգալուն եւ տեսնելուն միջեւ: Ամէն հաւատացող անհատ, որքան ալ մեղաւոր ըլլայ ան եւ քրիստոնէական իր պարտականութեանց մէջ տկար՝ կը զգայ անպայման զԱստուած. կը զգայ Անոր մեծութիւնը, Անոր սրբութիւնը, Անոր ահաւորութիւնը եւ Անոր քաղցրութիւնը, որովհետեւ որքան խորունկ ըլլայ մեղքին պատճառով անկումին գիտակցութիւնը մարդուն մէջ, այնքան աւելի զօրաւոր կ'ըլլայ Աստուծոյ փրկարար Աջով դէպի վեր բարձրանալու տենչանքը: Սակայն այս զգայութիւնը կը մնայ անորոշ որքան ատեն որ մեղքի քօղը կը ծածկէ իր հաւատքի աչքերէն՝ իր մէջ

ծածկուած Աստուծոյ պատկերը, մինչդեռ այն ընտրեալները, որոնք գերագոյն նուիրումով մը իրենց անձերը կ'ընծայեն որպէս կենդանի պատարագ, որոնք պապական ունին աստուածային ճշմարտութեան եւ աստուածային լուսադիւրին հասնիլ կը տենչան, ինչպէս եղջերու մը աղբիւրի ջուրին, եւ որոնք իրենց միտքն ու հոգին կը մաքրեն աստուածային շնորհքին մաքրիչ կրակովը, անոնք իրենց միտքի աչքերով իրենց իսկ մէջ կը վերագտնեն Աստուծոյ կենդանի պատկերը, աստուածային տեսիլքը:

Մենք, քրիստոնէայ հաւատացեալներս, որ այսօր Քրիստոսի այս երանին կը լսենք ու անոր մասին կը մտածենք, ինչպէ՞ս կրնանք իմացական մեր միտքը բարձրացնել դէպի անիմանալին Աստուած եւ հասնիլ զԱստուած տեսնելու շնորհքին: Այս հարցումին պատասխանը կու տայ Գրիգոր Տաթեւացի Վարդապետը իր Հարցմանց Գիրքին մէջ ըսելով. «Չորս կերպերով. նախ մեղքերէ սրբուելով, երկրորդ՝ զգայութիւններէ հեռանալով, երրորդ՝ իմացումի նրբութեամբ, չորրորդ՝ հաւատքի պայծառութեամբ»:

ա) «Մեղքերէն սրբուիլը» անհրաժեշտ պայման մըն է իմացական մեր աչքերուն յստակ տեսողութիւնը ապահովելու եւ զանոնք բաց պահելու համար: Ինչպէս արեւուն ճառագայթները դիտել ուզող մարդը իր մարմնաւոր աչքերուն աղտը եւ պղտորութիւնը պէտք է մաքրէ լոյսն իր յստակութեամբ տեսնելու համար, այնպէս ալ Լոյսի Արարիչը եւ Առաջին Լոյսը տեսնել ուզողը պէտք է իր միտքն ու խորհուրդները սրբէ՝ անարգել կերպով կարենալ նայելու համար Անոր յստակութեան եւ պայծառութեան:

բ) Երկրորդ պայմանն է «հեռանալ զգայութիւններէ». կտրուիլ շրջապատէն, մոռնալ զգալի այս աշխարհը՝ բացուելու համար իմանալի աշխարհին: Միտքի ամբողջական այս վերացումն էր, որուն մասին խօսեցաւ Յիսուս աղօթքին առիթով (Մտ 6.6), որովհետեւ եթէ մարդը չիզէ բոլոր այն կապանքները, որոնք զինք կը կապեն նիւթեղէն այս աշխարհին, չի կրնար հոգեկան յափշտակութեամբ հաղորդակցութեան մէջ ըլլալ Աստուծոյ հոգեղէն բնութեան հետ:


գ) Որպէս երրորդ պայման՝ հարկ է ունենալ «իմացումի նրբութիւն»: Այն միտքը, որ միայն թանձրականին ու նիւթեղէնին ճանաչողութիւնն ունի՝ չի կրնար թափանցել հոգեպէս զգալիին եւ մտաւոր վերացմամբ իմանալիին, մինչդեռ հոգեւոր փորձառութեամբ մարդը կրնայ ունենալ անհասանելիին հասնելու այդ նուրբ իմացողութիւնը:

դ) Վերջապէս, հարկ է ունենալ «հաւատքի պայծառութիւն»: Հաւատք առանց որուն միւս պայմանները կը մերկանան իրենց իմաստէն, որովհետեւ ան է մեկնակէտը եւ անով հասկնալի կը դառ-

նան մեր արարքները որպէս հաւատոյ արարքներ: Ս. Գրիգոր Լուսաւորիչ իր Յաճախապատում ճառերուն մէջ կ'ըսէ. «Հաւատքը կը հասցնէ Աստուծոյ փառքին ճանաչողութեան»: Ով որ ունի այս ամուր եւ պայծառ հաւատքը՝ անիկա անպայման կրնայ արժանանալ տեսնելու Անարուեստ Լոյսը:

Եւ կրկին, «Երանի՛ անոնց, որոնք սուրբ են սիրտով, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն»:

Երանի՛ է մեզի եթէ կարենանք հասնիլ սիրտի բիրեղային այս մաքրութեան եւ պայծառութեան եւ ունենալ պարզ ու անմեղ հաւատք, որովհետեւ այն ատեն Աստուած Իր մեծ ողորմութեամբ կը բանայ մեր իմանալի աչքերը՝ տեսնելու եւ ճանչնալու համար Իր յաւիտենական փառքը:



ՍԷՐԸ

«Գլուխ պատուիրանին սէր է, ի սուրբ սրտէ եւ ի մտաց բարեաց եւ յանկեղծաւոր հաւատոց» (Ա. Տմ 1.5)

Այս գեղեցիկ մտածումը առնուած է Պօղոս Առաքեալի Տիմոթէոսին գրած առաջին նամակին առաջին գլուխէն: Այնտեղ առաքեալը կը յիշէ, թէ Եփեսոսի եկեղեցիին մէջ կարգ մը մարդիկ փոխանակ աստուածապաշտութեան իսկական հասկացողութեամբ առաջնորդուելով հաւատքի եւ սիրոյ կեանք մը ապրելու, հպարտ փառասիրութենէ տարուած՝ քմահաճ եւ խորթ, օտարոտի բաներ կ'ուսուցանեն եւ վէճեր ու խռովութիւն կը ստեղծեն: Ահա թէ ինչո՞ւ առաքեալը կը գրէ Տիմոթէոս աշակերտին, որ յորդորէ այդ վիճասէր մարդոց՝ վերջ տալու նման վէճերուն, եւ առողջ փրկութեան ծրագիրը իրականացնելու համար: Եւ այս հանգրուանին, ահա՛, կը յիշեցնէ ՍԻՐՈՅ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ. «Գերագոյն պատուիրանը սէրն է՝ մաքուր սիրտէն, բարի կամեցողութենէն եւ անկեղծ հաւատքէն բխած սէրը», որմէ պէտք չէ շեղիլ երբեք:

Սէրը: Այնքան յեղեղուած, այնքան պատմուած, այնքան բաղձացուած, այնքան բարձրացուած այս ծգտումը մարդկային սիրտին, մարդկային միտքին: Տիեզերքը ղեկավարող, տիեզերքը պահող ծգողութեան տիեզերական կանոնին առկայութիւնը մարդուն կեանքին մէջ, որ կը ճշդէ մարդուն յարաբերութիւնները իր շրջապատին, բնութեան եւ Աստուծոյ հետ:

Յստակ է, թէ առաքեալին խօսքը այստեղ քրիստոնէական սիրոյ մասին է: Այդ սէրը բխումը պէտք է ըլլայ, պէտք է արդիւնքը ըլլայ մաքուր սիրտի մը, բարի կամեցողութեան եւ անկեղծ հաւատքի: ՍԻՐՏ ըսելով առհասարակ կը հասկնանք զգացումները, թէպէտ ինչ ատեն անով կը հասկնային նաեւ մտածումները: Անով ակնարկուած մաքուր մտածումները եւ մաքուր զգացումները, աւելի մտածելու եւ

զգալու հիմնական ու մնայուն ծեփ մը մասին կը խօսին, քան պարագայական մտածողութեան կամ զգացականութեան, որոնք շուտով կրնան սառիլ, փոխուիլ եւ նոյնիսկ այլասերիլ: Հետեւաբար, մաքուր սիրտէ բխած սէրը նախ անշահախնդիր սէրն է բոլոր մարդոց հանդէպ: ԲԱՐԻ ԿԱՄԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ գիտակցաբար ընտրուած եւ ընդունուած նպատակ մը գործի վերածելու դրական որոշումն է, որ դարձեալ պարագայական որոշում մը չէ՝ անմիջական նպատակ մը իրականացնելու կոչուած, այլ՝ որ հիմնական եւ մնայուն տրամադրութիւն պէտք է ըլլայ մարդուն մէջ ամբողջ կեանքին վրայ տարածուող: Բարի կամեցողութենէն բխած սէրը, հետեւաբար, տոկոսն սէրն է՝ դէպի նպատակ լարուած: Գալով ԱՆԿԵՂԾ ՀԱՄԱՔԻՆ, անիկա որոշ ճանաչողութեան եւ որոշ փորձառութեան մը վրայ հիմնուած համոզումն է եւ վստահութիւնը: Եթէ մակերեսային ու երեսութեան ըլլայ այդ ճանաչողութիւնը կամ փորձառութիւնը՝ հաւատքը նոյնպէս կ'ըլլայ մակերեսային, չհիմնաւորուած, որուն վրայ հաստատուած շէնքը աւագի վրայ շինուած կ'ըլլայ եւ առաջին իսկ առիթով կրնայ փուլ գալ: Մինչդեռ որքան խոր ըլլան հաւատքի առարկային ճանաչողութիւնը եւ փորձառութիւնը, այնքան աւելի ամուր կ'ըլլայ եւ անկեղծ հաւատքը ինքը: Անշուշտ ենթակայական են յիշուած փորձառութիւնն ու ճանաչողութիւնը, բայց ոչինչով նուազ վաւերական, քան որեւէ այլ ճանաչողութեան եղանակ: Այդ մասին այսպէս կը վկայէ Յովհաննէս Առաքեալ. «Ոեւէ մէկը բնաւ զԱստուած չէ տեսած: Եթէ զիրար սիրենք կը նշանակէ, թէ Աստուծոյ հանդէպ սէրը մեր մէջ կատարեալ է եւ Աստուած մեզի միացած կը մնայ: Ապացոյցը, թէ մենք Աստուծոյ միացած կը մնանք եւ Աստուած մեզի, նոյնինքն Իր Հոգին է, որ Աստուած մեզի տուաւ» (Ա. Յհ 4.12-13): Այսպիսի անկեղծ հաւատքէ բխած սէրը, հետեւաբար, գիտակից եւ վստահ սէրն է՝ նպատակին ճշմարտութեան համոզմունով լեցուն:

*
* *

Բայց ինչո՞ւ ԳԵՐԱԳՈՅՆ ՊԱՏՈՒԻՐԱՆ կը համարուի սէրը: Այս հարցումին կարելի է պատասխանել՝ ամբողջ Նոր Կտակարանէն քաղուած զանազան հաւաստումներով, որոնք այս կամ այն ձեւով կը շեշտեն սիրոյ առանցքային բնոյթը, առաջնային կարեւորութիւնը:

Կը յիշէք անշուշտ այն դէպքը երբ օրինական մը հարց տուաւ Յիսուսի, թէ Օրէնքին մէջ ո՞ր պատուիրանն է մեծ: Յիսուս պատասխանեց. «Միտէ՛ք թու Տէր Աստուածդ ամբողջ սիրտովդ, ամբողջ հո-

գիտվդ եւ ամբողջ միտքովդ»: Ասիկա է մեծագոյն եւ կարեւորագոյն պատուիրանը: Երկրորդը ասորը նման է. «Միտէ՛ք ընկերդ քու անձիդ պէս»: Այս երկու պատուիրաններէն կախեալ են ամբողջ Օրէնքը եւ մարգարէներու ուսուցումները» (Մտ 22.37-40): Օրէնսդիրը Ինք այսպէս ցոյց տուաւ սէրը որպէս առաջին սկզբունքը, ծուծն ու էութիւնը, մեկնակէտն ու մղիչը Օրէնքին:

Ա) Նայեցէ՛ք Առաքելական գրութեանց մէջ եւ պիտի տեսնէք, թէ այնտեղ նախ ընդհանուր ձեւով մը սէրը բնութագրուած է որպէս ԿԵԱՆՔ, եւ այնքան վստահութեամբ առաքեալը կ'ըսէ. «Մենք գիտենք, թէ մահէն կեանքի անցած ենք. ապացոյց՝ որ մեր եղբայրները կը սիրենք: Ով որ իր եղբայրը չի սիրեր մահուան ենթակայ կը մնայ» (Ա. Յհ 3.14): Արդարեւ, սէրը ոչ միայն բանալին է երկրաւոր կեանքին, այլեւ նախադուռն է յաւիտենական կեանքին: Նոյնպիսի ընդհանուր բնութագրութեամբ մը սէրը կոչուած է նաեւ ԼՈՅՍ, անով է միայն որ կեանքը ունի արշալոյս, ջերմութիւն եւ անսայթաք ընթացք: «Ով որ կ'ըսէ, թէ ինք լոյսի մէջ է եւ իր եղբայրը կ'ատէ, անիկա տակաւին խաւարի մէջ է: Մինչդեռ իր եղբայրը սիրողը լոյսի մէջ կը մնայ եւ գայթակղութեան պատճառ չի դառնար» (Ա. Յհ 2.9-10):

Բ) Ընդհանրութենէն դուրս գալով եւ հաւատացեալ մարդու կեանքին մէջ դիտելով զայն, կը տեսնենք, թէ ՍԵՐԸ ՍՐԲԱՑՈՒՑԻՉ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է: «Ամէն բանէ առաջ՝ սրտանց սէր ունեցէ՛ք իրարու հանդէպ,- կ'ըսէ Պետրոս Առաքեալ,- որովհետեւ «սէրը պատճառ կ'ըլլայ որ ձեր բազմաթիւ մեղքերը ներուին»» (Ա. Պտ 4.8): Նոյնը չէ՞ր որ ըսաւ Յիսուս փարիսեցի Սիմոնին տան մէջ, երբ մեղաւոր կին մը գալով իր ոտքերը օծեց իւղով եւ արցունքով, եւ Քրիստոս ըսաւ. «Իր բազմաթիւ մեղքերը ներուեցան իրեն՝ որովհետեւ շատ սիրեց» (Դկ 7.47):

Միաժամանակ, ՍԵՐԸ ԱԶԱՍԱԳՐՈՂ ՈՅԺ Է: Անիկա մարդը դուրս կը բերէ չարի ճիրաններէն եւ բարի ծառայութեան միայն կը մղէ (հմմտ. Հռ 13.10), անիկա նոյնպէս կ'ազատագրէ մարդը իր վախերէն. ինչպէս Յովհաննէս կ'ըսէ. «Սէր ունեցողը՝ վախ չունի, որովհետեւ կատարեալ սէրը ամէն վախ կը փարատէ: Արդարեւ վախը պատիժի հետ կապ ունի, եւ ով որ կը վախնայ սիրոյ մէջ կատարեալ չէ» (Ա. Յհ 4.18):

Պարծեալ, ՍԵՐԸ ՄԻԱԴՐՈՒՉ ԵՒ ՇԻՆԻՉ ՈՅԺ Է: Մինչ հպարտութիւնը, նախանձը, բարկութիւնը, ատելութիւնը բաժնող, խրամատող եւ քանդող ոյժեր են, սէրը, ընդհակառակը, մարդոց միջեւ կամուրջ նետող, հեռացած ծայրերը իրարու օղակող եւ ջերմութեամբ զօդող կապն է՝ միայն շինութիւն բերող: Այս իմաստով է որ Պօղոս կ'ը-

սէ. «Գիտութիւնը կը հպարտացնէ, սէրն է որ կը շինէ» (Ա. Կր 8.1):

Գ) Մարդուն հաւատքի կեանքին մէջ դիտեցէք զայն, եւ պիտի տեսնէք, թէ մարդուն Աստուծոյ հետ ունեցած յարաբերութեան մէջ ՍԷՐԸ, ՆԱԽ, ԳՈՐԾՆԱԿԱՆԱՑՈՒՄՆ Է ՀԱՒԱՏՔԻՆ: Եթէ այդ հաւատքը կը հիմնուի Աստուծոյ վրայ, որ «սէր է» (Ա. Յի 4.8), եթէ այդ հաւատքը կը հիմնուի Քրիստոսի վրայ, որ սիրոյ մարմնացումն է, չի կրնար այլ կերպ թարգմանուիլ մարդուն կեանքին մէջ, եթէ ոչ սիրով, սիրոյ արարքներով: Ահա թէ ինչու առաքեալը կ'ըսէ. «Որովհետեւ Քրիստոս Յիսուսի միանալէ ետք ոչ թլփատուած ըլլալը արժէք մը ունի, ոչ ալ թլփատուած չըլլալը, այլ սիրով գործի դրուած հաւատքը» (Գղ 5.6):

Երկրորդ, ՍԷՐԸ ՆՈՒԻՐՈՒՄ Է ԵՒ ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ: Սիրոյ այդ նուիրումին եւ զոհողութեան աստիճանաչափը Քրիստոս Ինք եղաւ, երբ նախքան իր պատարագումը ըսաւ. «Իմ պատուէրս է, որ սիրէք զիրար, ինչպէս ես ձեզ սիրեցի: Մեծագոյն սէրը այն սէրն է, որով մարդ ինքզինք կը զոհէ իր բարեկամներուն համար» (Յի 15.12-13): Արդարեւ, «Քրիստոս Իր կեանքը զոհեց մեզի համար: Հետեւաբար, մենք եւս մեր կեանքը պէտք է զոհենք մեր եղբայրներուն համար» (Ա. Յի 3.16):

Երրորդ ՍԷՐԸ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ Է ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՆԴԵՊ, հաւատարմութիւն՝ Անոր պատուէրները պահելու իմաստով, որ ուրիշ խօսքով՝ հաւատքին գործնականացման մէկ տարբեր երեսն է: Քրիստոս Ինք ըսած էր. «Ով որ կ'ընդունի Իմ պատուիրաններս եւ կը գործադրէ զանոնք, ան է որ գիս կը սիրէ» (Յի 14.31): Հաւատքի փորձառութիւնը ցոյց կու տայ, թէ «ով որ կը կատարէ Անոր խօսքը, ատով իսկ ցոյց կու տայ, թէ իրապէս իր մէջ կատարեալ է Աստուծոյ հանդէպ սէրը» (Ա. Յի 2.5):

Չորրորդ ՍԷՐԸ ԱՍՏՈՒԾԱԳԻՏՈՒԹԻՒՆ Է: Ան որ սէր ունի՝ անիկա Աստուծոյ ճշմարիտ գիտութիւնը, ծանօթութիւնը ունի, որովհետեւ Աստուած սէր է: Քրիստոս խաչի մահուան դիմելէ առաջ երբ կ'աղօթէր ամբողջ աշխարհի համար, այսպէս կ'ըսէր Իր Հօրը. «Քեզ ճանչցուցի անոնց եւ պիտի շարունակեմ ճանչցնել, որպէսզի անոնց մէջ ըլլայ այն սէրը որով զիս սիրեցիր եւ ես ըլլամ անոնց մէջ» (Յի 17.26), որովհետեւ Յիսուս շատ լաւ գիտէր, թէ ոչինչ աւելի ազդու կերպով կրնայ Աստուծոյ պատկերը մարդուն մէջ տպաւորել ու ճանչցնել, քան սէրը: Այս հիմամբ է որ առաքեալը այնքան գեղեցկօրէն պիտի ըսէր. «Սիրելիներ, սիրենք զիրար, որովհետեւ սէրը Աստուծոյ պարգեւն է. ուստի ով որ կը սիրէ՝ Աստուծմէ ծնած է եւ զԱստուած կը ճանչնայ: Իսկ ով որ չի սիրեր՝ զԱստուած չի ճանչնար,

որովհետեւ Աստուած սէր է» (Ա. Յի 4.7-8): Նոյնպէս, ով որ սիրով արմատացած ու հաստատուած չէ՝ չի կրնար հասկնալ Քրիստոսի սիրոյն իսկական տարողութիւնը եւ չի կրնար ճանչնալ Անոր սէրը, որ շատ աւելի գերազանց է, քան որեւէ գիտութիւն (տես Եփ 3.17-19):

Ի վերջոյ, ՍԷՐԸ ՆՄԱՆՈՒԹԻՒՆ Է ԱՍՏՈՒԾՈՅ, Քրիստոս Իր աշակերտներուն սէր կտակելով կ'ըսէր. «Ինչպէս ես ձեզ սիրեցի դուք ալ զիրար սիրեցէք: Ձեր իրար սիրելով է որ մարդիկ պիտի գիտնան, թէ դուք Իմ աշակերտներս էք» (Յի 13.34-35): «Ով որ կը սիրէ Աստուծմէ ծնած է» (Ա. Յի 4.7), եւ որպէս հարազատ որդիներ նմանութիւնը կը բերեն իրենց երկնաւոր Հօրը: Պետրոս Առաքեալ շատ աւելի զօրաւոր բացատրութիւն մը կու տայ ըսելու համար, թէ սէրը մեզ հաղորդակից կը դարձնէ աստուածային բնութեան. «Անիկա (Քրիստոս) թանկագին ու մեծամեծ խոստումներ տուաւ մեզի, որպէսզի անոնցմով հաղորդակից ըլլանք աստուածային բնութեան... Ատոր համար ալ, ամէն ջանք ըրէք, որ ձեր հաւատքով առաքինութիւն ձեռք բերէք, առաքինութեամբ գիտութիւն, գիտութեամբ ժուժկալութիւն, ժուժկալութեամբ համբերութիւն, համբերութեամբ աստուածպաշտութիւն, աստուածպաշտութեամբ եղբայրասիրութիւն, եղբայրասիրութեամբ սէր» (Բ. Պտ 1.4-7):

Դ) Այս բոլորով եւ այս բոլորին համար է, ահա՛, որ սէրը նկատուած է առաջինը եւ գերագոյնը պատուէրներուն, լրումը, ամբողջացուցիչը եւ զանոնք կատարելութեան հասցնողը: Անիկա լրումն է ամբողջ Հին Օրէնքին (Հռ 13.10): Անոր մէջ բովանդակուած է ամբողջ Օրէնքը, որուն համար ալ Քրիստոսի հետեւորդները կը հրաւիրուին սիրով ծառայելու իրարու (տես Գղ 5.13-14): Ի վերջոյ, սէրը համագումարն է, եւ միաժամանակ, շղախն ու կատարելութիւնը՝ բոլոր առաքինութեանց, որովհետեւ «սէր ունեցողը համբերատար կ'ըլլայ եւ քաղցրաբարոյ: Սէր ունեցողը չի նախանձիր, չի գոռոզանար, չի հպարտանար, անպատշաճ վարմունք չունենար, միայն ինքզինք չի մտածեր, բարկութեամբ չի գրգռուիր, չարութիւն չի խորհիր, անիրաւութեան վրայ չուրախանար, այլ՝ ուրախակից կ'ըլլայ ճշմարտութեան: Սէր ունեցողը միշտ կը զիջի, միշտ կը հաւատայ, միշտ կը յուսայ եւ միշտ կը համբերէ» (Ա. Կր 13.4-7):

Արդ, իրապէս կա՞նք աւելի գերազանց բան, քան այս սէրը, եւ միայն զայն ունեցողը արդէն կատարելութեան մէջ կ'ըլլայ երկնաւոր Հօր պէս, որ կատարեալ է:

Կաթիլ մը սէր պիտի բաւէ, որ մեր կեանքը լեցուի շողով ու լոյսով, լեցուի բարութեամբ, յորդի խնդութեամբ՝ մեզ հաղորդակից դարձնելով առաւել կեանքին:

Ի՞ՆՉ ԲԱՆԵՐՈՎ ԿՐՆԱՅ ՊԱՐԾԵՆԱԼ ՔՐԻՍՏՈՆԵԱՆ

«Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Գղ 6.4)

Պարծենալ: Կեանքի սովորական երեւոյթ մը: Ամէնքս ալ կը պարծենանք, իւրաքանչիւրս՝ բանով մը:

Բայց ներելի՞ է պարծենալը:

Պօղոս Առաքեալ՝ տիպար քրիստոնէան, մէկ պարծանք կը վերապահէ իրեն. «Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն գատ պարծենալիք բան մը չունինք»: Մե՞նք ինչ ունինք: Արդեօք մենք ալ կրնա՞նք նոյնը ըսել: Որովհետեւ խաչի պարծանքը կամ խաչով պարծենալը ամբողջութեամբ տարբեր նշանակութիւն ունի, քան սովորական իմաստով առնուած պարծենալը:

Եկէ՛ք խորհինք միասնաբար:

ՊԱՐԾԵՆԱԼ բայը առհասարակ ժխտական նշանակութիւն մը ունի ինքզինք ուրիշներու հետ բաղդատականի դնելու եւ ինքզինքին առաւելութիւն տալու իմաստով: Պարծեցողը իր սեփական արժանիքներուն, ծեռք բերած յաջողութիւններուն գիտակցութեամբ ինքզինք բաւարարուած կը զգայ, ինքնագոհ կ'ըլլայ եւ այդ գիտակցութենէն իսկ տարուած՝ կը սկսի ինքնահաւան եւ գոռոզամիտ դառնալ:

Ասոր դիմաց, առհասարակ աւելի դրական նշանակութիւն կու տանք ՊԱՐԾԱՆՔ բառին, որովհետեւ այս պարագային, ենթական ինքը չէ բաղդատականի եզրը. ուրիշ բանով մըն է որ կը պարծենայ, ուրիշ բան մըն է որ իր պարծանքը կը համարէ:

Պարծենալը ընդհանրապէս եսակեդրոն արարք մը ըլլալով՝ դժուար հանդուրժելի է ընկերութեան կողմէ, մինչ պարծանքը աւելի

այլակեդրոն է եւ հետեւաբար ընդունելի:

Արդ, եթէ փնտռէք Նոր Կտակարանի էջերուն մէջ, թէ ի՞նչ բաներ քրիստոնէային պարծանքը կը կազմեն կամ կրնան կազմել, կը հանդիպինք հետեւեալ հինգ հաստատումներուն, որոնք բոլորն ալ խաչին իսկական հասկացողութիւնը ունին իրենց մէջ, եւ վերջին հաշուով կը նշանակեն խաչով պարծենալ:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՊԱՐԾԱՆՔԸ ԻՐ ՏԿԱՐՈՒԹԵԱՆՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՅ

Անպայման որ տարօրինակ կը հնչէ այս հաստատումը: Տկարութիւնը կրնա՞յ պարծանքի առարկայ դառնալ:

Այո, կրնայ դառնալ: Պօղոս Առաքեալ երիցս կը կրկնէ. «Եթէ պարծենալու բան մը կայ տկար կողմերուս վրայ պարծենամ», կամ քիչ մը անդին. «Գալով անձիս, անոր տկարութեանց մասին միայն պիտի պարծենամ» (Բ. Կր 11.30 եւ 12.5):

Անշուշտ գայթակղեցուցիչ է այս հաստատումը՝ եթէ չբացատրուի եւ չհասկցուի իր ուղիղ իմաստով:

Ուստի, եկէ՛ք հասկնանք զայն:

Երբ մենք մեր մասին կը մտածենք զուտ մարդկային չափանիշներով, բնականաբար կը փորձենք ամէն առիթով եւ ամէն գնով մենք զմեզ տեսնել անթերի, տեսնել անսխալ, տեսնել բարձր, տեսնել զօրաւոր եւ նաեւ պարծենալ մեր բոլոր այդ կողմերով: Յաճախ կ'անդրադառնանք անշուշտ մեր ունեցած տկարութեանց: Բայց միայն Աստուծոյ լոյսն է որ մեզ կը դնէ մեր իսկական պատկերին դիմաց: Աստուծոյ բացուած աչքը կրնայ միայն ճշմարտութիւնները տեսնել այնպէս ինչպէս որ են՝ առանց շպարի, անծածկոյթ: Եւ իր հարազատ ինքնութիւնը ճանչցողը կ'անդրադառնայ, թէ չունի բան մը պարծենալիք:

Մարդկային կեանքին վերաբերող մէկ ճշմարտութիւն է, թէ որքա՛ն գործի կամ յարաբերութեան մէջ զօրաւոր եւ ապահով է այն մարդը, որ գիտակից է իր առաւելութեանց եւ տկարութեանց: Պարզ է, թէ ամէն մարդ ալ ունի իր տկար կողմերը, իր Աքիլէսեան Կրունկը: Իր տկարութիւնները չճանչցող մարդը դիւրին կերպով խոցելի է, եւ իր անկումին մէջ ճակատագրական նշանակութիւն կրնայ ունենալ անիկա, մինչդէռ իր տկար կողմերը լաւ գիտցող մարդը կ'աշխատի զանոնք կամ ծածկել ու պաշտպանել եւ կամ դարմանել, սրբագրել:

Արդ, նոյն այս կանոնը ի գօրու է մարդուս հոգեւոր մտածողութեան մէջ: Իր հոգեւոր թերութիւնները չգիտցող մարդը կը նմանի այն մարտիկին, որ կրկէս կ'իջնէ առանց ինքզինք պաշտպանելու եւ որ,

հետեւաբար, դատապարտուած է ուշ կամ կանուխ վիրաւորուելու կամ նոյնիսկ սպաննուելու: Իսկ ի՞նչ կ'ընէ իր տկարութիւնները ճանչցողը: Կ'ընտրէ սա երկու ճամբաներէն մէկը. կամ ինքնապաշտպանութեան որպէս ձեւ կը փորձէ ծածկել իր թերութիւնները, ինչ որ սխալ ճամբան է քրիստոնեային համար, որովհետեւ ժամանակի ընթացքին հետզհետէ անծին մէջ աւելի եւս կը շեշտէ իր տկարութեան գաղափարը եւ զինք կ'առաջնորդէ ինքզինքին քայքայման: Եւ կամ կ'ընտրէ երկրորդ ճամբան, հարազատ քրիստոնէական ճամբան, այսինքն կը փորձէ ինքզինք դարմանել, ուղղել, սրբագրել: Այս ինքնադարմանումին եւ ինքնասրբագրութեան համար նախապայման է սեփական տկարութիւնները խոստովանիլ Աստուծոյ, որովհետեւ միայն Աստուծոյ օգնութեամբ է որ կրնանք զանոնք յաղթահարել:

Բայց ընդհանրապէս մենք ամօթ եւ անպատուութիւն կը համարենք տկարութիւնը, եւ հետեւաբար, նաեւ կը վախնանք մեր տկարութիւնները արտայայտել: Կը մոռնանք որ Աստուածորդին իսկ, Քրիստոս, որպէս մարդ Ինքզինք տկար զգաց մեծ տագնապին դիմաց եւ խոստովանեցաւ ըսելով. «Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար» (Մտ 26.41): Կը մոռնանք որ նոյն Աստուածորդին յանձն առաւ խաչին վրայ մեռնիլ. մահը ինք Աստուծոյ համար անշուշտ տկարութիւն պիտի սեպուէր, իսկ խաչը, աշխարհի մտածողութեամբ, ամէնէն ամօթալի եւ անարգ մահն էր: Բայց Քրիստոս այդ տկարութիւնն ու ամօթը յանձն առնելով զանոնք վերածեց կենդանացուցիչ զօրութեան եւ պարծանքի:

Նոյնպէս, իր տկարութիւնները լաւապէս ճանչցող աստուածատէր մարդը գիտէ մէկ բան. գիտէ, որ Աստուած մարդը հողէն ստեղծեց եւ որպէս կաւ՝ ձեւակերպեց զայն որպէս տկար արարած, բայց միաժամանակ, թէ Աստուած մարդը Իր շունչին եւ Իր զօրութեան ընդունարան անօթ դառնալու սահմանեց:

Միայն իր առաւելութիւններուն եւ ձեռք բերած յաջողութիւններուն կռթնած եւ անոնցմով պարծեցող յանձնապաստան մարդը կը նմանի կարծր քարի կտորին կամ կարծրացած կաւի զանգուածին, որ ընդունակ չէ նոր ձեւ եւ նոր կերպարանք առնելու, եւ ուստի անպիտան է Աստուծոյ համար, մինչդեռ այն մարդը որ, իր տկարութիւններուն գիտակից, իր օգնութիւնը Տիրոջմէ կը յուսայ, այնպիսին կակուղ քար է՝ տաշելի, կակուղ կաւ է՝ բրուտին համար օգտագործելի. պատրաստ է իր մէջ նոր մարդը, նոր նկարագիր կաղապարելու, եւ հետեւաբար պիտանի է Աստուծոյ ստեղծագործ ձեռքերուն մէջ: Այդպիսի մարդուն համար իր տկարութիւնը պարծանք կը դառնայ, նախ որովհետեւ զինք կը դարձնէ Աստուծոյ պիտանի եւ Աստու-

ծոյ բարեկամ, եւ ապա որովհետեւ Աստուծոյ ներգործութեամբ, իր տկարութիւնը պատճառ կ'ըլլայ, որ Աստուծոյ զօրութիւնը յայտնուի իր մէջ, Աստուծոյ կամքը իրագործուի իրմով եւ մարդը դառնայ Աստուծոյ գործակից: Քրիստոնեայ մարդուն համար չկայ աւելի մեծ պարծանք, քան գիտնալ, թէ ինք Աստուծոյ պիտանի անօթ մըն է, Անոր կամքին հաղորդ, Անոր զօրութեան հանդիսարան, Անոր փրկագործական ծրագիրին իրականացման մասնակից:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՊԱՐԾԱՆՔԸ ԻՐ ԿՐԱԾ ՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՆ

Երկրորդ բանը զոր քրիստոնեայ մը իրեն պարծանք պէտք է համարէ՝ իր կրած վիշտերն ու չարչարանքներն են: Արդարեւ, գիտենք, որ Քրիստոս նշանաւոր երանիները փակեց ըսելով. «Երանի՛ է ձեզի, երբ կը նախատեն ձեզ եւ կը հալածեն եւ չար գրպարտութիւններ կ'ընեն ձեր մասին: Ցնծացէ՛ք եւ ուրախացէ՛ք, որովհետեւ Երկինքի մէջ ձեր վարձատրութիւնը մեծ պիտի ըլլայ» (Մտ 5.11): Այդ մեծ վարձատրութիւնը Երկինքի Արքայութիւնն է, իւրաքանչիւր քրիստոնեայի երջանիկ յոյսը, որուն համար յանձն պէտք է առնենք ամէն հալածանք ու նեղութիւն: Պօղոս եւ Բառնաբաս Լիստրայի, Իկոնիոնի եւ Անտիոքի իրենց աշակերտները կը քաջալերէին իրենց հաւատքին մէջ եւ կը սրտապնդէին ըսելով. «Բազմաթիւ նեղութիւններով միայն Աստուծոյ արքայութիւնը պիտի մտնենք» (Գրծ 14.21):

Ըլլայ առաջին դարերու, ըլլայ բոլոր դարերու սուրբերու կեանքին մէջ զարմանալի իրողութիւն մը կայ, որուն առջեւ անպայման կանգ կ'առնէ ոեւէ մէկը որ կը կարդայ անոնց վարքը: Այդ իրողութիւնը՝ չարչարանքներու ենթարկուելու իրենց պատրաստակամութիւնն է եւ նահատակուելու իրենց բուռն ցանկութիւնը: Կարելի չէ չյուզուիլ քրիստոնէական վկայութիւնը տալու այդ պատրաստակամութեան եւ Աստուծոյ հանդէպ իրենց սէրը յայտնելու եւ իրենց անձերը ընծայելու այդ խոր տենչանքին դիմաց:

Ի՞նչն է զիրենք այդպէս մղողը եւ մարդկային բնական ու սովորական գիծէն դուրս բերողը:

Գիտենք, թէ բոլորս ալ, որպէս մարդիկ, հակամէտ ենք բարօր եւ հանգիստ կեանքի: Մարդիկ կ'աշխատին, կը տքնին ու կը պայքարին յաճախ այդ բարօրութիւնն ու հանգստութիւնը ձեռք բերելու համար: Հետզհետէ, մարդիկ աւելի եւ աւելի կը ձգտին նուազագոյն աշխատանք կատարելու եւ առաւելագոյն հանգիստ ու վայելք ապահովելու: Հանգիստը եւ հաճոյքները արդէն իսկ ներկայ աշխարհի մարդուն համար դարձած են միակ մտասուեռում, հետապնդուելիք

միակ նպատակ. արդի մարդուն կուռքերը դարձած են անոնք գրա-
ւելով մարդոց միտքերը եւ մոռցնելով մարդուն բուն նպատակը: Այն-
քան գրաւած են անոնք մեր միտքերը, որ կամաւորաբար կը
հրաժարինք այլեւս մտածել: Չենք ուզեր մտածել, որովհետեւ մտա-
ծել պիտի նշանակէ որոշ ուղղութեամբ մտահոգութիւններ ունենալ
եւ ճիգ ու աշխատանք թափել, պիտի նշանակէ մեզ մեր հանգիստէն
դուրս բերել: Աւելի դիւրին կը գտնենք փախուստ տալ, մոռնալ, միայն
հաճելի զգալ, միայն հանգստանալ, միայն վայելել...

Ի՞նչն է ուրեմն, որ Եկեղեցւոյ հռչակած այդ սուրբերը, վաւերա-
կան այդ քրիստոնեաները կը մղէր եւ կը մղէ տակաւին՝ սիրով յանձն
առնելու ամէն նեղութիւն ու չարչարանք, եւ բուռն ըղձանքով ցանկա-
լու մարտիրոսութեան անունը:

Պարզ է պատասխանը Քրիստոսի սէրը եւ Երկինքի Արքայու-
թեան խոստումը, Աստուծոյ ներկայութեան վայելքը եւ յաւիտենական
կեանքի յոյսը, Աստուծոյ հետ միութեան երանութիւնը եւ Քրիստոսի
հետ յաւիտենապէս թագաւորելու փառքը: Ասոնք են քրիստոնեային
միակ փառասիրութիւնը: Յստակ այս գիտակցութիւնն է, որ Պօղոս Ա-
ռաքեալ կ'ուզէ տալ իր հաւատացեալներուն երբ կ'ըսէ. «Ներկայ
կեանքին կարճ եւ ժամանակաւոր նեղութիւնները մեզի կ'ապահովեն
այնպիսի փառք մը, որ յաւիտենական է եւ շատ աւելի գերազանց,
քան որեւէ երկրային փառք» (Բ. Կր 4.17):

Եթէ, ուրեմն, ժամանակաւոր այդ նեղութիւններն են որ մեզի կ'ա-
պահովեն յաւիտենական անանցանելի փառքը, դիւրին կը դառնայ
հասկնալ, թէ ինչո՞ւ նեղութիւններն ու չարչարանքները ինքնին պար-
ծանք կամ պարծանքի առարկայ կրնան ըլլալ իսկական քրիստոնե-
ային համար: Այսպէս, ինչպէս աշխարհայնօրէն մտածող մարդը կը
պարծենայ իր ձեռք բերած յաջողութիւններով, որովհետեւ ամէն մէկ
յաջողութիւն փորձառութեան նոր աստիճան մըն է դէպի փառքի
բարձրունքը, եւ կը պարծենայ նաեւ իր շինած կալուածներով ու շա-
հած հարստութեամբ, որովհետեւ դրամը իր առջեւ շատ մը դուռեր
կը բանայ, այնպէս ալ հոգեւորապէս մտածող մարդուն համար
պարծանք են Աստուծոյ համար իր կրած նեղութիւններն ու չարչա-
րանքները, որովհետեւ անոնք փորձառութիւնն են, որոնք զինք հո-
գեւորապէս կը կազմաւորեն, այսինքն՝ իր ներքին, հոգեկան շէնքը կը
կանգնեն, որովհետեւ անոնք իր շահն են եւ անոնցմով է որ Երկինքի
դուռերը կը բացուին իր առջեւ: Ահա թէ ինչո՞ւ առաքեալը կ'ըսէ. «Կը
պարծենանք նաեւ մեր նեղութեանց մէջ, գիտնալով, որ նեղութիւննե-
րը մեզի համբերութիւն կու տան, համբերութիւնը՝ տոկունութիւն, տո-
կունութիւնը՝ յոյս, իսկ յոյսը երբեք ամօթով չի ձգեր...» (Հռ 5.3-4):

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՊԱՐԾԱՆՔԸ ԻՐ ՀԱՒԱՏՔԻՆ ԱՌԱՒԵ-
ԼՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՔ Է ԸԼԼԱՅ

Մարդկային բնական եւ սակայն ահաւոր փորձութիւն է ինքզինք
եւ իր գործը բաղդատականի դնել ուրիշին եւ անոր գործերուն հետ,
փորձութիւն մը, որուն ենթարկուողը անխուսափելիօրէն կ'իյնայ մեղ-
քի մէջ, որովհետեւ կը մղուի մէկ կողմէ՝ նախանձելու իրմէ գերա-
զանցներուն, եւ միւս կողմէ՝ մեծամտելու եւ արհամարհելու իրմէ
նուազները:

Վարժուած ենք յաճախ ըսելու «ես ըրի, ես գացի խօսեցայ, ես
կարգադրեցի, ես յաջողցուցի, ես ապահովեցի» եւ նման արտայայ-
տութիւններ: Անշուշտ բնական է, հասկնալի է, որ մարդ իր յաջողու-
ցածով գոհունակ զգայ ինքզինք եւ նոյնիսկ արտայայտէ այդ
գոհունակութիւնը եւ ուրախութիւնը իր բարեկամներուն: Բայց ահա
տեղ մը այդ բնական երեւոյթը կ'այլասերի եւ կը դառնայ արդէն ան-
բնական, երբ կատարուած գործը կամ ձեռք բերուած յաջողութիւնը
կը դառնայ դրօշակ ու զէնք անոնցմով պարծենալու, յիշորտալու եւ
անոնցմով ուրիշները արհամարհելու եւ նսեմացնելու:

Ախտագին այս երեւոյթը անհատական խնդիր կրնայ թուիլ եւ է,
սակայն անոր հետեւանքները կ'անդրանցնին անհատական յարա-
բերութեանց սահմանը եւ հաւաքական մեր կեանքին մէջ կ'ունենան
իրենց շատ ժխտական, ջլատիչ եւ քայքայիչ դերը: Յաճախ հարցը
կը հասնի հոն, ուր ամէն ինչ կը կապուի եւ կը պայմանաւորուի պար-
ծանքով. այսինքն՝ մարդիկ կը կատարեն միայն այն գործերը, որոնք
այս կամ այն ձեւով պիտի երեւին եւ որոնց մասին պիտի խօսուի, եւ
միւս կողմէ՝ ոեւէ մէկը չուզեր սեւ աշխատանք կատարել, ընել բաներ՝
որոնք ազգային-հասարակաց կեանքին մէջ հացի եւ ջուրի չափ ան-
հրաժեշտ են, բայց որոնց մէջ ԱՆՀԱՏ-ԵՍ-Ս-ը չ'երեւիր:

Այս մտածելակերպը եւ գործելակերպը, բնականաբար, ինքնին
մերժումը եւ մահացումն են ամէն հաւատքի եւ հաւատալիքի, ամէն
գաղափարականի եւ տեսլականի: Թոյն եւ մահացու վարկ են անոնք
հաւաքական մեր կեանքին եւ ընդհանրական մեր շահերուն համար:

Մտածենք հետեւեալ կերպով: Ռեւէ մէկը որ իր տան համար աշ-
խատանք մը կը տանի, բան մը կը շինէ, այլ բան մը կ'աւելցնէ եւ իր
մնայուն աշխատանքով իր տունը բարօր կը պահէ, կը պարծենա՞յ
իր ըրածով՝ գովասանք եւ գնահատանք շահելու համար ուրիշներէն:
Բնականաբար ոչ, որովհետեւ այդպէս շարժելով՝ իր բնական պար-
տականութիւնը կատարած կ'ըլլայ եւ գոհունակութիւնը կ'ունենայ իր
աշխատանքով օգտակար արդիւնք մը ձեռք բերած ըլլալուն համար:
Նոյնն է քրիստոնեայ մարդուն համար: Ինչ որ կ'ընէ ուրիշներուն հա-

մար ըրած կ'ըլլայ ինքզինքին համար որպէս բնական մասը իր պարտականութեան, եւ հետեւաբար, պարծենալիք բան մը չունի անոր մէջ: Այս է որ պատուիրեց Քրիստոս երբ ըսաւ. «Երբ կը կատարէք ինչ որ ձեզի հրամայուած է, ըսէք.- Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պէտք էր անիկա ըրինք» (Ղկ 17.10): Ճիշդ այս ձեւով կը խորհի ու կը գործէ Պօղոս Առաքեալ, որ կորնթացիներուն գրած իր նամակին մէջ կ'ըսէ. «Եթէ Աւետարանը կը քարոզեմ ասիկա պարծենալիք բան մը չէ ինծի համար, որովհետեւ պարտականութիւնս է որ կը կատարեմ» (Ա. Կր 9.16):

Բայց անշուշտ պարտականութեան այդ գիտակցութիւնը ինքնին արդիւնք է ներքին հասկացողութեան մը, համոզումի մը, հաւատքի մը: Եւ որքանով որ ամբողջական է պարտականութեանց հանդէպ անսակարկ նուիրումը, կը նշանակէ՝ այնքանով ամբողջական եւ կատարեալ են այդ մարդուն քրիստոնէական հասկացողութիւնը եւ հաւատքը: Եւ ասիկա պարծանք է ոեւէ մարդու համար: Պարծանք է, բայց եւ այնպէս՝ բնաւ իրաւունք չի տար պարծենալու ուրիշներուն դիմաց, պարծենալու ուրիշներուն վրայ: Ասոր դէմ մեզ կը զգուշացնէ առաքեալին խրատը. «Ամէն մէկը թող իր գործը կշռէ եւ իր գոհունակութիւնը միայն ինքն իրեն պահէ՝ փոխանակ ինքզինք ուրիշներու հետ բաղդատելու» (Գղ 6.4): Սկիզբէն իսկ ըսինք, թէ ինչպիսի ահաւոր փորձութիւն է այս մէկը: Ուստի առաքեալը թախանձագին կը խնդրէ իրեններէն. «Մեծամիտ մի ըլլաք. ընդհակառակը, միշտ համեստ եղէք եւ միայն Աստուծոյ ձեզի տրուած հաւատքին չափով գնահատեցէք դուք ձեզ» (Հռ 12.3):

Հետեւաբար, հաւատքին չափով ինքզինք գնահատելու սկզբունքն է որ պէտք է սորվի, ոեւէ քրիստոնեայ, եւ իր հաւատքին հետզհետէ ունեցած առաւելութիւնը ըլլայ միայն իր ուրախութիւնը, իր ներքին պարծանքը:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՊԱՐԾԱՆՔԸ ԻՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԸԼԼԱՆ

Քրիստոնէական հաւատքի եւ սիրոյ բարձրագոյն արտայայտութիւնն է այս մէկը: Կատարեալ այլասիրութեան արտայայտութիւնն է, որ մարդկային միտքով դժուար թէ բացատրուի, բայց աստուածային շնորհքով կ'իրագործուի: Գեղեցիկ օրինակ մը կու տայ Պօղոս Առաքեալ՝ կորնթացիներուն գրած իր 2-րդ նամակին մէջ, ուր կ'ըսէ. «Պարծանքով կրնամ ըսել, եւ խիղճս ալ կը վկայէ, որ բոլորին հանդէպ ու մանաւանդ ձեզի հանդէպ եղած եմ պարզ ու անկեղծ, ինչպէս Աստուած կը կամենայ. ոչ թէ մարդկային իմաստութենէ մղուած, այլ

Աստուծոյ շնորհքովը» (Բ. Կր 1.12):

Մարդիկ սովորաբար երբ իրենցմէ դուրս ուրիշներով կը պարծենան, ո՛չ թէ ՈՒՐԻՇՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ կը պարծենան, այլ ուրիշներով ԻՐԵՆՑ ՀԱՄԱՐ կը պարծենան: Եթէ մարդիկ կը յիշեն այս կամ այն անձնաւորութեան հետ իրենց ծանօթութիւնը կամ հանդիպումը, երբ կը խօսին այս կամ այն անձին հետ իրենց բարեկամութեան կամ մտերմութեան աստիճանին մասին եւ զայն պարծանքի նիւթ կը դարձնեն, ոչ թէ միւսները բարձրացնելու համար կ'ընեն, այլ իրենք զիրենք:

Տարբերութիւնը կը կայանայ իրենց միջ ինքզինք բարձրացնելու մտահոգ մարդուն համար պարծանքը ներկայի գործն է, սեփական անմիջական շահերու համար, ուրիշները բարձրացնելու ձգտող մարդուն համար պարծանքը պայմանաւորուած չէ ներկայ կեանքով, ոչ ալ անձնական մտահոգութիւններով: Անոր մտահայեացքը աւելի հեռուն կ'երթայ. «Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի դատաստանին օրը, կ'ըսէ առաքեալը,- ձեր պարծանքը պիտի ըլլամ, ինչպէս դուք իմ պարծանքս» (Բ. Կր 1.14):

Այս պարծանքը կարելի է միայն այն ատեն, երբ մարդը կը վարժուի իր ընկերոջ, իր հաւատակից եղբօր եւ իր նմաններուն նայելու այնպէս, ինչպէս պիտի նայէր իր սեփական ընտանիքի անդամին: Եթէ երբեք ծնողքի մը պարծանքը իր գաւակին համար անշահախնդիր է որոշ չափով եւ հիմնուած միայն սիրոյ վրայ, նոյնը պէտք է ըլլայ ոեւէ հաւատացեալ ուրիշ հաւատացեալի մը համար: Նոյնիսկ աւելին: Մեր եղբայրները մեր պարծանքը կ'ըլլան միայն այն ատեն, երբ զանոնք կը նոյնացնենք մեր անձին հետ. այսինքն, երբ զանոնք կը սիրենք մեր անձին պէս, ինչպէս աստուածային օրէնքը կ'ուզէ որ սիրենք զանոնք:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՊԱՐԾԱՆՔԸ ԱՍՏՈՒԾ ԻՆՔ ՊԵՏՔ Է ԸԼԼԱՅ

Նախորդ բոլոր հաստատումները ինքնին ցոյց կու տային, թէ Աստուծոյ հաւատացող մարդուն համար իր ամբողջական խարիսխը, իր նեղութեանց ամոքիչը, իր հաւատքին սնուցիչը եւ իր սէրն արծարծողը Աստուած Ինք է՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Նոյնինքն հաւատացեալ մարդուն առ Աստուած կոչումը, հաւատքի ամբողջ կեանքը եւ փրկութիւնը Աստուծոյ գործն են, Անոր ծրի պարզելը: Պօղոս Առաքեալ կը շեշտէ, թէ Աստուած Իր փրկութիւնը հաւատացեալ մարդուն կու տայ ոչ որպէս մարդոց արժանիքին արդիւնքը, այլ՝ որպէս շնորհք, որպէս ծրի պարզել, ՈՐՊԵՍՋԻ ՌԵԻ ՄԷԿԸ ՉՊԱՐԾԵՆԱՅ

(Եփ 2.9):

Պարծանքի մեր տեսած բոլոր երեւոյթները Աստուծոյ խորունկ դրոշմը կը կրեն իրենց վրայ, եւ շատ բնականաբար, այդ բոլորին ընդմէջէն Աստուած Ինքն է իսկական պարծանքի առարկան, ինչպէս Երեմիա Մարգարէն կ'ընդգծէ. «Ով որ կը պարծենայ Տիրոջմով թող պարծենայ» (Եբր 9.24):

Այսօր եթէ մենք ալ Խաչը դարձնենք մեր պարծանքի առարկան, անիկա մեզի համար կը դառնայ մահուան տեղ Քրիստոսով կեանք, մեր տկարութիւնները փոխարինող Աստուծոյ զօրութիւն, մեր վիշտերը փարատող եւ մեր նեղութիւնները խնդութեամբ վարձատրող Կեանքի Ծառ, մեր եղբայրներուն հանդէպ սիրոյ ուսուցիչ եւ Աստուծոյ սիրոյն կենդանի յուշարար:

Իսկապէս, ուրեմն, միակ բանը որով պէտք է պարծենանք:

ԺԱՄԱՆԱԿԱՎՐԷՊ ԲԱՆԵՐ

Ներկայ դարը, ներկայ ժամանակները նորոյթի, նորածելութեան, նոր մտածումներու, նոր տարազաւորումներու, նոր արժէքներու որոնման, նոր ճաշակներու արթնացման, նոր զգայնութեանց հետապնդումին կնիքն ունին:

Նորը յաճախ կշիռ է եւ արժէք, որովհետեւ խորք է կամ խորքի որոնում, ստեղծագործութեան ճիգ է, գեղեցիկին եւ բարիին հաստատումը: Աւա՞ղ սակայն, շատ յաճախ ալ, յատկապէս ներկայիս, նորութիւնը միայն կեղեւ է ու փրփուր, յարափոփոխ, անդիմագիծ, թեթեւսոլիկ: Արժէքի մը հասկացողութենէն ամբողջութեամբ հեռու ինկող:

Այս նորութեանց հետապնդումը անպայման իրեն հետ կը բերէ հինը անտեսելու, նսեմացնելու, նոյնիսկ արհամարհելու ծգտում մը, որ յաճախ ընկերութեան վրայ գիտակից կամ անգիտակից պարտադրանքի հանգամանքը կը ստանայ: Այլ խօսքով, յաճախ մենք ընկերութենէն «դուրս» եւ մանաւանդ «վար» չմնալու համար, կ'որդեգրենք տեսութիւններ, դիրքին ձեռով կ'իրացնենք կարծիքներ, որոնք հոգեկան ահաւոր սնանկութեան մը արտայայտիչներն են խորքին մէջ, որոնք որեւէ արժէչափի կարելի չէ բերել, պարզապէս որովհետեւ արժէքներու ուրացումն են անոնք:

Ընդհանրութիւններ շօշափել չէ մեր նպատակը:

Կ'ուզենք խօսիլ կրօնական-եկեղեցական մեր կեանքի մէկ երեսին մասին:

Սուրբ Յարութեան շաբաթը կանխող քառասնօրեայ շրջանը մեր Հայրերը կոչած են ՄԵԾ ՊԱՀՔ: Եկեղեցական կեանքին մէջ կարելոր տեղ տրուած է անոր: Ինչո՞ւ: Ի՞նչ արժէք եւ նշանակութիւն ունի անիկա: Բայց մանաւանդ, անցեալին ինչ որ ըրեր ու սահմաներ են մեր Հայրերը, ի՞նչ կապ ունի այսօրուան մեր կեանքին հետ: Երբ ամբողջ աշխարհը փոխուեր է եւ կը փոխուի, ժամանակավրէպ չէ՞ խօսիլ

պահքի-մահքի մասին:

Տակաւին, Մեծ Պահքին կապուած են ուրիշ բաներ մեղք, մեղքի գիտակցութիւն, զղջում եւ ապաշխարութիւն կոչուած, եւայլն: Ծիծաղելի չէ՞ արդեօք այսպիսի բաներու մասին խօսիլ 20-րդ դարու վերջին քառորդին մէջ, գիտութեան դարուն մէջ, աստղանաւորդութեան դարուն մէջ...

Ներկայ թոյլատու ընկերութեան մէջ այսպիսի բաներու մասին խօսիլը ոչ միայն ամօթ, այլեւ անհանդուրժելի կը գտնեն շատեր, տգիտութեան, հին-գլուխութեան, սնոտիապաշտութեան, միամտութեան եւ նման բաներու արդիւնք համարելով ատիկա:

Բայց, ծառը պտուղէն կը ճանչցուի:

Ներկայ ընկերութեան մէջ տեղ գտնող անպատասխանատուօրէն թոյլատու կեցուածքը իր պտուղները կու տայ արդէն նոյն ընկերութեան, եւ այդ պտուղները կը ճանչցուին իրենց դառն ճաշակով: Մեր այսօրուան քաղաքակիրթ կեանքը լեցնող քանի մը իրողութեանց պարզ մատնանշումն իսկ ըստ բաւականին թելադրող կրնայ ըլլալ խորհիլ ուզողին համար:

Դիտեցէ՛ք սա ախտանիշ երեւոյթները.

1) ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՌՈՅՑԻ ԽԱՒՏՈՒՄԸ

- Բարոյական հասկացողութեանց մերժումին որպէս բնական արդիւնք ընտանեկան անհաւատարմութիւններու ահռելի աճը:

- Կեղծ ազատագրութեանց անունով՝ հնազանդութեան եւ իրերօգնութեան ոգիին նուագումը եւ ընտանեկան կեդրոնացած կեանքին ու միութեան խախտումը:

- Անուսնալուծումներու թիւի անբնական վերելքը:

- Ջաւակներու ապրած ողբերգութիւնը, եւ անոր որպէս հետեւանք ծնող-զաւակ յարաբերութիւններու անբնականոնութիւնը, խորթ տարրերու թափանցումը:

2) ՍԵՌԻՆ ԱՅԼԱՍԵՐՈՒՄԸ ԵՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

- Անբարոյութեան քարոզչութիւնը՝ արդի աշխարհի քարոզչական մեքենայի բոլոր միջոցներով:

- Սեռին ամօթալի շահագործումը:

- Սեռային լուռ եւ մեծաշռինդ գայթակղութիւնները:

- Անչափահասներու սեռային կեանքը:

- Աղջիկ-մայրերու ողբերգութիւնը:

- Անհամար վիժումները եւ անոնց ցաւագին հետեւանքները:

3) ՎԱՅՐԱԳՈՒԹԵԱՆ ՄԱԳԼՑՈՒՄԸ

- Վայրագութեան (violence) դաստիարակութիւնը՝ բոլոր ձեւերով - մամուլ, վէպեր, գծանկար-պատմուածքներ, հեռատեսիլ, շարժանկար:

- Վայրագ արարքներու անհամեմատ աճը - կողոպուտներ, աւազակային յարձակումներ, առեւանգումներ, բռնաբարումներ, սպանութիւններ, կանխամտածուած սառն ոճիրներ:

- Պատերազմական գործողութիւններ, ամէնուրեք պետական իրերայաջորդ հարուածներ, ահաբեկչութիւն, եւայլն:

4) ԱՆՀՈՐԻՋՈՆ ԵՒ ԱՆՆՊԱՏԱԿ ԿԵԱՆՔ

- Պարապին ներկայութիւնը մարդոց կեանքին մէջ գոյութեան որեւէ նպատակի չգոյութեան կամ անգիտութեան որպէս հետեւանք, անհեռանկար կեանքի որպէս արդիւնք:

- Պարապութիւնը լեցնելու ճիգը մոլութեանց փարումով, հաճոյքներու կատաղի հետապնդումով:

- Կեանքէն եւ պատասխանատուութիւններէ փախուսող թմրեցուցիչներու գործածութեամբ կամ այլ ինքնախաբէութիւններով:

- Կեանքին դէմ դառնացումներ, անվերջ դժգոհութիւններ:

- Պայքարի եւ դիմադրականութեան ճիգի հետզհետէ նուագումը, ծախորդութիւնները դիմագրաւելու քաջութեան պակասը, ծայրայեղ յուսալքումները եւ՝ բազմաթիւ անձնասպանութիւնները:

Այս բոլորը դիտելէ եւ կշռելէ ետք ի՞նչ կը խորհիք: Կարելի՞ է այս բոլորը թոյլատրելի, բնական եւ օրինաչափ համարել, թէ՞ պիտի ընդունինք որ այս պտուղները աղիտաբեր շեղումներ են, կեանքին մէջ ներկայ բայց ոչ բնականոն եւ ընդունելի: Եւ այն ատեն, բնականօրէն, պիտի ընդունինք ՄԵՂՔԻՆ ներկայութիւնը - անուրանալի ներկայութիւնը - մեր շրջապատին մէջ եւ մեր կեանքէն ներս, որովհետեւ «մեղքը ԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ Է» (Ա. Յհ 3.4): Այսինքն՝ մեղքը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ օրէնքին խախտումը, օրէնքին դէմ զանցառութիւնը եւ յատկապէս՝ կեանքի բնականոն եւ երջանիկ ընթացքը ապահովելու սահմանուած աստուածային պատուիրաններէն շեղումը, զանցառութիւնը:

Արդ, եթէ մեղքը էականօրէն ու տիրականօրէն ներկայ է կեանքին մէջ, մեծագոյն ինքնախաբէութիւնն է «ՄԵՂՔ» բառէն ու բացատրութենէն փախչիլը: Եւ եթէ մեղքը կայ - եւ կայ - երբեք ժամանակավրէպ պիտի չըլլայ նաեւ խօսիլ զղջումի եւ ապաշխարութեան մասին, եւ հետեւաբար, Մեծ Պահքը կը պահէ իր նշանակութիւնը:

Բայց, դարձեալ, հեռու սխալ հասկացողութիւններէ: ՊԱՀՔ բառը չմոլորեցնէ ձեզ: Առհասարակ կերակուրը կը հասկնանք այնպէս, ինչ որ ճշմարտութենէ ամբողջութեամբ հեռու է: Պահեցողութիւնը եթէ միայն կերակուրն ըլլար կամ ինքզինքը ֆիզիքապէս տրտմեցնելն ու չարչրկելը, ոչ միայն այս օրուան, այլ բոլոր ժամանակներուն համար ալ վրիպանք պիտի սեպուէր: Բայց լսեցէք, թէ ինչպէս Եսայի Մարգարէին բերանով Աստուած ինք կը քննադատէ պահեցողութեան այդ սխալ հասկացողութիւնը եւ փոխարէնը կը մատնանշէ անոր իսկական հասկացողութիւնը: Լսեցէք.

«Ծոմ բռնած ատեն դուք ձեր գիտցածը կ'ընէք դարձեալ, ձեր աշխատաւորները կը հարստահարէք, ձեր հակառակութիւններն ու կռիւները կը շարունակէք եւ խեղճերն ու աղքատները կը տանջէք: Այսպիսի ծոմապահութիւն պէտք չէ Ինծի. այսպիսով ձեր ձայնը Ինծի չի հասնիր: Միթէ այսպիսի՞ ծոմ ուզեցի. պահանջեցի՞ որ մարդս ինքզինքը չարչրկէ, կամ գլուխը խոնարհեցնէ, ինչպէս եղէզը հովին դիմաց, կամ քուրծի եւ մոխիրի վրայ պառկի: Ա՞յս է քու ծոմապահութիւն կոչածդ եւ Տիրոջ ընդունելի օրը: Ոչ, - կ'ըսէ Տէրը, - ծոմապահութիւնը այն ատեն միայն Իմ ուզածիս պէս կ'ըլլայ երբ դադրիս անիրաւութիւն գործել, դադրեցնես վաճառքի մէջ ըրած խարդախութիւններդ եւ անոնց պարտքին անիրաւ մուրհակները պատռես, երբ հացդ անօթին հետ բաժնես, անտուն աղքատները տունդ ընդունիս, զգեստ տաս անոր, որ կը տեսնես թէ մերկ է, եւ ընտանիքդ ու զաւակդ չզրկես: Եթէ դադրիս տկարները հարստահարել, ուրիշներուն սպառնալէ եւ անոնց մասին զրպարտութիւն ընելէ, եւ փոխարէնը յօժար սիրտով հացդ անօթին տաս ու կարօտեալները կշտացնես... Եթէ Շաբաթը Իմ սուրբ օրս ոտնակոխ չընես քու գործերովդ, եթէ Աստուծոյ նուիրուած Շաբաթ օրը ուրախարար ու նուիրական համարես, եւ զայն պատուես քու ճամբաներէդ,

քու ցանկութիւններդ կատարելէ եւ դատարկաբանութենէ հեռու մնալով, այն ատեն Աստուծոյ պիտի ուրախանաս, պիտի բարձրացնես քեզ երկրի վրայ, եւ քու հօրդ Յակոբի խոստացած օրհնութիւնս քուկդ պիտի ըլլայ» (Ես 58.3-7, 9-10, 13-14):

Որքա՞ն պարզ է ու յստակ Աստուծոյ Խօսքը: Աստուծոյ պահանջած պահեցողութիւնը այս է ուղղումն է մեր կեանքին, սրբագրութիւնն է մեր թերացումներուն, բարեփոխումն ու բարուքումն է մարդկային եւ ընտանեկան մեր յարաբերութիւններուն, հասկացողութիւնն է բարոյական ամուր եւ օրհնաբեր սկզբունքներուն, գիտակցումն է մեր պատասխանատուութիւններուն եւ դերին: Եւ այս բոլորը կեանքը ղեկավարող սկզբունքներ են:

Մեծ Պահքը տարւոյն մէջ ինքնակրթումի շրջան մըն է, ուրեմն, ուր կեանքի այս սկզբունքներով կը դաստիարակուինք ու կը վերադաստիարակուինք Աստուծոյ կամքին հաղորդ դառնալով եւ Իր շունչին մէջ աճելով:

Ժամանակավրէ՞պ: Երբեք: Տեսանք վերելը՝ մէկ ամփոփ պատկերը մեղքի պտուղներուն:

Իսկ ի՞նչ են պտուղները Աստուծոյ պահանջած այս պահեցողութեան: Դարձեալ Աստուծոյ բերանէն լսեցէք Իր բոլոր խոստումները անոնց, որոնք կը կատարեն Աստուծոյ կամքը՝ իրենք զիրենք հեռու պահելով (=պահեցողութիւն) վերոյիշեալ չարիքներէն.

«Այն ատեն քու լոյսդ արշալոյսի պէս պիտի բացուի եւ դուն պիտի բժշկուիս, արդարութիւնդ քեզ պիտի առաջնորդէ եւ Աստուծոյ փառքը թիկունքդ պիտի պաշտպանէ: Այն ատեն երբ կանչես՝ պիտի հասնի քեզի... Այն ատեն՝ նոյնիսկ խաւար ըլլաս՝ պիտի լուսաւորուիս, մթութիւնդ կէսօրուան լոյսի պիտի փոխուի. Աստուած Ինք պիտի առաջնորդէ քեզ միշտ, պիտի բաւարարէ բոլոր ցանկութիւններդ. պիտի զօրացնէ ոսկորներդ, եւ դուն ջրալից պարտէզ ու մշտահոս աղբիւր պիտի դառնաս... Այն ատեն Աստուծոյ պիտի ուրախանաս, պիտի բարձրացնես քեզ երկրի վրայ եւ քու հօրդ Յակոբի խոստացած օրհնութիւնդ քուկդ պիտի ըլլայ» (Ես 58.8-9, 11, 14):

Որքան որ իրական են պատուիրանազանցութեան (=մեղքին) հետեւանքները, նոյնքան իրական է պատուիրանապահութեան (=պահեցողութեան) բերած օրհնութիւնը: Լուսաւորութեան, բժշկութեան, արդարութեան եւ ամենալից յաջողութեան այս խոստումները չեն վերաբերիր անդենականին, այլ՝ ներկայ մեր կեանքին, այս աշխարհին, այս «երկրի վրայ»:

Եւ Աստուծոյ խօսքը անդառնալի է:



ԿԵԱՆՔԸ ԱԶԱՏՈՒԹԵԱՄԲ Է ԿԵԱՆՔ

«Ջայս գրեցի, զի գիտասցիք եթէ կեանս յաւիտենականս ունիք»
(Ասիկա գրեցի ձեզի, որպէսզի գիտակցիք թէ յաւիտենական կեանք ունիք) (Ա. Յհ 5.13)

Այսպէս կ'ըսէ Յովհաննէս Առաքեալ իր Ընդհանրական Առաջին նամակին մէջ, ուր, իրեն յատուկ մտահայեցողական գետնի վրայ դիտելով Քրիստոսով տրուած կեանքի աւետիսն ու քրիստոնեային կեանքը եւ այս երկուքին փոխ-յարաբերութիւնը, զՔրիստոս կը դնէ մարդկային կեանքին կեդրոնը եւ կ'ըսէ՝ առանց Քրիստոսի կեանք չկայ: Աստուած Իր Միածին Որդին դրկեց, որպէսզի մենք տեսնենք ու հաւատանք Անոր եւ Անով կեանք ունենանք: Եւ իր նամակը բացատրութեամբ լեցնելէ ետք, եզրակացութեան մէջ կը շեշտէ. «Ասիկա գրեցի ձեզի, որպէսզի գիտակցիք, թէ յաւիտենական կեանք ունիք»:

Այս խօսքը մեզի մտածել կու տայ երեւոյթի մը մասին, որ յաճախ մեր կեանքը կը յատկանշէ. մենք շատ առիթ չենք ունենար եւ մենք մեզի համար առիթներ չենք ստեղծեր կենալու եւ մտածելու: Կ'ապրինք կեանքը. մեր կեանքը կ'անցնի: Բայց չենք անդրադառնար ու չենք մտածեր մեր կեանքին մասին, եւ հետեւաբար չենք գիտակցիր մեր կեանքը: Մինչդեռ անդրադառնալն ու մտածելը առիթ պիտի տային տեսնելու կեանքին գեղեցիկ կողմը, հրաշալի հանգամանքը, անոր աստուածատուր բացառիկ բնոյթը:

Եթէ պահ մը մտածենք թէ կեանքը, ապրելու իրականութիւնը ինքնին, եւ աշխարհի վրայ կեանքը կազմող ու յատկանշող բոլոր երեւոյթները ինչպիսի՞ հրաշալիք մը կը կազմեն, եթէ դիտենք մարդկային կեանքը իր ծնունդով ու աճումով, կենդանական կեանքը եւ բուսական աշխարհը իրենց մանրամասնութեանց մէջ եւ մտածենք, անոնցմէ իւրաքանչիւրն իր ամբողջ լեցունութեամբ պիտի խօսի

կեանքի իսկ հրաշքին մասին: Յաճախ կ'անցնինք այս բոլորին կողքէն, մեր կեանքին իսկ քովէն կ'անցնինք եւ չենք մտածեր մեզի տրուած, մեզի վստահուած այդ գանձին, այդ հարստութեան, այդ հրաշալիքին մասին, մինչդեռ, եթէ մտածենք ու գիտակցինք այդ գանձն ու հրաշալիքը կը բացուին մեր առջեւ եւ կը տեսնենք այն ամբողջ միտքն ու գեղեցկութիւնը, որ անոր մէջ պարփակուած են:

Գեղեցկութիւնը որքան որ գոյնին ու գիծին, որքան որ լոյսին եւ ստուերին մէջ է, նոյնքան նաեւ մեր մէջ, կեանքը յատկանշող շարժման մէջ է: Առանց այդ շարժումին գեղեցկութիւն ըսուած բանը գոյութիւն չի կրնար ունենալ, որովհետեւ գեղեցկութիւնը ընթացքին, լինելութեան մէջն է. եւ հոն ուր լինելութիւն չկայ, հոն ուր մեռելութիւն է այնտեղ կեանքի գեղեցկութիւն չկայ: Եւ կեանքը ինք տեսական ընթացք եւ տեսական լինելութիւն է:

Այդ ընթացքին վրայ եթէ երբեմն կանգ առնելով մտածենք մեր կեանքի իւրաքանչիւր երեսին մասին, եթէ, օրինակ, փորձի համար, սա պահուն կենանք եւ մտածենք, թէ ի՞նչ արարքի վրայ ենք, ի՞նչ կ'ընենք եւ ինչո՞ւ կ'ընենք, ի՞նչն է որ կը պայմանաւորէ մեր արարքը, ի՞նչն է որ կը պայմանաւորէ մեր քայլերը, բնականաբար նաեւ կ'անցնինք հարցնելու, թէ ինչո՞ւ կ'ապրինք, ինչո՞ւ կը շարժինք, ինչո՞ւ կ'ընենք. ուրկէ՞ կու գանք, ի՞նչ է նպատակը եւ ի՞նչ է իմաստը այս բոլորին, եւ ի վերջոյ այս բոլորը, կեանքը ինք, մեզ ո՞ւր կ'առաջնորդեն: Այլ խօսքով, կը սկսինք մեր գոյութեան իմաստը փնտռել եւ կը փորձենք կեանքին մէջ մեր տեղը եւ մեզի սահմանուած դերը հասկնալ, որովհետեւ, որեւէ գոյութիւն իմաստալից եւ իմաստաւորուած կ'ըլլայ երբ գիտակցի իր դերին եւ իր դերին մէջ ըլլայ: Մարդկային կեանքը մասնաւորապէս, ի տարբերութեան բնութեան եւ աշխարհի միւս կենդանութեանց, կը յատկանշուի իր գիտակցութեամբ: Եւ գիտակցից մարդն է, գիտակցից կեանքն է միայն, որ իսկական կեանքը կը դառնայ: Եւ, ահա՛, առաքեալը կը հրաւիրէ որ մենք գիտակցինք, թէ կեանք մը ունինք, կեանք մը, որ ոչ միայն այս աշխարհով պայմանաւոր է, այլ այս աշխարհէն անդին կ'երթայ: Բայց անդին հասնելու համար նախ այստեղ ինքզինք պէտք է ըլլայ: Այս գիտակցութիւնը ունեցող եւ այդ գիտակցութեամբ վարուող մարդը ոչ միայն իր կեանքը իմաստաւորուած կը գտնէ, այլեւ կեանքին մէջ հաճոյք եւ գոհունակութիւն կ'ունենայ, որովհետեւ իր ամէն մէկ քայլին համար կը գիտակցի, թէ գիտակցաբար կը շարժի, կը գիտակցի, թէ պատասխանատու ծելով կը շարժի. գիտէ, թէ ինչո՞ւ կը շարժի. իր բոլոր արարքներուն մղումը իր մէջ կը տեսնէ իր գիտակցութենէն բխած. կը գիտնայ, թէ ինչ որ կ'ընէ՝ իր կամքին որպէս ծնունդ կ'ընէ, ոչ թէ ա-

կամայ, այլ կամաւոր կերպով. ոչ թէ անգիտակցից մղումով մը, այլ գիտակցից մղումով. ոչ թէ ուրիշին թելադրութեամբ, ուրիշին գծած ու սահմանած կերպով, այլ այնպէս, ինչպէս որ ինք կ'ուզէ ապրիլ: Եւ երբ մարդ իր կեանքին մէջ իր կամեցողութիւնը կը դնէ, իր կամքը եւ գիտակցութիւնը կը դնէ, այն ատեն այդ կեանքը կը դադրի «որեւէ» կեանք ըլլալէ եւ կը դառնայ սեփական, իրմով, իր սեփական կամքով եւ ոյժերով իրագործուած կեանքը, որով նաեւ գոհունակութեամբ եւ իմաստով լեցուած կեանքը կը դառնայ:

Մտածումներու այս շղթան մեզ կը հասցնէ շատ կարեւոր եզրակացութեան մը, թէ մարդու մը ապրած կեանքը եթէ երբեք ազատ կեանքը չէ՝ չի կրնար գիտակցից եւ լեցուն կեանքը ըլլալ: Կեանք մը այն ատեն միայն իսկապէս լեցուն եւ գիտակցուած, ամբողջական կեանքը կ'ըլլայ, երբ մարդ ինք ազատութիւն ունենայ ընտրելու: Քրիստոս եկաւ, ինչպէս առաքեալը կը յիշեցնէ, որպէսզի մարդիկ կեանք ունենան, գիտակցին, թէ կեանք ունին, ու գիտակցին նաեւ թէ Քրիստոս այդ կեանքով իրենց ազատութիւն մը բերաւ: Որովհետեւ երբ մարդիկ չունին ուրիշ ընտրութիւն, կը նշանակէ, թէ չունին ազատութիւն: Մինչ Քրիստոս այս կեանքի եւ յաւիտենական կեանքի մասին իր գիտութիւնը բերելով, մարդուն զգացուց թէ մարդը ինք կրնայ ընտրել կեանքին եւ մահուան միջեւ. թէ կրնայ ապրիլ այնպէս որ իր կեանքը «կեանքէ կեանք անցում» ըլլայ, կամ այնպէս որ իր կեանքը միայն այս աշխարհով սահմանափակուած եւ թէ՛ ինքն իր մէջ խեղդուած ու ինքն իրեն համար մեռած եւ թէ՛ Աստուծոյ համար մեռած կեանք չ'ըլլայ:

Այս ճշմարտութիւնները, քրիստոնէական կեանքի մասին բերուած այս ճշմարտութիւնները որքան անհատ մարդու կեանքին մէջ եւ անհատ մարդու կեանքին համար ճշմարտութիւն են, նոյնքան նաեւ ճշմարտութիւն են բոլոր ազգերու հաւաքական եւ ընդհանրական կեանքին համար: Մեր հաւաքական կեանքին մէջ ալ մենք առիթներ չենք ստեղծեր մենք մեզի մտածելու եւ գիտակցելու համար, թէ որքան հրաշալի կրնայ ըլլալ մեր կեանքը՝ եթէ երբեք զայն մեր ծեռքով շինենք, որքան գեղեցիկ կ'ըլլայ կեանքը՝ եթէ երբեք զայն լեցնենք, ոչ թէ ակամայ կերպով ապրելով, այլ կամաւոր եւ գիտակցից կերպով ապրելով այդ կեանքը, որքան լեցուն եւ իմաստաւորուած կրնայ ըլլալ մեր կեանքը՝ եթէ երբեք տեսնենք մեր հաւաքական դերը կեանքին մէջ, տեսնենք մեր ընդհանրական նպատակը կեանքին մէջ, եւ այդ նպատակին առաջնորդութեամբ ապրինք ազգային մեր կեանքը:

Այո՛, պէտք է երբեմն կենալ եւ մտածել. հարցնել բոլոր այդ ին-

չունեիրը եւ ինչպէսները կեանքին մասին, անգամ ընդհանրական մեր կեանքին մասին, եւ այն ատեն շատ մը պատասխաններ կը տրուին մեզի, մեր միտքին կը հանդիպին շատ մը ճշմարտութիւններ, որոնք մեր ժողովուրդի կեանքին առաջնորդ պէտք է ըլլան: Քննել թէ ուրկէ՞ կու գայ մեր կեանքը. քննել թէ ինչպէ՞ս կ'ըլլայ մեր կեանքը. թէ որմէ՞ կախում ունի եւ որմէ՞ կախում կրնայ ունենալ մեր կեանքը. եւ քննել թէ ի՞նչ բան կրնայ մեր կեանքը լեցնել ո՛չ միայն այսօրուան մեր ապրելուն համար, այլ մանաւանդ՝ մեր կեանքին յաւիտենականացման համար: Այն ատեն կրնանք գտնել մեր կեանքի իսկական գաղտնիքը: Եւ Քրիստոս եկաւ որ մենք այդ հարցադրումները կարենանք կատարել թէ մեր անհատական կեանքին եւ թէ՛ մեր ընդհանրական կեանքին համար:

Մասնաւորապէս կը մղուինք մտածելու մեր ազգի ընդհանրական գոյութեան եւ կեանքին մասին, որովհետեւ մենք իրաւունք չունինք մեր կեանքը հովերուն նետելու: Թիւով այնքան սահմանափակ, ոյժերով այնքան հաշուուած, մենք անպայմանօրէն պէտք է կարենանք մեր գոյութիւնը իմաստաւորել եւ լեցնել՝ ըլլայ սփիւռքեան պայմաններուն մէջ, ըլլայ հայրենի մեր հողերուն վրայ, որպէսզի մեր կեանքը նպատակ ունեցող եւ նպատակի ձգտող կեանք ըլլայ: Անցեալին ընդհանրապէս մեր ժողովուրդին կեանքը լեցուն եղաւ միշտ այն գիտակցութեամբ, որ իր գոյութեան արմատները կը կապէր իր գոյութեան պատճառներուն: Մենք միշտ ալ գիտակից եղանք այն իրականութեան, որ մեր գոյութիւնը կրնար ապահովել այն ազատութիւնը, զոր ընտրեցինք միշտ մեր պատմութեան մէջ եւ որուն կարգած մնալ գիտցանք Հայկի օրերէն մինչեւ Արտաւազդի օրերը, Տրդատէն մինչեւ Վարդան, Վահաններէն մինչեւ Ղաւիթ Բէկ, Հայ Յեղափոխութեան խոնարհ ու մեծ հերոսներէն մինչեւ հայրենի մեր աշխարհի անկախութեան ստեղծումին համար ինկած բոլոր տեսակի հերոսները, թէ՛ մեծ եւ թէ՛ խոնարհ, թէ՛ անուանի եւ թէ՛ անանուն բոլոր հերոսները, որոնք ազատութեան այդ ճանապարհին գիտցան գիտակցութեամբ լարել իրենց կեանքը՝ իրենք զիրենք տալու եւ իրենց մով ընդհանրական-ազգային մեր կեանքը իմաստաւորելու համար: Որովհետեւ անոնք գիտակցեցան քրիստոսահիմն ճշմարտութեան, թէ իրաւ կեանքը գիտակից կեանքն է, եւ գիտակից կեանքը՝ միայն ազատ կեանքը կրնայ ըլլալ մարդուն համար: Եւ այդ ազատութիւնը մեզի կտակ թողուցին: Բայց մենք եղանք Սփիւռք. եւ Սփիւռքի պայմանները տարբեր բան պարտադրեցին մեզի:

Հաւանաբար գիտէք պատմութիւնը այն թռչնակին, որ մահու չափ վիրաւորուած, ինկած, մարդու մը ձեռքով խնամուեցաւ, կ'ըսուի:

Եւ երբ գտաւ իր առողջութիւնը ըսաւ մարդուն. «Քեզի կը պարտիմ կեանքս. ըսէ՛, ի՞նչ տամ քեզի»: Մարդն ըսաւ. «Թեւերդ կ'ուզեմ»: Ու թռչունը պատասխանեց. «Ո՛չ, եթէ կ'ուզես կեանքս առ, որովհետեւ առանց թռչելու ինծի համար կեանք գոյութիւն չունի»: Երէկ, երբ Ապրիլեան եղեռնով արմատախիլ նետուեցանք աշխարհի չորս ծագերուն, վիրաւոր թռչուններ էինք մենք, մահուան չափ ծանր վիրաւորուած: Եւ մեր շրջապատի ժողովուրդներն ու բոլոր տեսակի բարեսիրական հաստատութիւնները եկան մեզի դեղ տալու, մեզի տեղ տալու, մեզի հաց տալու, մեզի գանձ տալու, եւ այդ բոլորով մենք կրկին ոգի առինք, մեր վերքերը դարմանեցինք եւ մեր կեանքը նորոգեցինք: Բայց ատիկա չի նշանակեր, թէ այն երկիրները, որոնք մեզի հաց եւ տեղ տուին, որ այն երկիրները, որոնք մեզ վերականգնեցին մեր կեանքին մէջ իրաւունք ունին մեր թեւերը ուզելու մեզմէ, մեր ազատութիւնը ուզելու մեզմէ: Մենք առանց մեր թեւերուն պէտք չունինք կեանքին: Մեզի համար կեանքը գիտակից մեր կեանքն է, այն գիտակից կեանքը, որ միայն մեր ազատութեան ձգտող կեանքը կրնայ ըլլալ:

Անցեալին եթէ ազատութիւն կտակուեցաւ մեզի եւ ազատութիւն ունեցանք երբեմն մեր կեանքի հորիզոնին, ունեցանք որովհետեւ այդ գիտակցութիւնը չպակսեցաւ մեզի: Այսօր աշխարհի չորս ծագերուն այնքան ճոխութիւն ու հարստութիւն ունինք մեր կեանքին մէջ, այնքան բաներով լեցուցած ենք մեր կեանքը, եւ պայքարի դաշտեր չկան: Բայց պէտք է գիտնանք ու չմոռնանք բնաւ, որ մեր հանգստութեան իսկ պայմաններուն մէջ մարդիկ մեզի ուղղուած հրաւեր ունին միշտ, որ մեր թեւերը իրենց տանք փոխան այն բոլոր հանգստութիւններուն ու առաւելութիւններուն, որ իրենք կ'ընծեռեն մեզի: Պայքարը հիմա մեր հոգիներուն մէջ է, ու մարտահրաւերը մեր ներսիդին կը կարդացուի եւ ո՛չ թէ աշխարհի բեմերէն. պատերազմի դաշտերէն հեռու ենք, բայց մեր կեանքը ներքին պատերազմներու հանդիսարան է: Եւ որովհետեւ յաճախ մտածողութեան ու գիտակցութեան պակասը կ'ունենանք թուլութիւնը կը յաղթէ մեզի, կը տկարացնէ, կը մղուինք յանձնելու մեր զէնքերը, յանձնելու նոյնիսկ մեր ազատութիւնները բոլոր անոնց, որոնք կու գան քաղցրապատիր բարեկամութեամբ, շողոմ շոյանքով, կեղծանոյշ ժպիտներով ու մեղրահամ խօսքերով մեզմէ ուզելու խօսքի եւ շարժումի մեր ազատութիւնը, մեր թեւերը:

Բայց այսօր գիտակցինք դարձեալ, որ մենք կոչուած ենք յաւիտենական կեանքի. թէ որպէս ժողովուրդ՝ մենք յաւիտենական կեանքի՝ կոչուած ենք, եւ յաւիտենական կեանքին կարելի չէ հասնիլ

ստրկութեան միջոցով:

Կեանքին մէջ հացի եւ դրամի ստրկութիւնը աւելի մեծ ստրկութիւն է, քան այն բոլոր տեսակի ստրկութիւնները, որոնք շղթաներով կու գան:

Թոյլ մի տաք, ժողովուրդ, որ մարդիկ ձեզ իրենց շահով կապեն ու կաշկանդեն եւ ձեր ազատութիւնները գնեն՝ այդպիսով ձեր ինքնութիւնը գնելով: Ձեր ազատութիւնը ձեր ինքնութիւնն է: Մարդն իր ազատութեամբ եւ ազատութեան իր յատկանիշով է որ մարդ է, եւ կը դադրի իր մարդկութենէն այն իսկ վայրկեանին երբ իր մէջ կը պակասի ազատութեան կեանքով ապրելու իր ձգտումը:

Մեր մէջ այդ ձգտումը կայ եւ կը մնայ: Սակայն Քրիստոսի պատուիրանը նոր էջ կը բանայ միշտ մեզի համար՝ յաւիտենական կեանքի տեսիլքը ընդմիշտ մեր միտքերուն մէջ դրոշմելով, որովհետեւ մենք պէտք է հասնինք այն նպատակին ու երագին, եւ պէտք է ստանձնենք այն դերը, որ Աստուծոյ կողմէ տրուած է, Աստուծոյ կողմէ վերապահուած է մեզի մարդկութեան մէջ, ժողովուրդներու ընտանիքին մէջ ունենալու: Եւ այդ դերը մենք կրնանք ունենալ՝ գիտակցելով միայն, թէ մեզի կեանք վստահուած է:

«Ասիկա կը գրեն ձեզի, որպէսզի գիտակցիք, թէ յաւիտենական կեանք ունիք», կ'ըսէր առաքեալը: Եւ ասոնք բոլորը կ'ըսուին, ժողովուրդ հայոց, որպէսզի գիտակցինք, թէ յաւիտենական կեանք ունինք եթէ այդ գիտակցութեամբ ապրինք, եթէ այդ գիտակցութեամբ լարուինք եւ այդ գիտակցութեամբ պայքարինք՝ նոյնինքն մեր կեանքը ձեռք բերելու համար, մեր յաւիտենականութիւնը շահելու համար:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՍՐԲՈՒԹԻՒՆ

Երէկ, Շաբաթ 2 Նոյեմբերին, Հայաստանեայց Եկեղեցին ամենուրեք տօնակատարեց յիշատակը «Ամենայն Սրբոց», հին եւ նոր, յայտնի եւ անյայտ բոլոր սուրբերուն: Մասնաւոր սուրբի մը կամ մեզի ծանօթ սուրբերուն տօնը չէր միայն անիկա, այլ մասնաւորաբար անոնց, որոնք այս կեանքին մէջ, բայց այս աշխարհին **անծանօթ** սուրբեր եղած են եւ ուստի նաեւ անոնց յիշատակը պաշտօնապէս չէ հռչակուած Եկեղեցոյ կողմէ: Եկեղեցին, եւ մասնաւորապէս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին սուրբերու իր դասին մէջ առած է անոնք միայն, որոնք առարկայ եղած են ժողովուրդի յարգանքին ու բարեպաշտութեան, այլ խօսքով ժողովուրդն է որ ընտրած է իր սուրբերը եւ Եկեղեցին զանոնք վաւերացուցած ու հռչակած է՝ քննել է ետք անոնց անձին ու գործին մանրամասնութիւնները եւ ժողովրդական յարգանքին ստուգութիւնն ու իրաւացիութիւնը:

«Ամենայն Սրբոց» տօնը տիեզերական իմաստով տօնակատարումն է բոլոր սուրբերուն, որովհետեւ հոն տեղ ունին Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցիին եւ տեղական անհատ Եկեղեցիներու բոլոր **վաւերական հերոսները**՝ հաւատքի վկաները, յոյսի խարիսխները, սիրոյ պատարագները: Այս տօնին ընդմէջէն մեր միտքի ասպարէզը կը կոչուին բոլոր **ախոյեանները առաքինութեան** խոնարհութեան անթառամ ծաղիկները, եղբայրասիրութեան քաղցրահամ պտուղները, հեզութեան անխառն քաղցրութիւնը, աշխատասիրութեան բեղմնաւոր լիութիւնը, ողորմածութեան գթառատ պարգեւները, չափաւորութեան եւ զգաստութեան կենդանի բազկերակները եւ ողջախոհութեան արծանացած փորձաքարերը: Անոնք, առաքեալին բացատրութեամբ, հաւատքի եւ սիրոյ զրահը հագած եւ փրկութեան յոյսի սաղաւարտ իրենց գլխուն ամրացուցած՝ եղան չարին եւ չար մտւորութեանց դէմ՝ բարի գէնքերով պայքարողներ: Հպարտութեան

պատուանդանները խորտակեցին խոնարհության վրայ կանգնեցնելով առաքինության շէնքը. նախանձի դառնագոյն մաղձը քաղցրացուցին աստուածային սիրոյ զօրութեամբ: Բարկութեան ահեղ բոցերը մարեցին շնորհքի քաղցրութեան ցօղով: Ծուլութեան խոպան անդաստանը ոռոգեցին բարեգործութեան հոսանուտ վտակներով: Ազահութեան եւ մամոնայի անյագ կիրքը յագեցուցին երկնային մանանայով: Որկրամոլութեան անսանձ երկվարը սանձեցին աստուածային պատուիրաններու երասանակով, եւ բղջախոհութեան ու ցանկասիրութեան վայրի տունկերը յօտելով պատուաստեցին ողջախոհութեան եւ զգաստութեան ընտանի պատուաստներով:

Բայց ներբողական այս տողերը ամէն բան չեն ըսեր սուրբերուն մասին: Արդի մարդը հետաքրքրող գլխաւոր հարցը հետեւեալն է. - Ի՞նչ է սրբութիւնը, եւ նիւթի ու նիւթականութեան պաշտումի այս դարուն կարելի՞ է խօսիլ անոր մասին եւ կամ հասնիլ անոր:

Բոլորս ալ գիտենք որ մարդս մարմնաւոր եւ հոգեւոր երկեակ իր հանգամանքով իր մէջ ունի յաճախ հակասական տրամադրութիւններ, հոգեվիճակներ. որովհետեւ մարմինն ունի իր բնական բազմակողմանի ախորժակներն ու ցանկութիւնները, իսկ միւս կողմէ՝ միտքն ու հոգին ունին իրենց յատուկ ախորժակներն ու ձգտումները: Իրարու հակադիր այս երկու երեսները, յաճախ իրարու հակամարտ, եւ սակայն երկուքն ալ նոյնքան կարեւոր են մարդուն ամբողջականութիւնը երեւան բերելու տեսակէտէն: Իսկական մարդը ան է, որ կը յաջողի որոշ իմաստով հաւասարակշռել մարմնական բնագոյական պահանջները զանոնք բաւարարելով տրամաբանական, կանոնաւոր ձեւով ու չափաւորապէս: Այս հաւասարակշռութիւնը պահելը դիրին չէ անշուշտ: Մարդուն աճման պարագաները, մտաւոր զարգացման մակարդակը եւ հոգեկան աշխարհին համեմատական հարստութիւնը մարդուն մէջ ի յայտ կը բերեն տարբեր կեցուածքներ ոմանք դէպի մարմնական ցանկութիւնները հակող, եւ ոմանք դէպի մտաւորն ու հոգեկանը բարձրացող: Առաջինները ընդհանրապէս նուազ գիտակցութեան, նեղ հետաքրքրութեանց եւ միակողմանի դաստիարակութեան արդիւնք են: Հոգեկան ձգտումները արդիւնք են գիտակցականութեան, մտաւոր մշակումի, գաղափարական լայն հորիզոնի եւ հոգեկան-յուզական աշխարհի հարստութեան:

Առ Աստուած բարձրանալու միակ միջոցը մարդուն համար միտքն է, որ կրնայ իր հոգեկան ձգտումներն ըմբռնել, վերլուծել եւ արտայայտել, որովհետեւ «հոգի է Աստուած», եւ մարդը, որ պատկերը կամ նմանութիւնն է Անոր, բնականաբար, չի կրնար ըմբռնել կամ

զգալ զԱստուած **թանձրացեալ նիւթով**, այսինքն՝ մարմինով, այլ **հոգիացեալ նիւթով**, այսինքն՝ միտքով: Եւ սուրբերը անոնք են, որոնք իրենց միտքն ընծայած են Աստուծոյ իրենց կեանքին մէջ առաւելաբար տեղ տալով հոգեկան եւ մտաւոր ձգտումներուն՝ մարմնականը պահելով միշտ երկրորդական գիծի վրայ:

Արդ, **ի՞նչ է սրբութիւնը**: Առաջին իր իմաստով անիկա կը նշանակէ մաքրութիւն, պարզութիւն, զերծ ամէն տեսակի կեղծիքէ, խորամանկութենէ ու խաբէութենէ. այլ խօսքով Աստուծոյ եւ մարդոց հանդէպ սրտբաց եւ անկեղծ կեցուածք մը: Ասոր կու գայ աւելնալու երկրորդ իմաստ մը, որով սրբութիւնը կը հասկցուի որպէս յատուկ հոգեվիճակ մը, ուր մարդը ընկալելով Աստուծոյ շնորհքը, աստուածային պատուիրանները գործնականօրէն կը թարգմանէ իր կեանքին մէջ:

Բայց սխալ չհասկնալու համար այս մէկը ճշդենք: Յաճախ կը փորձուինք մտածել, թէ սուրբերը մեզմէ տարբեր եւ մեր կարողութիւններէն վեր կարողութեամբ օժտուած մարդիկ եղած ըլլալու են: Յաճախ կը փորձուինք մտածել, թէ մենք մեղաւորներս չենք կրնար անոնց նմանելու մասին իսկ մտածել, քանի մեր ամէնօրեայ կեանքին մէջ ներկայ են փորձութիւնները, գայթակղութիւնները, սայթաքումները: Սակայն սխալ պիտի ըլլար այդպէս մտածելը: Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետը իր «Ընդհանրական Թուղթ»ին մէջ խօսելով «սուրբ»ի հասկացութեան մասին, կը բացատրէ, թէ երկու տեսակի սուրբեր կան. անոնք, որոնք փորձութեանց չեն ենթարկուիր, եւ հետեւաբար չեն կարօտիր որեւէ բալասանի, եւ անոնք, որոնք միշտ փորձութեանց ենթարկուելով հանդերձ, անդադար կը ձգնին չար նետերէն ստացած իրենց վէրքերը բուժելու ապաշխարութեան դէղով եւ յետագայ փորձութեանց դէմ կը զինուին աղօթքով, պահեցողութեամբ եւ ինքզինքնին տիրապետելով: «Արդ, ով որ այս ընթացքին մէջ է, առաջինին ըլլայ թէ երկրորդին, ան է սուրբը եւ առաքելական աստիճանի արժանաւոր անձը»:

Այս բացատրութեամբ՝ երկու վիճակներ կ'ունենանք մեր դիմաց պարզուած: Առաջինը սրբութեան որոշ չափով բիրեղացած վիճակն է, յատուկ Աստուծոյ կողմէ յատկապէս **ընտրուած** մարդոց, որոնք լեցուած նաեւ աստուածային հրաշագործ ոյժով՝ կեանքին մէջ աստուածային զօրութեան թարգմանը կը հանդիսանան: Իսկ երկրորդը սրբութեան պարզագոյն վիճակն է, այսինքն՝ հաւատացեալ մարդու կեանքին սովորական ընթացքը, որ սակայն նուիրուած է աստուածային պատուիրաններու գործադրութեան եւ կը ձգտի ըլլալ առաքինութեանց հանդիսարան: Եթէ արագ ակնարկ մը նետելու ըլլանք

սրբոց վարքերուն ու Յայսմաւորքներուն վրայ, պիտի տեսնենք որ շատ աւելի ստուար է թիւը այս վերջին կերպին մէջ եղող սուրբերուն, քան առաջինին:

Այս բոլորը կ'ըսենք շեշտելու համար թէ սրբութիւնը **անպայմանօրէն բացառիկ վիճակ մը չէ** մարդուն մէջ, այլ միայն հոգեւոր կեանքի ձեւ մը, որ կը ձգտի Քրիստոսի անձին ու կեանքին նմանութիւնը բերել իր անձին վրայ:

Սրբութիւնը աւելի ճիշդ հասկնալու համար կրնանք քանի մը կէտեր եւս յստակացնել մեր միտքերուն մէջ:

1) Ամէն բանէ առաջ, ըսինք, թէ սրբութիւնը **որոշ կեցուածք մը** ցոյց կու տայ մարդուն մէջ: Ասիկա կը նշանակէ, թէ անիկա գոյութիւն չունի մարդ անհատէն դուրս որպէս ինքնանկախ գոյութիւն, եւ հետեւաբար, զայն պէտք չէ երեւակայենք կամ հասկնանք որպէս դուրսէն գալիք բան մը, եւ ոչ ալ փնտռենք զայն կեանքն ապրելու արտաքին ձեւերու կամ կաղապարներու մէջ: Աստուածային պատուիրաններու հասկացողութենէն թելադրուած կեցուածք մը եւ որդեգրուած գործելակերպ մըն է անիկա շնորհքի ազատութեամբ իմաստաւորուող, եւ ոչ օրէնքի զօրութեամբ:

2) Սրբութիւնը մարդուն մէջ **ամլութեան վիճակ մը չէ**: Ասով կը հասկնանք այն, թէ սրբութեան տեսչն ունեցող մարդը պէտք չունի հրաժարելու անպայմանօրէն բոլոր տեսակի գործերէ եւ զբաղումներէ, որոնք զինք կը կապեն աշխարհի ընդհանուր հոսանքին եւ կեանքի գործօն ընթացքին. այլ ընդհակառակը, անիկա պէտք է պահէ իր կապերն աշխարհին հետ, եւ ուրիշներու հետ ունեցած իր յարաբերութեան մէջ ցոյց տայ այն առաքինութիւններն ու յատկանիշները, որոնք բնական արտացոլացումը պիտի ըլլան իր մաքուր ներաշխարհին, սրբուած հոգիին: Ամլութեան վիճակ մը ըլլալէ հեռու՝ անիկա ծառայութեան, **անընդհատ ծառայութեան վիճակ մըն է**, ուր մարդ իր բոլոր ոյժերը, իր բոլոր շնորհքները, առաւելութիւնները, ի վերջոյ ինքզինքն ամբողջ պիտի տրամադրէ Աստուծոյ եւ Անոր գործին: Այս կողմէ յատկանշական է դիտել, որ Եկեղեցիներու կեանքին մէջ ամէնէն աւելի մեծ սուրբերը եղած են անոնք, որոնք Եկեղեցւոյ ծառայութեան նուիրուած են ամբողջութեամբ, քան իրենց մենարանին մէջ ձգնող միայնակեացները: Ասոր համոզուելու համար կը բաւէ յիշել քանի մը գլխաւոր անուններ Ընդհանուր Եկեղեցւոյ եւ մեր Եկեղեցւոյ սուրբերու փաղանգէն, ինչպէս Յովհան Ոսկեբերան, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Լուսաւորիչ, Մեծն Ներսէս, Սահակ եւ Մեսրոպ, Յովհան Օծնեցի, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհալի, Գրիգոր Տաթեւացի, եւայլն: Հետեւաբար, կրնանք ըսել, **սրբութիւնը**

կը գտնուի կեանքի՝ ընդմէջէն, ինչպէս ոսկիին ինքնութիւնը կրակին ընդմէջէն:

3) Սրբութիւնը **կատարելութեան կայուն վիճակ մը չէ**, այլ ժամանակի ընթացքին **հետզհետէ կազմաւորուող** վիճակ մըն է: Անիկա չի յայտնուիր յանկարծ անկէ ետք մնալու համար անհատին կեանքին մէջ որպէս անջինջ պատկեր, այլ ի յայտ կու գայ հետզհետէ զարգանալով ու խորանալով, կեանքի զանազան փորձութեանց դիմաց ինքզինքը հաստատելով եւ իր ամբողջութեան ապահովելով:

Այս բացատրութեամբ բաւականանալով, կրնանք ընդհանուր ձեւով մը եզրակացնել, թէ՝

Առաջին **ներկայ մարդուն համար եւս սրբութիւնը կարելի է**: Կրնայ ըլլալ որ անցեալին հետ համեմատած, այսօրուան մեր կեանքը ներկայացնէ շատ աւելի մեծ դժուարութիւններ ու փորձութիւններ: Նուազ կամ առաւել անոնք ժամանակին ալ գոյութիւն ունէին: Կը բաւէ, որ մարդ զինուած ըլլայ անոնց դէմ, եւ նոյնիսկ վիրաւորուելու պարագային փորձութեան նիզակներէն կարենայ շուտով ինքզինք բժշկել եւ ուղղել:

Երկրորդ **մեղաւորութիւնը արգելք մը չէ սրբութեան համար**: Մարդը, իր նիւթեղէն բնութեամբ, մեղանշական արարած մըն է. եւ սակայն մարդուն մէջ Աստուծոյ Շունչը միախառնուած է նիւթին հետ զայն շնչաւորելու եւ անոր մեռեալ տարրին կենդանութիւն տալու համար: Ինչպէս որ թանձր եւ անթափանց աւազը ուրիշ նիւթերու հետ միախառնուելով կը փոխակերպուի թափանցիկ, մաքուր ապակիի, այնպէս ալ մեղանշական մարմինը կրնայ փոխակերպուիլ աստուածային սուրբ անօթի մարդուն կողմէ գիտակցական անդրակերպումով: Այս իմաստով, սրբութեան վիճակը մարդուն մէջ այն վիճակն է, ուր մարդը կը վերածուի թափանցիկ էութեան. եւ երբ լոյսին բերենք զայն՝ անոր ընդմէջէն կը տեսնենք ճաճանչները աստուածատուր առաքինութիւններուն, ինչպէս յղուած ապակիի փայլփլումը՝ լոյսի խաղերուն տակ:

Մարդուն եւ սրբութեան այդ վիճակին մէջ կայ **մարդուն գործը**: Ու երբ մարդ իր կեանքով իրականութեան վերածէ ծառայական այդ գործը, այն ատեն կրնայ ըսել առաքեալին հետ. «Բարի պատերազմը մղեցի, կեանքիս ընթացքը աւարտեցի, հաւատքը պահեցի: Ասկէ ետք ինձի կը մնայ միայն սպասել արդարութեան պսակին, որ Տէրը արդար Դատաւորը, իբրեւ հատուցում՝ ինձի պիտի տայ Դատաստանի Օրը» (Բ. Տմ 4.7-8)

ՀՈԳԵՒՈՐ ՏԱՊԱՆԸ՝ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻՉ

«Որ առաւել խորին խորհրդով խնդայ՝ քան զԱրարատեանն բարձր Մասիս, քանզի ի նմա հանգեաւ սուրբն Գրիգորիս, տապանն ապրեցուցիչ ի հոսանաց մեղաց հայաստան ազանց, որով փրկինք միշտ ի ջուրց հոսանաց» (Շարական)

Այսօրուան ուխտի մեր տօնի նախօրեակին, երէկ, Հայաստանեայց Առաքելական մեր Եկեղեցին տօնակատարեց յիշատակը իր կազմակերպիչ մեծ Սուրբին եւ հաւատքը վերանորոգող մեծ Հայրապետին եւ Հօրը՝ Գրիգոր Լուսաւորիչին, եւ օրինալից այդ յիշատակին պանծացունը կատարուեցաւ բոլոր եկեղեցիներուն մէջ, ամէնուրեք երգելով այն բառերը, որոնք այժմ իբրեւ խորհրդածութեան սկիզբ կ'առնենք, եւ ուր Յովհաննէս Երզնկացի Վարդապետը օրինակ առնելով Ս. Գրիգորի չարչարալից կեանքը եւ մանաւանդ չարչարանքներու այդ կեանքը փակող ճգնութեան այն օրերը, որ Մեծ Սուրբը ունեցաւ Սեպուհ լեռան կատարին, այդ լեռը կը համեմատէ Արարատ բարձր լեռան հետ եւ սա բառերով կը կազմէ զուգահեռը. «Արդարեւ,- կ'ըսէ,- Սեպուհ լեռը աւելի մեծ խորհուրդով մըն է որ կ'ուրախանայ, քան Արարատեան բարձր Մասիսը, որովհետեւ եթէ Արարատի բարձունքին նստաւ տապանը Նոյի, Սեպուհ լեռան բարձրունքին էր որ հանգչեցաւ «Հայաստան Ազգ»-ը՝ հայ ազգը իր մեղքերէն փրկող փրկարար տապանը՝ Ս. Գրիգորը, որով մենք տեւականօրէն կը փրկուինք մեղքի ջուրերու հոսանքներէն»:

Արդեօ՞ք միայն գեղեցիկ բանաստեղծութիւն է ասիկա. արդեօ՞ք միայն գեղեցիկ զգացումներ են արտայայտուած այս տողերով, որ Եկեղեցւոյ ներշնչեալ վարդապետը արտաբերեց օր մը անով խտացելու համար ո՛չ միայն իր սեփական ապրումները, այլ նաեւ

հաւատքը իր հայրերուն, հաւատքը մշտարձարձ, որ չորրորդ դարու սկիզբէն մինչեւ իր ժամանակը՝ տասներեքերորդ դարուն վերջը, իրեն հասած էր կենդանի ապրումով, եւ որուն ընդմէջէն ամբողջ ժողովուրդ մը, ամբողջ ազգ մը եւ Եկեղեցի մը, հաւատքի գերագոյն մէկ ճշմարտութիւնը կը տեսնէին աստուածային իբրեւ բացառիկ յայտնութիւն իրենց երկրին եւ մեր ժողովուրդի կեանքին մէջ յայտնուած:

Սուրբ մը, մարդ մը՝ Ս. Գրիգոր, պատմութեան ճակատագրական մէկ ժամանակաշրջանին յայտնուած մեր կեանքի հորիզոնին, որ սակայն չեղաւ բազմաթիւ ուրիշ սուրբերու պէս, որոնք իրենց կեանքի օրինակը միայն կտակեցին իրենց շուրջիններուն եւ հաւատքի կայծը արձարձ պահեցին իրենց օրինակին նայողներու սիրտին ու միտքին մէջ. այլ եղաւ անոնցմէ, որոնք ժողովուրդի մը կեանքին վրայ հորիզոն կը կազմեն: Եւ Գրիգոր Լուսաւորիչ այդպիսին եղաւ, որովհետեւ երրորդ դարու վերջաւորութեան եւ չորրորդ դարու սկզբնաւորութեան եղաւ այն տիպարը, որ մեր ժողովուրդի Արարատացած կեանքի բարձունքին պիտի գար հանգչելու իբրեւ նոր եւ փրկարար տապան, ընդմիշտ մնալու համար մեր հաւատքի բարձրունքին իբրեւ գերագոյն օրինակ, իբրեւ փրկութեան առաջնորդ եւ իբրեւ մշտաբարբառ Աւետարան, որով մենք՝ հաւատքի աշակերտներս ծունկի պիտի գայինք այս մեծ Սուրբին առջեւ, Քրիստոսի կեանքը, Քրիստոսի օրինակը եւ Քրիստոսի հետեւորդութեան կանչը լսելու համար անոր ընդմէջէն:

Կեանք մը, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչինը, որ գիտենք թէ ինչպէ՛ս ծնունդ առաւ մութին մէջ, անծանօթին մէջ: Խաւարէն, եւ նոյնիսկ մինչեւ Խոր Վիրապէն դուրս գալը՝ անծանօթ մըն էր ինք. անծանօթ մը, որուն հայրը սակայն մեծ ծանօթ մը եղած էր անցեալին մեր պատմութեան մէջ. ծանօթ մը, սակայն, որուն անունը անէծքի համազօր պիտի ըլլար անոր համար, որ պիտի գար իբրեւ եղբայրասպան բազուկ հայոց Արշակունեան գահին բազմող վեհափառ թագաւորը դաւադրական սպանութեամբ մը գահէն վար առնելու համար:

Գիտէք թէ ինչպէ՛ս Գրիգոր Լուսաւորիչի հայրը՝ Անակ, Արտաշիր Սասանեանի եւ Սասանեան թագաւորներու դրդումով եկաւ Հայաստան Աշխարհ՝ Արշակունեաց գահը տապալելու: Որպէս հեռաւոր հօրեղբօրորդի Խոսրով Բ. թագաւորին, Անակ պիտի գար հայոց պալատին մէջ ապաստան գտնելու եւ ժամանակ մը ետք իր դաւադիր գործին ընթացք տալով՝ որսի օր մը պիտի սպաննէր թագաւորը՝ Հայաստան Աշխարհը ամբողջապէս ենթարկելով պարսկական գահու տիրապետութեան: Եւ միայն աստուածային տնօրինութեամբ էր, որ հայ գահուն ներկայացուցիչը՝ պատանին Տրդատ կը փախցուէր

Հռոմէական Աշխարհ, ինչպէս աստուածային նախախնամութեամբ պիտի փախցուէր նաեւ Անակ Պարթեւի որդին Գրիգորը, վրիժառու հայ բազուկներու ձեռքէն, եւ պիտի տարուէր յունական ուրիշ մէկ աշխարհ Կապադովկեան Կեսարիա այնտեղ աճելու համար քրիստոնէական հաւատքով:

Տարիներ ետք, երբ Տրդատ օտար աշխարհի մէջ սնած զինուորական վարժութիւններով եւ պատերազմներու մէջ ինքզինքը յաղթական ցուցաբերած իբրեւ զօրավար հռոմէական օգնութեամբ պիտի գար վերստին նուաճելու իր հայրենի աշխարհը, 287 թուականին, իր ծառայութեան շարքերուն մէջ պիտի գտնուէր նաեւ Գրիգորը: Սա, զհտնալով հանդերձ որ Տրդատի հայրը եւ անոր սերունդը իր հօր ձեռքով սպաննուած են, պիտի փորձէր քրիստոնէական իր ըմբռնումով քաւել իր ծնողքին մեղքը լուռ, խոնարհ ու նուիրուած ծառայութեամբ մը իր թագաւորին, վստահ ըլլալով որ իր թագաւորին անձին ընդմէջէն իր ծառայութիւնները պիտի մատուցէ նաեւ իր ժողովուրդին:

Այդպէս եկան, մտան Հայաստան Աշխարհ, եւ զհտէք թէ ինչպէս Տրդատի թագաւորութեան առաջին իսկ օրերէն, երբ Տրդատ, տակաւին հեթանոս, ուզեց իր յաղթանակներուն համար գոհութիւն մատուցել իրենց ծանօթ աստուածներուն, գնաց Եկեղեց գաւառ, եւ Եկեղեց գաւառի Երիզա աւանը, այնտեղ գետեղուած Անահիտ աստուածուհիի մեծ մեհեանին մէջ յարգանք եւ շնորհակալութիւն մատուցելու, ուզեց նաեւ որ իր ամբողջ աւագանին, իր բոլոր ծառայողները եւ ամբողջ բանակը նոյն յարգանքը ընծայեն: Բացառութիւն կազմեց միայն Գրիգորը, եւ թագաւորը, Գրիգորի հանդէպ իր խոր սիրոյն համար, առաջին հերթին աչք գոցեց կարծէք: Բայց դիւական մոլորութեամբ, նոյն օրը երբ կը բազմէին խնձոյքի եւ զինին կը լեցնէր իր միտքը եւ սիրտը, զինովութան պահուն կը յիշէր, թէ իր սիրելի բարեկամը եւ ընկերը զոհ չմատուցեց աստուածներուն, Անահիտի. եւ կէս կատակ կէս շիտակ կը ստիպէր որ Գրիգոր նոյն այդ պահուն բարձրանայ, ծաղկահիւս պսակներ առնէ եւ երթայ Անահիտին պատիւ մատուցելու:

Եւ ահա, զինովութեան այդ պահուն սկիզբ առած այս ստիպումը կը վերածուէր հանգոյցի մը, որով սկիզբ պիտի առնէին Գրիգոր Լուսաւորիչի բազմաթիւ չարչարանքները, չարչարանքներ, որոնց շարքը չենք թուեր այստեղ, որոնց մանրամասնութիւնները կրնանք կարդալ որեւէ ամփոփ թէ լայն վարքագրութեան մէջ, բայց որոնց պատկերը, վստահ եմ, ամփոփ կերպով դրոշմուած է ձեզմէ իւրաքանչիւրին միտքին մէջ: Ատով Գրիգոր Լուսաւորիչ կը ներկայանայ

իբրեւ իրական հաւատքի մարտիկ մը Տրդատ թագաւորին դիմաց կանգնած, որ կ'ուզէ իր արքային, աւագանիին եւ ժողովուրդին վկայութիւն մը տալ իր անծով: Հոն կը ներկայանար արդէն խոստովանող այն վկան, այն սուրբը, որ իր հաւատքը կը պատմէր թագաւորին իւրաքանչիւր հարցումին դիմաց, ամէն մէկ չարչարանքէ ետք աւելի եւս զօրացած, ամէն մէկ չարչարանքէ ետք աւելի լայն կերպով բանալով աւետարանական ճշմարտութիւնները եւ ցոյց տալով թէ ինչպէս Աստուած զինք որպէս տկար մարմին, որպէս տկար մարդ այդ չարչարանքներուն մէջ կը գործածէր պատասխան տալու համար թէ Տրդատի եւ թէ հեթանոս աշխարհին:

Գրիգոր կը գիտակցէր թէ իրմով Աստուած բան մըն է որ կ'իրագործէ. եւ ճիշդ այստեղ մտածումի չորս երեսներ կը բացուին մեր առջեւ.

1) Աստուած յաճախ բացառիկ կերպով կը կանչէ մէկը, ժողովուրդի մը կեանքին ընդմէջէն, յատուկ դերով մը եւ յատուկ պաշտօնով:

Գրիգոր Լուսաւորիչ մէկն էր այն համեստ մարդոցմէ, որոնք քրիստոնէական սերմերը մանուկ տարիքէն առած էին իրենց անձին մէջ, եւ որոնց միակ տենչը՝ ինքնակատարելագործման խոնարհ եւ աստուածահաճոյ կեանք մը վարելն էր: Պարզ քրիստոնեայի կեանքը, առանց որեւէ յաւակնութիւններու: Բայց կու գայ վայրկեան մը, երբ Աստուած Իր կոչման ծայրը լսելի կը դարձնէ մարդոց կեանքին մէջ: Եւ եկած էր վայրկեանը, երբ Աստուած զգացուց Մեծ Սուրբին, թէ ինք մեծ վկայութեան մը կանչուած է ամբողջ ժողովուրդի մը կեանքին մէջ: Բայց կարելորը միայն Աստուծոյ կոչումը չէ. կարելորը նաեւ մարդոց գիտակցութիւնն է եւ ընդառաջումը: Այս պարագային Սուրբին գիտակցութիւնը, անդրադարձը, թէ այդ պահուն այն չարչարանքները որ կը կրէ եւ այն վկայութիւնը որ կու տայ միայն իր ծայրը չեն ներկայացներ, այլ՝ կը ներկայացնեն ծայրը Աստուծոյ: Այո՛, սուրբերուն գիտակցութիւնը, թէ այլեւս միայն իրենց կեանքը չէ որ կը ներկայացնեն, միայն իրենց գործերը չէ որ կ'արտայայտեն, այլ կը դառնան գործակից Աստուծոյ, եւ Աստուծոյ գործակցութեան մէջ աշխարհին կ'ընծայեն այն ինչ որ Աստուած կը պահանջէ, այդ ընծայումով տալով գերագոյն վկայութիւնը, որուն կոչուած են առաքելական ծայրով եւ որուն ահաւասիկ գիտակից արտայայտիչը կը դառնար Ս. Գրիգոր, Մեծ Լուսաւորիչը:

2) Սուրբերը Աստուծոյ պարզեւն են մարդկային մեր կեանքին մէջ, եւ իւրաքանչիւր ազգի կեանքին մէջ՝ յատուկ օրհնութիւն մը տալու համար Աստուծոյ կողմէ:

Մենք իբրև մարդ երբ կը նայինք մեզի նման մարդոց, անոնց մէջ կը տեսնենք միայն ինչ որ մեր բնութիւնը կը կազմէ եւ ոչ թէ մեզմէ տարբեր բան մը: Արդարեւ, մեզմէ իւրաքանչիւրը մարդ է առաւելագոյն չափով: Բայց յաճախ կը մոռնանք հաւատքի մեծագոյն ճշմարտութիւնը, թէ այն պահէն երբ Աստուծոյ հոգին կը լեցնէ մարդկային մեր ներաշխարհը, այնտեղ այլեւս նոր մարդ մըն է նստած, նոր մարդ մը, որ յատուկ դեր մը ունի մարդկային ընկերութեան, ժողովուրդներու կամ ազգի մը կեանքին մէջ:

Առհասարակ մենք կը մոռնանք դերը այն ընտրեալներուն, որոնց Աստուած յատուկ տեղ կը վերապահէ: Ակնարկով մը նայեցէ՛ք հաւատքի մեր կեանքի եւ վկայութեան ուղեցոյցին Աստուածաշունչ Մատեանին, այնտեղ պատկերուող օրինակներուն, ըլլայ նախաքրիստոնէական շրջանին եւ ըլլայ Քրիստոսէ ետք առաքեալներով բացուող ժամանակաշրջանին, եւ տեսէ՛ք թէ ինչպէ՛ս Աստուծոյ ամէն մէկ ընտրեալին ներկայութիւնը ժողովուրդի մը կամ հաւաքականութեան մը կեանքին մէջ՝ բացառիկ օրինութիւն մըն է Աստուծոյ կողմէ տրուած յատուկ դիտումով:

Սուրբերը պարզեւ են տրուած մեզի եւ բացառիկ այն մարդիկը, որ մենք կը կոչենք **հաւատքի ծնողներ**: Իսկապէս մեծագոյն պարզեւն են Աստուծոյ կողմէ մեզի տրուած, որպէսզի անով աղամական անէծքը քրիստոնէական օրինութեան վերափոխուի մեր կեանքին մէջ, եւ մեր կեանքը դառնայ պտղաբեր, դառնայ օրինալից, դառնայ վերափոխուած՝ Սուրբ Հոգիին պարզեւներով, որոնք այդ սուրբին միջնորդութեամբ կը թափին մեր կեանքին մէջ:

Մարկոսի Աւետարանը Քրիստոսի կատարածէն առաջ գալիք չար ժամանակներուն մասին խօսելով, կարեւոր ակնարկութիւն մը կ'ընէ սուրբերու կապակցութեամբ. «Եթէ Աստուած իր ընտրեալներուն համար այդ օրերուն թիւը նուազեցուցած չըլլար ոչ մէկը պիտի փրկուէր» (13.20): Ընտրեալներու ներկայութիւնը աշխարհի մէջ փրկառիթ այն ներկայութիւնն է, որուն համար Աստուած դատապարտութեան Իր Վճիռը յաճախ կը փոխէ մարդկային ընկերութեան համար: Եթէ երբեք չըլլային արդարները մեր կեանքին մէջ եւ մեր աշխարհին մէջ, շատ ո՛նց այս աշխարհը դատապարտութեան վիհին մէջ կորսուած կ'ըլլար: Բայց Իր արդարներուն սիրոյն, Իր ընտրեալներուն սիրոյն Աստուած կը համբերէ եւ կը գթայ, սպասելով որ անոնց միջնորդութեամբ եւ անոնց աղօթքով աշխարհի մէջ մարդիկ, նոր եւ նոր մարդիկ գան աւելնալու Իր ընտրեալներու շարքին եւ զԱստուած փառաւորողներու թիւն աւելնայ, ինչպէս կ'ըսէ Պօղոս Առաքեալ (Բ. Կր 1.11, 4.15):

3) Սուրբին, եւ այս պարագային Գրիգոր Լուսաւորիչի, չարչարանքները զուտ իր անծին վերաբերող եւ իր հոգեկան քաջութեան մասին վկայող չարչարանքներ չեն: **Ամէն մէկ սուրբի չարչարանք փրկագործական նշանակութիւն ունի**: Ինչպէս Քրիստոսի չարչարանքները միայն Իր անծին չէին վերաբերեր, միայն Աստուծոյ բացարձակ հաւատարմութեան վկայութիւն մը չէին, այլ՝ Քրիստոս Իր չարչարանքներով մարդոց մեղքերուն քաւութիւն կը բերէր, մեղքերու բեռներուն թեթեւութիւն կը բերէր, այնպէս եւս ամէն մէկ սուրբի չարչարանքները մասնակցութիւն են Քրիստոսի չարչարանքներուն եւ փրկագործական նշանակութիւն եւ արդիւնք ունին, որովհետեւ մեր մեղքի բեռները կը թեթեւցնեն: Նոյնինքն Գրիգոր Լուսաւորիչի ընծայուած շարականին նոյն հեղինակը կ'ըսէ. «Չպակասութիւն չարչարանաց Տեառն ի մարմնի քո կրեցեր». ո՛վ մեծ Սուրբը, Տիրոջ չարչարանքներուն պակասութիւնը քու մարմնիդ վրայ կրեցիր, քու մարմնիդ վրայ ամբողջացուցիր Տիրական չարչարանքները: Եւ նոյն շարականագիրը տակաւին յաջորդող տողերուն մէջ կը յիշէ նաեւ, թէ Աստուած Իր ընտրեալներուն չարչարանքները կը գործածէ՝ մեզի փրկութիւն պարզելու համար:

Սոսկական մտածումներ չեն, դարձեալ, այլ՝ կեանքի իրականութիւն մը, մեզի տրուած, եւ որով իրական շնորհք մըն է որ տեւականօրէն կը հեղու այդ սուրբերու չարչարանքներէն: Եւ մենք ամէն տարի երբ կը յիշատակենք եւ խորհուրդներու եւ խորհրդածութեանց ճամբով մեր անձերը կը նոյնացնենք Մեծ Սուրբին չարչարանքներուն հետ, այդ չարչարանքներուն յիշատակումով մեր մեղքերուն բեռն է որ կը թեթեւցնենք՝ յանձնելով Սուրբին ձեռքերուն եւ Սուրբին ձեռքերով գայն դնելով Քրիստոսի խաչափայտին ներքեւ:

4) Ի վերջոյ, **սուրբերը իրենց չարչարանքի օրինակով, կեանքով եւ մանաւանդ իրենց ամբողջ կեանքը մշտաբարբառ աղօթքի վերածելով՝ մնայուն բարեխօսներ են մեզի համար**: Յակոբոս Առաքեալ կ'ըսէ, թէ «արդարի մը աղօթքը զօրաւոր է՝ օգնականութիւն ընելու համար» (Յկ 5.16):

Եթէ երբեք ոեւէ արդարի աղօթքը զօրեղ է օգնութիւն ընծայելու համար մեզի, որքան աւելի զօրեղ պիտի ըլլան աղօթքները անոնց, որոնք իրենց ամբողջ կեանքը մնայուն բարեխօսութեան վերածեցին: Այնպէս ինչպէս Մովսէս իր կեանքը իր ժողովուրդին մնայուն բարեխօսութեան վերածեց, մեծ Լուսաւորիչը թէ՛ իր տասներեք տարիներու չարչարանքներուն ընթացքին Խոր Վիրապին մէջ, թէ՛ այնուհետեւ առաքելական կեանքի ընթացքին, թէ՛ ձգնութեան իր օրերուն իր մարմինը, իր կեանքը, իր հոգին ամբողջ մնայուն աղօթքի վերածեց՝ այդ

աղօթքով տեւական միջնորդութիւն ընելու համար իր ժողովուրդին հաշւոյն, այդ կեանքով եւ իր աղօթքներով մնայուն պարգեւներ խնդրելու համար իր ժողովուրդի ամէն մէկ զաւակին ամէն տեսակի օգնականութեան համար: Եւ եթէ երբեք ռեւէ հայր կը լսէ իր զաւակներուն փափաքը եւ կը կատարէ, հաւատքի մեր հայրը Գրիգոր Լուսաւորիչ - որ իր չարչարանքներուն երկունքով մեզ բոլորս ծնաւ Քրիստոսի համար - ինչպէ՞ս պիտի չլսէ մեր բոլորին աղօթքները, սրտեռանդն մաղթանքներն ու աղաչանքները, եւ ինչպէ՞ս չբարեխօսէ մեզի համար մեզի անհրաժեշտ բոլոր բարիքները խնդրելով Քրիստոսէ եւ Հօրմէ, որպէսզի անոնցմով լեցնէ այսօրուան մեր կեանքը եւ առաջնորդէ:

Արարատի բարձրունքին նստաւ տապանը Նոյի. այն տապանը, որով Աստուած մարդոց փրկութեան նոր սերունդ մը ապահովեց աշխարհին: Եւ այսօր հաւատքի ճշմարտութիւնը կու գայ մեզի ուսուցանելու, որ Հայաստան Աշխարհի մէջ նստաւ նաեւ երկրորդ հոգեւոր տապան մը, եւ այդ տապանը, «ապրեցուցիչ» տապանը, հաւատքի եւ փրկութեան մեր տապանը՝ նոյնինքն Գրիգոր Լուսաւորիչն է, ան որ Հայաստան ազգի փրկութեան տապանն էր, ան որ հայ ազգի փրկութեան տապանը կը մնայ նաեւ այսօր: Եւ եթէ երբեք Արարատի բարձրունքին նստած առաջին այն տապանին ռեւէ մէկուն ձեռքը չհասաւ բնաւ, եւ Մեծ Սուրբն իսկ Յակոբ Մօթնայ Հայրապետը, չկրցաւ բարձրանալ մինչեւ Արարատի բարձրունքը՝ այդ տապանէն մասունք մը եւ մասնիկ մը բերելու համար իբրեւ օրհնութիւն իր Եկեղեցւոյ եւ ժողովուրդի կեանքին մէջ, մենք հոգեւոր այն երկրորդ տապանէն մասունք եւ մասնիկ ունինք՝ բերուած եւ պարգեւուած մեզի Աստուծմէ: «Սուրբ Աջ» ունինք իբրեւ մասունք, որով աստուածային տեւական օրհնութիւն կը պարգեւուի մեզի:

Այդ մնայուն օրհնութեան գրաւականն է որ այսօր կը պարգեւուի մեզի, երբ հոգեւոր այդ տապանէն բերուած կենդանարար մասունքին արտաքին մէկ նշանակը Սուրբ Աջը, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի շառաւիղ մեր Հայրապետին ձեռամբ կը շրջի դարձեալ մեր ժողովուրդի կեանքին մէջ բժշկութիւն դառնալու համար մեր բոլորին հոգիներուն եւ մարմիններուն, բայց մանաւանդ անհաւատութեան արմատները բժշկելու համար, եւ մեզի պարգեւելու համար այն բալասանը, որ ներքին, հոգեկան խաղաղութիւն կը պարգեւէ բոլորիս, կ'ամրապնդէ մեզ բոլորս մեր կեանքին մէջ, եւ այս աշխարհի բոլոր տեսակի հոսանքներուն, փորձանքներուն եւ դժուարութիւններուն դիմաց անսասանութիւն կու տայ մեզի Հայաստան Աշխարհի մեր լեռներուն կապելով մեր գոյութիւնը եւ մեզ անոնց պէս ամրակուռ դարձ-

նելով սփիւռքեան այս ափերուն տեւական օրհնութիւն, տեւական աղօթք ու տեւական բարեխօսութիւն դառնալով մեզի համար ընդմիշտ:

Այսօր, անգամ մը եւս գանք այդ Սուրբ Տապանին եւ այդ Սուրբ Մասունքին առջեւ խոնարհելու եւ երկրպագութեամբ համբուրելու գայն, հաւատալով որ անով է որ Աստուած մեզ կ'օրհնէ, Աստուած է որ մեր մէջ կը բնակի, ինչպէս իջաւ եւ բնակեցաւ այդ Սուրբ Տապանին, այս սուրբ մարմինին եւ հոգիին մէջ անոր շնորհելով Իր ամենալից պարգեւները, որոնք այսօր մերը կ'ըլլան անոր հաւատքի զաւակներուն, գայն տօնողներու եւ Քրիստոսի մեր Տիրոջ կենդանարար երկրորդ գալստեան սպասողներու եւ փրկութեան ժառանգորդներու:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

**ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՒ
ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ**

**ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ՏԵՂԸ
ԵՒ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ**

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ
1700-ԱՄԵԱԿԻՆ ԴԻՄԱՅ
ԵՒ 21-ՐԴ ԴԱՐՈՒ ՍԵՄԻՆ**

**1700-ԱՄԵԱԿԸ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԵՐ**

**ԻՆՉՈՒՄ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՍՐԲԱՑՈՒՄԸ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ**



ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՒ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Ներկայ 1989 տարին Հայ Եկեղեցւոյ Հոգեւոր եւ Մշակութային ժառանգութեան Ղաաընթացքի հինգերորդ տարեշրջանը պիտի ըլլայ, տասներեք շաբաթներու վրայ տարածուած (22 Փետրուար - 24 Մայիս), իրեն նիւթ ունենալով «ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՒ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ»: Աստուածաշունչը, որ համամարդկային հոգե-մտաւոր արժէքներու կարգին իր ուրոյն եւ բացառիկ տեղը ունի, եւ առաւել՝ իր անժամանցելի պատգամը՝ բոլոր սերունդներու մարդոց, բայց միաժամանակ նաեւ ենթակայ է այնքան հարցականներու: Եւ ուստի կ'արժէ առանձին դասախօսական շարքով զայն քննութեան առարկայ դարձնել:

*
* * *

Այնքան անգամ եւ այնքան բան գրուած է Աստուածաշունչին մասին, բազմաթիւ դարերու ընթացքին, եւ դեռ որքան պիտի գրուի՝ այսուհետեւ՝ ժամանակակից մարդու մտածողութեան աչքերով տեսնելու եւ գնահատելու համար բոլոր ժամանակներու այս Մեծագոյն Գիրքը:

Մեր պատմութենէն գիտենք, թէ ինչպէ՛ս, հինգերորդ դարու առաջին տարիներէն սկսեալ, Այբուբենի գիւտէն անմիջապէս ետք իրագործուած Աստուածաշունչի թարգմանութիւնը մէկ անգամէն փոխակերպեց մեր երկրին ո՛չ միայն հոգեւոր, այլ մանաւանդ՝ մտաւոր պատկերը, ուսումնական, դաստիարակչական, գիտական եւ գեղարուեստական զարգացման պատկերը, մէկ խօսքով՝ մշակութային դիմագիծը, ներկայիս մեզի համար երեւակայելն իսկ դժուար փոխակերպում մը, որուն հրաշքի համագօր իրականութիւնն ապրող մա-

տենագիրը, եռամեծ Ուսուցիչին Ս. Մեսրոպ Մաշտոցի աշակերտն ու կենսագիր վարդապետը Սքանչելին Կորին անխառն հիացումով ու արբեցումով կը գրէր. «Այն ատեն չափազանց երանելի, ցանկալի եւ սքանչելի դարձաւ Հայաստան Աշխարհը, ուր յանկարծ, մէկ անգամէն եկան հասան օրէնուսոյց Մովսէսը մարգարէական դասին հետ, եւ ապագայահայեաց Պօղոսը առաքելական ամբողջ գունդով, Քրիստոսի աշխարհը փրկող Աւետարանով միասին հայախօս եւ հալաբարբառ դառնալով երկու հաւասարակիցներուն (Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի) ձեռքով» («Վարք Մաշտոցի», ԺԱ.):

Այդ փոխակերպումը մեզի համար նշանակեց նաեւ մեր ինքնութեան հարազատ պարունակին գիւտը, որով թէ մեր տեղը ունեցանք աշխարհի մշակոյթներու պատմութեան մէջ եւ թէ միանգամընդմիշտ ապահովուեցաւ մեր ազգային ինքնանկախ գոյութիւնը: Այդ մասին բազմաթիւ վկայութիւններէն մէկն է Փրոֆ. Նիկողայոս Ադոնցի հետեւեալ հաստատումը. «Հայ Աստուածաշունչը սկզբնաւորութիւնն եղաւ հայ գրականութեան, սկզբնաւորութիւնը նոր թուականի մը, երբ հայ ժողովուրդը առաջին անգամ ըլլալով՝ գրիչ ի ձեռքին իր տեղը կու գայ գրաւել լուսաւորեալ մարդկութեան մէջ: Հայ Աստուածաշունչը ազատեց հայութիւնը իրանական աշխարհին մէջ ծուլուելու վտանգէն, ամրացուց քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ, եւ խաչին ճառագայթները հակադրեց յարծակողական մազդեզականութեան կրակին: Հայաստան վերջնականապէս փոխուեցաւ էականօրէն քրիստոնէայ դաշտի մը եւ այլեւս այդպէս մնաց դարերու ընթացքին»: Իսկ Արթըր Վոոպուս, էսթոնիացի բանասէրը, այսպէս կը գնահատէ Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան կատարած դերը. «Հայութեան կեանքին մէջ, որ անվերջանալի պայքարի եւ տառապանքի պատմութիւն մըն է, այս թարգմանութիւնը շատ մեծ նշանակութիւն ունեցած է քրիստոնէական կրօնի ամրապնդման եւ ժողովուրդի հոգեբանութեան փոխակերպման մէջ»:

Հոգեբանական այդ փոխակերպումը, կամ աւելի ճիշդ՝ պայծառակերպումը, մեր ամբողջ պատմութեան վրայ կ'արտացոլայ պարզօրէն: Մեզի հասած հոգեւոր եւ մշակութային ամբողջ ժառանգութիւնը, աստուածաբանութենէն սկսեալ մինչեւ ժողովրդական բանահիւսութիւնը, ներառնելով բոլոր արուեստներն ու գիտութիւնները, տիրապետուած է անոր շողարծակումներով՝ առանց որեւէ սահմանափակումի կամ կաշկանդումի ենթարկուելու:

*
* * *

Ի՞նչ կրնանք ըսել, սակայն, այսօրուան մեր կեանքին համար:

Այսօրուան մարդը առհասարակ կտրուած է անցեալի իր ակունքներէն եւ կ'ապրի մեքենականացած ու ճարտարարուեստականացած ընկերութեան մը կեանքի հեւքը, նիւթի հետապնդումով տիրապետուած, ուր հոգե-մտաւոր սնուցումը եւ վայելքները իրենց տեղը զիջած են մեքենական, յաճախ բիրտ եւ նոյնիսկ վայրագ «հաճոյք»-ներու, ինքնակործանման անգիտակից մղումով մը կարծէք: Մարդկային նկարագիրը աներեւակայելի նահանջ մըն է որ կ'ապրի ամէն օր՝ կորսնցուցած կեանքի որեւէ իմաստ ու նպատակ:

Մարդը որեւէ ժամանակէ աւելի **փոխակերպումի** պէտք ունի այսօր, եւ այդ փոխակերպումին զաղտնիքը հոն է, իր հասողութեանը մէջ, իր ձեռքին տակ, բայց ինք յաճախ կ'անգիտանայ իսկ զայն: Իր միտքը կը թռչի թիւերու եւ գիտութեան անհուն եւ անսահման ոլորտներուն մէջ, իր ձեռքը կը հասնի լուսինին եւ հեռաւոր մոլորակներուն գննելու համար զանոնք, բայց կ'անտեսէ այն կարեւորագոյն բաները, որոնցմէ կախում ունի իր իսկ կեանքը այս մոլորակին վրայ: Կը թուի թէ այսօրուան մարդը իր կեանքին մէջ տեղ չունի՝ Աստուածաշունչին համար: Բարեկամ մը օր մը շատ լրջօրէն կ'ըսէր. «Այս դարուն, երբ մարդը լուսին կ'ելլէ, ինչ Աստուածաշունչ»: Որքան տրամաբանական իրեն համար, նոյնքան զարմանալի ինծի համար: Եւ ո՞չ միայն ինծի: Յայտնապէս մեծ **անծանօթ** մըն է Աստուածաշունչը շատերու՝ գիտութեան այս դարուն մէջ:

Պէ՞տք է սակայն ծանօթանալ, հարց տալ ու գիտնալ, թէ ի՞նչ է Աստուածաշունչը:

Եթէ այս Երկիրը, որ մեր աշխարհն է, եւ զայն շրջապատող արեւային դրութիւնը եւ անոր շուրջ գտնուող արեգակնային միւս բոլոր դրութիւնները, որոնք անհուն եւ անսահման տիեզերքը կը կազմեն, ունին իրենց ծնունդը եւ ուստի՝ իրենց Ստեղծիչը, Արարիչը - զոր Աստուածաշունչը կը կոչէ Անսկիզբն Աստուած, իմաստասէրը կը ճանչնայ իբրեւ Բան կամ Գերագոյն Միտք, գիտնականը կը յայտարարէ իբրեւ Գերագոյն Պատճառ, բարոյախօսը կը դաւանի իբրեւ Գերագոյն Բարին - տիեզերական սքանչելի կարգաւորութեան եւ բնութեան անշեղ օրէնքներուն այդ խորհրդաւոր եւ անծանօթ Մեծ Ծարտարապետն ու Օրէնսդիրը, Գերագոյն Իմաստութիւնը, Իր ստեղծած տիեզերքին համար նպատակ մը ունէր հարկաւ: Այս աշխարհին վրայ «Իր պատկերին եւ նմանութեան համաձայն» բանական մարդ արարող Բարձրագոյն Բանականութիւնը հարկաւ նաեւ Իր ծանօթութիւնը պիտի տար, Ինքզինք պիտի յայտնէր եւ պիտի խօսէր մարդուն, Իր գիտութեամբ պիտի օժտէր զայն եւ հաղորդ դարձ-

նէր Իր նպատակին, Իր մեծ ծրագիրին: Աստուածային այդ յայտնութիւնն է, ահա, Աստուածաշունչը: ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ՝ ուղղուած մարդուն:

Աշխարհի վրայ չկայ գիրք մը որ այնքան տարածում եւ համաշխարհային ճանաչում գտած ըլլայ, որքան Աստուածաշունչը: Իր ամբողջութեանը մէջ (Հին եւ Նոր Կտակարաններ) անհկա թարգմանուած է 293 լեզուներու, իսկ մասնակիօրէն (միայն Նոր Կտակարանը կամ առանձին գիրքեր) թարգմանուած է 1829 լեզուներու եւ բարբառներու: Աշխարհի ողջ տարածքին ամէն տարի բազմամիլիոն օրինակներով անհկա կը մտնէ ամէն ցեղէ եւ ազգէ մարդոց տուները: Այս հանգամանքը որքանով ցոյց կու տայ, թէ անհկա ընթերցող մարդոց համար *հաւատքի գիրքն է, աստուածային ներշնչումով* գրուած գիրքը, կամ ուղղակի՝ *Աստուծոյ Խօսքը*, դժուար է հաստատել: Բայց առնուազն այդ հանգամանքը կը վկայէ՝ Աստուածաշունչ Մատեանի եզակի բնոյթին եւ անոր հանդէպ միշտ ալ եղած բացառիկ հետաքրքրութեան մասին:

Ի՞նչն է այդ հետաքրքրութեան պատճառը:

Պատճառները բազմաթիւ են, եւ՝ մարդոց հետաքրքրութեան չափ՝ բազմազան: Ոմանք զուտ գեղարուեստական հաճոյք կը ստանան անկէ, ուրիշներ՝ միտքի սնունդ. ոմանք պատմական եւ մշակութային կեանքի արծագանգներ կը քաղեն անկէ, ուրիշներ՝ ընկերային գիտութեանց համար թանկագին տուեալներ. ոմանք բնապատմութեան փնտռտուքը կ'ընեն անոր մէջ, ուրիշներ՝ բարոյական ուսուցումներ, եւայլն, եւայլն: Եւ Աստուածաշունչը, որ շուրջ 1300-1400 տարիներու ընթացքին արծանագրուած է աւելի քան քառասուն մարդոց գրիչով,- որոնցմէ ոմանք թագաւորներ էին, ուրիշներ՝ հոփի կամ գիւղացի, քահանայ կամ պետական գործիչ, բանաստեղծ կամ իմաստասէր, ձկնորս կամ մաքսաւոր, գորգագործ կամ բժիշկ... - այդ բոլորին ալ գոհացում կու տայ:

Որովհետեւ՝

Աստուածաշունչը մշակոյթի համաշխարհային մեծագոյն կոթողն է, որ իրնով գրաւեր եւ զբաղցուցեր է բոլոր դարերու մարդիկը՝ աղբիւր դառնալով նոր ներշնչումներու եւ նորանոր ստղծագործութեանց: Ահա՛, օրինակ, թէ ինչպիսի գնահատական մը կու տայ անոր Արշակ Զօպանեան. «Աստուածաշունչը կրօնական գիրք մը չէ լոկ. մարդկային սիրտին եւ ուղեղին քերթողական եւ իմաստասիրական բարձրագոյն արտայայտութիւններէն մէկն է: Արդիական քաղաքակրթութիւնը այդ հսկայ գիրքին եւ հին հելլէն մշակոյթի զուգախառնումին արդիւնքն է: Մեր հին ազգային գրականութիւնը իր ծաղկման

ու զարգացման մէջ շատ բան կը պարտի եբրայեցի քերթողներուն ու մտածողներուն, ինչպէս որ անոնց շատ բան կը պարտին Տանթէներն ու Միլթոնները, Լամարթիններն ու Հիւկօները»:

Աստուածաշունչը մշակութային մեծագոյն գանձարան մըն է այն, բայց շատ միակողմանի պիտի ըլլար զայն գնահատել միայն իբրեւ այդպիսին: Մշակութային գնահատականին առընթեր պէտք չէ մոռնալ Աստուածաշունչին իսկական էութիւնը եւ բնոյթը: Տիեզերական մարմիններու մասին խօսելով հանդերձ, անհկա տիեզերաբանական ձեռնարկ չէ: Աշխարհին, բնութեան, կենդանական տեսակներուն եւ մարդուն ծագման մասին պատմելով հանդերձ, անհկա գիտութեան կամ աշխարհագրութեան դասագիրք մը չէ: Մեծագոյն մասով պատմութիւն ըլլալով հանդերձ, անհկա գիտութեան կամ աշխարհագրութեան դասագիրք մը չէ: Մեծագոյն մասով պատմութիւն ըլլալով հանդերձ, սոսկական պատմութեան քրոնիկ կամ արծանագրութիւն չէ: Բանաստեղծական շունչով ու ոգիով յորդելով հանդերձ, զուտ բանաստեղծութեան ծաղկաբաղ հատոր մը չէ: Աշխարհին, կեանքին ու մարդուն մասին իմաստասիրական հայեացքներ բերելով հանդերձ, լոկ մարդկային աշխարհահայեացք դրսեւորող մտածողութիւն չէ: Ապագայի յայտնութիւններ ու խոստումներ ընծայելով հանդերձ, զուշակութիւններու ժողովածու մը չէ: Պէտք չէ՝ բնաւ մոռնալ կամ անտես ընել անոր աստուածային նկարագիրը, հոգեւոր ճշմարտութեանց բացայայտման եւ ուսուցման մտահոգութիւնը, բարեպաշտական ոգին արծարծ պահելու դիտումը, մարդկային առաքինի նկարագիր մը կերտելու եւ մարդս իր իսկական կոչումին բարձրացնելու ձգտումը: Այլապէս, գնահատականները կը մնան թերի եւ եզրակացութիւնները սխալ:

Ամբողջական *մատենադարան* մըն է անհկա՝ հանրագիտարանային բնոյթով, բայց որ միաժամանակ *մէկ գիրք* է: Մէկ ոչ միայն անոր համար որ իր բաղկացուցիչ մասերը ժամանակի ընթացքին մէկ կազմի մէջ եւ մէկ կողքի տակ առնուած են, այլ՝ մէկ է ներքին հրաշալի միութեամբ մը, իր հիմնական ուսուցումով ու պատգամով, մէկ է նիւթի շարունակականութեամբ եւ ամբողջականութեամբ: Աստուծոյ գործին եւ ծրագիրին յայտնութիւնն է անհկա, ըստ Իր իսկ վկայութեան. կը պատմէ տեսանելի եւ անտեսանելի աշխարհներուն ստեղծագործութեան մասին, կը խօսի Աստուծոյ եւ տիեզերքի մասին, կը պատմէ մարդուն ծագումը, կը ներկայացնէ մարդուն անցած ճամբան, ճշմարտութիւններ կը բերէ մեղքին եւ մարդուն հաւատալիքներուն մասին, Աստուծոյ փրկութեան ծրագիրին մասին, որ պատմական զարգացումով եւ հրաշալի օղակումով մը Հին Կտակա-

րանէն կ'անցնի Նոր Կտակարանին, կ'ընդգրկէ բոլոր ժողովուրդները, եւ Աստուծոյ ծրագիրին ամբողջացումը կու տայ՝ Նոր Երկինքի եւ Նոր Երկրի ստեղծման տեսիլքով, որ բոլոր խոստումներու կատարումը եւ ամբողջացումն է:

Որքան մեծ ու բացարձակ հեղինակութիւն է անիկա հաւատացող մարդուն համար: Ինչքան լայն հեղինակութիւն վայելեր է Եկեղեցիներու եւ ազգերու կեանքին մէջ, դարձած հիմը օրէնքի եւ բարոյականութեան, ուղենիշը ուսուցման եւ դաստիարակութեան, աղբիւրը մտաւոր եւ գրական ստեղծագործութեանց եւ ծաղկաստանը արուեստներուն:

Բայց ինչպէս ուսուցման եւ վարդապետութեան, նոյնպէս արքունութեան եւ յաճախակի առարկութեան առարկայ եղած է անիկա հնագոյն ժամանակներէն ի վեր: Հակառակը անբնական պիտի ըլլար: Որովհետեւ հետաքրքիր ու խուզարկու միտքերուն համար անկարելի է առանց հարցապնդումի ընդունիլ որեւէ հաստատում, մանաւանդ երբ կը վերաբերի այնպիսի էական հարցերու, ինչպիսիս են, օրինակ, տիեզերքին եւ մարդուն ծագումը, չարին գոյութիւնը եւ պատճառը, Աստուծոյ եւ մարդկային պատմութեան փոխյարաբերութիւնը, մարդուն վերջնական ճակատագիրը, եւ այլն: Մինչդեռ այս եւ ուրիշ հարցերու կապակցութեամբ Աստուածաշունչը վիճարկելի «կարծիքներ» չէ որ կը յայտնէ, ո՛չ ալ տեսութիւններ կը բանածեւէ, այլ՝ անառարկելի հեղինակութեամբ վճռական ու բացարձակ հաստատումներ կ'ընէ, յայտնութիւններ կը կատարէ, պատասխաններ կու տայ:

Բնական է, որ շատեր պիտի մերժէին եւ այսօր եւս կը մերժեն ընդունիլ անոր վճիռները կամ պատասխանները:

Մերժումներուն հիմնական պատճառը տրամաբանական կարգի դժուարութիւնները չեն, ո՛չ ալ երբեմն իբրեւ առարկութիւն յառաջ նետուած ենթադրեալ «ներքին հակասութիւններ»-ը: Իսկական պատճառը միշտ ալ մարդոց անհատական կամ խմբակցական շահերն են՝ քաղաքական դիտումները, տնտեսական նկատումները, ցեղային կամ ազգային հակամարտութիւններով բորբոքած ատելավառ տրամադրութիւնները, ապօրէն շահի հակամարդկային ճամբաները, լոյծ ցանկութիւններու եւ շուայտ կեանքի մը հետապնդումը եւ ասոնց լրացուցիչ բոլոր երանգները:

Մարդիկ կը մերժեն Աստուածաշունչին ընծայած ճշմարտութիւնները ճանչնալ եւ ընդունիլ, որովհետեւ այդ ճշմարտութիւնները իրաւունք չեն տար իրենց, չեն արդարացներ իրենց մտածելակերպը, իրենց վարմունքն ու գործերը, այլ ընդհակառակը՝ կը դատա-

պարտեն: Որեւէ ճշմարտութեան նման, Աստուածաշունչին ապրած բարոյական տագնապն է ասիկա: Գոյնազրտութիւնը այն լոյսն է, որ սահմանուած է յայտնելու իրականութիւնը եւ մանաւանդ անոր տխուր կողմերը, վիրաւոր ու թերի երեսները, եւ դարմանելու ու սրբագրելու զանոնք: Բայց զարմանալի հակասութեամբ առհասարակ մարդիկ հեռու կը փախչին ճշմարտութենէն. կը նախընտրեն վարագուրել իսկութիւնը, ծածկել ու պարտկել իրենց սխալներն ու յանցանքները, եւ միամիտ ինքնախաբէութեամբ կը սիրեն արդարացնել իրենք գիրենք, քան ընդունիլ առաջարկուած դարմանը եւ սրբագրել իրենք գիրենք: Նոյնն է Աստուծոյ Խօսքին աստուածային ճշմարտութեան պարագան: Եւ զայն մարդուն ընծայողը Աստուած, շատ լաւ գիտէ այդ իրողութիւնը. «Այս է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ լոյսէն աւելի խաւարը սիրեցին, որովհետեւ իրենց գործերը չար էին» (Յհ 3.19: Հմմտ. Յոբ 24.13-17):

Միւս կողմէ, սակայն, յաճախ ալ մերժումներուն պատճառը անհիմն նախապաշարումներն են, շրջապատէն թելադրուած ժխտական դիրքաւորումները, հետեւանք ծանօթութեան պակասի. անգիտութեան: Որքան մարդիկ կան, որոնք Աստուածաշունչին մասին սխալ կարծիք ունին կամ բնաւ կարծիք չունին, պարզապէս որովհետեւ չեն կարդացած զայն, կամ, լաւագոյն պարագային շատ պատահական քանի մը հատուած կարդացեր են միայն:

Ժիշդ է նաեւ, որ թէ պատմութեան ընթացքին եւ թէ մանաւանդ ներկայ դարուն այնքան չարաշահումներու ենթարկուած է ան: Որքան աճապարար քարոզիչներ կան, որոնք աժան գրաւչութիւն մը տալու համար անոր՝ ամէնէն արտառոց գաղափարներն իսկ կը փորձեն Աստուածաշունչէն բխեցնել, կամ զայն կը ծառայեցնեն իրենց անհատական թէ խմբակցական շահերուն, եւ երբեմն նոյնիսկ ընկերային կամ ցեղային խտրականութեան կամ քաղաքական նպատակներու: Տակաւին, որքան աղանդամիտ մարդիկ ու խմբակներ կան, որոնք Աստուածաշունչը միակողմանի ձեւով ներկայացնելով միամիտներու մեծ թիւ մը կ'առնեն իրենց թակարդին մէջ, իսկ շատ-շատերն ալ կը խրտչեցնեն իրենց կամայական մեկնութիւններով քանդելով անոնց հաւատքը եւ ամբողջութեամբ հեռացնելով Աստուածաշունչէն:

Բայց հարց կու տանք. կրնա՞յ սխալը պատճառ դառնալ որ ճշմարտութիւնը մերժուի: Խաւարին վարժուած աչքերն են միայն, որ լոյս չեն կրնար դիտել, մինչդեռ ճշմարտութեան լոյսին վարժուած աչքերը կը փնտռեն զայն, որովհետեւ անոր խօսքերը «ճրագ» են եւ կը լուսաւորեն մարդոց ճամբաները (Սղ 118.105): Կեանքի դառնութիւն-

ներուն կռնակ դարձուցած եւ Աստուծոյ խօսքին քաղցրութեան վարժ քիմքերը տեւականօրէն կը փափաքին զայն, որովհետեւ «քաղցր է Տէրը», որ բոլոր նեղութիւններէն կը փրկէ զիրենք, եւ անով իրենց ներքին խաղաղութիւնն ու սփոփանքը գտած հոգիները անոր կը փարին հոգեւին, անոր հանգիստ ջուրերուն քով իրենք զիրենք զգալով Աստուծոյ արօտին մէջ:

Ս. Գիրքը բաց է բոլորին առջեւ, եւ ոեւէ մէկը կրնայ զայն քննութեան ենթարկել: Ճշմարտութիւնը քննութենէ չի վախճար. ստութիւնն է միայն որ խոյս կու տայ քննութեան նշդրակէն: Ահա՛ երկու հազարամեակէ ի վեր Աստուածաշունչը կը կանգնի բոլոր ժամանակներուն դիմաց, ամէն տեսակի քննութեան ու քննադատութեան ենթակայ, բայց այդ բոլորին մէջ կը մնայ ժայռի պէս անխախտելի եւ ամուր, որովհետեւ մարդկային կամքի ծնունդ չէ, մարդկային միտքի արտադրութիւն չէ, մարդկային ճիգերու արդիւնք չէ: Պետրոս Առաքեալ մարգարէութեան կապակցութեամբ կը շեշտէ. «Մարգարէութիւնները բնաւ մարդոց կամքին ծնունդը չեն, այլ՝ Սուրբ Հոգիին մղումով է, որ Աստուծոյ մարդիկը խօսած են զանոնք» (Բ. Պտ 1.21): Մարդիկ կրնան փորձել տապալել զայն, բայց ո՛չ մէկ վնաս կը հասցնեն անոր, որովհետեւ, ինչպէս Պօղոս Առաքեալ կը նախազգուշացնէ. «Աստուծոյ ճշմարտութեան դէմ ոչինչ կրնանք ընել, այլ՝ կրնանք միայն անոր համար աշխատիլ» (Բ. Կր 13.8):

*
* * *

Արդի մարդը եւ մանաւանդ հայ մարդը պէ՛տք է կարդայ եւ սերտօ՛ւտ Աստուածաշունչը՝ դասական իմաստով հաւատացեալ ըլլայ կամ ոչ: Մանաւանդ մտաւորական մարդը չի՛ կրնար զայն կարդացած չըլլալ: Շատ յատկանշական եւ բնորոշիչ է մեր նորագոյն շրջանի վաւերական բանաստեղծին Պարոյր Սեւակի հետեւեալ վկայութիւնը. «Ով չի կարդացել Աստուածաշունչը, նա չի կարող իսկական իմաստով գրագէտ մարդ կոչուել, առաւել եւս՝ գրականագէտ: Իսկ ով չի սերտել «Երգ Երգոց»-ը, նա չի կարող գաղափար ունենալ պոէզիայի սկզբնականի մասին: Ամբողջ համաշխարհային գրականութիւնը դուրս է եկել Աստուածաշնչից. այստեղ է բոլոր ժանրերի ու սիւժէների սկիզբը: Նրա հիման վրայ են ստեղծուել համաշխարհային գրականութեան ու արուեստի գլուխ գործոցները: Վկայ՝ «Աստուածային Կատակերգութիւն»-ը, «Նարեկ»ը, Ռափայէլը: Հիմա արդէն գիտութիւնը սկսել է լրջօրէն զբաղուել Աստուածաշնչի պատմական ու ա-

ռասպելական հիմքերի բացատրութեամբ: Բանից պարզուում է, որ մտացածին համարուած հրաշապատումները բնաւ էլ ցնդաբանութիւններ չեն, եւ անցած քաղաքակրթութեան ուսումնասիրութիւնը դեռ շատ առեղծուածներ կը բացի Աստուածաշնչի էջերում»:

Ներկայ դասախօսական շարքը կ'ուզենք որ դառնայ առիթ անգամ մը եւս բանալու Աստուածաշունչը, քննելու անոր հեղինակութիւնը, գրութեան կերպը եւ պարագաները, անոր վաւերականութիւնը եւ պատմականութիւնը, անոր առնչութիւնը մարդկային գիտութիւններուն հետ, անոր բաղկացուցիչ մասերը՝ Օրէնք, Մարգարէութիւն, Հոգեւոր Բանաստեղծութիւն, Իմաստութեան Գրականութիւն, Աւետարաններ, Առաքելական Նամակներ, եւ այլն, եւ հասկնալու անոնց ծանօթացման եւ հասկացողութեան կերպը, բայց նաեւ դիտելու համար Աստուածաշունչին տեղը եւ դերը մեր Եկեղեցւոյ եւ մեր պատմութեան մէջ, անոր դրոշմը հայ կեանքին եւ ազդեցութիւնը հայ մշակոյթին վրայ, յատկապէս գրականութեան ճամբով: Դասախօսութիւններու բովանդակութեան ուրուագիւրը, «Հասկ»-ի յաջորդական թիւերուն մէջ հրատարակելի, ինքնին շատ խօսուն է այդ ուղղութեամբ:

Կատահ ենք, որ թէ՛ արդի մարդուն հետաքրքրութիւններուն ու բազմաթիւ հարցականներուն գէթ մասնակիօրէն գոհացում տալու իմաստով, թէ՛ ընդհանուր եւ օգտաշատ ծանօթութիւններու ձեռքբերման իմաստով, եւ թէ՛ առողջ փնտռտուքով՝ Աստուածաշունչին եւ առհասարակ հաւատքի հարցերուն աւելի գիտակցական եւ իմաստուն մօտեցում մը ապահովելու իմաստով՝ ներկայ դասախօսութիւնները լաւագոյնս պիտի ծառայեն իրենց նպատակին եւ կարելոր դեր կատարեն մեր կեանքի այս հանգրուանին:

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻՆ ՏԵՂԸ ԵՒ ՌԻՍՈՒՑՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՄԷՋ

Աստուածաշունչը, ի տարբերութիւն աշխարհի շատ մը կրօններէն եւ անոնց սրբազան մատեաններէն, «գաղտնի» գիրք մը չէ, կրօնաւորներու նեղ շրջանակի մը սեփականութիւնը կամ մեկնաշնորհը: Սկիզբէն իսկ անիկա սահմանուած է Աստուծոյ ժողովուրդին եւ անոր դաստիարակութեան, լսելու, սորվելու, եւ պահելու հնազանդելու:

Քրիստոնէական վարդապետութիւնը չէր կրնար տարբեր ըլլալ: Մեր Տէրը Յիսուս Քրիստոս Ինք ո՛չ միայն հրապարակաւ բոլորին ուսուցանեց, այլ նաեւ իր վերջին եւ կարեւորագոյն հրահանգը եղաւ. «Գացէ՛ք եւ բոլոր ժողովուրդները Ինծի աշակերտ դարձուցէ՛ք: Զանոնք մկրտեցէ՛ք Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Անոնց սորվեցուցէ՛ք այն բոլոր պատուիրանները որ Ես ձեզի տուի» (Մտ 28.19-20):

1) ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻՆ ՌԻՍՈՒՑՈՒՄԸ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՆԸ

Հասարակ տեղիք ճշմարտութիւն մըն է ըսել, թէ Եկեղեցիներէն ներս, այսինքն անոր ծիսական-արարողական կեանքին թէ վարդապետական-ուսուցողական երեսին մէջ, ինչպէս նաեւ կենցաղային-բարոյագիտական դիրքորոշման մէջ միշտ ալ կեդրոնական տեղ գրաւած է Աստուածաշունչը: Առանց Աստուածաշունչի չկայ Եկեղեցի եւ չկայ Եկեղեցական պաշտամունք: Առանց Աստուածաշունչի չկայ ուսուցում եւ քրիստոնէական դաստիարակութիւն: Առանց Աստուածաշունչի չկայ ճշմարիտ աստուածգիտութիւն, չկայ քրիստոնէական կեանք, չկայ փրկութիւն:

Մեր նիւթին կապակցութեամբ ըսենք, որ Աստուածաշունչը գերազանցապէս Եկեղեցւոյ գիրքն է՝ իբրեւ ուսուցման առարկայ, իբրեւ ճշմարիտ գիտութեան աղբիւր: Յիշենք Պօղոս Առաքեալին նշանաւոր բացատրութիւնը. «Եւ արդէն մանուկ հասակէդ գիտես Սուրբ Գիրքերը, որոնք զօրութիւնն ունին քու միտքդ իմաստութեան բանալու որպէսզի Քրիստոս Յիսուսի հաւատաս եւ փրկուիս: Աստուծոյ ներշնչումով գրուած բոլոր գիրքերը օգտակար են թէ՛ ճշմարտութիւնը ուսուցանելու եւ թէ՛ սխալը հերքելու, մարդս ճիշդ ճամբու մէջ դնելու եւ արդար կեանքի մը դաստիարակութիւնը տալու համար. որպէսզի Աստուծոյ նուիրուած մարդը կատարեալ ըլլայ, ամէն տեսակի բարի գործերու պատրաստ» (Բ. Տմ 3.15-17):

Այս յայտնութեան հիմամբ, Հայաստանեայց Եկեղեցին, ինչպէս ամէն ճշմարիտ քրիստոնէայ, կը ճանչնայ եւ կ'ընդունի, թէ՛

- ա) Աստուածաշունչը ո՛չ միայն աղբիւրն է գիտութեան, այլ նաեւ պարգեւիչն է այդ աղբիւրը բանալու զօրութեան:
- բ) Աստուածաշունչը աղբիւրն է հաւատքի եւ փրկութեան:
- գ) Աստուածաշունչը միակ միջոցն է Աստուծոյ, աշխարհին եւ մարդուն մասին ճշմարտութիւնը ուսուցանելու:
- դ) Աստուածաշունչը միակ գէնքն է սխալը հերքելու եւ ստութեան դէմ պայքարելու:
- ե) Աստուածաշունչը ճշմարիտ ուղեցոյցն է արդար կեանքի մը:
- զ) Աստուածաշունչը մարդը կատարելութեան առաջնորդող դաստիարակութեան գիրքն է:
- է) Աստուածաշունչը մարդս գործնապէս ամէն բարի գործերու պատրաստ վիճակի մէջ դնող աստուածային հրաւիրակն է, Աստուծոյ ծայրը:

Պօղոս Առաքեալի այս բացատրութիւնը տառացիօրէն ճշմարիտ է ինչպէս անհատ մարդուն, այնպէս եւ մանաւանդ Եկեղեցւոյ կեանքին համար:

Եկեղեցւոյ մէջ Աստուածաշունչին ուսուցումը, ըլլայ ընտրովի հատուածներով, ինչպիսիք են «ընթերցուած»-ները, ըլլայ ամբողջական գիրքերով (յիշէ՛ Բարսեղ Կեսարացիի «Վեցօրեայք»-ը), նպատակ ունին թէ՛ ճշմարտութիւնը ուսուցանել եւ անով դաստիարակել հաւատացեալը, եւ թէ՛ հերքել ուղղափառ հաւատքին դէմ գացող մտածողութիւնները, հերետիկոսութիւնները: Այս կապակցութեամբ շատ հետաքրքրական է Ս. Յովհան Ռսկեբերանի մէկ արտայայտութիւնը. «Ամէն քրիստոնէայ պէտք է Ս. Գիրքին դիմէ, որովհետեւ ներկայ այս ժամանակներուն հերետիկոսութիւնը ապականեր է Եկեղեցիները, եւ միայն աստուածային մատեաններն են, որ կրնան

ապաստան ըլլալ անոնց, որոնք կը փափաքին ճշմարիտ հաւատքը ունենալ: Անցեալին այլեւայլ կերպերով կ'որոշուէր, թէ որն է ճշմարիտ Եկեղեցին, իսկ հիմա երբ [Սուրբ] Գիրքերը կանոնագրուած են, չկայ ուրիշ ճամբայ, եթէ ոչ նոյնինքն Սուրբ Գիրքը ձեռք առնել եւ անով ստուգել ջանալ: ...Ինչ որ ալ ըլլայ Սուրբ Գիրքին հարցուցէ՞ք, ինչ որ պէտք է փրկութեան համար ամբողջապէս կայ Սուրբ Գիրքին մէջ»:

2) ԱՍՏՈՒԾԱՇՈՒՄԻՆԻ ՌԻՍՄԱՆ ՏՐՈՒԾ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

1) Աստուածաշունչին տրուած կարեւորութիւնը առաջին հերթին կը տեսնուի անոր մասին եղած արտայայտութիւններէն, որոնք ի մի խմբելը հսկայ աշխատանք եւ ժամանակ կ'ենթադրէ: Քաղածոյ քանի մը օրինակներ թող բաւեն այստեղ.

Ս. Գրիգոր Լուսաւորիչ իր «Վարդապետութիւն» գործին մէջ Քրիստոսի մարդեղութեան մասին հաւատքը սահմանելէ ետք, այսպէս կ'եզրակացնէ. «Մենք այս ճշմարիտ հաւատքը ունինք Սուրբ Գիրքէն եւ Եկեղեցւոյ օրէնքներէն, իբրեւ կեանքի ճանապարհ, որ Աստուծոյ կ'առաջնորդէ՝ Սուրբ Գիրքերու ուսուցումին հաւատքով»¹:

Բաբգէն Ռթմեսցի Կաթողիկոս (490-516), 6-րդ դարուն սկիզբը ուղղափառ պարսիկներուն գրած իր առաջին նամակին մէջ, ուղղափառ դաւանութիւնը պաշտպանած ատեն կ'ըսէ. «Բազմաթիւ են Սուրբ Գիրքերուն վկայութիւնները, աւելի շատ նաեւ ուղղափառ Սուրբ Հայրերու լուսափայլ վարդապետութիւնները, որով լուսաւորուածները կը լուսաւորուին եւ հոգիով վիատածները մխիթարութիւն կը գտնեն (=կը հագնին), Սուրբ Երրորդութեան սիրոյն, յոյսին եւ հաւատքին վրայ հիմնաւորուած, ինչ որ կենդանութիւն է եւ պաշտպանութիւն հոգիին ու մարմինին»²:

Աբրահամ Աղբաթանեցի Կաթողիկոս (607-615) վրացիներու Կիւրիոն Կաթողիկոսին գրած իր 3-րդ նամակին մէջ կը գրէ. «Բայց արդ, չծուլանանք նորոգելու այն սէրը, որ մեր երկու ազգերուն միջեւ կար. այն [սէրը], որ միակ աղբիւրէ մը առած էր իր ուսուցումը, կենդանութեան [այն] լոյսը, որ երանելի Գրիգորը եւ ապա Մաշտոցը նախ իրենք առին, այնպէս ինչպէս սորվեցուցին մարգարէներն ու առաքեալները, եւ ապա մեզի ու ձեզի հաւասարապէս սերմանեցին աստուածապաշտութիւնը եւ [Սուրբ] Գիրքին ծանօթութիւնը՝ հաւատքը ամրապնդելու համար»³:

2) Աստուածաշունչին տրուած կարեւորութիւնը կը բացայայտուի ուսումնական հաստատութիւններուն կամ ծրագիրներուն մէջ անոր տրուած բացառիկ շեշտէն ու հոգածութենէն: Այս մասին երկար պիտի խօսինք, բայց առաջին հերթին զայն արտայայտենք մասնակի դէպքի մը ընդմէջէն:

Ղազար Փարպեցի պատմիչը, Վահան Մամիկոնեան մարգպանին գրած իր նամակին մէջ, ինքզինք պաշտպանելով իր հասցէին կատարուած ամբաստանութեանց դէմ, կը յիշէ նաեւ հետեւեալ ամբաստանութիւնը եւ կու տայ անոր պատասխանը. «Իրենց մտածումները բազմաթիւ մէկ կէտէն միւսը սահեցնելով, միւս չար խորհուրդներուն կարգին սա եւս կը կցեն ըսելով. “Այդ [Ղազարը Սուրբ] Գիրքը չի կարդար, եւ ընթերցուածները այնպէս մը անսայթաք կ'արտասանէ, որ կարծես թէ գիրքէն [կը կարդայ]”: Անոնք սա իրողութիւնն ալ չեն հասկնար ու չեն գիտեր, թէ անոնք որոնք լաւ գիտեն, պէտք է գոնէ Դաւիթի սաղմոսները անսխալ կերպով արտասանեն ժամերգութեան ատեն, փոխանակ միշտ գիրքը ձեռքի մէջ ունենալով սխալ-մխալ կարդալու, ցնորուածներու պէս: Իսկ մեր երանելի ուսուցիչները Եկեղեցւոյ բոլոր կտակարանները երեք կամ չորս անգամ կ'ուսուցանէին մեզի, [Սուրբ] Գիրքին սկիզբէն մինչեւ վերջը, եւ նոյնը անգիր կը պահանջէին մեզմէ, եւ կը ստիպէին որ Դաւիթի սաղմոսներուն պէս արտասանենք: Իսկ հիմա, այդ լիրբ նախանծոտներէն շատերը, որոնք նոյնիսկ եկեղեցական կրօնական գիրքերուն անունները եւ քանի հատ ըլլալը հազիւ թէ գիտեն, նախանծարկու դելին գրգռութեամբ իրարու քով նստած ուրիշներու մասին այսպէս բաներ լսելով ու խօսելով [կը զբաղին]»⁴:

3) Աստուածաշունչին տրուած կարեւորութիւնը ակնբախ կերպով կը տեսնուի մեր ձեռագիրներու ճոխ հաւաքածոներուն մէջ Աստուածաշնչական մատեաններուն թիւէն ու համեմատութենէն: Մեզի հասած շուրջ 25.000 ձեռագիրներուն մէկ երրորդը Աստուածաշունչն է իր զանազան բաժիններով, մանաւանդ Աւետարաններով: Ասիկա տակաւին չհաշուած մեկնողական գործերը, որոնք դարձեալ բաւական մեծ թիւ մը կը կազմեն: Եւ ասիկա դեռ միայն պատմութեան աղէտներէն փրկուածներն են: Ստեփանոս Օրբէլեան Եպիսկոպոսը, որ Սիւնիքի, այսինքն Սիսական նահանգին պատմութիւնը կը գրէ, երբ սելճուք-թաթարներու կողմէ Սիւնիքի աւերումներուն մասին կը խօսի, առանձնակի կը պատմէ Բաղաբերդի գրաւումին ու կործանումին մասին, նկարագրելով կորուստը այն անհամար հարստութեանց, որոնք այնտեղ մթերուած էին: Նիւթական անհաշուելի

հարստութեանց կարգին, կը յիշատակէ տարբեր վանքերէ հոն բերուած «բազմաթիւ Կտակարանները, տասը հազար հատէն աւելի, որոնք հոն ամբարուած էին: Բոլորն ալ գերի տարուեցան եւ ցիր ու ցան եղան աշխարհի երեսին»⁵:

4) Աստուածաշունչին կարելորութիւնը ի յայտ կու գայ նաեւ այն հրահանգներէն, որոնք հայրապետներու կամ ժողովներու կամ հեղինակաւոր անձերու կողմէ կը տրուին, մեծ զգուշաւորութեամբ մօտենալու աստուածային գիրքերու ոչ միայն ուսումին եւ ուսուցումին, այլ նաեւ անոնց ընդօրինակութեան ու պահպանութեան:

Այդ հրահանգներէն պարզապէս մէկ-երկուքը յիշենք միայն.
- Տեւ Ս. Սահակ Պարթեւի կանոնները վանքերու ուսումնական հաստատութեանց մասին եւ եկեղեցականներու ուսման անհրաժեշտութեան մասին (Կանոններ Ժ., ԺԳ. եւ ԼԸ.). «Բ»⁶:

- Եպիսկոպոսական ձեռնադրութեան կարգին մէջ, որ կիլիկեան շրջանին արդէն գրեթէ իր վերջնական ձեւը ստացած է, կայ հաւատքի, ծէսի եւ կարգի վերաբերեալ հարցաքննութիւն մը, որուն մէջ կայ նաեւ Աստուածաշունչին Հին եւ Նոր Կտակարաններու գիրքերուն վերաբերող հարցում մը, որ հետեւեալն է. «Կ'աշակերտի՞ք Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններուն, որոնք Սուրբ Հոգիին կողմէ շնորհուեցան մարգարէներուն եւ առաքեալներուն միջոցաւ, եւ կ'ուխտէ՞ք միայն անով հովուել ձեր ժողովուրդը, եւ ձեր ամբողջ կեանքի ընթացքին ուսանիլ եւ ուսուցանել նոյն գիրքերը, որոնք են Ծնունդները, Ելքը, Ղեւտականը, Թիւերը, Երկրորդ Օրէնքը, Յետուն, Ղատաւորները, Հռութը, Թագաւորներու չորս գիրքերը, երկու Մնացորդները, Յօբը, Ղաւիթի եւ Սողոմոնի գիրքերը, Եսայի, Երեմիա, Եզեկիէլ եւ Ղանիէլ մարգարէները, եւ տասներկու մարգարէները, ինչպէս նաեւ Նոր Կտակարանին մէջ Սուրբ Աւետարանը՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի կողմէ գրուած, Պօղոսի տասնըջորս նամակները, Առաքեալներու Գործերը, ընդհանրական եօթը նամակները, եւ Յովհաննէսի Յայտնութիւնը»⁷:

3) ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻՆ ՏԵՂԸ ԵՒ ՌԻՍՈՒՑՈՒՄԸ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐՈՒՆ

Հեթանոսական շրջանին դպրոցներ չկային: Յիշատակուած միակ կեդրոնը Արտաշատէն Վաղարշապատ տանող ճամբուն վրայ, Երազամոյն գիւղին մէջ հաստատուած մեհեանն էր, Տիր չաստուծոյ նուիրուած, որ կը ճանչցուէր իբրեւ գիրի եւ գրականութեան աստուա-

ծութիւն: (Բայց առհասարակ այս անունը սխալ հասկցուած կամ բացատրուած է: Այս գիրը եւ գրականութիւնը կապ չունին մեր հասկցած գրականութեան հետ: Անիկա ընդհանրապէս հեթանոսական աշխարհին մէջ մեհեաններու կամ քրմական դասին ունեցած բախտագուշակութեան, երազներու մեկնութեան եւ կախարդական արուեստին վերաբերեալ գիտութիւնն էր, որ գաղտնի գիտութիւն էր, եւ սակաւաթիւ անձերու վերապահուած):

Դպրոցներու չգոյութեան լաւագոյն ապացոյցը նաեւ այն է, որ ուսանիլ փափաքող մեր երիտասարդութիւնը հարկադրաբար կ'երթար օտար աշխարհներ Ասորիք, Աղեքսանդրիա թէ Բիւզանդիոն գոհացնելու համար իրենց ծարաւը:

Քրիստոնէութեան պետականօրէն ճանաչումէն ետքն էր միայն, որ, իբրեւ առաջին բարիք, ունեցանք Հայաստանի մէջ բացուած դպրոցներ:

Առաջին ուսուցիչը Ս. Գրիգոր Լուսաւորիչ ինքն էր, որ ժամանակ մը առանձինն զբաղեցաւ ժողովուրդին հոգեւոր դաստիարակութեամբ: Եւ Ս. Գրիգորի համար դաստիարակութեան առանցքը եւ բանալին Աստուածաշունչ Մատեանն էր: Ինչպէս Ագաթանգեղոս կ'ըսէ, անիկա «առհասարակ բոլորին մէջ սերմանեց աստուածայաշտութեան խօսքը, եւ բոլորը Տիրոջ ճամբուն մէջ բերաւ՝ գիտակ դարձնելով Արարիչին պատուիրաններուն»⁸: Բացի ընդհանրապէս ժողովուրդին ուսուցանելու գործէն, Ագաթանգեղոս յատուկ կերպով կը յիշէ Տրդատ թագաւորի ընտանիքին եւ առհասարակ Արշակունիներու դաստիարակութիւնը Աստուածաշունչով, Սուրբ Աւետարանով⁹, ինչպէս նաեւ ամբողջ արքունիքին եւ ազատագունդ բանակին հոգեւոր դաստիարակութիւնը՝ «աստուածեղէն իմաստութեամբ»¹⁰: Աւետարանով ժողովուրդը դաստիարակելու այս սկզբունքը շատ լաւ ի յայտ կու գայ իր իսկ գրած «Յաճախապատում» ճառերէն, որոնցմէ մէկուն մէջ այսպէս կը յորդորէ ընթերցողները. «Մեզի միշտ անհրաժեշտ է Աւետարանին դաստիարակութիւնը մեզ լուսաւոր կարգերուն հրահանգելու համար, որպէսզի Ճշմարտութեան՝ Ս. Հոգիին խնամքին յանձնուինք, որ Կտակարաններէն կու գայ: Հետեւաբար, դարինք դատարկ եւ զուր քննութենէն, եւ հետամուտ ըլլանք Սուրբ Գիրքերու խրատներուն, թէ Հինին եւ թէ Նորին»¹¹:

Բայց տակաւին եւ մանաւանդ կար հոգեւորականներու պատրաստութեան գործը, որ նոյնպէս ժամանակ մը անձամբ կատարեց քուրմերու որդիներուն անձամբ ուսուցանելով եւ իր ձեռքին տակ գանոնք կրթելով¹²: Բայց շուտով հարկ տեսաւ յատուկ դպրոցներու, եւ այդ դպրոցներուն բացումը տնօրինեց եւ անոնց համար աշխատե-

ցաւ Կեսարիայէն ու Ասորիքէն իր բերած օտարազգի քարոզիչներէն եւ հոգեւորականներէն լաւագոյնները կարգելով նաեւ ուսուցչութեան այս գործին:

Այս դպրոցները «ժողովրդական» չէին հարկաւ, այլ կրօնական դպրոցներ էին հայ հոգեւորականներու նոր սերունդի մը պատրաստութեան համար, որ առնուած ըլլար ուշիմ պատանիներէ, եւ մանաւանդ քուրմերու դասակարգէն, ինչպէս նաեւ իշխանական դասակարգի զաւակներուն դաստիարակութեան համար:

Հասկնալիօրէն, այս դպրոցներուն ուսումնական ծրագիրը ասորերէն եւ յունարէն լեզուներով կը կատարուէր¹³, եւ իր ժամանակի բոլոր ուսումները ներառնելով հանդերձ, կարեւորագոյն տեղը կու տար Աստուածաշունչին, անոր ծանօթացման ու մեկնութեան, ինչ որ ամէնէն աւելի կարեւոր էր քրիստոնէական հաւատքի տարածման եւ արմատաւորման համար: Այս կապակցութեամբ, այդ դպրոցներու արդիւնքին մասին Ագաթանգեղոս կը վկայէ. «Որով ակնթարթի մը մէջ՝ երկրին վայրենամիտ, դատարկախօս եւ անասնաբարոյ բնակիչները (այստեղ՝ աշակերտները Չ.Ե.) յանկարծօրէն մարգարէագէտ, առաքելածանօթ եւ Աւետարանին ժառանգորդ դարձան, եւ Աստուծոյ աւանդած [ճշմարտութիւններէն] ոչ մէկ բանի անտեղեակ մնացին»¹⁴:

Ս. Գրիգոր Լուսաւորիչի սկսած ճիգը աւելի ընդարձակեց ու հիմնաւորեց Ս. Ներսէս Մեծ Հայրապետը՝ իր բարեկարգական միւս գործունէութեանց կարգին: Ուսուցիչներ պատրաստելու համար մեծահասակ աշակերտներ դրկուեցան օտար աշխարհներ (Եդեսիա, Աղեքսանդրիա, Կեսարիա, Աթէնք, Կ. Պոլիս), եւ նորանոր դպրոցներ բացուեցան երկրին մէջ՝ դարձեալ ասորական եւ յունական ուղղութիւններով:

Բայց յոյն եւ ասորի այս քարոզիչներուն աւետարանչական ճիգերը ապարդիւն կը մնային զուտ լեզուական պատճառով: Ժողովուրդը բան չէր հասկնար (Փաւստոս, 33): Քրիստոնէութիւնը մակերեսային կրօնք մը մնացեր էր մեծամասնութեան համար: Դեռ հեթանոսութիւնը անթեղուած կրակ մըն էր, որ ինքզինք կը զգացնէր ամէն վայրկեան ժողովուրդի բոլոր խաւերու կեանքին մէջ:

Պէտք է գիտնալ, սակայն, որ թէ՛ Ս. Գրիգորի եւ թէ՛ Ս. Ներսէսի բացած դպրոցներու ծրագիրէն հայերէնը ամբողջովին բացակայ չէր:

ա) Նախ, կարգուած ուսուցիչները իրենք, յաճախ, ծագումով հայեր էին եւ կամ առնուազն հայերէնագէտներ էին, որոնք այդ օտար լեզուներով ուսումը կը փորձէին նաեւ յաճախ թարգմանաբար ընծայել զայն հասկնալի դարձնելու համար:

բ) Երկրորդ, աւելի մեծ կարեւորութեամբ պէտք է շեշտել այս դպրոցներուն մէջ թարգմանիչներու սերունդի մը պատրաստութիւնը եւ թարգմանչական աշխատանքի մը նախապատրաստութիւնը:

Եթէ Ս. Գրիգոր Լուսաւորիչի օրէն սկսաւ նաեւ կարգաւորումը հայ ծէսին եւ եկեղեցական արարողութեանց, ժամերգութիւններուն ու Պատարագին, հասկնալի է նաեւ որ սկսաւ ճիգը գէթ որոշ բաժիններ ժողովուրդին անմիջականօրէն հասկնալի դարձնելու, ինչպէս, օրինակ, իբրեւ ընթերցուած ծառայող աւետարանական հատուածները, սաղմոսները, հաւատքի դաւանութեան խտացումը եղող «Հաւատամք»ը: Նոյնիսկ կանուխէն թարգմանուած կը համարուին Շաբաթ երեկոյեան Կիրակնուտքի ժամերգութեան «Լոյս Չուարթ» երգը եւ ուրիշ քանի մը պարզագոյն երգեր կամ եղանակաւորուած սաղմոսներ:

Այս թարգմանութիւնները յաճախ կը կատարուէին տեղւոյն վրայ, բերանացի: Բայց այդպիսի աշխատանք մը բաւական նախապատրաստութիւն կ'ենթադրէր դպրոցական յատուկ պատրաստութեամբ: Եւ վստահաբար, կար նման ուսումնական ճիգ մը, որուն յաջողակ ներկայացուցիչները «թարգմանիչ» կոչուեցը կը ստանային: (Եբրայեցիներուն քով նոյն ընթացքը Եգրայի օրերէն սկսեալ - Նե 8):

Նման բերանացի թարգմանչական աշխատանքով մը, ինչպէս յիշեցինք, սաղմոսներն արդէն ամբողջապէս թարգմանուած էին եւ կը կիրարկուէին եկեղեցիներէն ներս: Ասոր զոյգ ապացոյցները ունինք.

ա) Նախ, 9-րդ դարու պատմիչ Թովմաս Արծրունի երբ կը խօսի արաբներուն դէմ խութեցի Յովնանի գլխաւորութեամբ սասունցիներու ապստամբութեան մասին, կը պատմէ, թէ պատերազմի գացող խութեցիները անդադար սաղմոսներ կ'արտասանէին անգիր կերպով, «հին թարգմանութեամբ», որ ակնարկութիւն է նախամետրոպեան թարգմանութեան, 4-րդ դարուն իրագործուած եւ եկեղեցիներէն ներս գործածութեան դրուած եւ բերանացի ուսուցուած (Թովմա Արծրունի):

բ) Մեր ժամագիրքերուն մէջ տեղ գտած սաղմոսներու թարգմանութիւնը ակնբախ կերպով տարբեր է այն պաշտօնական բնագիրէն, որ Աստուածաշունչներու գրաբար ամբողջական հրատարակութեանց մէջ կը գտնենք: Յայտնապէս երկու տարբեր թարգմանութիւններ ունինք, որոնցմէ հնագոյնն է ժամագիրքին մէջ գտնուածը, որ վստահաբար, նոյնինքն 4-րդ դարու բերանացի թարգմանութեան գրառումն է 5-րդ դարուն իրականացուած, մինչդեռ միւսը Սահակ Մետրոպեան թարգմանութիւնն է 5-րդ դարուն նորովի կատարուած:

- Վերադառնալով բերանացի թարգմանութեան աշխատանքին,

այդ աշխատանքը կը մնայ ապերախտ եւ անորոշ ապագայով, որքան ատեն որ մեր լեզուին յատուկ սեփական տառեր չգտնուէին եւ արձանագրուելով անոնք չամրագրուէին: Անչափօրէն դժուար էր այդպիսի թարգմանիչներու պատրաստութիւնը երկար տարիներու տքնաջան աշխատանքով, իսկ արդիւնքը հոպին հետ կրնար կորսուիլ, որքան ատեն որ կը մնար բերանացի: Տակաւին, այնքան քիչ էին այդպիսի հմուտ եւ լաւ թարգմանիչները, իսկ նոյն անձերը ամէն տեղ չէին կրնար հասնիլ: Եւ, ինչպէս կը վկայէ Ս. Մեսրոպի կենսագիրը, «ուր որ թարգմանիչ մը չէր գտնուեր՝ աստուածաշնչական ընթերցումները եւ ամբողջ արարողութիւնը ժողովուրդին անհասկնալի կը մնային»:

- Ի՞նչ էր այս բոլորին լուծումը: Լուծումը ինքզինք կը յուշէր արդէն: Անհրաժեշտ էր սեփական այբուբեն ունենալ եւ, առաջին հերթին, կատարուած աշխատանքները գրաւորապէս արձանագրել ու տարածել:

4) ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԻՆՉԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՆ

1) Աստուածաշունչը դպրոցներէն ներս

Եւ կատարուեցաւ առաջին հրաշքը՝ Ս. Մեսրոպի ծեռքով յօրինուեցան հայոց տառերը: Ունեցանք մեր սեփական այբուբենը: Ս. Մեսրոպ Մաշտոցի ծեռքով Հայոց Այբուբենին գիտը պատմելէ անմիջապէս ետք, Ղազար Փարպեցի կը պատմէ, թէ ինչպէ՛ս Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ կ'ուզէին անմիջապէս դպրոցներ բանալ, բայց կար խոչընդոտ մը, զոր պէտք է յաղթահարէին. «Այնուհետեւ Փրկիչին առաջնորդութեամբ կարգի դնելով հայերէն գիրերու [դասա]գիրքը, յունարէնի դասագիրքերուն օրինակով, կ'ուզէին դպրոցներ կարգել եւ ուսուցանել պատանիներու բազմութեան, որովհետեւ ամէն մարդ սրտագինս կը փափաքէր հայերէնով աւանդուած գիտութիւնը, ուրախ, որ ասորերէնի տանջալից խաւարէն ազատելով [ոյսին [պիտի գային]: Բայց վարանումով կանգ կ'առնէին Սուրբ Գիրքի չգոյութեան պատճառով, որովհետեւ տակաւին Եկեղեցւոյ Սուրբ Կտակարանները հայերէն լեզուով չկային»¹⁵:

Հիմա պէտք էր երկրորդ հրաշք մը: Եւ կատարուեցաւ երկրորդ հրաշքն ալ: Թարգմանուեցաւ Աստուածաշունչը, եւ թարգմանուեցաւ հրաշալի կերպով, տիրականօրէն, վսեմագոյն լեզուով, զարմանահրաշ հաւատարմութեամբ, «Թագուհին Թարգմանութեանց»:
Կերպարանափոխուած էր Աշխարհն Հայոց:

Հիմա արդէն ժամանակը եկած էր հայերէնով եւ հայերէն ծրագրով դպրոցներ բանալու:

Հայագիր դպրոցը հայերէն դասագիրքով միայն կարելի է պատկերացնել: Հետեւաբար, առաջին իսկ հերթին անհրաժեշտ էր հայերէն դասագիրք մը տալ աշակերտներուն ծեռքը: Խօսքը միայն այբբենարանի մը մասին չէ, այլ իսկական դասագիրքի մը, որ ծառայէր թէ իբրեւ ընթերցարան լեզուն ուսուցանելու համար, եւ թէ կրթութիւն ու դաստիարակութիւն ջամբելու միջոց տեսակ մը «Քրիստոնէական»: Արդ, ի՞նչ պիտի ըլլար առաջին դասագիրքը: Բնականաբար Աստուածաշունչը:

Կորին Կարդապետ իր ուսուցիչին Ս. Մեսրոպ Մաշտոցի վարքը գրած ատեն, հայերէնի այբուբենի գիտը նկարագրելէ անմիջապէս ետք կը պատմէ. «Եւ [Սուրբ] Գիրքի թարգմանութեան սկսանալն Սողոմոնի առակներէն, որ իր սկիզբէն իսկ կը թելադրէ իմաստութեան ծանօթանալ ըսելով. “Ճանչնալ իմաստութիւնն ու խրատը, հասկնալ հանճարեղ խօսքերը”, ինչ որ գրուեցաւ նոյն այն գրիչին (=Հռովանոսի) ծեռքով, որ միաժամանակ պատանիներուն կ'ուսուցանէր հայերէն դպրութեան գրչութիւնը»¹⁶:

Ահա թէ ինչ եղաւ մեր առաջին դասագիրքը: Ապա Կորին Ս. Մեսրոպի Հայաստան դարձը եւ նորագիտ նշանագիրներով առաջին աշակերտներու երկամեայ պատրաստութիւնը կը ներկայացնէ՝ այս վերջիններուն համար հաստատելով.

«[Ժ.] ...Եւ այնպէս հանգամանօրէն միջամուխ եղան [աստուածային] օրէնքներուն ու պատգամներուն, որ ամբողջութեամբ դուրս եկան իրենց նախկին ինքնութենէն: [ԺԱ.] Այնուհետեւ աստուածային գործին մշակութեան [նուիրուելով] աւետարանական արուեստին ծեռնարկեցին թարգմանելով, գրելով եւ ուսուցանելով»¹⁷:

Ի՞նչ եղաւ արդիւնքը այս աստուածային գործին մշակութեան: Դարձեալ Կորինը ինքն է որ կը պատմէ հիասքանչ բառերով.

«[ԺԱ.] ...Այն ատեն երանելի, ցանկալի եւ անչափօրէն սքանչելի դարձաւ Հայաստան մեր աշխարհը, [որովհետեւ] յանկարծ այնտեղ [այստնուեցան] օրէնուսոյց Մովսէսը մարգարէական դասով, եւ գալիքին դիմող Պօղոսը ամբողջ առաքելական գունդովը, Քրիստոսի աշխարհը փրկող Աւետարանով, մէկ անգամէն եկան հասան [եւ] երկու հաւասարակիցներուն - Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի - ծեռքով հայա-բարբառ, հայերէնախօս դարձան:

Այնուհետեւ պէտք էր տեսնել [յառաջ եկած] սրտալիր ուրախութիւնը եւ ակնահաճոյ տեսարանը: Որովհետեւ այն երկիրը - Հայաստանը -, որ նոյնիսկ անունը չէր լսած այն կողմերուն, ուր կա-

տարուեցան Աստուծոյ բոլոր սքանչելի գործերը, շուտով, մէկ անգամէն տեղեակ եղաւ բոլոր կատարուածներուն, ոչ միայն [նոր] ժամանակներուն տեղի ունեցածներուն, այլ նաեւ անցեալ ժամանակներուն եղածներուն եւ գալիք բաներուն, սկիզբին ու կատարածին, եւ բոլոր աստուածատուր ամանդութիւններուն:

[ԺԲ.] Իսկ երբ փորձով տեսան գործին յաջողութիւնը, այնուհետեւ անելի մեծ վստահութեամբ եւ շատ անելի աշակերտներ խմբեցին նորագիտ վարդապետութեամբ ուսուցանելու եւ կրթելու, եւ [զանոնք] պատրաստելու համար անգէտ մարդոց քարոզութեան, որոնք անձնական մղումով կը փութային եւ կու գային Հայաստան Աշխարհի բոլոր կողմերէն ու գաւառներէն՝ դէպի Աստուծոյ գիտութեան բացուած աղբիւրը»¹⁸:

Նոյն իրողութիւնը կը հաստատէ Ղազար Փարպեցի, երբ Ս. Սահակի ձեռքով Աստուածաշունչի թարգմանութեան գլուխ գալը պատմելէ ետք, կը նկարագրէ յառաջ եկած արդիւնքը. «Երբ Հայոց Սուրբ Հայրապետը Սահակ գլուխ հանեց հոգեւոր վաստակաշատ այս գործը, այնուհետեւ անմիջապէս դպրոցներ բացուեցան հօտին ուսումնառութեան համար, բազմացան գրիչներու խումբերը՝ իրար գերազանցելով, Սուրբ Եկեղեցւոյ պաշտամունքները զարդարուեցան, ժողովուրդը մեծ բազմութեամբ, այր թէ կին, սկսաւ փութալ Փրկչական տօներուն եւ մարտիրոսներու [յիշատակի] համախմբումներուն: Հոգեւորապէս շահած եւ մեծապէս օգտուած խնդութեամբ լեցուն դուրս կու գային մեծ խորհուրդին - Պատարագին - հաղորդութենէն, եւ իւրաքանչիւրը իր տունը կ'երթար, մեծահասակներ թէ մանուկներ, սաղմոսելով եւ կցորդներ երգելով ամէն տեղ, հրապարակներուն վրայ, փողոցներուն մէջ, թէ տունը»¹⁹:

Հայագիր Աստուածաշունչը պիտի գար նոր թռիչք եւ նոր որակ տալու նաեւ հայ վանականներու կեանքին: Ս. Մեսրոպ ինք վանական կեդրոններու հաստատումով եւ վանականներու կրթութեամբ ալ կը զբաղէր: Կորին, Աստուածաշունչի թարգմանութենէն ետք այդ անհամար թիւով վանականներուն կեանքը ներկայացնելով՝ կ'ըսէ. «Այնտեղ գինիով արբենալ չկար, այլ [Սուրբ] Հոգիով կը լեցուէին, սիրտերը հոգեւոր երգերով կը պատրաստէին՝ զԱստուած փառաբանելու եւ գովելու համար: Հոն հոգեպատում կիրքերու քաղցրուսոյց ընթերցուածներով կը կրթուէին: Հոն յորդորական վարդապետութեամբ կը քաջալերուէին յառաջդիմելու եւ ընտիր գտնուելով հասնելու համար պսակումին՝ Քրիստոսադիր նպատակին: Հոն հոգիով կ'եռային աստուածապաշտ ծառայողութեամբ: Հոն աղերսալից աղօթք եւ հաշտեցուցիչ խնդրանք կը մատուցանէին մարդասէր Աս-

տուծոյ, որպէսզի բոլորն ալ փրկուին»²⁰:

Այս սքանչելի արդիւնքը յարաբերաբար շատ կարճ ժամանակամիջոցի մը մէջ Հայաստան Աշխարհի անպատմելի փոխակերպումը ինքնին կը ցուցնէ այն եզակի տեղը եւ դերը, որ ունեցաւ Աստուածաշունչը հայաշխարհին եւ հայ մարդուն սիրտին մէջ: Իսկ այդ տեղը եւ դերը ոչ մէկ ուրիշ արտայայտութիւն այնքան դիպուկ կերպով կը բացատրէ, որքան Վարդանանց սերունդին յաճախ մէջբերուած արտայայտութիւնը. «Մենք Սուրբ Աւետարանը կը ճանչնանք իբրեւ հայր, իսկ առաքելական եւ ընդհանրական Եկեղեցին իբրեւ մայր»²¹:

2) Աստուածաշունչը տուներէն ներս

Անգամ մը որ Աստուածաշունչը հայացաւ, անիկա անբաժանելի մասը դարձաւ նաեւ ընտանեկան կրթութեան եւ հոգեւոր դաստիարակութեան: Ասիկա մանաւանդ ճշմարիտ էր ազնուական դասուն համար, որ իր ձեռքին մէջ կրնար Աստուածաշունչի օրինակներ ունենալ եւ ընտանեկան թէ առանձնական ընթերցում կատարել:

Այսպէս, 5-րդ դարու մեր հաւատամարտին սքանչելի վկայագրողը Եղիշէ կը վկայէ, որ Վարդան Մամիկոնեան Սպարապետը «իր մանկութենէն սկսեալ տեղեակ էր Սուրբ Կտակարաններուն»²²: Իր ժամանակի իշխաններէն եւ ազնուականներէն շատերուն համար նոյն վկայութիւնը կը տրուի, թէ «անոնցմէ շատեր իրենց մանկութենէն ի վեր ուսած էին Սուրբ Գիրքերը»²³: Ամէն անգամ որ պատերազմի կ'երթային, մանաւանդ քրիստոնէական իրենց հաւատքին համար, սաղմոսներ կ'երգէին²⁴:

Աւարայրի դաշտին վրայ, Ս. Ղեւոնդ Երէց իր խօսքը անոնց ուղղելով կ'ըսէր. «Ինձմէ անելի տեղեակ եւ հմուտ էք Սուրբ Կտակարաններուն»²⁵: Պատերազմի աւարտէն ետք ալ, լեռներն ապաստանած փախստական նախարարներուն թէ անոնց կիներուն մասին յատուկ վկայութիւններ կը գտնենք Եղիշէի քով: Նախարարներուն համար կ'ըսէ, թէ «անոնց իսկական ուրախութիւնը Սուրբ Գիրքի ընթերցումն էր»²⁶, իսկ կիներուն համար կը վկայէ, թէ «մարգարէական ընթերցումներն էին անոնց իսկական մխիթարութիւնը»²⁷: «Անդադար սաղմոսներ կը մըմնջէին անոնք»²⁸: Բանտարկուած նախարարները եւս անդադար սաղմոսներով կ'ամոքէին իրենց սիրտին նեղութիւնը²⁹:

Վարդան Մամիկոնեանի դուստրը Շուշանիկ, որ վրաց Աշուշա բղեշխին կինն էր եւ անոր ուրացումէն ետք անոր ձեռքով ալ նահատակուեցաւ Քրիստոսի հանդէպ իր կատարեալ հաւատարմութեան

համար, իր մեծ հորը՝ Ս. Սահակ Կաթողիկոսին մէկ փոքրիկ Աւետարանն ունէր իր քով եւ շարունակ կը կարդար³⁰:

Վահան Մամիկոնեան մարգպանը եւ իր եղբայրները իրենց մօր ծեռքին տակ Աստուածաշունչով դաստիարակուած էին:

Այսպէս կարելի է երկարել շարքը: Քիչ ետք տարբեր կերպով պիտի տեսնենք շարունակութիւնը:

**5) ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ
ՅԵՏԱԳԱՅ ԴԱՐԵՐՈՒՄ**

Ինչպէ՞ս կը պատկերանայ Աստուածաշունչին ուսուցումը յաջորդող դարերուն:

Աստուածաշունչն իր մնայուն տեղը ունեցաւ ժողովուրդի կեանքին մէջ: Մանաւանդ սաղմոսներուն համար յիշատակութիւն ունինք, թէ յետագայ դարերուն եւս ժողովուրդը անգիր կը սորվէր գանոնք, եւ ամէն առիթով սաղմոսները ներկայ էին մարդոց անհատական թէ հաւաքական կեանքի երեսներուն վրայ: Վերը յիշեցինք օրինակը խութեցիներուն կամ սասունցիներուն, որոնք սաղմոսները անգիր գիտէին եւ կ'արտասանէին:

Նոյնպիսի վկայութիւն կը գտնենք 13-րդ դարուն, ուր ժամանակի սրբակեաց նշանաւոր դէմքը եւ մատենագիրը՝ Յովհաննէս Գառնեցի կը վկայէ, թէ ամբողջ ժողովուրդը՝ «քահանաներ ու ռամիկներ, պատանհներ ու մանուկներ - կոզեռք - եւ հաւատաւոր կիներ» անգիր կ'արտասանէին սաղմոսները՝ բերանէ բերան աւանդուած սխալներով միասին: (Ալիշան, «Հայապատում», էջ 460):

Դարձեալ նման վկայութիւն մը կը գտնենք Կիրակոս Գանձակեցիի քով, որ կը հաղորդէ, թէ մինչ ուրիշ ազգեր «գիրքերով կ'երգեն սաղմոսները, հայեր անգիր ըրած կ'արտասանեն»:

- Անցողակի յիշենք, որ քահանաներուն համար պայման էր Դաւիթի սաղմոսները անգիր գիտնալը, ինչպէս ատիկա մեզի կը յիշեցնէ ու կը պահանջէ 12-րդ դարու մեր նշանաւոր Հայրապետը՝ Ս. Ներսէս Շնորհալի իր «Ընդհանրական Թուղթ» գործին մէջ, որ հայ ժողովուրդի բոլոր գաւակներուն եւ անոնց իւրաքանչիւր խաւին ուղղուած հայրական սիրոյ եւ խրատական շրջաբերական իր անդրանիկ նամակն է:

- Բերուած օրինակները ցոյց կու տան, թէ Աստուածաշունչը երբեք ալ Եկեղեցիին եւ Եկեղեցականին մենաշնորհը չէ եղած մեր մէջ: Աշխարհականները նոյնքան տեղեակ եւ տէրը եղած են անոր: Այս իրողութեան անհատական բացառիկ օրինակներն ալ չեն պակսիր:

Այսպէս.

Բագրատունեաց թագաւորութեան վերջին եւ դժբախտ թագաւորը՝ Գագիկ Բ., որ լաւապէս ծանօթ էր Աստուածաշունչին եւ Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութեան, յոյներուն դիմաց կը պարծէր ըսելով. «Հնուտ եմ Աստուծոյ բոլոր գիրքերուն, թէ Հին եւ թէ Նոր [Կտակարաններուն], եւ բոլոր հայերը կը վկայեն իմ խօսքերս, որովհետեւ վարդապետներուն հաւասար կ'ընդունին զիս»³¹:

Նոյն 11-րդ դարուն պատկանող ուրիշ դէմք մըն է Կարսի Աբաս թագաւորին որդին՝ Գագիկ, որ ոչ միայն իմաստասէր էր եւ հռետոր, այլ նաեւ աստուածաբան, որ յոյն վարդապետներու կաճառին մէջ կը նստէր Ս. Սովիա եկեղեցիին մէջ, «եւ ամբողջապէս գիտէր Աստուծոյ Հին եւ Նոր Կտակարանները»³²:

Նոյնպէս Հին եւ Նոր Կտակարաններուն քաջածանօթ էր ժամանակակից Վասակ Պահլաւունիի որդի Գրիգոր Պահլաւունին, Մագիստրոս անունով ճանչցուած, որ թէ յոյն վարդապետներուն հետ կը մրցէր եւ անոնց կարգին կը նստէր Ս. Սովիայի մէջ, այլ նաեւ «Հայերուն համար վարդապետներու կարգին էր»³³: Ասիկա նոյն այն Գրիգոր Պահլաւունին է, որ 1043 թուականին, Կ. Պոլսոյ մէջ, չորս օրուան ընթացքին ամբողջ Աստուածաշունչը պիտի ամփոփէր տաղաչափուած հազար տողերու մէջ անով պատասխան տալու համար Մանուչէ անունով արաբ իշխանի մը, եւ ջրելու համար Գուրանին ենթադրեալ առաւելութիւնը:

Դարձեալ նոյն դարուն, նման ուրիշ դէմք մըն էր Բագրեւանդ Գաւառի իշխանը՝ Ներսէս, «բանիբուն եւ իմաստասէր, մեծն Արգինայի մէջ ուսած, որ կը տիրապետէր աստուածեղէն Կտակարաններու բոլոր շնորհքներուն, եւ իր հզօր գիտութեամբն ու զարմանալի ատենախօսութեամբը կարող էր դէմ դնելու յոյներու բոլոր իմաստուններուն, ճիշդ Գագիկի եւ հայոց միւս իմաստասէրներուն պէս»³⁴:

Վերում Բ. թագաւորին համար կը վկայուի, որ «մանուկ տարիքէն իր կրթութեամբ վարժուած էր աստուածային օրէնքները կարդալու»³⁵:

Նման աշխարհական դէմքերուն քով, անշուշտ բնաւ զարմանալի պիտի չըլլար մեր մատենագրութեան մէջ յիշատակութիւնը այն հայ վարդապետներուն, որոնք Աստուածաշունչին քաջահմտութիւնը ունէին: Մէկ-երկու օրինակ կը բաւէ այդ ուղղութեամբ.

Ստեփանոս Տարօնացի Ասողիկ պատմիչը կը հաղորդէ 9-10-րդ դարուն ապրած Սարգիս Վարդապետի մը մասին, որ «մանուկ տարիքէն Սուրբ Գիրքը անգիր սորված էր» ծայրէ ի ծայր³⁶:

13-րդ դարուն, Յովհաննէս Երզնկացի Պլուզ Վարդապետին հա-

մար կը պատմուի, թէ ամբողջ Աստուածաշունչը (կամ առնուազն Ճաշոցը) գոց գիտէր: Օր մը, Անիի մայր եկեղեցիին քահանաները փորձեցին ծաղրի ենթարկել զինք կարճահասակ վարդապետին դիմաց դնելով շատ բարձր գրակալ մը: Յովհաննէս Վարդապետ անայլայլ կերպով անգիր արտասանեց օրուան ընթերցուածները, ասփիբերան եւ ամօթահար ձգելով քահանաները:

Մատթէոս Ուռհայեցի պատմիչը բազմաթիւ վարդապետներ կը գովէ այս կապակցութեամբ: Այդպիսիներէն մէկն է 1127-ին կամ 1128-ին վախճանած «Հայոց Կուրոս Սուրբ Վարդապետը, որ Աստուծոյ բոլոր կտակագիրքերը ուսած էր եւ անոնց խորագոյն քննութեան հասու եղած, եւ լաւապէս կը տիրապետէր Աստուծոյ Հին եւ Նոր Կտակարաններուն, իրեն ընկերակից եղող Գէորգ Վարդապետին հետ միասին, որ Մեղրիկ կը կոչուի»³⁷:

Ամենայն դիրութեամբ կարելի է բազմապատկել այս օրինակները՝ նման քաջահմուտ սուրբ գրագէտներու փաղանգը հասցնելու համար մինչեւ վերջին դարերը եւ մեր ժամանակները:

6) ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒ ՀԱՅ ՎԱՆՔԵՐՈՒ ԵՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Վերը տեսանք, թէ որքան տիրականօրէն ներկայ էր Աստուածաշունչը հայ ժողովուրդի կեանքին մէջ, եւ հարկ չկայ ըսելու Հայ Եկեղեցոյ ու հայ եկեղեցականին առօրեային մէջ:

Այս ընթացքը չի փոխուիր բնաւ, այլ կը շարունակուի առաւել խտացած ձեւով, միակ եւ հասկնալի տարբերութեամբ մը.

Մինչ ժողովուրդին կեանքին մէջ Աստուածաշունչը անմիջականօրէն ներկայ կը մնայ իր անգիր սորված բաժիններով միայն, հայ եկեղեցականին ու դպրոցական պատրաստութիւն ստացած անհատ աշխարհականներու կեանքին մէջ անիկա կը ներկայանայ հետզհետէ աւելի խորացուած ու մասնագիտացուած ուսման մը պատկերով, որ կը ջամբուի եկեղեցական կեդրոններուն մէջ, հայրապետանոցներու թէ թեմական առաջնորդարաններու անմիջական հովանիին տակ գործող վարդապետանոցներով, կամ որոշ վանքերու մէջ, որոնք սկիզբէն ի վեր ուսումնական կեանքին հակած եւ աստիճանաբար մասնագիտացուած ուսումներու կը ձգտին ու կը տիրանան:

Տակաւին կար նաեւ երկրորդ կերպ մը, երբ աստուածաշնչական ուսումներուն մասնագիտանալ փափաքող անձը կ'երթար քաջահմուտ անձի մը քով, եւ երկար տարիներ անոր քով մնալով, համբե-

րութեամբ ու տքնաջան աշխատանքով կը փորձէր իւրացնել իր վարդապետին ունեցած ամբողջ գիտութիւնը:

Ստորեւ մեր տալիք օրինակներուն մէջ երկու կերպերն ալ պիտի պատկերացուին: Ինչ կը վերաբերի վարդապետանոցներուն ու վանքերուն, դժուար է բոլորին մասին խօսիլ այստեղ նոյնիսկ եթէ մեր նիւթին սեղմ սահմաններուն մէջ ուզենք մնալ: Կը բաւարարուինք արագ նշումներով միայն:

1) Նշանաւոր վարդապետարաններ, ուսուցիչներ ու մատենագիրներ

Առաջին վարդապետանոցը Վաղարշապատի դպրոցն էր, ուր պատրաստուեցան մեր երկրորդ սերունդի թարգմանիչները եւ հայաաշխարհի առաջին ուսուցիչները Ս. Մեսրոպի եւ անոր աշակերտներուն շունչին տակ:

5-րդ դարէն սկսաւ փառքը Սիւնեաց վարդապետանոցին, որուն ներքողը տարբեր աղբիւրներէ եւ իր իսկ արդիւնքներէն կը քաղենք, բայց մանաւանդ զայն կը փառաբանէ Սիւնեաց պատմիչը Ստեփանոս Օրբէլեան, եւ կ'ըսէ, թէ «մեծարուած եւ Հայաստանի վարդապետներուն մէջ նախաթոռ էր Սիւնեաց Աթոռը»³⁸: Ըստ նոյն պատմիչին, Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Սիւնեաց Աթոռին տուած են միայն Աստուածաշունչը թարգմանելու եւ մեկնելու իշխանութիւնը³⁹: Սիւնեաց դպրոցները բարձր գնահատուած են եւ համեմատուած Աթենքի դպրոցներուն հետ, իբր համալսարան⁴⁰: Սիւնիքի այս վարդապետարանէն ելած են քանի մը անուանի հեղինակներ Մովսէս Քերթոզ 6-րդ դարուն, Մաթոսաղա Վարդապետ եւ իր աշակերտը Թէոդորոս Քոթենաւոր 7-րդ դարուն, Ստեփանոս Եպս. Սիւնեաց 8-րդ դարուն, որ Աստուածաշունչի նշանաւոր ուսուցիչ մը⁴¹ եւ մեկնիչ մըն է նաեւ (Մեկնութիւն Զորից Աւետարանաց, Մեկնութիւն Տեսլեան Եզեկիէլի, Մեկնութիւն Յոբայ):

Այրարատ նահանգին Արշարունիք կամ Երասխաձոր գաւառին մէջ 7-րդ դարուն անուն առած է Վարդիկ Հայր կոչուած վարդապետանոցը, որուն ուսումնական ծրագիրին մասին տեղեկութիւն չէ հասած մեզի, բայց որուն փայլուն մէկ աշակերտն է Գրիգորիս Եպս. Արշարունի, որուն «Մեկնութիւն Ընթերցուածոց» անունով գործը ցոյց կու տայ մեկնողական իր պատրաստութիւնը:

Սիւնիքի դպրոցներուն մէջ յետագայ դարերուն նշանաւոր մշակութային օճախ մը պիտի հանդիսանար Տաթևի վանքը 4-րդ դարէն գոյութիւն ունեցող վանք մը, վերաշինուած 895 թուականին, ուր կը մնային շուրջ 500 վանականներ՝ զխաւորաբար մշակոյթին նուիր-

ուած մարդիկ: Հոս ծաղկած արուեստներն էին երաժշտութիւնը, գրչութիւնը եւ նկարչութիւնը, բայց, միաժամանակ, գիտութիւնները, որոնց մէջ առաջին հերթին՝ Աստուածաշունչը եւ վարդապետական ուսումը: Այս դպրոցին գլխաւոր ներկայացուցիչները պիտի ըլլային Ս. Յովհան Ռոտմնեցի, Ս. Գրիգոր Տաթեւացի եւ Թովմա Մեծփեցի:

10-րդ դարուն, Վասպուրական նահանգի Ռշտունիք գաւառին մէջ հիմնադրուած վարդապետարան մըն էր Նարեկայ վանքը, որ նուիրուած էր երաժշտութեան ու գրականութեան, ինչպէս նաեւ Աստուածաշունչի ուսման: Անոր հիմնադիրը եղաւ Անանիա Վրդ. Նարեկացի, իսկ դպրոցին ամէնէն ծանօթ հրաշք-տաղանդը՝ Ս. Գրիգոր Նարեկացի, որ բացի բանաստեղծ ըլլալէ, նաեւ Աստուածաշունչի մեկնիչ մըն է (Երգ Երգոց):

11-րդ դարուն ծաղկեցան Հաղբատի եւ Սանահինի վանքերը, որոնք համալսարանական մակարդակի դպրոցներ եղան, կեդրոն ամէն տեսակի ուսմանց եւ արուեստներու, որոնց կարգին հարկաւ նաեւ Ս. Գրոց ուսումներուն: Երկրորդին մէջ նշանաւոր եղաւ Անանիա Վրդ. Սանահնեցի, որուն համար Կիրակոս Գանձակեցի պատմիչը կ'ըսէ. «Անուանի եւ գիտնական, Եկեղեցւոյ լուսաւորիչ», «հանձարեղ մտաւորական, տոմարական արիեստին գիտակ եւ աստուածային գիրքերուն մեկնող»⁴²:

11-12-րդ դարերուն Կիլիկիոյ մէջ նշանաւոր հանդիսացաւ Շուրի Կարմիր վանքը, որուն աշակերտներէն հանդիսացան մեծիմաստ մեկնիչներ, ինչպէս Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետ (Մեկնութիւն Մատթէոսի), Իգնատիոս Եպս. Շնորհալի (Մեկնութիւն Դուկասու), Սարգիս Վրդ. Շնորհալի (Մեկնութիւն 14 Թղթոցն Պողոսի):

Նոյն դարուն, Կիլիկիոյ ուրիշ մէկ պարծանքն է Ս. Ներսէս Լամբրոնացի, որուն աստուածաշնչական հմտութիւնը կ'երեւի իր բազմաթիւ մեկնութիւններուն մէջ (Արարածոց, Սաղմոսաց, Առակաց, Ժողովողի, Երգոց Երգոյն, Իմաստութեան Սողոմոնի, Երկուտասան Մարգարէից, Դանիէլի, Մատթէոսի Աւետարանին, Կաթողիկեայ Թղթոց, Տէրունական Աղօթից):

Կիլիկիոյ ուրիշ մէկ նշանաւոր ուսումնարանն եղաւ Սկեւռայի վանքը, ուր կրկին մեծ վարկ ունէր Ս. Գրոց ուսումը, եւ որուն գլխաւոր մէկ ուսուցիչը եղաւ Ներսէս Լամբրոնացի:

Կիլիկիոյ Մեծքարի վանքէն էր 13-րդ դարուն Յակոբ Բ. Կաթողիկոսը, որ «իմաստուն էր եւ հանձարեղ, վարժ Աստուածաշունչ գիրքերուն, հմուտ էր եւ փնտռող իմաստուններու գրութեանց»⁴³: Սա Սիսի Հայրապետանոցի դպրոցին զարկ տուաւ՝ հոն ուսուցիչ կարգելով Տարօնի Ս. Կարապետի վանքէն Յովհաննէս

Վարդապետը, «որպէսզի դասաւանդէ եւ Աստուածաշունչ գիրքերը մեկնէ Եկեղեցւոյ երիտասարդ աշակերտներուն»⁴⁴:

Նոյն 13-րդ դարուն, Յովհաննէս Տաւուշեցի գիտնական Վարդապետին աշակերտը՝ Մխիթար Գոշ, Ս. Գիրքի մասնագէտ մըն էր: Կիրակոս Գանձակեցի պատմիչին վկայութեամբ, փոքր տարիքէն ծնողներուն կողմէ տրուեցաւ Ս. Գրոց ուսման, այսինքն վանք, եւ հագի պատանութիւնը թօթափած՝ կուսակրօն քահանայ ձեռնադրուեցաւ. «Եւ երկրաւոր տարիներ քահանայական ծառայութիւնը կատարելէ ետք, ցանկաց հմտանալ Սուրբ Գիրքերու իմաստին եւ խորին առակներուն, որոնք անոր մէջ կան: Իր դիմաց ելաւ Տաւուշեցի անուանուած Յովհաննէս Վարդապետը, որ այդ ժամանակ երեւելի էր իր գիտութեամբ. նախ աշխարհական եղած էր կարճ ժամանակ մը, իսկ իր կողակիցը կորսնցնելէ ետք կրօնաւորութեան հետեւած, եւ հմտացած աստուածային գիրքերուն վարդապետական պատիւին տիրանալով: Մխիթար ասոր քով մնաց երկար տարիներ [Սուրբ] Գրոց ուսումով զբաղելով»⁴⁵: Մխիթարի համբաւը շուտով տարածուեցաւ ամէնուրեք: Հաստատուեցաւ Նոր Գետիկի վանքին մէջ, որ այնպիսի բարձր մակարդակի դպրոց մը եղաւ, որ շատեր իրենց ուսումը եւ տիտղոսները ծածկելով՝ հոն կու գային դարձեալ աշակերտելու մեծ վարդապետին: Իր բազմաթիւ գործերուն մէջ ունինք Երեմիայի մարգարէութեան համառօտ մեկնութիւն մը, Արարածոց մեկնութիւնը, Եսայի Մարգարէի եւ Տասներկու փոքր մարգարէներու մեկնութիւնները:

Այստեղ՝ Նոր Գետիկի մէջ Մխիթար Գոշին աշակերտեցաւ Վանական Վարդապետ, որ «աստուածային գիրքերու, Հին եւ Նոր Կտակարաններուն ամբողջ մեկնութիւնը [իւրացնելով], եղաւ գիտնական եւ արժանացաւ վարդապետութեան մեծագոյն աստիճանին»⁴⁶:

Նոյն 13-րդ դարուն Սեպուհ լեռան վրայ Ս. Մինասի անապատին մէջ կ'ուսանի եւ յետոյ ուսուցիչ կը դառնայ Յովհաննէս Երզնկացի, որ կը սկսի «կարգ մը եղբայրներու մեկնել Աստուածաշունչ գիրքերը»: Այնուհետեւ Յովհաննէս կը հաստատուի Արտագի մօտակայքը գտնուող Ծործորի վանքը, ուրկէ պիտի ստանար իր Ծործորեցի մականունը: Այստեղ դարձեալ իր շուրջ կը ժողովէ «բանասէր անձինք», որոնք Աստուածաշունչ գիրքերու ուսումով կ'ուզէին կրթուիլ: Անոնց փափաքով է որ կը ձեռնարկէ շարունակելու Շնորհալիի կիսատ ձգած «Մատթէի Մեկնութիւն»ը: Սեպուհ լեռան նոյն դպրոցին յաջորդ մէկ ուսուցիչը կ'ըլլայ Մովսէս Երզնկացի, որ իր շուրջ կը հաւաքէ «աստուածային ուսումները եւ վարդապետական վարժութիւնները

սիրող» կրօնաւորներու բազմութիւն մը⁴⁷:

Միջնադարեան եկեղեցական-համալսարանական նշանաւոր կեդրոն մըն էր Գլաժորի վանքը, որ 13-14-րդ դարերուն ծաղկեցաւ Վայոց Ձորի մէջ եւ հռչակուեցաւ իբրեւ «երկրորդ Աթէնք, մայրաքաղաք ամէն իմաստութեան»: Այս համալսարանին անուանի ուսուցչապետն էր Եսայի Վրդ. Նչեցի: Այս դպրոցին աշակերտներէն մէկը Ներսէս Վրդ. Սասնեցի, որ Մուշի Ս. Ղազարի վանքէն էր, իր մէկ գործին (յիշատակարանին) մէջ կը յիշէ, թէ Գլաժորի համալսարանին մէջ «եօթը տարի աշխատեցայ Հին եւ Նոր Կտակարաններու եւ այլ բազմաթիւ Սուրբ Խօսքերու ուսման - վարժումն - համար»⁴⁸: Այս նոյն համալսարանին մէջ իր ուսումն ըրաւ Ս. Գրիգոր Տաթեւացի, որ Աստուածաշունչին քաջահմուտ առատագիր մեկնիչ մը պիտի ըլլար (Սաղմոսներու, Առակաց եւ Երգ Երգոցի համառօտ մեկնութիւններ, Յոբի լուծմունքը, Մատթէոսի Աւետարանին մեկնութիւնը):

Տաթեւացիի մէկ աշակերտն եղաւ Թովմա Վրդ., որ շարունակաբար 60 տարի առաջնորդը եղաւ Մեծփի վանքին, եւ 35 տարի Աստուածաշունչ դասաւանդեց իր աշակերտներուն⁴⁹:

2) Աստուածաշունչի ուսուցման վերաբերող հրահանգներ

Վերոյիշեալ դպրոցները կամ վարդապետարանները հարկաւ ունէին իրենց ներքին կարգ-կանոնը, եւ պատահական մէկը չէր կրնար այս կամ այն նիւթը դասաւանդել: Նոյնը անշուշտ առաւել չափով կը վերաբերի Աստուածաշունչին, որուն ուսուցումը պատահականութեան կարելի չէր ձգել: Այս կապակցութեամբ պէտք է նշել, որ որեւէ նոր դպրոցի հիմնադիրը արդէն այլապէս ծանօթ եւ հռչակուած, եւ առհասարակ նաեւ Եկեղեցւոյ իշխանութեան կողմէ ճանչցուած եւ արտօնուած անձ մը կ'ըլլար: Իսկ արդէն իսկ հաստատուած վանքերու պարագային սովորաբար անուանի աշակերտները կը ժառանգէին իրենց ուսուցիչին աթոռը կամ ամբիոնը, եւ կամ նոյնինքն իրենց ուսուցիչին կողմէ կը նշանակուէին այդ պաշտօնին:

Ղարբերու ընթացքին վանքերու աճումը եւ յաճախ անոնց ունեցած անկախ դիրքը երբեմն պատճառ եղան, որ անոնց վանահայրերը կամ ուսուցիչները ուղղակիօրէն ենթակայ չըլլան թեմակալ առաջնորդներուն, որոնց սահմաններուն մէջ կը գտնուէին: Իսկ այս անկախ վիճակը կը թուի, թէ որոշ պարագաներու դժուարութիւններ ստեղծած է:

Այդ մասին մտածել կու տայ հետեւեալ պարագան.

Կոստանդին Ա. Բարձրբերդոցի Կաթողիկոսը (1221-1267), իր ժամանակի եղծումները բարեկարգելու միտքով 1241-ին Սիսի մէջ

ժողով մը կը գումարէ, եւ ապա կանոնական բովանդակութեամբ շրջաբերական նամակ մը կը յղէ բոլոր եկեղեցականներուն: Այս շրջաբերականին մէջ ուսման կապակցութեամբ 3-րդ կանոնը կը շեշտէ. «Եպիսկոպոսին առաջին գործը պէտք է ըլլայ Եկեղեցւոյ ուսման ուսուցիչներն ու ուսումնականները ինք սահմանել մեծ հոգաբարձութեամբ, որպէսզի մանուկներուն ուսուցիչները առանց գայթակղութեան, գիտուն եւ ուսումնական [մարդիկ] ըլլան»⁵⁰: 10-րդ կանոնը հետեւեալը կ'ըսէ. «[Սուրբ] Գիրք դասաւանդողները շատերու վկայութեամբ թող ըլլան, որպէսզի գիտուն ըլլան եւ ամբողջ Գիրքին վարժ եւ տեղեակ, եւ ամէն ինչով փորձառու: Նոյնպէս ալ [Սուրբ] Գիրքին աշակերտները անոր կողմէ ընտրուին եւ կատարեալներուն կողմէ առաւել փորձի [ենթարկուին] եւ վկայութիւն ունենան»⁵¹: Ի վերջոյ, 11-րդ կանոնը կը սահմանէ. «Եպիսկոպոսը պէտք է հրամայէ, որ Եկեղեցւոյ Սուրբ Գիրքերը գրուին արուեստաւորներու, ուղղափառներու եւ գիտուններու կողմէ»⁵²:

3) Աստուածաշունչի ուսուցման կերպերը եւ դասագիրքերը

Վերը մենք ակնարկեցինք բազմաթիւ մեկնիչներու եւ թուեցինք ոմանց գործերը: Այս կապակցութեամբ պէտք է ըսենք, որ յիշեալ մեկնութիւնները ընդհանրապէս չեն գրուած գրասենեակի մը առանձնութեան մէջ, իբրեւ զուտ տեսական հետաքրքրութեան կամ զուտ մտաւորական ճիգի արդիւնք: Առհասարակ, անոնք գործնական ձեռնարկներ են, ինչպէս անոնց ներածական կարճ ծանօթութիւնները կը նշեն: Եթէ ակնարկ մը նետենք այդ ներածականներուն վրայ, կը տեսնենք, որ անոնց մեծագոյն տոկոսը գրուած է անձի կամ խումբ մը անձերու, առհասարակ աշակերտներու խնդրանքին կամ պահանջքին վրայ, «ի խնդրոյ ուսումնասէր մանկանց Եկեղեցւոյ», եւ «յօգուտ իմաստասիրաց»: Այս հանգամանքն իսկ ցոյց կու տայ, որ անոնք գրուած կամ խմբագրուած են իբրեւ ուսումնական ձեռնարկ, իբրեւ դասագիրք ծառայելու համար:

Այսպէս, օրինակ, Գրիգոր Տաթեւացի Տաթեւի վանքէն ներս իր դասընթացքներուն մէջ կը կատարէր Պօղոսի 14 նամակներուն մեկնութիւնը: Երբ ժամանակ մը ետք կ'ապաստանի Արձէշ Մեծփի վանքը, այստեղ աստուածաշնչական ուսումներու կարգին կ'աւանդէ Յովհաննէսի Աւետարանին եւ Յոբի մեկնութիւնները:

- Հարկաւ պէտք չէ մոռնալ, որ գործնական այս մեկնութեան դասերը նաեւ առիթ էին Աստուածաշունչին կապուած ամէն տեսակի աստուածաբանական հարցեր դնելու եւ անոնց լուծումը տալու, աստուածաշնչական դժուարութիւնները լուծելու, ինչպէս նաեւ մեկ-

նաբանական արուեստին վերաբերեալ սկզբունքներ սորվելու եւ կիրարկելու:

- Յիշեալ դասերուն մակարդակը եւ լրջութիւնը լաւ պատկերացնելու համար պէտք է գիտնալ, որ «աշակերտ» բացատրութիւնը չի վերաբերիր պատանհներու կամ դեռատի երիտասարդներու, ինչպիսին են այսօրուան մեր դպրեվանքներուն աշակերտները, այլ արդէն իսկ քահանայ կամ վարդապետ ձեռնադրուած անձերու, որոնք սովորաբար քսանհինգ տարեկանէն վեր կ'ըլլային: Հետեւաբար, խօսքը երբեք ալ նախնական ծանօթութիւններու կամ տարրական մեկնութեան մասին չէ, այլ խորացուած, մասնագիտական ուսման:

Նոյն այդ մակարդակը եւ լրջութիւնը ցոյց տալու համար առաջ բերենք Միջին Դարու համալսարանական դասընթացքի մէկ ամբողջական ծրագիրը, որուն մէջ կը պատկերանայ նաեւ Ս. Գրոց ուսումը.

Թովմա Մեծփեցի Վարդապետին կենսագիրը իր ուսուցիչին բացառիկ զարգացումը եւ գիտութիւնը ցոյց տալու համար կը յիշէ իր ժամանակի ուսման առարկաները, որոնք հետեւեալներն են. «Ուսած էր իմաստասիրութեան տասներկու ճիւղերը - մասերը բնախօսութիւնը, ուսողութիւնը, աստուածաբանութիւնը, բարոյագիտութիւնը, տնտեսագիտութիւնն ու քաղաքագիտութիւնը, թուաբանութիւնը, երաժշտութիւնը, երկրաչափութիւնը, եւ աստղաբաշխութիւնը: Նոյնպէս ամբողջ հռետորական արուեստին, (այսինքն) արտաքին փիլիսոփայութեան եօթը գիրքերը, որոնք են՝ Քերականութիւնը, Սահմանքը, Պորփիրը, Արիստոտէլի Ստորոգութիւնները, Պերիարմենիսը, Աշխարհաց [գիրքը], եւ Առաքինութիւնները: Նոյնպէս, աստուածեղէն եօթանասուներկու գիրքերու Հին եւ Նոր Կտակարանները: Տակաւին, աստուածագարդ եւ ուղղափառ սուրբ վարդապետներու յիսուն Սուրբ Գիրքերը՝ դժուարիմաց եւ խրթին բառերով լեցուն: Ի վերջոյ, յիսունմէկ վիպասանական պատմագրութիւնները, որոնք [Թովմա] անգիր սորված կը պատմէր մարդոց»⁵³:

- Գալով ուսման տարիներու թիւին, անիկա երբեք ալ մասնաւոր սահման մը չէ ունեցած, ինչպէս ներկայի դպրեվանքներուն կամ համալսարաններուն մէջ կը գտնենք: Ուսման ծրագիրը միշտ ալ կախում ունեցած է ուսուցիչէն եւ կամ աշակերտներէն, եւ տեւած է այնքան, որքան որ անհրաժեշտ էր որոշակի ամբողջականութեամբ մը աստուածաշնչական գիտութիւնը ջանքելու համար: Տակաւին, ինչպէս մէկ-երկու ակնարկութիւն ըրինք, շատ մը վարդապետներ մէկէ աւելի ուսուցիչներու քով աշակերտած են վեց կամ եօթը տարի, ոմանք՝ տասը տարի, իսկ ոմանք (ինչպէս, օրինակ, Գրիգոր Խլաթե-

ցի) մինչեւ 24 տարի:

7) ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆԶԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՆԵՐԿԱՅ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ

- Անցեալ դարուն Գրիգոր Դպիր Փէշտիմալձեան եւ Յովհաննէս Տէրոյեց:

- Ներկայ ժամանակներուն եւս եղան ու կան մարդիկ, որոնք ո՛չ միայն մօտիկ են Աստուածաշունչին, այլ նաեւ անդադար կը կարդան ու կը սերտեն գայն, իսկ ոմանք, որոնք օժտուած են բացառիկ յիշողութեամբ, նաեւ կը փորձեն անոր ընդարձակ գանձարանը փոխադրել իրենց յիշողութեան մէջ: Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի երկար տարիներու ուսուցչապետ Բիւզանդ Եղիայեան իր «Ներածութիւն Հին Կտակարանի» գիրքին մէջ այս մասին ունի հետաքրքրական տեղեկութիւն մը. «Բարզէն Ա. Կաթողիկոս Կիլիկիոյ մեզի անծամբ պատմած է, թէ ինք ականատես ճանչցած է երկու հայեր, աչազուրկ, “որոնք անթերի գիտէին ճաշոցի ընթերցումները”, մին սեբաստացի պատուելի Թադէոս Կէօզիւրեան (հայրը ներկայիս Պոլսոյ մէջ վաստակաւոր նախկին քահանայ Տ. Ջարմայր Ծ. Կրդ. Կէօզիւրեանի), միւսը ատաբազարցի դպիր Սերովբէ Գաւալձեան, որ միանգամայն լաւ շարականագէտ ու տօնացուցագէտ ալ էր»:

- Մեր ներկայ սերունդին մէջ Աստուածաշունչի գիտութիւնը նահանջած է:

8) ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Աստուածաշունչը Եկեղեցիէն ներս

Հոգեւոր կենդանութիւնը կարելի չէ ունենալ միայն ծիսական-արարողական կեանքի մը հետապնդումով, առանց Աստուածաշունչին տիրական ներկայութեան անոր մէջ: Այսօր մեր եկեղեցիներէն ներս Աստուածաշունչը գրեթէ լռած է, կամ այնքան քիչ տեղ ունի: Պէտք է վերադառնայ տիրականօրէն՝ մեր ծիսական կեանքին կեդրոնը բազմելու, որովհետեւ ան է առաջին Հաղորդութիւնը Աստուծոյ կողմէ մեզի ընծայուած, Կենաց Ծառին աննիւթական պտուղը, Աստուծոյ կենդանացուցիչ խօսքը, որ նոր կեանք կրնայ տալ իր Եկեղեցիին:

2) Աստուածաշունչը վարդապետարաններէն ու դպրոցներէն ներս

3) Աստուածաշունչը տուններէն ներս

Վերադարձ Աստուածաշունչին, որ աղբիւրն է վերանորոգութեան, եւ յայտնաբերիչը ճշմարիտ մարդուն, ընկերային առողջ ըմբռնումներու, ամուր ընտանեկան կառոյցի, եւ նպատակասլաց համազգային կեանքի մը, որոնք յոյսովն ու հաւատքովը կ'ապրինք ու կը գործենք:

- ¹ Տե՛ս «Կնիք Հաւատոյ», Անթիլիաս, 1998, էջ 151:
² Անդ, էջ 134:
³ Անդ, էջ 139:
⁴ Տե՛ս Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Վահան Մամիկոնեան, Վենետիկ, Դ. տպ., 1933, էջ 641-642:
⁵ Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն Տանն Սիսական, Մոսկուա, 1861, Բ., էջ 80:
⁶ Տե՛ս Կանոնագիրք Հայոց, աշխատասիրութեամբ Վազգէն Յակոբեանի, Ա. հատոր, Երեւան, 1964, էջ 372:
⁷ Տե՛ս Կանոն Ձեռնադրութեան եւ Օծման Եպիսկոպոսի, գրաբար բնագիր եւ աշխարհաբար վերածում: Աշխարհաբարի վերածեց Ջարեհ Եպս. Ազնաւորեան, Անթիլիաս, 1997, էջ 45-47:
⁸ Տե՛ս Ագաթանգեղոս, Հայոց Պատմութիւն: Աշխարհաբարի վերածումը եւ ծանօթագրութիւնները՝ Արամ Տէր Դեւոնդեանի, Երեւանի Համալսարանի հրատարակչութիւն, Երեւան, 1983, մասն Գ. 782, էջ 438, 818, էջ 458:
⁹ Անդ, 783, էջ 440:
¹⁰ Անդ, 790, էջ 444:
¹¹ Յաճախապատում ճառք, էջ 23:
¹² Ագաթանգեղոս, նշ. աշխ., 845, էջ 470:
¹³ Տե՛ս, անդ, 840, էջ 468:
¹⁴ Նոյնը:
¹⁵ Տե՛ս Ղազար Փարպեցի, նշ. աշխ., էջ 46-47:
¹⁶ Տե՛ս Կորիւն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, հրատ. Արտաշէս Ա. Մաթեոսեանի, «Հայաստան», Երեւան, 1994, էջ 90-91:
¹⁷ Անդ, էջ 92:
¹⁸ Անդ, էջ 92-93:
¹⁹ Ղազար Փարպեցի, նշ. աշխ., էջ 51-52:
²⁰ Կորիւն, նշ. աշխ., էջ 101-102:
²¹ Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին, քննական հրատարակութիւնը Երուանդ Տէր Սինասեանի, Երեւան, 1957,

- Գ., էջ 67:
²² Անդ, էջ 81:
²³ Անդ, էջ 18:
²⁴ Անդ, էջ 58, 61:
²⁵ Անդ, էջ 84:
²⁶ Անդ, էջ 97:
²⁷ Անդ, էջ 157:
²⁸ Անդ, էջ 97, 157:
²⁹ Անդ, էջ 152:
³⁰ Տե՛ս Սոփերք Հայկականք, Թ., էջ 27:
³¹ Մատթէոս Ուռհայեցի, Պատմութիւն, Մասն Բ., Երուսաղէմ, 1869, էջ 195:
³² Անդ, էջ 220:
³³ Անդ, էջ 220-221:
³⁴ Անդ, էջ 221:
³⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կարապետ Ա. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, Լ., էջ 268:
³⁶ Ստեփանոս Ասողիկ, Գ., էջ 268:
³⁷ Մատթէոս Ուռհայեցի, նշ. աշխ., էջ 460-461:
³⁸ Ստեփանոս Օրբէլեան, նշ. աշխ., էջ 82:
³⁹ Անդ, էջ 18, 82:
⁴⁰ Անդ, էջ 97:
⁴¹ Անդ, էջ 97, ուր կը յիշէ թէ տակաւին վարդապետ էր, երբ «նստաւ րաբունական ամբիոնին»:
⁴² Կիրակոս Գանձակեցի, նշ. աշխ., Ա., էջ 112:
⁴³ Տե՛ս Հ. Վարդան Վրդ. Հացունի, Դաստիարակութիւնը Հին Հայոց Քով, Վենետիկ-Ս. Ղազար, 1923, էջ 210:
⁴⁴ Անդ, էջ 211:
⁴⁵ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, նշ. աշխ., ԺԳ., էջ 207:
⁴⁶ Տե՛ս Հ. Վարդան Վրդ. Հացունի, նշ. աշխ., էջ 223:
⁴⁷ Տե՛ս անդ, էջ 199-200:
⁴⁸ Տե՛ս Բ. Ե., շ., էջ 1174:
⁴⁹ Տե՛ս Հ. Վարդան Վրդ. Հացունի, նշ. աշխ., էջ 205-206:
⁵⁰ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, նշ. աշխ., ԽԳ., էջ 304:
⁵¹ Անդ, էջ 305:
⁵² Անդ:
⁵³ Տե՛ս Հ. Վարդան Վրդ. Հացունի, նշ. աշխ., էջ 220-221:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ 700-ԱՄԵԱԿԻՆ ԴԻՄԱՑ ԵՒ 21-ՐԴ ԴԱՐՈՒ ՍԵՄԻՆ

Բացառիկ հանգրուանի մը սկզբնաւորումն է որ կը կատարուի այս երեկոյ կիպրահայ սիրելի մեր գաղութին մէջ: Հանգրուան մը, որ կարճ ու կտրուկ կը սահմանենք իբրեւ 1700-ամեակ, եւ կը բացատրենք իբրեւ քրիստոնէութեան Հայաստանի պետական կրօն հռչակման 1700-ամեակ: Հանգրուան մը, որուն նախածրագրումը շուրջ հինգ տարի առաջ սկսաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Երանաշնորհ Ս. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի նախածեռնութեամբ, հոգելոյս հայրապետին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Տ. Չարեգին Բ. Կաթողիկոսին միջեւ թղթակցութեամբ, եւ երկու Աթոռներու Կրօնական ժողովներու խորհրդակցութեանց ճամբով: Ապա, 1994 Մայիս 6-9-ին, երկու կաթողիկոսներուն եւ Երուսաղէմի ու Կ. Պոլսոյ պատրիարքներուն մասնակցութեամբ յատուկ խորհրդակցական հանդիպումներ տեղի ունեցան Ս. Էջմիածինի մէջ, ուր որոշուեցաւ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակը նշել արժանի փառաւորութեամբ, Հայ Եկեղեցիի նախանձախնդրութեամբ, գլխաւորութեամբ եւ կազմակերպութեամբ, եւ պետութեան սերտ գործակցութեամբ: Որոշումները կարելի է ամփոփել այսպէս.

- 1) Որպէս յրբեւիճական տարի նկատի ունենալ 2000-2001 տարին:
- 2) 1995-էն մինչեւ 2001 ձեռնարկել աշխատանքներու, որոնց իրագործման համար պէտք է կազմել յանձնախումբեր:
- 3) 1700-ամեակին առիթով Երեւանի մէջ կառուցել շքեղ եւ ընդարձակ Մայր Տաճար մը:
- 4) Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մայրավանքին մէջ կառուցուող թանգարան-մատենադարանը նուիրել նոյն յրբելեանին:

5) Մինչեւ 2001 իրագործել բազմաթիւ հրատարակութիւններ, որոնք նպատակ ունենան ներկայացնել եւ առաւել խորութեամբ ծանօթացնել մեր Եկեղեցին, անոր պատմութիւնն ու աստուածաբանութիւնը, անոր ծէսն ու մշակութային հարստութիւնը, որոնց մէջ յատուկ տեղ ունենան Աստուածաշունչը, սուրբերու վարքը եւ Արեւմտեան Հայաստանի եկեղեցական ճարտարապետական յուշարձանները:

6) 1700-ամեակը դարձնել ուխտաւորութեան երեւոյթին վերաշխուժացման առիթ, եւ 1997-2001 իւրաքանչիւր տարի ուխտագնացութիւններ կազմակերպել դէպի Հայաստանի եւ Սփիւռքի գանազան սրբավայրերը:

7) Հայաստանի եւ արտասահմանի կարեւոր կեդրոններուն մէջ գիտաժողովներ եւ ցուցահանդէսներ կազմակերպել Հայ Եկեղեցին իր անցեալով ու ներկայով արժեւորելու համար:

Այս աշխատանքներու կազմակերպումին համար կազմուեցաւ կեդրոնական յանձնախումբ մը երկու կաթողիկոսներուն նախագահութեամբ եւ երկու պատրիարքներուն ատենապետութեամբ, 14 հոգեւորականներու մասնակցութեամբ, որոնցմէ վեցը Սուրբ Էջմիածինէն, չորսը Անթիլիասէն, երկուքը Երուսաղէմէն եւ միւս երկուքը Պոլիսէն: Աշխարհական անդամներուն թիւը պիտի ըլլար վեց, որոնցմէ չորսը Ս. Էջմիածինի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդէն, իսկ երկուքը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան Քաղաքական ժողովէն:

Հայաստանեայց Եկեղեցւոյ այս կեդրոնական յանձնաժողովին առընթեր, հայրենի պետութիւնը ինք եւս 1700-ամեակի նախապատրաստման աշխատանքները կազմակերպող յանձնաժողով մը ստեղծեց, բաղկացած 24 հոգիներէ բոլորն ալ պետական, ակադեմական, հայագիտական, բանասիրական եւ արուեստաբանական շրջանակներէն ընտրուած:

Վերոյիշեալ կեդրոնական յանձնախումբը իր առաջին հանդիպումն ունեցաւ 1995-ի Սեպտեմբերին, Ս. Էջմիածինի մէջ, ուր քննարկուեցան եւ բիրեղացան 1700-ամեակին կապուած ընդհանուր առաջարկները: Իսկ յրբեւիճական աշխատանքներու գործնական ծրագրումին եւ պատրաստութեան համար կազմուեցաւ 11 հոգիներէ բաղկացած գործադիր մարմին մը, որ գործադիր քարտուղարի մը հետ գործակցաբար ցարդ քանի մը հանդիպումներ ունեցաւ հետզհետէ գործադրութեան ղնելով տրուած հիմնական որոշումները: Այս աշխատանքներուն որոշակի երեսները եւ անոնց կապուած մանրամասնութիւնները իրենց ատենին լոյս տեսան եւ միշտ կ'երեւին հայ

մամուլին մէջ, եւ վստահաբար ձեզմէ շատեր արդէն տեղեակ են անոնցմէ:



Բացառիկ հանգրուանի մը սեմին ենք, ըսինք վերը, եւ այդ հանգրուանը 1700-ամեակն է:

Անհատ մարդու կեանքին մէջ, թէ հաստատութեան մը, միութեան մը, կազակերպութեան մը կամ ազգի մը կեանքին մէջ, ամեակ մը կամ յոբելեան մը առիթ է ուրախութեան, տօնակատարութեան, կեանքի մը, անցած ճանապարհի մը վրայ կատարուած իրագործումներու վերոյիշումին ու պանծացման, բայց նաեւ՝ առիթ է խորհրդածութեան, դատումներու եւ դատաստաններու, ինքնաքննութեան եւ անկիւնադարձային որոշումներու, վերափոխութեան ու վերանորոգութեան, նոր առաջադրանքներու եւ նպատակապաշարութեան:

1700-ամեակը այդպիսին պիտի ըլլայ մեզի համար, որովհետեւ բոլորիս սեփականութիւնն է անիկա, բոլորիս յոբելեանն է, եւ իւրաքանչիւրս մեր սեփական բաժինը, մասնակցութիւնը եւ ներդրումը պիտի ունենանք անոր նշումին, անոր բերած ուրախութեան եւ հպարտութեան, անոր առթած խոհերուն եւ տրուելիք որոշումներուն ու քայլերուն մէջ, իրագործումներուն ու վերանորոգումին մէջ:

Այստեղ պահ մը կանգ առնենք, եւ փոքրիկ վերադարձով մը տեսնենք, թէ ի՞նչ տեղի ունեցաւ 1700 տարի առաջ, եւ ի՞նչ է որ պիտի նշենք 2001 թուականին:

ՔՐԻՍՏՈՆԵՌԻԹԵԱՆ ՃԱՆԱԶՈՒԽԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Չվախնաք, ամբողջ պատմութեան վերաքաղը պիտի չընեն. պարզապէս քանի մը կարեւոր իրողութիւններ ու երեւոյթներ պիտի մատնանշեն՝ յետոյ քանի մը խորհրդածութիւններ կատարելու համար:

Երբ քրիստոնէութեան պետական ճանաչման մասին կը խօսինք, արդէն իսկ ըսած ու ճանչցած կ'ըլլանք, որ քրիստոնէութիւնը 1700 տարի առաջ չէր որ մուտք գործեց Հայաստան: Անիկա արդէն շուրջ 2000 տարիներու պատմութիւն մը ունի: Քրիստոսի աշակերտներէն երկուքին՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս Առաքեալներուն քարոզութեամբ անիկա տեղ գտաւ Հայաստան Աշխարհի մէջ, մօտաւորապէս առաջին դարու կէսերուն, եւ շուտով իր արմատները նետեց այնտեղ, թէպէտեւ առժամապէս մնաց շատ համեստ սահմաններու

մէջ: Որքան ալ համեստ, սակայն երկու առաքելական Աթոռներ ունեցաւ մեր աշխարհը. առաջինը՝ Թադէոս Առաքեալին ձեռքով Վասպուրականի նահանգի Արտազի գաւառին մէջ, որ աստոր համար ալ կոչուեցաւ Արտազի Աթոռ կամ Աշտիշատի Աթոռ. եւ երկրորդը Բարթողիմէոս Առաքեալին ձեռքով Աղբակի մէջ:

Երկու Աթոռներն ալ ունեցան իրենց շարունակութիւնը: Մեզի մասնաւորապէս հասած է ցուցակը Արտազի Աթոռին վրայ Ս. Թադէոսի յաջորդներուն, որոնց շարքը մինչեւ 3-րդ դարու կէսերը կը հասնի (Զաքարիա, Զամենտոս, Ատրնեստեհ, Սուշէ, Շահէն, Շաւարշ, Ղեւոնդիոս, իսկ 3-րդ դարու կէսերուն Մեիրուժան), եւ ապա կարծէք թելը կը փրթի: Պարզապէս, պատմական տեղեկութիւններ չեն հասած մեզի: Քրիստոնէութիւնը կար եւ կը մնար, բայց կը թուի, թէ շարունակական հալածանքները ժամանակաւորապէս ընդհատեցին Հայ Եկեղեցւոյ նուիրապետութեան շարունակականութիւնը:

Ընդհատման այս կէտին է որ կարեւոր դէպքեր տեղի ունեցան Հայաստանի մէջ, դէպքեր, որոնց ընդհանուր գիծերուն ծանօթ էք վստահաբար: Թէ ինչպէ՞ս պարսիկ թագաւորներ չկարենալով պարտութեան մատնել հայոց խոսրով Բ. թագաւորը, դաւադրաբար Հայաստան ուղարկեցին խոսրովի հեռաւոր մէկ ազգականը Անակ Պարթեւը, որ շուրջ եօթը տարի ետք, առիթով մը, երբ խոսրովի հետ որսի ելած էին, սպաննեց խոսրովը եւ փորձեց փախչիլ, բայց ինք ալ սպաննուեցաւ հայ նախարարներուն ձեռքով, որոնք Անակի ընտանիքը սրակոտոր ըրին, եւ միայն փոքրիկն Սուրէն (ապագայ Ս. Գրիգորը) ազատեցաւ իր ստնտուին ձեռքով: Երկրին անիշխանութենէն օգտուելով, պարսից Շապուհ թագաւորը մտաւ Հայաստան եւ կոտորել տուաւ խոսրովի գերդաստանը: Կոտորածէն փրկուեցան երկու մանուկներ՝ Տրդատ եւ իր քոյրը խոսրովիդուխտ:

Գիտէք, դարձեալ, թէ ինչպէ՞ս Տրդատ մեծցաւ եւ հռոմէական բանակին մէջ ծառայեց Լիկիանոս կոմսի խնամքին տակ: Եկաւ ժամանակը, երբ Տրդատ հռոմէական ոյժերուն օգնութեամբ իր կազմած բանակով տիրացաւ հայրենի աշխարհին: Այդ բանակին միացած էր նաեւ քրիստոնէայ մկրտուած Գրիգորը, որ մերժեց յաղթանակի տօնակատարութեանց առիթով ընծաներ մատուցել Անահիտ չաստուածուհիին, բազմաթիւ եւ անտանելի չարչարանքներ կրեց իր հաւատքին համար, եւ ի վերջոյ, երբ յայտնուեցաւ իր ինքնութիւնը Պարթեւ Անակի որդին ըլլալը, նետուեցաւ Արտաշատ քաղաքի խոր Վիրապին մէջ:

Յետոյ ուրիշ դէպքեր յաջորդեցին: Հռիփսիմեան կոյսերը յայտնուեցան Հայաստանի մէջ, Տրդատի ականջը հասաւ Հռիփսիմէի բա-

ցառիկ գեղեցկութեան համբաւը, եւ ուզեց զայն կնութեան առնել: Բայց ան մերժեց: Արքայական վիրաւորուած հպարտութիւնը չկրցաւ հանդուրժել այդպիսի բան, եւ վայրագօրէն սպաննել տուաւ զայն եւ անոր ընկերուհիները: Հռիփսիմէն գնաց, բայց մնաց յաճախանքը: Տրդատ ինկաւ մելամաղծոտութեան գիրկը, կորսնցուց իր ներքին անդորրը, հեռացաւ մարդոցմէ եւ անճանաչելի դարձաւ: Եւ փրկութիւնը եկաւ խոր Վիրապէն: Մինչ կը թուէր, թէ Գրիգորի յիշատակն իսկ մոռցուած է, Խոսրովիդուխտ իր տեսիլքները պատմեց արքունիքին, եւ պնդեց որ երթան Գրիգորը փնտռելու եւ դուրս հանելու: Եւ դուրս եկաւ Գրիգոր Քրիստոսի մեծ վկան, որ բժշկեց թագաւորն ու արքունիքէն ուրիշներ, ճշմարիտ Աստուծոյ հաւատքը քարոզեց, եւ այդ հաւատքով ալ փոխակերպեց մեր ամբողջ աշխարհը՝ Աստուծոյ դատին յաղթանակը ապահովելով Տրդատի ձեռքով, որ քրիստոնէութիւնը ո՛չ միայն ազատ կրօնք յայտարարեց, այլ՝ զայն հռչակեց պետական միակ կրօնք:

Ե՞ՐԲ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԿ ՄԵՐ ՔՐԻՍՏՈՆԵՌՔԵԱՆ ԴԱՐՉՈ

Ե՞րբ տեղի ունեցաւ այս դարձը եւ պետական կրօնք հռչակումը: Պատմաբաններ բոլորը իրարու համակարծիք չեն:

Շատ մը թուականներ առաջարկուած են, թէպէտ ամէնէն ընդհանրացած տեսակէտը կանգ առած է 301 թուականին վրայ: Եւ այդ հիմամբ է որ 1700-ամեակը պիտի տօնենք 2001 թուականին: Առաջարկուած թուականներէն շատերը շատ կանուխ են, ոմանք ալ զայն կը յետաձգեն մինչեւ 313 թուական: Վերջին մէկ ուսումնասիրութիւնը 274-ը կ'առաջարկէ իբրեւ ամէնէն հաւանական թուականը: Ասոնցմէ որ մէկն ալ ընդունինք՝ չի փոխուիր այն հիմնական ճշմարտութիւնը, որ մեր ժողովուրդը կը մնայ աշխարհի մէջ քրիստոնէութիւնը պետականօրէն ճանչցող առաջին ժողովուրդը, ինչպէս Եկեղեցիներու պատմութեան տեղեակ ու մասնագէտ օտար բոլոր աղբիւրներն ալ կ'ընդունին:

Այս հանգրուանին՝ մէկդի թողունք թիւերն ու թուականները եւ մեր հայեացքը սելեռենք կարգ մը իրողութեանց վրայ:

Եթէ նախապէս քրիստոնէութիւնն արդէն թափանցած էր Հայաստան, հարց պէտք է տանք, թէ ի՞նչ փոխուեցաւ 301 թուականին, որ անկէ առաջ չկար: Կ'արժէ քանի մը հաստատումներ ընել.

1) Մինչեւ 301 թուականը կար քրիստոնէութիւն, բայց չկար կազմակերպուած Եկեղեցի՝ Հայաստանեայց Եկեղեցին: Կային հաւատացեալներու խումբեր, բայց չկար եկեղեցական նուիրապետութիւն, եւ առհասարակ մեծ պակասը կար հոգեւորականներու: Այս թերին

լրացնելու համար Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կեսարիայէն իրեն հետ բերաւ մեծ թիւով եկեղեցականներ, որոնք ծագումով թէպէտ հայեր էին մեծամասնաբար, բայց ամբողջապէս սնած եւ մեծցած յունական կրթութեամբ, ինչպէս ինքը եղած էր անցեալին: Իրեն հետ բերաւ նաեւ յոյն եւ ասորի քարոզիչներ եւ անապատականներ, որոնք տեղաւորեց Հայաստանի զանազան շրջաններուն մէջ, մանաւանդ երկրին հարաւը: Բայց անմիջապէս նաեւ կարգադրութիւններ ըրաւ, որ հոգեւորականներու պատրաստութեան յատուկ գործին համար դպրոցներ բացուին եւ այդ դպրոցներուն մէջ ներգրաւեց մասնաւորաբար հայ քրմական դասը եւ անոնց զաւակները: Յետոյ այդ սերունդէն շատերը եպիսկոպոս ձեռնադրեց Հայաստանի նահանգներուն ու գաւառներուն համար: Կարգ մը աղբիւրներ այդ եպիսկոպոսներուն թիւը 30-36 կը յիշեն, ուրիշներ որոշ չափազանցութեամբ մինչեւ 300-ի կը հասցնեն: Ամէն պարագայի, նորադարձ Հայաստանը պէտք ունէր հոգեւոր պաշտօնեաներու, եւ Ս. Գրիգոր իմաստութիւնն ունեցաւ անմիջապէս այդ կարեւոր քայլը առնելու եւ Հայ Եկեղեցին մարդուժով զինելու, որով կարելի պիտի ըլլար բաւարարել ամբողջ ժողովուրդի մը հոգեւոր կարիքները:

2) 301-էն սկսեալ մեր երկիրը քրիստոնէական նկարագիր զգեցաւ: Իսկ այդ նկարագիրն ունէր նաեւ նոր հաւատքի մը ամբողջ ջերմութիւնը, զօրութիւնը եւ նախանձախնդրութիւնը: Հետաքրքրական է, որ այս մասին վկայութիւնը մեր պատմագիրներէն չի գար, այլ դուրսէն՝ հեռաւոր Պաղեստինի Կեսարիա քաղաքին մէկ եպիսկոպոսէն, Եւսեբիոս կոչուած, որ 4-րդ դարուն սկիզբները, Եկեղեցական պատմութեան առաջին հեղինակն է եւ քրիստոնէական առաջին դարերու ամէնէն աչքառու պատմիչը: Անիկա կը վկայէ, որ քրիստոնէական հաւատքին դարձած Հայաստան Աշխարհը հաւատքի առաջին պատերազմը մղեց 313-ին եւ ջախջախեց Հռոմէական Կայսրութեան արեւելեան բանակը: Մէջբերենք Եւսեբիոսի բառերը. Մաքսիմինոս Ղայա կայսրը (305-313) «պատերազմի ելաւ հայերուն դէմ, որոնք սկիզբը բարեկամ ու նիզակակից էին հռոմայեցիներուն: Եւ որովհետեւ անոնք քրիստոնէայ էին եւ ճշմարիտ Աստուծոյ ջերմեռանդ երկրպագուներ, աստուածատեաց բռնաւորը նեղեց զանոնք, որ կուռքերուն եւ դեւերուն զոհ մատուցանեն: Այսպիսով զանոնք իբրեւ նիզակակից բարեկամ ունենալու տեղ իրեն դէմ հանեց իբրեւ պատերազմող: ... Արդ, հայոց դէմ այդ պատերազմին ընթացքին բազմաթիւ անգամներ իր բանակին հետ միասին ջախջախուեցաւ» (Ղար. Թ., գլխ. 8, Վենետիկ, 1877, էջ 688, 689):

3) Հիմա դիտենք պատկերին միւս երեսը: Քրիստոնէութեան պե-

տական կրօնք հռչակումը, եկեղեցական նուիրապետութեան հաստատումն ու կազմակերպումը, եւ նոյնիսկ մեծ ջերմեռանդութեամբ հաւատքի պատերազմ մղելն ու յաղթանակելը տակաւին չեն նշանակեր, որ Հայաստան Աշխարհը մէկ օրէն միւսը ամբողջապէս քրիստոնէայ դարձաւ: Այդ դարձը մէկ եւ միակ հանգրուանով մը իրականացած եղելութիւն մը պիտի չըլլար, այլ աստիճանական ընթացք մը: Նոր հաւատքը եւ անով եկած նոր մտածողութիւնը, նոր ինքնագիտակցութիւնը եւ նոր աշխարհահայեացքը հետզհետէ պիտի ձեւակերպուէին եւ միախառնուէին մեր ժողովուրդի սիրտին, միտքին ու հոգիին:

Հեթանոսական մտայնութիւններն ու մտածողութիւնը դեռ երկար ժամանակ ներկայ մնացին մեր ժողովուրդին մէջ, յատկապէս որոշ շրջանակներու եւ խաւերու մէջ: Ատոր վկայութիւնները առատօրէն կ'ընծայէ 4-րդ դարու ամբողջ պատմութիւնը եւ մասամբ մը նաեւ յետագայ պատմութիւնը: Այսպէս, օրինակ, կը տեսնենք թէ ինչպէ՞ս Տրդատ թագաւորը իր վերջին տարիներուն դժուարութիւններ կ'ունենայ հեթանոսական մտայնութեանց կառչած շատ մը նախարարներու հետ, որոնք զինք թունաւորելով կը սպաննեն: Ս. Գրիգոր Լուսաւորիչի կրտսեր որդին եւ անմիջական յաջորդը Ս. Արիստակէս կը նահատակուի հեթանոսական կենցաղով ապրող եւ սուրբէն յանդիմանուած Արքեպայոս իշխանին կողմէ: Խոսքով Կոտակ թագաւորին կինը մահափորձ կատարել կու տայ Գրիգոր Լուսաւորիչի միւս որդիին Ս. Վրթանէս Կաթողիկոսի կեանքին դէմ: Ատոր որդին Ս. Յուսիկ Կաթողիկոս Տիրան թագաւորին հրամանով բրածեծ կ'ըլլայ թագաւորը եկեղեցին դուրս վտարելուն համար: Անոր յաջորդը Ս. Դանիէլ նոյն ճակատագիրը կը բաժնէ՝ Տիրանին չենթարկուելուն համար: Ս. Ներսէս Մեծ Կաթողիկոսը նոյնպէս թունաւորումով կը սպաննուի Պապ թագաւորին հրամանով, եւայլն: Տակաւին, հաւանաբար մեր Եկեղեցւոյ պատմութեան դասերէն կը յիշենք, որ 353-ին, պետականօրէն քրիստոնէութեան դարձէն 50 տարի ետք, կաթողիկոսական առաջին նստավայրին Աշտիշատի մէջ յատուկ եկեղեցական ժողով մը գումարեց այդ նպատակով: Իսկ իր բարեկարգութիւններուն կարելոր մէկ մասը հեթանոսական բարքերն ու սովորութիւնները ջնջելու եւ ճշմարիտ քրիստոնէական ոգի մը եւ մտածողութիւն մը ժողովուրդին մէջ արմատաւորելու ճիգն էր:

Ի՞նչ կը նշանակէ ասիկա: Եթէ ժողովուրդը արդէն իսկ քրիստոնէայ դարձած էր, ինչպէ՞ս տակաւին կարելի է խօսիլ հեթանոսութեան կամ աւելի ճիշդ՝ հեթանոսական մտածողութեան եւ սովորութիւններու մասին: Հակասութիւն չկա՞յ արդեօք այստեղ: Միւս

կողմէ, եթէ ժողովուրդը դեռ կառչած կը մնար հեթանոս մտայնութեանց ու կենցաղակերպերուն, կարելի չէ՞ եզրակացնել, որ քրիստոնէութեան իր դարձը ձեւական եղած էր պարզապէս, կամ նոյնիսկ իր կամքին հակառակ, ստիպումի տակ, առանց սեփական համոզումի եւ իսկական հաւատքի:

Վերոյիշեալ հարցումներուն պատասխանը «ոչ» է եթէ ժամանակակից պատմութիւնը ամբողջութեամբ սուտ եւ շինծու պատմութիւն մը չէ: Բայց եթէ մեր պատմագիրները նպատակ ունենային սուտ ու շինծու պատմութիւն մը աւանդել մեզի եւ ուզէին ամէն ինչ շփարուած ու գեղեցկացած ներկայացնել, հակառակը պիտի ընէին. այսինքն, հեթանոսութեան կապուած յետագայ բոլոր յիշատակութիւնները պիտի ջնջէին՝ հետք չձգելու համար անկէ: Մինչդեռ այդպէս չեն վարուած, այլ դէպքերը ներկայացուցած են եղած ձեւով, նոյնիսկ իրենց հակասական երեսներով:

Որդեգրուած հաւատքի մը եւ գործնական կեանքի մէջ երեւան եկող բախումներու երեւոյթը երբեք չի գարմացներ մեզ, եւ չի նշանակեր բնաւ, որ հայ ժողովուրդը դժկամակութեամբ ընդունեց քրիստոնէութիւնը: Նոյնիսկ քուրմերու դասին կողմէ յարուցուած զինեալ ընդդիմութեանց յիշատակութիւնը, եւ Տրդատի կողմէ զինեալ ոյժերով անոնց դէմ մղուած կռիւներու արծանագրութիւնը մեր ըսածին հակառակ վկայութիւնը չեն երբեք, ինչպէս ոմանք կը փորձեն հետեւցնել մակերեսային դատումով մը: Անխուսափելիօրէն, մտայնութեանց բախում մը կար եւ պիտի ըլլար հարկաւ, բայց այդ բախումը հաւատքի գետինին վրայ չէր, այլ՝ մարդկային սովորութեանց եւ խմբակցական շահերուն: Ասիկա մարդկային բնական ճանապարհն է իւրաքանչիւր նորութեան դիմաց, ինչպէս նոր հաւատքի ընկալման պարագային: Միտքը կը հաճի, հոգին կը կապուի, բայց սովորութիւնները, որոնք մարդու մէջ երկրորդ բնութեան վերածուած կ'ըլլան, մարդուն մէջ երկարօրէն կը յամենան տակաւին: Այս երեւոյթին լաւագոյն մէկ օրինակը Պօղոս Առաքեալ ինք կու տայ իր սեփական փորձառութեամբ, որ կ'արժէ յիշատակել: Հռոմայեցիներուն ուղղուած նամակին 7-րդ գլուխին մէջ, մեղքէն ազատագրուած բայց տակաւին այդ մեղքին խայթոցը զգացող քրիստոնէայ մարդուն հոգեվիճակը պատկերելով կ'ըսէ. «Գիտենք անշուշտ, որ Օրէնքը հոգեւոր է. բայց ես մարմնեղէն եմ՝ մեղքին ստրուկ դարձած: Ինչ որ կ'ընեմ՝ չեմ հասկնար, թէ ինչո՞ւ կ'ընեմ: Որովհետեւ ուզածս չէ որ կ'ընեմ, այլ՝ հակառակը՝ ատածս է որ կ'ընեմ: Իսկ եթէ չուզածս է որ կ'ընեմ, արդէն վկայած կ'ըլլամ, թէ Օրէնքը բարի է: Միւս կողմէ, ես չէ՞ որ ըրած կ'ըլլամ զայն, այլ՝ իմ մէջս բոյն դրած մեղքը: Գիտեմ որ իմ մէջս, այսինքն

իմ մարմինիս մէջ որեւէ բարի բան չկայ: Բարին կամենալը ծեռքս է, բայց չեմ յաջողիր գայն կատարել: Եւ այսպէս, բարին որ կը կամենամ, չեմ ընէր, այլ կ'ընեմ չարը որ չեմ ուզեր: Ուրեմն, եթէ չուզածս է որ կ'ընեմ ես ըրած չեմ ըլլար գայն, այլ իմ մէջս բոյն դրած մեղքը: Արդ, ես կը գտնեմ հետեւեալ օրինաչափութիւնը, որ երբ կ'ուզեմ բարին ընել կը տեսնեմ որ միայն չարը ընելու ատակ եմ: Ես իմ ներքին էութեամբս հաճոյքով կ'ընդունիմ Աստուծոյ Օրէնքը. բայց իմ մարմինիս անդամներուն մէջ կը տեսնեմ տարբեր օրէնք մը, որ իմ միտքիս ընդունած Օրէնքին դէմ կը պատերազմի եւ զիս գերի կը պահէ մեղքի օրէնքին, որ իմ անդամներուս մէջ է: ...Ապա ուրեմն, ես ինքս միտքով Աստուծոյ Օրէնքին կը ծառայեմ, իսկ մարմինով՝ մեղքի օրէնքին» (Հռ 7.14-25):

4) Քրիստոնէութեան իսկական դարձը աստիճանաբար պիտի իրագործուէր, մանաւանդ Աստուածաշունչին հայերէն թարգմանութեամբ եւ ժողովուրդին մտածողութեան եւ կեանքին մէջ ներթափանցումովը: Եթէ մինչ այդ ժողովուրդը հետեւող մըն էր իր հայրերու հաւատքին եւ անհոգութիւններուն՝ առանց անձնապէս ճանչնալու իր հաւատքը, իր պաշտած Աստուծութիւնը, Աստուածաշունչի թարգմանութեամբ խորամուխ եղաւ աստուածային գիտութեան, Աստուած մօտեցաւ անհատին, մտաւ իւրաքանչիւրին կեանքին մէջ, անձնականացաւ, եւ հայ մարդը այդ անձնական կապով փոխակերպուեցաւ ու դարձաւ Աստուծոյ սիրովը բռնուած եւ արարչական այդ սիրոյ խառնարանին մէջ նորովի ստեղծուած նոր արարած, որ այնուհետեւ պիտի կարենար Վարդանանց բերնով ըսել. «Ո՞վ կրնայ մեզ բաժնել Քրիստոսի սէրէն, նեղութի՞ւնը, անձկութի՞ւնը, հալածա՞նքը, սո՞վը, մերկութի՞ւնը, վտա՞նգը, կամ սո՞րը: Ինչպէս սաղմոսներուն մէջ գրուած է. «Քեզի համար՝ մարդիկ մեզ կը սպաննեն ամէն օր. ոչխարի պէս սպանդանոց կը տանին»: Բայց այս բոլորէն շատ անէլի յաղթական դուրս կու գանք շնորհիւ Անոր, որ մեզ սիրեց: Որովհետեւ համոզուած եմ, որ ոչ մահը եւ ոչ կեանքը, ոչ հրեշտակները, ոչ չար ոգիներու իշխանութիւնները, ոչ ներկան եւ ոչ գալիքը, ոչ ալ որեւէ զօրութիւն, ոչ վերին եւ ոչ ալ ներքին աշխարհները, ոչ ալ ուրիշ ստեղծագործութիւն մը կրնայ մեզ բաժնել Աստուծոյ սէրէն, որ մենք ճանչցանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ» (Հռ 8.35-39):

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵՐ ԴԱՐՈՒՆ

Այսպիսի հաւատքով, այսպիսի ոգեկանութեամբ, եւ ազգային ու հոգեւոր մեր կեանքին վերաբերեալ այսպիսի տեսլականով մըն էր,

որ անցանք մեր պատմութեան մութ ու լոյս էջերէն՝ հասնելու համար մեր ներկայ 20-րդ դարուն, գիտութեան ու լուսաւորութեան դարուն, որ սակայն տազնապով ու երկունքով պիտի բացուէր ինչպէս ամբողջ աշխարհին, այնպէս ալ ու մասնաւորաբար մեր ժողովուրդին համար, որ աներեւակայելի ցեղասպանութեան մը սահմնկեցուցիչ եւ հոգեցունց փորձառութեամբ սկիզբ պիտի առնէր, յետոյ անցնելու համար նոյնքան ցնցիչ ուրիշ փորձառութիւններէ, որոնք Սփիւռքի դաժան պայմանները պիտի ըլլային մէկ կողմէ, եւ [միւս կողմէ] հազիւ ազատութեան մը արշալուստումը տեսած ազազուն հայրենիքի մը ընկլուզումը պիտի ըլլար աստուածամերժ, հաւատախալած եւ հոգեսպան, բիրտ եւ անմարդկային վարչակարգի մը երկաթեայ ճիրաններուն մէջ:

Դաժան այս փորձութիւնները, հոգին մրրկող այս փորձառութիւններն իրենց խարանը պիտի դնէին աստիճանաբար իր արմատներէն հեռանալ սկսած քրիստոնէական մեր հաւատքին վրայ եւ իր ոյժերէն գրեթէ պարպուած Հայց. Եկեղեցին հազիւ պիտի կարենար դէմ դնել խաւարին եւ ոտքի պահել հաւատացեալներու «մարմինը»՝ կծկուելով ինքն իր մէջ եւ զոհանալով յարաբերաբար կրաւորական գործունէութեամբ մը՝ Եկեղեցւոյ ծիսական կեանքի պահպանման եւ քրիստոնէական դաստիարակութեան մարզերէն ներս:

Այս չարիքները չբաւէին կարծէք, ասոնց վրայ գումարուելու պիտի գար ամենադաժան հարուածը հասցնող տազնապը, որ ներսէն պիտի հարուածէր Հայց. Եկեղեցին՝ արուսետականօրէն ստեղծուած բաժանումով մը անելի եւս տկարացնելով հայ ժողովուրդի միութեան միակ կշուան մնացած աստուածահաստատ այս կառոյցը՝ 1700-ամեայ Եկեղեցին:

ՄԵՆՔ ԵՒ 1700-ԱՄԵԱԿԸ

Եւ ահա՛ մենք՝ 1700-ամեակին եւ անոր մեզի բերած, նոյնիսկ կրնամ ըսել՝ մեզի պարտադրած կամ պարտադրող պահանջներուն ու մարտահրաւերներուն դէմ յանդիման:

Վերը ըսինք, թէ ասիկա առիթ է ոչ միայն ուրախութեան ու հպարտութեան, այլ նաեւ՝ խորհրդածութիւններու, ինքնաքննութեան, նոր առաջադրանքներու եւ որոշումներու:

Ես ուրախ եմ ըսելու, որ 1700-ամեակը նախապատրաստող յանձնախումբերը ճամբայ ելած են ու կը գործեն այն որոշակի գիտակցութեամբ, թէ 1700-ամեակը սոսկ յոբելեանի մը նշումը պէտք չէ ըլլայ, այլ՝ թէ՛ ազգին եւ թէ՛ Եկեղեցիին համար պէտք է իսկական առիթ մը ըլլայ վերափոխութեան ու վերանորոգութեան, ճշմարիտ

հայու մեր ինքնութեան վերագտման, քրիստոնէական հաւատքին մէջ վերադաստիարակման եւ մեր Սուրբ Եկեղեցւոյ աւագանէն հոգեծնունդ վերակրտութեան: Եւ Եկեղեցին ինքը պէտք է ըլլայ եւ տայ օրինակը այդ վերանորոգումին, նոր ստեղծման, «նոր արարած»-ին: Միայն քանի մը կէտեր մատնանշեմ:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԾ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Առաջին հերթին, մեր Եկեղեցին պէտք է վերանորոգուի իր պաշտօնէութեամբ:

Այսօր մեր ժողովուրդը հոգեւորականի նոր պատկեր մը կ'ուզէ տեսնել, պատկեր մը, որ համապատասխան ըլլայ թէ՛ արդի ժամանակներու մտածողութեան եւ ըմբռնումներուն, եւ թէ՛ համապատասխան իր ակնկալութիւններուն: Այս բացատրութիւնը չի նշանակեր, անշուշտ, թէ հոգեւորական անձը ամբողջապէս պէտք է պատշաճի ու նոյնանայ մարդոց ազգային, քաղաքական, ընկերային ու բարոյական ըմբռնումներուն հետ, այլ թէ պէտք է իր պատրաստութեամբ, պաշարով, իր հաւատքով ու լայնախոհութեամբ կարենայ իր մէջ անձնաւորել ներկայ ժամանակի քրիստոնէայ մարդը՝ հաւատքի ու կեանքի ներդաշնակ համակարգումի մը մէջ:

Առանց այսպիսի հոգեւորականութեան մը Հայ Եկեղեցին չի կրնար ունենալ նոր ժամանակներուն ճիշդ սերմնացանը, եւ իր անդաստանները դատապարտուած կ'ըլլան անպտուղ մնալու: Ս. Գրիգոր Լուսաւորիչ իր ժամանակին իմաստնագոյն քայլ մը առաջին հերթին այդ սերմնացանները պատրաստելով: Նոյնը պէտք է ընենք մենք՝ 1700 տարիներու հեռաւորութեան վրայ: Եկեղեցւոյ եւ հաւատացեալի կեանքին համար կենսական անհրաժեշտութիւն է ատիկա: Եւ այդ գիտակցութեամբ ալ կը փորձենք մեր ոյժերը դնել այդպիսի սերունդի մը պատրաստութեան գործին մէջ: Հոգեւորականներու սերունդ մը, որ իր գործին համար ամբողջապէս պատրաստուած եւ սպառազինուած ըլլայ եւ իր կոչումին գիտակից, որպէսզի դժուարին այս ժամանակներուն մէջ կարենայ Քրիստոսի հաւատարիմ վկան ըլլալ եւ իր Եկեղեցիին ճշմարիտ ներկայացուցիչը:

Բաւարար չէ կարիքը մատնանշելը: Մեր ժողովուրդը մեզի չափ եւ աւելի նախանձախնդիր պէտք է ըլլայ գտնելու եւ դէպի հոգեւորական ասպարէզ մղելու յարմարագոյն ու լաւագոյն տարրերը, պարկեշտ եւ գիտակից պատանիներ ու երիտասարդներ, որպէսզի գան, մուտք գործեն Ղպրեվանք, եւ հոգեւոր ուսման գանձարանը իւրացուցած մտնեն մեր ժողովուրդի ծառայութեան դաշտը՝ իբրեւ քահանայ ու վարդապետ:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԾ ԾԷՍ

Երկրորդ, մեր Եկեղեցին պէտք է վերանորոգուի իր ծէսով:

Սքանչելի է աւանդական այն ծէսը որ ունինք զայն հասկցողին եւ անոր ճաշակը ունեցողին համար: Բայց բոլորս ալ գիտենք, որ մեր Եկեղեցւոյ այդ ծիսական երեսը անհրաժեշտ փոփոխութիւններու պէտք ունի վերաթարմանալու եւ կենդանի, կենսունակ ու հոգեշօս տարրի վերածուելու համար ինչպէս էր անցեալին: Աստուածաբանական խորհրդածութիւններով յագեցած անոր լայնաշունչ աղօթքները, շարականներն ու երգերը, ընթերցումներն ու տաղերը այսօրուան արագընթաց, հեւքոտ կեանքին հետ դժուար կը հաշտուին յաճախ: Անոր շարականներու ճոխ գանձարանը փակուած ու կնքուած եւ ժողովուրդին համար գրեթէ անծանօթ եւ անմերձենալի ժառանգութեան մը վերածուած է: Իսկ լեզուի հարցը արդէն գրեթէ անանցանելի պատուար մըն է ժողովուրդին մեծամասնութեան համար: Ի՞նչ ընենք գրաբար լեզուի հարստութիւնն ու գեղեցկութիւնը եւ մանաւանդ աղօթական մեր ներաշխարհին հետ անոր իւրայատուկ համահնչունութիւնը, երբ միւս կողմէ անիկա չի հասնիր այսօրուան մարդուն գիտակցական աշխարհին, եւ ուստի, անհամատեղելի կը մնայ անոր ներաշխարհին եւ այդ ներաշխարհէն բխելիք աղօթքին հետ:

Տակաւին, կան որոշ արարողութիւններ, որոնք անցեալի մարդուն կեանքին անմիջական առօրեային կ'առնչուէին եւ այժմէական էին, բայց այսօրուան մարդուն կեանքին հետ առնչութիւն մը չունին, եւ ուստի շատ բան չեն ըսեր մեզի:

Նորոգութիւնը պէտք է գայ անպայման, եւ այս գետնին վրայ այնքան քիչ բան իրագործուած է անցնող տարիներուն վրայ հակառակ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մնայուն թախանձանքին եւ ճիգերուն, որ ինչեւիցէ պատճառով չյետածգուի արդէն իսկ շատ ուշացած այս հրատապ հարցին լուծումը:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԾ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ

Երրորդ, մեր Եկեղեցին պէտք է վերանորոգուի իր մտածողութեամբ:

Խօսքը անհատ հոգեւորականներու խորհողութեան մասին չէ, այլ Եկեղեցւոյ հաւաքական մտածողութեան իր հաւատքին նորովի սահմանումով կամ բանաձեւումով (քրիստոնէական), իր աստուածաբանութեամբը, իր բարոյագիտական հասկացողութիւններուն եւ արժէքներուն սահմանումովը եւ համապատասխան կեցուածքներու

ճշդումովը այսօրուան ընկերային կացութեանց եւ մտածողութեան նոր հոսանքներու կամ ուղղութիւններու դիմաց եւ ասոնցմէ ծագած հարցերուն կամ տագնապներուն դիմաց:

Իբրեւ օրինակ՝ պարզապէս նշենք քանի մը երեւոյթներ: Ո՞վ չի գիտեր մեր դարը զբաղեցնող հին ու նոր հարցերը, որոնք ալքուամուրիւնը եւ թմրամոլութիւնն են, միասեռականութիւնը կամ պոռնկութիւնը, դիակիզումը, դիւրամահը, արուեստական վիժումները, ամլացումը, արուեստական յղութիւնը, ամուսնալուծումները, մարմնական անդամներու փոխատուութիւնը կամ անոնց պատուաստումը, հոգեբուժութեան ստեղծած հարցերը, մարդոց վրայ կատարուած գիտական կամ բժշկական փորձարկումները, կենսոլորտի ապականոնը եւ անոր կապուած հարցերը, հիւլէական, կորիզային կամ քիմիական գէնքերու գործածութիւնը եւ անոնց ահռելի հետեւանքները, եւայլն, եւայլն:

Եթէ հաւատացեալ անհատ մարդը ուզէ նման հարցերուն դիմաց իր Եկեղեցիին տեսակէտը իմանալ. ո՞ր պիտի գտնէ այդ տեսակէտը: Անցեալին՝ մեր Եկեղեցին ունէր իր Կանոնագիրքը, որ ոչ միայն չոր օրէնքներու սահմանում մըն էր՝ զանցառութեանց եւ կանոններու խախտումին դիմաց պատիժներ որոշող եւ ապաշխարանք սահմանող, այլ նաեւ բարոյագիտական ձեռնարկ մըն էր՝ նման հարցերուն դիմաց Եկեղեցիին եւ քրիստոնէական հաւատքին կեցուածքը ճշդող: 20-րդ դարուն մեր Եկեղեցին չունեցաւ այդպիսի օրինագիրք մը: Արդեօք պիտի ունենա՞յ 21-րդ դարու սեմին...

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՀՈԳԵԻՈՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Չորրորդ, մեր Եկեղեցին պէտք է վերանորոգուի իր ժողովուրդին հոգեւոր պատրաստութեամբ:

Թէ այս գետնի վրայ ի՞նչ է մեր ժողովուրդին մէջ տիրող վիճակը՝ դուք մեզմէ լաւ գիտէք: «Հաւատքը լսելն է,- կ'ըսէ Պօղոս Առաքեալ,- եւ լսելը՝ Աստուծոյ խօսքէն»: Ինչպէ՞ս մէկը պիտի լսէ՝ երբ քարոզող մը չըլլայ (հմմտ. Հռ 10.14): Գիտենք, թէ մեր դպրոցներուն մէջ կրօնի դասերը շատ թերի են. ոչ միայն լաւ մշակուած ծրագիր մը չկայ, ոչ միայն բաւականաչափ պատրաստութիւն ունեցող ուսուցիչներ չկան, այլ նաեւ չկան պէտք եղած դասագիրքերը, արդիականացած, նորովի մտածուած ու գործնականացած դասագիրքերը, ուղեցոյցները, նաեւ օժանդակ գիրքերը՝ մեր մանուկներուն ու պատանիներուն հետաքրքրական, գրաւիչ եւ առողջ կրօնական դաստիարակութիւն մը ջանքելու համար:

Բայց ինչո՞ւ խօսինք դասագիրքերու մասին, երբ չունինք, մեր

ժողովուրդին չենք տուած դասագիրքերուն դասագիրքը հանդիսացող Աստուածաշունչ Մատեանին նոր, այսօրուան մարդուն լեզուով խօսող թարգմանութիւնը: Քիչ առաջ շեշտեցինք, որ մեր ժողովուրդին իսկական դարձը Աստուածաշունչի թարգմանութեամբ պայմանաւորուեցաւ 5-րդ դարուն: Ես հաւատացողն եմ, որ անով պայմանաւորուած է այսօր եւս, եւ 1700-ամեակի կարելորագոյն մէկ իրագործումը պէտք է ըլլար ատիկա, որ, սակայն, մասնակիօրէն միայն իրագործուած է:

Այնուհետեւ կու գան դաստիարակչական միւս բոլոր միջոցները մամուլ, հեռատեսիլ, ծայներիզ, տեսաերիզ, ծայնապնակ, համակարգչային ծրագիրներ, հրատարակութիւններ, հրապարակային ձեռնարկներ, համերգներ, ցուցահանդէսներ, դասախօսական շարքեր, Ս. Գիրքի սերտողութեան դասընթացքներ, եւայլն. որոնք նոյն այդ դաստիարակութիւնը փոխանցելու եւ այսօրուան հայ մարդուն հաւատքը լուսաւորելու, խորացնելու եւ ընդարձակելու արտօն ծառայեն, որպէսզի մենք ոչ թէ միայն աւանդական բայց անկեանք ժամանակներ մը ժառանգորդներն ըլլանք, որոնք քրիստոնէութիւնը արգաստան իրենց ազգային մշակոյթին ճանաչելի պիտակը կամ անոր բարձրացուցիչ մէկ համեմը համարեն, այլ զայն ապրին ու ապրեցնեն իր աւերող կենդանացուցիչ զօրութեամբ, որ ներքին նորոգութեան եւ ազգանուէր ու աշխարհին նպաստ եղող նպատակասլաց ու բովանդակալից կեանքի մը գաղտնիքն իսկ է:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՈՒՄ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԳՈՐԾ

Ի վերջոյ, մեր Եկեղեցին պէտք է վերանորոգուի իր երիտասարդութեամբ եւ յանձնառու, առաքելական Եկեղեցի դառնալով:

Մեր Եկեղեցիները երիտասարդութեամբ պէտք է լեցուին, ինչպէս որոշ տեղեր ուրախութեամբ կը դիտենք որ կը կատարուի արդէն: Բայց խօսքը միայն կրաւորական ու լուռ ներկայութեան մասին չէ: Անոնց յանձնառու մասնակցութիւնը պէտք է ապահովել Հայց. Եկեղեցւոյ կեանքին մէջ, որ միայն ծէսն ու արարողութիւնը չեն, այլ նաեւ ու մանաւանդ անոր առաքելութիւնը ժողովուրդին կեանքին մէջ ընկերային, ծխական, ընտանեկան ծառայութեան զանազան կերպերով:

Եկեղեցին, ինչպէս յաճախ ըսուած է ու պիտի կրկնուի, Եկեղեցիին շէնքը չէ, անոր պատերը չեն, այլ հաւատացեալներու անբողջութիւնը: Եւ կենդանի այդ մարմինն ունի անսահման կարիքներ, որոնց բաւարարումին համար հոգեւորականներու փոքրիկ գունդը

անբաւարար կու գայ: Այդ նպատակով ալ, դեռ անցնող ամառ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը երկօրեայ համագումարով մը որոշեց թեմերէն ներս եկեղեցիներու կողքին ընկերային ու հոգեւոր ծառայութեան բջիջներ կազմել՝ մասնագէտ անձերու, հոգեբաններու, ընկերաբաններու, բժիշկներու եւ գործարար մարդոց մասնակցութեամբ ծովերէն ներս ամէն տեսակի օգնութիւն ընձեռելու համար ծխականներուն, պայքարելու համար աղանդաւորական եւ այլ վնասաբեր, ապագայնացնող եւ այլասերիչ շարժումներու դէմ:

Եւ տակաւին, մեր Կաթողիկոսութիւնը յանձնառու է աւելի յեղափոխական քայլի մըն ալ դիմելու: Եկեղեցականներու շեշտուած բացը դարմանելու, ինչպէս նաեւ մեր ժողովուրդին մէջ հոգեւոր անտարանչութեան գործը նորովի դիմագրաւելու համար՝ մեր Եկեղեցւոյ կեանքին մէջ հիմը դնել «աշխարհիկ» միաբանութեան մը, որուն անդամները իրենց առօրեայ գործն ու զբաղումները պահելով հանդերձ՝ նուիրուին այս առաքելութեան, Եկեղեցւոյ հսկողութեան եւ առաջնորդութեան տակ, կազմակերպ կեանքի մը ծելին ընդմէջէն՝ կրօնական, հոգեւոր, ընկերային ու մասնագիտական ամէն տեսակի ծառայութիւն մատուցելով մեր Եկեղեցիին ու ժողովուրդին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ


1700-ամեակը այս բոլորը իրագործուած տեսնելու իտէալական առիթը պէտք է ըլլայ: Այդ է մեր գոյգ Վեհափառ Հայրապետներուն տեսլականը: Այդ է նուիրապետական մեր Աթոռներուն զինուորեալ միաբանութեանց, թեմերուն եւ թեմական իշխանութեանց պատկերացումը: Այդ է մեր ժողովուրդին ընդհանրական սպասումը: Եւ մենք կը հաւատանք, որ այս բոլորը իրականանալի են եւ մեծ տեղ պէտք է ունենան նախաձեռնուած աշխատանքներուն եւ իրագործումներուն մէջ:

Թերեւս մեր բոլոր սպասումները չիրագործուին: Թերեւս ամէն որոշում տառաջօրէն չիրականանայ: Թերեւս ամէն նախաձեռնութիւն սկզբնական իր մտայղացումին ու մտապատկերացումին մէջ մնայ եւ իր կատարման մէջ տարբեր արտայայտութիւն գտնէ:

Բայց մէկ բան որոշ է ու պիտի մնայ՝ 1700-ամեակէն առաջ եւ անկէ ետք՝ մեր Եկեղեցին եւ մեր կեանքը նոյնը պէտք չէ մնան եւ պիտի չմնան:

Ինքնախաբէութիւնը երբեք յատուկ չէ եղած ինձի, բայց իրապաշտութիւնն ալ բնաւ չեմ շփոթած յոռետեսութեան եւ յուսալքումի տրամադրութեանց հետ: Պայծառ գալիքին սպասումը յատուկ է տեսիլքով հարուստ ժողովուրդներուն եւ իրագործելիք նպատակ ունե-

ցող սերունդներուն: Եւ կը հաւատամ, որ մեր ժողովուրդը, հակառակ իր դառն փորձառութեանց եւ երէկի ու այսօրուան անցուցած ճգնաժամերուն, մշտապայծառ տեսիլքով, իմաստնացած հայեացքով պիտի դիտէ 1700-ամեակով բացուող նոր ժամանակաշրջանը, եւ նորոգուած հաւատքով ու ինքնութեամբ կերտէ իր նոր ապագան:



1700-ԱՄԵԱԿԸ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ

1) ՄՈՒՏՔ

Մեր մտահոգութեան առանցքը հանդիսացող պատճառները կը խտանան հետեւեալ քանի մը հարցերուն մէջ, որոնց շարքը նշուածներով չ'աւարտիր անշուշտ:

- Ինչո՞ւ մեր ժողովուրդին զաւակները կը հեռանան ազգային շրջանակներէն եւ հեռու կը մնան իրենց Մայրենի Եկեղեցիէն:

- Ինչո՞ւ մեր երիտասարդները դիւրաւ կը գրաւուին օտար արժէքներով եւ կ'անգիտանան կամ կը մոռնան իրենց սեփականը:

- Ինչո՞ւ մեր Եկեղեցին չի յաջողիր հետաքրքրութիւն արթնցնել մեր ժողովուրդին եւ յատկապէս երիտասարդներուն մէջ:

- Ինչո՞ւ հաւատքը վերագտնող կամ հաւատքին դարձող երիտասարդներ կը հեռանան ազգային Եկեղեցիէն:

- Ի՞նչ կ'ըսեն մեր ծէսը եւ արարողութիւնները այսօրուան հայ մարդուն: Ինչո՞ւ ոմանք չեն յաջողիր սիրել զայն:

2) Ի՞ՆՉ ԱՈՆՉՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՀԱՒԱՏՔԸ ԱԶԳՈՒԹԵԱՆ ՀԵՏ

ա) Առաջին հերթին՝ հաւատքը որեւէ առնչութիւն չունի ազգութեան հետ:

բ) Հայ Եկեղեցին հայոց Եկեղեցին է, եւ իբր այդպիսին՝ ազգային Եկեղեցի է:

գ) «Ազգային Եկեղեցի» բացատրութեամբ Եկեղեցին չի նոյնա-

մար, չի կապուիր եւ չի շփոթուիր պետական ու քաղաքական կառոյցներուն հետ:

դ) Ազգային Եկեղեցին լոկ ազգային հաստատութիւն մը չէ:

3) Ի՞ՆՉ ԿԱՊ ՈՒՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՒԱՏՔԻՆ ՀԵՏ

ա) Մկրտութիւնը կամ դրոշմը հայ ըլլալու նշան չեն, այլ քրիստոնեայ ըլլալու:

բ) Եկեղեցական պսակը ընկերային պայմանադրական կապի մը վաւերացումը չէ պարզապէս:

գ) Քրիստոնէական թաղումը յատուկ է միայն հաւատացեալներուն:

դ) Սուրբ Հաղորդութիւնը կարելի չէ՝ տալ անհաւատներուն:

4) ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՒ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԸ

ա) Ի՞նչ կ'ըսեն այսօր մեր արարողութիւնները մեզի:

բ) Ի՞նչ իմաստ եւ արժէք ունին արարողութիւնները, երբ չենք հասկնար զանոնք:

գ) Ի՞նչ բան պէտք է կրճատել մեր արարողութիւններէն:

դ) Մեր արարողութիւնները համապատասխա՞ն են այսօրուան մեր հաւատքին եւ պահանջներուն:

*
* * *

Անցնող քանի մը տարիներուն, քրիստոնէութեան Հայաստանի մէջ [պետական կրօնք] հռչակման 1700-ամեակը բաւական մեծանշան հոսեցուց: Կազմակերպուեցան բաւական ու բազմատեսակ հանդէսներ, ցուցահանդէսներ, գիտաժողովներ, հրապարակային զրոյցներ, ուխտագնացութիւններ, համերգներ, թատերական ձեռնարկներ ու մրցոյթներ, կատարուեցան գիրքերու եւ սրբանկարներու հրատարակութիւններ, հայերէն որոշ գործերու թարգմանութիւններ, կառուցուեցան կամ վերանորոգուեցան բազմաթիւ Եկեղեցիներ ու վանքեր (յատկապէս Հայաստանի մէջ), հրապարակները ողողուեցան յարմար եւ անյարմար յուշանուէրներով, եւ դեռ կ'երկարի շարքը իրագործումներուն եթէ այս բոլորը կարելի է իրագործում անուանել:

Այս բոլորը, սակայն, միայն մասնակիօրէն ծառայեցին իրենց իսկական նպատակին, որուն գիտակցութիւնը պակսեցաւ յաճախ, սկիզբէն մինչեւ վերջ, որովհետեւ Հայաստանեայց Առաքելական Ե-

կեղեցիին կողքին, եւ նոյնիսկ Եկեղեցիէն աւելի, այս պատեհութիւնը ծեռք առին պետութիւն, կազմակերպութիւններ, գիտական հիմնարկներ, մշակութային եւ այլ միութիւններ, մանր ու մեծ հաստատութիւններ եւ նոյնիսկ անհատ գործարարներ: Մինչդեռ, Եկեղեցւոյ հասկացողութեամբ եւ ծրագրումով, այս բոլորը պէտք է ծառայէին 1700-ամեակին, որ կը նշանակէ՝ մեր Եկեղեցւոյ վերանորոգութեան, մեր ժողովուրդի վերադաստիարակութեան, վերաքրիստոնէացման ու «վերամկրտութեան», այլ խօսքով՝ քրիստոնէական հաւատքի վերարծարծման եւ մեր ժողովուրդի հոգեւոր վերարթնութեան, որ իր կարգին ազգային նոր վերարթնութեան հրաւեր ու խթան պիտի հանդիսանար:

Մեր մտահոգութեան առանցքը հանդիսացող պատճառները կը խտանան հետեւեալ քանի մը հարցումներուն մէջ, որոնց շարքը նշուածով չ'աւարտիր անշուշտ:

- Ինչո՞ւ մեր ժողովուրդին զաւակները կը հեռանան ազգային շրջանակներէն եւ հեռու կը մնան իրենց Մայրենի Եկեղեցիէն:
- Ինչո՞ւ մեր երիտասարդները դիրաւ կը գրաւուին օտար արժէքներով եւ կ'անգիտանան կամ կը մոռնան իրենց սեփականը:
- Ինչո՞ւ հաւատքը վերագտնող կամ հաւատքին դարձող երիտասարդներ կը հեռանան ազգային Եկեղեցիէն:
- Ի՞նչ կ'ըսեն մեր ծէսը եւ արարողութիւնները այսօրուան հայ մարդուն: Ինչո՞ւ ոմանք չեն յաջողիր սիրել զայն:

Տակաւին երկար կրնայ ըլլալ շարքը հարցումներուն, ինչպէս կանխեցինք ըսել: Սակայն կարելոր է գիտնալ, թէ ի՞նչ կ'ընէ մեր Եկեղեցին՝ գործնապէս պատասխանելու համար այս հարցումներուն, եւ լուծելու համար կնճիռը:

Մեր կարծիքով, Եկեղեցին ցարդ շատ քիչ բան ըրած է այսպիսի հարցումներուն պատասխանը փնտռելու եւ դարման առաջարկելու ուղղութեամբ: Եւ որքան կ'ուշանայ, այնքան դժուարութիւնները կը լեռնանան անյադախարելի դառնալու աստիճան:

Այստեղ կ'ուզեմ փորձ մը ընել այդ հարցերուն մօտենալու եւ կարգ մը մատնանշումներ ընելու, որոնք, կը հաւատամ, կրնան օգնել մեր ժողովուրդը Եկեղեցիին մօտեցնելու հարցին մեր տալիք պատասխաններուն:

1) ԵԿԵՂԵՑԻՆ ՃԱՆՉՑՆԵԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

- ա) Ճանչցնել անոր հոգեւոր դերը:
- բ) Ճանչցնել անոր կրթական-դաստիարակչական դերը:
- գ) Ճանչցնել անոր ազգային դերը: (Յաճախակի մեղադրանք՝

խլեր է մեր մարտունակութիւնը, տկարացուցեր է մեր դիմադրութեան ոգին, պատճառ եղեր է մեր պարտութիւններուն եւ ստրկամտութեան...):

դ) Ճանչցնել անոր մշակութային դերը:

2) Ի՞ՆՉ ԱՈՆՉՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՀԱՒԱՏՔԸ ԱԶԳՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Հաւատքը կապ ունի՞ ազգութեան հետ: Աւելո՞րդ հարցում է արդեօք: Հաւանաբար մեզմէ շատեր մտածած իսկ չեն այս մասին, քանի մանկուց ի վեր տեսեր ենք սերտ միասնութիւնը մեր ազգին ու կրօնքին:

Մեր Եկեղեցիին եւ մեր Եկեղեցականութեան հիմնական մէկ դժուարութիւնը կու գայ այն իսկ հանգամանքէն ու սահմանումէն, որ մեր Եկեղեցիին ծագման կամ հիմնադրութեան օրէն սկսեալ իրողական իր ինքնութիւնը եղած եւ ապա ժամանակի ընթացքին այդ իրողութեան տրուած սահմանումը կամ բանաձեւումը եղած է: Ամէն անգամ որ պէտք կ'ըլլայ խօսիլ մեր Եկեղեցիին մասին, ըլլայ մեր ներքին շրջանակներուն մէջ, ըլլայ օտարներու, կը հաստատենք, թէ մենք «Ազգային Եկեղեցի» ենք: Երբեմն կը սիրենք նաեւ ըսել, թէ մենք «Ժողովրդական Եկեղեցի» մըն ենք:

Այս հաստատումները կամ անուանումները սխալ չեն անշուշտ. ընդհակառակը, անոնք աւելի քան ճշմարիտ են: Բայց շատ յաճախ շփոթ մը կայ թէ՛ այս հաստատումները կամ անուանումները գործածողներուն եւ թէ՛ ունկնդիրներուն միտքին մէջ, սխալ կը հասկցուին ու կը բացատրուին անոնք:

Ի՞նչ կը նշանակէ «Ազգային Եկեղեցի»: Կամ ի՞նչ կը հասկնանք «Ժողովրդական Եկեղեցի» ըսելով: Քանի մը ճշդումներ կատարենք.

ա) Առաջին հերթին, հաւատքը որեւէ առնչութիւն չունի ազգութեան հետ:

Չմոռնանք, որ Եկեղեցին Աստուծոյ ժողովուրդին ամբողջութիւնն է: Մենք, իբրեւ Տէր Յիսուս Քրիստոսի հաւատացողներ, այսինքն իբրեւ քրիստոնէաներ, մասն ենք այդ մեծ ամբողջին՝ Աստուծոյ Եկեղեցիին կամ Աստուծոյ ժողովուրդին՝ Աստուծոյ իսկ կողմէ կանչուած եւ Իր պատրաստած փառքին սահմանուած: Ինչպէս Պօղոս Առաքեալ կ'ըսէ, Աստուծոյ այդ ժողովուրդը «...մենք ենք, որ Աստուած կանչեց ոչ միայն հրեաներէն, այլ նաեւ՝ բոլոր ազգերէն, ինչպէս որ Ովսէա Մարգարէին բերանով կ'ըսէ. “Ան որ իմ ժողովուրդս չէր իմ ժողո-

վորդս պիտի կոչեն, ան որ սիրելի չէր ինձի՝ սիրելի պիտի կոչեն: Եւ ճիշդ այնտեղ ուր իրենց ըսի. ‘Դուք Իմ ժողովուրդս չէք’, այնտեղ անոնք կենդանի Աստուծոյ որդիները պիտի կոչուին» (Հո 9.24-26): Արդ, «անգամ մը որ Քրիստոսի միանալով մկրտուեցաք,- կ’ըսէ Առաքեալը,- այլեւս Քրիստոս է որ կ’ապրի ձեր մէջ: Այլ ոչ իրեայի եւ հեթանոսի խտրութիւն կայ, ո՛չ ստրուկի եւ ազատ մարդու, ոչ ալ արուի եւ էգի, որովհետեւ Քրիստոսի միանալով՝ բոլորդ ալ մէկ եղաք» (Գղ 3.27-28): Հաւատքի միութիւնը եւ անոր բերած միասնութեան ոգին չեն կրնար հաշտուիլ ազգային խտրականութեանց հետ: Հետեւաբար, կարելի չէ Հայ Եկեղեցին եւ Հայ Հաւատքը հակադրել որեւէ Եկեղեցիի եւ անոր հաւատքին՝ պարզապէս ազգութեան պիտակով:

բ) Հայ Եկեղեցին հայոց Եկեղեցին է, եւ իբր այդպիսին՝ ազգային Եկեղեցի է:

Մենք Քրիստոսի հօտը եւ Քրիստոսի Եկեղեցին ենք, բայց միաժամանակ, ինչպէս քրիստոնէական տեղական որեւէ Եկեղեցի, մենք ունինք ազգային մեր պատկանելիութիւնը եւ ինքնութիւնը, ազգային մեր լեզուն եւ մշակոյթը, որոնք քրիստոնէական մեր հաւատքին դրսեւորման կամ ինքնարտայայտման բնական ու հարազատ միջոցներն են:

Հաւատքը մերժում չէ ազգութեան, ինչպէս ազգային պատկանելիութիւն մը մերժում չէ հաւատքին: Ազգային պատկանելիութիւնը նոյնքան աստուածային պարգեւ ու կոչում է, որքան հաւատքի պարգեւն ու կոչումը: Այս մասին որոշակի է Պօղոս Առաքեալ, երբ կը թելադրէ. «Իւրաքանչիւրը թող ապրի Աստուծմէ իրեն տրուած շնորհքին համաձայն, ինչպէս որ էր՝ երբ Աստուած զինք կանչեց: Այսպէս կը պատուիրեն բոլոր Եկեղեցիներուն: Հրեա՞յ մըն է կանչուածը. թող չձածկէ իր թլփատուած ըլլալը: Հեթանոսութենէ եկա՞ծ մըն է. թող չթլփատուի: Որովհետեւ կարելորդ մարդուս թլփատուած կամ անթլփատ ըլլալը չէ. կարելորդ Աստուծոյ պատուիրանը պահելն է: Բայց իւրաքանչիւրը ինչ վիճակի մէջ էր երբ Աստուած զինք կանչեց՝ թող նոյն վիճակին մէջ մնայ: ... Աստուած փրկագինով ձեզ գնեց. մարդոց ծառայ մի՛ ըլլաք: Եղբայրներ, իւրաքանչիւրդ ինչ վիճակի մէջ որ էիք երբ Աստուած ձեզ կանչեց՝ նոյն վիճակին մէջ մնացէք Աստուծոյ առջեւ» (Ա. Կր 7.17-20, 23-24):

Մենք Քրիստոսի սուրբ հաւատքին երբ կանչուեցանք՝ իբրեւ հայ, կանչուեցանք ազգովին, եւ կը մնանք հայ, կամ մեր հայութիւնը կը դաւանինք նաեւ մեր հաւատքին մէջ: Ասիկա որեւէ հակասութիւն չու-

նի իր մէջ, եւ ինքնին որեւէ բախում չստեղծեր հաւատքին եւ ազգութեան միջեւ: Եթէ մարդիկ արուեստականօրէն հակադրութիւն չտեսնեն ու բախում չստեղծեն Հայ Եկեղեցիին պատկանելիութեան եւ հայ ազգին պատկանելիութեան միջեւ:

գ) «Ազգային Եկեղեցի» բացատրութեամբ Եկեղեցին չի նոյնանար, չի կապուիր եւ չի շփոթուիր պետական ու քաղաքական կառոյցներուն հետ:

Ոմանք «Ազգային Եկեղեցի» բացատրութեան մէջ պարզապէս ազգային պատկանելիութեան մը հարցը չեն տեսներ, այսինքն Հայ Եկեղեցին իբրեւ հայ ազգին պատկանող Եկեղեցի, այլ կը շփոթեն ազգն ու Եկեղեցին, ազգութիւնն ու հաւատքը:

Նախ դիտենք «Ազգային Եկեղեցի» բացատրութեան աշխարհիկ կամ քաղաքական տխուր պատկերացումը:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ազգային Եկեղեցի է, բայց ազգային Եկեղեցի ըլլալու իր հանգամանքը երբեք չի նշանակեր, թէ ենթակայ է ազգային որեւիցէ ղեկավարութեան, ըլլայ պետութեան, ըլլայ քաղաքական կազմակերպութեանց, ըլլայ ազգային գաղափարական հոսանքներու եւ անոնց ազդեցութեանց:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ազգային Եկեղեցի է, այո, բայց է եւ պէտք է մնայ վեր բոլոր կառոյցներէն ու կազմակերպութիւններէն: Ժողովրդական Եկեղեցի է, այո, բայց վեր է եւ վեր պէտք մնայ ժողովրդական բոլոր հոսանքներէն: Եկեղեցին, ինչպէս Եկեղեցականը, Ծնող է եւ Դաստիարակ, Հովիւ է եւ Առաջնորդ: Ինչպէ՞ս կրնայ ծնողութիւն ընել եւ դաստիարակութիւն ջամբել, եթէ ինքը չէ տէրը իր զաւակներուն եւ իր ձեռքը չէ անոնց հոգեւոր դաստիարակութեան անհրաժեշտ գործը: Ինչպէ՞ս կրնայ հով-ուութիւն ընել. երբ իր հօտին վերակացութիւնը իր ձեռքը չունի, կամ ինչպէ՞ս կրնայ զայն առաջնորդել, երբ առաջնորդութեան հեղինակութիւնը եւ զաւազանը ձգեր է իր ձեռքէն եւ յանձներ ուրիշներուն:

Պետութիւն մը եւ քաղաքական կազմակերպութիւններ միշտ ալ փորձած են եւ կը փորձեն ու պիտի փորձեն Եկեղեցին առնել իրենց տիրապետութեան տակ եւ ծառայեցնել իրենց ուղղութեան ու շահերուն: Ասիկա աշխարհի բնական ընթացքն է, հոսանք մը որուն դիմաց առանձին չէ որ կը կանգնի Հայ Եկեղեցին, այլ բոլոր Եկեղեցիներն ալ ենթակայ են նոյն փորձութեան ու վտանգին: Բայց Եկեղեցին մաս չի կազմեր պետական կառոյցին կամ կազմակերպութեանց քաղաքական ծրագիրին կամ գաղափարախօսութեանց կամ խոհանոցին: Չկայ պետական Եկեղեցի: Քրիստոնէութեան խորթ եւ անյարիր բա-

ցատրություն մըն է ատիկա: Քրիստոնեությունը մարդկային ազատություններուն հռչակագիրն է, մինչդեռ պետական կամ քաղաքական ամէն կառոյց ուղղակի թէ անուղղակի հերքումն է այդ ազատութիւններուն՝ ինչ շողշողուն պիտակի տակ ալ դրուի այդ հերքումը:

1700 տարի առաջ, Հայաստանի մէջ քրիստոնեությունը պետական ճանաչում ստացաւ իբրեւ ազատօրէն պաշտելի կրօնք, որով նաեւ պետական պաշտպանութեան տակ առնուեցաւ: Բայց երբէք պետական կրօնք չդարձաւ: Պետական կրօնք պիտի նշանակէր, թէ այնուհետեւ թագաւորը ինքն է Եկեղեցին պետն ու առաջնորդը, եւ ինք պիտի տնօրինէ անոր գործերը: Բայց այդպիսի բան տեղի չունեցաւ: Եկեղեցին մնաց կատարելապէս անկախ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի եւ անոր հետեւորդներուն ղեկավարութեան տակ: Պարզապէս պետություն ու Եկեղեցի դարձան իրարու աջակից ու գործակից՝ առանց իրարու գործը շփոթելու եւ իրարու գործին միջամտելու:

1700 տարի ետք, այդ թանկագին հաւասարակշռությունը խախտեր է մեր ժողովուրդին եւ մեր Եկեղեցին բաժին ինկած ծանր ողբերգութիւններուն հետեւանքով: Բայց ժամանակն է, որ ժամանակին ատենները կամաց-կամաց սրբագրուին եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին իր հոգեւոր տիրութիւնն ընէ Իր սեփական անկաշկանդ բազուկներով՝ մնալով իր ազգային ինքնութեան եւ դերակատարութեան մէջ, եւ թարմանալով Ս. Հոգիին վերափոխիչ շունչով:

դ) Ազգային Եկեղեցին լոկ ազգային հաստատություն մը չէ:

Ըսինք եւ կը կրկնենք, թէ ոմանք «Ազգային Եկեղեցի» բացատրութեան մէջ պարզապէս ազգային պատկանելիութեան մը հարցը չեն տեսներ, այլ՝ կը շփոթեն ազգն ու Եկեղեցին, ազգութիւնն ու հաւատքը:

Այժմ դիտենք «Ազգային Եկեղեցի» բացատրութեան կրօնական տխուր երեսը:

Յաճախ կոյր եւ անմտութեան հասնող ծայրայեղականութեամբ մը կ'ըսենք.- Հայը այլահաւատ կամ այլակրօն (զրադաշտական, իսլամ, հինտու, եւայլն) չի կրնար ըլլալ: Կամ, շրջուած ձեւով՝ կ'ըսենք.- Կաթոլիկը կամ բողոքականը, մորմոնը կամ Եհովայի վկան եւ կամ ուրիշ աղանդի պատկանող մը հայ չի կրնար ըլլալ, եւայլն:

Հարցնենք սակայն.- Ոեւէ հայ անպայմանօրէն քրիստոնեայ՞ է: Ո՛չ, որովհետեւ կրնայ նաեւ հաւատքէն հեռու կամ անհաւատ ըլլալ, եւ մենք այս պարագային լուռ ենք, եթէ ոչ հաշտ: Ինչո՞ւ: Իսկ եթէ անհաւատը կրնայ հայ ըլլալ կամ նկատուիլ, ինչո՞ւ հայ չեն կրնար ըլլալ

միւսները...

Տանք քանի մը օրինակ մեր ապրած անթիւ հակասութիւններէն.

- Երբոր մէկը մեզի կը դիմէ, որ մկրտենք իր զաւակը, մենք չենք հարցնէր «Քրիստոնեայ՞ էք դուք, կամ ձեր զաւակը (եթէ մեծահասակ է) քրիստոնեական դաստիարակութիւն ստացա՞ծ է»: Ինչո՞ւ: Մկրտութիւնը հայութեան վկայական է, թէ՞ հաւատքի դաւանանք եւ Քրիստոսի Եկեղեցին միանալու վկայութիւն:

- Երբոր զոյգ մը մեզի կը դիմէ Եկեղեցւոյ մէջ պսակուելու համար, կը հետաքրքրուի՞նք, թէ արդեօք կը հաւատա՞ն Եկեղեցին, եւ գիտե՞ն թէ Եկեղեցական իմաստով Ս. Պսակի արարողութիւնը տարբեր է քաղաքական կամ ընկերային պայմանադրական կապերէն ու միութիւններէն:

- Երբ մէկու մը հարազատը կը մահանայ եւ մեզի կը դիմուի որ թաղման կարգը կատարենք, երբեիցէ կը հետաքրքրուի՞նք, թէ հանգուցեալը Քրիստոսի եւ Եկեղեցին հաւատացող մէկը եղա՞ծ է, թէ՞ ոչ:

- Տակաւին, այսօր շատ ուրախալի է տեսնել, որ գրեթէ մեր բոլոր Եկեղեցիներուն մէջ ամէն Կիրակի, Ս. Հաղորդութեան պահուն բազմաթիւ անձեր կը մօտենան Պատարագի Ս. Սեղանին, հաղորդուելու համար: Նոյնպէս, ըստ Եկեղեցւոյ կանոնին, ամէն մկրտուող նորածին ըլլայ թէ մեծահասակ, պարտաւոր է հաղորդուելու, ինչպէս Ս. Պսակէն առաջ հաղորդուելու կը իրաւիւրուին ամուսնացողները: Արդեօք անոնցմէ քանի՞ն գիտակից է, թէ պարզապէս կրօնական-բարեպաշտական արարք մը չէ իր ըրածը, այլ՝ մեր Տիրոջ Սուրբ Մարմինն ու Արիւնն է որ կը ստանայ այդ պահուն, որուն համար պատրաստուած պէտք է ըլլայ ամենայն երկիւղածութեամբ եւ զգուշութեամբ:

Նման պարագաներուն, ինչպէս ըսինք, մենք չենք հարցնէր: Ուրիշ պատճառներու կարգին, թերեւս չենք հարցնէր նաեւ, որովհետեւ պատասխանը կրնայ մեզ սարսափեցնել եւ դնել անհաճոյ իրականութեանց դիմաց. թերեւս պէտք ըլլայ այդ մկրտութիւնը չկատարել, կամ մերժել տուեալ զոյգին ամուսնութիւնը կատարել, կամ տուեալ անձին թաղման կարգը չմատակարարել, կամ Ս. Հաղորդութեան մօտենալէ արգիլել շատերը որ կու գան...

Այս բոլոր հակասութիւններէն դժուար է դուրս գալ, թերեւս: Բայց հիմնական հարցում մը կայ, որուն պէտք է պատասխան տանք բոլորս.- Մենք Եկեղեցի՞ ենք, թէ ազգային գրասենեակ:

Եթէ Եկեղեցի ենք եւ կ'ուզենք մնալ, պէտք է մեր հաւատքը եւ այդ հաւատքին պահանջները յստակացնենք: Ի՞նչն է որ կը պահենք

եւ կ'ուզենք պահել, չէ՞նքը, կառո՞յցը, հաստատութի՞ւնը, թէ՞ հաւատ-
քը: Առանց հաւատքին՝ չկայ Եկեղեցի: Մենք իբրեւ Եկեղեցի, կանք
ոչ թէ մեր գոյութիւնը պահպանելու համար, այլ կանք պահելու եւ ա-
ճեցնելու համար քրիստոսաւանդ հաւատքը, Աստուծոյ Խօսքին թան-
կազին աւանդը, եւ կեանքով ցուցնելու համար Անոր փրկարար եւ
կենարար զօրութիւնը: Իսկ եթէ չկայ Եկեղեցի, այլ միայն դիակնա-
ցած հաստատութիւն մը, աւելի լաւ է որ ժողովուրդը չքաշքշենք մե-
զի հետ եւ աւելի նողկանքի չմղենք, այլ՝ օր առաջ քաշուինք
հրապարակէն:

3) Ի՞ՆՉ ԿԱՊ ՈՒՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՄԱՐ ԵՆ ՀԵՏ

Տարօրինակ եւ աւելորդ հարցում է, չէ՞: Բայց կը կարծենք որ
բնաւ ալ աւելորդ չէ, որքան ալ տարօրինակ կամ շփոթեցուցիչ հնչէ:
Վերը արդէն այս մասին կարգ մը հաստատումներ կատարե-
ցինք: Այստեղ կ'ուզենք աւելի ընդգծել տուեալ երեսները աւելի
շեշտելու համար հաւատքին ցայտուն եւ զայթակղալից բացակայու-
թիւնը՝ առնչուած Եկեղեցւոյ կեանքին, արարողութիւններուն ու խոր-
հուրդներուն:

**ա) Մկրտութիւնը կամ Դրոշմը հայ ըլլալու նշան չեն, այլ՝ քրիս-
տոնեայ ըլլալու:**

Ուել մէկուս անծանօթ չէ, որ այսօր յաճախ ծնողներ Եկեղեցի կու
զան իրենց զաւակը մկրտելու, պարզապէս այնպէս հաւատալով, թէ
այդպիսով իրենց զաւակը իսկական հայ մըն է որ կը դառնայ իր ճա-
կատին «Հայու Միւռոն» ընդունելով: Այս սխալ պատկերացումին յան-
ցանքը որո՞ւն է: Ո՞վ պիտի դաստիարակէ ժողովուրդը, ո՞վ պիտի
հերքէ սխալը, ո՞վ պիտի ուսուցանէ ճշմարիտը, ո՞վ նախանձախն-
դիր պիտի ըլլայ եւ տէր պիտի կանգնի սրբութիւններուն սուրբ պահ-
պանման: «Որեւէ սրբութիւն շուներուն մի՛ տաք» (Մտ 7.6), ըսաւ մեր
Տէրը, մինչ մենք առանց խղճահարութեան զայն կը մատակարարենք
ոել մէկուն որ մկրտութիւն կը պահանջէ՝ առանց հարցնելու, թէ
արդեօք գիտե՞ն ի՞նչ է մկրտութիւնը եւ ինչո՞ւ կ'ուզեն մկրտել մանու-
կը (կամ մեծահասակ երախան), անոր քրիստոնէական դաստիարա-
կութիւն տուա՞ծ են ինչպէս որ պէտք է: Որովհետեւ՝ զաւակին
փոխարէն մկրտութիւն խնդրելը բարոյական ծանր պարտք մը եւ
պատասխանատուութիւն մը կը դնէ ծնողներուն վրայ, յանձնառու-
թիւն մը, որ քրիստոնէական հաւատքով ալ պիտի մեծցնեն իրենց
զաւակը: Քանի՞ ծնող գիտակից է այդ պատասխանատուութեան, եւ
եթէ գիտակից չէ՝ ո՞վ է մեղաւորը, ծնողքը ի՞նք, թէ՞ մկրտող քահա-

նան, որ ուսուցիչի եւ դաստիարակի իր պարտականութիւնը չէ կա-
տարած:

**բ) Եկեղեցական պսակը ընկերային պայմանադրական կապի մը
վաւերացումը չէ պարզապէս:**

Տարբեր շրջաններու եւ տարբեր երկիրներու մէջ տարբեր պե-
տական եւ եկեղեցական օրէնքներ ի զօրու են, եւ ատիկա պատճառ
է բազմակի վերաբերումներու: Բայց հարցին էութիւնը մօտաւորա-
պէս նոյնը կը մնայ:

Ուել մէկը որ կ'ուզէ ամուսնանալ, երկու ընտրանք ունի կամ քա-
ղաքական ամուսնութիւն կնքել, կամ ամուսնանալ եկեղեցական
պսակով:

Քաղաքական պսակը կը հիմնուի աշխարհիկ հասկացողութեան
մը վրայ, թէ ամուսնութիւնը երկու հոգիներու միջեւ ընկերային պայ-
մանադրական կապ մը կամ համաձայնութիւն մըն է, «դաշինք» մըն
է, որով երկու անձերը յանձն կ'առնեն որոշ փոխադարձ իրաւունքնե-
րու հիման վրայ իրարու հետ կենակցիլ այնքան ժամանակ որքան
որ կ'ուզեն, եւ վերջ տալ նոյն այդ պայմանադրութեան դարձեալ երբ
որ կ'ուզեն: Մինչդեռ եկեղեցական պսակը ընկերային պայմանադ-
րական կապի մը կամ համաձայնութեան մը վաւերացումը չէ՝ պար-
զապէս: Անիկա «խորհուրդ» մըն է, որ կը նշանակէ, թէ անոր ծագումը
աստուածային է. պսակով օրհնուող կապը որքան որ մարդոց ազատ
ընտրութեամբ, նոյնքան Աստուծոյ կամքով եւ օրհնութեամբ է որ տե-
ղի կ'ունենայ, եւ ատով իսկ «սուրբ» է եւ «անարատ» (Եբր 13.4), ան-
քակտելի է, անլուծանելի եւ անջնջելի, ինչպէս մեր Տէրը Ինք իսկ
ըսաւ՝ «Աստուծոյ միացուցածը մարդիկ թող չբաժնեն» (Մտ 19.6) եւ
Իր ներկայութեամբը օրհնեց ու վաւերացուց (Յհ 2.1-11):

Արդ, ո՞ր է հարցը:

Միջին Արեւելքի երկիրներէն շատերուն մէջ չկայ առաջին ընտ-
րանքը՝ քաղաքական ամուսնութիւնը, իսկ եկեղեցական ամուս-
նութիւնն ալ պարտադրաբար պէտք է կատարուի սեփական
համայնքին մաս կազմող եկեղեցիի մը մէջ, որովհետեւ համայնքի մը
իրաւունքներուն մէջ կ'իյնայ ամուսնութիւն կատարելը, ինչպէս ամուսնալուծում տալը:

Արեւմուտքի երկիրներուն մէջ, (քիչ բացառութեամբ ինչպէս
Յունաստանը), առհասարակ քաղաքական ամուսնութիւնն է պար-
տադիրը, իսկ եկեղեցական ամուսնութիւնը անձնական փափաքի եւ
ընտրութեան հարց է, այն ալ՝ առանց համայնքային եկեղեցիի մը
կապուած ըլլալու:

Այստեղ ալ կը սկսի հարցը:

Հոն ուր ամուսնութիւնը քաղաքական ըլլալով՝ եկեղեցական ամուսնութիւնը կամաւոր յանձնառութեան վրայ կը հիմնուի, թերեւս կարելի ըլլայ պահանջել. որ ամուսնացողները հաւատան խորհուրդին եւ ըստ այնմ վերաբերին կամ յարգեն զայն: Սակայն հոն ուր ամուսնութիւնը պարտադրաբար համայնքային եկեղեցիի մը մէջ պէտք է տեղի ունենայ, եկեղեցին կրնա՞յ եկեղեցական խորհուրդին հանդէպ հաւատք պահանջել իրեն դիմող զոյգէն, եւ հակառակ պարագային մերժել ամուսնութիւնը կատարել:

Ի՞նչ կ'ըլլայ հետեւանքը:

Եկեղեցին, յանուն համայնքային «իրաւունքներու» պահպանման, ինքն իսկ կ'ոտնակոխէ խորհուրդին սրբազան հանգամանքը, հաւատքի վրայ հիմնուած ըլլալը, անհատներու կրօնական կամ բարոյական ազատութեան եւ ազատ ընտրութեան իրաւունքը, որոնք Քրիստոսի եկեղեցիին հիմնական սկզբունքներն են:

Այս պարագային՝ ի՞նչ կ'ըլլայ հաւատքին ու եկեղեցիին կապը: Մեր գործով մենք ըսած կ'ըլլանք, որ հաւատքը կապ չունի եկեղեցիին եւ եկեղեցական արարողութեան կամ խորհուրդին հետ:

Ընդունելի՞ է եկեղեցիին կողմէ այսպիսի կեցուածք մը: Այդպիսի դրութիւն մը հերքումը չէ՞ հաւատքին եւ աստուածադիր որեւէ սկզբունքի:

Գորդեան հանգոյց մըն է հարցը ինքնին, կ'ընդունինք: Բայց հանգոյցը անլոյծ պահելով՝ հետզհետէ մեր եկեղեցական կեանքն է որ վերածեր ենք կնճռոտ հանգոյցի՝ անելի մատնելով հաւատացեալ ժողովուրդն ու հաւատաւոր եկեղեցականը:

գ) Քրիստոնէական թաղումը յատուկ է միայն հաւատացեալներուն:

Նոյնքան կնճռոտ հանգոյց մըն է թաղումներու պարագան:

Ընտանիքէն մէ՞կը մահացաւ. պարագաները կը վազեն եկեղեցւոյ գրասենեակ, կամ քահանային, եւ, յաճախ, ամէն կարգադրութիւն ընելէ եւ աւարտելէ ետք, կը խնդրեն կամ կը պահանջեն իրենց հարազատին թաղումը կատարել:

Բոլորս ալ գիտենք կամ կրնանք երեւակայել, թէ ինչ փոթորիկ կրնայ փրթիլ, եթէ յանկարծ եկեղեցականը հարցնէ, թէ արդեօք հանգուցեալը աստուածավախ մէկը եղա՞ծ է, թէ՞ ոչ: Եւ որպէսզի փոթորիկ չծագի եւ ամէն ինչ անցնի խաղաղ ու «բնական», առանց առարկութեան եւ սիրալիր կերպով կ'ընդունինք առաջարկը: Այսպիսով՝ կը հաճեցնենք մարդիկը: Ինչքան դիւրին կը մոռնանք Աստու-

ծոյ հանդէպ մեր պարտաւորութիւնը եւ առաքեալին խօսքը. «Եթէ մարդիկ սիրաշահելու ետեւէ ըլլայի՝ Քրիստոսի ծառայ ըլլալէ կը դարդիք» (Գղ 1.10):

Ճիշդ է որ թաղման կարգը «խորհուրդ» մը չէ, բայց սրբազան արարողութիւն մըն է, աղօթք ի դիմաց հանգուցեալին: Եւ աղօթքը հաւատքի արարք մըն է ամէն բանէ առաջ, ինչպէս իրարու համար աղօթելը՝ քրիստոնէական սիրոյ պարտք մը որեւէ հաւատացեալի համար (հմմտ. Գրծ 12.5: Հռ 1.10, եւայլն: Կղ 4.12: Ա. Թս 5.25: Յկ 5.14 եւ 16): Արդ, եթէ հանգուցեալը հաւատացող մը չէ եղած, մենք ինչպէ՞ս կրնանք աղօթել անոր համար եւ անոր փոխարէն: Դարձեալ ըսենք հաւատքը ի՞նչ կապ ունի եկեղեցիին եւ եկեղեցական արարողութեան հետ... Չմտածուած, մեքենական կատարումը եկեղեցական արարողութիւններուն՝ այսպիսի անհեթեթութեանց կը յանգեցնէ մեզ, անխուսափելիօրէն:

Ասկէ կը ծագի նաեւ անձնասպան անձերու թաղման կապուած թնձուկը: Անցեալին եկեղեցին կը մերժէր, եւ սկզբունքով այսօր եւս կը մերժէ, կատարել թաղումը անոնց, որոնք անձնասպան կ'ըլլան: Պատճառը այն է, որ անձնասպան անձը այդ արարքը կը գործէ յուսահատութենէ մղուած, պարպուած Աստուծոյ հանդէպ իր ունեցած հաւատքէն: Քրիստոնէական հաւատքը ամբողջութեամբ կը հիմնուի աստուածատուր երեք առաքինութեանց վրայ՝ Հաւատք, Յոյս եւ Սէր: Այս պարագային Աստուծոյ հանդէպ հաւատքի բացակայութիւնը կ'ենթադրէ նաեւ Աստուծմէ օգնականութիւն գտնելու յոյսին բացակայութիւնը, իսկ Աստուծոյ հանդէպ վստահութեան եւ յոյսի բացակայութիւնը ապացոյցն է Աստուծոյ եւ մարդոց հանդէպ սիրոյ կատարեալ բացակայութեան:

Արդ, կարելի՞ է եկեղեցական կարգով թաղել այսպիսին: Եթէ անձնասպանութիւն գործող անձին պարագաները կը խնդրեն որ մենք քրիստոնէական թաղման կարգ կատարենք, պէ՞տք է տեղի տանք կարեկցանքի, կամ աւելի յաճախ՝ խնամիական եւ այլ հաշիւներէ մղուած: Ո՞ր մնաց հաւատքը, ո՞ր մնաց եկեղեցին: Մենք բարեկամակա՞ն պարտականութիւն է որ կը կատարենք, թէ՞ հաւատքի պարտականութիւն Աստուծոյ ժողովուրդին անունով եւ անոր կողմէ: Դարձեալ հակասութեան մէջ ենք եկեղեցիի ճշմարիտ հասկացողութեանց մէջ: Առանց հաւատքի չկայ եկեղեցի, մինչ մենք եկեղեցի կ'ուզենք ունենալ ու պահել՝ առանց հաւատքի:

դ) Ս. Հաղորդութիւն կարելի չէ՛ տալ անհաւատներուն: Վերը ակնարկեցինք այս երեւոյթին եւս:

Ս. Հաղորդութիւնը, բառին ամբողջական թելադրականութեամբն իսկ, տառացիօրէն հաղորդակցութիւն է մեր Տիրոջ եւ Աստուծոյն Յիսուս Քրիստոսի հետ՝ Անոր Մարմինին եւ Արիւնին ճաշակումովը: Այն ճաշակը, որ Քրիստոս Ինք մեզի կտակեց վերջին ընթրիքի պահուն, հացն ու գինին Իր աշակերտներուն եւ մեզի տալով իբրեւ Իր Մարմինն եւ Արիւնը, եւ հրահանգելով որ զայն կատարենք միշտ Իր յիշատակը վերարժարծելով միշտ (Ղկ 22.19: Հմմտ. Ա. Կր 11.24-25), մասնակից դառնալով Իր Մարմինին զոհագործումով ու Արիւնին հեղումով ընծայած փրկութեան Սեղանին: Այդ Սեղանը յատուկ է միայն Քրիստոսի հաւատացողներուն, եւ միայն Քրիստոսի հաւատացողներն են որ իրաւունք ունին անկէ ճաշակելու: Անկէ իրաւունք չունին ճաշակելու անհաւատները, քրիստոնէական հաւատքին անհաղորդ մարդիկը (հմմտ. Եբր 13.10): Իսկ անարժանաբար ճաշակողը «Տիրոջ Մարմինին եւ Արեան դէմ մեղանշած կ'ըլլայ», եւ ըստ այնմ կը կրէ նաեւ իր արժանի պատիժը (Ա. Կր 11.27-32):

Այսքանը գիտնալէ ետք, սակայն, ի՞նչ կ'ընենք մենք: Ս. Պատարագի պահուն Ս. Հաղորդութիւնը կու տանք ռեւէ մէկուն որ Սեղանին կը մօտենայ: Նոյնպէս, անխտրաբար Ս. Հաղորդութիւն կու տանք ուրիշ պարագաներու, առանց երբեք մտահոգուելու, թէ մօտեցողները հաւատացողնե՞ր են, թէ՞ անհաւատ. արժանաւոր են, թէ՞ անարժան. հոգեւորապէս պատրաստ են, թէ՞ անպատրաստ. կամ առանց երբեք մտածելու, թէ մեր բաժնածը սովորական կամ սոսկական հաց չէ, այլ՝ Տիրոջ Մարմինը (հմմտ. Ա. Կր 11.29) «Սրբութիւն Սրբոց»-ը, որուն սուրբ պահպանման նախանձախնդիր ըլլալը մեր առաջին պարտականութիւնն է: Կը մոռնա՞նք մեր Տիրոջ ահացուցիչ պատուէրը. «Որեւէ սրբութիւն շունչերուն մի տաք» (Մտ 7.6):

Որեւէ մէկը կրնայ եկեղեցի գալ, որովհետեւ եկեղեցին իբրեւ վայր կամ շէնք՝ հաւաքատեղի մըն է հաւատացեալներուն համար, ինչպէս նաեւ անհաւատին ու մեղաւորին համար. բայց ռեւէ մէկը չի կրնար Հաղորդութիւն ստանալ, որովհետեւ Հաղորդութիւնը առանձնաշնորհումն է հաւատացեալներուն: Եկեղեցի գալը ներկայութիւն եւ ունկնդրութիւն է, Հաղորդութիւնը՝ մասնակցութիւն Տիրոջ Սեղանին, որ անկարելի է՝ առանց հաւատք ունենալու:

Այս զանազանութիւնը դնելը հոգեւորականներուս պարտականութիւնն է, որպէսզի Քրիստոսի Եկեղեցին (այսինքն Եկեղեցին՝ իր հոգեւոր հասկացողութեամբ) չպարպուի իր ինքնութենէն եւ չփոթուի աշխարհիկ կամ ազգային որեւէ հաստատութեան հետ:

4) ԱՆՊԱՏԱՍԽԱՆԻ ՉՉԳԵԼ ՈՇԷ ՄԷԿՈՒՆ ԵՒ ՄԱՆԱԲԱՆԴ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ

ա) Աստուածաշունչին մասին:

բ) Քրիստոնէական հաւատքին եւ միւս կրօններու յարաբերութեան մասին:

գ) Եկեղեցւոյ նուիրապետութեան, ամուսնացեալ եւ կուսակրօն քահանայութեան եւ յարակից խնդիրներու մասին:

դ) Եկեղեցական խորհուրդներու մասին:

ե) Եկեղեցական արարողութեանց մասին:

5) ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

1700-ամեակին կապուած մեր Եկեղեցւոյ վերանորոգութեան ակնկալութիւնը անշուշտ կը ներառնէ նաեւ մեր եկեղեցական արարողութիւնները:

Այս մասին յաճախակիօրէն կը խօսինք եկեղեցական բարեկարգութեան անունին տակ, բայց, սովորաբար, այդ բարեկարգութիւնը կը պատկերացնենք շատ նեղ իմաստին մէջ. անով կը հասկնանք միայն արարողութեանց կրճատում եւ լեզուականօրէն հասկնալի դարձնելու ճիգ: Մինչդեռ հարցերը շատ աւելի խոր են, եւ անոնց արձագանգները՝ հեռահաս:

Դնենք քանի մը հարցեր, եւ քիչ մը խօսինք անոնց մասին:

ա) Ի՞նչ կ'ըսեն այսօր մեր արարողութիւնները մեզի:

Առաջին հարցը՝ մեր ծէսին կամ արարողութիւններուն այժմէականութիւնն է: Որքա՞ն այժմէական են անոնք: Որքա՞ն համապատասխան են մեր մտածողութեան, այսօրուան մարդուն մտածական եւ զգացական աշխարհին: Դեռ կը խօսի՞ն անոնք, բան մը կ'ըստեն թէ տակաւին այժմէական են եւ անհրաժեշտ է զանոնք պահելը. իսկ եթէ ոչ՝ կը նշանակէ, թէ անոնք պահուելիք չեն, արդէն ժամանակն է զանոնք դադրեցնելու եւ նորերով փոխարինելու:

Ժամանակն անողոք է, տեղքայլ չի ձանձնար: Կեանքն անողոք է, անմիտ ու անիմաստ կրկնութիւն չի հանդուրժեր: Նոյնն է նաեւ եկեղեցական կեանքը, որուն շնչառութիւնն են ծէսը, բարեպաշտութիւնը, արարողութիւնը: Եթէ ասոնք նոր շունչ չեն բերեր, նոր կեանք չեն տար՝ աւելորդ է անոնցմով զբաղիլը:

Մենք կը կարծենք, սակայն, որ մեր արարողութիւնները հինգած եւ ժամանակավրէպ չեն: Անոնք իրենց մէջ ունին հաւատքի կենսու-

նակութեան մը գաղտնիքը, որ կրնայ երբեմն վրիպիլ մեր անմիջական ուշադրութենէն, ինչպէս շատ յաճախ մեր քթին տակ եղած բաները չենք նշմարեր, բայց որ պէտք է բացատրել թէ մեզի եւ թէ մեր ժողովուրդին համար:

Արդարեւ, անոնք շատ բան ունին մեզի ըսելիք թէ իբրեւ կառոյց ու բովանդակութիւն եւ թէ իբրեւ ձեւ:

1) **Իբրեւ կառոյց ու բովանդակութիւն:** (Ներքին մի՞տք, թէ՞ միայն անգիտակցական եւ մեքենական պարտականութիւններ են):

2) **Իբրեւ ձեւ:** (Ծիսական շարժումներ - նիստ ու կաց - պատշաճութիւններ):

Մարդկային կեանքն ալ մեզի կը սորվեցնէ, որ ամէն ինչ հասկնալուն կապուած չէ անպայման: Արարքները, ինչպէս ծէսը կամ արարողութիւնները, ունին նաեւ իրենց ներքին առարկայական արժէքը, նոյնիսկ մեր հասկացողութենէն անկախ: Օրինակ, ինչո՞ւ մէկու մը ձեռքը կը սեղմենք. իմաստ ունի՞, թէ՞ չունի: Ինչո՞ւ մեր սէրը կ'արտայայտենք ողջագործումով ու համբոյրով. ասոնք իրենց իմաստն ունի՞ն, թէ՞ չունին: Ինչո՞ւ մէկը ճամբու դրած ատեն մեր ձեռքը կը ձօճենք, ասիկա իր իմաստն ունի՞, թէ՞ չունի: Օրինակները կարելի է հազարապատկել: Իրողութիւնը կը մնայ այն, որ այս խորհրդանշական արարքներուն արժէքը հասկնալը յաճախ փորձառութեան խնդիր է, կարելի չէ մեքենականօրէն հաղորդուիլ անոնց: Նոյնն է պարագան մեր ծէսին եւ արարողութեանց: Իսկ եթէ տակաւին անհրաժեշտ փորձառութիւնը եւ հասունութիւնը չունինք, հրաժարի՞նք աւանդութեամբ մեզի փոխանցուածէն...

բ) Ի՞նչ իմաստ եւ արժէք ունին արարողութիւնները, երբ չենք հասկնար զանոնք:

Շատ յաճախ կը խօսուի այս մասին, եւ երբեմն նոյնիսկ ասիկա գլխաւոր առարկութիւն կը դառնայ անոնց, որոնք եկեղեցիէն եւ արարողութիւններէն հեռու կը մնան: Եւ այս առարկութեամբ հեռու մնացողները գլխաւորաբար մեր երիտասարդներն են:

Առաջին հերթին, չենք կրնար իրաւունք չտալ այսպէս մտածողներուն: Իւրաքանչիւր անձ իրաւունքը ունի պահանջելու, որ իրեն սահմանուած խօսք մը, պատգամ մը, արարողութիւն մը իր հասկացած լեզուով ըլլայ: Այլապէս խօսքը ծնծղայի մը պէս կը դօղանջէ, բայց ենթակային բան մը չ'ըսեր. պատգամը կը հնչէ, բայց ենթակային միտքին եւ զգացումներուն չի հասնիր եւ իր արդիւնքը չունենար. արարողութիւնն իր ներդաշնակութեամբը քաղցրօրէն կ'օրօրէ եւ կը հմայէ, բայց գիտակցութեան մակարդակին չի հասնիր:

Բայց եւ այնպէս, այս առարկութիւնը արդար չէ իր ամբողջութեանը մէջ:

Մտածենք երկու ուղղութեամբ.

1) Վերջին երկու տասնամեակներուն մեր Եկեղեցին տեղ-տեղ անհատական թէ հաւաքական բաւական ճիգ ի գործ դրաւ մեր արարողութիւններէն գոնէ գլխաւորները աշխարհաբարի եւ երբեմն նոյնիսկ անգլերէնի, ֆրանսերէնի կամ արաբերէնի թարգմանելու, եւ այդ թարգմանութիւնները յաճախ ծրիօրէն դրաւ ու կը դնէ նաեւ հաւատացեալներու տրամադրութեան տակ, որպէսզի անոնք կարենան հետեւիլ եւ հասկնալ, եւ ըստ այնմ գէթ մտովի մասնակցիլ արարողութիւններուն: Թարգմանուած այդ արարողութիւններէն կրնանք յիշել Ս. Պատարագը, Միւռնօրինէքը, Եպիսկոպոսական, Քահանայական կամ Սարկաւազական ձեռնադրութիւններու կարգերը, Արեւագալի եւ Հսկումի ժամերգութիւնները, Երեկոյեան ժամերգութիւնը, եւ այլն:

Յստակ է, որ երբ նման թարգմանութիւններ առկայ են, առարկութեանց ոյժը կը տկարանայ, թէպէտ հարցը կը մնայ այնքանով, որքանով որ եկեղեցական թեմական իշխանութիւնները եւ տեղական եկեղեցիներուն պատասխանատու հովիւները իրենք բաւարար ճիգ չեն թափեր գտնելու եւ ապահովելու նման թարգմանութիւնները զանոնք օգտագործելու համար իրենց իսկ շրջաններուն կամ ծուխերուն ծաղկումին սիրոյն:

2) Ծէսն ու արարողութիւնը թէպէտ հասկնալի եւ գիտակցուած պէտք է ըլլան ըմբռնելու համար անոնց ներքին կառոյցը, թափանցելու համար անոնց մտածողութեան եւ լիովին ըմբռնելու եւ գնահատելու համար անոնց խորասոյգ ու վեհ, ծածուկ եւ բացայայտ գեղեցկութիւնները, բայց լեզուն հասկնալը ամէն բան չէ:

Միտքով հասկնալուն վրայ շեշտը արեւմտեան աշխարհին եւ անոր չոր մտածողութեան յատուկ է, որ կ'անտեսէ նոյն արարողութեանց մէջ ոգեկանը, անտեսանելին, անշօշափելին, որ նոյնքան կարելոր է որքան տրամաբանականը, տեսանելին, շօշափելին: Կրնա՞նք ըսել, թէ հաւատքը միայն միտքով բացատրելի է: Արեւմուտքը այդպէս կ'ընկալէ եւ կը բացատրէ հաւատքը: Բայց մենք գիտենք, որ հաւատքը միտքէն շատ անդին է. սիրտ ու հոգի է, սէր ու մղում է, ներքին վստահութիւն ու զօրութիւն է:

Նոյնն է նաեւ արարողութիւնը: Անիկա միտք եւ խոկում է, բառ ու խօսք է, ճարտարապետութիւն եւ կառոյցի ներդաշնակութիւն է. բայց միաժամանակ, հոգիի ճախր ու սլացք է, զգացական ապրումներու ցայտք ու յորդում է, անբացատրելի եւ անսահմանելի վերա-

ցումներու ոլորտ մըն է հոգին բարձրացնող, հոգին փոխադրող եւ անբարբառ մըմունջներով Աստուծոյ հետ խօսակցութեան մէջ դնող:

Միայն հասկնալուն վրայ շեշտը դնելով, մենք կ'անտեսենք հաւատքին այս էական երեսը, այլ խօսքով՝ հոգիին լեզուն, որ Աստուծոյ Հոգիին ներգործութեամբը միայն իմանալի կը դառնայ հաւատացեալին, եւ որուն դիմաց կը տժգունին մարդկային լեզուները եւ հասկացողութիւնները, ճիշդ ինչպէս գեղեցիկ համանուագի մը ունկնդրութեան ատեն էականը հեղինակի արձանագրած ծայնանիշները գիտնալը չէ, այլ այն մեծ եւ անխառն վայելքը որ մարդ կը զգայ գործիքներու եւ ծայներու համամասնակցութեամբը ստեղծուած մթնոլորտին հոգեկան հաղորդակցութեամբը:

գ) Ի՞նչ բան պէտք է կրճատել մեր արարողութիւններէն:

Ինչպէս Եկեղեցին, այնպէս ալ եկեղեցական արարողութիւնները, պարզ հաւաքոյթ եւ տեղին ու ժամանակին համաձայն կատարուող պատահական ու պարագայական արարքներու, պատահական եւ յանպատրաստից արտասանուած խօսքերու եւ պատահականօրէն իրարու քով բերուած երգերու գումար մը չեն: Ինչպէս Եկեղեցին, այնպէս ալ եկեղեցական արարողութիւնները հաւատքի վրայ հիմնուած եւ հաւատքի դրսեւորում են: Առէ՞ք որեւէ ժամերգութիւն կամ ժամերգութեան որեւէ մէկ առանձին մասը, եւ ինքն իր մէջ քննեցէ՛ք, տեսնելու համար թէ ինչպէ՛ս սաղմոսը, քարոզը, մաղթանքը, աղօթքը, կամ երգը, տաղը, գանձը կամ մեղեդին իրարու լրացուցիչ են, ներքին մտածողութեամբ մը եւ տրամաբանական կերպով ամբօրէն իրարու ազուցուած, այնպէս՝ որ մէկ ամբողջութիւն եւ ծոյլ միասնութիւն մը կը կազմեն:

Կրնա՞նք որեւէ բան գեղչել՝ առանց հաւատքի դրսեւորման այդ տրամաբանական շղթան փշրելու եւ արարողութիւնն իր իմաստէն պարպելու...

Երկու տարբեր պատասխաններ կարելի է տալ, թէ՛ մէկ եւ թէ՛ միւս ուղղութեամբ:

1) Կրճատումը դարման չէ, այլ՝ ծայրայեղ միջոց, ճիշդ բժշկական վիրահատութեան պէս, որ ի գործ կը դրուի ծայրայեղ պարագային, երբ արդէն ամէն ուրիշ միջոց փորձուած է եւ արդիւնք չէ տուած:

Մենք կրնա՞նք ըսել, թէ փորձած ենք ամէն միջոց: Ո՛չ: Մենք նոյնիսկ շատ բան փորձած իսկ չենք:

Օրինակ, փորձա՞ծ ենք մեր արարողութիւնները կամ անոնց որոշ բաժինները սորվեցնել մեր զաւակներուն, մեր հոգեւոր դաստիարակութեան յանձնուած փոքրերուն եւ մեծահասակներուն: Մենք

փորձա՞ծ ենք ժողովուրդը արարողութեանց հաղորդակից դարձնել թարգմանուած բնագիրներ տալով անոնց, որպէսզի գէթ կարենան իմաստին հետեւիլ եւ այդ ծելով մասնակիօրէն մասնակից դառնալ փոխանակ անորոշին մէջ լողալու եւ ծանծրանալու: Մենք փորձա՞ծ ենք արարողութեանց ընթացքին երգեցողութեան եւ սաղմոսներուն կամ այլ ընթերցումներուն մասնակից դարձնել ժողովուրդը, երգել ու կարդալ տալով ամբողջ ժողովուրդին տեսնելու համար այդպիսի մասնակցութեան յառաջ բերած հոգեւոր վայելքն ու զօրութիւնը, եւ զգալու համար անոր հոգեցունց տպաւորութիւնը:

Ո՞վ կրնայ հանգիստ սիրտով ու խիղճով «այո» պատասխանել: Մենք նոյնիսկ փորձ չենք ըրած եւ չենք ըներ անձնապէս մենք սորվելու, ուր մնաց ուրիշներուն սորվեցնելու: Մենք չենք փորձած եւ չենք փորձեր ժողովուրդին նման թարգմանութիւններ հայթայթելու տեսնելու համար թէ ինչպէ՛ս կը փոխուի անոնց վերաբերումը: Մենք չենք փորձած եւ չենք ալ փորձեր ժողովուրդը իսկական իմաստով մասնակից դարձնելու երգեցողութեան եւ ընթերցումներուն: Կը բաւէ որ մեր կողքին դպրապետ մը ըլլայ, լաւագոյն պարագային՝ նաեւ երգեհոնահար մը եւ Պատարագը երգող խումբ մը, եւ կը բաւէ մեզի, մնացեալը մեր գործը չէ. մենք պէտք չունինք հետաքրքրուելու եւ ոչ ալ յոգնելու:

Արդ, երբ ուտելիք մը փորձած չես, կը նշանակէ թէ անոր համը չես գիտեր. եւ երբ առանց համին նայելու կ'առաջարկես կրճատել կամ վերցնել, կարելի չէ ըսել, թէ խելացի եւ ճիշդ բան կ'ընես:

Մանաւանդ բացարձակապէս պէտք է վերջ դնել պատահական եւ անմիտ կրճատումներուն: Եկեղեցին ունի իր վերին պատասխանատուները, որոնք այդ ուղղութեամբ կրնան կարգադրութիւններ ընել: Բայց ոեւէ անհատ հոգեւորական ինքզինքին թոյլ պէտք չէ տայ քմահաճ կրճատումներ ընել, որոնք, ինչպէս վերը նշեցինք, կը խախտեն արարողութեան մտածուած, նպատակասլաց եւ գեղեցիկ կառոյցը, եւ զայն կը պարպեն իր իմաստէն:

2) Ինչ որ ըսինք՝ չի նշանակեր, անշուշտ, որ կրճատումներ բնաւ պէտք չէ ըլլան: Անցեալին վրայ նետուած պարզ հայեացք մը իսկ կը բաւէ ըսելու, թէ Եկեղեցւոյ սկզբնական շրջաններուն այսքան երկար չէին արարողութիւնները: Անոնք հետզհետէ էր որ ճոխացան՝ հասնելով այսօրուան իրենց վիճակին:

Արդ, եթէ յաւելումները ժամանակի բերումներն են, կարելի չէ՞ նաեւ ետ երթալ եւ չափով մը ամփոփել արարողութիւնները ներկայ ժամանակներու ոգիին ու մտածողութեան պատշաճելու համար: Անշուշտ որ կարելի է: Բայց կը կարծենք որ, եթէ մեր ըրածը իրօք բա-

րեկարգութիւն պիտի ըլլայ եւ ոչ չարակարգութիւն, կրճատման որեւէ փորձ կամ աշխատանք պէտք է կատարուի յատուկ ուսումնասիրութենէ ետք, նախ գիտնալու համար թէ ինչ էր անոնց հնագոյն վիճակը, եւ ապա թէ իւրաքանչիւր մաս երբ եւ ինչպէս ատելցաւ, որպէսզի կրճատման փոյթին ու մոլուցքին մէջ չըլլայ որ հնագոյն ու թանկագին մասերը կտրենք ու նետենք, այլ խօսքով «որոմը քաղած ատեն ցորենն ալ միասին արմատախիլ ընենք» (հմմտ. Մտ 13.29):

Յետոյ, կրճատման աշխատանք մը այնքան ալ պարզ չէ: Մէկ-երկու օրինակներով բացատրենք մեր միտքը:

1) Մինչեւ 12-րդ դար մեր Պատարագը շատ ատելի կարճ էր. անոր մէջ չկային «Մարմին Տէրունական»-ը, «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»-ը, «Հայր Երկնաւոր», «Որդի Աստուծոյ» եւ «Հոգի Աստուծոյ» երգերը, ինչպէս նաեւ Հացին ու Գինին վերաբերումի ատեն երգուող սրբասացութիւնները: Այս բոլորը, ատելի մանր ուրիշ յաւելումներու կարգին, Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետն էր որ ատելցուց: Երեւակայեցէ՛ք հիմա Պատարագ մը, որուն մէջ այս բաժինները չըլլան... Դուք կը հաշտուի՞ք նման գաղափարի մը հետ:

2) Մինչեւ 17-րդ դար, Պատարագին մէջ չկար «Տէր ողորմեա» սրտագրաւ երգը: Անիկա ատելցնողը եղաւ Միմէնոն Ա. Երեւանցի Կաթողիկոսը: Կարելի է ըսել, թէ մեր Պատարագին վրայ վերջին յաւելումն է անիկա: Արդ, կրճատման մը պարագային, տրամաբանօրէն, վերջինէն պէտք է սկսիլ: Բայց այսօր կրնա՞ք դուք Պատարագէն ջնջել այդ կտորը, որ ամէնէն ատելի ժողովրդականութիւն ունեցող եւ զգացական հարստութեամբ լեցուն կտորն է՝ կապուած մեր ժողովուրդի նորագոյն շրջանի պատմութեան դառնադէտ իրադարձութիւններուն...

Բերուած օրինակները թերեւս բաւ են ըսելու, թէ դիւրին աշխատանք մը կրնայ ենթադրուիլ կրճատելը, մինչդեռ անիկա բազմակնճիռ հարց մըն է, ի միջի այլոց՝ նաեւ պատմական եւ հոգեբանական տուեալներու քննութեան կարօտ, եւ ուստի զարմանալի չէ եկեղեցական իշխանութեանց վերապահութիւնը, թէպէտ արդարանալի չէ նաեւ ուշացումը, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ իսկ շահերուն դէմ է:

դ) Մեր արարողութիւնները համապատասխա՞ն են այսօրուան մեր հաւատքին եւ պահանջներուն:

Վերոյիշեալ հարցումներէն ատելի կարեւորագոյն հարցում մը կայ, որ 1700-ամեակին առիթով մենք, իբրեւ Եկեղեցի, պէտք է ուղղենք մենք մեզի.- Այս արարողութիւնները իրենք այսօր համապատասխա՞ն են մեր հաւատքին, այսօրուան մեր հաւատքին (եթէ

հաւատք մը ունինք), թէ՞ միայն անգիտակցական եւ մեքենական պարտականութիւններ են:

Բաւականին անդրադարձանք կրճատումներու անհրաժեշտ խնդիրին. բայց միայն կրճատելը չէ հարցը: Այժմու մեր ժէսն ու արարողութիւնները կազմուելու եւ ճիշտացել են անցեալին իբրեւ արտայայտութիւնը անցնող ժամանակներու հոգեւոր-բարեպաշտական ոգիին եւ կարիքներուն: Արդեօք ներկայ մեր ժամանակի հոգեւոր-բարեպաշտական արարումները պահանջք չեն դնել արտայայտութեան նոր կերպերու, նոր կարգերու, նոր արարողութիւններու: Կը մտածենք բնաւ նոր տարրերու յաւելումին մասին, թէ՞ մեր միակ մտասեւեռումը հինը գեղչելն է՝ առանց նորերով փոխարինելու տրամադրութեան:

Մեր խօսքը արարողութեանց մէջ պարզապէս ծեւական նորութիւն մտցնելու մասին չէ, ինչպիսին են եւ կրնան ըլլալ երգեցողութեան նոր ոճերու օգտագործումը շարականներու կամ եկեղեցական երգերու պարագային, երգեհոնէն ու ծնծղայէն զատ ուրիշ գործիքներու օգտագործումը եկեղեցիէն ներս, եւ այլն: Մեր խօսքը ամբողջովին նոր արարողութեանց մասին է նոր առիթներու կապուած: Այսպէս, օրինակ, դեռ անցեալ դարուն, օրուան պահանջներուն որպէս պատասխան, Երուսաղէմի Պատրիարք Թորգոմ Արք. Գուշակեան «Մաղթանք Վասն Հանրապետութեան Հայոց» մը պատրաստեց Հայաստանի անկախացման առիթով, իսկ Բաբգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Կիլիսէրեան «Հայրապետական Մաղթանք» մը խմբագրեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար: Արդ, չկա՞ն ուրիշ առիթներ, որոնց համար նոր արարողութիւն անհրաժեշտ է:

Տանք քանի մը օրինակ.

- Ունինք մեր Եկեղեցւոյ պատկանող բազմաթիւ հին եւ նոր սուրբեր, որոնց համար անհրաժեշտ է ոչ միայն սրբադասման յատուկ կարգ մը կամ արարողութիւն մը պատրաստել, այլ նաեւ նոր շարական ու նոր երգեր գրել:

- Որոշ պարագաներու կ'ուզենք արդէն իսկ ծանօթ եւ այլապէս տօնելի սուրբի մը տօնախմբութիւնը յատուկ բարեպաշտութեան առարկայ դարձնել, եւ ըստ այնմ պէտք կ'ըլլայ նոր արարողութիւն մը խմբագրել այդ առիթին համար: Այսպիսի օրինակներ ունեցանք, գէթ Լիբանանի մէջ: Առաջինը Ս. Հռիփսիմեանց տօնն օր, երբ Ն. Ս. Օ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընդառաջելով Լիբանանի Առաջնորդ Գերշ. Տ. Արամ Արք. Քէշիշեանի խնդրանքին, սրբուհիներու մասունքներէն նշխարներ առաքեց, որոնք գետեղուեցան Ս. Աստուածածին եկեղեցւոյ կողքին շինուած յատուկ խորանի մը մէջ.

Եւ այդ թուականէն սկսեալ ամէն տարի լման ութը օր յատուկ կերպով պատրաստուած արարողութիւն մըն է որ կը կատարուի ամէն երեկոյ: Նոյնպէս, երբ 1700-ամեակի տօնակատարութեանց շրջագիծին մէջ 1999 տարին յայտարարուեցաւ իբրեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ուխտի տարի, ուխտի լման շաբթուան մը իւրաքանչիւր օրուան համար յատուկ աղօթքներ խմբագրուեցան եւ հրատարակուեցան «Ուխտաւորին Աղօթագիրքը» հատորիկով: Ասոնք պարզապէս օրինակներ են ցոյց տալու համար, թէ ինչպէս Եկեղեցի մը իր բարեպաշտական կեանքին մէջ կրնայ նորոգուիլ, երբ հինէն բացի նոր արարողութիւններ գան թարմացնելու իր հոգեւոր աշխարհը:

Գիտենք թէ մեր ժողովուրդին մէջ հոգեւոր հոսանք մը կայ, արդէն շուրջ 150 տարիէ ի վեր գործող, որ Եկեղեցական արարողութիւններուն իր հաւատարմութենէն եւ գործօն մասնակցութենէն անդին, կը սիրէ նաեւ նոր, աշխարհաբար լեզուով հոգեւոր երգեր ունենալ եւ զանոնք երգել ամէն առիթի: Պէտք է գայ ժամանակը, երբ Եկեղեցին ընտրէ եւ որդեգրէ այդ երգերէն լաւագոյնները, հարազատագոյնները եւ անոնց տեղ տայ իր արարողութեանց մէջ, ինչպէս եղած է անցեալի բոլոր շարականներուն, երգերուն ու տաղերուն պարագային:

Միայն հինին սահմաններուն մէջ մնացող եւ հինով բաւարարուող Եկեղեցի մը կը դադրի ապրող Եկեղեցի ըլլալէ: Կը դառնայ անցեալի յիշատակ, կը դառնայ թանգարան: Կը դադրի ապրող մարմին ըլլալէ, կը դադրի մարդոց խօսելէ, կը դադրի կեանքի բուրմունք ըլլալէ եւ կը դառնայ մահաբոյր (հմմտ. Բ. Կր 2.15-16): Մինչդեռ մեր ամբողջ ճիգը եւ սպասումն է, որ մեր սիրելի Եկեղեցին վերաթարմանայ, վերաշխուժանայ իր գործունէութեան մէջ եւ վերանորոգէ ինքզինք, վերանորոգէ իր կառոյցը, իր մտածողութիւնը, իր ծէսը, իր պաշտօնութիւնը եւ ժողովուրդը ամբողջ:

ԻՆՉՊԷ՞Ս ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՍՐԲԱՑՈՒՄԸ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Եկեղեցւոյ կողմէ՛ ռեւէ՛ մէկը սուրբերու կարգին դասելու արարքը կը կոչենք սրբադասում, որ Արեւմտեան Եկեղեցիներուն մէջ կը կոչուի կանոնականացում (Canonisation):

Կանոնականացումը կամ սրբադասումը ուրիշ բան չէ, եթէ ոչ Եկեղեցւոյ իշխանութեան կողմէ՛ առաւել կամ նուազ պաշտօնականութեամբ առնուած քայլ մը ճանչնալու, ընդունելու եւ տօնակատարութեամբ յիշատակելու, պատուելու անոնք, որոնք ջերմ հաւատքով եւ կատարեալ քրիստոնեային յատուկ ինքնանուէր կեանքով մը վկայուած, աստուածային եւ մարդկային առաքինութիւններով յատկանշուած, Ս. Հոգիի ներկայութեան ծորունով փայլած եւ իրենց հաւատքին, եւ իրենց եղբայրներու փրկութեան համար սիրոյ գերագոյն զոհաբերութեամբ իրենք զիրենք յօժար սիրտով ընծայաբերած հաւատքի տիպար օրինակներն ու ախոյեաններն են, եւ իբրեւ այդպիսին ճանչցուած ու մեծարուած են նախ ժողովրդական բարեպաշտութեան մէջ:

Բայց թերեւս անհրաժեշտ է նաեւ հարցում մը ընել.- Ինչո՞ւ յիշել սուրբերը: Մանաւանդ, ինչո՞ւ տօնել սուրբերը յատուկ յարգանք, աղօթք եւ բարեպաշտական այլ արտայայտութիւններ կապելով անոնց անձին ու տօնին:

Երկրաւոր իր առաքելութեան վերջին օրերուն, Բաղարջակերաց տօնէն քանի մը օր առաջ, Յիսուս աշակերտներուն հետ եկաւ Բեթանիա: Այդ իրիկուն Յիսուս բորոտ Միմոնի տունը ընթրիքի հրաւիրուած էր: Եւ մինչ սեղան բազմած էին, Իրեն մօտեցաւ կին մը, թանկագին իւղի նարդոսի շիշ մը բռնած իր ձեռքը, ու շիշը կոտրելով իւղը թափեց Յիսուսի գլխուն: Անմիջապէս ամբողջ տունը անուշահոտութեամբ լեցուեցաւ: Աշակերտները զայրացան. կ'ափսոսային թանկագին իւղին այդպէս կորուստը եւ կ'ըսէին, թէ կարելի էր սուղ գինով

300 դահեկանի ծախսել զայն եւ դրամը աղքատներուն բաշխել: Յիսուս յանդիմանեց Իրենները եւ գովեց կնոջ արարքը. «Որովհետեւ,- կ'ըսէր,- աղքատները միշտ ձեր հետ ունիք, բայց զիս միշտ ձեր հետ չունիք»: Եւ կ'եզրակացնէր. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ամբողջ աշխարհի վրայ, ուր որ ալ այս Աւետարանը քարոզուի, անոր ըրածն ալ պիտի պատմուի իր յիշատակին համար» (Մր 14.3-9: Հմմտ. Յհ 12.3):

Դիտեցէ՛ք հիմա սուրբերու կեանքը: Նմանութիւն չէ՞ք գտներ այդ կնոջ ըրածին եւ անոնց կեանքին միջեւ, սա տարբերութեամբ, որ այդ կինը իր ունեցած հարստութիւնը մեծագին իւղը կը բերէր Յիսուսի ընծայելու, մինչ սուրբերը որպէս մեծագոյն նուէր իրենք զիրենք, իրենց կեանքը ընծայեցին Քրիստոսի Եկեղեցւոյ «տունը» եւ ամբողջ աշխարհը լեցնելով իրենց կեանքը յատկանշող Քրիստոսի գիտութեան եւ երկնային յաւիտենական կեանքի բուրմունքով (Բ. Կր 2.14-16): Իրենց կեանքը ընծայեցին հակառակ իրենց շրջապատին ցուցաբերած զայրոյթին եւ անհասկացողութեան, որովհետեւ զգացին, թէ այդ բացառիկ շնորհքը եւ պատեհութիւնը միշտ չէր որ պիտի ունենային: Ճիշդ այդ պատճառով ալ Քրիստոսի խօսքը բազմապատիկ ճշմարտութեամբ նաեւ իրենց վրայ: Եւ եթէ Քրիստոս այդ կնոջ սիրոյ ընծայաբերումին առիթով ըսաւ, թէ անոր տուած օրինակը անբաժան պիտի մնայ Աստուծոյ արքայութեան քարոզութենէն, Եկեղեցին հաւատաց եւ կը հաւատայ նոյնպէս, թէ ամբողջական սիրոյ ինքնընծայումով տրուած կեանքի գեղեցիկ օրինակները նմանապէս կարելի չէ՛ բաժնել Եկեղեցւոյ կեանքէն եւ Աստուծոյ արքայութեան քարոզութենէն:

Ահա թէ ինչո՞ւ Եկեղեցին առաջին օրէն հետաքրքրուեցաւ, ճանչցաւ, ընդունեց, գուրգուրաց ու պահեց նուիրումի այդ հերոսներուն սուրբերուն յիշատակները եւ անոնցմէ մնացած մասունքները, յարգեց զանոնք, եւ Աստուծոյ արքայութեան քարոզութեան կողքին, իր կեանքին մէջ կարելոր տեղ տուաւ անոնց:

Բայց ինչպէ՞ս եղաւ ասիկա եւ ի՞նչ ընթացք ու զարգացում ունեցաւ:

*
* * *

Նախ նշենք, որ Հին Ուխտին մէջ ալ բացառիկ յարգանք կար այն անձերուն հանդէպ, որոնք իրենց կեանքով, գործով ու խօսքով հանդէս կու գային իբրեւ Աստուծոյ մարդ կամ իբրեւ արդար, կամ իբրեւ

տեսանող ու մարգարէ: Եւ նոյնիսկ զանոնք իրենց կենդանութեան մերժելէ, հալածելէ եւ սպաննելէ ետք, յետ մահու անոնց գերեզմանները կը շինէին ու կը զարդարէին (տես Մտ 23.29) այդպիսով ճանչնալով եւ ընդունելով անոնց կոչումը եւ յարգելով յիշատակը:

Նոր Ուխտի ընտրեալներն աւելի շուտ եւ աւելի անմիջականօրէն այս ճանաչումը տուին անոնց, որոնք իրենց անձին վրայ փայլեցուցին Քրիստոսի օրինակը, Հօր Աստուծոյ զօրութիւնը եւ Ս. Հոգիին բազմաձաձանջ շնորհքները: Այսպէս, երբ Ստեփանոս Աստուծոյ շնորհքով ու զօրութեամբ լեցուն եւ մեծամեծ հրաշքներով փայլող նախասարկաւազը քարկոծումով նահատակուեցաւ, բարեպաշտ մարդիկ մեծ յարգանքով առին ու թաղեցին անոր մարմինը (Գրծ 8.2):

Այս անմիջական ճանաչումին առաջին պատճառը նահատակներու ցուցաբերած սիրոյն եւ համբերութեան հանդէպ հիացումն էր¹, այնքան, որ այլեւս զանոնք սոսկական մարդ չէին համարեր, այլ հրեշտակ². Քրիստոս էր որ կը գործէր անոնց մէջ եւ կարծէք Քրիստոսի կեանքին ու չարչարանքներուն օրինակն էր որ կը կրկնուէր անոնց անձերուն վրայ:

Այսպէս արծանագրուած կը գտնենք, օրինակ, քրիստոնէական Եկեղեցւոյ առաջին սրբախօսական գրութեան մէջ, Չմիւռնիոյ Եկեղեցւոյ կողմէ գրուած նամակ մը, որ կը կոչուի «Պողիկարպոսի նահատակութիւնը» եւ որ գրուած է սուրբին նահատակութենէն անմիջապէս ետք Բ. դարու կէսերուն (շուրջ 155-ին): Այնտեղ Չմիւռնիացի Պողիկարպոս Հայրապետին մասին կը վկայուի, թէ «իր նահատակութենէն իսկ առաջ, անիկա միշտ մեծապէս կը յարգուէր իր սրբակեցութեան համար»³:

Բայց ինչ որ նահատակութենէն ետք տեղի կ'ունենայ այդ է որ կը վկայէ սուրբին ու սրբութեան մասին քրիստոնէական հնագոյն հասկացողութիւնը: Նամակագիրը կ'ըսէ. «Մեզմէ շատեր կը փափաքէին վերցնել անոր մարմինը տիրանալու համար անոր սուրբ մասունքներուն»⁴, բայց Նիկիտիս անունով հրեայ մը կը դրդէ դատաւորը որ մարմինը քրիստոնեաներու ջանձնէ. «Որպէսզի,- կ'ըսէ,- չըլլայ որ Խաչեալը ձգեն եւ այս մէկը պաշտել սկսին»⁵: Նամակագիրը այստեղ միջանկեալ կը գրէ. «Անոնք [այսինքն հեթանոսներն ու հրեաները] չեն գիտեր որ մենք բնաւ չենք կրնար թողուլ զՔրիստոս, որ չարչարուեցաւ փրկելու համար բոլոր անոնք, որոնք աշխարհի մէջ փրկուած չեն, Ինք որ անմեղ էր մեղաւորներուն համար, եւ չենք կրնար ուրիշ մը պաշտել: Որովհետեւ, մենք զԱյն կը պաշտենք Աստուածորդի ըլլալուն համար, իսկ նահատակները կը սիրենք իբրեւ աշակերտ, եւ նմանող Տիրոջ, եւ ատիկա արդարօրէն, իրենց

Թագաւորին ու Տիրոջ հանդէպ ցուցաբերած իրենց անհամեմատելի նուիրումին համար»⁶: Ապա յիշել է ետք, թէ Պօղիկարպոսի մարմինը կրկին կ'այրուի, կ'աւելցնէ. «Այսպէս, աւելի ուշ կրցանք հաւաքել անոր ոսկորները, որոնք աւելի թանկագին են, քան մեծագին քարերը կամ ոսկին՝ զանոնք պատշաճ տեղ մը դնելու համար: Այնտեղ է որ Տիրոջնով պիտի հաւաքուինք ցնծութեամբ եւ ուրախութեամբ տօնելու համար իր նահատակութեան, այսինքն՝ իր ծննդեան տարեդարձը, ի յիշատակ անոնց, որոնք մեզմէ առաջ պատերազմեցան, եւ մարգելու ու պատրաստելու համար անոնք, որ ապագային պիտի պատերազմին»⁷: Ի վերջոյ, նամակին եզրակացութիւնը կ'ըսէ. «Այսպէս եղաւ պատմութիւնը երանելի Պօղիկարպոսի, որ Ֆիլատելֆիոյ եղբայրներուն հետ միասին եղաւ 12-րդ անձը որ նահատակուեցաւ Չմիւռնիոյ մէջ: Բայց միւսներէն աւելի իր յիշատակն է որ կը պահենք, այնքան որ ամէնուրեք հեթանոսները իրենք ալ կը խօսին իր մասին: Անիկա ո՛չ միայն **նշանաւոր ուսուցիչ** մը եղաւ, այլ նաեւ **երեւելի վկայ** մը: Ամէն մարդ կ'ուզէ նմանիլ իր նահատակութեան, որ Քրիստոսի Աւետարանին համաձայն եղաւ: Իր համբերութեամբ, անիկա յաղթեց անօրէն դատաւորին եւ այսպիսով շահեցաւ անմահութեան պսակը: Առաքեալներուն եւ բոլոր արդարներուն հետ՝ անիկա ցնծութեամբ կը փառաւորէ զԱստուած ամենակալ Հայրը, եւ կ'օրհնէ մեր Տէր Յիսուս Քրիստոսը՝ մեր հոգիներուն Փրկիչը եւ մարմիններուն Առաջնորդը, որ ամբողջ աշխարհի Ընդհանրական Եկեղեցւոյ Հովին է»⁸:

Այս քիչ մը լայն մէջբերուած վկայութենէն յստակօրէն կը քաղենք հետեւեալ կարեւոր տուեալները.

1) Բ. դարու կէսին արդէն իսկ սուրբերու (=նահատակներ) հանդէպ յարգանքը առաւել կամ նուազ չափով կ'արտայայտուի այնպէս, ինչպէս յետագային զայն կը գտնենք ուշ դարերու յարգանքին մէջ:

2) Այս յարգանքն ընծայողը միայն անհատ քրիստոնեաները չեն, այլ Չմիւռնիոյ Եկեղեցին՝ իր ամբողջութեանը մէջ: (Ինչպէս ըսինք, Մենք-ով խօսող այս նամակը գրուած է Չմիւռնիոյ Եկեղեցիին կողմէ՝ Ֆիլոմելիումի Եկեղեցիին, որ Պօղիկարպոսի նահատակութեան մանրամասնութիւններն ուզած էր գիտնալ)⁹:

3) Սուրբին մարմինն ու ոսկորներն ալ սուրբ են, չափազանց թանկագին եւ ցանկալի՝ պահելու համար: Այս պարագային, դարձեալ Եկեղեցին է, որ կ'ուզէ նշխարները յատուկ տեղ մը պահել: Եւ իրեաներու կեցուածքը ցոյց կու տայ, որ յարգանքի այս արտայայտութիւնը նոր չէ, այլ՝ արդէն ծանօթ իրողութիւն:

4) Քրիստոնեաներ յստակօրէն իրարմէ կը տարբերեն Քրիստոսի ընծայուած պաշտամունքը եւ սուրբ նահատակներուն վերա-

պահուած սէրը կամ յարգանքը:

5) Արդէն կար սովորութիւնը՝ անոնց նահատակութեան տարեդարձի օրը անոնց գերեզմանին շուրջ հաւաքուելու, «ցնծութեամբ եւ ուրախութեամբ տօնելու համար» անոնց «ծննդեան տարեդարձը»: Ասիկա Եկեղեցւոյ կեանքին մէջ սուրբերու տօնակատարութեան կերպին մասին առաջին յիշատակն է: Անմիջապէս պէտք է դիտել որ երբեք սուգի եւ տրտմութեան հանդիպումներ չեն ասոնք, այլ՝ ծննդեան տարեդարձի ուրախութեան, ինչ որ յաւիտենական կեանքի յոյսը կ'արձարժէր տօնողներուն մէջ:

6) Այդ տօնակատարութեան նպատակն է ո՛չ միայն յիշել հաւատքի պատերազմին մէջ յաղթական դուրս եկած վկաները, այլ նաեւ ու մանաւանդ՝ անոնց օրինակով ներշնչել ու քաջալերել տակաւին նոյն պատերազմի դաշտին մէջ գտնուող զինուորեալ Եկեղեցւոյ անդամները:

7) Եկեղեցւոյ հաւատքն է, որ նահատակ սուրբերը արժէն առաքեալներուն եւ արդարներուն հետ են եւ ցնծութեամբ զԱստուած կը փառաւորեն: Եւ որովհետեւ իրենց չարչարանքներով անոնք Քրիստոսի հանդէպ կատարեալ սիրոյ օրինակը տուին եւ իրենց նահատակութեամբ Քրիստոսի հետ կատարեալ միութեան հասան. Եկեղեցին հաւատաց եւ կը հաւատայ որ անոնք կրնան իրենց աղօթքներով ու բարեխօսութեամբ օգնել երկրի վրայ գտնուողներուն:

8) Ի վերջոյ, կը տեսնենք, թէ Եկեղեցին բոլոր նահատակները ճանչնալով հանդերձ՝ բոլորին յիշատակը չի պահեր: Այստեղ, «յիշատակ» բառով մենք կը հասկնանք տօնական յիշատակ, այսինքն՝ տօնակատարութիւն, որ յատուկ չեղաւ բոլորին, այլ միայն անոնց, որոնք բացառիկ կամ երեւելի եղան:

Շուտով, Եկեղեցիներու կողմէ որդեգրուած այս կերպերը եւ ականդութիւնը տեղ կը գտնեն Եկեղեցական կանոններու մէջ: Այսպէս օրինակ.

ա) Դ. դարու սկիզբները խմբագրուած Առաքելական Կանոններու Իէ. կանոնը հետեւեալ սկզբունքը կը ճշդէ. «Առաքեալներ կարգադրեցին եւ հաստատուն կերպով սահմանեցին, որ եթէ մէկը ճշմարիտ մահուամբ եւ կամ իբրեւ հաւատարիմ վկայ Փրկիչին անունին համար անօրէններու կողմէ խողխողուելով մեկնի այս աշխարհէն՝ Քրիստոսը խոստովանելով նեղութեանց մէջ, որոնք Անոր անունին համար կ'ըլլան, այդպիսիին յիշատակը պէտք է կատարել անոր մահուան օրը, եւ անոր ոսկորներուն նշխարները պատուելով պէտք է փառաւորել զՔրիստոս, որ այդպիսի համբերութիւն տուաւ

անոր մեզ քաջալերելու եւ մեր մեղքերուն թողութեան առիթ ըլլալու համար»¹⁰:

բ) Լաւոդիկէի ժողովը (շուրջ 314-ին) կը սահմանէր (կանոն ԽԸ.) Մեծ Պահքի քառասնօրեայ շրջանին «մարտիրոսներու ծնունդը ջիշել եւ չտօնել», եթէ ոչ միայն Շաբաթ եւ Կիրակի օրերը¹¹:

գ) Գրիգոր Լուսաւորիչի վերագրուած կանոններուն մէջ կը գտնենք կանոն մը (ԺԸ.), որ կ'արգիլէ մարտիրոսներու գերեզմաններուն վրայ Պատարագ մատուցել¹², եւայլն:

Եկեղեցւոյ կողմէ սուրբերուն ստացած ճանաչման եւ անոնց համար սահմանուած տօնակատարութեանց մասին այսքան վկայութիւնը բաւարար ըլլայ առ այժմ: Մենք փորձենք տեսնել, թէ Եկեղեցին կամ Եկեղեցւոյ իշխանութիւնը ինչպէ՞ս կու տար այս ճանաչումը:

* * *

Քրիստոնէական առաջին դարերուն, բոլոր Եկեղեցիներուն համար ալ ժողովուրդին կողմէ ընծայուած ինքնաբոլոյս յարգանքն ու բարեպաշտութիւնը միակ սկզբունքն էր որով ճանաչում կը տրուէր սուրբի մը: Ժողովրդական այս ճանաչումն ու յարգանքը Եկեղեցի կ'անցնէին միայն այն պարագային երբ եկեղեցական իշխանութիւնը իր կարգին համոզում գոյացնէր եւ ճանաչում տար այդ յարգանքին զայն Եկեղեցիէն ներս ընդունելով, սուրբին նահատակութեան օրը եկեղեցական օրացոյցին մէջ արձանելով եւ յիշատակելով:

Բայց այստեղ պէտք է ճշդում մը կատարենք: «Եկեղեցական իշխանութիւն» բացատրութեամբ կը հասկցուին երկու բաներ. առաջին շրջանի մը (նահանգ կամ գաւառ) եպիսկոպոսին, այլ խօսքով՝ տեղական իշխանութեան կողմէ եղած ճանաչումը, եւ երկրորդ՝ ամբողջ Եկեղեցիի մը կեդրոնական իշխանութեան կողմէ ճանաչումը եւ ընդունումը նոյն սուրբին:

Առաջինը աւելի յաճախ եւ աւելի դիւրին կը կատարուէր՝ տեղական բարեպաշտութեան իբրեւ արդիւնք եւ պահանջ:

Որեւէ գաւառի, գիւղի կամ քաղաքի մէջ նահատակուած կամ սուրբ կենցաղով եւ յատուկ գործերով ու նշաններով երեւելի ռեւէ անձ առաջին հերթին իր անմիջական շրջապատին ծանօթ պիտի ըլլար անշուշտ: Այդպիսիներու գերեզմանները կամ չարչարանքի գործիքները կամ անձնական իրերը շուտով ժողովրդական բարեպաշտութեան մէջ կը դառնան յարգանքի առարկայ: Բնական մղումով, մարդիկ կը դիմեն անոնց արօթքին ու բարեխօսութեան, ո-

րովհետեւ անոնց մէջ կը տեսնեն այս կեանքի նեղութիւնները յաղթահարած հաւատքի կատարելատիպը եւ Աստուծոյ հաճութիւնն ու բարեկամութիւնը շահած հարազատ գաւակները: Այս համոզումը յաճախ հիմնուած կ'ըլլայ այն հրաշալի գործերուն ու նշաններուն վրայ, որոնք սուրբերուն կեանքը կը յատկանշեն իբրեւ վկայութիւն Աստուծոմէ անոնց վայելած բացառիկ շնորհքին: Յաճախ ալ այդ համոզումը ինք պատճառ կը դառնայ նորանոր հրաշքներու երեւումներով, յայտնութիւններով ու բժշկութիւններով, որոնք անձերուն սրբութեան մասին աստուածային վկայութիւնը կը հանդիսանան:

Այս բոլորին ի տես, տուեալ քաղաքին, գաւառին կամ նահանգին եպիսկոպոսը իր վճիռը կու տար ճանաչում տալով անձին արժանիքներուն ու սրբութեան: Բայց տակաւին ասիկա չէր նշանակեր, թէ տուեալ սուրբը, ճանաչում գտած է ամբողջ Եկեղեցիէն: Շատ եւ շատ յաճախ, որոշ սուրբի մը յարգանքը կը մնար միայն տուեալ շրջանին յատուկ, տեղական հանգամանքով ու բնոյթով, եւ բնաւ ալ դուրս չէր գար տուեալ գաւառէն կամ նահանգէն: Ասոր պատճառները կրնային մէկէ աւելի ըլլալ, բայց, այսուհանդերձ, անպայման կապ չունէին սուրբին մեծութեան կամ ոչ-մեծութեան, կարեւորութեան կամ ոչ-կարեւորութեան հետ: Ասոր մէկ օրինակն է, կը կարծենք, հետեւեալը.

708 թուականին, Միջագետքի Խառան քաղաքին մէջ տանջանքներու ներքեւ կը նահատակուի Շուշան Կամսարական տիկինը: Մինչ նահատակութեան լուրը Հայաստան կը հասնէր, նահատակին եղբայրը Գագիկ Կամսարական, Արարատեան նահանգի Մասեացոտն գաւառի Վարդանակերտ աւանին մէջ իր հիմնարկած եկեղեցիին նաւակատիքը կատարելու կը պատրաստուէր. եւ, ըստ վկայութեան, «մարտիրոսի եղբայրը ըլլալու պարծանօք եկեղեցւոյն նաւակատեաց հանդէսին խառնեց իր վկայուի քրոջ տօնական յիշատակը»¹³: Օրմանեան Արք. նոյնիսկ կ'ենթադրէ որ այս փառաւոր տօնախմբութեան հանդիսադիրը Եղիա Արճիշեցի Կաթողիկոսը ինք եղած ըլլայ¹⁴: Բայց մեզ հետաքրքրող կէտը կաթողիկոսին ներկայութիւնը չէ այնքան, որքան, նախ Շուշանի իբրեւ նահատակ տօնուելուն իր եղբորը անհատական նախածեռնութեամբ եղած ըլլալը, եւ ապա թէ անոր յիշատակը նոյնիսկ ճառընտիրներու մէջ յիշուած է, թէպէտ Յայսմաւուրքներու մէջ չէ անցած եւ տօնելի չէ եղած: Ինչպէս ըսինք, մեր կարծիքով ասիկա զուտ տեղական հանգամանքով տօնելիութեան օրինակ մըն է:

Այստեղ փակագիծ մը: Մենք մեր եկեղեցական լեզուին մէջ կը գործածենք զոյգ բացատրութիւններ նշելու համար սուրբերու երկու

դասակարգումներ: Ունինք տօնելի սուրբեր եւ յիշատակելի սուրբեր: Առաջիններն անոնք են, որոնք Եկեղեցւոյ ծիսական կեանքին մէջ կը տօնուին: Երկրորդները միայն կը յիշատակուին ճառընտիրներու եւ Յայսմաւորքներու մէջ. այսինքն՝ անոնց կեանքը կը կարդացուի օրը օրին, բայց որոնք չեն տօնուիր:

Կը կարծենք, որ սուրբերու այս երկրորդ խումբին մէջ կը մտնեն բոլոր անոնք, որոնք տեղական հանգամանքով ճանչցուած եւ հաւանաբար որոշ ժամանակի համար որոշ շրջաններու մէջ տօնելի ալ եղած են, բայց որոնք Եկեղեցւոյ ամբողջութեան սեփականութիւնը եղած չըլլալուն համար՝ դուրս մնացած են մեր Տօնացոյցներէն եւ ուստի՝ տօնելիներուն ցանկէն:

Իսկ ինչպէ՞ս կատարուած է ճանաչումը տօնելի սուրբերուն: Ասոնց պարագային, Եկեղեցւոյ մը կեդրոնական իշխանութիւնը ի՞նչ ձեւով ճանչցած է զանոնք. այլ խօսքով, ինչպէ՞ս սրբադասուած (կամ կանոնականացած) են:

*
* * *

Մենք տեսանք բոլոր Եկեղեցիներու կողմէ՛ ճանաչումը նոյն սկզբունքին, որ կը հիմնուէր ժողովրդական ճանաչումին վրայ, որուն Եկեղեցին կու գար իր հեղինակութիւնը տալու: Ասիկա գրեթէ անփոփոխ իբրեւ սկզբունք՝ մնաց սրբադասման հիմնական կերպը Արեւելեան բոլոր Եկեղեցիներուն, որոնց կարգին նաեւ Հայ Եկեղեցւոյ համար: Մինչդէռ Արեւմտեան Հռոմէական Կաթօլիկ Եկեղեցւոյ համար յետագայ զարգացումը եղաւ քիչ մը տարբեր: Այնտեղ, պահանջներու բերումով, սկզբնական ձեւին մէջ հետզհետէ շեշտուեցաւ Եկեղեցւոյ իշխանութեան վճիռին կարեւորութիւնը: Ժամանակին հետ, տեղական եկեղեցիներու պատասխանատուներ երբեմն սուրբ մը ճանչնալու իրենց ձեռնարկին աւելի մեծ վարկ տալու համար՝ ուզեցին Հռոմի Պապին հաւանութիւնն ալ ունենալ: Այս մէկը հետզհետէ սովորութիւն դարձաւ եւ, ժամանակի ընթացքին, սովորութիւնը պաշտօնական վաւերացման բնոյթ ստացաւ: Եւ որովհետեւ շատ կողմերէ՛ դիմումներ կու գային, հարկը ստիպեց որ յատուկ **ձեւ** մը կամ **ընթացք** մը որոշուի, եւ այսպէս, Պապին վաւերացումը օրինական արժէք ստացաւ:

Պապի մը ձեռքով կանոնականացում ստացած առաջին սուրբը եղաւ գերմանացի եպիսկոպոս մը՝ Ulrich (Udalricus) of Augsburg, 993 թուականին, Յովհաննէս ԺԵ.ի ձեռքով: Իսկ այս գործընթացին համա-

ծայն կանոնականացումը միակ օրինական կերպ դարձաւ Գրիգոր Թ. Պապին օրով (1234):

Գալով մեր Եկեղեցիին, դարձեալ հարցնենք, թէ ինչպէ՞ս կանոնականացուցած է իր սուրբերը՝ հայ սուրբերը, ե՞րբ սկսած ենք զանոնք տօնել. ինչպէ՞ս եւ որո՞ւ որոշումով կամ հեղինակութեամբ անոնք Տօնացոյցին անցած եւ տօնելի դարձած են:

Փորձենք կարգ մը պատասխաններ գտնել այս հարցումներուն:

Եթէ անցեալ դարուն պատրաստուած մէկ-երկու «Քրիստոնէական»ներ աչքէ անցնէք, պիտի հանդիպիք յայտարարութիւններու, թէ մինչեւ ԺԵ. դար սրբոց տօները սահմանուած են Ազգ. ժողովներով: Օրինակ, Ստեփանոս Քինյ. Մանդինեանց իր «Աստուածպաշտութիւն Հայց. Ուղղափառ Եկեղեցւոյ» գործին մէջ քանի մը անգամ կը կրկնէ, թէ «սրբոց տօներն սահմանուած են Ազգային ժողովներով մինչեւ 15-րդ դարը»¹⁵: Բայց եւ այնպէս, մենք այդպիսի պարագայ մը չենք գիտեր եւ յիշատակութիւն չենք գտներ:

Ասոր մօտիկ ուրիշ յայտարարութիւն մը կը գտնենք, օրինակ, դաւանաբանական ձեռնարկի մը մէջ, ուր կ'ըսուի. «...մի անձն, որի մէջ այդպիսի աստուածային շնորհ է փայլում Քրիստոսի անուան վկայելու համար, անշուշտ սուրբ է Աստուծոյ առաջ, սուրբ կը կոչուի եւ ամբողջ Եկեղեցւոմ, իբրեւ նոյն Եկեղեցւո կենդանութեան պտուղ: Բաւական է միայն թերթել Հայաստանեայց Ս. Եկեղեցւո պատմութիւնն Ա. դարից՝ այսինքն Ս. Թադէոս ու Բարթողիմէոսից ու նոցա նահատակակիցներից սկսած մինչեւ մեր օրերը, եւ մենք կ'ունենանք մի հաստատուն ապացոյց, որ սրբութիւնն ոչ թէ մարդկային քննադատութեամբ ու վճռով է տրուում մարդկանց, այլ աստուածային գործով է հռչակուում մարդու մէջ առանց որեւիցէ մարդկային օժանդակութեան կարօտելու: Ամբողջ Եկեղեցւո լրումը իբրեւ մի մարմին ու հոգի միանգամից սկսում է ճանաչել այդպիսի սուրբին իւր Անդրանկաց ընկերակից, իսկ Եկեղեցւո իշխանութիւնը միայն օրինական յայտարար է դաւանում այդ միաձայնութեան»¹⁶: Հակառակ սոյն յայտարարութեան քիչ մը շատ ինքնավստահ շեշտին, մենք այդ մէկը եւս խնդրական կը գտնենք:

Անշուշտ, հարցին սպառիչ պատասխան տալու համար երկար քննութեանց մէջ պէտք է մտնել: Առայժմ կը բաւականանանք միայն ըսելով, թէ տօնելի սուրբերու պարագային Հայ Եկեղեցւոյ կողմէ՛ ճանաչումը կամ սրբադասումը **յաճախ կատարուած է պատահականօրէն**: Կրնանք անմիջականօրէն մատնանշել հետեւեալ քանի մը երեւոյթները, որոնք կերպեր ու հանգամանքներ կը վերայայտնեն.

Ա. երեւոյթ. Ինչպէս տեղական ճանաչման պարագային օրինա-

կով տեսանք, այստեղ եւս յաճախ այդ ճանաչումը սկիզբ կ'առնէ անհատական բարեպաշտութենէն, անհատական նախաձեռնութեամբ, փոխանակ ժողովրդական բարեպաշտութեամբ սկիզբ առնելու եւ պարզապէս «յայտարարուելու» Եկեղեցւոյ իշխանութեան կողմէ: Ասոր լաւագոյն մէկ օրինակը Հռիփսիմեան ու Քայիանեան կոյսերուն հռչակումն է Ս. Գրիգոր Լուսաւորիչին կողմէ:

Հագիւ Խոր Վիրապէն ելած, մեծ Սուրբը կը հարցնէ. «Ո՞ր են Աստուծոյ վկաներուն մարմինները»¹⁷: Յոյց տուին տեղը, հնձանը, ուր Հռիփսիմեանք նահատակուած էին, եւ Գրիգոր անոնց մարմինները հաւաքեց, ամփոփեց, եւ «Սուրբերը պատեց՝ իւրաքանչիւրը իր հագուստներով»¹⁸, կ'ըսէ Ագաթանգեղոս, եւ այնտեղ հաստատեց նաեւ իր կայքը: Յաջորդ օր, թագաւոր, նախարարներ, աւագանի եւ խառնիճաղանձ ամբոխը կու գան կը ծնրադրեն Ս. Գրիգորի եւ «Աստուծոյ նահատակներու սուրբ ոսկորներուն առջեւ»¹⁹, եւ Գրիգոր իր խօսքին մէջ յատուկ կերպով կը շեշտէ, թէ նահատակուած կոյսերը Աստուծոյ աւելի սուրբ վկաներն են, «որոնք Աստուծոյ կենդանի են եւ բարեխօս՝ [գիրենք] տօնողներու համար»²⁰: Այստեղ յստակօրէն կ'երեւի, որ Հռիփսիմեանք իբրեւ սուրբ ճանաչումը կը սկսի Գրիգորի կողմէ, անմիջական եւ ինքնաբոյս, թէպէտ յետոյ ատոր վկայութիւնը կամ հաստատումը իր տեսիլքին մէջ կը ստանայ Աստուծոյ²¹ եւ մանաւանդ գանոնք կը տեսնէ իրենց իսկ փառքով՝ «երեսունեօթը սուրբ վկաները՝ սպիտակ հագուստներու լուսեղէն կերպարանքով»²²: Նախաձեռնութիւնն ու ճանաչումը Գրիգորի անհատական հեղինակութեամբ կը կնքուին, երբ տակաւին ինք եկեղեցական կարգ կամ հանգամանք ալ չունի:

Բ. երեւոյթ. Երբեմն սրբադասման առաջարկը կամ դիմումը եւ երբեմն ալ ուղղակի նախաձեռնութիւնը կու գայ շրջանի եկեղեցական իշխանութենէն, եպիսկոպոսէն կամ քահանայից դասէն, ինչ որ սրբադասման քիչ մը աւելի պաշտօնական կամ կանոնական բացատրութեամբ մը իրաւական կերպն է:

Այսպէս, օրինակի համար, ԺԳ. դարու պատմիչ-մատենագիր Ստեփանոս Եպս. Օրբէլեան (1260-1304) իր «Պատմութիւն Նահանգին Սիսական» գործին մէջ (գլուխ ԺԹ.) կը նշէ կարեւոր տեղեկութիւն մը: Ե. դարուն, Աւարայրի ճակատամարտէն անմիջապէս ետք, ինչպէս այլ վայրերու, այնպէս ալ Սիւնեաց նահանգի Վայոց Ձոր գաւառին մէջ հարիւրաւորներ նահատակուեցան՝ ուրացութեան չհաւանելով: «Հայաստան Աշխարհի բոլոր լեռնային կածաններն ու խոր ձորերը, հովիտներն ու բլուրները վկաներով լեցուեցան»²³: Ունանք նահատակուեցան Եղեգիս եւ Մողան գետակներուն միջեւ

գտնուող բլուրին մօտիկ, ուրիշներ Մարտիրէի գլխաւորութեամբ, Անգեղծոր կոչուած նեղ ձորակին մէջ, «որոնց վրայ յետոյ տեղւոյն բնակիչները եկեղեցի մը շինեցին»²⁴: Ի վերջոյ, ուրիշներ նահատակուեցան Ոստինք եւ Արտաբոյնք գիւղերուն մօտիկ, եւ տեղացիներ «ամփոփեցին սուրբերը, եւ մատուռ շինեցին անոնց վրայ: Իսկ առաջին սուրբերը, որոնք բլուրին վրայ նահատակուեցան, կարգ մը քրիստոնեաներ առժամաբար թաղեցին զանոնք: Այն ատեն, երանելի կաթողիկոսը Գիւտ, երբ լսեց, հրամայեց մեծ վկայարան մը շինել սուրբերուն վրայ: Եւ անոնց ոսկորները ժողովեցին վկայարանի մը մէջ: Ապա Յրեւ, Շահիրէտ, Արշէն եւ Աբդիու երէցները գործի անցնելով հիմերը դրին կաթողիկէին... Իսկ երբ շինութեան գործը աւարտեցաւ, երանելի Գիւտ Կաթողիկոսը եւ Սիւնեաց Անանիա եպիսկոպոսը կու գան բազմամբոխ ժողովուրդով, սուրբերը կը փոխադրեն իրենց հանգստարանը եւ եկեղեցիին նաւակատիքը կը կատարեն ութը օր»²⁵: Ասիկա տեղի կ'ունենայ 468-ի Յունիս ամսու 25-ին:

Թէպէտ յայտնապէս մեզի չըսուի թէ Գիւտ Կաթողիկոս տարեկան տօն մը սահմանե՞ց անոնց համար, թէ՞ ոչ, բայց վկայարանի շինութենէն եւ տօնախմբութեան շուրջէն ատիկա բնականօրէն կը մակաբերուի: Բայց այդ մասին ոչինչ կը գտնենք Յայսմաւորքներու մէջ, ոչ ալ մեր Տօնացոյցին:

Գ. երեւոյթ. Բնականօրէն, ամբողջ Եկեղեցւոյ համար սուրբի մը պաշտօնական ճանաչումը գլխաւորաբար գործը պիտի ըլլար Եկեղեցւոյ կեդրոնական իշխանութեան. իսկ այս բացատրութեամբ առաւելաբար կը հասկնանք Եկեղեցւոյ գլուխը կաթողիկոսը: (Ինչպէս կանխեցինք ըսել, ժողովական որոշումի մը յիշատակը պահուած չենք գտներ մեր պատմութեան մէջ): Բայց ինչ որ մեզ չափազանց կը զարմացնէ, այն է, որ կաթողիկոսներու կողմէ առնուած քայլերը շնորհուած ճանաչումը եւ հաստատուած տօները յաճախ մնայուն չեն եղած, այլ ժամանակն ու պարագաները իրենց յորձանքին հետ առեր տարեր են տօներն ալ, եւ ասիկա առանց մասնաւոր պատճառի, առանց բացատրութեան:

Տանք քանի մը օրինակներ, որոնք հետաքրքրական են մէկէ աւելի իմաստներով:

339-ին թէ 340-ին տեղի ունեցաւ հայոց եւ պարսից միջեւ պատերազմ մը: Պարսիկներու նպատակն էր «Հայաստան Աշխարհը առնել», կ'ըսէ պատմիչը Փաւստոս Բիւզանդ²⁶: Այն ատեն հայոց սպարապետ գորավարը Վաչէ Մամիկոնեան կը ժողվէ նախարարական զօրքերու ազատներու բանակը եւ պատերազմի կ'ելլէ: Բայց ահագին կորուստներ կ'արձանագրուին. Վաչէ ինքն ալ կը նահա-

տակուի: Ամբողջ Հայաստան Աշխարհը սուգի մէջ կը մտնէ, «որովհետեւ բազմաթիւ անգամներ Տէրը անոր ծեռքով փրկութիւն տուած էր հայերուն»: Օրուան կաթողիկոսը Ս. Վրթանէս Հայրապետ, մխիթարելով թագաւորը, զօրքն ու ժողովուրդը, կ'ըսէ թէ անոնք մեռան «մեր աշխարհին, եկեղեցիներուն եւ Աստուծոյ պարգեւուած հաւատքին համար, որպէսզի չըլլայ որ մեր աշխարհը գերուի ու քանդուի, սուրբ եկեղեցիները պղծուին կամ մարտիրոսները անարգուին, կամ սուրբ սպասները պիղծ եւ անօրէն մարդոց ծեռքը իյնան եւ անհաւատ պաշտամունքի պէս-պէս պղծութեանց մատնուին»²⁷: Եւ կը յայտարարէ. «Անոնք որոնք այդ բոլորին համար իրենց կեանքը չխնայեցին անոնք իրենց պատուով Քրիստոսի վկաներուն հետ կը դասուին: Արդ, չողբանք զանոնք, այլ՝ պատուենք զիրենք իբրեւ ճշմարիտ նահատակներ, եւ յաւիտեանս յաւիտենից օրէնք սահմանենք, որ ամէն ոք անխափան կերպով անոնց առաքինութեան [= քաջութեան] յիշատակը կատարէ՝ իբրեւ Քրիստոսի նահատակ: Իսկ մենք տօն կատարենք եւ ուրախ ըլլանք, որ Աստուած ասոնց միջոցաւ հաշտուի մեզի հետ եւ ասկէ վերջ խաղաղութիւն շնորհէ»²⁸:

Այս պարագան քիչ մը աւելի լայն նշեցինք, որովհետեւ մեր պատմութեան մէջ առաջին անգամն է որ կը յիշուի, թէ ինչպէս հայրապետ մը իբրեւ վկայ եւ նահատակ՝ սուրբ կը հռչակէ հաւատքի եւ հայրենիքի համար ինկած մարտիկներ, եւ անմիջապէս տօն կը հաստատէ: Եւ ոչ միայն այսքան, այլ տակաւին սկզբունք մըն ալ կը յայտարարէ այս առիթով, որ հետեւեալն է. «Վրթանէս մեծ քահանայապետը ամբողջ երկրին մէջ օրէնք սահմանեց՝ տարուէ տարի կատարել անոնց յիշատակը: Նոյնպէս կանոն դրաւ, որ [բոլոր] անոնք, որ անոնց օրինակով [մեր] երկրի փրկութեան համար կը մեռնին անոնց անունները յիշուին Աստուծոյ Սուրբ Սեղանին առջեւ, Պատարագի ժամանակ, սուրբերու անուններու յիշատակութենէն անմիջապէս ետք»²⁹:

Բայց, եւ ահա՝ տարօրինակ իրողութիւնը թանկագին այս յիշատակին կապուած եւ «անխափան» իբրեւ օրէնք սահմանուած այս տօնը մենք չունինք մեր ներկայ Տօնացոյցին մէջ: Ինչո՞ւ: Օրմանեան Սրբազան իր «Ազգապատում» գործին մէջ կ'ենթադրէ, որ Վաչէեանց տօնին յետագային միացած է Վարդանանց յիշատակը, որոնք «աւելի փառաւոր եւ աւելի նշանաւոր տեղ մը գրաւեցին յաջորդ դարուն մէջ, եւ անոնց անունով սկսաւ յորջորջուիլ Վրթանէսի հաստատած տօնը»³⁰: Սակայն այս բացատրութիւնը ամբողջապէս գոհացուցիչ չէ: Քիչ ետք ուրիշ պարագաներ ալ պիտի տեսնենք, որոնց համար նման բացատրութիւն մը արդէն չի պատշաճիր:

Թ. դարու կիսուն՝ 853 Նոյեմբեր 17-ին, շուրջ 150 երիտասարդներ կապանքերով, բանտարկութեամբ եւ զանազան խոշտանգումներով Դուինի մէջ կը նահատակուէին իրենց հաւատքը չուրանալուն համար: Ասոնք Ատոմ Անծեալացի քաջ նահատակին անունով ճանչցուած են որպէս Ատոմեանք («Նոր Ատոմեանք» կոչուած զանազանելու համար առաջին Ատոմեաններէն - Ատոմ Չնունիի անունով - որոնք Աւարայրի ճակատամարտէն քիչ ետք նահատակուեցան երկու խումբով՝ Ոչտունեաց եւ Անծեալացեաց գաւառներուն մէջ, եւ որոնք տօնելի են): Օրուան կաթողիկոսը Յովհաննէս Դ. Ովայեցի անմիջապէս տարեկան տօն սահմանած է նահատակութեան ամսաթիւով, ժամանակի բոլոր միւս նահատակ սուրբերն ալ անոնց յիշատակին կապելով: Դար մը ետք, Յովհաննէս Դրասխանակերտցի պատմաբան կաթողիկոսը կը նշէ, թէ «անոնց նահատակութիւնը տարին անգամ մը պատուով կը տօնէին»³¹: Ներկայիս ո՞ր է հայրապետի մը կողմէ սահմանուած այս տօնը:

Դարձեալ, Ժ. դարու առաջին կիսուն, Յովհաննէս Դրասխանակերտցի Կաթողիկոս նոր սուրբերու տօներ հաստատեց: Այսպէս, իր գրած «Պատմութեան» 51-րդ գլուխին մէջ նահատակութեանց բազմաթիւ պարագաներ կը ներկայացնէ՝ ականատեսներէ քաղելով, եւ ապա կ'աւելցնէ. «Այսպէս, բոլոր այս սուրբերը որոնց մասին ես պատմեցի, արդարօրէն տարեկան տօնախմբութեամբ միշտ կը պատուուին քրիստոնէական (=սրբոց) եկեղեցիներուն մէջ: Անոնց յիշատակի օր սահմանուած է Մարտի ամսուան 27-ը»³²: Թէպէտ ինք յստակօրէն չ'ըսէր, բայց յիշատակի օր սահմանողը ինքն էր, անշուշտ: Կիրակոս Գանձակեցի պատմիչը կը վկայէ, թէ նոյն Հայրապետը «կարգեաց տօն սուրբ թագաւորին Սմբատայ»³³: Չարմանալին այն է, որ հայրապետական այս պաշտօնական կարգադրութիւնները դադրած են կիրառութենէ, եւ յիշուած տօները չունինք:

Դ. երեւոյթ. Դարձեալ անհատական բարեպաշտական հետաքրքրութեան եւ նախաձեռնութեան արդիւնք են շատ յաճախ սուրբերու կեանքին ու նահատակութեան պատմութիւնները, որոնք կը կոչուին Վարք կամ Վկայաբանութիւն: Իսկ այս արձանագրութիւնները կը խորհինք որ կարելոր դեր խաղցած են շատ մը սուրբերու ընդհանուր ճանաչման գործին մէջ:

Հաւանաբար ծանօթ էք ժողովրդականութիւն ունեցող սուրբի մը անունին Վահան Գողթնացի: Գողթնի Խոսրով նախարարին որդին էր ան, որ դեռ չորս տարեկան մանուկ 707-ին գերի տարուած էր Դամասկոս եւ իսլամական կրթութեամբ մեծցած արքունիքին մէջ. անունն ալ փոխուած Վահապի: Տասներկու տարի ետք, 719-ին, երբ

Օմար ամիրապետ Յովհան Օծնեցի Կաթողիկոսի այցելութեան իբր հետեւանք հայ գերիներուն դարձ կը շնորհէ, Վահանի եւս կ'արտօնուի երթալ հայրենի երկիրը տեսնել, պայմանաւ որ ետ դառնար այնուհետեւ: Օմարի մահէն օգտուելով, Վահան կը մնայ Հայաստան: Նոյնիսկ կ'ամուսնանայ եւ ժամանակ մը խաղաղութիւն կը վայելէ, բայց յետոյ կը փնտռուի եւ հինգ տարի թափառական կեանք կը վարէ: Ի վերջոյ կ'որոշէ երթալ արքունի դուռ եւ համարձակօրէն խոստովանիլ իր քրիստոնէական հաւատքը: Կ'երթայ Հիշամ ամիրապետը կը գտնէ Միջագետքի Ռուծափ կամ Սերգիուպոլիս քաղաքին մէջ, եւ ինքզինք կը յայտնէ: Հաւատափոխութեան գուր փորձերէ ետք զինք կը նահատակեն 737 Մարտ 18-ին, Աւագ Երկուշաբթի օր:

Ամենագոյի քրիստոնէաներ տէր կը կանգնին Վահանի նշխարներուն եւ վկայարան մըն ալ կը շինեն: Բայց օտարութեան մէջ նահատակուած սուրբը անմիջական արձագանգ չունենար իր հայրենիքին մէջ: Միայն Բզնունեաց գաւառի Երաշխաւոր վանքի (Արծկէի մօտիկ, Միփան լեռան ստորոտը) առաջնորդ Արտաւազդ Վարդապետը եօթը տարի ետք (744-ին) ուխտի կ'երթայ Ռուծափ, եւ իր հետաքրքրութեամբ գրաւոր վկայութիւններ հաւաքելով Վահանի վկայաբանութիւնը կը գրէ:

Արդ, Օրմանեան Արք. իրաւամբ կը նշէ. «Ժամանակակիցներու մէջ յիշատակութիւն չենք գտներ՝ ազգին կողմէ Գողթնացի նահատակին նուիրուած յարգանքի մասին: Իր անունը տօնելի սուրբերուն մէջ անցած է, բայց չենք կրնար ճշդել թէ ե՞րբ, եւ որո՞ւ ձեռքով Տօնացոյցին անցաւ»³⁴: Մենք կ'ենթադրենք որ Արտաւազդ Վարդապետի գրած վկայաբանութիւնը ինք առիթ եւ պատճառ եղաւ որ շուտով Վահանի յիշատակը անցնի Ճառընտիրներու մէջ եւ դառնայ տօնելի: Հաւանաբար ասոր մէջ իր դերն ունեցաւ նաեւ այն գեղեցիկ շարականը («Ջարմանալի է ինձ») որ, ըստ աւանդութեան, յօրինուած ու երգուած է նահատակին քրոջ՝ Խոսրովիդուխտի կողմէ:

Ե. եւ վերջին երեւոյթը. Ասիկա ձեւով մը շարունակութիւնն է նախորդին: Ճառընտիր ժողովածուներու կողքին, որոնք տօներու բացատրութիւն-ներբողները եւ սուրբերու վկայաբանութիւնները կը ներկայացնէին, Եկեղեցին իր գործածութեան մէջ ունէր նաեւ Տօնացոյցները, որոնք համառօտ կերպով կը նշէին տօները եւ այդ տօներուն կատարուելիք աստուածաշնչական ընթերցուածները՝ առանց բնագիրները լման արտագրելու (ինչ որ յատուկ պիտի ըլլար Ճառընտիր): Այսպիսի գործեր հինէն կային եւ, օրինակ, Ե. դարուն սուրբ-գրային եւ ծիսական այլ գործերու կարգին նաեւ թարգմանուած էր Երուսաղէմի տօնացոյցը³⁵:

Ըստ երեւոյթին, երկար ատեն այս թարգմանութեանց վրայ հայկական յաւելումներ չեղան (ինչպէս նոյնն էր պարագան Ճառընտիրներուն եւ կամ Տօնական - կամ Տօնամակ - կոչուած ժողովածուներուն, որոնք իրենց հայկական յաւելումներն ստացան նախ Ը. դարուն Մաքենեաց վանքի առաջնորդ Հայր Սողոմոնի, ապա Ժ. դարու սկիզբը Գագիկ Թարգմանիչ կոչուած վարդապետին, եւ ապա ԺԱ. դարուն Գրիգոր Բ. Վկայասէր Կաթողիկոսին ջանքերով), մինչեւ որ Թ. դարու վերջը եւ Ժ.ի սկիզբը Վարագայ վանքի առաջնորդ Հայր Ատոմը կազմեց հայկական տօնացոյց մը, ուր ներառուած էին մինչ այդ ծանօթ տօնելի եւ յիշատակելի հայկական սուրբերը³⁶: Այստեղ «տօնելի» եւ «յիշատակելի» գոյգ բացատրութիւնները կը գործածենք, որովհետեւ պատմական վկայութեամբ զիտենք, թէ որոշ տօներ սահմանուած կային արդէն (որոնցմէ Հռիփսիմեանցը յիշեցինք եւ քիչ ետք քանի մը հատը եւս պիտի յիշենք) եւ ուրիշներ - որոնք կամ տեղական ճանաչում գտած եւ կամ վկայաբանութեանց միջոցաւ ծանօթ սուրբեր էին - մտան Տօնացոյց:

Անշուշտ հոս տեղը չէ քննելու թէ ինչ սկզբունքով եւ հեղինակութեամբ կը կազմուէին Տօնացոյցները: Միայն մէկ բան ըսենք, որ Տօնացոյց կազմողներ յաճախ իրենց անձնական նախաձեռնութեամբ յաւելումներ կամ փոփոխութիւններ կատարած են³⁷ եւ անձնական ձեռնարկը ժամանակի ընթացքին ընդունուած, գործածուած ու նուիրագործուած է: Կը բաւէ նշել ամէնէն ծանօթ Տօնացոյցի վերջին խմբագրող Սիմէոն Ա. Երեւանցի Կաթողիկոսին օրինակը, որ ոչ միայն բազմաթիւ տեղափոխութիւններ ու ծիսական նոր կարգադրութիւններ մտցուց, այլ նաեւ սահմանեց նոր տօներ - թէ տէրունի եւ թէ մանաւանդ սրբոց, ինչպէս Աբգար թագաւորի տօնը³⁸, Հրեշտակապետաց եւ Ամենայն Սրբոց տօները, Յովհան Օծնեցիի, Յովհան Ռրոտնեցիի եւ Գրիգոր Տաթեւացիի տօները, եւայլն - այլեւ ջնջեց մէկ-երկու սուրբերու տօներ, որոնք կային հին տօնացոյցներուն մէջ, ինչպէս Աղեքսանդր Աղեքսանդրացիի եւ Գրիգոր Ակրականդացի լատին եպիսկոպոսին անունները, եւայլն³⁹:

Ի վերջոյ, դարձեալ պատահականութեան մէկ օրինակն է այն, որ մեր ժամագիրքերուն մէջ Ս. Պատարագի ընթացքին սրբոց յիշատակութեանց կարգին անցած է Մովսէս Գ. Տաթեւացի Կաթողիկոսին անունը (հաւանաբար նոյնինքն տպագրողին բարեպաշտական հիացումին իբր արտայայտութիւն), որ սակայն ոչ իբրեւ տօնելի եւ ոչ ալ իբրեւ յիշատակելի սուրբ ճանչցուած է մեր Եկեղեցւոյ որեւիցէ իշխանութեան կողմէ:

* * *

Մեր նիւթը դեռ բազմակողմանի է և հետաքրքրական երեսներ ունի, բայց տեղի սահմանը մեզ կը ստիպէ որ ամփոփենք և եզրակացնենք:

Սուրբերու կանոնականացումը տեսակ մը ճանաչում է քրիստոնէական հաւատքի կատարելատիպ անձերու առաքինութիւններուն ու շնորհքի կեանքին:

Այդ ճանաչումը երեք մակարդակ ունի:

Ա. մակարդակը, որ կարելորագոյնն է, ժողովրդական ճանաչումն է անձին սրբակեցութեան և ընծայուած յարգանքը՝ զանազան կերպերով.- ողջութեան ընծայուած յարգանք, նահատակութենէն կամ խոստովանողական մահէն ետք անոր նշխարներուն, գերեզմանին կամ անոր անձնական իրերուն ընծայուած մեծարանք, բարեպաշտական աղօթք ու միջնորդութեան կամ բարեխօսութեան խնդրանք և նահատակութեան տարեդարձի ուրախական հաւաքոյթ:

Բ. մակարդակը՝ եկեղեցական գաւառական իշխանութեան կողմէ տեղական ճանաչումն է, որ կը հիմնուի եկեղեցական բարեպաշտութեան վրայ, և որ կը կատարուի գաւառին եպիսկոպոսին կողմէ քննութեամբ ու վճիռով, երբեմն՝ սուրբին նշխարներուն եկեղեցի փոխադրութեամբ, երբեմն՝ անոր գերեզմանին վրայ յատուկ վկայարանի մը շինութեամբ, և սուրբին նահատակութեան տարեդարձը իբրև եկեղեցական տօն կատարելով:

Գ. մակարդակը՝ եկեղեցական կեդրոնական իշխանութեան կողմէ ընդհանրական ճանաչումն է, որ իր ընթացքով ճիշդ նախորդին հետքերով կը քալէ, և կ'աւարտի՝ սուրբին տօնը վճռելով (այսինքն՝ ընդունելով և կատարելով) և յանձնարարելով ամբողջ Եկեղեցիին:

Ինչ որ կը տեսնենք, այն է, որ առհասարակ Ա. մակարդակը տեսակ մը նախապայման է միւսներուն համար, իսկ Բ. և Գ. մակարդակները կանոնականօրէն անհրաժեշտ եղած են, թէպէտ բացարձակ պայման չեն եղած, յատկապէս առաջին դարերուն:

Իսկ ի՞նչ պայմաններ անհրաժեշտ եղած են, որ մեր Եկեղեցին իբրև սուրբ ճանչնայ ու տօնակատարութեամբ պատուէ ոեւէ մէկը: Կարելի է ամփոփել, ըսելով.

- Անձին սրբակեցութիւնը:

- Քրիստոնէական առաքինութեանց մարմնաւորումը իր անձին վրայ:

- Իր կեանքին մէջ Աստուծոյ Հոգիին ներկայութիւնը և անոր նշանները:

- Հաւատքի համար նահատակութիւնը:

- Հայրենիքին, Աստուծոյ և Եկեղեցիին պաշտպանութեան համար նահատակութիւնը:

- Յետ մահու իր անունով կամ իր մասունքներուն միջոցաւ գործուած հրաշալի նշանները (բժշկութիւնները, Աստուծոյ զօրութեան այլ արտայայտութիւնները...):

Կ'ուզենք մեր այս ամփոփ ուսումնասիրական ակնարկը փակել հետեւեալ նշումով և խորհրդածութեամբ.

Մեր Եկեղեցին իր տօնելի սուրբերու ցանկին մէջ շուրջ 204 օտարազգի սուրբերու դիմաց (աստուածաշնչական սուրբերէն զատ) կը հաշուէ միայն 63 (վաթսուներեք) հայ սուրբեր (խումբերը որպէս մէկ միաւոր հաշուելով), որոնցմէ երեքը Ա. դարէն, չորսը Թ. դարէն, մէկը Ժ. դարէն, հինգը ԺԲ. դարէն, մէկը ԺԴ. դարէն և մէկը ԺԵ. դարէն: Բայց հարցը թիւը չէ, ոչ ալ թուական համեմատութիւնը: Հարցը այն է, որ մեր Եկեղեցին ԺԵ. դարէն կը ճանչնայ իր վերջին սուրբը, այն ալ մէկ հատիկ (Ս. Գրիգոր Տաթեւացի): Նոյն դարերէն մինչև հիմա արդեօք մեր Եկեղեցին բնա՞ւ սուրբ չունեցաւ: Չէ՞ որ մեր պատմութիւնը լեցուն է նահատակութիւններով և մեր պատմագիրներու գործերը յաճախ կը գեղուն մարտիրոսագրութիւններով: Կամ արդեօ՞ք այնքան շատ նահատակ ու վկայ ունեցանք, որ անկարելի եղաւ ընտրութիւն կատարել անոնց մէջէն: Կամ արդեօ՞ք Եկեղեցին ժամանակ չունեցաւ զբաղելու իր վաւերական, հարազատագոյն զաւակներով...:

Սուրբերը Եկեղեցւոյ կենդանութեան նշանն են և կենսունակութեան բազկերակը, ուստի, նոր ժամանակներու նոր սուրբերը անհրաժեշտ են քրիստոնէական ճշմարտութիւնները նոր փորձառութեանց լոյսով շողացնելու և Եկեղեցւոյ զաւակները կեանքի նոր պայմաններուն մէջ նոյն իտէալին կապելու և մղելու համար:

Դուք դատեցէ՛ք. կարգ մը եկեղեցական կամ ազգային տօներէն ու յիշատակներէն շատ աւելի բաբախուն, խօսուն և անմիջական ապրումներու ծնուցիչ չէ՞, օրինակ, Ապրիլեան Նահատակներու տօնը, որովհետեւ անմիջական անցեալը երէկն է մեզի համար և դեռ շատերու մէջ ներկան իսկ է... Եւ արդէն ժամանակը չէ՞, որ հաւատքի, հայրենիքի և ազգի սրբութիւններուն համար իրենց կեանքը տուած մէկուկէս միլիոն մեր նահատակներուն յիշատակութիւնը ներկայ տօնակատարութեան ծելէն քայլ մը աւելի անդին անցնի զանոնք սուրբ ճանչնալու գծով...:

Հարցումը բաց կը մնայ մինչև իր պատասխանը ունենայ:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻԷՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Թէ ի՞նչ օգուտ ունին մեզի սուրբերը առաքեալը կ'ուսուցանէ Երայեցոց (նամակին) մէջ. «Ուրեմն մենք ալ, որ այսքան բազմաթիւ վկաներով շրջապատուած ենք» (12.1), այսինքն Աբելէն սկսեալ մինչեւ նահապետները, մարգարէներն ու առաքեալները եղած մարտիրոսները: Ոմանք հաւատքով վկայեցին, ոմանք գործով, ոմանք պանդխտութեամբ, ոմանք աղքատութեամբ, ոմանք կուսութեամբ եւ ձգնութեամբ, ոմանք արեամբ: Սղոցուեցան, քարկոծուեցան, ծեծով տանջուեցան, այրուեցան, եւ տեսակ-տեսակ չարչարանքներ կրեցին: Եւ հիմա մեր շուրջն են, լուսաւոր ամպի մը պէս անոնց հոգիները հովանի կ'ըլլան մեզի. անոնց մասունքները երկրի վրայ քաջալեր կ'ըլլան մեզի. իսկ անոնց պատմութիւններուն ընթերցումը անոնց նմանիլ կը սորվեցնէ մեզի (Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741 (ՌՃԴ) Փետրուարի ԻԵ., գլուխ ՃԽԳ., «Քարոզ Մարտիրոսաց», էջ 559):

Ինչո՞ւ կը կատարենք տէրունական եւ միւս սրբոց տօները:

Կ'ըսենք՝ վեց պատճառի համար: Նախ, որովհետեւ հրեշտակներու իննը դասերը միշտ եւ անդադար զԱստուած օրհնաբանելով զբաղած են, ինչպէս կ'ըսէ Եզեկիէլ. «Լսեցի որ կ'ըսէին. օրհնեալ ըլլայ Տիրոջ փառքը Երկինքի մէջ» (3.12): Իսկ Եսայի կ'ըսէ. «Տեսայ Տէրը բարձր աթոռի մը վրայ նստած ... եւ սերովբէները ... որոնք Անոր շուրջ թռչելով կ'աղաղակէին. Սուրբ, Սուրբ, Սուրբ, Ջօրութեանց Տէր» (տես 6.1-3): Թռչիլը անոնց ուրախութիւնը կը նշանակէ, իսկ աղաղակելը՝ զԱստուած օրհնաբանելը: Ճիշդ անոնց նմանութեամբ Եկեղեցոյ մէջ իննը աստիճաններ կան, որոնք պէտք է ուրախութեամբ եւ օրհնաբանութեամբ ծայնակցին երկնաւորներուն:

Երկրորդ պատճառ. տօնին յիշատակով՝ զԱստուած մեր մէջ կը յայտնաբերենք, Աստուծոյ կը միանանք եւ մեր բազմաթիւ տրտմութիւններէն կ'ուրախանանք, ըստ [սաղմոսին]. «Չէի կրնար մխիթարուիլ. զԱստուած յիշեցի եւ ուրախացայ» (76.3-4). կամ [ըստ միւս սաղմոսին]. «Ինծի համար բարիք է Աստուծոյ մօտենալ ... եւ Անոր փառաւոր գործերը պատմել Սիոնի դասեր (=Երուսաղէմի) դռներուն առջեւ» (72.28):

Երրորդ պատճառ. որովհետեւ ներկայի տօնին դիտաւորութիւնն է՝ կրթելով պատրաստել հանդերձեալ ուրախութեան. որովհետեւ ով որ այստեղ յիշատակելով կը տօնէ՝ այնտեղ երանութեան կը հասնի:

Չորրորդ պատճառ. ինչպէս մարմինին համար հացն ու ջուրը [հարկաւոր] կերակուր են, իսկ միրգերն ու գինին եւ այլ զանազան

խորտիկները վայելքի կերակուր, այնպէս ալ հոգին հարկաւոր կերակուր են իմաստութիւնն ու առաքինութիւնը, իսկ վայելքի հոգեւոր ուրախութեան տօները, ինչպէս կ'ըսէ Դաւիթ. «Պիտի յագենամ այնպէս, ինչպէս եթէ ճարպոտ ու պարարտ [բաներ կերած ըլլայի]. ցնծալից շրթներով պիտի օրհներգեմ Քեզ» (հմմտ. Սղ 63.5):

Հինգերորդ պատճառ. որովհետեւ տօնին յիշատակը կատարելով՝ առանց չարչարանքներ ու յոգնութիւն կրելու կը հաղորդուինք տօնի գլուխին, որ է մեր Տէրը Յիսուս Քրիստոս. որովհետեւ երբ յօժարութեամբ կը տօնակատարենք, անոնց պսակին կ'արժանանանք, ինչպէս կը գրէ Սուրբ Բարսեղ:

Վեցերորդ պատճառ. որովհետեւ սուրբերու իւրաքանչիւր տօնի սուրբեր համարձակութիւնը կ'ունենան բարեխօսելու Քրիստոսի տօնողներուն աշխարհի մեղքերու թողութեան եւ ուրիշ պարգեւներու համար (անդ, գլուխ 173, էջ 654):

Աշխարհաբարի վերածեց
Ջարեհ Եպս. Ազնաւորեան

¹ Տես «Le Martyre de Polycarpe», Les écrits des Pères Apostoliques գիրքին մէջ (Les Editions du Cerf, 1963), հատոր II, 2, էջ 222:

² Անդ, II, 3, էջ 223:

³ Անդ, XIII, 2, էջ 230:

⁴ Անդ, XVII, 1, էջ 233:

⁵ Անդ, XVII, 2, էջ 233:

⁶ Անդ, XVII, 2-3, էջ 233:

⁷ Անդ, XVIII, 2-3, էջ 234:

⁸ Անդ, XIX, 1-2, էջ 234-235:

⁹ Անդ, XX, 1, էջ 235:

¹⁰ Տես Կանոնագիրք Հայոց, աշխատասիրութեամբ Վազգէն Յակոբեանի, Հայկական Ս. Ս. Ռ. Գ. Ա. հրատարակչութիւն, Ա. հատոր, Երեւան, 1964, էջ 44-45:

¹¹ Անդ, էջ 239:

¹² Անդ, էջ 247:

¹³ Մաղաքիա Արք. Օրմանեան, Ազգապատում, Բ. տպագրութիւն, Ա. հատոր, տպ. «Սեւան», Պէյրութ, 1959, հատուած 550, սիւնակ 807:

¹⁴ Անդ:

- ¹⁵ Տպուած Վաղարշապատ, 1872-ին, էջ 157. նաեւ էջեր 48-49 եւ 84-85:
- ¹⁶ Արշակ Տէր Միքէլեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը. Ձեռնարկ Դաւանաբանութեան, Տպ. Ս. Շարածէի եւ Ընկ., Տփլիս, 1900, էջ 330:
- ¹⁷ Ազգաբանագէտու, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տէր Մկրտչեանի եւ Ս. Կանայեանցի, աշխարհաբարի վերածումը եւ ծանօթագրութիւնները Արամ Տէր Ղեւոնդեանի, Երեւանի Համալսարանի հրատարակչութիւն, Երեւան, 1983, էջ 124:
- ¹⁸ Անդ, էջ 126:
- ¹⁹ Անդ:
- ²⁰ Անդ, էջ 132:
- ²¹ Անդ, էջ 418:
- ²² Անդ, էջ 416:
- ²³ Տպ. Ն. Աղանեանց, Թիֆլիս, 1910, էջ 69:
- ²⁴ Անդ:
- ²⁵ Անդ, էջ 71-72:
- ²⁶ Փաւստոս Բիւզանդ, Պատմութիւն Հայոց, Դ. Տպագրութիւն, տպ. Ս. Ղազար, Վենետիկ, 1933, Գ. դպրոթ., գլխ. ժԱ., էջ 37:
- ²⁷ Անդ:
- ²⁸ Անդ, էջ 38:
- ²⁹ Անդ:
- ³⁰ Օրմանեան, Ազգապատում, Ա. հատոր, հատուած 94, սիւնակ 133:
- ³¹ Յովհաննէս Կաթողիկոս, Պատմութիւն, տպ. Ս. Յակովբեանց, Երուսաղէմ, 1867, գլխ. ԻԵ., էջ 158:
- ³² Անդ, էջ 318:
- ³³ Տէս Օրմանեան, Ազգապատում, Ա. հատոր, հատուած 713, սիւնակ 1038:
- ³⁴ Անդ, Ա. հատոր, հատուած 589, սիւնակ 862:
- ³⁵ Տէս Athanase Renoux, «Le Codex Armenien Jerusalem 121», Patrologia Orientalis, Tome XXXVI.- fascicule 2, No. 168 (Turnhout, Belgique, 1971), թթ. 166, 170-172:
- ³⁶ Ասոր լաւագոյն ապացոյցը կը նկատենք նախ այն, որ Վանական Վարդապետ իր «Հարցմունք Ջանազանք եւ Պատասխանիք Բարառնաբար» գործին մէջ Սողոմոն Մաքենացիի ձեռնարկները կը բնորոշէ իբրեւ «հայոց գրեանքն» (տես Յակոբ Ս. Անասեան, Հայկական Մատենագիտութիւն, Ե.-ԺԸ. Դդ., Հայկական Ս. Ս. Ռ. Գ. Ա. հրատարակչութիւն, Ա. հատոր, Երեւան, 1959, էջ LX), ինչ որ իմաստէ զուրկ պիտի ըլլար եթէ խօսքը պարզապէս

թարգմանածոյ տօնացոյցի մը մասին ըլլար:

Երկրորդ, մեր բանասիրութեան մէջ Ատոմի գործին տրուած **Հռոմնադիր** անունը կը կարծենք որ սխալի արդիւնք է: Եթէ այդ անուանումը քաղուած է Մխիթար Այրիվանեցիի «Պատմութենէն» (**Պատմութիւն Հայոց**, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա, 1860), այնտեղ բառացիօրէն կ'ըսուի. «Սուրբ հայրն Ատոմ Վարագեցի **գհռոմնադիրն կարգաւորէր**» (էջ 57): Իսկ ասկէ չի հետեւիր, ինչպէս Մայիս Աղալբեգեան կ'ընէ (**«Յայսմաւորք» ժողովածուները եւ նրանց պատմագրական արժէքը**, Հայկական Ս. Ս. Հ. Գ. Ա. հրատարակչութիւն, Երեւան, 1982), թէ «Ատոմի Տօնացոյցը **Հռոմնադիր է**, այսինքն յարմարեցուած հռոմէական տոմարական կարգին, թերեւս սկսուելով ոչ թէ Նաւասարդից, այլ արդէն Սեպտեմբեր կամ Յունուար ամիսներից» (էջ 28):

Այրիվանեցիի ըսածէն չի հետեւիր, թէ Ատոմ հայկական տօնացոյցը յունականին համաձայն կարգաւորեց, այլ ընդհակառակը, թէ Ատոմ **յունական տօնացոյցը (գհռոմնադիրն) կարգաւորեց**: Իսկ եթէ Ատոմ մինչ այդ արդէն գոյութիւն ունեցող Հռոմնադիր այսինքն յունական տօնացոյցը կարգաւորեց, այդ կարգաւորելը ուրիշ ձեւով չենք կրնար հասկնալ, եթէ ոչ ենթադրելով միայն, թէ Ատոմ յունական տօնացոյցին նոր բնոյթ եւ բովանդակութիւն տուաւ՝ անոր մէջ յաւելումներ ընելով. յաւելումներ որոնք այդ գործը «հայոց գրեանք»-ի կարգը պիտի դասէին, եւ որոնք, հետեւաբար, ուրիշ բան չէին կրնար ըլլալ եթէ ոչ յաւելումը **հայկական տօներուն**, որոնք գլխաւորաբար **սրբոց** տօներն էին:

Այս իմաստով, դարձեալ համաձայն չենք Մ. Աղալբեգեանի սա եզրակացութեան, թէ «Գրիգոր Վկայասէրը իր մականունն ստացել է ոչ թէ ընդհանրապէս վկայաբանութիւններ թարգմանած լինելու, այլ նահատակների յիշատակի առթիւ հայկական տօնացոյցում տօներ սահմանելու ... համար», որով «Գրիգոր Վկայասէրը եղած աւանդների վրայ սեփական տօնացոյց ժողովածուի յորինիչն ու հեղինակն էր» (անդ, էջ 41): Գրիգոր Բ. Վկայասէր Կաթողիկոսը (1066-1105) ուրիշներուն (այս պարագային Ատոմ Վարագեցիի) փառքին պէտք չունի պայծառանալու համար: Իր գործի յիշատակարանին մէջ Գրիգոր Վկայասէր յստակ կ'ընէ թէ ինք պատրաստած է Տօնականի նոր ժողովածու մը, ճոխացնելով ընթերցումներով, յատկապէս սրբոց տօները: Իր աշակերտ Կիրակոսը քիչ մը աւելի յստակութիւն կը բերէ հարցին, երբ կ'ըսէ. «Որպէս գիտէք ի սկզբանէ հաւատոց

մերոց, մեր ուղղադաւան ազգիս արամեան, որդիացեալք աշակերտութեամբ սրբոյն Գրիգորի աստուածանման լուսաւորչին մերոյ, համաւրէն ամենայն սրբովք, որ եղեն յազգս մեր հաճոյ Աստուծոյ, զայս գրոյ եկեղեցւոյ անփոյթ արարին վասն ժամանակին, եւ մեծ եւ աստուածային տաւնքն խաչի կամ Աստուածածնի, վկայիցն եւ սուրբ հայրապետացն, հարցն ու ճգնաւորացն եւ կուսանացն վկայիցն, անփառաւոր եւ անկատար եւ անյարմար լինէր առանց այս գրոց: Ապա Հոգին Սուրբ ազդեաց Սուրբ Հայրապետին Գրիգորիսի աստուածասիրի եւ վկայասիրի, եւ նոր սկսեալ յարինեաց զսա ըստ ամենայն տաւնից արժանապէս ի դէպ սաղմոսիւք եւ ընթերցուածովք աստուածախաւսիւք» (անդ, էջ 140-141): Այստեղ յստակօրէն կ'ըսուի, թէ տէրունի եւ սրբոց տօները արդէն կային, բայց որովհետեւ մեր ազգի հայրերը, Լուսաւորիչէն սկսեալ, անփոյթ եղան անոնց յատուկ ընթերցումներ կարգելու («այս գրոյ» ըսելով կ'ակնարկէ վերելը «զկանոն ընթերցուածիս ի տաւնս յիշատակի սրբոցն») բացատրութեամբ բնութագրուած գիրքին նոր ժողովածուին), եւ այդ պատճառով ալ տօները (որոնք արդէն կային) անշուք կը կատարուէին, Գրիգոր Վկայասէր հարկ եղած ընթերցումները կարգեց, որպէսզի «մի աղքատ եղիցի կարգք եկեղեցւոյ» (անդ, էջ 141): Ուստի, նոյն Կիրակոսին խօսքը, թէ «քառասուն եւ վեց տաւն Սուրբ Հայրապետն կարգեաց, եւ երեսուն եւ տրուպս յաւելի, որ լինի եւթանասուն եւ վեց» (նոյնը), պէտք չէ հասկնալ իբրեւ նոր տօներու յաւելում, այլ՝ իբրեւ 76 տօներու համար յօրինուած նոր ընթերցումներու կարգաւորում:

³⁷ Տե՛ս օրինակ մը Ազգապատում, Բ. հատոր (1960), հատուած 1514, սիւնակներ 2194-2195:

³⁸ Տե՛ս Ազգապատում, Ա. հատոր, հատուած 15, սիւնակներ 35-36:

³⁹ Ազգապատում, Բ. հատոր, հատուած 2101, սիւնակ 3065, հատուած 2102, սիւնակ 3068, հատուած 2124, սիւնակ 3101, հատուած 2126, սիւնակ 3106

ՄԵԾ ԵՂԵՆ ԵՒ ՆԱԿԱՏԱԿՆԵՐՈՒ

ՍՈՐԵՆԱՍՈՒՄ

**ՉԱՅՆ ԱՌՔՆՈՒԹԵԱՆ ԵՒ
ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՎԵՏԱԳՆՈՒՄԱՆ
(Ազգի ման եղևնի 65-ամեակին առթիւ)**

**ՉԱՅԹԱՐԻ ԿՈՉ ՎԱԻՍԱՐԻՍ
ՅԵՏՆՈՐՈՒԹԵԱՆ**

ՏԵՍՆԵՐ Ո՛Չ ԵՂԵՆՆԻ, ԱՅՆ՝ ԿԵԱՆՈՒ

ԾԱՐԱԿԱՆ ԱՊՐԻԵԱՆ ՆԱԿԱՏԱԿԱՑ

ՁԱՅՆ ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ԵՒ
ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՀԵՏԱՊՆԴԱՆ
(Ապրիլեան Եղեռնի 65-ամեակին առիթով)

Ահա դարձեալ կը բացուի վիրակապը մեր բաց վերքին, եւ կրկին կը տեսնենք մեր միսերը կոտտացնող եւ մեր միտքերը կսկծացնող վերքին ահաւոր խորութիւնը, վերք մը, որուն ցաւը արդէն որպէս անզսպելի աղաղակ, դուրս կու գայ մեր կոկորդներէն՝ խարանելու համար բարի սամարացիի կեղծ դիմակը հագած փարիսեցի աշխարհ մը:

Արդէն վաթսունհինգ տարիներ անցան այն թուականէն երբ թուրք եղեռնագործ միտքը իր ճիւղալային օրօրը ուզեց երգել մեր ժողովուրդի դիակին վրայ: Վաթսունհինգ տարիներ անցան այն մահադէմ թուականէն, երբ քաղաքակրթութեան բարձրակէտը համարուող ներկայ քսաներորդ դարը մեր ժողովուրդին վրայ բացուեցաւ աշխարհին արիւնկրթութեան դաս տուող ցեղասպանութեան սքանչելի օրինակով մը...

Մեր ժողովուրդը ջա՞րդ չէր տեսած, աւա՞ր չէր տեսած, աքսո՞ր չէր տեսած, հոգին ցնցող խժոժութիւննե՞ր չէր տեսած: Բայց 1915 Ապրիլ 24-ով բացուող էջը նոր էր: Նոր էր անով, որ 1915 թուին մեր ժողովուրդն իր հերթական հարուածներէն մէկը չէր որ ստացաւ. աշխարհակործան արշաւանքներու նոր շղթայագերծում մը չէր կատարուածը: Դիւական սառնասրտութեամբ մտածուած եւ երկարօրէն ու յետին մանրամասնութեամբ ծրագրուած ցեղասպանութիւն մըն էր, ամբողջ ազգ մը ոչնչացնելու ոճրային քաղաքականութիւն մը, հայասպան եւ հայաջինջ քաղաքականութիւն մը:

- Կարելի՞ է յիշել այս բոլորը եւ պահ մը կանգ չառնել:
- Կարելի՞ է ընդունիլ այս բոլորը եւ մոռնալ:
- Կարելի՞ է զգալ այս բոլորը եւ ինքզինքէն դուրս չգալ:
- Կարելի՞ է միայն «տօնել» այս բոլորը եւ ինքզինք չծօնել նահա-

տակներու արդար դատին:

Ոչ անշուշտ:

Բայց ինչպէ՞ս կ'ըլլայ չմոռնալը, ինքզինքէն դուրս գալը եւ ինքզինք ծօնելը: Զգացական պոռթկումներով պարզապէս, ճառերով ու բանախօսութիւններով միայն: Յաճախ արդէն պատասխանուած է այս հարցումներուն ժխտականօրէն:

Ապրիլ 24-ի ամէն մէկ տարեդարձ ու տօնակատարութիւն յստակ նպատակի մը ճամբուն վրայ գիտակցութեան մեր պտուտակը հեղ մը եւս պէտք է դարձնէ՝ լարուած մեր կամքերը աւելի պիրկ եւ անընկճելի դարձնելով: Իւրաքանչիւր տարեդարձ ու տօնակատարութիւն պէտք է դառնայ նոր առիթ մը:

ԱՌԻԹ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ: Անձին դաստիարակութիւնն է անիկա, որ պէտք է իրագործուի ոչ թէ զգացական, այլ՝ առարկայական տուեալներով: Առիթ պէտք է ըլլայ, որ կարդանք, լսենք եւ գիտնանք մեր պատմութիւնն իր իսկական պատկերով: Առիթ պէտք է ըլլայ, որ մենք մեր լսածն ու կարդացածը անցընենք մեր գիտակցութեան պրիսմակէն, դիտենք ու դատենք, եւ այդ քննութեամբ ու դատաստանով մենք մեզ ճանչնանք մեր աչքերով, հարազատօրէն:

ԱՌԻԹ ԱՐԹՆՈՒԹԵԱՆ: Պատմութիւնը ճանչնալը ինքնին արդէն կու տայ կարելոր դաս մը. Եղեռնը այսօր պատմութիւն է, մինչ օր մը կեանք էր, ներկայ: Անցեալին գործուած սխալը պէտք չէ պատմականանայ այսօրուան մէջ եւս: Անցեալին այնքան անփոյթ եւ անխոհեմ գտնուեցանք, որ չզգացինք մեզի դէմ նիւթուող դաւը, կամ պէտք եղած լրջութեամբ չդիտեցինք նախապատրաստող երեւոյթները: Այսօր նոյն սխալին մէջ ենք, որքան ատեն որ չենք լսեր Ապրիլեան հրաւերը:

ԱՌԻԹ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ ԵՒ ՍՐԲԱԳՐՈՒԹԵԱՆ: Ներկայ մեր կացութեան ճանաչումը անպայմանօրէն մեզ կը բերէ ազգային գետնի վրայ մեր տկարութիւններուն եւ մեր զօրութեան գիտակցումին, եւ այդ գիտակցումը ինք առիթ եւ սկիզբ կրնայ ըլլալ, որ մենք իմաստութիւնն ունենանք վերացնելու մեր մէջէն բոլոր այն տուեալները, որոնք մեր տկարութեան պատճառ կը դառնան, եւ ոյժ տալու այն գետններուն, որոնց մէջ մենք մեր ներքին զօրացումը կրնանք գտնել, զօրացում մը, որուն առաջին եւ նախապայման հանգրուանը համերաշխութեան, միութեան եւ գործակցութեան իրագործումն է անպայմանօրէն եւ որուն բնական բերումով պէտք է հետեւին ուրիշ

հանգրուաններ հասնելու համար ներքին ամբողջական զօրութեան:

ԱՌԻԹ ԿՃՈՒՀԱՏՄԱՆ: Գիտակցումը անհետեւանք չի կրնար մնալ, եւ ներքին ճակատի վրայ զօրացումը աննպատակ չի կրնար ըլլալ: Այդ գիտակցութիւնն ու զօրութիւնը անպայման իրենց արտայայտութիւնը պէտք է գտնեն արտաքին ճակատի վրայ: Եւ այդ արտայայտութիւնը չի կրնար տարբեր ուղղութիւն ունենալ, քան հետապնդումը մեր արդար դատին, համատեղ եւ անդուլ հետապնդումը մեր կապտուած իրաւունքներուն, որոնք հատուցում կը սպասեն:

Նահատակներու ոգեկոչումը այդ վճիռը տալու եւ սրբազան ուխտը կատարելու պահն է:

Մէկ ու կէս միլիոն եւ աւելի նահատակներ մեզի կը նային ակնդէտ: Մէկ ու կէս միլիոն եւ աւելի նահատակներ ամէն տարի եւ ամէն օր ծայն կը բարձրացնեն ու կոչ կ'ուղղեն մեզի, մեր խիղճերուն, մեր գիտակցութեան, մեր կամքին: Կոչ կ'ուղղեն, որ մեր ծայնը միացնենք իրենց ծայներուն, որ մեր ծայները բարձրացնենք մեր կարգին եւ արդարութեան պահանջի մեր ծայնը, մարդկային եւ ազգային իրաւունքներու վերականգնումին ծայնը եւ ամբողջական հայրենիքի մը տէր դառնալու մեր իրաւունքին ծայնը հնչեցնենք ամէնուրեք ահեղ ու բարձրագոյ, որպէս անլռելի զանգակատուն:

ՊԱՅՔԱՐԻ ԿՈՉ՝ ՀԱՄԱՏԱՐԻՍ ՅԵՏՆՈՐԴՈՒԹԵԱՆ

«Ասիկա ազգերու մէջ հրատարակեցէ՛ք, պատերազմ հռչակեցէ՛ք, զօրաւորները արթնցուցէ՛ք, պատերազմի ատակ բոլոր մարդիկը թող ելլեն ու մօտ գան: Չեր խոփերէ՛ն սուրեր կռեցէ՛ք, եւ ձեր յօտոցներէ՛ն նիզակներ. տկար եղողը “ես զօրաւոր եմ” թող ըսէ՛:» (Յվ 3.9-10)

1) ՊԱՅՔԱՐԻ ՀՈՉԱԿՄԱՆ ՕՐ Է ԱՅՍՕՐ

Յովելի մարգարէութեան մէջ ռազմի այս կոչն է որ կը կարդանք՝ իր ժողովուրդին ուղղուած, իր ժողովուրդի այն օրերու պայմաններուն մէջ եւ այդ պայմաններուն համաձայն: Եւ այսօր, մարգարէական այդ կոչը մեր շրթներուն վրայ եւ մեր ականջներուն կը հնչէ մեզ բոլորս հրաւիրելու, որ անով այսօր մտածենք մեր նահատակներուն մասին:

Ռազմի կոչ մը, որովհետեւ պայքարի հռչակման օր է այսօր: Պայքարի մը, որուն բոլորս զինուորագրուած ենք եւ կը զինուորագրուինք դարձեալ: Պայքարի մը՝ ոչ իր սովորական հասկացողութեամբը: Պայքար ու պատերազմ՝ ազգերուն մէջ եւ ազգերուն դէմ՝ ճշմարտութեան խարանով, իրաւունքի լեզուով, արդարութեան սուրով:

Այո՛, պայքար մղելու կոչ է, որ կ'ուղղուի այսօր մեզի բոլորիս: Թերեւս շատերուս համար այդ կոչն ինքնին գայթակղեցուցիչ է, անոր համար, որ Աստուածաշունչ Մատեանէն եկող բառերուն եւ տողերուն կամ պատգամին մէջ մենք չենք ուզեր խաղաղութեան բառերէն տարբեր բառեր կարդալ: Եւ, սակայն, նոյն խաղաղութեանը աշխարհի վրայ պահպանելու համար Աստուած կոչ կ'ուղղէ մեզի բոլորիս,

որ զինուորագրուինք Իրեն եւ զինուորագրուինք այդ խաղաղութեան, արդարութեան՝ զայն պահպանելու յանձնառութեամբը, անոր պահպանութեան մեր ամբողջական նուիրումովը, այն հասկացողութեամբ, որ Աստուածաշունչը կու տայ մեզի. այն հասկացողութեամբ, որով Քրիստոս Իր չարչարանքներուն նախօրեակին երբ Իր հետեւորդները, Իր առաքեալներն ու աշակերտները դէպի աշխարհ նոր առաքելութեան եւ պարտականութեան դրկելէ առաջ կ'ըսէր անոնց. «Հիմա,- կ'ըսէր,- ով որ կրնայ սուր թող առնէ իր ձեռքը» (հմմտ. Ղկ 22.36):

Նոյն մարգարէական կոչն էր, աստուածային կոչը զինուելու: Բայց զինուելու՝ ներքնապէ՛ս, հոգեպէ՛ս եւ հոգեւորապէ՛ս: Եւ այսօր օրն է, որ բոլորս լսենք այդ հրաւերը: Հրաւերը սթափելու, արթննալու, զգաստանալու, թօթափելու մեր վրայ ծանրացող բոլոր տեսակի աւելորդ մտահոգութիւնները, եւ ներքնապէս զօրանալու եւ պատրաստուելու այն անդուլ եւ անխոնջ պայքարին, հոգեկան բախումին, միտքի եւ հոգիի բախումին, որ անհրաժեշտ է վերցնելու արդարութեան եւ խաղաղութեան դատին համար նետուած ձեռնոցը՝ անոր ետին զինուորագրուած կանգնելու, եւ անոր համար պայքարելու եւ մարտնչելու համար:

2) ՄԵԾԱՐԱՆՔԻ ՕՐ Է ԱՅՍՕՐ

Եկած ենք բոլորս մեր նահատակներուն յիշատակը մեծարելու: Բայց առաջին հերթին պէտք է գիտնանք, սիրելիներ, «նահատակ» բառին իմաստը, որովհետեւ անիկա իր ճշգրիտ իմաստին մէջ այն չէ ինչ որ յաճախ եւ մեզմէ շատեր կը կարծեն:

ա) Նահատակ կը նշանակէ արի, քաջ, առաքինի, կտրիճ:

բ) Նահատակ կը կոչուէին բանակի մը մէջ այն մարդիկը, որոնք պատերազմի ճակատին առաջին շարքին վրայ կը կանգնէին, եւ, հետեւաբար, առաջիններն էին, որ նախայարձակ կը դառնային, առաջինները, որ ճակատը պաշտպանելու առաջին եւ սրբազնագոյն, կարեւորագոյն պարտականութիւնն ունէին:

գ) Նահատակ անունը, տիտղոսը կամ կոչումը կը տրուէր անոնց. որոնք ճակատամարտի մէջ թէ մրցանքներու ընթացքին ախոյեան կը հանդիսանային, յաղթող կը հանդիսանային:

Նահատակ, հետեւաբար, քաջութեան անուն է, մարտնչումի հոմանիչ է. առաքինութեան կոչում է, կտրիճութեան տիտղոս է, ճակատի վրայ գտնուելու յանձնառութեան տրուած անուն է, եւ, նաեւ անոր. յաղթանակի պսակն է տրուած անոնց, եւ մենք այդպիսիներու յիշատակը մեծարելու եկած ենք: Մեզի համար պարտութեան

օր չէ այսօրը, եւ պարտուածներու յիշատակը չի տօներ ոչ մէկ մարդ եւ ոչ մէկ ժողովուրդ:

Եկած ենք յաղթողներու յիշատակին շուրջ խմբուելու, եւ անոնց յաղթանակին հաղորդուելու եւ մասնակից դառնալու՝ այդպէս մեծաբելու համար մեր նահատակները:

Եւ ինչպէ՞ս կ'ըլլայ զանոնք մեծարելը:

1) Ճանչնալով, առաջին հերթին, արիութիւնը եւ քաջութիւնը, կտրիճութիւնը եւ առաքինութիւնը անոնց, որոնք գիտցան իրենք զիրենք տալ յանուն կարելոր նուիրականութեանց:

Պայքար մըն էր իրենց մղածը, եւ իրենք ճակատէն չփախան եւ չխուսափեցան: Ճակատամարտ մըն էր, որուն մէջ իրենց ձեռքը չկար սուր եւ զէնք, որովհետեւ անիրաւ եւ անարդար ճակատամարտ մըն էր. թշնամին դաւադրօրէն սկիզբէն խլած էր զէնքերը անոնց ձեռքէն: Անիրաւ ճակատամարտ եւ անհաւասար կռիւ մը, որուն մէջ, սակայն, մեր նահատակ հայրերը պարտուող չհանդիսացան: Տկարութեան կամ խեղճութեան նշան չէր ասիկա: Ընդհակառակը: Ո՞վ կրնար այդ պայմաններուն մէջ հաւասարէ հաւասար կռուիլ. աշխարհի լաւագոյն կերպով մարզուած անհատը, սուսերամարտիկը, կռուողը կամ բանակը զրկեցէ ք իր զէնքերէն եւ դիմացինին ձեռքը տուէ ք բոլոր տեսակի զէնքերը. ի՞նչ կրնայ ընել անիկա: Բայց մեր հայրերը սուրին ու զէնքին դէմ իրենց մերկ մարմիններով կռուեցան, եւ այդ մարմիններով յաղթեցին: Տուին իրենց մարմինները, թափեցին իրենց արիւնը, բայց յաղթանակի պսակը ջանձնեցին թշնամիին, այլ ընդհակառակը՝ զայն պահեցին իրենց գլուխէն վեր, իրենց սիրտին մէջ, իրենց հոգիի ամրոցին մէջ՝ անկորգելի եւ անկորնչելի:

2) Ճանչնալով մեր նահատակներուն նուիրումը: Նուիրումը հանդէպ այն մեծ հաւատքին եւ համոզումներուն, իրենց հոգիին մէջ պատկերուող, իրենց միտքին մէջ տիրականօրէն ներկայ այն մեծ տեսիլքին, եւ անոնց թողած այն մեծ աւանդին, որոնք չկորսուեցան իրենց մարմիններուն կորուստով: Հաւատացողներն էին մեր ժողովուրդի ինքնութեան, եւ այդ ինքնութեան պահպանութեան համար այն սրբազան ազատութեան, որ կը պահուի եւ կը պահպանուի թէ՛ բանտին մէջ, թէ՛ շղթաներուն, թէ՛ բռնազաղթին մէջ եւ թէ՛ մահուան: Եւ այդ սրբազան ազատութիւնը չզիջեցան երբեք՝ այդ ազատութիւնը մեզի կտակելու համար: Իրենց հայրենիքին ազատութիւնն իրենց կամքով եւ իրենց ձեռքով չզիջելու համար՝ տուին իրենք զիրենք, նուիրեցին ինչ որ ունէին, իրենց կեանքը ամբողջ՝ զայն դարձնելու համար սրբազան հաղորդութիւն մը իրենց յետնորդ բոլոր սերունդներուն, որոնց տուին այդ աւանդը իբրեւ մեծագոյն ժառանգութիւն եւ

կտակ:

3) Անմոռաց պահելով եւ դատապարտելով դատապարտելին: Նահատակներու մեծարումը ինքնին դատապարտութիւնն է այն մեծ, եղեռնական ոճիրին, որու գործադրողն եղաւ թուրք ժողովուրդը ամբողջ եւ թուրք պետութիւնը մասնաւորաբար:

Այսօրուան մեր այս հաւաքոյթը, ինչպէս ամէն տարուան մեր հաւատարիմ ներկայութիւնը, դատապարտութիւնն է անընդունելի այն ոճիրներուն, որոնք ուղղուած են առհասարակ մարդ անհատին դէմ, մարդկութեան դէմ, ուղղուած են ժողովուրդի մը կամ ժողովուրդներու դէմ, ուղղուած են այդ ժողովուրդներու մշակոյթին դէմ՝ անխիղճ ոչնչացումովը անոնց մարդկային արժէքներուն կամ տմարդի ոտնահարումովը անոնց, եւ կեանքի մէջ բոլոր նուիրականութեանց եւ սրբութեանց դէմ ուրացումովը անոնց:

Եւ այդ դատապարտութեան ծայնը այսօր մեր նահատակներուն ծայնով մենք անգամ մը եւս զօրեղապէս կը հնչեցնենք:

4) Ի վերջոյ, նահատակներուն մեծարումը մեզի համար ճանաչումն է մեր պարտքին եւ պարտականութեան, որովհետեւ մենք մեզ կը դաւանինք յետնորդները եւ ժառանգորդները նոյն այդ արի, քաջ, կտրիճ եւ ախոյեան նահատակներուն, եւ ինչպէս բանաստեղծը այնքան գեղեցիկ սահմաներ է զայն, մենք այդ պարտքը կը զգանք նոյնինքն մեր արեան մէջ. «Մենք արեան կանչեր ունենք մեր սրտում, անկատար տենչեր ունենք դեռ շատ»:

Բայց այդ արեան կանչերը լսելու համար՝ մեր ներքին ականջները պէտք է ըլլան բաց եւ պատրաստ, որպէսզի այդ տենչերը, անկատար տենչերը մենք կարող ըլլանք ի կատար ածելու, զանոնք ամբողջացնելու, իրենց լրումին հասցնելու, իրագործելու:

Մենք պէտք է ունենանք ներքին բարոյական այն կորովը եւ քաջութիւնը, նահատակութեան այն ոգին եւ պատրաստակամութիւնը, որ մեր մէկ ու կէս միլիոն նահատակներն իրենք ունեցան եւ մեզի փոխանցեցին:

Ժողովուրդները չեն մեռնիր հալածուելով եւ տանջուելով: Ժողովուրդները կը մեռնին միայն այն ատեն, երբ կ'ենթարկուին թշնամիին կողմէ՝ նիւթուած ու պարտադրուած դաւին՝ անոր գիտակից եւ կամաւոր զոհը դարձնելով իրենք զիրենք:

Ժողովուրդները չեն մեռնիր ջարդուելով, կոտորուելով: Ժողովուրդները կը մեռնին այն ատեն միայն, երբ կը թուլան, իրենց սիրտին լարը, սիրտին քաջութիւնը կը կոտորուի եւ պատրաստ կ'ըլլան ամէն զիջումի:

Ժողովուրդները չեն մեռնիր բռնազաղթի ենթարկուելով. այլ կը

մեռնին միայն այն ատեն, երբ կը մոռնան այն կոչումը, որ իրենք ունին, այն սրբազան աւանդը, որ տրուած է իրենց. երբ կը մոռնան իրենց իրաւունքները, կը մոռնան այն ժառանգութիւնը, որուն տէրերը պիտի ըլլային իրենք:

Ժողովուրդները չեն մեռնիր նոյնիսկ երբ երկար ժամանակ հայրենագուրկ կը մնան, առանց հայրենիքի կ'ապրին. որքան ալ դժուար, բայց ժողովուրդներ կը դիմանան անոր, եւ կը մեռնին միայն այն ատեն, երբ իրենց սիրտերուն մէջէն փախչի այն հայրենիքը, որ աւելի անուր հող է իրենց ոտքին տակ, քան նիւթեղէն հայրենիքը պարզապէս. այլ խօսքով՝ երբ պատրաստ կ'ըլլան մոռնալու թէ իրենց հաւատքը, թէ իրենց լեզուն, թէ իրենց ինքնութիւնը, թէ իրենց հոգեւոր բոլոր այն գանձերը, որոնք կը կոչենք ժողովուրդի մը մշակոյթը եւ մշակութային հարստութիւնը:

Եւ անոր համար՝ այսօր մարգարէին ձայնը եւ կոչը մեզի համար պէտք է հնչէ բարձր: Ազգակոչ մըն է անիկա, ռազմակոչ մը, որ մեզ բոլորս կը հրաւիրէ ոտքի կանգնելու եւ մեր մէջէն վանելու ամէն տեսակի թուլութիւն. ոտքի կանգնելու եւ զինուելու ներքնապէս, հոգեպէս, բարոյապէս. զինելու մեր միտքը եւ պատրաստուելու այն անզիջում պայքարին, որ մեզմէ կը պահանջուի, որովհետեւ մենք իրաւունք չունինք ժամանակին հետ թուլնալու, ժամանակը պէտք չէ՛ երբեք մեր ներքին աշխարհին պինդ լարը թուլցնէ, այլ, ընդհակառակը, պէտք է պատճառ դառնայ, որ մենք աւելի եւ աւելի լարենք զայն եւ պատրաստ ըլլանք ամէն վայրկեան օգտուելու այն պատեհութենէն, որ պատմութիւնը եւ աշխարհը կրնան ընծայել մեզի:

Յաճախ, այսօրուան աշխարհի «իմաստութիւնը» կը փորձենք կապել, ընդօրինակել, եւ որդեգրել քաղաքականութիւն մը զիջումի. քաղաքականութիւն մը, որուն մէջ մեր նահատակներուն այդ սրբազան կտակը յաճախ կը դառնայ սակարկութեան առարկայ, կամ պարզ քաղաքական շահերու համար գործածուած խաղաքարտ մը:

Բայց մենք իրաւունք չունինք այդ սրբազան կտակը շահագործման եւ օգտագործման նիւթ կամ սակարկութեան առարկայ դարձնելու. այլ, ընդհակառակը, մենք պատրաստ պէտք է ըլլանք ամէն տեսակի պայքարի գնով, թէպէտ նաեւ աշխարհի իմաստութեամբ, տէր ըլլալու եւ տէր մնալու այդ կտակին:

Եւ ատոր համար.

Ա) Անհրաժեշտ է առաջին հերթին կապուած ըլլալ եւ մնալ Հայրենիքին: Իր սիրտը եւ իր միտքը հայրենիքէն կտրող մարդը դատապարտուած է ծարաւ մնալու եւ օր մը անպայմանօրէն չորնալու իր ազգային ինքնութեան մէջ: Հայրենիքը, որ մեզի տրուած է այսօր, ինչ-

պիսի ձեւով ալ ներկայանայ մեզի՝ մեզմէ յանձնառութիւն կը պահանջէ, մեզմէ կը պահանջէ հաւատարմութիւն, եւ պէտք է մենք հոն գործածենք ոչ թէ միտքի տրամաբանութիւնը, այլ սիրտի տրամաբանութիւնը, որ սիրոյ լեզուէն զատ ուրիշ լեզու պէտք չէ ճանչնայ, երբ կը խորի կամ կը մտածէ Հայրենիքին մասին:

Բ) Պէտք է ունենանք յանձնառութիւն եւ կապուածութիւն մեր լեզուին եւ այդ լեզուին մաքրութեան, այդ լեզուին նուիրականութեան, որուն ընծայեալները եւ նուիրեալները, որուն ախոյեան պաշտպաններն եղան մեր նահատակ հայրերն ու մայրերը, քոյրերն ու եղբայրները:

Գ) Պէտք է կապուած ըլլանք այն հաւատքին - թէ՛ Աստուծոյ հաւատքին եւ մեր ժողովուրդի ինքնութեան, ամբողջեան հաւատքին - որ անշեղ եւ աննահանջ համոզում էր անոնց մէջ, եւ որ այսօր մեր մէջ պէտք է ըլլայ այն ժայռեղէն խարիսխը, որուն վրայ կանգնինք մենք - թէ մեր անձերը, թէ մեր հաւաքականութիւնները, թէ մեր գաղութները, թէ մեր հայրենիքը:

Դ) Պէտք է մնայուն կերպով կապուած ըլլանք մեր դատին, որուն համար իրենք զիրենք տուին մեր նահատակները: Եւ այդ դատին կապուածութիւնը մեզի կ'ըսէ, որ մեր ունեցածը միայն այսօրուան հայրենիքը պէտք չէ՛ ըլլայ եւ պէտք չէ՛ բաւարարուինք միայն անով, այլ՝ այդ հայրենիքը իբրեւ մանրանկարը այն ընդարձակ եւ մեծ հայրենիքին, որ խլուեցաւ մեզմէ, կոչ եւ պարտք կը դնէ մեր վրայ մեր մնայուն երազը պահելու զայն, եւ մեր բոլոր ոյժերն ու կարողութիւնները լարելու դէպի այն, որպէսզի երբ որ ներէ այդ նոյն պատմութիւնը եւ ներեն մեր ոյժերը՝ կարենանք զայն առնել եւ միացնել մեր այսօրուան փոքրածաւալ երկրին: Եւ ատոր ցուցանիշը չէ՞ այն զօրեղ պայքարը, որ այս վերջին ութը եւ աւելի տարիներուն մեր ժողովուրդը կը մղէ յանուն Արցախին, որ նոյն այդ հայրենիքին կու գայ գումարուելու՝ իրեն հետ կանչելով Հայրենիքին մնացեալ բոլոր մասերը:

Եւ այս կտակին հաւատարմութիւնն է, որ միայն պիտի ըլլայ խկական մեծարանքը մեր նահատակներուն, որովհետեւ միայն այն ատեն է որ մեր նահատակները իրենց յաղթանակին ու նահատակութեան մէջ կ'ունենան իրենց հաւատարիմ յետնորդները: Չկայ մեր նահատակներուն հաւատարմութեան ուրիշ կերպ:

Եւ այսօր, մարգարէին կոչը մեզ կը հրաւիրէ, որ մեր հայրերուն օրինակով արիացած ու քաջացած, մեր ազգային ինքնութեան մէջ վերստին մկրտուած եւ թարմացած, մեր կեանքը նուիրել ուխտենք, եւ ուխտենք ո՛չ միայն խօսքով, շուրթներով, այլ մանաւանդ գործով

տէր կանգնելու այն երդումներուն եւ խոստումներուն, որ կու տանք անոնց իրագործման նուիրելով մեր կեանքը եւ մեր կարելիութիւնները ամբողջ, որպէսզի մեր սրբազան նահատակներուն օրհնութիւնն ունենանք մեր կեանքին մէջ, եւ այդ օրհնութեամբ զօրացած քալենք, ապրինք եւ իրագործենք մեր կեանքը, այժմ եւ յաւիտեանս: Ամէն:



ՏԵՍԻՔ ՈՉ ԵՂԵՈՆԻ,

ԱՅԼ ԿԵԱՆՔԻ՝

Ամէն մէկ հայու գիտակից թէ անգիտակից միտքին վրայ հուրով եւ սուրով խորաքանդակուած անջնշելի պատկեր եւ մշտակենդան պատմութիւն է Ապրիլեան Եղեռնին թուրքին կողմէ մեր ժողովուրդին դէմ ի գործ դրուած ցեղասպանութեան հրէշային ծրագիրին պատմութիւնը:

Պատմաբանին համար եթէ պատմութիւնը լայն տեղեկութիւններու ճշգրտուած տարեթիւերու եւ զգաստ դատումներու գումարն է, մեզի համար սակայն, անհկա ապրող, բաբախող եւ պատգամող իրականութիւն է: Մենք երբ պատմութիւնը կը դիտենք, անոր մէջ չենք տեսներ միայն ու միայն անցեալի կեանքին վաւերական պատկերները կամ ժամանակին ու տարածութեան մէջ կայունացած, անշարժացած յուշարձան-կոթողներ, այլ անոր մէջ կը տեսնենք կեանքի յոյզը հոգիէ հոգի փոխանցող թրթիռը, որ կը հասնի մինչեւ մեր հոգիները: Անոր մէջ կը տեսնենք արգաւանդ այն հողը, որուն կենսախայտ ծոցէն մեր ժողովուրդը կ'ընծիւղի միշտ որպէս մշտադալար ճիւղ, որովհետեւ դարերու փորձառութիւնն ունի որպէս զինք կենսաւորող սնունդ: Անոր մէջ կը տեսնենք անվերջօրէն եռուն հրաբուխը, որ դուրս ժայթքելով իր շիկացած լաւան դէպի կողերը մեր լեռնացած պատմութեան կը կերպարանափոխէ միշտ պատկերը անոր: Եւ տակաւին, մեր պատմութիւնը մեզի համար յոգնած-դադրած ու փակուած-կնքուած գոյութիւն մը չէ. այլ անցեալէն ու ներկայէն դէպի աագայ եւ յաւերժութիւն ձգտող զսպանակուած ուժապանութիւնը, առանց որուն կեանքը իր ընթացքին մէջ կը կասի. կեանքը շերտացնող արիւնը կը սառի ու ժողովուրդ մը ամբողջ կը սահանայ իր անունը ջնշելով Ապրողներու Գիրքէն:

Մեր պատմութեան մէջ սեւ էշերը, դժբախտութիւնները, ւաւերն

ու կործանումը, գերութիւնն ու աքսորը, գաղթն ու ջարդը չեն զարմացուցած մեզ բնաւ, որովհետեւ ժամանակի սլաքին հետ թաւալող կեանքը առիթ չէ տուած զարմանալու: Իրարու յաջորդող այս դառն հարուածներուն տակ, երբեք մահուան շուքը չէ ծանրացած մեր հոգիներուն վրայ, որովհետեւ գիտցած ենք մեր հոգիները թեթեւ ու պայծառ պահել լուսաւոր տեսիլներով: Մթամած մեր ճամբուն վրայ հազիւ լոյս մը նշմարած անոր վազած ենք թիթեռնիկի նման, որովհետեւ եղած ենք կեանքին ու լոյսին նուիրուած ժողովուրդ, տեսիլքի ժողովուրդ:

Մեր պատմութեան բազմաթիւ եղեռներէն վերստին յարութիւն առած մեր ժողովուրդին համար յատկապէս այսօր որպէս նոր պատգամ կը հնչէ այն աստուածային սքանչելի տեսիլքը, զոր Եզեկիէլ Մարգարէ ունեցաւ: Եբրայեցի ժողովուրդին Բաբելոն գերութեան ընթացքին, Բաբելոն ապրող այս մարգարէն դիտեց կեանքը իր ժողովուրդին, տեսաւ թէ ինչպէս իր ժողովուրդին գաւակները օրէ օր իրենց հաւատքին մէջ կը թուլնան ու կը տկարանան, եւ որքան հաւատքի կապերը թուլնան անոնց մէջ՝ այնքան նաեւ որպէս մարդ եւ որպէս ժողովուրդ անոնց գոյութիւնն է որ կը քայքայուի, կը լուծուի: Եւ հետեւեալ տեսիլքն ունեցաւ:

Տեսիլքին մէջ՝ մարգարէն փոխադրուեցաւ գեղեցիկ հովիտ մը: Հովիտ մը, սակայն, մարդկային չորցած ոսկորներով լեցուն: Եւ յանկարծ, Տիրոջ ձայնն էր որ հասաւ ականջին. «Մարդու որդի, կրնա՞ն այդ ոսկորները վերստին կենդանանալ»: Եւ Մարգարէն շփոթահար պատասխանեց. «Ատիկա Դուն միայն գիտես, Տէ՛ր»: «Մարդու որդի, մարգարէացի որ այդ ցամքած ոսկորներուն եւ ըսէ՛ անոնց.՝ Ցամքած ոսկորներ, Ես ձեզի ջիղ եւ միս պիտի տամ, ձեզ մորթով պիտի պատեմ, Իմ հոգիս պիտի տամ ձեզի եւ պիտի կենդանանաք»: Եզեկիէլ մարգարէացաւ եւ տեսաւ թէ հսկայ դաշտին մէջ չորցած եւ քայքայուած այդ ոսկորները ինչպէ՛ս մէկիկ-մէկիկ կու գային իրարու միանալու, ջիղ զգենալու, միտով պատուելու, մորթով ծածկուելու: Եւ արդէն մարդկային մարմիններ էին այս անգամ որ փռուած էին ամբողջ դաշտին տարածքին վրայ. բայց տակաւին շունչը կը պակսէր անոնց: Եւ ահա երկրորդ անգամ Տիրոջ ձայնը հնչեց. «Մարդու որդի, մարգարէացի որ շունչին եւ թող որ այս մարմինները շունչով կենդանանան»: Եզեկիէլ դարձեալ մարգարէացաւ եւ ահա՛ կեանքի շունչը՝ հոգին եկաւ այդ մարմինները լեցնելու, եւ անոնք կենդանացան ու ոտքի կանգնեցան հսկայ բազմութեամբ, բանակի մը պէս: Այն ատեն վերջին անգամ հնչեց Տիրոջ ձայնը, այս անգամ որպէս բացատրութիւն, եւ միաժամանակ, աստուածային խոստում. «Մարդու

որդի, այս ցամքած ոսկորները ամբողջ Իսրայէլի ժողովուրդը կը ներկայացնէին: Անոնք ցամքած ոսկորներու կոյտի վերածուեցան, որովհետեւ կորսնցուցին իրենց կեանքի աւիշը, կորսնցուցին կեանքի, գոյատեւելու եւ պայքարելու իրենց յոյսը, եւ մեռան: Բայց ահաւասիկ կ'ըսեմ, թէ Ես ձեզի կենդանութեան շունչ պիտի տամ, Իմ հոգիս պիտի տամ ձեզի, ձեր գերեզմանները պիտի բանամ եւ ձեզ ձեր գերեզմաններէն դուրս բերեմ, եւ ձեզ ձեր երկիրը պիտի վերադարձնեմ»:

Ի՞նչ կ'ըսէ աստուածապատգամ այս տեսիլքը մեզի Ապրիլեան Եղեռնի ոգեկոչման առնչութեամբ:

Անիկա կու տայ ժողովուրդներու գոյատեւման գաղտնիքը: Տեղասպանութենէն փրկուեցանք, նետուեցանք սփիւռք: Կոտորածներուն կէս թողուցածը կոտորակումը սկսաւ կատարել: Մահը հետապնդեց մեզ ամէնուրեք: Բայց մենք մահէն փախանք ու կեանքը փնտռեցինք, կեանքին կառչեցանք: Ապրեցանք: Վերապրեցանք մինչեւ հիմա:

Բայց...
 Կեանքը ամէն բանէ առաջ նպատակ է եւ նպատակին ձգտող յոյս է ու հաւատք: Հոն ուր կը պակսի նպատակը, հոն ուր կը պակսին կեանքի հաւատքն ու յոյսը հոն միայն մեռելութիւն է որ կը տիրէ: Ժողովուրդներ կրնան գաղթական կամ աքսորական ըլլալ, կրնան բռնի տեղահան, արմատախիլ ըլլալ, ինչպէս մեր պարագան եղաւ, եւ ամբողջ սփիւռքի տարածքին վրայ ժողովուրդներ կրնան նոյնիսկ բաժան-բաժան եղած ըլլալ: Բայց ատիկա մեռելութեան նշան չէ տակաւին: Կոտորակուած կրնանք ըլլալ, բայց կեանքով առատացած մնալ:

Այն ատեն միայն մենք կը գերեզմանուինք երբ կորսնցնենք կեանքի մեր նպատակը, հաւատքը եւ յոյսը:

Վաթսուն եւ չորս տարի առաջ ինչպիսի՞ դաժան ճակատագիրի մը ձեռքէն խուսափեցանք: Բայց անբնակ անապատներէն իսկ վերականգնեցանք, որովհետեւ Տիրոջ կոչին հնազանդ մեր մէջ ամուր պահեցինք կեանքի, գոյատեւումի եւ պայքարի յոյսն ու հաւատքը. որովհետեւ տակաւին ամուր զգացինք մեր կապերը մեր երկրին ու հողին հետ, եւ մեր երկիրը մեզի աւիշ տուաւ, արիւն ներարկեց, կենդանի շունչ պարգեւեց:

Այսօր հեռու ենք արիւնոտ անապատներէն եւ կ'ապրինք ոչ միայն ծաղկած ափերու, այլեւ բարգաւաճ կեանքի մը մէջ: Բայց պէտք է գիտնանք բոլորս ալ, որ նոյնինքն մեր բարօրութեան մէջ մենք յաճախ մեր գերեզմանն է որ կը բանանք, որովհետեւ մեր մէջ կ'աղօտանայ մեր գոյութեան նպատակին գիտակցումը, կը թուլնան

ու կը պակսին յոյսը, հաւատքը, թէ մենք երկիրէ մըն է որ հեռացանք հակառակ մեր կամքին, եւ անպայմանօրէն դէպի այդ երկիրը պիտի վերադառնանք օր մը այնտեղ հաստատելու համար մեր տունը եւ մեր բնակութիւնը, որովհետեւ կարելի չէ երբեք ապրիլ առանց արմատի, կարելի չէ երբեք ապրիլ առանց հողի: Պէտք է հասնինք մեր գոյութեան արմատներուն: Պէտք է հասնինք մեր հողերուն: Նպատակը:

Եւ ազգային գոյութեան մեր այս նպատակի ճամբուն վրայ պէտք է լսենք Տիրոջ խոստումը մեզի Իր ժողովուրդին ուղղուած. «Պիտի հանեմ ձեզ ձեր գերեզմաններէն. կենդանութեան շունչ պիտի տամ, Իմ հոգիս պիտի տամ ձեզի, եւ ձեզ ձեր երկիրը պիտի վերադարձնեմ»:

Այս պատգամը պէտք է ամուր տեղաւորուի եւ անջնջելիօրէն դրոշմուի մեր միտքերուն մէջ, որովհետեւ մեր սփիւռքեան կեանքին եւ պայմաններուն մէջ ան միայն կրնայ մեզ կենդանացնել, նոր ոգիով կենսաւորել: Եւ այն ատեն Մեծ Եղեռնին տարեդարձը, Ապրիլ 24-ի տօնակատարութիւնը կը դադրի սոսկ ցեղասպան սպանդի եւ նախճիրի մռայլ պատկերն ըլլալէ, այլ՝ անոր ընդմէջէն կը դառնայ կեանքի տեսիլք՝ գոյապայքարի անտեղիտալի վճռակամութեամբը յղի եւ արդար մեր իրաւունքներուն պահանջատիրութեամբը արգասաւոր:

ՇԱՐԱԿԱՆ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ

Ներկայ տարին 75-ամեակն է Մեծ Եղեռնին:

Հայութեան սիրտին պէս համայն մարդկութեան խիղճին վրայ ծանրացող անպատիժ ցեղասպանութեան մը եւ շարունակուող անարդարութեան բաց վէրքը կ'արիւնի դարձեալ: Հայ կեանքը, սակայն, գիտակցական նոր ալիքաւորումով յորձանք կու տայ ամէնուրեք: Աշխարհի բոլոր կողմերուն մեր ժողովուրդը որեւէ ժամանակէ աւելի կանգուն եւ արթուն կը շնչէ իր նահատակներով, ինչպէս իր երագներով, եւ վերստին աշխարհին կը յայտնէ իր անյեղելի կամքը՝ հետապնդելու շուրջ երկու միլիոն մեր նահատակներուն աւանդած կտակը, մինչեւ որ արդարութիւն հատուցուի մեզի եւ մեր վերածնեալ փոքրիկ Հայաստանը ծուէն-ծուէն գումարուելով՝ իր նուիրագործեալ ամբողջութիւնը գտնէ կրկին:

75-ամեակի նշման զանազան արտայայտութիւններուն կ'ուզենք միախառնել նաեւ մեր այս շատ համեստ աշխատանքը՝ հետեւեալ կարճ բացատրականով.

Անցեալ Ապրիլին, Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրապետութեան կաթողիկոսական զոյգ Աթոռներուն Գահակալները Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը 29 Ապրիլ 1989 թուակիր միասնական հաղորդագրութեամբ մը կը ծանուցէին, թէ այս տարի, Ցեղասպանութեան 75-ամեակին առիթով, պիտի տարուէին անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները՝ կատարելու համար սրբադասումը («սուրբ» հռչակումը եւ եկեղեցական տօներու կարգին անցնիլը) մեր երկու միլիոն նահատակներուն, որոնք կամաւորաբար իրենք զիրենք ընծայեցին իրենց արիւնով պաշտպանելու համար իրենց հայրենիքը, իրենց ընտանիքը, հաւատքը, լեզուն, գիրը, մշակոյթը, պատիւը, արժանապատուու-

թիւնը, մէկ խօսքով անունն ու ինքնութիւնը:

Սրբադասման այս որոշումը արդար եւ նուիրական պարտք մըն էր նախ իրենց անասելի չարչարանքներու ենթարկուած, չարատանջ մահուան իրենք զիրենք մատնած եւ անօրինակ ու սքանչելի պատարագումով մը նահատակութեան եւ սրբութեան փառապսակը նուաճած մեր քաջարի ու պաշտելի մարտիրոսներուն: Այդ որոշումը, միաժամանակ, արտայայտութիւնն էր հրամայական պահանջի մը՝ ազգային թէ կրօնական առումներով.

ա) Ազգ մը, իբրեւ հաւաքական մարմին, կենդանի է եւ գոյատեւող որքան ատեն որ ունի իր համայնական իտէպլներն ու տենչերը մարմնաւորող եւ անոնց համար գիտակցականօրէն պայքարիլ ու հերոսականօրէն զոհաբերուիլ գիտցող հաւատարիմ մարտիկներ: Ազգի մը կենդանութեան յայտարար նշաններն ու վկաներն են իր հերոսները՝ հարազատ ու վաւերական գաւակները ցեղին:

բ) Նոյնն է հասկացողութիւնը կրօնական մարզին մէջ: Քրիստոսի Սուրբ Եկեղեցին կենդանի մարմին մըն է՝ իր գինուորեալ (տակաւին այս կեանքին մէջ պայքարող) թէ յաղթական (այս աշխարհէն հանդերձեալին անցած) անդամներու սերտ միասնութեամբը եւ փոխադարձ հաղորդութեամբը յատկանշուող: Եկեղեցիի մը գոյութեան եւ կենդանութեան «վկաներն» են սուրբերը՝ հարազատ եւ վաւերական գաւակները Աստուծոյ: Առանց սուրբերուն չկայ Եկեղեցի: Եւ ինչպէս առանց սուրբերուն կարելի չէ պատկերացնել Քրիստոսի Եկեղեցին, նոյնպէս ալ կարելի չէ պատկերացնել ապրող ու գործող կենդանի Եկեղեցի մը, որ բոլոր ժամանակներուն չունենայ հաւատքին բացառիկ «վկաները»՝ հաւատքին հաւատարիմները:

Հայաստանեայց Առաքելական մեր Եկեղեցին ինչպէս կանխագոյն դարերուն հարուստ եղած է սուրբ գաւակներով, այնպէս ալ սրբութեան վաւերական դրոշմն ունեցող մեծ թիւով վկաներ տուած է նորագոյն ժամանակներուն, մինչեւ մեր օրերը, ինչպէս աներկբայօրէն այդպիսին են Ապրիլեան մեր Նահատակները: Եւ եթէ անցնող դարերը ինչ-ինչ պատճառներով շատ թոյլատու չեն եղած ծիսական մակարդակի վրայ կամ Եկեղեցւոյ տօնական կարգին մէջ զանոնք իբրեւ այդպիսին ճանչնալու եւ արժանի յիշատակութեամբ պատուելու, Ապրիլեան Նահատակներու պարագային ատոր պահանջը արդէն շատոնց զգացուած էր, ինչպէս տարուէ տարի կատարուող Եկեղեցական մեծաշուք յիշատակի հանդէսները եւ ժողովրդական բարեպաշտութեան արտայայտութիւնները յայտնապէս կը վկայեն:


Եւ ահա ի վերջոյ պիտի հասնէր երկար ատենէ ի վեր սպասուած այդ սրբազան պահը: Երազ մը, որ երկար տարիներէ ի վեր անձնա-

պէս մենք ալ փայլփայած ենք եւ քանիցս նաեւ այդ մասին հրապարակաւ արտայայտուած:

Սրբադասումի մասին զոյգ Հայրապետներուն ծանուցումը եւ անկէ քանի մը ամիս ետք այդ ուղղութեամբ սկիզբ առած նախապատրաստական որոշ աշխատանքներ առիթ դարձան, որ բնականօրէն խորհինք նաեւ սրբադասումին յաջորդելիք տօնակատարութեանց կապուած յատուկ շարականի մը մասին: Մնացեալը տեղի ունեցաւ ինքնաբերաբար: Մենք մեզի առաջադրած չէինք շարական մը գրել, բայց երանեալ նահատակներուն մասին մեր հետզհետէ աճող սեփական խորհրդածութիւնները ակամայ դարձան մեր միտքին սեւեռումը քանի մը շաբաթներ, եւ մղեցին որ ի վերջոյ նոյն այդ խորհրդածութիւնները գիրի վերածենք: Այսպէ՛ս ծնաւ, ահա, ներկայ շարականի կանոնը: Բանաստեղծական թռիչք կամ պոռթկուն զգացումներու արտայայտութիւն մը չէ անիկա, ոչ ալ ահաւոր եղեռնը իր պատմական մանրամասնութիւններով վերարտադրող վաւերագրական պատկերացման փորձ մը: Կրօնական հայեցողութեան պրիսմակէն անցած՝ նահատակութեան հոգեւոր երեսին հայոց եւ այդ երեսը աստուածաշնչական որոշ ճշմարտութեանց լոյսին տակ սեւեռող մեկնութիւնն է անիկա Եղեռնին անձնական մեր ապրումներուն ներքին կշռոյթովը տրուած եւ ըստ այնմ տողատուած, առանց յատուկ տաղաչափութեան եւ քերթողական պայմանականութիւններու եւ առանց որեւէ յաւակնութեան: Նոյնպէս, թէպէտ իբրեւ շարական ձեւաւորուած, բայց զայն կը հրապարակենք առայժմ իբրեւ զուտ անձնական ստեղծագործութիւն, ձգելով որ ապագան որոշէ անոր ծիսական-արարողական գործածութիւնը:

Ինչպէս կը տեսնուի, ներկայ հրատարակութիւնը կ'ընդգրկէ նաեւ շարականի կանոնին ծայնագրեալ ամբողջութիւնը, որ յօրինուած է գրաբար բնագիրին հետ միաժամանակ: Աշխարհաբար վերածումը, ֆրանսերէն եւ անգլերէն թարգմանութիւններն՝ անձամբ կատարեցինք՝ տպագրութեան այս հանգրուանին՝ անոր իմաստը մատչելի ընծայելու համար մեր ժողովուրդի գաւակներուն ամբողջութեան, ինչպէս նաեւ մեր շրջապատին: Իսկ ամբողջութիւնը կ'ուզենք որ մեր սրտի երկիւղած սիրոյն եւ խոր յարգանքին խոնարհագոյն տուրքը ըլլայ, ներկայ 75-ամեակին առիթով, նահատակ մեր հայրերուն ու մայրերուն, քոյրերուն ու եղբայրներուն ծօնուած:

¹ Այս հրատարակութեան մէջ միայն աշխարհաբարի վերածումը գետեղած ենք. տես յաջորդ էջերը (խմբ.):



ԿԱՆՈՆ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԴԿ.



(Ձայն՝ Չորրորդ Կողմ)

Հրաշացան պակուցմամբ բազմութիւնք երկնայինք
եւ մեծաւ պըշուցմամբ զահի՛ հարան ազինք,
տեսնելով զհին Եղեմ՝ ասպարէզ հանդիսի
դժոխաբորբ հըրոյ Կայինական ախտին,
եւ ըզնոր պատարագ այս նորոյս Հաբէլի,
որոյ արիւնըն յորժամ խօսի¹.

«Տէ՛ր Սուրբ եւ Ճշմարիտ, մինչեւ յե՞րբ ոչ դատիս
եւ ոչ խնդրես ըզվրժ արեան մերոյ ի բընակչաց
երկրի»²:



Չմայլեցան, սուկացին բազմութիւններն երկնային եւ
մեծապէս ապշեցան ու սարսափեցան ազգերը երբոր
տեսան հին Եղեմն հանդիսավայրը դարձած
Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին,
եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբէլին, որուն
արիւնն անդադար կ'ադադակէ՝ [ըսելով].


«Տէ՛ր Սուրբ, Ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է
որ պիտի դատես երկրին բնակիչները՝ անոնցմէ
պահանջելու մեր արիւնին վրէժը»:



Պատկերք հարազատք Գառինըն Աստուծոյ,
որք ի սպանդ վարեցան իբրեւ հօտ ոչխարաց.
իբրեւ որոջս անմըշունչս որք կային առաջի
անասնական ազդմամբ զագանացեալ կտորչաց.
այնպէս եւ ոչ բացին ըզբերանըս իւրեանց³
առ ի բողոքել առ դահիճսըն ժանտ.
«Տէ՛ր Սուրբ եւ Ճշմարիտ, մինչեւ յե՞րբ ոչ դատիս
եւ ոչ խնդրես ըզվրժ արեան մերոյ ի բընակչաց
երկրի»:


Հարազատ պատկերները Աստուծոյ Գառնուկին,
որոնք սպանդ քշուցան ոչխարներու հօտի պէս,
անմունչ որոջներու նման կանգնած առջնւր
անասնական բնազդով զագանացած
խուզողներուն. այնպէս՝ չբացին իրենց բերանը
բողոքելու ընդդէմ դաժան դահիճներուն.
«Տէ՛ր Սուրբ, Ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ
է որ պիտի դատես երկրին բնակիչները՝ անոնցմէ
պահանջելու մեր արիւնին վրէժը»:







Բարձաւ դատաստան առ նոցա խոնարհութեան,
 եւ բարձան կեանք նոցա ի յերկրէ հարց իւրեանց,
 թէպէտ նոցա չէր գործեալ եւ ոչ մի ինչ վընաս,
 կամ բընաւ ոչ գտեալ նենգութիւն ի բերան⁴.
 զի եւ այնու գտցին նմանեալըք Փըրկչին
 Քրիստոսի Յիսուսի տարադատ զենման⁵.
 «Տէ՛ր Սուրբ եւ Ճշմարիտ, մինչեւ յե՞րբ ոչ դատիս
 եւ ոչ խնդրես ըզվրէժ արեան մերոյ ի բընակչաց
 երկրի»:

Իրենց խոնարհ ըլլալուն՝ վերցունցա՛ւ դատաստանն,
 ինչպէս իրենք խլունցան իրենց հայրերու նրկրէն,
 թէպէտ անոնք որնէ յանցանք չէին գործած եւ բնաւ
 իրենց բերանէն նենգութիւն մը չէր խուած.
 որպէսզի ատո՛վ եւս նման ըլլան Փրկիչին՝
 Քրիստոս Յիսուսի անդատաստան զենումին.
 «Տէ՛ր Սուրբ, Ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է
 որ պիտի դատես նրկրին բնակիչները՝ անոնցմէ
 պահանջելու մեր արիւնին վրէժը»:



Լաւ վարկան չարչարել ընդ ժողովրդեանն Աստուծոյ,
 քան առ փոքր ժամանակ վայելել ի մեղս.
 կարելոր համարեցան զնախատինսն Քրիստոսի.
 քան անարգ ուրացութեամբ ըստանալ մեծութիւն⁶.
 զի յուսով հայեցեալ տեսին ըզհատուցումն
 իւրեանց պատրաստեալ առ Թագաւորին.
 «Տէ՛ր Սուրբ եւ Ճշմարիտ, մինչեւ յե՞րբ ոչ դատիս
 եւ ոչ խնդրես ըզվրէժ արեան մերոյ ի բընակչաց
 երկրի»:


Լաւ համարեցին Աստուծոյ ժողովուրդին հետ
 չարչարուիլ, քան կարճատեւ ժամանակ մը մեղքի
 մէջ վայելիլ. նախադաս համարեցին Քրիստոսի
 կրած նախատինքները [կրել], քան անարգ
 ուրացութեամբ հարստութեան տիրանալ.
 քանզի յոյսով նայելով՝ տեսան հատուցումը իրենց
 համար պատրաստուած՝ Թագաւորին մօտ.
 «Տէ՛ր Սուրբ, Ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է
 որ պիտի դատես նրկրին բնակիչները՝ անոնցմէ
 պահանջելու մեր արիւնին վրէժը»:






Լաւ եղին՝ ընծայել ըզմարմինըս իւրեանց
ի կոխումըն ոտից վարագացեալ գարշելեաց,
քան առ ոտըս հարեալ առ ի խոզից տեսանել
ըզպայծառ մարգարիտ աւանդին Հայ անուան⁷,
զոր կալան առ պարգես՝ գեր ի վեր քան զհամայն,
տուեալ յԱրարչէն տանս Արարատեան.
«Տէ՛ր Սուրբ եւ Ճշմարիտ, մինչեւ յե՞րբ ոչ դատիս
եւ ոչ խնդրես ըզվրէժ արեան մերոյ ի բընակչաց
երկրի»:


Աւելի լաւ սեպնցին իրենց մարմինն ընծայել՝
վարագացած գարշելի [մարդոց] ոտքին կոխան
ըլլալու, քան խոզերէն ոտնակոխ եղած տեսնել այն
պայծառ մարգարիտը Հայ անուան, իբր աւանդ
[իրենց տրուած], զոր գերիվեր դասնցին ամէն բանէ,
իբր պարզն՝ Արարիչէն շնորհուած Արարատեան մեր
Տունին. «Տէ՛ր Սուրբ, Ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես.
ե՞րբ է որ պիտի դատես երկրին բնակիչները՝ անոնցմէ
պահանջելու մեր արիւնին վրէժը»:



Ընտրեցին ըզհատումըն շրթանց եւ լեզուաց,
քան զրկել ի խօսից բընակաց Հայկազանց.
առաւել ընտրեցին ո՛չ ունել խօսարան
եւ անխօս բարբառով խօսել ընդ Աստուծոյ,
քան մերժել ի շրթանց զայբութեն Մեսրոպեան
եւ ընդ աղբ գալ խղճի ի մուրացածոյն.
«Տէ՛ր Սուրբ եւ Ճշմարիտ, մինչեւ յե՞րբ ոչ դատիս
եւ ոչ խնդրես ըզվրէժ արեան մերոյ ի բընակչաց
երկրի»:



Նախընտրեցին շրթներուն, լեզուներուն հատումը,
քան [յանձն առնել] զրկուիլ բնիկ հայկական լեզուէն.
աւելի՛ նախընտրեցին բնա՛ւ բերան չունենալ եւ անբառ
բարբառով Աստուծոյ հետ խօսիլ, քան մերժել շրթներէն
այբութենը Մեսրոպեան եւ մուրացուած [լեզուի մը]
աղբին մէջ տապալակիլ [յարատելի] խիղճի խայթով.
«Տէ՛ր Սուրբ, Ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես.
ե՞րբ է որ պիտի դատես երկրին բնակիչները՝ անոնցմէ
պահանջելու մեր արիւնին վրէժը»:





Եղին զանձինըս ի վերայ հայրենեաց
 Եւ բընիկ օրինաց, կարգաց, աւանդութեանց⁸,
 ոչ փոխանակեալ զադամանդեան միամտութիւն
 հաւատոց ընդ փափուկ վայելմանց անցաւոր
 այսր կենաց. Եւ զօրէն ցորենոյ ի յերկիր բարի
 անկեալ աճեցին ընդ միոյ հարիւրապատիկ⁹.
 «Տէ՛ր Սուրբ Եւ Ճշմարիտ, մինչեւ յե՞րբ ոչ դատիս
 Եւ ոչ խնդրես ըզվրէժ արեան մերոյ ի բընակչաց
 Երկրի»:


Իրենք զիրենք զոհեցին հայրենիքին եւ բնիկ
 օրէնքներուն, կարգերուն եւ աւանդութեանց համար՝
 չուզելով փոխանակել հաւատքին ադամանդեայ
 հաւատարմութիւնը անցաւոր [մեր] այս կեանքի
 քաղցր վայելքներուն հետ. եւ լաւ հողի մէջ ինկած
 ցորենահատիկին պէս՝ պտուղ տուին՝ մէկի տեղ
 հարիւրապատիկ. «Տէ՛ր Սուրբ, Ճշմարիտ, մինչեւ ե՞րբ
 սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրին բնակիչները՝
 անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը»:



Առ սէր Քրիստոսի՝ փութացան յանձն առնուլ
 ըզյօշումն անդամոց Եւ զկիզումըն մարմնոց,
 որոց ճենճեր պատարագի Եւ խանձման հոտ մահու
 ի բուրումըն կենաց փոխարկեալ Աստուծոյ
 ընկալաւ փոխանակ Տեառնական պատարագին,
 եղեալ ի սեղան մերս եկեղեցեաց.
 Տէ՛ր Սուրբ Եւ Ճշմարիտ, ո՞վ ըզմեզ մեկնեսցէ
 ի Քո սիրոյդ¹⁰ որ կոչէ.
 «Ուր Եսն եմ՝ անդ Եւ պաշտօնեայքն Իմ եղիցին»¹¹:



Քրիստոսի սիրոյն՝ փութացին յանձն առնել անդամնե-
 րուն յօշոտումը եւ մարմիններուն կիզումը,
 որոնց զոհի ճննճերն ու խանձումին հոտը մահուան՝
 Աստուած կեանքի բուրմունքի փոխարկելով՝
 ընդունեց Տիրոջ պատարագին փոխարէն՝ դրուած՝
 մեր նկեղնցիներուն սեղանին.
 «Տէ՛ր Սուրբ, Ճշմարիտ, ո՞վ կրնայ մեզ բաժնել Քո
 սէրէդ», որ կը կանչէ. «Ուր որ եմ Ես՝ հոն պիտի ըլլան
 նաեւ Ինձի ծառայողները»:





Հաւատովք պարտեցին գբռնաւոր իշխեցողս
 եւ դարձեալ հաւատովք փոխեցան ի յաստեացս.
 ո՛չ երկեան ի ցասմանէ բռնացեալ Գազանին.
 այլ գործեցին զարդարութիւն եւ հասին աւետեաց¹².
 հաճոյ լինելով Արարչին իրեանց.
 Տէ՛ր Սուրբ եւ Ճշմարիտ, ո՞վ ըզմեզ մեկնեսցէ
 ի Քո սիրոյդ որ կոչէ. «Ուր Եսն եմ՝ անդ եւ
 պաշտօնեայքն Իմ եղիցին»:


Հաւատքով յաղթեցին բռնատր իշխողներուն եւ
 դարձեալ հաւատքով անդնականին անցան.
 չվախցան կատաղի Գազանին զայրոյթէն,
 այլ՝ արդարութիւն գործեցին եւ խոստումներուն
 տիրացան. դափնեաբաւ եւ յաւէտ] քաջի անուն
 ստացան՝ իրենց Արարիչին հաճութիւնը շահելով.
 «Տէ՛ր Սուրբ, Ճշմարիտ, ո՞վ կրնայ մեզ բաժնել Քո
 սէրէդ», որ կը կանչէ. «Ուր որ Եմ եմ՝ հոն պիտի ըլլան
 նաեւ Ինձի ծառայողները»:



Թօթափեալ զտաղտկութիւն ախտական կենցաղոյս,
 ո՛չ ինչ դանդաղեցան ելանել ի կենացս.
 այլ ընդ փոյթ վերթեւեալ սըլացան ի յերկինս,
 հասանել կամելով առ օթեանս հանգստեան
 անախտական յարկաց եւ Մեծի Տանուտեառն¹³,
 հանգուցանողին սրբոցն իւրոց.
 Տէ՛ր Սուրբ եւ Ճշմարիտ, ո՞վ ըզմեզ մեկնեսցէ ի Քո
 սիրոյդ որ կոչէ. «Ուր Եսն եմ՝ անդ եւ
 պաշտօնեայքն Իմ եղիցին»:




Թօթափելով ցաւալից այս կեանքին տաղտուկները,
 չդանդաղեցան բնաւ՝ հեռանալու այս կեանքէն.
 այլ՝ փութով վերթնելով դէպի երկինք սլացան,
 ուզելով [շուտով] հասնիլ անախտական յարկերու
 հանգիստ օթեաններուն եւ Աւագ Տանտիրոջ,
 Իր [բոլոր] սուրբերուն հանգիստ պարգևողին.
 «Տէ՛ր Սուրբ, Ճշմարիտ, ո՞վ կրնայ մեզ բաժնել Քո
 սէրէդ», որ կը կանչէ. «Ուր որ Եմ եմ՝ հոն պիտի ըլլան
 նաեւ ինձի ծառայողները»:






Գոլով մարմնաւոր ծընունդը երկրաւոր,
արդ էլին անմարմինք՝ ծընեալըք վերստին.
ի տրտմական արգանդէ ստեղծական աշխարհիս՝
անտըրտմական կենցաղոյն եղեն ծընունդք
գուար- թունք. եւ թէպէտ բընութեամբ հողեղէնք
հաստատեալք՝ հըրեղէնք եղեն, հոգեղինացեալք.
Տէ՛ր Սուրբ եւ Ճշմարիտ, գերծո՛ւ՝ զմեզ ի չար
ժամանակէս եւ հաստատեա՛ւ առաքինութեամբ՝
օգնութեամբ սոցին:


Թէպէտ մարմնաւոր ծնունդ էին նրկրաւոր,
այժմ անմարմին մնկննցան՝ վնրստին ծննլով.
նիթնդէն այս աշխարհի տրտմական արգանդէն՝
անտրտմական [այն] կնանքին ծնան հրնշտակներու
պէս. եւ թէպէտ բնութեամբ հողնդէն ստնդծուած,
հրնդէն դարձան, հոգնդինացան.
«Տէ՛ր Սուրբ, Ճշմարիտ, ազատե՛ւ մեզ այս չար
ժամանակէն, եւ առաքինութեամբ ամրապնդե՛ւ
օժանդակութեամբն ատնց»:



Նահատակք Ապրիլեան կոչեցեալ կենաց ամսոյ,
որոց թիւ համարի՛ իբրեւ երկերիւր բիւր.
վըկայք պատուականք նրբակերտ ժամանակաց,
ըսկիզբն առեալ կատարման ի քըսանչորս օր
ամսեան, ի հազար ինն հարիւր հընգետասան ամի
թուականութեան դարուցս փրկչական.
Տէ՛ր Սուրբ եւ Ճշմարիտ, գերծո՛ւ՝ զմեզ ի չար
ժամանակէս եւ հաստատեա՛ւ առաքինութեամբ
օգնութեամբ սոցին:

Նահատակներ Ապրիլի՝ «Ապրիլ» կոչուած
ամսուան, որոնց ընդհանուր թիւը գրեթէ նրկու միլիոն
էր. նորագոյն մեր պատմութեան դուր պատուական
վկաններ, որոնց զենումն սկսաւ ամսուն քսանըչորսին,
փրկչական դարաշրջանի թուաբերութեան հազար
ինն հարիւր տասնըհինգ տարին.
«Տէ՛ր Սուրբ, Ճշմարիտ, ազատե՛ւ մեզ այս չար
ժամանակէն, եւ առաքինութեամբ ամրապնդե՛ւ
օժանդակութեամբն ատնց»:







Սուրբ վրկայք՝ ժամանեալք ի Սիոն լեառն սրբութեան, ի քաղաք Աստուծոյ, յԵրուսաղէմըն Վերին. եւ ի բանակըս բիրուց հրեշտակաց երկնայնոց, յեկեղեցի ամենայն անդրանկաց գրելոց յերկինս¹⁴. բարեխօս մեզ լերուք գլխատակ ձեր տօնողացս՝ համարձակութեամբ զԱստուած աղաչել.

Տէ՛ր Սուրբ եւ Ճշմարիտ, գերծո՛ւ գմեզ ի չար ժամանակէս եւ հաստատեա՛ առաքինութեամբ՝ օգնութեամբ սոցին:

Ո՛վ սուրբ վկաներ, հասած Սիոն Սուրբ լեռ, Աստուծոյ քաղաքը, Երուսաղէմը Վերին, նրկնային հրեշտակներու բիրաւոր բանակներուն եւ նրկինքի մէջ գրուած անդրանկաց Եկեղեցիին. բարեխօս մեզ մեզի՝ ձեր յիշատակը տօնողներուս, որպէսզի վստահութեամբ Աստուծոյ աղաչենք. «Տէ՛ր Սուրբ, Ճշմարիտ, ազատէ՛ մեզ այս չար ժամանակէն, եւ առաքինութեամբ ամրապնդէ՛ օժանդակութեամբն ասոնց»:




ՀԱՐՑ ԱԿ.

(Ձայն Առաջին Կողմ, դարձուածք)

Որ հաստատեցեր ըզհայաստան լինել օրրան հանուր մարդկութեան, այսօր անդէն քեզ սրբեցեր, Հա՛յր Երկնաւոր, նոր ժողովուրդ՝ փառաբանիչ Քումըդ անուան օրհնե՛մք ըզքեզ, Աստուած հարցըն մերոց:

Դուն որ սահմանեցիր որ հայաստանն ըլլայ օրրանը հանուր մարդկութեան, այսօր հոնկէ, Հա՛յր Երկնաւոր, Քեզի համար սրբեցիր նոր ժողովուրդ մը փառաբանիչ Քու անունիդ. կ'օրհնե՛մք Քեզ, ո՛վ Աստուածը մեր հայրերուն:







Որ խոնարհեալ յերկիր իջեր
եղբայրս առնուլ քեզ յաշխարհէ¹⁵, Որդի՛դ Արդար,
այսօր եկիր առնել որդիս արքայութեան՝ որք
հալածեալք՝ զանձինս ետուն վասն արդարութեան¹⁶։
օրհնե՛նք ըզՔեզ, Աստուած հարցըն մերոց:

Դուն որ խոնարհելով երկիր իջար
աշխարհէն քեզի եղբայրներ առնելու համար, Որդի՛դ
Արդար, այսօր եկար արքայութեան որդիներ
դարձնելու անոնք, որոնք հալածուեցան եւ
իրենք զիրենք տուին արդարութեան համար.
Կ'օրհնե՛նք Քեզ, ո՛վ Աստուածը մեր հայրերուն:

Որ կամեցար ի մարդկանէ կազմել տաճարըս Երրոր-
դութեան, այսօր ի քակտեալ շինուածոյ մարմնոց մեր
նահատակաց՝ վերակերտեցեր անձեռագործ
տաճարս անքակտելիս¹⁷, Հոգի՛դ Սրբութեան.
օրհնե՛նք ըզՔեզ, Աստուած հարցըն մերոց:

Դուն որ կամեցար Երրորդութեան տաճարներ կազմել
մարդոցմէ, այսօր մեր նահատակներու մարմիննե-
րուն քայքայուած շէնքէն անձեռագործ եւ անքակտելի
տաճարներ վերակերտեցիր, Հոգի՛դ Սրբութեան.
Կ'օրհնե՛նք Քեզ, ո՛վ Աստուածը մեր հայրերուն:





ԳՐԾ. Օրհնեցէ՛ք, ամենայն գործք Տեառն,
ըզՏէ՛ր օրհնեցէ՛ք,
եւ բարձր արարէ՛ք ըզՆա յաւիտեան¹⁸:

ԳՐԾ. Օրհնեցէ՛ք, ո՛վ Տիրոջ ստեղծուածներ,
Տէ՛րը օրհնեցէ՛ք, եւ փառաւորեցէ՛ք զԱյն յաւիտեան:

Եկայք, որդիք հորըն լուսոյ Հայաստանեայց
Եկեղեցւոյ, ի յիշատակի վըկայիցըս բիրաւորաց
օրհնեցէ՛ք զՀայրն Երկնաւոր որ ըզսոսա փոխեաց
ի կարգըս հրեշտակաց. եւ բարձր արարէ՛ք
ըզՆա յաւիտեան:

Եկէ՛ք, Հայաստանեայց Եկեղեցւոյ լուսաւորիչ հորը
որդիներ, բիրաւոր նահատակներու յիշատակին
առիթով օրհնեցէ՛ք Երկնաւոր Հայրը,
որ զանոնք հրեշտակներու կարգը փոխադրեց.
եւ փառաւորեցէ՛ք զԱյն յաւիտեան:







Որք հաւատոյ մանկունքդ էք
 Եւ աշակերտք համբերութեան մերոց վըկայիցս,
 Ի յիշատակի մարտի սոցա գովեցէ ք ըզՄիածինն,
 ըզԶօրագլուխըն հաւատոց մերոյ փըրկութեան¹⁹.
 Եւ բարձր արարէք ըզՆա յաւիտեան:

Դուք, որ սաննրն էք հաւատքին
 Եւ աշակերտ համբերութեան վկաներուն մերագնան,
 ասոնց պայքարի յիշատակին առիթով
 գովեցէք Միածինը, Զօրագլուխը մեր փրկութեան
 հաւատքին. Եւ փառաւորեցէք զԱյն յաւիտեան:

Որք հաճեալքդ էք ընդ թշնամանս,
 ընդ նեղութիւնըս եւ ընդ մահ վասըն Քրիստոսի²⁰,
 Ի հանդիսի մարտիրոսացս առաքինութեան՝
 բարեբանեցէք Սուրբ զՀոգին որ վերածնեաց զմեզ
 ըզգօրութիւն յարութեան Տեառըն յայտնեալ մահ-
 ուամբ սոցին. Եւ բարձր արարէք ըզՆա յաւիտեան:

Դուք, որ հաճութեամբ [յանձն առած] էք նախատինք-
 ները, նեղութիւններն ու մահը՝ Քրիստոսի համար,
 այս մարտիրոսներու քաջագործութեան հանդիսու-
 թեան առիթով բարեբանեցէք Սուրբ Հոգին, որ մեզ
 վերստին ծնաւ. Տիրոջ յարութեան գօրութիւնը յայտնե-
 լով ասոնց մահով. Եւ փառաբանեցէք զԱյն յաւիտեան:





ՄԵԾԱՏՈՒՄՅԷ ԱԿ.
 (Չայն Առաջին Կողմ. դարձուածք)


Աստուածային կամօքն անճառ եւ անքընին մայր
 եղեր Բանին. եւ գտրտմութիւն անկեալ բնութեանը,
 փոխարկեցեր յուրախութիւն ծնընդեանս Քրիս-
 տոս Քրիստոս բարեխօսեալ վասն անձանց մերոց

Աստուածային կամքովն անճառ, աննքննելի մայր
 եղար Բանին. եւ մեր անկեալ բնութեան տրտմութիւն-
 ուրախութեան փոխարկեցիր ծննդաբերութեանս,
 Քրիստոսի քով բարեխօսեալ մեզի հասնար

Կատարեցաւ աստուածային կամաց խորհուրդ
 Ի քեզ, Մարիամ, զի առ Խաչին ընդ քո անձըն-
 էանց սուր տառապանաց ըստ ծերունոց
 Միմեռնի բանին²¹. առ Քրիստոս բարեխօսեալ
 վասն անձանց մերոց

Աստուածային կամքին խորհուրդն ամբողջացաւ
 քու վրադ, ո վ Մարիամ, որովհետեւ Խաչին քով
 տառապանքի սուրբ ծակեց քու հոգւդ, ըստ
 ծերունի Միմեռնի խօսքին
 Քրիստոսի քով բարեխօսեալ մեզի հասնար






Ի գաւակէ քունմէ առ Յովհաննէս շնորհելով²²
կարգեցար մայր Եկեղեցւոյ. որով փոխանակ միոյ
Միածնին՝ բազումս ընկալար ի յորդեգրութիւն.
առ Քրիստոս բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:

Քու գաւակիդ կողմէ Յովհաննէսին շնորհունով՝
Եկեղեցւոյ մայր կարգունցար, որով միակ Միածնին
փոխարէն՝ անթիւ [գաւակներ] ունեցար որդեգրու-
թեամբ. Քրիստոսի քով բարեխօսե՛ մեզի համար:

Ընդ նահատակութիւն անթիւ որդւոց՝ բազմապատիկ
վէրս ընկալար, այլ առեալ ըզփործ յարութեան
Որդւոյդ սիրելւոյ՝ մըխիթարիչ լինիս վըշտագնելոց.
առ Քրիստոս բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:

Անթիւ որդիներու նահատակութիւնը [տեսնելով]
բազմապատիկ վէրքեր ստացար, բայց սիրնլի քու
Որդիիդ յարութեան փորձառութիւնն ունենալով՝
մխիթարիչ կը դառնաս [քոյոր] վշտակիրներուն.
Քրիստոսի քով բարեխօսե՛ մեզի համար:



ՈՂՈՐՄԵԱ ԱԿ.


(Չայն Առաջին Կողմ, դարձուածք)


Որ շնորհեցեր ըզսուրբըս Քո լինել պարգեւ Քո
աշխարհի, եւ յարացոյց տըկար եղբարց իբրեւ
սանդուխս՝ առ ի մագլել ի Քո սըրբութիւն.
աղաչանօք սոցա, Քրիստոս, ողորմեա՛:

Դուն որ Քու սուրբերդ աշխարհին շնորհեցիր իբրեւ
պարգև եւ տկար եղբայրներուն համար յարացոյց
մը՝ իբրեւ սանդուխս՝ որպէսզի դէպի Քու
սրբութիւնդ մագլցին. ասոնց աղաչանքով,
Քրիստո՛ս, ողորմե՛ [մեզի]:

Որ ուսուցեր զօրեղ լինել խնդրուածացըն
արդարոց յօգնականութիւն բըժշկութեան
տըկարութեանց մերոյ բընութեան²³.
աղաչանօք սոցա, Քրիստո՛ս, ողորմեա՛:



Դուն որ սորվեցուցիր թէ արդարներու խնդրանքները
զօրնդ են եւ կ'օգնեն բժշկելու մեր բնութեան
տկարութիւնները. ասոնց աղաչանքով,
Քրիստո՛ս, ողորմե՛ [մեզի]:





Որ ասացեր թողուլ գյանցանըս քաղաքաց մածեալ ի մեղս վասն արդարոց ի թիւ տասանց²⁴, այսօր ընկա՛լ զմիջնորդութիւն նահատակացըս բիրաւորաց. աղաչանօք սոցա, Քրիստո՛ս, ողորմեա՛:



Դուն որ ըսիր թէ կը ներես մեղսամած քաղաքներու յանցանքները տասը արդարներու իսկ սիրոյն, այսօր ընդունե՛ այս բիրաւոր նահատակներուն միջնորդութիւնը. ասոնց աղաչանքով, Քրիստո՛ս, ողորմե՛ [մեզի]:




ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ ԱԿ.
(Չայն Առաջին Կողմ, դարձուածք)

Ո՛վ երանեալ սուրբ վըկայք իմաստնացեալք երկնաւոր լուսով, որք զօրինակ հատին ցորենոյ յանձինս ձեր բերէք եւ պըտղաւորեցէք բազմապատիկ հաւատովք զՀայաստան աշխարհս. աղաչեցէք զԱստուած պահել ըզսա ի խաղաղութան:

Երկնային լոյսով իմաստնացած ո՛վ երանեալ սուրբ վկաներ, որ ցորենի հատիկին օրինակը դարձաք եւ բազմապատիկ հաւատքով պտղաւորեցիք Հայաստան Աշխարհը. աղաչեցէք, որ Աստուած խաղաղ պահէ Հայաստանը:







Ջինուորեցայք զգեղեցիկ զինուորութիւնն²⁵,
 Եւ մըղեցաք զբարւոք պատերազմ²⁶.
 զի առաք ըզսաղաւարտ փըրկութեան եւ սուսեր
 Հոգւոյն, եւ ըզգեցայք ըզգըրահսն արդարութեան եւ
 առէք զվահան հաւատոյ. որով զնետըս մուխըս
 չարին շիջուցէք²⁷. աղաչեցէք զԱստուած պահել
 զերկիրըս մեր յանվըտանգութեան:

Գնդնցիկ զինուորննր դարձաք եւ բարի պատերազմը
 մղեցիք, որովհետև փրկութեան սաղաւարտն ու
 Հոգիին սուրը առիք, արդարութեան գրահը հագաք
 եւ առիք հաւատքի վահանը, որով մարնցիք չարին
 [արծակած] բոլոր մխացող նետերը. աղաչեցէք,
 որ Աստուած անվտանգ պահէ մեր երկիրը:

Ձամենքու՛մք զանց արարէք, բարձէք զխաչըս ձեր
 յօժարութեամբ սըրտից ձերոց²⁸, եւ ըզհետ զընացէք
 հետոց Քրիստոսի²⁹, եւ ըզմահ Նորա կըրեցէք
 ի մարմնի, որով եւ կեանք Նորա յայտնեցան
 ի մարմինըս ձեր³⁰. աղաչեցէք զԱստուած պահել
 զերկիրըս մեր ի բարի հաւատս:

Անտնսնցիք ամէն ինչ, սիրտի ամբողջ յօժարութեամբ
 ձեր խաչերը վնըցուցիք եւ քալեցիք Քրիստոսի
 հետքերով, Անոր մահը կրեցիք մէջը ձեր
 մարմիններուն, որով Անոր կեանքն եւս յայտնուցաւ
 ձեր մարմիններուն մէջ. աղաչեցէք, որ Աստուած
 բարիքներու մէջ պահէ մեր երկիրը:





Նախատեցայք եւ չարչարեցայք վասըն Քրիստոսի,
 եւ զերանութիւն յաւիտենական ժառանգեցայք,
 զի Աստուծոյ զօրութեան եւ փառաց Հոգին
 հանգեաւ ի վերայ ձեր եւ յոսկերըս ձեր³¹.
 աղաչեցէք զԱստուած պահել
 զերկիրըս մեր ի սըրբութեան:

Նախատուցաք ու չարչարուցա՛ք Քրիստոսի համար,
 եւ յաւիտենական նրանութիւնը ժառանգեցիք,
 որովհետև Աստուծոյ զօրացուցիչ եւ փառաւորիչ
 Հոգին հանգչեցաւ ձեր անձերուն եւ ձեր
 ոսկորներուն վրայ. աղաչեցէք, որ Աստուած
 սուրբ պահէ մեր երկիրը:

Փառաւորեցայք զերազանց փառօք առ ի Հօրէ,
 եւ քան զարեգակըն պայծառացեալք՝ արժանի եղէք
 թագաւորել ընդ Քրիստոսի³², աղաչեցէք զԱստուած
 պահել զերկիրըս մեր ի պայծառութեան:

Գերազանց փառքով փառաւորուցաք Հօրը կողմէ,
 եւ արնէն շատ անլի պայծառացած՝ արժանի եղաք
 Քրիստոսի հետ թագաւորելու. աղաչեցէք,
 որ Աստուած պայծա՛ռ պահէ մեր երկիրը:








ՄԱՆԿՈՒՆՔ ԴԶ.

(Չայն Չորրորդ Կողմ, դարձուածք)

Այսօր բերկրեալ Եկեղեցի Հայաստանեայց՝ տօնէ
հանդիսի ըզյիշատակ նորոց վկայից, որք
մատնեցին զանձինս իւրեանց նահատակութեամբ
առաքինութեան՝ վասըն հաւատոյ եւ հայրենեաց.
աղօթիք սոցա, Տէ՛ր, պահեա՛ զմեզ:

Այսօր Հայաստանեայց Եկեղեցին բերկրանքով
հանդիսաւորապէս կը տօնէ յիշատակը նոր
վկաներուն, որոնք իրենց անձերը իբրև զոհ
ընծայեցին առաքինական նահատակութեամբ՝
[իրենց] հաւատքին եւ հայրենիքին համար.
անոնց աղօթքով, Տէ՛ր, պահե՛ մեզ:





Այսօր տիեզերքը սուկացեալ՝ հիացմամբ տեսին
Նոր Յորդանան արեամբ ձեւացեալ, եւ ի վերուստ
երկինք պատառեալ, ուստի Հօրըն ձայն վըկայեալ
«Դոքա որդիք են Իմ ընտրեալ»³³.
աղօթիք սոցա, Տէ՛ր, պահեա՛ զմեզ:

Այսօր աշխարհը սուկումով եւ հիացումով տեսաւ
Նոր Յորդանան մը՝ արիւնով կազմուած, եւ անոր
վերնը՝ երկինքը պատռած, ուրկէ Հօր ձայնը [դարձեալ]
կը վկայէր. «Ատոնք որդիներս են Իմ ընտրած».
անոնց աղօթքով, Տէ՛ր, պահե՛ մեզ:

Այսօր հրեշտակըք փութացան առընդունել
զգունդ բազմութեան սուրբ նահատակաց,
քանզի լուան Տեառըն ըզձայն «Եկայք, Իմոյ Հօրըն
օրհնեալք, ժառանգեցէ ք զարքայութիւնն ձեզ պատ-
րաստեալ»³⁴. աղօթիք սոցա, Տէ՛ր, պահեա՛ զմեզ:

Այսօր հրեշտակները փութացին ընդունելու
մեծ բազմութիւնը սուրբ նահատակներուն,
որովհետև լսեցին ձայնը Տիրոց [որ կ'ըսէր].
«Եկէ՛ք, Իմ Հօրս կողմէ օրհնեալներ, ժառանգեցէ՛ք
արքայութիւնն ձեզի համար պատրաստուած».
անոնց աղօթքով, Տէ՛ր, պահե՛ մեզ:







Այսօր խայտայ նշխարեալ երկիրըս մեր Հայաստան
ընդ խմբունըն տօնի Նահատակացս Ապրիլեան,
զի սերմանեալ նշխարըք սոցա ընդ ամենայն
կողմանս իւր՝ նորոյ գարնան կենդանութեան
տան աւետիս յուսոյ լըրման.
աղօթիք սոցա, Տէ՛ր, պահեա՛ զմեզ:

Այսօր նշխարեալ մեր Հայաստանը կը խայտայ՝
Ապրիլեան այս Նահատակներուն
տօնախմբութեամբ, առիթով, որովհետև իր բոլոր
մասնիկներուն մէջ ցանուած նշխարներն ասոնց՝
նոր կեանքի մը գարունինյոյսին կատարման աւետիսը
կու տան. անոնց աղօթքով, Տէ՛ր, պահէ՛ մեզ:

Եկայք, մանկունք Նահատակաց, ըզսոսա կալցուք
առ պարծանս մերոյ հայրենեաց, պի՛նդ վարեցուք
զաւանդութեամբք որոց վասըն սոքա ըզկեանս
իւրեանց եղին, եւ վարեցուք օրինակաւ մարտի
սոցա, եւ կըտակաւ զոր մեզ ետուն իբըր ազգիս
կենաց գըրաւ. աղօթիք սոցա, Տէ՛ր, կեցո՛ ըզմեզ:

Եկէ՛ք, զաւակներդ Նահատակներուն, զանոնք
նկատենք պարծանքը մեր հայրենիքին. պի՛նդ
փարիք այն աւանդութեանց, որոնց համար անոնք
իրենց կեանքը տուին. եւ մանաւանդ առաջնորդուինք
այն պայքարին օրինակով եւ կտակով որ անոնք
մեզի տուին՝ իբրեւ զբաւական մեր ազգի
կենդանութեան. անոնց աղօթքով,
Տէ՛ր, կեա՛նք տուր մեզի:



ՃԱՇՈՒ
(Ձայն չորրորդ Ձայն, դարձուածք)

Այսօր բերկրանքով Հայաստանեայց Եկեղեցին...
(Տե ս վերը, Մանկունք)

ՀԱՄԲԱՐՁԻ
(Ձայն Առաջին կողմ, դարձուածք)

Ով երանեալ սուրբ վկաներ...
(Տե ս վերը, Տէր Յերկնից)

¹ Հմմտ. Եբր 11.4:

² Յյտ 6.10:

³ Հմմտ. Ես 53.7:

⁴ Հմմտ. Ես 53.8-9:

⁵ Գրծ 8.32-35:

⁶ Հմմտ. Եբր 11.24-26:

⁷ Հմմտ. Մտ 7.6:

⁸ Հմմտ. Փաւստոս, Գ. դպր., ԺԱ. գլուխ:

⁹ Հմմտ. Մր 4.20:

¹⁰ Հմմտ. Հռ 8.35:

¹¹ Յհ 12.26:

¹² Հմմտ. Եբր 11.33:

¹³ Հմմտ. Յհ 14.2-3:4

¹⁴ Հմմտ. Եբր 12.22-23:

¹⁵ Հմմտ. Հռ 8.29: Եբր 2.11-12, 17: Յհ 20.17



¹⁶ Հմմտ. Մտ 5.10:


¹⁷ Հմմտ. Բ Կր 5.1:

¹⁸ Հմմտ. Ռն 3.57:

¹⁹ Հմմտ. Եբր 12.2, 10:

²⁰ Հմմտ. Բ Կր 12.10:






- 21 Հմմտ. Ղկ 2.35:
- 22 Հմմտ. Յհ 19.27:
- 23 Հմմտ. Յկ 5.16:
- 24 Հմմտ. Ծն 18.23-32:
- 25 Հմմտ. Ա. Տմ 1.18:
- 26 Հմմտ. Բ. Տմ 4.7:
- 27 Հմմտ. Եփ 6.14, 16-17:
- 28 Հմմտ. Մտ 10.38:
- 29 Հմմտ. Ա. Պտ 2.21:
- 30 Հմմտ. Բ. Կր 4.10:
- 31 Հմմտ. Ա. Պտ 4.14:
- 32 Հմմտ. Բ. Տմ 2.12: Յյտ 22.5:
- 33 Հմմտ. Մտ 3.17:
- 34 Հմմտ. Մտ 25.34:

ԵԿԵՐԵՅԱԿԱՆ-ԵՐԱՆՃՏԱԳՈՒՏԱԿԱՆ

ՎԱՅ ԵԿԵՐԵՅԱԿԱՆ ԵՐԳԻՆ ԾԱԳՈՒՄՆ
ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

ՔԱՆԻ ՄԸ ԽՈՍՔ ՄԵՂԵՒԻՆԵՐՈՒՆ, ՏԱՂԵՐՈՒՆ
ԵՒ ԳԱՆՁԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ



ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԻՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Յաճախ մենք կը պարծենանք մեր եկեղեցական երաժշտութեան գեղեցկութիւններով, եւ արդարօրէն: Թերեւս չենք այդ գիտակցիր թէ ճիշդ ինչի՞ն մէջ է այդ գեղեցկութիւնն ու գրաւչութիւնը. բայց կը բաւէ որ զայն կը զգանք, մանաւանդ երբ ուրիշ եկեղեցիներու արարողութեանց ներկայ կ'ըլլանք եւ ինքնաբերաբար մեր միտքը բաղդատութեան եզրեր կը փնտռէ: Ասոր համար նաեւ հպարտ կը զգանք մենք զմեզ:

Արդեօք ասոնք ենթակայական տրամադրութիւններ են միայն եւ մեր ազգային ԵՍ-ին եւ ինքնախաբէական պարծենկոտութեան արտայայտութիւններ են պարզապէս: Խօսքը տանք երաժշտութիւտական հանրագիտարանի մը, որ կը կոչուի *Groves Dictionary of Music & Musicians* (5th ed. London, 1954, Vol. II, "Eastern Church Music"): Հայ եկեղեցւոյ երաժշտութեան բաժինին մէջ անկէպէտ կ'ըսէ. «Հայաստանը ունի եկեղեցական երգի դպրոց մը, որ ծանօթ այն լեզուէն բոլոր ոճերուն մէջ իր ծայր աստիճանի արտայայտչականութեամբ իր յաջգի հարստութեամբ ամենէն գեղեցիկներու կարգին կը դասուի: Միայն դպրոցը, որ անոր հետ կրնայ բաղդատուիլ թի՛ր զանազանն է. զոր անկկա (հայկականը) շատ մը կողմերով կը զարգանցէ»:

Բայց ինչ ք թողունք խօսքերն ու զգացումները եւ մեր միտքերը բանանք մեր եկեղեցական երաժշտութեան ծագման եւ զարգացման մասին ճշտօրէն տուեալներ տեսնելու եւ հասկնալու համար:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՆՃԱՐՈՒՆԵՐ ԻՒՃ:
1. Երաժշտի ջանք զոր, բնականաբար, կ'ուզենք պատմաբար յայնչ թէ ուրեք մը զայն մեր եկեղեցական երաժշտութիւնը: Այն ուրեքները էջոք, անոր մեծերը:

Ամէնէն դիրքին պատասխանը եւ բացատրութիւնը, զոր տուեր են այս հարցը դիմագրաւող պատմաբանները կամ երաժշտագէտները, եղած է այն, որ մեր եկեղեցական երգերը փոխառութիւն եղած են կամ, առնուազն, ուղղակի ազդեցութիւնը կը կրեն ասորական եւ յատկապէս յունական եկեղեցական երաժշտութեան: Չէ՞ որ Դ. դարուն, մեր Եկեղեցւոյ կազմակերպական կեանքին առաջին հարիւրամեակին, պաշտամունքը այդ երկու լեզուներով եւ յաճախ նաեւ յոյն եւ ասորի եկեղեցականներով կը կատարուէր: Տակաւին, ասոր զօրաւոր ապացոյց մը չէ՞ նաեւ այն, որ մեր եկեղեցական երաժշտութիւնը նմանութիւններ ունի բիւզանդականին հետ:

Դժբախտաբար, այս աժան տեսութիւնը իր պաշտպաններն ունեցաւ: Նոյնիսկ Կոմիտաս Վարդապետի աշակերտներէն մէկը Սպիրիտոն Մելիքեան առանձին գիրք մը գրեց այս մասին «Յունական Ազդեցութիւնը Հայ Երաժշտութեան Տեսականին Վրայ» (Թիֆլիս, 1914) իր ուսուցիչին ազգային տեսութիւնը ջրել փորձելով: Բայց ի զուր, որովհետեւ գործնական վերլուծումները ուրիշ բան կ'ըսեն: Այդ վերլուծումներու հիման վրայ, լուրջ երաժշտագէտները բոլորն ալ կը հաստատեն, թէ մեր եկեղեցական երաժշտութիւնը ուրիշ բան չէ՞ եթէ ոչ հայ ժողովրդական երգին ծնունդն ու զարգացումը, կամ աւելի ճիշդ՝ անոր երկուրեակը՝ կրօնական բովանդակութեամբ եւ տարագով:

Ինչպէ՞ս կը հաստատուի ասիկա:

Կոմիտաս Վարդապետ իր երաժշտական առաքելութեան ընթացքին, գեղջկական շրջաններու մէջ ոչ միայն ժողովրդական երգեր կը ծայնագրէ, այլ՝ կը ծայնագրէ նաեւ եկեղեցական երգի նմոյշներ, եւ բաղդատելով ժողովրդական երգերուն, ինչպէս նաեւ շարականներու պարզ եղանակներուն հետ, անոնց միջեւ կը տեսնէ անմիջական կապը, սերտ ազգակցութիւնը:

Յետագային ուրիշներ նոյնը պիտի հաստատէին նորանոր քննութիւններով եւ յաւելեալ լուսաբանութիւններով: Ասոնցմէ ամէնէն աչքառուն Լենինկրատի երաժշտանոցի դասախօս եւ մեծ երաժշտագէտ Փրոֆ. Քրիստափոր Քուշնարեանը կը հաստատէ, թէ մեր հոգեւոր երաժշտութիւնը օտար ծագում չունի, այլ՝ ծնունդ է հայ ժողովրդական երգին: Եկեղեցին ժողովրդական մեղեդիները եղածին պէս փոխ չէ առած՝ պարզապէս կրկնելով զանոնք, այլ՝ փոխած է եւ պատշաճեցուցած: Պահպանուածը՝ ծայնաշարային հիմքն է եւ մեղեդիական շարժման ընդհանուր շրջագիծերը, իսկ փոփոխութեան ենթարկուած են կշռոյթներն ու ձեւերը (տես «Ակնարկ Հայ Երաժշտութեան Պատմութեան», Երեւան, 1963, Ա. մաս «Հայ Երաժշտու-

թիւնը Ծագումից Մինչեւ 19-րդ Դարը», էջ 26): Փրոֆ. Քուշնարեան կ'ըսէ, թէ ժողովրդական երգերուն մէջէն միաձայն խումբով երգուող եւ յստակ կշռոյթ ունեցող հեթանոսական պարերգները մօտիկ են եկեղեցական սաղմոսերգութեան, իսկ միայնակ երգուող քնարական երգերը մօտիկ են շարականներու երգեցողութեան (անդ, էջ 25):

Պէտք չենք զգար ուրիշ վկայութեանց: Բայց, քանի յիշուեցաւ որ Եկեղեցին ժողովրդային երգը առած եւ պատշաճեցուցած է եկեղեցական երգին, քանի մը խօսք այդ մասին անոր ծագումը աւելի բացայայտելու ճիգով:

Նախ հարցնենք, ե՞րբ է որ ծնած է հայ երգը: Դժուար է պատասխանել: Ամէն երգ կը ծնի ժողովուրդին հետ իսկ, անոր նախնական բացականչութեանց եւ խօսակցական ելեւէջներուն հետ միասին: Հայ ժողովուրդը կազմող նախաբնիկները հարկաւ բոլորն ալ ունէին իրենց երգը, որոնցմէ տարրեր անպայմանօրէն գոյատեւեցին եւ պահուեցան հայ երգին մէջ, եւ սակայն իսկական հայ ժողովրդային երգին մասին կարելի է խօսիլ միայն հայ ժողովուրդի կազմաւորման թուականներէն, այսինքն՝ Ն.Ք. Չ. դարէն սկսեալ: Արդ, մեր ժողովուրդը իր կազմաւորման օրերէն սկսեալ ունէ՞ր պաշտամունքային յատուկ երգեր: Վստահաբար ունէր, որովհետեւ հեթանոսական պաշտամունքը ժողովրդային մակարդակի վրայ անպայման որ հայերէն կ'ըլլար, նոյնիսկ եթէ ազնուական որոշ խաւերու մէջ կամ կարգ մը օտար մշակոյթներով (օր. Տիգրան Մեծի շրջանին յունական) ներթափանցուած քաղաքներու մէջ օտար լեզուով պաշտամունք գոյութիւն ունենար: (Նոյնիսկ հիթիթ քուրմերու դաս մը կար, որ խեթերէն լեզուով պաշտամունք կը կատարէր Անահիտ դիցուհիին նուիրուած մեհեանի մը մէջ – տես Քուշնարեան, անդ, էջ 20): Մեր հեթանոսական շրջանի պաշտամունքային երգերէն էր, օրինակ, Վահագնի երգը.

«Երկնէր երկին, երկնէր երկիր,
երկնէր եւ ծովն ծիրանի...»:

Ա՛յդ, ուստում մը ընելով մինչեւ Դ. դարու սկիզբը քրիստոնէութեան պետական կրօնք հռչակումը, կը տեսնենք որ Գրիգոր Լուսաւորիչ դարձի եկող քուրմերը եւ անոնց գաւակները ընդունեցաւ Եկեղեցւոյ ծառայութեան մէջ որպէս քահանաներ ու եպիսկոպոսներ: Այս մարդիկը, գիտակցաբար թէ անգիտակցաբար, իրենց հետ պիտի բերէին նաեւ իրենց ծանօթ երաժշտական ժառանգութիւնը եւ այդ ժառանգութիւնը պիտի ենթահող դառնար քրիստոնէական Եկեղեցւոյ երգաստեղծութեան: Յստակ է, որ Եկեղեցին բնաւ փոխ չառաւ հեթանոսական պաշտամունքային երգերը, այլ՝ անոնց եղանակային

տարրերով եւ սկզբունքներով ստեղծուեցան նոր երգերը: Իսկ այդ եղանակները, կը կրկնենք, հայ ժողովուրդին բնորոշ եւ հայ ժողովրդական երգերուն մէջ առկայ ծայնեղանակներն էին, եւ հետեւաբար, իրենց ծագումով իսկ հարազատ եւ ազգային:

Ճշդելէ ետք մեր եկեղեցական երաժշտութեան հարազատ աւելումը, տեսնենք հիմա, թէ.

2) ՈՐՈ՞ՆՔ ԵՂԱԾ ԵՆ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՀԻՆ ՏԱՐՐԵՐԸ

Բոլոր եկեղեցիներու պատմութենէն կը տեսնենք, որ սկզբնապէս, արարողութեանց հիմնական մասը կը գրաւեն սաղմոսները, որոնք սկիզբը պարզապէս կը կարդացուէին, բայց շուտով ընթերցումը փոխարինուեցաւ թուերգով եւ ասերգով (Recitative). սաղմոսներու այս կէտեղանակաւոր կամ եղանակաւոր ընթերցումը յատուկ բառով կը կոչուի ՍԱՂՄՈՍԵՐԳՈՒԹԻՒՆ:

Մեր մէջ հայկական սաղմոսերգութիւնն սկսաւ Դ. դարուն: Որքան ալ արարողութեանց մէջ տիրապետող լեզուն յունարէնը կամ ասորերէնն ըլլար, պատրաստուած հայ եկեղեցականներ շուտով սկսան բերանացի թարգմանել սաղմոսները եւ որոշ աղօթքներ: Սաղմոսներու այս հին թարգմանութեան ապացոյցը նոյնինքն այդ թարգմանութեան գոյութիւնն է մինչեւ այսօր՝ Աստուածաշունչին հետ իրականացած միւս թարգմանութեանց առընթեր:

Ըստ Ե. դարու սկիզբէն մեզի հասած պատկերին, սաղմոսները ութը կանոններու բաժնուած էին, իւրաքանչիւր կանոնը 7 գուրդաներէ (մասերէ) բաղկացած (իսկ իւրաքանչիւր գուրդայ՝ 2-6 սաղմոսներէ): Իւրաքանչիւր կանոնի առաջին 6 գուրդաները կը կատարուէին թիւ երգեցողութեամբ, այսինքն՝ ընդհանրապէս միօրինակ ընթացքով մը, բառային շեշտերուն հետ երբեմն ելեւէջը փոխելով, 4-5 հնչիւններու սահմանին մէջ (երգելու այս կերպը կը կոչուի նաեւ ՉԱՓՈՂԵԼ). իսկ եօթներորդ գուրդան որ սաղմոսականոնին վերջինն ըլլալուն համար կոչուած է ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ, կը կատարուէր երգային սկզբունքով մշակուած եղանակով: (Յովհաննէս Օծնեցի սաղմոսերգութեան այս կերպը, այսինքն՝ անպաճոյճ գուրդաներէն ետք կանոնագլուխին հանդիսաւորութիւնը, կը նմանցնէ Յետուի հրամանով երրայեցիներուն 7 անգամ Երիթովի շուրջ դառնալուն, երբ 7-րդ անգամին փող հնչեցուցին եւ ուժգին աղաղակով կործանեցին Երիթովը): «Մենք ալ, - կ'ըսէ Օծնեցի, - մեր զօրավարին Յիսուսի հրամանով նախ 6 գուրդաներով կը շրջապատենք սատանային նենգութիւնները, իսկ եօթներորդ գուրդաները, այսինքն՝ կանոնագլուխները, բարձրահնչիւն

աղաղակով կ'երգենք՝ բանսարկուին զօրութիւնը փշրելու համար, իսկ ապա ութերորդ [դարաշրջանին] խորհուրդը վեր կ'առնենք ուրիշ մարգարէներէ քաղուած օրհնութիւններ մատուցանելով ամէնուն Տիրոջ, որպէս օրինակ գալիք [կեանքին], երբ հրեշտակներու խումբին հետ անդադար [զԱստուած] պիտի օրհնենք» («Մատենագրութիւնք», Վենետիկ, 1953, էջ 130):

Թիւ երգուող սաղմոսները կը կարդացուէին երկու դասերուն կողմէ փոխն ի փոխ, խումբով: Այս ձեւը կը կոչուի ՓՈՒՆԱՍԱՑՈՒԹԻՒՆ: Իսկ կանոնագլուխները կ'երգուէին նախ մենեքողներու կողմէ եւ ապա խումբով՝ միշտ երկու դասերուն կողմէ փոխն ի փոխ: Այս ձեւը կը կոչուի ՓՈՒՆԵՐԳՈՒԹԻՒՆ:

Սաղմոսերգութենէն ետք, մեր պաշտօնեղութեան մաս կազմող առաջին երգերն եղան «Փառք ի բարձունս»-ը եւ շաբաթ երեկոները երգուող «Լոյս Ջուարթ»-ը, որոնք երկուքն ալ Առաքելական Սահմանադրութիւններէն կու գան եւ յատուկ են բոլոր եկեղեցիներուն: Ասոնց սկզբնական եղանակները մշակուած եւ ճոխացած են աւելի ուշ, հաւանաբար Է.-Ը. դարերուն: Աւելի նախնական ձեւ մը կը պահէ «Փառք ի բարձունս»-ի յորդոր եղանակը:

3) ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՒՅՆ ԱՌԱՋԻՆ ԵՐԳԵՐԸ – ԿՑՈՒՐԴՆԵՐ

Սաղմոսերգութեան մասին խօսած ատեն մեր Օծնեցի Կաթողիկոսէն կատարուած մէջբերումով յիշած եղանք, որ իւրաքանչիւր կանոնագլուխի երգեցողութեան կը յաջորդէին մարգարէներէ քաղուած ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ, եւ որովհետեւ ութը սաղմոսականոններ կան, այս օրհնութիւններն ալ թիւով ութը հատ են.

ա) Օրհնութիւն Մովսիսի եւ որդւոցն Իսրայէլի - «Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ...» (Ելք 15):

բ) Օրհնութիւն մեծին Մովսիսի աստուածատես մարգարէին - «Նայեցարուք երկինք, եւ խօսեցայց...» (Բ. Օր 32):

գ) 1) Օրհնութիւն մեծին Մովսիսի աստուածատես մարգարէին - «Ձի հուր բորբոքեցաւ ի բարկութենէ իմմէ...» (Բ. Օր 32):

2) Նորին Մովսիսի - «Ծաներուք եւ տեսէք զի Ես եմ, եւ ո՛չ գոյ այլ Աստուած բաց յիմէն...» (Բ. Օր 32):

դ) Աղօթք Աննայի՝ մօրն Սամուէլի - «Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր եւ բարձրացաւ եղջիր իմ...» (Ա. Թգ 2):

ե) Օրհնութիւն որդւոյն Ամովսայ - «Ի գիշերաց կանխէ հոգի իմ առ Քեզ, Աստուած, զի լոյս են հրամանքդ Քո ի վերայ երկրի...» (Ես 26):

զ) Աղօթք Եզեկիայի արքայի Հրէաստանի - «Ես ասացի ի վերա-

նալ յինէն աւուրց իմոց...» (Ես 38):

է) 1) Օրհնութիւն Եսայեայ կայծակնամաքուր սուրբ մարգարէին - «Օրհնեցէք զԱստուած յօրհնութիւն նոր...» (Ես 42):

2) Յովնանու մարգարէին - «Ի նեղութեան իմում ես առ Տէր կարողացի...» (Յվն 2):

ը) Ամբակումայ մարգարէին - «Տէ՛ր, զլուր քո լուայ եւ երկեայ: Տէ՛ր, հայեցայ ի գործս Քո եւ զարհուրեցայ...» (Ամբ 3):

Ինչպէս կանոնազուլիւները, այնպէս ալ հետեւող մարգարէական այս օրհնութիւնները կ'երգուէին, բայց ոչ անպայման կանոնազուլիւներու եղանակով սկսուած ծայնեղանակով: Ներկայիս այս օրհնութիւններուն եղանակները չենք գիտեր, բայց Միջին Դարերուն անոնցմէ ոմանք նոյնիսկ խազերով ծայնագրուած են:

Շուտով, սաղմոսներուն եւ օրհնութիւններուն կից սկսան երգուիլ սեղմ ծաւալով երգեր, որոնք մարգարէական օրհնութիւններուն կցուած ըլլալուն համար ալ կոչուեցան ԿՑՈՒՐԴ [ասորական եւ յունական համապատասխաններն են - madhrase եւ τροπαριον]: Այս կցուրդներն իրենց բովանդակութեամբ յարասութիւն էին, այսինքն՝ գրեթէ կրկնութիւնն էին մարգարէական օրհնութեանց կամ սաղմոսներու բովանդակութեանց, թէպէտ աւելի ազատ ձեւով, եւ ընդհանրապէս երեք կարճ տուներէ բաղկացած: Ասոնց ամէնէն տիպական մնացորդներն են Աւագ Օրհնութիւնները՝ իրենց ամբողջութեամբ:

Այս կցուրդներուն մէջ երաժիշտները իրենք գիրենք աւելի ազատ կը զգային եղանակային գիծը մշակելու, եւ ասիկա, միաժամանակ, առիթ կ'ըլլար որ սաղմոսերգութեան միապաղաղութիւնը համեմուի:

Շատ հաւանաբար, ԿՑՈՒՐԴՆԵՐՆ սկսան երգուիլ նոյնիսկ Դ դարու ընթացքին, բերանացի թարգմանութեանց ընթացքին եւ նոյնինքն սաղմոսերգութեան զուգահեռ: Ասիկա կը թելադրեն մեզի հասած կարգ մը շարականներու թէ՛ բովանդակութեան եւ թէ՛ երաժշտութեան չափազանց պարզութիւնն ու նախնականութիւնը: Օրինակ, Ապաշխարութեան ԴԿ շարականներու Մանկունքն է հետեւեալը.

- 1) «Է անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչեւ յաւիտեան:
 - 2) Եւ եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչեւ յաւիտեան:
 - 3) Փառաւորեալ անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչեւ յաւիտեան»:
- Կցուրդներու ստեղծումով սկիզբ դրուած կ'ըլլայ բնիկ հայկական

եկեղեցական երգին: Եւ արդարեւ, Ե. դարուն սկիզբը մեր թարգմանիչները, որոնք Աստուածաշունչին հետ մեր եկեղեցական արարողութիւններն ալ հայացուցին հետեւողականօրէն, եղան նաեւ կցուրդներու հեղինակներ եւ մեծ թափով յօրհնեցին ամէն տօներու եւ առիթներու պատշաճող նման երգեր, որոնք նաեւ արագ տարածում գտան ժողովուրդին մէջ: Ղազար Փարպեցի, պատմելէ ետք գիրերու գիւտին եւ Աստուածաշունչի առաջին ամբողջական թարգմանութեան մասին, կ'ըսէ թէ «անմիջապէս վերջը ամէն տեղ ժողովուրդի ուսման համար դարոցներ բացուեցան, (ընդօրինակող) գրիչներ սկսան մրցումի ելլել իրարու հետ, Սուրբ Եկեղեցւոյ պաշտամունքը ճոխացաւ, եւ մարդիկ, այդ թէ կին, մեծ բազմութիւններով կը փութային եկեղեցի, ըլլայ փրկչական տօներուն, ըլլայ մարտիրոսներու տօնակատարութեանց: Իսկ այնտեղէն դուրս կու գային բաւարարուած, հոգեւորապէս օգտուած եւ ուրախ, որովհետեւ հաղորդակից կը դառնային մեծ խորհուրդին: Եւ իւրաքանչիւրը, տարեց թէ պատանի, իր տունը կը դառնար սաղմոսելով եւ կցուրդներ երգելով ամէնուրեք թէ հրապարակներու վրայ, թէ փողոցներու մէջ եւ թէ տուներէն ներս» («Պատմութիւն Հայոց», Դ. տպ., Վենետիկ, 1933, էջ 51-52):

Ը. դարուն Յովհան Օծնեցի Կաթողիկոս իր «Ատենաբանութեան» մէջ (Թ. կէտ) կը յիշէ, թէ Ե. դարու մեր երանելի վարդապետները Քրիստոսի մկրտութեան վերաբերեալ «գեղեցկանուագ կցուրդներ» յօրհնեցին (Մտ էջ 22): Մեր Յայսմաւուրքը 17 Սեպտեմբեր թուականին տակ Թարգմանչաց տօնին մասին խօսելով կ'ըսէ. «Շարականներու երգեր ստեղծեցին՝ բոլոր ծայներով եղանակներ յօրհնելով. իսկ Սահակ Պարթեւ Հայրապետը այդ եղանակները տասը ծայներու բաժնեց»: Կիրակոս Գանձակեցի պատմիչը նոյնիսկ կը ճշդէ Թարգմանիչներու կողմէ ստեղծուած երգերու տեսակները. «Շարականներ ու երգեր ալ ստեղծեցին, քաղցր ու գեղեցիկ եղանակներով եւ խոր բովանդակութեամբ. - Քրիստոսի ծննդեան, Քառասնօրեայ Տաճար գալուստին, Մկրտութեան, Բեթանիա ու Երուսաղէմ գալուն (Ղազարու յարութիւն եւ Ծաղկազարդ), Աւագ Շաբթուան, Չարչարանաց եւ Յարութեան, Համբարձման եւ Հոգեգալստեան, Խաչի եւ Եկեղեցւոյ, եւ տէրունի ուրիշ տօներու, բոլոր սուրբերուն, ապաշխարութեան եւ բոլոր ննջեցեալներուն յատկացուած, զանազան տեսակի եւ անթի: Եւ ասոնք մինչեւ այսօր կը գործածուին Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ» (Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Երեւան, 1961, էջ 29-30):

Այս վկայութիւնները յիշեցի պարզապէս ցոյց տալու համար, թէ

ինչպէս մեր եկեղեցական երաժշտութեան առաջին այս հանգրուանը, միաժամանակ, անոր զարգացման ամենաբուռն շրջանն է, երբ շարականները պարզուկ կցորդի, հետեւողի եւ կրկնողի վիճակէն յանկարծ դուրս կու գան եւ կը դառնան անկախ ստեղծագործութիւններ թէ՛ բովանդակութեամբ ինքնատպութեամբ ու խորութեամբ (ինչպէս Գանձակեցին արդարօրէն կը շեշտէ) եւ թէ եղանակային մեծ հարստութեամբ:

4) Թերեւս այստեղ պէտք է ըսենք հետեւեալը.- Ե. եւ Զ. դարերուն եկեղեցական մեր երգը կը զարգանայ ազատ կերպով, ամէն ուղղութեամբ եւ բոլոր ձեւերով: Բայց եւ այնպէս, յիշեալ երգերը Եկեղեցւոյ մէջ չեն գործածուիր կանոնաւորապէս, որովհետեւ տակաւին ընդհանուր ձեւ մը եւ կանոն մը գոյութիւն չունի: Ե. դարուն սկիզբը երբ Սահակ եւ Մեսրոպ մեր ժամակարգութիւնը կարգի դրին եւ ժամագիրքը կազմեցին, ժամակարգութեան մէջ կանոնականացուցին միայն սաղմոսները, աղօթքները, ինչպէս եւ վերեւ յիշուած երկու երգերը՝ «Փառք Ի Բարձունս» եւ «Լոյս Զուարթ»: Կցուրդները կանոնի չենթարկուեցան: Ի՞նչ կ'ըլլար ուրեմն: Երաժշտական քիչ թէ շատ կարողութիւն ունեցող ռեւէ մէկը կը գրէր կցուրդ մը կամ երգ մը եւ նայած թէ ինչ տօնի կամ առիթի կը վերաբերի՝ կը բերէր եկեղեցի եւ անձամբ կը կատարէր տուեալ առիթին: Սիրուած եղանակները տարածում կը գտնէին, միւսները ոչ: Շարականներու յօրինման եւ Եկեղեցի անցումին այս կերպը միշտ ալ եղած է նոյնը, նոյնիսկ կանոնականացման ձեւը որդեգրուելէն ետք: Ներսէս Շնորհալի Հայրապետը, օրինակ, առատօրէն կը ստեղծագործէր եւ եկեղեցւոյ մէջ ալ կ'երգէր. իր այդ յօրինումներուն մեծ մասը յետագային էր որ ընդհանրացան եւ կանոնականացան: Թերեւս աւելի հետաքրքրական օրինակ մըն է հետեւեալը. ԺԳ. դարու սկիզբները Զաքարէ սպասալար Լոռիի մօտերը իր բանակին եւ հիւր հոգեւորականներու համար բացօթեայ Պատարագ մը մատուցանել հրամայած էր: Այդ Պատարագին ներկայ էր նաեւ Հաղարծինի վանքի վանահայր եւ նշանաւոր երաժիշտ-խազագէտ Խաչատուր Տարօնեցին, որ Պատարագի սկզբնաւորութեան ելաւ եւ սկսաւ երգել իր հեղինակած «Խորհուրդ Խորին» ծանօթ երգը, որ յետագային ընդունուեցաւ եւ դարձաւ անբաժան մասը Պատարագին:

Բայց չկարծուի որ այս երեւոյթին օրինակները միայն ուշ ժամանակներէն կու գան: Շատ ծանօթ օրինակ մըն է Հռիփսիմեանց կոյսերուն նուիրուած «Անձինք Նուիրեալք» շարականին յօրինման պատմութիւնը: Հռիփսիմեան կոյսերու նահատակութեան վայրին

վրայ փոքրիկ եւ ցած մատուռ մը շինուած էր Սահակ Կաթողիկոսին օրով: Է. դարուն սկիզբը Կոմիտաս Կաթողիկոս այդ մատրան տեղ շինել տուաւ այժմու հրաշալի եկեղեցին Հռիփսիմեանց նշխարները անոր խորանին տակ ամփոփելով: Տաճարին կառուցումը աւարտեցաւ 618 թուականին: Եկեղեցւոյ նաւակաւորին, այսինքն բացումին առիթով Կոմիտաս Կաթողիկոս գրեց շատ գեղեցիկ շարական մը, եւ անշուշտ այդ առիթով ալ անիկա առաջին անգամ երգուեցաւ եկեղեցւոյ մէջ:

Կոմիտաս Կաթողիկոսի «Անձինք Նուիրեալք»-ը աչքառու է թէ իբրեւ բանաստեղծութիւն եւ թէ՛ իբրեւ եղանակ: Կը բաղկանայ 36 տուներէ, որոնցմէ իւրաքանչիւրը կը սկսի հայկական այբուբենի մէկ տառով, եւ գրուած է հայկական հին չափով (6-6): Երկու այս երեւոյթներն ալ նոր են հոգեւոր երգեցողութեան մէջ: Որպէս ծանօթութիւն ըսենք, թէ առհասարակ տաղաչափութիւնը չէր գործածուէր եկեղեցական երգերու պարագային, որովհետեւ 360 թուականին Կաթողիկէի մէջ գումարուած եկեղեցական ժողով մը - որուն կանոնները ընդունած էր մեր Եկեղեցին - բանաստեղծութեան մէջ չատանջն արուեստը հեթանոսական համարելով կ'արգիլէր անոր գործածութիւնը: Հետաքրքրական է նշել, որ այդ կանոնին առաջին դէս գացողը Կաթողիկոս մըն է, բան մը, որ յետոյ աւելի մեծ չափով պիտի ընէր ուրիշ Կաթողիկոս մը՝ Ներսէս Շնորհալին:

Երաժշտականօրէն նայելով Կոմիտաս Կաթողիկոսի շարականին, հոն ալ բացառիկ եղանակ մը կը գտնենք, եղանակ մը. որ իր ինքնուրոյն դիմագիծին բերումով ամենայն հաւանականութեամբ զգալի փոփոխութիւն մը չէ կրած յետագայ դարերուն: Զարտուղի ԴԿ. եղանակ մըն է անիկա, որուն մշակուածութիւնը արդէն հոգեւոր եղանակներու զարգացման բարձր մակարդակ մը ցոյց կու տայ: Ասիկա եւս առիթ է որ հոգեւոր երգի զարգացման ընթացքը հասկնալու շատ կարելի երեւոյթ մը պարզենք:

Եկեղեցական երգը միշտ ալ անհատ հեղինակի մը ստեղծագործութիւնն ըլլալով սկիզբէն իսկ մասնագիտական (professional) հանգամանք կը կրէ: Այսուհանդերձ, զարգացման երկու յստակ ուղղութիւններ կարելի է գատորոշել: Առաջին ուղղութիւնը պարզ եւ անպաճոյճ ոճի շարականներուն մէջ ի յայտ կու գայ: Անոնք առհասարակ ստեղծուած եւ պահպանուած կը թուին ըլլալ քաղաքներէն եւ մշակութային մեծ կեդրոններէն հեռու գաւառական եկեղեցիներուն մէջ, ուր նորոյթները եւ օտար ազդեցութիւնները չէին կրնար շարունակել: Հետեւաբար, այս տիպին մէջ ինկող շարականները աւելի հարազատ կերպով կ'արտացոլեն արանդական անխառն եղանակները:

Կայ նաեւ երկրորդ ուղղութիւն մը, զոր կը տեսնենք բարձր եւ զարդարուն ոճի շարականներուն մէջ: Այս տիպի երաժշտութիւնը զարգացած է ընդհանրապէս նշանաւոր վանքերուն եւ անոնց կից եկեղեցիներուն, ինչպէս նաեւ կաթողիկոսանիստ կեդրոններու մէջ, ուր մասնագիտացած եւ, յաճախ, Հայաստանէն դուրս երաժշտական կրթութեան հետեւած անձեր կ'ըլլային: Չկարծուի թէ այս մարդիկը անպայման օտար ազդեցութիւններ պիտի բերէին իրենց հետ: Ասոնց ալ երաժշտութեան ձայնեղանակային հիմը նոյն աւանդական-ազգայինն է, եւ սակայն, բնականաբար, կը յայտնուին նոր ձեւեր, ճոխանալու, ընդարձակուելու եւ զարդարուելու ձգտումներ՝ որպէս բնական հետեւանք աւելի մասնագիտական ըմբռնումի եւ ուրիշ մշակոյթներու հետ շփումին: Այս մասին անդրադառնալու առիթ մը եւս պիտի ունենանք քիչ ետք:

5) Հոգեւոր երգի զարգացման երկրորդ հանգրուանն է՝ ստեղծուած երգերուն վաւերացումը եւ կանոնի ստեղծումը:

Ե՞րբ եղաւ առաջին վաւերացումը:

Կցուրդներու մասին խօսած ատեն անդրադարձանք, որ անոնք ազատ կերպով կ'աճէին թէ՛ թիւով եւ ձեւով եւ թէ՛ եկեղեցին չէր պաշտօնականացներ զանոնք: Բայց, կը տեսնենք, եկաւ հանգրուան մը, ուր արդէն պէտք տեսնուեցաւ ընտրութիւն ընել եւ որոշ բաներ ընդհանրացնել:

Առիթը ստեղծուեցաւ այսպէս: 641-ին Աթոռ բարձրացած Ներսէս Իշխանցի Կաթողիկոսը, որ Շինող կոչուեցաւ, իր տարեկան այցելութեանց առթիւ զացած էր Բագրեւանդ գաւառ՝ Բագաւանի Ս. Յովհաննէս եկեղեցիին մէջ Վարդավառի տօնախմբութեան ներկայ ըլլալու: Շրջակայ բոլոր գաւառներէն ահագին բազմութիւն եկած էր. եկած էին նաեւ մեծ թիւով երաժիշտներ եւ երգեցողներ՝ իրենց շնորհքները ցոյց տալու համար: Եկաւ «Հարց»-ը երգելու պահը, եւ մէկն սկսաւ երգել հարց մը, բայց դիմացի դասէն այդ հարցը չշարունակուեցաւ, այլ՝ երկրորդ մը՝ ուրիշ հարց մը սկսաւ: Նոյնը պատահեցաւ ուրիշ անգամ. ամէն անգամ տարբեր հարց մը երգեցին: Շփոթն աւելցաւ եւ տօնը խանգարուեցաւ: Պատճառ՝ Շարականները այնքան շատցած էին եւ իւրաքանչիւր եկեղեցւոյ երաժիշտ ծանօթ էր միայն իր շրջանին մէջ ընդհանրացած եղանակներուն, այնպէս որ բախումը անխուսափելի պիտի ըլլար: Ասոր վրայ, Ներսէս Կաթողիկոս հրահանգեց Շիրակի Դպրեվանքի առաջնորդ Բարսեղ ճոն երաժշտագէտ վարդապետին, որ հաւաքէ բոլոր շարականները, անոնց մէջէն ընտրէ լաւերը եւ Շարակնոց մը խմբագրէ եւ միայն այդ

շարականները սորվին: Բարսեղ ճոն յանձնարարութիւնը կատարեց, եւ այդպիսով մէջտեղ եկաւ իր անունով ճանչցուած «Ճոնընտիր» հաւաքածոն, որ հաւանաբար պաշտօնապէս ալ վաւերացուեցաւ 645 թուականին՝ Դուինի ժողովին մէջ:

Ասիկա, անշուշտ, կարեւոր հանգրուան մըն էր եկեղեցական ժամկարգութեան զարգացման մէջ, որովհետեւ այլեւս այդ երգերը պատահականօրէն չէր որ պիտի երգուէին եկեղեցւոյ մէջ, այլ պարտադրաբար՝ որպէս ժամերգութեան մաս: Բայց կայի՞ն արդեօք բոլոր տօներուն եւ օրերուն յատուկ երգեր, եւ եղածներն ալ ունէի՞ն որոշ կարգ մը կամ «կանոն» մը, որուն հետեւէին:

Ո՛չ, չունէին: Այդ հարցը լուծել փորձեց Ը. դարու առաջին կէսին Ստեփանոս Սիւնեցի, շատ հաւանաբար՝ որոշումովը եւ թելադրութեամբը 720 թուականին Դուինի մէջ գումարուած ժողովին, որ Եկեղեցւոյ ծիսական բարեկարգութեան յատուկ առաջադրանքն ունէր: Յաջորդ տասնամեակի ընթացքին Ստեփանոս առաջին հերթին ընդունուած շարականները դասաւորեց ըստ ութը ձայներուն եւ ըստ տօնական դրութեան: Անգամ մը այս խմբաւորումներն ունենալէ ետք, Ստեփանոս իւրաքանչիւր ձայնի եւ տօնի շարականները բաժնեց նաեւ ըստ իրենց տեսակներուն, եւ ըստ օրուան ժամերգութեանց ընդգրկած սաղմոսներուն՝ այդ տեսակներէն կազմեց ԿԱՆՈՆՆԵՐԸ, որոնցմէ իւրաքանչիւրը կը բաղկանար 8 տեսակէ՝ Օրհնութիւն, Հարց - Գործատուն, Մեծացուցէ, Ողորմեա, Տէր Յերկնից, Մանկունք, Ճաշու եւ Համբարձի: Իւրաքանչիւր կանոն մէկ օրուան շարականներուն ամբողջութիւնը կը ներկայացնէր:

Ըստ աւանդութեան, այս կանոնին հիման վրայ Ստեփանոս առաջին անգամ զբաղեցաւ դասաւորելով մարգարէական օրհնութիւններուն կապուած կցուրդները, որոնք առհասարակ խաչի փրկագործութեան եւ յարութեան գաղափարներով տոգորուած են, եւ անոնցմով կազմեց «Օրհնութիւն» տեսակի առաջին շարքը, որոնք ճիշդ այդ պատճառով ալ ստացան ԱԻԱԳ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ կոչումը:

Պէտք է նկատի ունենալ սակայն, որ բոլոր օրերուն համար յատուկ պատրաստ կանոններ չկային, ուստի առկայ կանոնները կրկնութեամբ կ'երգէին նաեւ ուրիշ օրերուն, ինչպէս հիմա մենք մօտաւորապէս նոյնը կ'ընենք ապաշխարութեան, մարտիրոսաց եւ յարութեան օրերուն: Յետագային էր, մասնաւորաբար ժԲ. դարուն, որ մեծ տօները իրենց բոլոր օրերուն համար յատուկ կանոններ պիտի ունենային եւ նոր կանոններ պիտի գրուէին կարգ մը սրբոց տօներուն համար:

Սակայն երբեք ալ պարտադիր չեղաւ որ, օրինակ, սուրբի մը

նուիրուած շարական յօրինողը անպայմանօրէն լման կանոն մը գրէ: Յաճախ, օրուան մը մէջ միայն մէկ տեսակի շարական (առհասարակ ՄԱՆԿՈՒՆՔ կամ ՀԱՄԲԱՐՁԻ) նուիրուած կ'ըլլայ յիշատակուող սուրբին, իսկ կանոնին մնացեալ տեսակները կրկնութիւնը կ'ըլլան մարտիրոսաց հասարակ կանոնին: Նոյն Ը. դարուն յօրինուած այդպիսի առանձին երգի մը յիշատակութիւնն ունինք, զոր կը մէջբերենք իր հետաքրքրութեան համար:

737 թուականի Աւագ Երկուշաբթի օրը նահատակուեցաւ Գողթնի Խոսրով նախարարին որդին Վահանը: Ըստ աւանդութեան, նահատակին քոյրը Խոսրովի դուստր այս առիթով որպէս եղերերգ երգեց «Չարմանալի է ինձ» բառերով 5 տուն շարական մը, որ յետագային Եկեղեցի անցաւ եւ սուրբին յիշատակի օրը կ'երգուի որպէս Մանկունք եւ Համբարծի: Անկախ ստեղծման այս բացառիկ պարագայէն, չափազանց հետաքրքրական է նաեւ երգին երաժշտական եղանակային կառոյցը. ԲՁ. ծանր եղանակ մըն է, որուն մէջ ԳՁ. եւ ԳԿ. խառն են, ճիշդ ինչպէս կանոնագլուխի ԲՁ.-ին մէջ, ինչ որ անոր ալ եղանակին հնութեան եւ հարազատութեան նշանն է, եւ միաժամանակ, հին ողբերգներու եղանակին մասին գաղափար կու տայ մեզի (մինչեւ վերջերս ալ յաճախ որպէս այդպիսին երգուած է մեռելներու վրայ):

6) Եկեղեցական երգի զարգացման երրորդ եւ վերջին հանգրուանը կարելի է համարել Ժ.-ԺԱ. դարերը:

Այս շրջանին ոչ միայն առատօրէն շարականները կը ստեղծուին, բայց մանաւանդ նոր տեսակներ եւ ձեւեր երեւան կու գան: Հետզհետէ աւելի կը զարգանայ զարդերուն ոճը, որոնցմով կը ստեղծուին տաղեր, մեղեդիներ, սրբասացութիւններ, գանձեր, ծանր շարականներ եւ ստեղիներ, որոնց կատարումը բարձր արհեստավարժութիւն (Technic) կը պահանջէ: Այս զարգացումը կ'ընթանայ զուգընթացաբար տաղային արուեստին, որ Ժ. դարէն սկսեալ յանկարծ կը ծաղկի:

ԺԲ.-ԺԳ. դարերուն հրապարակ կու գան երաժիշտներ, որոնք փոխանակ նոր շարականներ յօրինելու, անցեալի յօրինումները կ'առնեն եւ անոնց եղանակները կը «ծանրացնեն», այսինքն կը զարդարեն ըստ նոր ժամանակներու ըմբռնումներուն եւ ճաշակին: «Յատկանշական է այս տեսակէտից,- կ'ըսէ Նիկողոս Թահմիզեան,- որ ԺԳ.-ԺԴ. դարերուն Բիւզանդիայում եւս հանդէս են եկել μελοսργοι կոչուած երաժիշտներ, որոնք նոյնպէս հիմնականում հին երգերն են ծաղկեցնելով վերաեղանակաւորել» («Հանդիսաւոր Օրերի Կանոնա-

գլուխները», «Էջմիածին» ամսագիր, 1971, թիւ Թ., էջ 42):

Կոմիտաս Վարդապետ այն կարծիքէն եղած է, որ ծանր տիպի այս շարականներուն եւ երգերուն վրայ Միջին Դարերէն եկող պարսկական, արաբական եւ թրքական երաժշտութեանց ազդեցութիւնը կայ: Ուրիշ երաժիշտներ եւս այս տիպի երգերուն մէջ հայ ժողովուրդի հիմնական ծայնաշարերու փոփոխութիւն փորձած են տեսնել գանոնք բաղդատելով եւ մօտեցնելով արեւելեան ուրիշ եղանակներու հետ: Սակայն, ազդեցութիւն եւ փոփոխութիւն նոյն բաները չեն:

Շարականներու ծանր եւ զարդարուն այս տիպի ստեղծման տրամաբանական բացատրութիւնը կու տայ երաժշտագետ Նիկողոս Թահմիզեան. «Մեր եկեղեցական ծանր եղանակներուն բարդ ու ճոխ հիւսուածքը հաստատագրուած է ԺԲ.-ԺԳ. դարերի խազաւոր գրչագրերուն: Եւ ընդհանրապէս Հայ Եկեղեցու ծանր երգեցողութիւնը ոճական առումով ուրիշ բան չէ, քան զարգացած աւատատիրութեան ու բանաստեղծութեան մէջ եւս դրսեւորուած գեղազարդ-բողբոջախիտ արտայայտուելու կերպի համապատասխանը» («Հանդիսաւոր Օրերի Կանոնագլուխները», «Էջմիածին», 1971, թիւ Թ., էջ 42):

Այս երաժշտութեան արուեստը ծաղկած է յատկապէս վանական մեծ կեդրոններուն մէջ, մանաւանդ Կիլիկիա: Այդպիսի կեդրոններ եղած են Հռոմկլայ, Դրազարկ, Ակներ, Արքակաղին, Սկեւռայ, Մլիճ եւ Կարմիր վանքերը, ինչպէս եւ Սիսի Կաթողիկոսարանը: Հետաքրքրական է գիտնալ, որ կարգ մը վանքեր յատուկ դեր մը ստանձնած էին եկեղեցական երաժշտութեան կալուածին մէջ: Այսպէս, Կարմիր Կանքը Ե.-ԺԱ. դարու հին երաժշտական աւանդներու պահպանութեան նուիրուած էր: Սկեւռան շարականներու գրչագրութեան արուեստանոցն էր: Արքակաղինը հռչակուած էր Մանրուսման (այսինքն խազագրութեան) արուեստով: Հռոմկլան եւ Սիսը Շարակնոցի խմբագրութեան նուիրուած դպրոցներ էին, եւայլն (տես Հայկական Սովետական Հանրագիտարան, Ե. հատոր, էջ 427-429, «Կիլիկեան Երաժշտութիւնը»):

ԺԳ. դարու առաջին տասնամեակներուն տեղի կ'ունենայ շարականներու մեզի ծանօթ երկրորդ խմբագրութիւնը, այս անգամ արդէն խազագրուած ձեւով: Ասիկա տեղի կ'ունենայ Սիսի մէջ, Գրիգոր Խուլ կոչուած մեծ երաժշտագէտին ձեռքով, եւ կը վաւերացուի պաշտօնապէս: Ի միջի այլոց, այս երաժիշտը «Խուլ» կոչուած է անոր համար, որ, ըստ աւանդութեան, ականջները մոմով խցած է երաժշտութեան մէջ թափանցող նորաձեւութիւնները չլսելու եւ չզայթակղուելու համար... Ճանչցուած եւ յարգուած եղած է իբրեւ մեր աւանդական երաժշտութեան անաղարտ պահպանման պաշտպան:

ԺԲ. եւ ԺԳ. դարերուն շարականները եւ եկեղեցական երգեցողութիւնը իրենց զարգացման բարձրակէտին հասնելէ ետք կը սկսին նահանջ ապրիլ, կարծէք մէկ անգամէն կանգ կ'առնէ շարականներու մշակումը: Ընդհինի որ յաջորդ դարուն տակաւին ունինք մէկ-երկու շարականագիրներ, բայց, յայտնապէս, լարումը թուլցած է: Արդէն միւս կողմէ, եկեղեցին ալ իր դռները կը փակէր, ԺԵ. դարուն, ժամակարգութեան մէջ որեւէ նորութեան դիմաց, ուստի շարականագրութիւնը կը դադրի շուտով:

Այստեղ չենք անդրադառնար ԺԸ. դարու նորելուկ եղանակներուն մասին, թէպէտ անոնք ալ հայ հոգեւոր երգի պատմութեան մաս կը կազմեն:

ՉԱՅՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ ԵՒ ԹԻՒԸ. ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Եկեղեցական երաժշտութեան մէջ «Ձայն» կը նշանակէ որոշ եղանակի տիպ մը կամ տեսակ մը՝ առաւել կամ նուազ անփոփոխ ծայրահարով եւ որոշ առանձնայատկութիւններով:

Արդ, անգամ մը ճշդելէ եւ հաստատելէ ետք թէ մեր ժողովուրդը իր կազմաւորման օրէն իսկ ունէր իր երգը, բնական կ'ըլլայ ըսել, թէ ունէր նաեւ իր ուրոյն ձայնեղանակները: Ժողովրդային մակարդակի վրայ թէ որքանով այս ձայնեղանակները իրարմէ կը զատորոշուէին՝ յստակ չենք կրնար ըսել, բայց եւ այնպէս փաստ է, որ ժողովուրդը երգի որոշ տեսակներ կ'երգէր ուրոյն ձայնեղանակներով.- այսպէս՝ աշխատանքի երգերը, մասնաւորաբար Հոռովելները, իրենց ուրոյն ձայնն ունէին (ԳԶ.), սուգի կամ ողբի երգերը՝ իրենց յատուկը (ԲԶ. - ԳԿ. խառն), եւ այլն:

Գիտե՞նք արդեօք՝ հեթանոսական շրջանին այս ձայնեղանակները ճշդուած էին, թէ՞ ոչ, եւ եթէ այո՝ քանի՞ հատ էին:

Եթէ նկատի ունենանք որ մեր մեհեանները ո՛չ միայն կրօնքի, այլ եւ գիտութեան կեդրոններ էին ու քուրմերը՝ գիտականօրէն պատրաստուած մարդիկ, եւ եթէ միտքէ չհանենք նաեւ, թէ բոլոր կրօններուն մէջ ալ երաժշտութիւնը մեծ կարեւորութիւն կը ներկայացնէր եւ անբաժան մէկ մասն էր բոլոր ժամանակներու կրթութեան՝ որպէս փիլիսոփայութեան հիմնական մէկ մասը, կրնանք անսխալօրէն հետեւցնել, թէ հեթանոս մեր քուրմերը անպայմանօրէն զբաղած պիտի ըլլան մեր երաժշտութեամբ եւ գիտական հասկացողութեամբ զայն վերլուծած եւ դրութեան մը վերածած: Եւ արդարեւ, յետագայ վկայութիւնները կը մատնանշեն, թէ հեթանոսական Հայաստանի երաժշտութեան տեսութիւնը ՉՈՐՍ ԳԼԽԱՒՈՐ ՉԱՅՆԵՐԱՆԱԿՆԵՐ կը ճանչնար: Այս չորս ձայներուն ծագումը կը բացատրուէր տարրա-

պաշտական հասկացողութեամբ, որպէս թէ
Առաջին ձայնը ՀՈՂԷՆ ծագած ըլլար,
Երկրորդ ձայնը ԶՈՒՐԷՆ,
Երրորդ ձայնը ՕՂԷՆ, եւ
Չորրորդ ձայնը ԿՐԱԿԷՆ:

Զմոռնանք որ տարրապաշտական այս հասկացողութեամբ կը բացատրուէր նաեւ ամբողջ բնութեան եւ մարդուն գոյութիւնը - դիտել օրինակ Վահագնի երգը - եւ ասիկա փիլիսոփայութեան ճամբով անցած է նաեւ քրիստոնէայ հեղինակներու գործերուն մէջ:

Այս չորս ձայնի դրութիւնը բոլոր արեւելեան ժողովուրդներուն յատուկ եղած է: Զմոռնալ նաեւ, որ նոյնիսկ յետոյ եւ մինչեւ հիմա, մեր ութը ձայներուն մէջ այս չորսը կը համարեն ԲՈՒՆ, իսկ միւսները ԿՈՂՍ:

Ըստ երաժշտագէտ Նիկողոս Թահմիզեանի ուսումնասիրութեանց եւ ենթադրութեան, այս չորս գլխաւոր ձայնեղանակները պիտի ըլլան այսօրուան մեր ԱԶ., ԲԶ., ԳԶ. եւ ԴԿ. ձայներու ընտանիքները (տես «Հասարակ Օրերի Կանոնադրութիւնները», «Էջմիածին», 1971, թիւ Թ., էջ 42):

Քրիստոնէութեան հաստատումէն ետք, Դ. դարուն ի՞նչ էր ձայներու համակարգը յստակ չենք գիտեր: Բայց հազիւ սաղմոսներու բերանացի թարգմանութիւններ սկսան, վստահաբար սկսաւ նաեւ անոնց եղանակաւորումը՝ հայկական սաղմոսերգութիւնը, որուն շուտով պիտի հետեւէին ԿՑՈՒՐԴ երգերը, աստուածաշնչական բառերով կամ յարասաբար, բայց անկախ մեղեդիներով:

Ե. դարուն, գիրերու գիտէն եւ առաջին թարգմանութիւններէն անմիջապէս ետք, երբ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ ձեռնարկեցին եկեղեցական ժամերգութեան ալ լրիւ հայացման, հարկ տեսան գործածական ձայները դրութեան մը վերածել, եւ կազմակերպեցին ՈՒԹԸ ՉԱՅՆԻ դրութիւնը, որ ուրիշ եկեղեցիներու մէջ ալ ընդունուած է:

Ակնարկեցինք արդէն, որ հին Յայաստանը Ս. Սահակի համար կ'ըսէր, թէ մեր եղանակները 10 ձայներու բաժնեց: Որո՞նք են յաւելեալ 2 ձայները: Կը կարծենք որ ասոնք «ստեղի» կոչուած ձայները պիտի ըլլան, որոնք ԲԿ. եւ ԴԿ. ձայներու անուններով հասած են մեզի, բայց խորքին մէջ անկախ եղանակներու ճիւղեր են. նոյնիսկ իւրաքանչիւրն իր մէջ քանի մը ճիւղ ունի: Եւ արդարեւ. «ստեղի» կը նշանակէ բազմաստեղն, բազմաճիւղ: Ասոնք եղանակներու ծանրագոյն տեսակներն են:

Սահակ-Մեսրոպի ձեռամբ վաւերացուած ութը ձայները արդեօք

նո՞յնն են այսօրուան ուրը ձայներուն հետ, եւ ինչպէ՞ս կարելի է գիտնալ ատիկա:

Ե. դարուն սկիզբը եղանակաւորուած կանոնազուխները իրենց եղանակով յաճախ կը տարբերին շարականներու այսօրուան նոյնանուն ձայներէն: Այս տարբերութիւնը աղաւաղում չէ, այլ անոնց նախնական վիճակին արտայայտութիւնը, եւ ատոր ապացոյցը սա է, ինչպէս շարականագէտ Եղիա Տնտեսեան կը հաստատէ 1870-ին, որ «կանոնագլխոց եղանակներէն» շարականի եղանակաց համաձայն չեղողներն ալ ամէնուրեք միակերպ կ'երգուին այսօր, եւ այս եւեթ բաւական է ասոնց եղանակներուն հնութիւնը, վաւերականութիւնը եւ ուրոյն կազմութիւնը ցուցնել» («Նկարագիր Երգոց», 1933, էջ 75):

Առանց վերլուծումներու մէջ մտնելու - որ մեր նպատակէն դուրս է - ըսենք միայն, որ ԱԶ. եղանակը տիրապետող ձեւով հանդէս կու գայ նաեւ այլ ձայներու մէջ (ԲԿ., ԴԶ., ԴԿ.), ԲԶ.ն խառն է ԳԶ. եւ ԳԿ.ին, իսկ այս վերջինները (ԳԶ. եւ ԳԿ.) համեմատաբար ամէնէն ատիկ համապատասխան են այսօրուան նոյնանուն ձայներուն:

Շարականներու երգեցողութեան քիչ թէ շատ ծանօթ անձեր գիտեն, որ այսօր ընդունուած ուրը ձայներուն մէջ ունինք նաեւ տարբերակներ «դարձուածք»-ներ: Ասոնք անպայման յետագայ ծնունդներ չեն: Օրինակ, Է. դարէն վկայութիւն ունինք, թէ Ս. Սահակ գրած է Օրհնութիւն շարականներուն յաջորդող 4 քարոզները, ԳԶ. եղանակով: Արդարեւ, այսօր ալ այդ քարոզները ամէնուրեք ԳԶ.ով կ'երգուին, բայց ոչ պարզ, այլ ԴԱՐՉՈՒԿԾՔ եղանակով:

Ուրը ձայները շարականներու երգեցողութեան հիմ եղան եւ կանոնի վերածուեցան Ը. դարուն՝ Ստեփանոս Սիւնեցիի ձեռնամբ: Այնուհետեւ մինչեւ այսօր անփոփոխ մնացի՞ն այդ ձայները: Ընդհանրապէս՝ այո: Կոմիտաս կարծիք յայտնած է, թէ մեր երաժշտութեան մէջ մէկ ու կէս աստիճանի ձայնամիջոցը եկամուտ է՝ արաբ եւ պարսիկ երաժշտութեան ազդեցութեամբ: Բայց մենք ալ արեւելեան ժողովուրդ ենք, եւ մեզի խորթ եղած չի կրնար ըլլալ մեծցուած այդ ձայնամիջոցը:

ԽԱԶԱԳՐՈՒԹԻՒՆ.

ԻՆՉՊԷ՞Ս ԱՐՁԱՆԱԳՐՈՒԿԾ ԵՒ ՄԵԶԻ ՀԱՍԱԾ ԵՆ ԱՅՍ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Նախնադարեան երգն ու երաժշտութիւնը, ինչպէս գրականութիւնը, եղած են բանաւոր, այսինքն՝ բերանացի կատարուած, բերանացի փոխանցուած եւ բերանացի ալ պահուած են, մինչեւ որ մարդիկ խորհած են երգն ալ գիրի վերածել, այսինքն՝ արձանագրել:

Երգը ձայնագրելու կերպը հինին մէջ կը կոչուէր **ԽԱԶԱԳՐՈՒԹԻՒՆ**: Արդ, ի՞նչ է խազը:

Հայերէն «խազ» բառը կը նշանակէ ԳԻԾ, որմէ նաեւ գիր: Ուստի **ԽԱԶԱԳՐՈՒԹԻՒՆ** կը նշանակէ երաժշտական գիրերով ձայնագրութիւն: Անմիջապէս ըսենք, որ խազագրութիւնը այսօրուան երաժշտական ձայնագրութեան պէս կատարեալ դրութիւն մը չէր, մանաւանդ սկզբնական շրջաններուն. այլ ատելի որոշ ուղղութիւն մը տալու կամ յուշելու կը ծառայէր: Հետեւաբար, սկզբնապէս շատ պարզ խազեր միայն հնարուեցան, որոնք յետագայ պահանջներու բերումով հետզհետէ հարստացան, մանրամասնուեցան եւ մասնագիտական շատ բարդ դրութեան մը վերածուեցան:

Խազերու ծագումը կը կապուի հնդիկներուն: Քրիստոսէ հազարամեակ մը առաջ արդէն հնդիկներ տեսակ մը նախնական խազագրութիւն կը կիրարկէին իրենց սուրբ գիրքերուն Վետա-ներու սաղմոսերգութեան մէջ: Յոյներ հնդիկներէն առին խազագրութեան գաղափարը եւ սկզբունքը, զայն մշակեցին ու զարգացուցին եւ իրենց միջոցով ալ տարածեցին այն օրերու քաղաքակիրթ աշխարհին մէջ:

Յունական խազերը **πνευμα** կը կոչուէին, մասնաւորաբար առուգանութեան եւ ամանակի կապուած էին եւ որոշ ելելէջ կը ցուցնէին: Հռետորական արուեստին մաս կազմելով, այս խազերը ծանօթ էին փիլիսոփայութիւն ուսած ունէ մէկուն, եւ հետեւաբար, նաեւ Ե. դարու մեր Թարգմանիչ Հայրերը անպայմանօրէն ծանօթ էին յունական խազագրութեան: Ղազար Փարպեցի Ս. Սահակի համար կը վկայէ, թէ «կատարելապէս հմուտ» էր **ԵՐԳՈՂԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒՄ** եւ հռետորական պերճախօսութեան ձեւերուն (Ղազար Փարպեցի, «Պատմութիւն», Վենետիկ, 1933, էջ 46): Այսուհանդերձ, որեւէ վկայութիւն չունինք՝ կարենալ ըսելու համար թէ որեւէ խազային դրութիւն կը կիրարկուէ՞ր կամ կիրարկուեցա՞ւ Հայաստանի մէջ Ե. դարուն եւ յաջորդ երկու դարերուն, մինչեւ Ը. դար:

Կը կարծուի որ Ը. դարուն էր որ հայկական խազագրութիւնը սկիզբ առաւ, եւ անոր իրականացումը կը կապուի Ստեփանոս Սիւնեցիի անունին: Այս գործին մէջ անոր գործակիցն եղած պիտի ըլլայ իր դասընկերը Գրիգոր Գեզիկ կոչուած երաժիշտ եւ երաժշտագէտ վարդապետը, «Այրիվանեցի» կոչուած: Թ.-Ժ. դարերուն այդ դրութիւնը ատելի զարգացած է: Թ. դարէն եկող խազագրութեան նմոյշներ հասած են մեզի, որոնք հին-բիւզանդական խազագրութեան հետ նմանութիւն ունին: Շարականներու խազագրութեան ամենահին նմոյշները կու գան Ժ. դարէն՝ ատելի ճոխացած խազերով: ԺԱ. եւ ԺԲ. դարերուն խազագրութիւնը ատելի կատարելագործուեցաւ, յատ-

կապի մեր սքանչելի եւ մեծ երաժիշտին Ներսէս Շնորհալի Կաթողիկոսին ծեռքով:

Կատարելագործուած այդ դրութիւնը թերեւս աւելի բարդ եւ դժուար ըլլալուն համար կոչուեցաւ «Մանրուսումն»: Շնորհալի մասնաւոր դպրոց հիմնեց մանրուսման համար, եւ իրմէ ետք ուրիշներ հետեւեցան, այնպէս որ կիլիկեան նշանաւոր վանքերը Հռոմկլայ, Դրազարկ, Կարմիր, Արքակաղին եւ Սկեւռայ դարձան մանրուսման կեդրոններ: Ինչպէս մանրանկարիչները, այնպէս ալ երաժշտագէտները իրենց աշակերտներուն համար դասագիրքեր կը պատրաստէին: Մանրանկարչութեան ձեռնարկները կը կոչուէին «ՊԱՏԿԵՐՈՒՄՈՅՑ» (կը սորվեցնէին ներկի պատրաստութիւնը, գործածութեան կերպերը եւ արուեստը), իսկ երաժշտականները «ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ», որոնց մէջ գործնական օրինակներու վրայէն աշակերտներ կը ծանօթանային խազերու զանազան խումբերուն եւ գործածութիւններուն, ինչպէս եւ հայ երաժշտութեան բազմաթիւ ծայնեղանակներուն: Կոմիտաս Վարդապետ մանրուսման նման ձեռնարկներու ուսումնասիրութեամբ գտած է, որ բացի շարականներու գլխաւոր եղանակներէն եւ անոնց ստորաբաժանումներէն, որոնց ընդհանուր թիւր 40-ի կը հասնի, մանրուսման եղանակները 152 տեսակ են (Ս. Ս. Սողոմոնեան, «Հայոց Եկեղեցու Եղանակները», «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 1894, էջ 225-226):

Որպէս մասնագիտական ծանօթութիւն ըսենք, որ առողջանութեան խազեր կրնանք գտնել խազագրուած Աւետարաններու եւ Ճաշոցներու մէջ, Շարականներու խազեր՝ Շարակնոցներուն մէջ, իսկ Մանրուսման խազերը՝ Ժամագիրքերուն, Գանձարաններուն եւ Տաղարաններուն, Պատարագի երգերուն, Մեղեդիներուն եւ Ճաշոցներու ծանր երգերուն մէջ:

Մինչեւ ժե. դար խազագրութիւնը շատ ընդհանրացած գործածութիւն ունեցաւ եւ ուսման բոլոր կարեւոր կեդրոններու ծրագիրին անբաժան մասն էր: Բայց ժՁ. դարէն սկսեալ, հայ ժողովուրդի քաղաքական դժբախտութեանց հետեւանքով, գրչագրութեան արուեստին հետ նահանջ ապրեցաւ խազագրութիւնն ալ, եւ այդ նահանջը եղաւ շատ աւելի արագ եւ ցաւալի: Այդ դարէն սկսեալ խազերը կարդացողներուն թիւը զգալիօրէն նուազեցաւ, հետզհետէ դարձաւ մի քանի հոգիներու վերապահուած գիտութիւն, եւ ժԸ. դարու փակումին խազերու ընթերցանութեան բանալին կորսուած էր արդէն:

Խազագրութեան անցեալի փառքին վկայութիւնն են մեզի հասած 2000-է աւելի խազագրուած ձեռագիրները:

Քանի մը բառով ըսենք նաեւ, որ այժմ գոյութիւն ունի ՀԱՅԿԱ-

ԿԱՆ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ մը: Այդ ծայնագրութիւնը յօրինուած է եւրոպական ծայնագրութեան հիմամբ, ժԹ. դարու սկիզբը, երաժշտագէտ Համբարձում Լիմոնձեանի կողմէ (Պապա Համբարձում): Այդ ծայնագրութեան եօթը նշանագիրները հին հայկական խազերէն առնուած են, բայց անոնց հետ իմաստային որեւէ կապ չունին: Այս նոր ծայնագրութեամբ անցեալ դարուն արձանագրուեցան մեր բոլոր հոգեւոր երգերը, ինչպէս նաեւ աշխարհիկ երգեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Մեր եկեղեցական երգը, իր զանազան տեսակներով, կը ներկայացնէ հարուստ ժառանգութիւն մը, որ Դ.-ԺԴ. դարերուն վրայ տարածուող զարգացման ամբողջ ընթացքի մը բերումն է: Իր բարձրագոյն արտայայտութեան մէջ անիկա ո՛չ միայն մեր ժողովուրդի երաժշտութեան ամէնէն զարգացած եւ կատարելագործուած մակարդակը կ'արտայայտէ, այլեւ ամբողջ Միջին Արեւելքի քրիստոնէական երաժշտութեան պատմութեան մէջ գրեթէ առաջին տեղը կը բռնէ ոճական ցայտունութեամբ, արհեստագիտական մշակուածութեամբ եւ ձեւերու կատարելութեամբ, մէկ խօսքով՝ արուեստի խորութեամբ եւ բարձրութեամբ:

Մեր եկեղեցական երգը ինքնին մեր պատմութեան բնորոշ հանգրուաններուն արդիւնքը եւ ազգային ձգտումներուն ծնունդը եղած է, ինչպէս կ'ենթադրեմ կրցաք տեսնել անոր զարգացման պատմութենէն: Բայց, ճիշդ մեր Այբուբենին պէս, անգամ մը ծնունդ առնելէ ետք՝ անիկա ինք դարձաւ ազգային ոգիի խթանիչ ազդակ եւ զէնք, յաճախ նաեւ՝ ազգային այդ ոգին ու ձգտումները արտայայտելու միակ արտօնուած ձեւը՝ քաղաքական մեր պատմութեան դաժան օրերուն (յիշել Թուրքիոյ պայմանները ապտիլիհամիտեան օրերուն եւ այսօր):

Եկեղեցական մեր երգը այսօր եւս կենդանի ժառանգութիւն մըն է մեզի համար: Միայն ուսումնասիրութեան առարկայ չէ, միայն խօսակցութեան նիւթ չէ, այլ՝ մեր եկեղեցիներէն ներս ապրող հոգեւոր ու ազգային իսկական զանձ մըն է, որուն ճաշակը անգամ մը որ առնենք՝ անիկա խորունկ կը թափանցէ մեր մէջ եւ կը դառնայ մեզ մեր անցեալի պանծալի մշակոյթին ամէնէն լայն, ամէնէն զարգացած, ամէնէն բաբախուն եւ ամէնէն քաղցր մէկ ճիւղին հետ անմիջական հաղորդութեան մէջ դնող կենդանի օղակը, կը դառնայ մեր ինքնութեան մէկ մասնիկը, եւ ինչպէս անցեալին՝ այսօր եւս կը դառնայ ազգային մեր ինքնութեան ամէնէն հարազատ ու զօրեղ արտայայտութիւններէն մէկը:

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ ՄԵՂԵԴԻՆԵՐՈՒՆ, ՏԱՂԵՐՈՒՆ ԵՒ ԳԱՆՁԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ՝

Տաղային արուեստը, իր բազմազան ճիւղերով, Հայ Եկեղեցւոյ երաժշտական հարուստ աւանդութեան մէկ ուրոյն եւ ամէնէն սլացիկ ու գեղեցիկ ճիւղաւորումը կը ներկայացնէ: Գիւղաւորում մը, որ զարգացման երկար ճամբայ կտրած է անցնող տասնհինգ դարերու ընթացքին: Աստիճանական այդ զարգացման բնորոշ եւ հիմնական տարրերը, սակայն, սկիզբէն եւեթ իրենց սաղմնային վիճակով եւ զօրութեամբ ներկայ էին հայկական եկեղեցական երաժշտութեան 5-րդ դարու հրաքիսակերպ, յանկարծաթաբաշխ եւ ահեղաթափ զօրութեամբ լեռնացած առաջին իսկ ժայթքին մէջ:

Այդ դարուն ստեղծուած նախ սաղմոսատիպ կցուրդներու եւ ապա ինքնատիպ երգերու եւ շարականներու բազմաթիւ տեսակներուն մէջէն առաւել չափով ծանր տեսակները, եւ մանաւանդ Սահակ Պարթեւ Հայրապետին ու Մովսէս Խորենացիին վերագրուած քանի մը մեղեդիատիպ երգերը², արդէն յետագայ տաղերու չափական ու եղանակային հարստութեան հակումը կը դրսեւորեն: Այդ հակումը զգայուն շատ մը արուեստագէտ-երաժիշտներու գրիչին տակ հետզհետէ ձեւակերպուեցաւ իբրեւ մեղեդի եւ տաղ, որոնց գոյութիւնը առաւել ապահովութեամբ ծանօթ է 8-րդ դարէն սկսեալ՝ Ստեփանոս Սիւնեաց Եպիսկոպոսի, անոր քրոջ՝ Սահակդուխտի եւ Այրիվանեցի Գրիգոր Գռգիկ Վարդապետի ստեղծագործութիւններով:

Բայց մեղեդիներու եւ տաղերու քանակական թէ որակական իսկական բուն պոռթկումն սկիզբ առաւ 10-րդ դարուն՝ Ս. Գրիգոր Նարեկացիով, որուն երաժշտական անստղիտ հանճարը հրաշագան օրինակներ պիտի տար այս մարզին մէջ, միաժամանակ ծնունդ տալով հոգեւոր երգի նոր տեսակի մը՝ գանձ-ին: Այնուհետեւ տաղային արուեստը (ընդգրկելով նաեւ մեղեդիներն ու գանձերը) անկասե-

լի թափով մը իր ընթացքը շարունակեց մինչեւ 19-րդ դարու վերջերը՝ մէկ կողմէ նորանոր ստեղծագործութիւններով ստուարանալով, եւ միւս կողմէ՝ երաժշտականօրէն՝ հին ստեղծագործութիւնները նորովի մեկնաբանելով եւ աւանդելով:

Հայ գրականագիտութիւնն ու բանասիրութիւնը ներկայ դարուն լայնօրէն զբաղեցան ու դեռ կը զբաղին տաղային արուեստի գրական-բնագրային հարցերու լուսաբանութեամբ: Ինչ կը վերաբերի անոնց երաժշտական կողմին, հարցերը աւելի մութ ու բարդ են, եւ հակառակ տարուած աշխատանքներուն՝ դեռ շատ անորոշութիւններ կան լուսաբանութեան կարօտ, եւ երաժշտագիտութեան որոշ եզրայանգումներն ալ տակաւին կը մնան ենթադրական եւ նորանոր հետազօտութեանց ու յետագայ ճշգրտումներու կարօտ:

Ներածական այս քանի մը խօսքին նպատակը հեռու է այդպիսի հետազօտութեան փորձ մը ըլլալէ: Հոս նպատակը հայ եկեղեցիներուն մէջ ծառայող եւ այս տաղերը, գանձերն ու մեղեդիները կատարող երաժշտասէր դպիրներուն ընդհանուր ամփոփ պատկեր մը տալն է անոնց ինչութեան ու մանաւանդ անոնց գործածութեան անցեալ եւ ներկայ կերպերուն մասին: Եւ եթէ երբեմն տրուած օրինակները բազմապատկուած եւ կարգ մը ծանօթագրութիւններով ծանրացած են, ատիկա պարզապէս ցոյց տալու համար, թէ տակաւին որքա՞ն հեռու ենք վերջնական եւ յստակ եզրակացութիւններ ունենալէ:

ՄԵՂԵԴԻ, ՏԱՂ, ԳԱՆՁ

Մեղեդի, Տաղ եւ Գանձ անուանումները յաճախ իրարու տեղ գործածուած են, ինչպէս ստորեւ տրուած օրինակներով կը տեսնուի, սակայն անոնք թէ՛ իրենց ծագումով, թէ՛ իրենց կառոյցով, թէ՛ իմաստային-զգացական բովանդակութեամբ եւ թէ՛ իրենց երաժշտական բաղադրիչով տարբեր բաներ են: Այսպէս.

Մեղեդի-ն արծակ խօսքի վրայ՝ երաժշտական ազատ ու լայն ներշնչումով, ազատ կշռոյթով եւ առհասարակ ծանօթ կամ ընդունուած ձեւերու կամ տարազներու կաղապարէն ու կաշկանդումներէն զերծ, ազատ կերպով աճած հոգեւոր ծանրեղանակ երգն է: Խօսքը կ'ըլլայ շատ կարճ, յաճախ քանի մը բառ միայն, որ տեսակ մը հանդիսաւոր ծանուցումն է օրուան կամ տօնին հիմնական բովանդակութեան:

Անոր հետ համեմատած՝ տաղ-ը յստակ կշռոյթ ու տաղաչափութիւն ունեցող բանաստեղծութեան վրայ հիմնուած երաժշտական որոշակի կառոյց ունեցող ստեղծագործութիւն է, բաղկացած կրնայ

ըլլալ քանի մը կամ բազմաթիւ տուներէ, որոնք տօնին առանցքը կազմող դրուագը կը պատմեն կամ երեւոյթը կը սեւեռեն՝ քնարական-յուզական տարրերով հարուստ բովանդակութեամբ:

Ինչ կը վերաբերի տաղերու երաժշտական կողմին³, ծանօթացումը ցոյց կու տայ, թէ քնարական ազատ եւ ընդհանրապէս ծաւալուն ստեղծագործութիւններ են անոնք, որոնք քիչ անգամ զուսպ եւ անպաճոյճ, իսկ ընդհանրապէս ծանրօրէն զարդարուն բնոյթ եւ լայնաշունչ ընթացք կ'ունենան, առհասարակ մասնագիտական բարձր մակարդակով, գեղարուեստական նուրբ ճաշակով ու վարպետութեամբ յօրինուած, ընդարձակ ծայնածաւալով եւ կատարողական լայն հմտութիւն ու ճկունութիւն պահանջող: Անոնց բնորոշ մէկ յատկանիշն է յատուկ ծայնեղանակով մը պայմանաւորուած չըլլալը, ազատ անցումը մէկ ծայնեղանակէն միւսը՝ պահելով հանդերձ հիմնաձայնային կառոյցը:

Ներկայ ժողովածուին մէջ առկայ շատ մը «տաղեր» իրականին մէջ աւելի երկար տաղերու «փոխ»-երն են պարզապէս, այսինքն՝ անոնց երկրորդ, լրացուցիչ մասերը, որոնք յաճախ եղանակային անկախ միաւոր մը ըլլալուն համար՝ աստիճանաբար ինքնուրոյն գոյութիւն ձեռք բերած են: Այդպիսի «փոխ»-եր են, օրինակ, Յարութեան **Նստեալ կանայքն ողբային** (Ցնծան այսօր երկինք եւ երկնային զօրք անմարմինք տաղին), դարձեալ Յարութեան **Ով պարտիզական** (13-րդ տուն **Դասքըն Հրէական տաղին**), Եկեղեցւոյ **Հաւուն-հաւուն**ը, եւայլն: Միւս կողմէ, այս ժողովածուին մէջ տեղ գտած մէկ-երկու միաւորներ ալ կան, որոնք կարգ մը տաղերու աւելի փոքր մասերն են: Այսպէս, օրինակ, դիտելով «մեղեդի»-ն իրականին մէջ **Հաւուն-հաւուն** տաղին երկրորդ տողն է՝ երաժշտականօրէն շատ աւելի զարգացած եւ ինքնուրոյն մեղեդիական ձեւ ստացած:

Գանձ-ը աւելի դիրին է ճանչնալ ու որոշել, որովհետեւ իբրեւ բանաստեղծութիւն՝ գրեթէ անխախտ տաղաչափութեամբ ու կառոյցով կը ներկայանայ՝ եռանդամ 5-5-5 վանկանի տողերով: Գանձերն սկզբնապէս տաղաչափութենէ զերծ՝ ազատ եւ անյանգ բանաստեղծութիւններ եղած են, եւ միայն աւելի ուշ է որ նորովի խմբագրուած են՝ կանոնաւոր տաղաչափութիւն եւ յանգաւորում ստանալով, յատկապէս Գրիգոր Խլաթեցի Ծերենցի (1349-1425) ձեռամբ⁴: Բովանդակութիւնն առհասարակ աւելի պատմողական-նկարագրական ու մանաւանդ խորհրդածական-ներբողական բնոյթի կ'ըլլայ, եւ առհասարակ եղանակաւոր «քարոզ»-ներուն պէս՝ աղաչական բանաձեւով մը կ'աւարտի: Երաժշտական կառոյցը որոշակիօրէն կ'արտայայտուի երեք մասերով, յաճախ երաժշտական ատարձի կրկնութեամբ

մըն ալ յատկանշուած, մերթ պարզ վանկային եւ մերթ թեթեւօրէն աւելի զարդարուն եղանակաւորումով, միայն յանգման կէտերուն մօտ քիչ մը աւելի ծաւալուն ու զարդարուն դառնալով:

Հակառակ այս տարբերութեանց, սակայն, Տաղարաններու եւ ծայնագրեալ նորագոյն տետրերու եւ նոյնիսկ տպագրութեանց մէջ որքա՛ն անգամներ այս եզրերը իրարու տեղ գործածուած են: Օրինակի համար.

Գրիգոր Նարեկացիի **Ես Ձայն զառիծուն ասեմ** տաղը եւ ուրիշ տաղեր էմի Աբգարի «Melodies of the Liturgy of the Holy Apostolic Church of Armenia» գործի Ա. հատորին մէջ⁵ նշուած են իբրեւ մեղեդիք, մինչ նոյն տաղերուն մէկ մեծ տոկոսը գանձ անունին տակ դրուած է նոյն գործի Բ. հատորին մէջ: Սահակ Ա. Խանձեանի հրատարակած «Տօնակարգ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ»⁶ հատորին մէջ իբր մեղեդի դրուած են Յարութեան **Հաւուն-հաւուն արթնացեալ**, Հոգեգալստեան **Այսօր Հոգին Սուրբ եկեալ**, Վարդավառի **Գոհար վարդն վառ առեալ**, Վերափոխման **Անձառին Խորան Բանին բնակարան** եւ **Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ** եւ **Բանին Հօր ծոցոյ մարմնարան**, եւ Խաչվերացի **Այսօր ի ձեռն Խաչին** տաղերը: Դարձեալ, Վենետիկեան Մխիթարեաններուն կողմէ հրատարակուած «Կարգ Դպրութեան Ըստ Արարողութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ» գրքոյկին մէջ⁷ Ս. Պատարագի արարողութեան սկիզբը իբր մեղեդի դրուած բոլոր նմոշներն ալ տաղեր են. Աւետեաց **Բարբառ աւետեաց ձայնի**, Ծննդեան **Նոր ծաղիկ այսօր բխիտ**, Տեառնընդառաջի՝ **Քրիստոս փառաց թագաւորն**, Յարութեան **Ես ձայն զառիծուն ասեմ**, Նոր Կիրակիի՝ **Այսօր նոր արեւ հարեալ**, Համբարձման **Այսօր անդրանիկի Հօր միածին Որդին**, եւայլն, մինչդէռ, օրինակ, Տեառնընդառաջի յիշուած տաղը էջ 146-ին վրայ դրուած է տաղերու շարքին: Նոյնպէս, երաժշտագէտ Արիստակէս Քինյ. Հիսարեանի հրատարակած ժամագիրքին մէջ⁸ Պատարագին սկիզբը իբր մեղեդի դրուած են՝ Տեառնընդառաջի՝ **Քրիստոս փառաց թագաւորն**, Համբարձման **Այսօր անդրանիկի Հօր միածին Որդին**, Հոգեգալստեան **Այսօր Հոգին Սուրբ եկեալ**, Պայծառակերպութեան **Գոհար վարդն վառ առեալ**, Աստուածածնայ **Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ** եւ ուրիշ տաղեր: Բայց դեռ շատ աւելի կանուխէն ալ, օրինակ՝ 1850-ին Օրթագիւղ (Կ. Պոլիս) տպուած «Տաղարան Հայաստանեայց Եկեղեցւոյ» հատորին մէջ, Պատարագի նոյն հանգրուանին կը տրուին աւելի քան 70 մեղեդիներու եւ տաղերու բնագիրներուն նմոշները՝ բոլորն ալ իբր «մեղեդի» (տես էջ 12 եւ 21): Նոյն բանը կը գտնենք նաեւ Երուսաղէմեան «Տաղարան»ին մէջ⁹:

Վերոյիշեալ տուեալները թոյլ կու տան ըսելու, թէ սկզբնական իրենց ծագումէն եւ տաղաչափական ու եղանակային առանձնա-
 յատկութիւններէն անկախ, երաժշտական այս երեք տեսակները
 ժամանակի ընթացքին այս կամ այն խումբին մէջ դասակարգուած են
 պարզապէս ըստ Պատարագին մէջ իրենց գրուած դիրքին: Այսպէս,
 Ս. Ընծաներու պատրաստութեան ատեն երգուած բոլոր միաւորներն
 ալ հաւասարապէս ստացած են մեղեդի անուանումը¹⁰, իսկ Պատար-
 ագի աւարտին երգուածները տաղ կամ գանձ¹¹:

Շատ հետաքրքրական է դիտել, որ դարձեալ Ս. Պատարագի եր-
 գեցողութեան մէջ ըստ իրենց յատկացուած դիրքին իբրեւ մեղեդի
 կամ տաղ երգուած են նաեւ որոշ ծանր շարականներ: Այսպէս, իբրեւ
 մեղեդի կը ներկայանան Պատարագի խնկարկութեան յատուկ շա-
 րականը **Յայս յարկ**, Աստուածածնայ **Անթառամ ծաղիկ**¹² ճաշուն,
 Խաչի **Այսօր երելումն** կամ **Նշանի Տեառն**, հայրապետաց տօնի **Ա-
 ռաւել պարծիմք ձեօք**, եւ մարտիրոսաց **Իսկ ի հեղմանէ արեան ձե-
 րոյ**: Իսկ իբրեւ տաղ Տեառնընդառաջի **Ի գալստեան Տեառն**, Ս.
 Հաղորդութեան բաշխման **Որ կազմեցեր սեղան Խորհրդոյ** կամ
Բաշխէ գմարմինն իւր եւ զարիւն շարականները (բացի **Անթառամ
 ծաղիկ**-էն եւ **Առաւել պարծիմք**-էն՝ միւսները տես ներկայ ժողովա-
 ծուին մէջ):

**ՄԵՂԵԴԻՆԵՐՈՒ, ՏԱՂԵՐՈՒ ԵՒ ԳԱՆՁԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒ-
 ԹԻՒՆԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ ՄԵՋ**

Ներկայ հատորին մէջ բովանդակուած տաղերը, մեղեդիներն ու
 գանձերը ընդհանրապէս առնչուած են Ս. Պատարագի երգեցողու-
 թեան: Բայց եկեղեցական արարողութեանց մէջ անոնց գործածու-
 թեան ծիրը աւելի լայն է, եւ տակաւին կրկնապատիկ աւելի լայն էր
 դեռ մինչեւ մօտաւոր անցեալը ներկայ դարասկիզբը:

Կը թուի, թէ մեղեդի-ները իրենց ծագումովն իսկ Պատարագին
 համար յօրինուած, կամ շատ կանուխէն անոր կապուած եւ այդպէս
 ալ մնացած են: Նոյնը չէ պարագան տաղ-երուն եւ գանձ-երուն, որ-
 րոնք կապուած եղած չեն միմիայն Պատարագի արարողութեան, այլ
 ուրիշ կիրառութիւններ եւս ունեցած են եւ այսօր ալ ունին:

Սկիզբէն իսկ տաղերն ու գանձերը յօրինուեցան՝ պաշտամուն-
 քային գործածութեան համար: Ազատ կերպով Եկեղեցի մուտք գոր-
 ծելով գանոնք հեղինակող երաժիշտներուն իսկ կողմէ, ինչպէս եղած
 էր շարականներու պարագան, տեղ գտան արարողութեանց գանա-
 գան հանգրուաններուն, յատկապէս Պատարագի արարողութեան
 մէջ, փոխարինելով, մասամբ, մեղեդիները (ընծաներու պատրաս-

տութեան ատեն), եւ կատարուելով Հաղորդութեան բաշխման ժամա-
 նակ: Մեծ թիով ստեղծուելով հանդերձ, միայն լաւագոյն նմոյշները
 դիմացան ժամանակի դատաստանին եւ իրենց գոյութիւնը պահեցին
 Եկեղեցիէն ներս:

Հարկ է նշել, որ տաղերն ու գանձերը իրենց ընդհանրութեան մէջ
 թէպէտ չկանոնականացուեցան, այսինքն Եկեղեցին անոնց մէջ ընտ-
 րութիւն կատարելով չնւիրագործեց ոմանք եւ դուրս չդրաւ միւսնե-
 րը, եւ առհասարակ անոնց գործածութիւնը պարտադիր բնոյթ
 չստացաւ, բայց քանի մը բացառութիւններ տեղ գտան Հայաստան-
 եայց Եկեղեցւոյ ճաշոցին, Տօնացոյցին ու ժամագիրքին մէջ: Այդպի-
 սի ընդունուած (թէպէտ ոչ պարտադիր) տաղեր ու գանձեր են.

ա) Ս. Ծննդեան օրը մկրտութեան կարգին տաղերը. **Քրիստոս
 Բանըղ Հօր ծնունդ անժամանակ, Ով զարմանալի եւ Այսօր Բանն
 Հայրական**: Ասոնցմէ առաջինը «տաղ անոյշ ի Սորեկայ Կոստանդ-
 եայ», որ Սրիկ Կոստանդին Սսեցիի հեղինակութիւնն է, արդէն ներ-
 կայիս դարձած է գործածութենէ եւ եղանակն ալ ծանօթ չէ մեզի:

բ) Տեառնընդառաջի նախատօնակին երգուող տաղերը. **Քրիս-
 տոս փառաց թագաւորն եւ Ի գիրկս առեալ ծերունոյն**:

գ) Աւագ Հինգշաբթիի Ս. Հաղորդութեան Պատարագին ի ժամ
 հաղորդութեան համար հրահանգուած տաղը. **Եկայք, մարդիկ ամե-
 նայն**: Այս տաղը եւս ներկայիս գործածութենէ դուրս եկած է եւ եղա-
 նակը մեզի անծանօթ կը մնայ:

դ) Աւագ Հինգշաբթիի Ուսնլուայի Կարգին գանձն ու տաղը. **Այս
 խորհուրդ լցաւ եւ Աստուածն ամենի**¹³:

ե) Աւագ Ուրբաթու Թաղման Կարգին հրահանգուած տաղը.
Աստուածածին Կոյսն Մարիամ¹⁴:

զ) Պատարագին կապակցութեամբ, ընդարձակ ժամագիրքերուն
 մէջ¹⁵ յանձնարարուած կը գտնենք մեղեդիներու եւ տաղերու հե-
 տուեալ փունջը Պատարագի սկզբնաւորութեան Ս. Ընծաներու
 պատրաստութեան ատեն երգուելու համար. Աւետման **Բարբառ
 աւետեաց ծայնիւ**, Ծննդեան **Նոր ծաղիկ այսօր բոխէ**, Տեառնըն-
 դառաջի **Քրիստոս փառաց Թագաւորն**, Ծաղկազարդի **Աստ Երբա-
 յեցուց մանկունքն**, Յարութեան **Ես ծայն զառիծուն ասեմ**, Նոր
 Կիրակիի **Այսօր նոր արեւ հարեալ**, Համբարձման **Այսօր անդրանիկի
 Հօր միածին Որդին**, Հոգեգալստեան **Նուագենք Հոգւոյն նուագս վա-
 յելուչ**, Վարդավառի **Գոհար վարդըն վառ առեալ**, Աստուածածնայ
Այսօր Գաբրիէլ հրեշտակապետն, Խաչի **Խաչն ի նախնումն երեւե-
 ցաւ**, Հրեշտակապետաց **Գովեստ բերկրանաց**, Առաքելոց **Արեգակն
 արդար որ ի Հօրէ ծագեալ**, Մարգարէից **Աստուծային խորոցն ան-**

ճառ, Հայրապետաց Ի հանդէս տօնի քո, Եկեղեցւոյ Եկեղեցի կաթուղիկէ Ի Հայաստան, եւ իբրեւ զգեստաւորման ու պատրաստութեան երգեր **Ընտրեալդ յԱստուծոյ եւ Յայս յարկ նուիրանաց**¹⁶: Յիշեցինք արդէն, թէ պոլսական, թէ երուսաղէմեան Տաղարանները նոյն այս հանգրուանին կը բերեն շատ աւելի ծաւալուն փունջեր պարզապէս մեղեդի անունին տակ:

Իսկ Ս. Պատարագի աւարտին, **Գոհանամք** երգէն ետք, նոյն ժամագիրքը կը ծանօթագրէ. «Եւ յորժամ հաղորդին արժանաւորքն, դպիրք երգեն գտաղս գայս. **Մայր հաւատոյ սուրբ հարսնարան...**»: Այս տաղին մէկ ծայնագրութիւնը կը գտնենք Էմի Աբգարի Բ. հատորին մէջ (էջ 792), թէպէտ մեր կողմերու աւանդութեան մէջ կիրառութենէ դադրած է արդէն, ինչպէս դադրած են եւ եղանակով անծանօթ կը մնան վերեւի շարքէն քանի մը տաղեր (համապատասխան կարգով 13, 14 եւ 16)¹⁷: Դեռ տաղարանները ուրիշ յաւելում մըն ալ ունին Պատարագի այս հանգրուանին. **Մայր հաւատոյ**-էն անմիջապէս ետք ունին ուրիշ **«Տաղ Պատարագի Հաղորդութեան. Գոհութիւնս մատուցանենք...»**, իսկ նշխարի բաշխման «Ի Տէր պարծեսցի անձն իմ» սաղմոսէն ետք **«Տաղ ի վճարման Պատարագին. Անձն իմ յամենայն ժամ ի Տէր պարծեսցի...»**:

Տաղերուն ու գանձերուն կիրառութեան ծիրին աստիճանական ընդարձակման պատմականը գծելը դուրս է մեր նպատակէն: Մեզի համար կը բաւէ ընդհանուր նշումով մը ըսել, թէ անոնք կատարուած են.

1) Գիշերային ժամերգութեան աւարտին: Այսպէս օրինակ, Ծննդեան օրը, **Ալէլուքէն առաջ Պատճառ եւ սկիզբն**: Տեառնընդառաջին **Ալէլուքին** յաջորդող չորս Աւետարաններու ընթերցումէն ետք Ի գալստեան Տեառն:

2) Իղաբերից Աւետարանէն ետք, Յարութեան նուիրում: Այսպէս, Յովհաննէս Սարկաւազ Վարդապետի անունով հասած է **«Ծագումն փառաց էին միոյն՝ միածին Որդին»** տաղը¹⁸: Երուսաղէմի թիւ 231 ձեռագիրին մէջ, Ներսէս Շնորհալիի գրիչէն չորս տաղեր դրուած են իբրեւ «Տաղք զկնի իղաբերից աւետարանացն. ըստ Մատթէոսի, ըստ Մարկոսի, ըստ Դուկասու եւ ըստ Յովհաննու»¹⁹: Դուկասու Աւետարանէն ետք երգուելիք **«Ցնծան այսօր երկինք եւ երկնային զօրք անմարմինք»** տաղին փոխն է՝ ներկայ ժողովածուին մէջ ներկայացուած **«Նստեալ կանայքն ողբային»** տաղը²⁰:

3) Ս. Պատարագի սկիզբը, ընծաներու պատրաստութեան ատեն փակ վարագոյրով, մեղեդիներու տեղ: Այս մասին արդէն բաւական բացատրութիւն տուած եղանք վերելը:

4) Իբրեւ Պատարագի թափօրի երգ: Այսպէս, օրինակ, Վաղարշապատ տպուած «Զայնագրեալ Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» գործին²¹ եւ Խանձեանի «Տօնակարգ»ին մէջ (էջ 99) իբրեւ թափօրի երգ նշուած են Ծննդեան **«Այսօր տօն է սուրբ ծննդեան»** տաղը եւ Յարութեան **«Միաշաբաթ օր հանգստեան»** տաղը Զատիկի եւ Յինանց Կիրակիներուն համար (էջ 278), ինչպէս Կոմիտասեան Պատարագին մէջ ալ կը գտնենք²² եւ ձեռագիր ընդօրինակութեանց մէջ եւս կը տեսնենք: Դարձեալ, օրինակ, Կ. Պոլիս տպուած «Շարականք, Տաղք եւ Ալէլուք Աւագ Շաբաթու»²³ հատորին մէջ (էջ 56) իբրեւ թափօրի «շարական» դրուած է ժամանակին մեծ տարածում գտած եւ քանի մը եղանակներով ալ ծայնագրուած **«Յարեալ Քրիստոս այսօր, աւետիս, որդիք Սիոնի»** տաղը, որ Խանձեանի «Տօնակարգ»ին մէջ դրուած է իբրեւ հաղորդութեան պահուն երգուելիք տաղ (անդ, էջ 279): Մեր ձեռագրեալ տետրակներուն մէջ նոյնպէս իբրեւ թափօրի «շարական» դրուած են Յարութեան **«Յարեալ Աստուածըն հրաշապէս»** եւ Խաչի **«Խաչն ի նախնումն»** տաղերը:

5) Ս. Հաղորդութեան բաշխումը կանխող աղօթքի պահուն, **«Քրիստոս պատարագեալ բաշխի»** երգէն անմիջապէս ետք, ինչպէս մեզի կը յուշէ ընդարձակ որբէլ ժամագիրքի մէջ **«Քրիստոս պատարագեալ բաշխի»**էն անմիջապէս ետք դրուած հետեւեալ ծանօթութիւնը. «Եւ դպիրքն եղանակէն գտաղս խորհրդաւորս ըստ պատշաճի աւուրն»: Յովհաննէս Քինյ. Սկրեանի հրատարակած ժամագիրքին մէջ²⁴, «Քրիստոս պատարագեալ»-էն անմիջապէս ետք ծանօթագրուած է. «Եթէ ժամարարը իւր ծածուկ աղօթքը տակաւին աւարտած չլինի. դպիրք խորհրդաւոր Տաղեր կ'երգեն ըստ պատշաճի աւուրն, եւ ապա վարագոյրը կը բանան, եւ Սարկաւազը բարձր ծայնով կը քարոզէ. «Երկիրդիւ եւ հաւատով...»: Տօնացոյցն ու Աւագ Շաբաթը Աւագ Հինգշաբթի օրուան համար յատուկ հրահանգով մը կ'ըսեն. «Յորժամ Քրիստոս Պատարագեալն վճարիցի, ասասցեն դպիրքն յորդորական ծայնիւ գտաղս գայս եկայք, մարդիկ ամենայն»: Իսկ Էմի Աբգար այս հանգրուանին կը ղնէ **«Բաշխէ զմարմին իւր եւ զարին»** շարականը իբրեւ տաղ (Բ. հատոր, էջ 715-725):

Բայց մեզի կը թուի թէ այս մասին սկզբնական վիճակը թեթեւօրէն տարբեր էր: Գիտենք, որ մինչեւ 12-րդ դար գոյութիւն չունէր **«Քրիստոս պատարագեալ բաշխի»** երգը, որ Ներսէս Շնորհալիի հեղինակութիւնն է: Ներսէս Լամբրոնացիի բացատրական Պատարագամատոյցին մէջ այդ երգին սաղմոսահամարներուն միահիւստուած կը գտնենք վեց տուն շարականներ կամ տաղեր²⁵, դարձեալ Շնոր-

հալիի գրիչն: Լամբրոնացի «Քրիստոս պատարագեալ» երգը կը նշէ իբրեւ արդէն պարտադիր բաժին Պատարագին, մինչ միւս վեց շարականներուն կամ տաղերուն կատարումը ազատ կը յայտարարէ²⁶: Նոյն ծանօթագրութիւնը կը գտնենք նաեւ Յովհաննէս Արճիշեցիի «Պատարագի Մեկնութեան» մէջ²⁷: Իսկ վերեւ յիշուած «Կարգ Դպրութեան» գրքոյկին մէջ (էջ 54-57) «Քրիստոս պատարագեալ»-ին առընթեր գետեղուած այս տաղերէն անմիջապէս ետք կը ծանօթագրուի, թէ ասկէ ետքն է միայն որ վարագոյրը կը բացուի եւ հաղորդուիլ ուզողները կը մօտենան Ս. Խորհուրդին: Արդ, նկատի ունենալով, որ 14-15-րդ դարերէն սկսեալ կարգ մը ձեռագիրներու մէջ յիշեալ վեց տուն շարականները կամ տաղերը շաբթուան լուր օրերուն (Երկուշաբթիէն Շաբաթ) վրայ բաշխուած կը ներկայանան²⁸, կ'ենթադրենք, որ ժամանակ մը «Քրիստոս պատարագեալ»-ը իր յարակից տուներով միասին լման կատարուած ըլլայ, բայց որովհետեւ նոյնիսկ մէկ-երկու տուն երգելը բաւական ժամանակ կը խլէր, շուտով որդեգրուած ըլլայ ուրիշ ձեւ մը, որով «Քրիստոս պատարագեալ»-ը մեզի ծանօթ իր ձեւով՝ դարձած ըլլայ միայն Կիրակի օրերու յատուկ, իսկ միւս տաղերը՝ լուր օրերէն իւրաքանչիւրին, եւ միայն աւելի ուշ առաջինին գերակայութիւնը գործածութենէ դուրս մղած ըլլայ միւսները²⁹: Ամէն պարագայի, կ'ենթադրենք որ Շնորհալիէն սկիզբ առած է այս հանգրուանին տաղ երգելու սովորութիւնը:

6) Ս. Պատարագի վերջաւորութեան, «Լցաք» եւ «Գոհանամք» երգերէն ետք, մինչեւ քահանան իր աղօթքները աւարտէ: Այդ մասին նշում ունինք ընդարձակ ժամագիրքերուն մէջ, ուր կը կարդանք. «Աստանօր դպիրքն եղանակեն տաղս խորհրդաւորս, մինչեւ քահանայն կատարեսցէ զկարգ աղօթիցն», եւ անմիջապէս կ'աւելցուի. «Եւ յորժամ հաղորդին արժանաւորքն, դպիրքն երգեն զտաղս զայս. Մայր հաւատոյ սուրբ հարսնարան...», որուն կը յաջորդէ քահանային եղանակաւոր մաղթանքը՝ «որ օրհնես զայնոսիկ»: Մինչեւ ներկայ դարու սկիզբները, մանաւանդ Տէրունի կամ որոշ Սրբոց տօներուն, Պատարագի աւարտին տաղ երգելու սովորութիւնը յստակօրէն կ'երեւի Խանձեանի «Տօնակարգ»ին մէջ՝ հետեւեալ տօներուն եւ հետեւեալ տաղերով. Ծնունդին՝ **Երկինք երկնից**, Տեառնընդառաջին՝ **Քրիստոս փառաց Թագաւորն**, Ծաղկազարդին՝ **Նստեալ յաւանակ նորոյ**, Հոգեգալստեան՝ **Ներհիւսեցուք զքաղցր եղանակ**, Ս. էջմիածինի տօնին՝ **Եկեղեցի կանգնեալ Խորան**, Գիւտ Նշխարաց Ս. Լուսաւորիչին՝ **Ի յելս արեւու արեւ**, Կարդավառի՝ **Այսօր ցնծայ Լեառն Թաբոր**, Վերափոխման՝ **Համենատ քեզ**, Խաչվերացի՝ **Խաչն ի նախնունն երեւեցաւ** եւ **Ծարաւեցաւ Տէրն ի Խաչին**, Յարութեան՝ **Նոր ծա-**

ղիկ պայծառ ցուցաւ, Հաւուն-հաւուն եւ Յայն առաւօտին, Հայրապետաց տօնին՝ **Հայրապետաց հանուրց ազգին**, Եւայլն³⁰: Վերեւը յիշեցինք նոյնպէս, թէ Եմի Աբգարի «Պատարագամատոյց»ին մէջ այս հանգրուանին դրուած են հոյլ մը տաղեր «գանձ» անունին տակ:

7) Ի վերջոյ, կարգ մը տէրունի տօներու յատուկ արարողութեանց աւարտին: Այսպէս, Տեառնընդառաջի նախատօնակի աւարտին Անդաստանէն ետք՝ **«Քրիստոս փառաց Թագաւորն»** եւ **«Ի գիրկս առեալ ծերունւոյն»**: Աւագ Ուրբաթու Խաչելութեան կարգի աւարտին **«Տիրամայրը հանդէպ Որդւոյն»** («Տօնակարգ», էջ 245) եւ Թաղման Կարգի աւարտին **«Աստուածածին Կոյսն Մարիամ կայր առ Խաչին»** (անդ, 248, տես նաեւ «Տօնացոյց»ը):

ՏԱՂԵՐՈՒ ԵՒ ԳԱՆՁԵՐՈՒ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Ներկայ հատորին մէջ ներկայացուած մեղեդիներու կամ տաղերու, գանձերու եւ շարականներու հեղինակներուն միայն մէկ փոքրիկ տոկոսը ծանօթ է մեզի, եւ կը ներկայանայ այսպէս.

- 1) Գրիգոր Նարեկացի (10-րդ դար).- **Հաւիկ, Աչքն ծով, Գոհար վարդն, Հաւուն-հաւուն:**
- 2) Գրիգորիս Պահլաւունի Կաթողիկոս (12-րդ դար).- **Ով զարմանալի**³¹:
- 3) Ներսէս Շնորհալի Կաթողիկոս³² (12-րդ դար).- **Նոր ծաղիկ պայծառ ցուցաւ, Նստեալ կանայքն ողբային:** Իրն է նաեւ իբրեւ մեղեդի գրուած **«Մարտիրոսաց իսկ ի հեղմանէ»** շարականը, որ Ղեւոնդեանց տօնի համբարձիին 7-րդ տունն է:
- 4) Բարսեղ Ճոն Եպս. Դրագարկցի (12-րդ դար).- **Յայս յարկ նուիրանաց**³³:
- 5) Յովհաննէս Երզնկացի Պլուզ (13-րդ դար).- **Այսօր ծայնն Հայրական**³⁴:
- 6) Սրիկ Կոստանդին Ստեցի (13-րդ դար).- **Խաչն ի նախնունն երեւեցաւ:**
- 7) Առաքել Սիւնեցի (14-15-րդ դար).- **Դասքն հրէական, Ով պարտիզպան:**
- 8) Անդրէաս (?).- **Այսօր անդրանիկ Հօր միածին Որդին:**
- 9) Գրիգոր (?).- **Ի հանդէս տօնի Քո:** Դարձեալ ոմն Գրիգորի հեղինակութիւնն է **«Գոչէր հրեշտակն»** տաղը, ինչպէս տուններուն ծայրակապը կը յայտնէ:
- 10) Անանուն Անեցի (?).- **Տիրամայրըն:**

Մնացեալներուն հեղինակները անծանօթ կը մնան, գէթ առայժմ, սպասելով յետագայ լուսաբանութեանց:

ՏԱՂԵՐՈՒ, ԳԱՆՁԵՐՈՒ ԵՒ ՄԵՂԵԴԻՆԵՐՈՒ ԵՂԱՆԱԿ-ՆԵՐԸ

Ընդհանրապէս եթէ բնագիրին հեղինակը գիտենք կ'ենթադրենք նաեւ որ առաջին եղանակաւորումը իրն է (թէպէտ բացարձակ չէ այս մէկը, ինչպէս անմիջապէս պիտի ըսենք): Բայց բազմաթիւ հարցեր կան, բաւականին բարդ ու դժուար լուծելի: Այսպէս օրինակ.

1) Յաճախ նոյն եւ միակ տաղ մը կամ մեղեդի մը կը գտնենք այլազան եղանակներով մեզի հասած: Այս իրողութիւնը դեռ անցեալ դարու կէսէն արձանագրուած ունինք 1850-ին Օրթագիւղ (Կոստանդնուպոլիս) տպուած «Տաղարան»ին մէջ: Այնտեղ, Ս. Պատարագին սկիզբը դրուած ընդարձակ ժողովածուն տրուած է երեք խմբաւորումներով, որոնցմէ երկրորդը կը ներկայացնէ 33 տաղեր (էջ 17-21) հետեւեալ նշումով. «Այսքան մեղեդիկս նոյնաչափք են, եւ քանի մի եղանակաւ երգին» (էջ 21): Ներկայ ժողովածուին մէջ դիւրաւ կարելի է տեսնել այդ երեւոյթին օրինակները: Այդ եղանակներուն մէկ մասը հին եւ ասանդականն է, իսկ ուրիշներ նոր յօրինուած են 19-րդ դարու ամբողջ երկայնքին՝ Պապա Համբարձում Լիմոնձեանէն սկսեալ, եւ թերեւս ալ աւելի առաջ, եւ շատ մը պարագաներու՝ այնքան ալ դիւրին չէ որոշել՝ ո՞րն է հնագոյնը եւ ո՞րը՝ նորագոյնը:

2) Գիտենք, որ Միջին Դարերուն յատուկ սէրը եւ ձգտումը կարի հինէն եկող շարականներու պարզունակ եղանակները վերամշակելու, ծանրացնելու եւ զարդարելու: Նոյն այս ձգտումը իր դերը խաղցած ըլլալ կը թուի նաեւ շատ մը տաղերու պարագային՝ հակառակ տաղերուն արդէն իսկ ի սկզբանէ զարդարուն երգաոճ ըլլալուն (չմոռնանք որ պարզունակ եղանակներով տաղեր մինչեւ այսօր ալ ունինք ձեռքի տակ): Ասիկա՝ տաղի մը հեղինակային հարցը կրկնակիօրէն խնդրական կը դարձնէ:

3) Կայ նաեւ վերոյիշեալ անորոշութիւնները աւելի եւս նօսրացնող տուեալ մը: Յաճախ տաղի մը կամ գանձի մը խօսքերուն հեղինակը ինք նոր եղանակ յօրինելու տեղ՝ կ'որդեգրէ սիրուած եւ տարածում գտած տաղի մը արդէն ծանօթ եղանակը, ինչ որ ժողովրդական երգաստեղծութեան մէջ ալ շատ ծանօթ ու սովորական ձեւ մըն է: Առաջին մէկ օրինակը նոյնինքն տաղերգութեան արուեստի երկրորդ մեծագոյն տիտանն է՝ Ներսէս Շնորհալի Հայրապետը, որ իր տաղերէն մէկ քանիին համար նոր եղանակ յօրինելու փոխարէն՝ որդեգրած է Ս. Գրիգոր Նարեկացիի մէկ կամ միւս տաղին պատրաս-

տի եղանակը³⁵: Այսպէս է, որ մեր տաղարաններուն մէջ կը գտնենք բազմաթիւ մեղեդիներ, տաղեր կամ գանձեր, յաճախ իմաստով եւ զգացական բովանդակութեամբ ամբողջութեամբ իրարու հակադիր, որոնք նոյն եղանակով կ'երգուին: Ներկայ հրատարակութեան մէջ այդպիսին են, օրինակ, Ծաղկազարդի **Յիսուս Քրիստոս Եմուտ այսօր** եւ Յարութեան **Ի կոյս վիմէն** մեղեդիները, Յարութեան երկու տաղեր **Միաշաբաթ օր հանգստեան** եւ **Յարեաւ Աստուածըն հրաշապէս**, Համբարձման **Եւ ի յերկինս վերացեալ** եւ Վարդավառի **Այսօր անդրանիկի Հօր միածին Որդին** եւ Հոգեգալստեան **Այսօր Սուրբ Հոգի եկեալ** տաղերը, եւ այլն: Ուրիշ հրատարակութեանց մէջ այսպիսի պարագաները երբեմն բազմապատկուած կը ներկայանան³⁶: Վերելը յիշատակուած պոլսական «Տաղարան» իր ներկայացուցած երրորդ խումբ տաղերուն համար - որոնք թիւով 34 հատ են - կը ծանօթագրէ. «Այսոքիկ եւս միաչափք եղեալք մերթ միով եղանակաւ երգին» (էջ 27):

Նորագոյն հեղինակութեանց պարագային ալ, դժբախտաբար, ճշգրիտ եւ ամբողջական տեղեկութիւններ կը պակսին մեզի: Պարագայաբար միայն քանի մը հատին մասին արձանագրութիւն ունինք: Այսպէս, օրինակ, ձեռագիր տետրի մը մէջ **«Տիրամայրըն»** քաջածանօթ տաղին մէկ տարբերակը կը վերագրուի «Պապա Համբարձումին», որ ամենայն հաւանականութեամբ Լիմոնձեանն է, քանի ծանօթ է որ անիկա տաղերու նոր եղանակներ ալ յօրինած է³⁷:

ՆԵՐԿԱՅ ՀԱՏՈՐԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ներկայ հատորը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տաղերուն, մեղեդիներուն եւ գանձերուն միայն մէկ մասն է որ կը բովանդակէ: Գործնական օգտագործման նպատակով պատրաստուած այս հատորին մէջ ներառուած են այն մեղեդիները, տաղերն ու գանձերը, որոնք ընդհանրապէս առնչուած են Ս. Պատարագի երգեցողութեան, բացառութեամբ Աստուածայայտնութեան, Ջրօրինէքի եւ Տեառնընդառաջի տաղերուն, որոնք Պատարագէն անջատ արարողութեանց կ'երգուին:

Այս ժողովածուին բաղկացուցիչ միածայն կտորները կարելոր մասամբ մը կու գան երաժշտապետ Լեւոն Զիլինկիրեանէն, իր աշակերտներու ընդօրինակութիւններէն: Հինգ կտորներ (աստ, թիւ 10, 25, 26, 41 եւ 46) առնուած են Պոլսոյ մայր եկեղեցւոյ Գում-Գաբուի փոխ-դպրապետ Յարութիւն Շիշմանեանի կողմէ հայկական ծայնագրութեամբ ձեռագրեալ հսկայ Շարակնոց հատորէն, որ կը պահուի Կաթողիկոսարանիս Մատենադարանի ձեռագիր տետրերու բաժնի-

նին մէջ³⁸: Հինգ կտորներ ալ (թիւ 5, 30, 37, 38 եւ 44) առնուած են Վարդան Սարգսեանի հրատարակած «Սրբազան Երզնգողութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ» գործի Ա. հատորէն: Գալով ներդաշնակեալ կտորներուն, Կոմիտաս Վարդապետի եւ Մակար Եկեղեցեանի մշակումներն առնուած են իրենց Պատարագներու մեր հրատարակութենէն³⁹. օրինակ, էմի Աբգարի մշակումները վերելը յիշատակուած հրատարակութեան զոյգ հատորներէն. Ռոպերթ Աթաբեանի եւ Եղուարդ Յակոբեանի մշակումները առնուած են իրենց հրատարակած տաղերու փունջերէն⁴⁰. Վարդան Սարգսեանինը՝ վերոնշեալ գործէն. Աննօ Պապաճանեանինը՝ ձեռագիր մէկ ընդօրինակութենէ. իսկ Ստեփան Էմմիեանի մշակումը նոր է, կատարուած մեր խնդրանքին վրայ՝ այս գործին համար: Մեր մշակումները, բացի «Վարանիմ»-էն, կը հրատարակուին առաջին անգամ ըլլալով:

Մենք իւրաքանչիւր մեղեդի, տաղ կամ գանձ ըստ իմաստի դասած ենք միակ տօնի մը տակ, թէպէտեւ ծանօթ է, եւ գործադրողներն ալ առհասարակ գիտեն, թէ անոնցմէ շատերն ընդհանուր իմաստ մը ունենալուն՝ իմաստով մօտիկ ուրիշ տօներու եւս կը պատշաճին ու կը կատարուին: Այսպէս, օրինակ, շատ մը հրատարակութեանց եւ ձեռագիր տետրակներու մէջ Ծննդեան Աչքն ծով տաղը նշուած է նաեւ իբր տաղ Եկեղեցւոյ, այլեւ Աւետեաց եւ Աստուածածնայ, **Բանին Հօր**-ը միաժամանակ իբրեւ Ծննդեան, Աւետեաց եւ Աստուածածնայ, **Հաւուն-հաւուն**-ը՝ թէ՛ Եկեղեցւոյ եւ թէ՛ Յարութեան, **Հաւիկ մի պայծառ տեսի**-ն՝ թէ՛ Յարութեան եւ թէ՛ Խաչի, **Այսօր Հարսն լուսոյ**-ն՝ թէ՛ Եկեղեցւոյ եւ թէ՛ Յարութեան, **Յորժամ**-ը՝ թէ՛ Ննջեցելոց եւ թէ՛ Ապաշխարութեան (պահոց), եւ այլն:

*
* * *

Աւարտելէ առաջ կ'ուզենք մեր լիասիրտ գնահատանքն ու ջերմ շնորհակալութիւնները յայտնել Տիար Վարդան Գարապաճագեանին, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ երաժշտութեան իր անչափ սիրոյն եւ սքանչելի նուիրումին իբրեւ լրում՝ ներկայ հատորի երաժշտական նիւթին ձեռագիր արտագրութիւնը կատարեց անցնող երկու տարիներուն՝ Լիբանանը հիմնաքանդ դարձնող պատերազմական գործողութեանց դառն եւ անհեթեթ պայմաններուն ներքեւ: Ներկայ աշխատութիւնը մնայուն աղօթք մը պիտի ըլլայ իրեն համար, ինչպէս [նաեւ] նահատակ այս երկրին խաղաղութեան եւ վերաշինութեան համար:

- ¹ Յառաջաբան՝ «Մեղեդիներ, Տաղեր, Գանձեր» ծայնագրեալ հատորին:
- ² Միջին Դարերու կարգ մը ձեռագիրներուն մէջ նոյնիսկ Սահակ Կաթողիկոսի Ծննդեան մէկ երգը՝ «Պարագրի Անպարագրելի Բանն», կոչուած է «տաղ» կամ «մեղեդի» (տե՛ս Նիկողոս Թահմիզեան, «Գրիգոր Նարեկացին եւ Հայ Երաժշտութիւնը V-XV Դդ.», Երեւան, 1985, էջ 138-139): Նոյնպէս, Մովսէս Խորենացիէն պահուած երկու երգեր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչին եւ Տրդատ թագաւորին նուիրուած, կոչուած են «մեղեդի» (տե՛ս անդ, էջ 153-157):
- ³ Տաղերու երաժշտական կառոյցին մասին բաւական ընդարձակ վերլուծումներ կարելի է գտնել երաժշտագէտ եւ մանաւանդ հայ հոգեւոր երաժշտութեան եւ երգարուեստի մասնագէտ Նիկողոս Թահմիզեանի կարգ մը գործերուն մէջ. տե՛ս, օրինակ, «Երաժշտութիւնը Հին եւ Միջնադարեան Հայաստանում», Երեւան, 1982, էջ 28-31, «Տաղ» բառայօդուածը Հայկական Սովետական Հանրագիտարանին մէջ, 11-րդ հատոր, Երեւան, 1985, էջ 551գ-552բ. եւ մանաւանդ «Գրիգոր Նարեկացին եւ Հայ Երաժշտութիւնը V-XV Դդ.», Երեւան, 1985:
- ⁴ Տե՛ս «Գրիգոր Նարեկացի. Տաղեր եւ Գանձեր», աշխատասիրութեամբ Արմինէ Քէօզկերեանի, Երեւան, 1981, Ներածութիւն, էջ 30 եւ 50:
- ⁵ Հայերէն տիտղոսն է Երգածայնութիւնը Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ, զոր օրինակ երգի ըստ կարգի ի ժամանակի Մեծի Պահոց եւ յաւուրս տօնից, Մասն Ա., Բ. տպագրութիւն ընդարձակեալ, Լայպցիկ, 1920:
- ⁶ Բ. տպագրութիւն, Կ. Պոլիս, 1898:
- ⁷ Տպուած Վենետիկ, 1911-ին:
- ⁸ «Աղօթագիրք Ըստ ժամակարգութեան Առաքելական Եկեղեցւոյ Հայաստանեայց», Կ. Պոլիս, 1924:
- ⁹ «Տաղարան Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ»: Ձեռքի տակ չունենալով առաջին տպագրութիւնը (1882), օգտագործած ենք 4-րդ տպագրութիւնը, Երուսաղէմ, 1949, էջ 14-27: Իրականին մէջ, այս երեւոյթը շատ ալ նոր չէ, այլ՝ զրչագիր տաղարաններէն ու

գանձարաններին կու գայ (տես Ն. Թահմիզեան, «Գրիգոր Նարեկացին...», էջ 138, ծնթ. 56: Հմմտ. նաեւ էջ 94):

- ¹⁰ Թէ այս ընդհանրացումը աստիճանաբար եղած է պարզ կը դառնայ, երբ աչք մը նետենք աւելի հին ժամագիրքերու վրայ: Այսպէս, օրինակ, 1836-ին Կոստանդնուպոլիս եւ 1848-ին Կալկաթա տպուած ժամագիրքերուն մէջ կը գիտակցուի, թէ այս հանգրուանին դրուած նմոյշները միայն մեղեդի չեն, եւ ուստի կ'ըսեն. «Եւ ապա ձգեն զվարագոյրն, եւ դպիրքն եղանակեն ՄԵՂԵՂԻ ըստ պատշաճի աւուրն, կամ ՏԱՂ խորհրդաւոր» (համապատասխանաբար էջեր 525 եւ 568), եւ դեռ Կալկաթայինը կը շարունակէ. «Եւ կամ ԸՆՏՐԵԱԼ. բայց ԸՆՏՐԵԱԼՆ որ ասես ՄԵՂԵՂԻ կամ ՏԱՂ մի ասեր» (էջ 568):
- ¹¹ Էմի Աբգար իր Պատարագամատոյցի Ա. (էջ XXXIV-XXXIX) եւ Բ. (էջ 740-847) հատորներուն մէջ այդպէս ալ «գանձ» կը կոչէ **Լցաք** եւ **Գոհանամք** երգերէն ետք դրուած բոլոր տաղերն ու գանձերը:
- ¹² Տես Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մատենադարանի ձեռագիր տետրերու բաժինին մէջ՝ Յակոբ Մաղաքեանի ծայնագրեալ տետրը, էջ 323:
- ¹³ Վիեննայի Մխիթարեան հայրերուն կողմէ հրատարակուած Աւագ Շաբաթին մէջ, որ կը կրէ «Ժամակարգութիւն Եկեղեցւոյ Հայաստանեայց, ի Շաբաթ Ղազարու Յարութեան մինչեւ ի Շաբաթ զկնի սրբոյ Զատկին» անունը (Վիեննա, 1835), Ոսնիւայի արարողութեան աւարտին, վերջին Աւետարանէն ետք դարձեալ քարոզ եւ աղօթք մը կը գտնենք, որմէ ետք կը կարդանք. «Զկնի աղօթիցն ասի տաղ. **Հոսեալ հրեղինաց: Փոխ. Ընդ երեկոյս հասեալ ժամ**» (էջ 352):
- ¹⁴ Վերոյիշեալ Վիեննական Աւագ Շաբաթին մէջ դարձեալ երկու տարբերութիւններ կան յաւելումներ կան. Աւագ Ուրբաթու Առաւօտեան ժամերգութեան աւարտին՝ «Եւ ասեն տաղ Ուրբաթու. **Ծարաւեցաւ Տէրն**, կամ այլ տաղ խաչելութեան» (էջ 409), իսկ Աւագ Շաբաթի Առաւօտեան ժամերգութեան աւարտին՝ «Եթէ կամիս տաղ եւս ասա՝ թաղման» (էջ 457): Նշենք, որ կիպրահայ երաժիշտ-դպրապետ Վահան Յ. Պէտէլեանի ծայնագրեալ մէկ տետրին մէջ (որուն լուսապատճէն մէկ օրինակը Կաթողիկոսարանիս Մատենադարանին ձեռագիր տետրերու բաժինին մէջ կը պահուի), գրուած 1910-ին, Տարսոն, եւ հաւանաբար արտագրուած պոլսեցի դպրապետ Համբարձում Սարաճեանի տետրերէն,

Խաչի Տիրամայրըն տաղը մակագրուած է **«Տաղ Մեծի Շաբաթու եւ Խաչի Տօնից»** (էջ 45):

- ¹⁵ Տես, օրինակ, վերելը թիւ 8 ծանօթագրութեան մէջ յիշատակուած ժամագիրքերը, Երուսաղէմ տպուած ժամագիրքերը, Անթիլիաս վերատպուած ընդարձակ ժամագիրքը, եւայլն:
- ¹⁶ Նոյն այս տաղափունըը «Մեղեդիք» անուան տակ յառաջ կը բերէ նաեւ Հայր Յակոբոս Տաշեան իր հրատարակած «Հնագիր Սովորական Պատարագին Հայոց»-ին մէջ 50 ձեռագիր եւ տպագիր օրինակներու բաղդատութեամբ պատրաստուած (տես Հ. Յովսէփ Գաթրճեան եւ Հ. Յակոբոս Տաշեան, «Սրբազան Պատարագամատոյցը Հայոց», Վիեննա, 1897, էջ 631-632): Ինչպէս Տաշեանի քննական ծանօթագրութիւններէն կը տեսնուի, մեղեդիներն ու տաղերը ձեռագիր խորհրդատետրերուն մէջ չեն մտած, բայց 17-րդ դարու կէսէն (առաջինը 1648) սկսեալ կամաց-կամաց մուտք գործած են Պատարագի երգեցողութեան սարկաւազներու եւ դպիրներու բաժինները ամփոփող ձեռնարկներու մէջ, որոնք «Կարգ Դպրութեան» կը կոչուին:
- ¹⁷ Իսկ թիւ 1, 2, 4, 8 եւ 10-ը Էմի Աբգարի ծայնագրութեամբ միայն ծանօթ են:
- ¹⁸ Տես Նիկողոս Թահմիզեան, «Գրիգոր Նարեկացին...», էջ 239-240:
- ¹⁹ Տես «Սիոն», Երուսաղէմ, 1949, էջ 93-94, հրատարակութիւն Ն. Վ. Ծովականի [Նորայր Արք. Պողարեան – խմբ.]:
- ²⁰ Թէպէտ մեր անմիջական նիւթն դուրս է, բայց պարզապէս անցողակի նշենք, Առաւօտեան ժամերգութեան կապակցութեամբ, որ գանձերու օգտագործման շատ հետաքրքրական ձեւի մը կը հանդիպինք Վիեննական Մխիթարեան հայրերուն կողմէ հրատարակուած «Ժամակարգութիւն Եկեղեցւոյ Հայաստանեայց» հատորներուն մէջ (տպ. 1839), ուր թէ Աւագ Շաբթուան բոլոր օրերուն եւ թէ տարուան գլխաւոր տօներուն Առաւօտեան եւ Երեկոյեան ժամերգութեանց մեծ քարոզներուն (Ասասցուք. Փառաւորեսցուք, եւայլն) կողքին կը նշուի, թէ անոնց տեղ կարելի է նաեւ գանձ երգել: Միակ յանուանէ յիշատակուած պարագան (թէպէտ այս անգամ «քարոզ» անուանումով) կը գտնենք Պենտէկոստէի տօնի առաւօտուն, ուր «Փառք ի բարձունս»-էն ետք կը ծանօթագրուի «Քարոզ Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ **Գանձ Լուսոյ կամ Ասասցուք**» (Բ. հատոր, էջ 518):

- ²¹ Բ. տպագրություն, Վաղարշապատ 1878-ՌՅԻԸ, էջ 112, ուր կ'ըստի «Ի թափօրի զկնի Մեղեդիկի յետ բացման վարագուրին երգեալ յաւուր Ծննդեան ութօրէից», եւ էջ 113:
- ²² Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, վերատեսեալ ի ձեռն Վարդան Սարգսեանի, (վերատպութիւն) Անթիլիաս, 1974, էջ 13-15:
- ²³ Դ. տպագրութիւն, 1931:
- ²⁴ «Աղօթագիրք ըստ ժամակարգութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ», Գ. տպագրութիւն, Կ. Պոլիս, 1895, էջ 455:
- ²⁵ Տես «Օրէնք արկանելոյ սպաս եկեղեցւոյ. խորհրդածութիւնք ի կարգս Եկեղեցւոյ եւ Մեկնութիւն խորհրդոյ Պատարագին», Վենետիկ, 1847, էջ 223-224: Տես նաեւ Գաթրճեան-Տաշեան, «Սրբազան Պատարագամատոյցք Հայոց», Վիեննա, 1897, էջ 553 եւ 707-708: Սոյն տաղերուն մենք անդրադարձած ենք Ներսէս Շնորհալիի վախճանման 800-ամեակին առիթով, կաթողիկոսութեանս «Հասկ» ամսագիրին մէջ, 1973, «Ներսէս Շնորհալի Երաժիշտը եւ Ս. Պատարագի Երգեցողութիւնը», էջ 481-483: Հետաքրքրական է դիտել, որ «Քրիստոս պատարագեալ բաշխի» երգը էմի Աբգարի «Պատարագամատոյց»ին մէջ ունի նաեւ իր ծանր տարբերակը, որուն եղանակը շատ մօտիկ է կարգ մը գանձերու եղանակին (տես Բ. հատոր, էջ 695-701, եւ համեմատել՝ «Յարեաւ կենդանին», էջ 762-764, եւ նոյնեղանակ միւս գանձերուն հետ):
- ²⁶ Լամբրոնացիի բացատրութիւնը կու տանք թարգմանաբար. «Այս երգը ո՛չ թէ պարտադիր կերպով պէտք է ըսել ամէն օր, այլ՝ ըստ պատշաճութեան. պէտք է գիտնալ ժամանակը եւ քահանային կամքը, թէ [խորհուրդը] ճաշակած ատեն որքան կ'ուզէ զայն (=երգեցողութիւնը) երկարել: Սակայն **Օրհնեցէք**ները պէտք է ըսել, իսկ անոնցմէ ետք տուն մը կամ երկու-երեք՝ որքան որ ժամանակը կը պահանջէ», տես նշուած գործը, էջ 224:
- ²⁷ Տես Գաթրճեան եւ Տաշեան, «Սրբազան Պատարագամատոյցք Հայոց», էջ 517:
- ²⁸ Տես անդ, էջ 706-707-ի ծանօթագրութեանց մէջ: Իսկ տաղերը շաբթուան օրերուն վրայ բաշխուած են այսպէս. Երկուշաբթի՝ **Լոյս ճշմարիտ**, Երեքշաբթի՝ **Հաց կենաց**, Չորեքշաբթի՝ **Պուռն երկնից**, Հինգշաբթի՝ **Բան Հօր**, Ուրբաթ՝ **Վէմ հոգեւոր**, եւ Շաբաթ օր՝ **Գառն**

Աստուծոյ:

- ²⁹ Ասոր նման եղած պէտք է ըլլայ նաեւ Յինանց ճաշու շարականներու պարագան, որոնցմէ միայն առաջինն է («Յարեաւ Քրիստոս»), որ կը կատարուի այսօր միւսներուն ալ տեղը առած ըլլալով:
- ³⁰ Շատ հետաքրքրական է, որ Վահան Յ. Պէտլեանի վերեւ յիշուած տետրին մէջ (տես ծնթ. 13) «Տիրամայրըն» տաղին անմիջականօրէն, առանց որեւէ հատումի կամ նշումի, կցուած կը գտնենք «Օրհնեցից ըզՏէր, յամենայն ժամ» սաղմոսահամարին ծայնագրութիւնը (անդ, էջ 47), նոյն «Տիրամայրն...» տաղին եղանակով եւ նոյն ծանրութեամբ, ինչ որ լաւագոյնս կը վկայէ տաղիս Պատարագի այս հանգրուանին ալ կատարուած ըլլալուն մասին:
- ³¹ Թէպէտեւ այս տաղը վերագրուած է նաեւ 13-րդ դարու կիլիկեան տաղագիր Սրիկ Կոստանդին Սսեցիի (տես Անուշաւան Կրդ. Դանիլեան, «Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան», Անթիլիաս, 1984, սիւնակ 305բ: Հմտ. Ն. Թահմիզեան, «Գրիգոր Նարեկացին...», էջ 265):
- ³² Շատ զարմանալի կերպով, հայ եկեղեցական երաժշտութեան օժտեալ մասնագէտներէն Նիկողոս Թահմիզեան Շնորհալիի ընծայած իր մենագրութեան եւ այլ գործերուն մէջ բնաւ չէ անդրադարձած անոր տաղերու եղանակներու հարցին եւ առ այդ մեզի հասած նմոյշներուն: Ընդհակառակը, իր երկու տարբեր գործերուն մէջ գրեթէ նոյն բառերով կ'ըսէ հետեւեալը. «Յայտնի է, որ Շնորհալու տասնեակներով հաշուուող տարբեր տաղերից փաստօրէն եւ ոչ մէկը չի երգուիմ այսօր եւ չի երեւուիմ հայկական հոգեւոր երգերի ծայնագրեալ վաւերացուած ժողովածուներում» (տես «Ներսէս Շնորհալին...», էջ 66, եւ «Գրիգոր Նարեկացին...», էջ 245): Փաստօրէն, Ն. Թահմիզեան գիտէ, օրինակ, թէ վերոնշեալ տաղերէն առաջինը հրատարակուած է Եղուարդ Յակոբեանի կողմէ (տես «Հայկական Պատարագի Տաղեր եւ Մեղեդիներ Եւրոպական Չայնագրութեամբ», Գահիրէ, 1963, էջ 14-15), բայց յայտնապէս վերապահութեամբ կը մօտենայ անոր եղանակային հարազատութեան, ըսելով թէ «տաղն սպասուածից շատ աւելի է ենթարկուել ժամանակի ազդեցութեանը» («Ներսէս Շնորհալին...», էջ 45, ծնթ. թիւ 165): Սակայն հարցը ասով չսպառի: Յիշենք պարզապէս, թէ բացի վերելը յիշուած երկու տաղերէն, կիսնոճեան ծայնագրութեամբ արձանագրուած ձեռագիր տետրակներու մէջ առկայ ուրիշ մէկ-երկու տաղեր եւս կան Շնորհալիէն:

- ³³ Նորայր Եպս. Պողարեանի հրատարակած «Ժամանակագրություն»-ը նույնիսկ յատուկ թուականի մը 1154-ի տակ կը դնէ այս տեղեկությունը ատով տաղին յօրինման թուականը ենթադրել տալով (տես «Բանբեր Մատենադարանի», թիւ 9, Երեւան, 1969, էջ 259): Նիկողոս Թահմիզեան զայն Շնորհալիի կը վերագրէ (տես «Ներսէս Շնորհալի Երգահան եւ Երաժիշտ», Երեւան, 1973, էջ 44, ուր այս երգին բաղկացուցիչ մէկ մասին «Բարեխօսութեամբ մօր Քո եւ կուսի» բաժինին եղանակային չափաւոր տարբերակը «նախապատրաստուած» կը համարէ իր երկու ուրիշ շարականներով. հմմտ. նաեւ էջ 168-170, «Գրիգոր Նարեկացին եւ Հայ Երաժշտությունը V-XV Դդ.», էջ 282, եւայլն): Բայց երկնային մօտիկությունը Շնորհալիի այս կամ այն շարականին հետ բաւարար չէ այդպիսի հաստատում մը ընելու, մանաւանդ որ շատ սովորական է՝ միեւնոյն Ձայնով (որեւէ Ձայնով) գրուած շարականներուն իրարու հետ ունեցած լայն ընդհանրությունը:
- ³⁴ Տաղը կարգ մը ձեռագիրներու մէջ վերագրուած է նաեւ ոմն Խաչատուրի մը եւ կամ Ատոմ Երէցի մը (տես Ն. Թահմիզեան, «Գրիգոր Նարեկացին...», էջ 294-295):
- ³⁵ Տես Ն. Թահմիզեան, «Ներսէս Շնորհալին Երգահան եւ Երաժիշտ», Երեւան, 1973, էջ 65, ուր ուրիշ օրինակներ եւս տրուած են:
- ³⁶ Այսպէս, օրինակ, երբ կը բանանք Օր. Էմի Աբգարի տպագրած Ս. Պատարագի երգեցողութեան ծայնագրեալ երկու հատորները, կը գտնենք որ միեւնոյն եղանակով կ'երգուին **Յարեաւ Կենդանին** (Յարութեան), **Գալով ողբային** (Յարութեան), **Սէրդ խոնարհեալ** (Ծաղկազարդի), **Վերօրինեալ գովեալ** (Հոգեգալստեան) եւ **Վեհին գաւազան** (Խաչի) տաղերը: Նոյնպէս միակ եղանակով մը կ'երգուին **Գոչէր հրեշտակն** (Յարութեան), **Յարեաւ արքայն** (Յարութեան), **Լեառն ցնծա՛ դու Թաթր** (Այլակերպութեան) տաղերը: Ուրիշ եղանակով մը կ'երգուին **Այսօր անդրանիկի Հօր միածին Որդւոյ** (Համբարձման եւ Բ. Ծաղկազարդի) եւ **Այսօր Գաբրիէլ** (Վերափոխման) տաղերը, կամ **Նոր ծաղիկ այսօր բղխէ** (Ծննդեան) եւ **Նուագեմք Հոգւոյն** (Հոգեգալստեան) տաղերը, եւայլն:
- ³⁷ Տես Վահան 3. Պէտէլեանի ակնարկուած տետրը (ծնթ. 13 եւ 28), էջ 45:
- ³⁸ Հատորը կը կրէ 1916 թուականը, եւ բացի շարականներէ՝ սկիզբը ունի նաեւ ժամագիրքի երգերը, իսկ վերջաւորութեան ունի Ս.

- Պատարագի լման երգեցողությունը եւ տաղեր ու մեղեդիներ:
- ³⁹ Կոմիտաս Վարդապետ, Երգեցողությունք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, վերատեսնալ ի ձեռն Վարդան Սարգսեանի, Փարիզ, 1933, վերատպութիւն Անթիլիաս, 1974: Մակար Եկմալեան, «Դաշնաւորեալ Երգեցողությունք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ», Լայկիցիկ, 1896, վերատպութիւն Անթիլիաս, 1974:
- ⁴⁰ Ռուպերթ Աթայեան, «Հայ Միջնադարեան Տաղեր. Մշակում Ձայնի եւ Երգեհոնի Կամ Դաշնամուրի Համար», Երեւան, 1972: Եղուարդ Յակոբեան, «Սրբազան Տաղեր Ձայնի եւ Երգեհոնի Համար», Գահիրէ, 1980:

ՊԱՏՐԱԿԱՆ

ԿՐԻԿՈՍԻԱՆ ԻՐԱԵՒ ՓՈՅԹԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՒ ԱՐՁԱՅԻՆ ԴԱՐԵ
(ԱՄԿԻՄԻԿ ԿՐԱՆԵՐ)

ԿԻԼԻԿԻԱՆ ԻՐԵՒ ՓՈՔՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՐՇԱԹԻ ԴԱՐԸ

(ամփոփ կէտեր)

Պարզուած պատկերացումով մը Կիլիկեան Աշխարհի պատմութիւնը մեզի համար կը սկսի այն պահէն, երբ Անիի Բագրատունեաց թագաւորութեան վերջին օծեալը՝ Գագիկ Բ. կը սպաննուի Մանտալեան եղբայրներուն կողմէ, 1079-ին, եւ յաջորդ տարիէն՝ 1080-էն հրապարակ կու գայ անոր մէկ արեւնակիցը՝ Ռուբէն իշխան, որ հիմնադիրը պիտի ըլլար Ռուբինեան հարստութեան:

Կարելի է տեսնել, սակայն, որ դէպքերուն ժամանակակից եւ յաջորդ դարու ժամանակագիր-պատմիչներուն համար նոր սկիզբը յատկանշող մասնաւոր հանգրուան մը չկայ: Նոյնիսկ յստակ չէ պատկերացումը, թէ ե՞րբ դադրած կը նկատուի Բագրատունեաց թագաւորութիւնը. 1045-ին Անիի բիւզանդացիներու ձեռքը յանձնուելով, թէ՞ 1079-ին Գագիկի մահով: Ոմանց միտքին մէջ կը թուի թէ իշխանութեան ընդմիջում չկայ. կայ պարզապէս տեղափոխութիւն կամ փոխադրութիւն դէպի Կիլիկիա, ճիշդ Կաթողիկոսական Աթոռին Հայաստանէն դուրս փոխադրութեան պէս:

Կիլիկիան, սակայն, Հայաստանէն դուրս էր: Ե՞րբ էր որ անիկա դարձաւ «Երկիր Հայոց Կիլիկիա»:

ԱՆՑԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ ՌՈՒԲԻՆԵԱՆՔ

Հինէն ի վեր բազմաթիւ ժողովուրդներ ապրած են Կիլիկիոյ մէջ: Ժամանակի ընթացքին Կիլիկիա ենթակայ եղած է հիթիթներու, ասորեստանցիներու, պարսիկներու, մակեդոնացիներու, սելեւկեաններու եւ հռոմէացիներու տիրապետութեան: Տիգրան Մեծի աշխարհակալութեան շրջանին, 89-83 Ն. Ք., Կիլիկիոյ արեւելեան դաշտային շրջանը մաս կազմեց Հայկական Կայսրութեան, եւ բնակչութեան մէկ մասն ալ փոխադրուեցաւ Հայաստան: Բիւզանդական

Կայսրության շրջանին, Կիլիկիան իր 3 նահանգներով քրիստոնեական կարեւոր կեդրոն էր, մինչեւ որ 7-րդ դարուն արաբներ գրաւեցին զայն եւ իրենց ենթակայ պահեցին մինչեւ 10-րդ դարու կէտերը, որմէ ետք շուրջ 100-ամեակ մը դարձեալ անիկա մնաց բիւզանդացիներուն ձեռքը:

Սելեւկեաններու օրերէն սկսեալ հայ վաճառականներ հաստատուած են հոն: 3. ք. 4-5-րդ դարերուն արդէն հայահոծ շրջաններ կային Միջերկրականի եզերքներուն. իսկ գաղթականական յետագայ հոսանքներ, բռնի թէ կամաւոր, եկան աճեցնելու անոնց թիւը, մինչեւ որ 11-րդ դարու կէտերուն տեղաբնակչութեան մէջ հայերը մեծամասնութիւն կազմեցին:

Նոյն 11-րդ դարու կէտերուն, Տուրքիլ Պէկի եւ Ալփապլանի սելճուքեան արշաւանքներուն հետեւանքով, անոնց տուած ահռելի նեղութիւններէն խուսափելու համար, եւ միւս կողմէ Բիւզանդական Կայսրության հայացրիւ քաղաքականութեան որպէս հետեւութիւն, թագաւորներ, նախարարներ եւ մեծաթիւ ժողովուրդ լքեցին իրենց հայրենի հողերը եւ հաստատուեցան Փոքր Ասիա, Կիլիկիոյ սահմաններուն վրայ: Այստեղ անոնք նոր տիրոյթներ ստացան եւ կարճ ժամանակի մէջ ստեղծեցին նաեւ կիսանկախ հայ թագաւորութիւններ կամ իշխանութիւններ, որոնց մէջ կարեւորագոյններն եղան.

1) Սենեքերիմ Արծրունիի թագաւորութիւնը՝ Սեբաստիոյ շրջակայքին մէջ (1016-1080):

2) Ալլղարիպ Արծրունիի իշխանութիւնը՝ Կիլիկիոյ մեծ մասին վրայ (1042-1080):

3) Պահլաւունիներու իշխանութիւնը՝ Միջագետքի եւ Վերին Ասորիքի մէջ (1044-?):

4) Գագիկ Բ. Աշոտեան Բագրատունիի թագաւորութիւնը՝ Պիզոնի եւ Կոլոնպալատի շրջակայքը (1045-1079):

5) Գագիկ Աբասեան Բագրատունիի թագաւորութիւնը՝ Ծամանդաւի ու Լարիսայի շրջակայքը (1065-1081):

6) Փիլարտոս Վարաժնունի գորավարի իշխանութիւնը՝ Հայաստանի սահմաններէն մինչեւ Կիլիկիոյ դռները (1071-1086):

7) Գող Վասիլի իշխանութիւնը՝ Ամանոսեան եւ Տարոսեան լեռնաշղթայի խաչածեման շրջաններուն մէջ (?-1115):

8) Վերջին կարեւորագոյն իշխանութիւնը պիտի ըլլար Ռուբինեաններունը, որ իր գոյութիւնը պիտի պահէր եւ թագաւորական փառքի հասնէր:

Այս հանգրուանին հետաքրքրական է դիտել երեւոյթ մը, որ պանդխտութեան հոգեվիճակն է: Առաջին իսկ օրէն այնքան խորունկ

կը նստի այս տրամադրութիւնը, որ նոյնիսկ կիլիկեան պետականութեան հզօրագոյն շրջանին զայն կը գտնենք ներկայ թէ թագաւորին, թէ ազնուականին եւ թէ հայ ժողովուրդի իւրաքանչիւր զաւակի հոգիին մէջ, կարօտալի բաղձանքով մը վերադառնալու եւ վերատիրանալու հայրենի նուիրագործուած հողին. թէպէտ այս հոգեվիճակը բնաւ արգելք չ'ըլլար որ անոնք ամբօրէն հաստատուին, շէնցնեն ու զօրացնեն նաեւ «Կիլիկիոյ Տուն»-ը:

ԿԻԼԻԿԵԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ

Ռուբէն իշխանով (1080-1095) հիմը դրուեցաւ Ռուբինեան իշխանապետութեան: Անոր յաջորդները՝ Կոստանդին, Թորոս, Լեւոն, Թորոս Բ. Յաղթողն, Մլեհ եւ Լեւոն Բ. իրենց իշխանութեան սահմանները հետզհետէ տարածելով՝ կամաց-կամաց տիրացան ամբողջ Կիլիկիային՝ Անտի-Տարոսէն Միջերկրական եւ Ամանոսեան լեռներէն մինչեւ Սելեւկիա առնելով մէկ իշխանութեան տակ: Լեւոն Բ. ի օրով (1187-1219) Կիլիկիան արդէն փոքրիկ Հայաստան դարձած էր: Այնքան հզօրացած էր քաղաքականօրէն, որ սահմանները կը պարփակէին շուրջ 40.000 քռ. քմ. տարածութիւն մը, իսկ բնակչութիւնն անցած էր մէկ միլիոն [հոգին]:

Շրջակայ պետութիւնները՝ Բիւզանդական Կայսրութիւնը, սելճուք սուլթանութիւնները եւ խաչակիրները տկարացած էին, եւ Կիլիկիան կը մնար զինուորականօրէն ու քաղաքականօրէն զօրեղագոյն պետութիւնը: Միւս կողմէ՝ առեւտրական-տնտեսական գետնի վրայ եւս բարգաւաճման բարձունքին վրայ էր: Այս պայմաններուն մէջ, բիւզանդացիք եւ լատին Արեւմուտքը ստիպուած էին ճանչնալու Լեւոնին թագաւորութիւնը: Եւ 1198 Յունուար 6-ին Լեւոն Բ. օծուեցաւ Թագաւոր Ամենայն Հայոց, Թագաւոր Հայաստանի:

Նետաքրքրական է գիտնալ, որ Լեւոնի օրով Կիլիկիոյ մէջ կային եկեղեցական կարեւոր թեմեր. իսկ մանր ու մեծ աւատատէր իշխաններուն թիւը կը հասնէր շուրջ 70-ի, որոնց զգալի տոկոսը ծագումով օտար էր՝ յոյն, ֆրանսացի կամ գերմանացի, ճիշդ այնպէս, ինչպէս կարեւոր քաղաքներուն եւ յատկապէս նաւահանգիստներուն մէջ կային օտարագգի, յատկապէս իտալացի կամ այլ փոքրիկ «գաղութներ»:

Թագաւորութեան առաջին 90 տարիներուն՝ հայ պետականութիւնը իր բարձրութեան ու բարգաւաճման մէջ էր, մինչ յաջորդող 90 տարիներուն՝ վերջին թագաւորներուն շրջանը անկման անկասելի ընթացք մըն է՝ թուրքերու, թաթարներու եւ մենլուքներու ասպատա-

կուրթիներով մթազնած, մինչեւ որ 1375 Ապրիլ 16-ին Սիս մայրաքաղաքը յանձնուեցաւ մենլուքներուն ձեռքը եւ Լեւոն Զ. իր ընտանիքով տարուեցաւ Գահիրէ: Այսպիսով վերջ գտաւ Կիլիկիոյ հայոց թագաւորութիւնը, թէպէտ այս թուականէն ետք դեռ 50 տարի շատ մը հայ իշխաններ եւ յատկապէս թագաւորական գահուն ինքզինքը ժառանգորդ նկատող Կոստանդին (թագաւոր) իրենց զօրքերով լեռները քաշուած պահեցին որոշ ինքնավարութիւն մը, մինչեւ որ 1424-ին ամբողջ Կիլիկիան ինկաւ Եգիպտոսի տիրապետութեան տակ:

Ի՞նչ եղան այս թագաւորութեան տեղն ու նշանակութիւնը մեր ժողովուրդի եւ միջազգային պատմութեան շրջագիծին մէջ.

1) Կիլիկիոյ մէջ ստեղծուած հայկական իշխանութիւնները, մասնաւորաբար, միաւորուած պետականութիւնը պիտի ըլլար այն միակ պատուարը, որ երկար ժամանակ պիտի փակէր սելճուք-թուրքերու ճամբան դէպի Կ. Պոլիս ու Եւրոպա: Առանց անոր Միջին Դարերու եւրոպական պատմութիւնը ամբողջութեամբ տարբեր պատկեր պիտի ունենար:

2) Խաչակիրներու Միջին Արեւելք մուտքը եւ այնտեղ ունեցած անոնց բոլոր յաջողութիւնները պայմանաւորուած էին Կիլիկիոյ հայ իշխաններուն ու թագաւորներուն ընձեռած անվերապահ օժանդակութեամբ:

3) Կիլիկիան նոյնպէս ողնասիւնը եւ ախոյեանը եղաւ Մերձաւոր Արեւելքի ամբողջ քրիստոնէութեան պաշտպանելով քրիստոնէական դատը:

Իսկ մեր ժողովուրդի պատմութեան համար՝ կիլիկեան անկախ պետականութեան քաղաքական եւ ազգային նշանակութիւնը նոյնքան մեծ է: Ազգային անկախ գոյութեան եւ կեանքի արդար ձգտումին կենսագործումն էր անիկա, այնպիսի ժամանակաշրջանի մը երբ տարագիր հայ ժողովուրդը ամբողջութեան խարխիսի պէտք ունէր: Անկախ պետականութիւնը վերականգնելու երազը եւ տենչն էր, որ հայ զանգուածները եւ անոնց ոյժերը տարտղնումէ փրկեց եւ ուրքի տակէն կորսուած պատմական հայրենի հողերուն փոխարէն՝ Մայր Հայրենիքի ազատագրումին մասին խորհելու եւ ծրագրելու ենթահողը ստեղծեց:

ԱՐԾԱԹԻ ԴԱՐՈՒՆ ԿԵՐՏՈՒՄԸ

12-րդ եւ 13-րդ դարերը կը կազմեն մեր մշակոյթի պատմութեան Արծաթի Դարը: Անոր կերտման մէջ կարեւոր է դիտել հետեւեալ քանի մը երեւոյթները.

1) Անոր սաղմնաւորումն ու երկունքը տեղի պիտի ունենային ու-

սումնագիտական այն կարեւոր կեդրոններուն մէջ որոնք վանքերն էին, կիլիկեան հոգեմտաւոր կեանքի սրբազան բռնկումին լուսաւոր օժախները, որոնք իրենց ժամանակի բարձրագոյն ուսման վերջին խօսքն ունէին: Գիտութեան այս վառարաններն էին որ լոյս հոսեցուցին ու ողողեցին հայակիլիկիան եւ նոյնիսկ ամբողջ հայաշխարհը՝ պատրաստելով եւ ազգին ընծայելով ամենազգի գիտութեան եւ ամենայորդ իմաստութեան ականաւոր բազմաթիւ դէմքեր:

2) Հայաստանի եւ Կիլիկիոյ միջեւ մշակութային մնայուն եւ սերտ կապ կար: Ուսումնածարաւ եւ ուսումնական դէմքեր յաճախ մէկէն միւսը կ'անցնին կամ կը հրաւիրուին. ուսումնական ձեռնարկներ եւ ամէն տեսակի գիտական-գեղարուեստական նուաճումներ կը փոխանակուին: Թէպէտ պէտք է շեշտել, որ Կիլիկիան իր պայմաններուն բերումով մակարդակի եւ իրագործումներու որոշ առաւելութիւն մը պահեց միշտ:

3) Ուսմանց, գիտութեանց եւ արուեստներու մակարդակը միշտ աւելի բարձրացնելու համար շատ մը կաթողիկոսներ (Գր. Վկայասէր, Կոստանդին Բարձրբերդցի, Յակոբ Կլայեցի, Եւայլն) ու թագաւորներ (Լեւոն Բ., Լեւոն Գ., Եւայլն) յատուկ մշակութային քաղաքականութիւն կը դարձնեն՝ մարդոյժ ներգրաւել դէպի Կիլիկիա, ինչ որ պատճառ պիտի դառնար որ շուտով երկիրը «վայելուչ» դառնայ:

4) Դարձեալ, բարձրաստիճան հոգեւորականներ ու թագաւորներ կը հովանաւորեն վանքերը եւ կը քաջալերեն ամէն տեսակի գրաւոր ստեղծագործութեանց բազմացումը եւ տարածումը՝ Կիլիկիոյ մէջ եւ Կիլիկիայէն դուրս՝ մինչեւ Հայաստան ու մինչեւ այլ գաղութներ: Զուր տեղ չէ, որ շատ մը դէմքեր նշանաւոր կը դառնան իրենց «գրասիրութեամբ»:

5) Ուսումնագիտութեան այս մակարդակը յստակօրէն համալսարանական ուսման մակարդակն է եւ կը բնորոշէ այս դարերուն հայ գիտական միտքի բազմաճիւղ եւ բազմակողմանի ընդլայնումը, որ կը դրսեւորուի նաեւ մշակութային տարբեր երեւոյթներու եւ կալուածներու համակողմանի խոյանքով:

6) Ուսումնական եւ գիտական այս բացառիկ մակարդակին մասին ամէնէն պերճախօս վկայութիւնը այն արտայայտութիւններն են, որ կը գտնենք ժամանակագիրներու կամ վարքագրութեանց մէջ՝ կիլիկեան նշանաւոր դէմքերու ներկայացման առիթով: Անոնք «անյաղթ փիլիսոփայ» կը կոչուին, կը համեմատուին յատկապէս յոյն իմաստասէրներու հետ եւ գերազանց ցոյց կը տրուին: Ճիշդ այս պատկերին համար է որ Յովհաննէս անունով յիշատակագիր մը

Կիլիկեան Աշխարհը կը բնորոշէ իբրեւ «երկիր իմաստասիրաց եւ ուսումնասիրաց»:

7) Ի վերջոյ, այս բոլորը իրենց առարկայականացումը կ'ունենան նոր եւ խոր բովանդակութեամբ առատ ստեղծագործութեանց մէջ, որոնք կը լեցնեն ոչ միայն հայ գրականութիւնը, այլեւ բոլոր գիտութիւններն ու մանր ու մեծ արուեստները, եւ իրենցմով կը յատկանշեն այս դարերը իբրեւ Արծաթի Դար:

ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

Ռուբինեան իշխանապետութեան ստեղծումէն շուրջ 200, եւ հայկական թագաւորութեան վերականգնումէն մօտ 70-80 տարի ետք, Ներսէս Լամբրոնացիի «Մեկնութիւն Սաղմոսաց» գործին գրչագիր-իշխատակագիրը երբ կը խօսի Լեւոն Գ. թագաւորին մասին, ի միջի այլոց նաեւ կ'ըսէ. «Եւ մանաւանդ մեծագոյն տենչանքով կը սիրէր իր հայրենի բնիկ հայկազուններու պարծելի աշխարհը *Արեւելից Տունը*...: Եւ թէպէտ հոնկէ վտարուելով հոս ու հոն ինկանք հիմա..., սակայն *մեր բոլորին սիրտը* Դաւիթի հետ կը գոչէ. “Եթէ քեզ մոռնամ, ո՛վ Երուսաղէմ, թող աջ ձեռքս զիս մոռնայ”: Եւ ասիկա շատ-շատերէն անելի ճշմարիտ սիրով եւ անմոռաց բաղձանքով միշտ իր միտքին մէջ ունէր Լեւոն արքան...»:

Կը թուի թէ 200 տարի առաջուան պանդուխտի հոգեբանութենէն շատ բան փոխուած չէ: Պատմական Հայաստանն է որ է՝ եւ կը մնայ սեւեռումի միակ եւ մնայուն առարկան, անփոխարինելի աշխարհը, «սկիզբն ուրախութեան մերոյ»:

Կիլիկեան հզօրութիւնն ու փառքը կերտուեցան Հայաստանին սիրոյն եւ Հայաստանին համար: Եւ այսօր այդ հզօրութիւնն ու փառքը վերստին կ'արծարծենք՝ նոյն ամբողջական եւ ազատ Հայաստանին սիրոյն եւ Հայաստանին համար:

ԶՄՈՅՑՆԵՐ ԵՒ ԵԼՈՅԹՆԵՐ

ԶԱՆԱԶԱՆ ՆՒԻԹԵՐՈՒ ԸՈՒՐԶ

ԿՐՏՆԹԻ ԵՒ ՎԱԽԱՏԹԻ ՎԵՐԱԵՆՐՈՒ ՎԱՐՅԵՐ
(աշակերտական կանոնադրում-գրք)

ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԻՈՒԽԱՆՔ ՎԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՅ
ՎԱՅՅՈՐՈՒԹԻԱՆ ՄԵՁ

ԵՐԱՁ ՎԵՐՈՍՈՒԹԻԱՆ, ԳԱՐՏԹ
ԵՒ ՎԱԽԱՏԱՐՈՒԹԻԱՆ
(նօսք Երփոստասրդարան)

ՎՆԱԶԱՆՈՒԹԻԱՆ ԿՐԹՈՒԹԻԱՆԸ՝
ՎՈՒ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻԱՆ

1700-ԱՄԵՆԱԿԸ ԵՒ ԱՆՈՐ ԱՆԴՐԱԴԱՐՈՐ
ՎԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ՎՐԱՅ

ԻՆՁԷ ԵԿԵՂԵՑԻՆ

ՍՈՒՐԵՐՆ ՈՒ ՍՐԵՌՈՒԹԻԱՆԸ ԵՒ
ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԿԵԱՆՈՐ

ԿՐՕՆՔԻ ԵՒ ՀԱԲԱՏՔԻ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ

(աշակերտական հանդիպում-գրոյց)

Կան սխալ երկու մտայնություններ ընդհանրապես բոլոր մարդոց քով: Առաջինը այն սխալ հասկացողությունն է կամ կարծիքը, թե՛ աշխարհը, որ գիտութեամբ լեցուն է, կարելի է ճանչնալ, տիեզերքի մասին ամեն բան կարելի է հարցնել, եւ հետեւաբար, այդ հարցումներուն նաեւ պատասխանը փնտռել, պրպտում, հետազոտություն, գիտական փորձ կատարելով, եւայլն. բայց երբ հարցը կու գայ կրօնքին եւ հաւատքին, այդ մասին պէտք չէ բան մը հարցնել. պէտք է հաւատալ եւ վերջ: Ոմանք այսպէս կ'ըսեն: Անիկա սակայն չկարծէք որ եկեղեցականներուն կարծիքն է, չկարծէք որ Եկեղեցւոյ կարծիքն է եւ կամ Աստուածաշունչէն եկող հաստատում մըն է: Բացարձակ կերպով կապ չունի Աստուածաշունչին հետ: Ընդհակառակը, եթէ երբեք ոեւէ եկեղեցականի հարցնէք, ինքը ձեզի պիտի ըսէ, որ, ընդհակառակը, ամեն բան կարելի է հարցնել եւ պէտք է հարցնել:

Օրինակ մը տամ: Առիթով մը երբ երիտասարդ մը եկաւ եւ Յիսուսին հարցուց «Վարդապետ, ի՞նչ պէտք է ընեն, որպէսզի փրկուին», Յիսուս Աստուածաշունչի Հին Կտակարանէն, Երկրորդումն Օրինաց Գիրքէն մէջբերում մը ըրաւ՝ անոր ըսելով. «Գրուած է. սիրէ՛ Տէր Աստուածդ քու ամբողջ սիրտովդ, քու ամբողջ հոգիովդ, քու ամբողջ միտքովդ ու ամբողջ զօրութեամբդ»: Չորս բաներ սիրտ, հոգի, միտք եւ ամբողջ զօրութիւն եւ կարողութիւն: Կը տեսնէք, որ սիրտը եւ հոգին յիշեց, բայց սիրտին եւ հոգիին կողքին, Աստուածաշունչը մեզի կ'ըսէ նաեւ, թէ միտքը կարելոր է: ՁԱստուած եթէ պիտի սիրենք կարելի չէ միայն սիրտով բաւարարուիլ: Սիրտը կը սկսի այնպէս ինչպէս մեր մարդկային կեանքին մէջ երբ առաջին անգամ մեր աչքերը կը բանանք եւ մեր ծնողքը կը տեսնենք, մեր ծնողքին դէմքը, դիմա-

գիծը կը տեսնենք: Յստակ է, որ ամէն բանէ առաջ մեր միտքը չէ որ կը խօսի. հոն մեր սիրտն է, որ կը խօսի: Առաջին ծանօթութիւնը մեր ծնողներուն եւ մեր բոլոր հարազատներուն եւ յետոյ կեանքին մէջ մեր սիրած անձերուն հետ սիրտէն կը սկսի: Բայց սիրտը տակաւին գիտակցութիւն չէ, գիտակցական մակարդակը չէ: Անոր վրայ յետոյ կ'աւելնայ հոգիին զօրութիւնը, հոգիով կը կապուինք անոր: Յետոյ, այդ մեր կապը, որ ուրեմն զգացական է կամ հոգեւոր, կը փորձենք գիտակցութեան ենթարկել, միտքով գտնել, թէ ինչո՞ւ կը սիրենք կամ ինչպէ՞ս կը սիրենք, եւ կամ ի՞նչ բանը կը սիրենք այդ անձին մէջ: Ասիկա, ուրեմն, մտածողութեան երեսն է, եւ երբ Քրիստոս Իր պատասխանին մէջ Հին Կտակարանէն կը յիշէ նաեւ միտքը, այդ կը նշանակէ թէ մեզի կը յիշեցնէ, որ երբ կը խօսինք Աստուծոյ մասին, նոյնպէս սիրտը կը կապէ մեզ Աստուծոյ այնպէս ինչպէս Յիսուս Իր շուրջը ահագին մարդիկ ունեցաւ, խօսեցաւ անոնց, ցոյց տուաւ Իր գործերը եւ առաջին բանը, որով կապուեցան մարդիկ սիրտն էր: Սիրտով կապուեցան, սիրեցին զինք, անկախ որեւէ բացատրութենէ. տակաւին չէին գիտեր, թէ ինչո՞ւ, ինչ բանի համար էր. յետոյ պիտի բացատրէին իրենք իրենց. յետոյ է որ եկաւ միտքը, այս անգամ բացատրութիւն գտնելու կամ հայթայթելու համար, թէ ինչ բաներ պատճառ եղան, որ իրենք կապուին այս անձնաւորութեան, որ անժանօթ մըն էր երէկ, բայց յանկարծ եկաւ եւ իրենց կեանքին մէջ մտաւ եւ որ այնուիւետեւ կարծէք իրենց այդ հոգեկան եւ մտաւոր աշխարհէն պիտի մնար անբաժան:

Ես տարիներէ ի վեր Դպրեվանքին մէջ կը դասաւանդեմ կրօնքի նիւթերը եւ զխաւորաբար Աստուածաշունչ Մատեանը: Աստուածաշունչը, գիտէք, մեր հաւատքին հիմքն է, մեր ամբողջ կրօնական, հոգեւոր գիտութիւնը այդ Գիրքէն է որ մենք կը քաղենք: Ամէն անգամ որ դասարան կը մտնեմ, առաջին պարտականութիւնս կ'ըլլայ - հարկաւ տարուան սկիզբը ըսել կ'ուզէի -, ճիշդ այս մէկը յիշեցնել: Իրենք նոյն տպաւորութիւնն ունին, որ կարելի չէ հաւատքին մասին հարցնել. նախորդ տարիներուն սորված բոլոր նիւթերուն մէջ կը փորձեն հարցնել եւ սորվիլ, բայց առհասարակ կը քաշուին հարցնելու այն ինչ որ թերեւս կ'ուզեն գիտնալ: Բայց Աստուած գիտութեան Աստուածն է: Ան մեր միտքին վրայ վարագոյր չի սիրեր, ընդհակառակը, կ'ուզէ որ մենք այդ վարագոյրը պատռենք կամ վերցնենք, որպէսզի ինչ որ կարելի է գիտնալ կամ ճանչնալ այդ մէկը կարենանք ճանչնալ այն միտքով, այն բանականութեամբ, որ Աստուած Ինքը մեզի տուեր է: Հետեւաբար, քաշուիլը կամ հարցումը, որ մեր միտքին մէջ կայ բայց չենք արտայայտեր, ժամանակի ընթացքին մեզի համար նեղացուցիչ

կ'ըլլայ, նոյնիսկ կրնայ ըլլալ որ մոռնանք հարցումը, որ այսօր ծագեցաւ մեր միտքին մէջ. բայց չկարծէք որ մենք կը մոռնանք: Դուք կ'ենթադրեմ որ գաղափար ունիք մարդուն կազմուածքին, մասնաւորաբար մարդուն միտքի կազմուածքին մասին, որ իր երկու երեսներն ունի՝ գիտակից եւ անգիտակից, կամ ուրիշ բառով մը հոգեբանութիւնը կ'ըսէ՝ ենթագիտակից: Ենթագիտակիցը այն աշխարհն է կամ այն իրականութիւններն են, գործողութիւնն է, որ մեր մէջ կայ բայց չենք գիտակցիր որ կայ կարծէք թաղուած է մեր յիշողութեան խորը: Բայց յոր մը անպայման որ դուրս կու գայ. թէ ե՞րբ, ինչպէ՞ս, ի՞նչ առիթով, ի՞նչ անակնկալով մը՝ չենք գիտեր, բայց կը նշանակէ թէ այդ հարցումը կորսուած չէ եւ կայ որպէս հարցում, իր պատասխանը գտած չէ, միշտ մեզի նեղութիւն կու տայ: Այնպէս ինչպէս կարծէք ուղեղին մէջ գամ մը մխրձուած ըլլար եւ որ այնտեղէն հանուած չէ: Հետեւաբար, վէրք մը կայ որ կը մնայ մեր ներսը, որքան ալ մենք փորձենք զայն ծածկել կամ մեզի ակնյայտ, բացայայտ չերելի: Ուրեմն աւելի լաւ է որ մեր բոլոր հարցումները դրսեւորենք նոյնիսկ եթէ այդ հարցումները անմիջականօրէն իրենց պատասխանը չգտնեն:

Այստեղ կու գամ երրորդ կէտի մը կեանքին մէջ. այս աշխարհի վրայ չկայ մէկը որ բոլոր հարցումներու պատասխանը ունենայ եւ կրնայ ըլլալ որ ես կամ ուրիշ մը անմիջականօրէն ձեր որեւէ մէկ հարցումին չկարենանք պատասխանել, այդ մէկը չի նշանակեր սակայն որ որեւէ հարցում ինքնին պատասխան չունի: Օրինակով մը ըսեմ դարձեալ: Գիտէք որ մարդկային աշխարհին մէջ շատ հիւանդութիւններ կան. այդ հիւանդութիւնները հարկաւ իրենց պատասխանին կը սպասէին. մինչեւ անցեալ դարու կէսը, մարդիկ հազարաւոր ծանօթ հիւանդութիւններէն գրեթէ քանի մը հատին բացատրութիւնն ունէին միայն, միւսներուն բացատրութիւնը բացարձակապէս չկար: Կը փնտռէին պատասխան, հարցում կ'ընէին, բայց չունէին պատասխան: Յանկարծ, անցեալ դարու կէսերէն արագացաւ ընթացքը երբ որ գտնուեցաւ հիմնական ճշմարտութիւն մը, օրինակ մանրէներու մասին: Մանրէներու մասին գիտը առաջնորդեց արագ-արագ ուրիշ գիտերու: Աստիճանաբար սկսան պատասխաններ գտնել եւ մինչեւ այսօր գիտէք որ հազարաւոր հիւանդութեանց բացատրութիւնը, պատճառը գտնուեցաւ: Բայց կան ուրիշ հիւանդութիւններ, որոնց պատճառը մինչեւ այսօր եւ տասնեակ տարիներէ ի վեր կը փնտռուի եւ տակաւին չէ գտնուած: Չէ գտնուած՝ չի նշանակեր, թէ պատասխան չկայ: Պատասխանը անպայմանօրէն կը գտնուի, ժամանակ կրնայ պահանջել: Ասիկա հիմա փոխադրեցէք անձնական կեանքին մէջ, ուր պատասխաններ կան, որոնք կրնայ ըլլալ որ իւրաքանչիւր

հարցումի ճիշդ, ուղիղ պատասխանն են. բայց ամէն պատասխան մենք ամէն վայրկեան առնելու, այլ խօսքով զայն հասկնալու ի վիճակի չենք, այդ մէկը կախում ունի նաեւ մեր ընդունելու, ստանալու եւ կամ հասկնալու կարողութենէն: Ուրեմն, երբեմն կապուած է մեր զարգացումին, մեր միտքի աստիճանին, որոշ բաներ կապուած են նաեւ մեր փորձառութեան: Պատասխաններ կան, որ առանց անձնական փորձառութեան մենք կրնանք միտքին մէջ երեւակայել, բայց իսկական իմաստով չենք հասկնար, որովհետեւ կեանքը միայն միտքը չէ: Կեանքը ամէնօրեայ ապրուած փորձառութիւն մըն է, իսկ փորձառութիւնը կը պահանջէ միտքին, սիրտին եւ հոգիին ամբողջական ընկալումը՝ երբ մենք մեզի ներկայացուած իրողութիւնները, հետեւաբար նաեւ հարցումները կը հասկնանք իրենց ամբողջականութեան մէջ: Ով որ կ'ուզէ բան մը գիտնալ, անպայմանօրէն զայն պէտք է հարցնէ՝ առանց պահելու զայն, եւ յոյսով եմ որ ձեր հարցումներուն պատասխանը լաւագոյն ձեւով մըն ալ ես կրնամ այստեղ հայթայթել որքան որ գիտութիւնս կամ կարողութիւններս կը ներեն:

- Ի՞նչ է հիփնոթիզմ-ը

Հիփնոթիզմ-ը բան մըն է, որ նախ Եկեղեցիին վաւերացման պէտք չունի. պարզապէս հետեւեալն է իրողութիւնը. բնական երեւոյթ մըն է աշխարհին մէջ եւ գիտութեան կողմէ հաստատուած շատ պարզ իրողութիւն: Ինչպէս որ տիեզերքի կամ աշխարհի մէջ կայ այսպէս կոչուած մագնիսական կամ ձգողական օրէնքը, որով երկնային կամ տիեզերական բոլոր մարմինները կը պահպան-ուին իրարմէ հաւասարաչափ հեռաւորութեամբ, կամ ինչպէս որ այդ մարմինները զիրար կը քաշեն, այնպէս ալ մարդուն մէջ կայ կարողութիւն մը, որ ձգողութեան կարողութիւնն է: Հիփնոթիզմ կոչուածը այն մագնիսականութիւնն է, որ մարդ կ'արտայայտէ որոշ միջոցով մը, իր միտքի կարողութեամբ, երբեմն նաեւ՝ աչքերու տեսողութեան կարողութեամբ, միտքին մէջ եղածը կը փորձէ աչքերուն ճամբով արտայայտել: Ասիկա սակայն, ինչպէս մարդկային բոլոր կարողութիւնները, բոլոր անհատներուն մէջ նոյն ձեւով չի զարգանար: Ոմանց մէջ անիկա իբր շնորհք կամ կարողութիւն ի յայտ կու գայ: Ոմանք փոքր տարիքէն կը գտնեն իրենց մէջ այդ կարողութիւնը եւ ժամանակի ընթացքին կը զարգացնեն զայն: Ամէն մարդ ունի գծելու, երգելու եւ գեղարուեստական շատ մը երեւոյթներու կարողութիւններ, բայց ամէն մարդ չի զարգացնէր զանոնք: Այն անձը, որ կը զգայ, թէ ինքը յատուկ պարգեւ մը ունի այդ ուղղութեամբ եւ շրջապատը ուշադրութիւն կը դարձնէ իրեն, անիկա է որ կը զարգացնէ եւ տեղ կը հասցնէ: Ու-

րեմն, ոմանք իրենց մէջ այդ մագնիսական կարողութիւնը այնքան կը զօրացնեն, որ ի վիճակի կ'ըլլան ուրիշներու վրայ որոշակի ազդեցութիւն մը կատարելու: Ասիկա է որ մենք կը կոչենք հիփնոթիզմ:

- Ի՞նչ է վերամարմնաւորումը (reincarnation):

Վերամարմնաւորումը այն հաւատալիքն է որոշ անձերու կամ նոյնիսկ կրօններու կողմէ, թէ մարդը իր այս գոյութենէն ետք, անգամ մը աշխարհ գալէն եւ յետոյ իր մահէն ետք, ուրիշ կերպարանքով կամ վիճակով մը աշխարհ կու գայ: Այդ մէկը մեր հաւատքին քրիստոնէութեան մէջ տեղ չունի, որովհետեւ եթէ երբեք ուզէք ճշգրիտ գիտութեան վերածել, կը տեսնէք թէ որեւէ մէկ ատեն տրամաբանութեան չենթարկուիր այդ բացատրութիւնը, որովհետեւ կը հիմնուի այն տեսութեան վրայ, թէ մարդը իր մահէն ետքը ուրիշ վիճակի մը կ'անցնի որոշ նպատակով մը եւ այդ նպատակը պէտք է ըլլայ մարդուն աստիճանական կատարելագործումը: Նոյն տեսութիւնը կ'ըսէ թէ այն մարդը, որ ներկայ իր կեանքին մէջ բարի, կատարեալ կեանք մը ունեցաւ, կ'անցնի աւելի բարձր վիճակի մը, իսկ այն մարդը, որ ներկայ կեանքին մէջ ունեցաւ ոչ օրինակելի, չար կեանք մը, անիկա աւելի ցած վիճակի մը կ'անցնի, կենդանիի մը մէջ կը մտնէ կամ կենդանիի կը վերածուի:

Եթէ երբեք առաջին սկզբունքը պիտի առնենք, թէ վերակենդանացման այս սկզբունքը մարդս աստիճանաբար մէկ կեանքէն միւսը բարձրացնելու կը ծառայէ, կը տեսնենք որ գործնական տեսութիւնը, որ երկրորդ տեսութիւնն է, այդ մէկը չի հաստատեր, որովհետեւ երբ մարդ աւելի նուազ աստիճանի մը կը մտնէ, օրինակ՝ կենդանիի մը մէջ, անկէ վերջ ինչպէ՞ս կրնայ կատարելագործել իր կեանքը: Որքան ատեն որ մարդ է, մարդկային իր մտածողութիւնը ունի, ինքզինք կրնայ բարձրացնել, բայց անգամ մը որ մտաւ ոչ բանաւոր էակի մը՝ անասունի մը մէջ, որ մտածողութիւն չունի, կը նշանակէ թէ ինքզինք չի կրնար բարձրացնել կամ կատարելագործել: Ասիկա տեսական երեսն է: Իսկ գործնական երեսով՝ մենք մեր հաւատքէն եւ Աստուածաշունչ Մատեանէն գիտենք, որ ոեւէ մէկը այդ ձեւով երբեք կեանքի եկած չէ եւ Աստուածաշունչը կը հաստատէ, որ իւրաքանչիւր մարդ միայն մէկ անգամ կու գայ աշխարհ եւ մէկ անգամ կը մահանայ՝ անկէ վերջ կանգնելու համար Աստուծոյ դիմաց:

- Աստուած եթէ ոյժ է, ինչպէ՞ս ստեղծեց աշխարհը:

Ոմանք, որոնք «Աստուած» բացատրութիւնը չեն ուզեր գործածել, կը նախընտրեն ըսել թէ ինչ որ մենք Աստուած կը կոչենք՝ տիե-

գերքի մէջ ոյժ մըն է: Այդ հաստատումը կատարողները կ'ընդունին թէ այն սքանչելի տիեզերքը, որ մեր շուրջը կայ, չի կրնար ինքնին ըլլալ եւ գոյութիւն ունենալ առանց այդ ոյժին: Պէտք է ըլլայ ոյժ մը, գերազանց ոյժ մը, որ ոչ միայն ստեղծած ըլլայ այս աշխարհը, այլ նաեւ պահէ այս աշխարհը, որովհետեւ մենք այս աշխարհին մէջ կը տեսնենք քանի մը բաներ:

Առաջին բանը կարգաւորութիւնն է, կարգ-կանոնը, զոր կը տեսնենք: Մեր աչքերը երբ կը դարձնենք երկինք կը նայինք աստղերուն, կը նայինք տիեզերական բոլոր մարմիններուն: Գիտութիւնը մեզի կը սորվեցնէ այդ մարմիններուն մասին: Օրինակ, քաշողական օրէնքը, որ կայ տիեզերական բոլոր մարմիններուն միջեւ, թոյլ չի տար, որ այդ մարմինները իրենց հեռաւորութիւնը փոխեն. բոլորը կը մնան իրենց հաւասարաչափ հեռաւորութեան վրայ՝ անշուշտ իրենց ունեցած մեծութեան եւ խտութեան համապատասխան: Ըստ գիտութեան, մարմին մը որքան որ մեծ է, այնքան աւելի զօրաւոր է իր ձգողական ոյժը եւ կամ որքան որ աւելի խիտ է իր հիւլէներով, այնքան աւելի զօրաւոր է իր քաշողական ոյժը: Այս կարգաւորութիւնը կը տեսնենք որ անփոփոխելի է: Ո՞վ հաստատեց այս կարգ-կանոնը: Երբ «ոյժ մը» կ'ըսենք՝ ոյժը ամէն ինչ չէ, ոյժը չի կրնար կատարել այն ինչ որ կը կատարէ միտքը: Ամէնէն մեծ բանը, որ մենք կը ճանչնանք՝ միտքն է:

Մենք աշխարհի վրայ ոյժ ըսուած բանը կը ճանչնանք: Ոյժը կայ ամէն նիւթի մէջ: Այդ ոյժը ո՞վ կ'օգտագործէ, ինչպէ՞ս կ'օգտագործուի: Միտքն է, որ ոյժը կ'օգտագործէ այնպէս ինչպէս պէտք է, ինչ նպատակի որ կ'ուզէ գործածել: Այսօր մենք շատ լաւ գիտենք ինչ որ նախորդ դարերու մարդիկ չէին գիտեր՝ հիւլէական ոյժը: Հիւլէական ոյժը ո՞վ գտաւ, եւ ինչպէ՞ս գտաւ: Նո՞ր ստեղծուեցաւ աշխարհի վրայ: Ոչ. երբ Աստուած ստեղծեց աշխարհը՝ եւ հիւլէական ոյժը սկիզբէն կար աշխարհի վրայ: Բայց մարդկային միտքն էր, որ գտաւ զայն եւ տիրեց անոր վրայ: Եթէ չըլլայ միտք մը՝ չի կրնար ոյժը կարգի բերել: Ոյժը կրնայ ինքզինք կործանել կամ կործանող ոյժ կը դառնայ եթէ երբեք չըլլայ միտք մը, որ զայն ուղղէ եւ զայն կարգաւորէ: Տիեզերքը ոյժ մըն է կամ տիեզերքի մէջ այն ինչ որ աշխարհը ստեղծեց ոյժ մըն է, բայց այդ ոյժը առանց միտքի, անգիտակից ոյժ մը չի կրնար ըլլալ. ընդհակառակը՝ ոյժ մըն է, որ միաժամանակ միտք է: Անոր համար է որ այս կարգաւորութիւնը մենք կը տեսնենք: Եւ ուր որ կարգաւորութիւն կը տեսնենք, հոն անպայմանօրէն կը փնտռենք հեղինակ մը: Երբ կը տեսնենք գիրք մը գեղեցկօրէն կազմուած, կը բանանք այդ գիրքը եւ կը տեսնենք գիրեր, որոնք տրամաբանական ծելով շարուած են, գիտենք որ այդ գիրքը ունի գրող մը, որովհետեւ գիրերը նոյ-

նիսկ եթէ գոյութիւն ունենան, առնենք զանոնք եւ նետենք իրարու քով, այդ գիրերը իրարու քով չեն գար բառ մը կամ նախադասութիւն մը կազմելու համար: Որքան ատեն որ չկայ միտք մը՝ այդ բանը անկարելի է որ ըլլայ: Հետեւաբար, տիեզերական այն ոյժը, որուն մասին կը խօսինք, միաժամանակ միտք է, ճարտարապետ մըն է, որ գիտէ կառուցել:

Այն ինչ որ մենք կը կոչենք ոյժ, լրիւ բացատրութիւն չէ եթէ երբեք անոր չմիացնենք միւս տարրերը: Եւ երբ կը մտածենք ոյժի մասին, որ միաժամանակ միտք է, այդ մտածողութիւնը, այդ ճարտարապետ ոյժը ուրիշ ոչ ոք է եթէ ոչ՝ միայն Աստուած, որովհետեւ կոյր ոյժ մը չի կրնար յառաջ բերել այս տիեզերքը այնպէս, ինչպէս մենք զայն կը ճանչնանք:

- Աստուած եթէ ոյժ է, ինչո՞ւ մենք պէտք է աղօթենք Անոր:

Երբ մենք կը խօսինք Աստուծոյ մասին, պարզապէս ոյժի մը մասին չէ որ կը խօսինք, այլ կը խօսինք մտածողութեան մը մասին: Մեր հաւատքը անոր վրայ կ'աւելցնէ բան մը, որ ամբողջ տիեզերքի մէջ ամէնէն կարելի սկզբունքն է. այդ բանը կը կոչուի սէր: Ամբողջ աշխարհը հիմնուած է սիրոյ վրայ եւ այն ոյժը, որ ներկայ աշխարհը ստեղծողն է, կարգաւորողը եւ պահպանողը, անիկա նաեւ սիրոյ միտքն է, այն սիրոյ միտքը, որ մեզ յառաջ բերաւ եւ նաեւ կ'ակնկալէ, որ մարդ արարածը իր սիրովը պատասխան տայ անոր: Այն ոյժը, որուն մասին մենք կը խօսինք՝ անձ մըն է, եւ երբ մենք կը խօսինք Աստուծոյ մասին, կը խօսինք իբրեւ անձ: Փաստօրէն, երբ Քրիստոս եկաւ՝ զԱյն ընդգծեց Հայր բառով, որ Հին Կտակարանին մէջ կար, բայց Ինքը աւելի եւս շեշտեց Հօր պատկերը, «Հայր մըն է» ըսաւ Անիկա, ծնող մըն է մեզի համար, որ ոչ միայն ծնաւ, այլ, ինչպէս երկրաւոր ծնողները մեզ կը խնամեն, կը մեծցնեն, որոշ նպատակի մը կը հասցնեն, այնպէս նաեւ Աստուած, Արարիչը այս տիեզերքին, մեզ ոչ միայն կը ստեղծէ, այլ նաեւ Իր սիրովը մեզ կ'աճեցնէ, մեզ նպատակի մը կը սահմանէ: Եթէ երբեք սիրոյ հայր մըն է եւ սիրող անձ մըն է, արդէն բացատրութիւնը կը դիւրանայ, թէ ինչո՞ւ մենք կ'աղօթենք Անոր: Աղօթքը ուրիշ բան չէ, եթէ ոչ գրոյց մը սիրտէ սիրտ, անձէ անձ: Այնպէս ինչպէս մենք մեր տեսած անձերուն հետ երբ կ'ուզենք մտերմութիւն հաստատել, ունինք լեզու, ունինք միտք, եւ կը փորձենք միտքին մէջ եղած մտածումը լեզուով արտայայտել, այնպէս ալ երբ Աստուծոյ դիմաց կը զգանք մենք զմեզ Աստուծոյ ներկայութիւնը կը փորձենք դիմագրաւել, որովհետեւ գիտենք, որ միտք մըն է անիկա, հետեւաբար կը լսէ մեզ, կը հասկնայ մեզ եւ նաեւ ամբողջական սէրն

է. սիրող սիրտ մըն է, որ Իր սիրով կրնայ հասկնալ մեր բոլոր վիճակները: Այնպէս ինչպէս մենք մեր ծնողքին պիտի պատմէինք մեր բոլոր դժուարութիւնները եւ անոնցմէ նաեւ պիտի խնդրէինք մեզի յատուկ օգնութիւնը, ճիշդ նոյն ձեւով կը վերաբերինք, նոյն ձեւով կը դիմենք Աստուծոյ, կը խօսինք Անոր հետ, կ'աղօթենք Աստուծոյ եւ կը խնդրենք, որ օգնէ մեզի մեր տկարութիւններուն մէջ, որ հասկնայ մեզ մեր սխալներուն մէջ եւ որ առաջնորդէ մեզ այն նպատակին, որ Ինք մեզի համար կը կամենայ: Ս. Գրիգոր Նարեկացի կը սահմանէ աղօթքը իբրեւ «խօսք ընդ Աստուծոյ». Աստուծոյ հետ խօսակցութիւն է աղօթքը, անոր համար է որ մենք զայն կ'ուղղենք Աստուծոյ:

- Ինչպէ՞ս պէտք է սիրենք զԱստուած, գիտնալով թէ մենք զԱյն չենք ճանչնար:

Մենք բոլորս ալ բարեբախտութիւնն ունինք ճանչնալու մեր ծնողները: Պահ մը երեւակայենք, որ մենք մեր մանուկ տարիքէն կորսնցուցած ըլլայինք մեր ծնողքը (կորսնցուցածը՝ ոչ անպայման մահացած ըլլալու հասկացողութեամբ). բաժնուած ըլլայինք մեր ծնողներէն. օրինակ՝ ինչպէս որ Եղեռնի օրերուն ծնողներ եւ զաւակներ բաժնուեցան իրարմէ: Զաւակները խլուեցան եւ տարուեցան ուրիշ տեղ եւ իրարու անծանօթ մնացին երկար ժամանակ. ոմանք ընդմիշտ, ոմանք երկար ժամանակով: Այս ձեւով ծնողքէ զրկուած երեխայ մը ի՞նչ ձեւով պիտի մտածէր: Ինքը յստակ գիտակցութիւնն ունի, որ երկինքէն ինկած չէ. գիտէ որ հօրմէ եւ մօրմէ մը ծնած է օր մը՝ նոյնիսկ եթէ այդ հայրը եւ մայրը իր դիմաց չկան եւ ինք զանոնք երբեք ճանչցած չէ: Եթէ գիտէ, որ ունեցեր է ծնողք, յաճախ կրնայ նաեւ իր միտքին մէջ փնտռել զանոնք: Ճիշդ նոյնն է մեր պարագային: Չենք ճանչնար, այն հասկացողութեամբ որ մենք զԱստուած չենք տեսած, որովհետեւ նաեւ ֆիզիքական աչքով տեսանելի չէ. սակայն Անոր գոյութիւնը գիտենք այնպէս ինչպէս երկրաւոր մեր ծնողներուն գոյութիւնը եւ մտովի կրնանք փնտռել զԱյն, կրնանք ճանչնալ զԱյն եւ աղօթել Անոր:

Հարցը ունի նաեւ երկրորդ երեսը, որովհետեւ Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ ճիշդ այդ նպատակով, որովհետեւ եկաւ ըսելու համար. «Այդ Աստուածը, որ դուք չէք ճանչցած կամ չէք ճանչնար, Ես եկայ ցոյց տալու ձեզի»: Մարդկային կերպարանքով մը եկաւ, բայց եկաւ Իր եւ Իր գործերուն ընդմէջէն ցուցաբերելու համար այն ինչ որ ճշմարիտ Աստուծոյ պատկերը պէտք էր ըլլար: Եւ մենք, ինչպէս կ'ըսեն Աւետարանները, Քրիստոսի անծին ընդմէջէն տեսանք եւ ճանչցանք զԱստուած: Կը յիշեմ Պօղոս Առաքեալի մէկ խօսքը, որ կ'ըսէ.

«Ներկայիս երբ մենք Աստուծոյ մասին կը խօսինք կամ կը խորհինք, զԱյն կը պատկերացնենք աղօտ կերպով, բայց պիտի զայ ժամանակը, երբ մենք ներկայ կեանքէն ելլենք եւ Աստուծոյ դէմ գտնուինք: Այն ատեն զԱյն պիտի ճանչնանք ամբողջապէս, այնպէս, ինչպէս որ է Ինքը»: Հետեւաբար, ներկայ այդ անկատար կամ աղօտ պատկերը մեր միտքին մէջ պատճառ չէ, որ մենք չդիմենք Անոր եւ չաղօթենք, այլ խօսքով՝ մեր սիրոյ կապը չունենանք մեր Արարիչին՝ Աստուծոյ հետ:

- Ի՞նչ է Քորանին եւ Աստուածաշունչին տարբերութիւնը:

Քորանը իր կէտով առնուած է Աստուածաշունչէն. քաղուածք մըն է Աստուածաշունչէն, երբեմն կրնանք մէջբերումները տող առ տող բաղդատել եւ տեսնել որոշ տեղեկութիւններ ուղղակիօրէն այնպէս, ինչպէս որ կան Աստուածաշունչին մէջ, իսկ որոշ տեղեկութիւններ՝ թեթեւ մը փոխուած ձեւով, որոնց վրայ եկած են աւելնալու կարգ մը ուրիշ տարրեր, որոնք հիմնականին մէջ պատուիրներ են իրենց պայմաններուն յատուկ, այլ խօսքով՝ այն ժողովուրդներուն, որոնք անցեալին Արաբական Թերակղզիին մէջ կ'ապրէին: Անոնք իրենց պայմաններն ունէին եւ այդ պայմաններուն վերաբերող յատուկ երեւոյթներ են այդ ուրիշ տարրերը: Քորանը ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուածաշունչին մասնակի ընդօրինակութիւնը:

- Աստուածաշունչին ճշգրտութիւնը ինչպէ՞ս կարելի է գիտնալ:

Ամէն գիրք պէտք է փորձի ենթարկուի՝ գիտնալու համար թէ որքանո՞վ ստոյգ է եւ որքանո՞վ ճշգրիտ է: Աստուածաշունչը կարելի է փորձի ենթարկել: Անցնող 3000 տարիներու ընթացքին, բազմաթիւ մարդիկ, գիտնական թէ ոչ, փորձեցին Աստուածաշունչը սուտ յայտարարել՝ անոր մէջ հարիւրաւոր, եթէ ոչ հազարաւոր կէտեր փնտռելով եւ գտնելով, ըսելով որ ասիկա գիտութեան համաձայն չէ, այս մէկը մեր պատմական տեղեկութիւններուն համաձայն չէ, այս ինչը աշխարհագրականօրէն սխալ է: 19-րդ դարու կեսէն մինչեւ հիմա, շուրջ 150 տարիներէ ի վեր, այն գիտութիւնները որոնք կը զբաղին բնագիտութեամբ կամ բնաբանութեամբ, պեղումներով, եկան մէկ առ մէկ ցոյց տալու որ այս բոլոր առարկութիւնները իրենք սխալ են եւ Աստուածաշունչին բոլոր տեղեկութիւնները ճշգրիտ են հարիւր առ հարիւր, նոյնիսկ գիտութեան վերաբերող կարգ մը հաստատումներ որ ունի Աստուածաշունչը: Գիտութիւնը եկաւ հաստատելու, թէ այդ հաստատումները ճիշդ են եւ ինքնին վկայութիւն են Աստուածաշունչի մարդկային հեղինակութեան: Օրինակ՝ աշխարհի մասին: Մարդիկ երկար ատեն կը կարծէին որ այս աշխարհը տափարակ է եւ կը կար-

ծէին որ Աստուածաշունչն ալ այդպէս կ'ըսէ: Միջին Դարերուն եղան քանի մը գիտնականներ, որոնք խարոյկի դատապարտուեցան, որովհետեւ համարձակեցան ըսել, թէ Երկրագունդը կլոր է: Օրինակ՝ Կալիլէօն, որը 1603-ին դատի կանչուեցաւ եւ ստիպուած եղաւ իր խօսքը ետ քաշել: Բայց Աստուածաշունչը արդեօ՞ք այդպէս կ'ըսէ: Աստուածաշունչը բնաւ այդպէս չ'ըսեր: Ընդհակառակը, մէկ-երկու հաստատմունքներ Աստուածաշունչին մէջ ցոյց կու տան, թէ Երկիրը կլոր է: Օրինակ եթէ կարդաք Եսայիի մարգարէութեան 40-րդ գլուխին 2-րդ համարը, հոն կը տեսնէք, որ Աստուծոյ համար կ'ըսէ որ Ինքն է որ կը նստի աշխարհի շրջանակին վրայ: Աստուածաշունչը աշխարհը կլոր կը պատկերացնէ, երբեք չ'ըսեր որ աշխարհը տափակ է: Ասիկա, երբ ոչ մէկ անձ կրնար երեւակայել թէ աշխարհը կլոր է: Ուրկէ՞ կու գայ այս գիտութիւնը: Մինչեւ տակաւին վերջին դարերը, մարդիկ կ'ըսէին որ աշխարհը տափարակ է, բանի մը վրայ կը կենայ: Հնդիկներու Հինտու կրօնքը կ'ըսէ թէ աշխարհը չորս փիղերու վրայ նստած է, որոնք չորս ծայրերէն ամուր կերպով կը բռնեն գայն: Յունական դիցաբանութիւնը երբ կարդանք կայ մարդու մը նկարը, Աթլաս կոչուած, որ Երկրագունդն իր ուսին առած է: Ուրիշ ժողովուրդներ կ'ըսէին որ Երկիրը սիւներու վրայ կանգնած է: Աստուածաշունչը այդպիսի բան չ'ըսեր: Երբ կը կարդաք Յոբի գիրքի 26-րդ գլուխին 7-րդ համարը, կը տեսնէք որ այնտեղ կ'ըսէ, որ Ինքն է որ աշխարհը վեր կը պահէ Իր Շունչով, որ պարապին վրայ կախուած է: Ո՞վ կրնար երեւակայել իր ժամանակին որ աշխարհը օդին մէջ կանգնած ըլլայ եւ Աստուծոյ Շունչով պահուած: Միայն նորագոյն ժամանակներու գիտութիւնն է, որ եկաւ հաստատելու, թէ աշխարհը օդին մէջ կախուած է: Աստուածաշունչին մէջ եղած հաստատումները ցոյց տուին որ համապատասխան են այսօրուան գիտութեան տուեալներուն: Աստուածաշունչը իր ապացոյցը իր մէջ ունի, թէ իր հեղինակը մարդ չի կրնար ըլլալ, որովհետեւ եթէ պարզ մարդիկ ըլլային իրենց ժամանակի գիտութեամբ, սխալ տեղեկութիւններ պիտի գրէին անոր մէջ, բան մը, զոր մենք չենք տեսներ Աստուածաշունչին մէջ:

- Աստուած ուրկէ՞ եկաւ, կամ ո՞վ ստեղծեց զԱստուած:

Ամէն արդիւնք պատճառ մը ունի, բայց ի վերջոյ կայ վերջին պատճառ մը կամ պէտք է ըլլայ սկզբնական առաջին պատճառ մը, որ իրեն պատճառ չունի, որովհետեւ այս գոյութիւնները այլապէս բոլորն ալ չկան եւ մենք ալ գոյութիւն չունինք: Աստուած նոյնինքն գոյութիւնն է: Ինքը ամէն ինչի պատճառն է, բայց Ինքը առանց պատճառի է՝ սկզբնական առաջին պատճառն է: Ասիկա կու գայ

նաեւ բացատրութեամբ մը որ մեզի ցոյց կու տայ, որ բոլոր միւս պատճառները որոնք Աստուծոյ յառաջ եկած են, անկատար պատճառներ են: Պէտք է ըլլայ կատարեալ պատճառ մը, որ ամէն տեսակի կատարելութիւն ունենայ եւ յառաջ բերէ: Աստուած Ինքը այդ կատարեալ էակն է, կատարելութիւններու ամբողջութիւնը, որ յառաջ բերաւ այս տիեզերքը: Եւ այդպէս ալ կ'երգենք Ներսէս Շնորհալիի երգը «Լոյս, առաջին լոյս»: Հետեւաբար, գիտութիւնն ալ գիտէ որ բոլոր պատճառներուն մէջ պէտք է հասնի տեղ մը, ուր առաջին պատճառ մը կայ, որմէ անդին ուրիշ բան կարելի չէ երեւակայել կամ հասկնալ: Եւ Աստուած Ինք այս առաջին եւ անհրաժեշտ պատճառն է, որ ամէն ինչ յառաջ բերաւ:

- Ի՞նչ է «մեծ պայթում»-ին տեսութիւնը:

«Մեծ պայթում»-ին տեսութիւնը չի վերաբերիր միայն աշխարհին, այլ՝ կը վերաբերի ամբողջ տիեզերքին, թէեւ անով սկսաւ գոյութիւնը տիեզերական մեր ներկայիս ճանչցած կարգին: Ասիկա Աստուծոյ գոյութեան հետ որեւէ կապ չունի, որովհետեւ գոյութիւնը մինչեւ այդ մեծ պայթումը կ'երթայ, ըսելով որ սկիզբը կար նիւթի զանգուած մը, որ պայթեցաւ եւ յետոյ կազային վիճակ մը յառաջացաւ եւ յետոյ կազային ձեւով ցրուեցաւ միջոցին մէջ, յետոյ աստիճանական սառեցումով յառաջ եկան տիեզերական մարմինները, եւայլն: Ինչ կը վերաբերի ենթադրեալ միւս աշխարհներուն եւ այնտեղէն մեզի եղած այցելութիւններուն, եթէ անիկա հաստատուի, պարզապէս պիտի նշանակէ որ կեանք ըսուած բանը գոյութիւն ունի նաեւ ուրիշ տեղեր: Բայց եթէ երբեք սկզբնական զանգուած մը կար, որ պայթեցաւ եւ տիեզերքը կազմուեցաւ եւ եթէ այդ զանգուածին միայն մէկ մոլորակն ենք մենք՝ մեր Երկրագունդը, եւ կ'ընդունինք որ գայն Աստուած ստեղծած է, ինչո՞ւ համար միւս մոլորակներուն գոյութիւնը պիտի չվերագրենք Աստուծոյ: Այդ ձեւով, ոչ մէկ բախում կը մնայ կրօնքին եւ այդ տեղեկութիւններուն միջեւ:

- Ի՞նչ է սատանայապաշտութիւնը:

Ներկայիս բաւական տարածում գտած երեւոյթ մըն է սատանայապաշտութիւնը: Տարածում գտնելը երկու բանի արդիւնք է: Առաջինը մակերեսային հետաքրքրութիւնն է ոմանց համար, ուրեմն ժամանակաւոր հետաքրքրութիւն մըն է միայն: Երկրորդը հինէն ի վեր մարդոց մէջ եղած հետաքրքրութեան արտայայտութիւնն է, որ ինքնին ունի իր հիմքերը:

Այս շարժումը իրեն հիմք ունի այն ինչ որ մենք կը կոչենք «չա-

րը» կամ չարին ներկայութիւնը աշխարհին մէջ: Բոլոր մարդիկն ալ համոզուած են բարիին, բայց իրենց շուրջը աւելի կը տեսնեն չարը եւ այդ չարին դիմաց, բնականաբար, կը հարցնեն, երբ մանաւանդ այդ շօշափելի ձեւով կը ներկայանայ մեզի, այսինքն հիւանդութեան մը, ցաւի մը, վիշտի մը կամ կորուստի մը ձեւով: Այս բոլորին դիմաց մենք յաճախ կը հարցնենք. ինչո՞ւ. եւ այդ մէկը կը տազնապեցնէ: Այդ տազնապին դիմաց մարդիկ կը փորձեն «ինչո՞ւ»ին պատասխանը գտնել: Այդ փնտռտուքը, ինչպէս ամէն փնտռտուք, երբեմն կրնայ գիրենք ուղիղ ճամբով առաջնորդել, երբեմն ալ կրնայ սխալ ճամբով առաջնորդել: Ոմանք, կամայ թէ ակամայ, կ'ընտրեն երկրորդ ճամբան, որ գիրենք կը տանի սխալ ուղղութեամբ: Անոնք կը փորձեն չարին հետեւիլ այն միամիտ համոզումով, որ եթէ չարին հնազանդին կամ չարին համակերպին, այդ չարը այլեւս իրենց վնաս չի հասցնէր: Չարը - որուն անձնաւորումը Սուրբ Գիրքին մէջ կը կոչուի սատանայ եւ որ յաճախ նաեւ հոգեկան աշխարհին մէջ ունի իր ներկայացուցիչները, որոնցմով կայ եւ կը գործէ ներկայ աշխարհին մէջ - մարդը ո՛չ թէ չարէն կը փրկէ, այլ՝ կ'առաջնորդէ եւ կը տանի աւելի մեծ չարի մը, ժամանակաւոր կերպով իրեն կու տայ որոշ առաւելութիւններ յետոյ սակայն, ամբողջութեամբ գայն առնելու համար իր ճիրաններուն մէջ: Չարի այդ ճամբան այն ճամբան է, որ ոմանք կ'որդեգրեն ինքնախաբէութեամբ եւ յետոյ կը դառնան անոր գոհերը, որովհետեւ չարը երբեք չի կրնար բարիք պարգեւել մարդուն. իր բնութեամբ իսկ եղած է մարդուն վնաս հասցնելու համար եւ երբեք չի կրնար բարիքի պատճառ ըլլալ մարդուն համար: Երբեք վստահ չենք թէ այդ հետաքրքրութիւնը ի՞նչ բանի կ'առաջնորդէ մարդը: Ներկայիս անմեղ հետաքրքրութիւններն ալ կրնան մարդս առաջնորդել այն չարիքին, որուն ինքը անտեղեակ է: Ինչպէս մանուկ մը երբեմն առանց գիտնալու կ'իյնայ որոշ դժուարութեանց մէջ, այնպէս նաեւ մարդիկ - յաճախ հետաքրքրութեամբ - եթէ չգիտնան ճիշդ ուղղութիւնը թէ դէպի ուր պիտի երթան, անպայմանօրէն կը շեղին: Նոյնն է նաեւ այդ չարին ուղղութեամբ կատարուած փորձը, որովհետեւ մարդիկ մութին մէջ են, արդիւնքին վստահ չեն երբեք: Երբ փորձը կ'ընեն անմեղ կերպով, կ'առաջնորդուին այնպիսի չարիքներու եւ վնասներու, որոնցմէ դժուար կ'ազատագրուին անկէ ետք:

- Կրնա՞յ ըլլալ որ Աստուծոյ հաւատաս, բայց Յիսուսին չհաւատաս:
- Կրնայ ըլլալ եւ սակայն Քրիստոս Ինքը աշխարհ եկաւ մեզի ըսելու համար որ եթէ երբեք Հօրը կը հաւատանք՝ անպայմանօրէն պէտք

է հաւատանք նաեւ Իր Որդիին: Քրիստոսի ունեցած կեանքը այս աշխարհին վրայ - եթէ երբեք այդ կեանքի կարգ մը երեսներուն ծանօթ ենք - եղաւ զԱստուած ճանչնալու համար: Մենք զԱստուած չէինք գիտեր այնպէս, ինչպէս որ պէտք էր ճանչնայինք: Ան եկաւ որպէսզի մենք ճանչնանք: Արդ, Յիսուսի չհաւատալ կը նշանակէ Հայրը չճանչնալ այնպէս, ինչպէս պէտք է մենք ճանչնանք: Առանց Յիսուսի Հօրը մասին տուած գիտութեան, ընդհանրապէս մեր ունեցած գիտութիւնը անկատար գիտութիւն է, ամբողջական գիտութիւն մը չէ: Քրիստոս իբրեւ մարդ եկաւ Աստուծոյ սէրը մեզի ցոյց տալու համար Իր ծնունդով, Իր կեանքով, Իր գործունէութեամբ, մասնաւորաբար Իր խաչելութեամբ եւ մահով եկաւ ցոյց տալու այնպէս, ինչպէս Յովհաննէս Աւետարանիչ մեզի կ'ըսէ, թէ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի, այլ՝ յաւիտենական կեանք ունենայ: Եթէ երբեք Յիսուս անառակ որդիին կամ կորսուած ոչխարին օրինակը տուաւ, այդ օրինակը տուաւ մեզի ցոյց տալու համար, որ մենք պէտք ունինք հովիւի մը առաջնորդութեան եւ Ինքը եկաւ այդ հովիւն ըլլալու: Մենք պէտք ունէինք ճանչնալու Հայրը եւ Քրիստոս եկաւ Հայրը ճանչցնելու: Ան Հայրը ճանչցուց սիրոյ պատկերներով, ըսելով որ Աստուած ո՛չ միայն մեր ստեղծիչն է, այլ նաեւ կը սպասէ մեզ, մեր գոյութիւնը, մեր դարձը, մեր զինք ճանչնալը, զինք սիրելը, Իրեն պատասխանելը աղօթքին՝ այդ կապին հաղորդակցութեամբ: Աստուած կը սպասէ, որովհետեւ ինչպէս իսկական զաւակ մը չի կրնար իր հօրմէն անջատուած մնալ, այնպէս նաեւ հոգեւոր զաւակ մը Աստուծոյ հետ այդ կապը պէտք է ունենայ: Այդ կապը Յիսուս Ինք մեզի սորվեցուց ճիշդ ձեւով: Հետեւաբար, Յիսուսը չճանչնալը թէպէտ կարելի է (օրինակ մահմետականները զԱստուած կը ճանչնան, բայց Յիսուսը չճանչցան), բայց մենք Նոր Կտակարանով կը սորվինք որ [Հայր Աստուծոյ ճանաչման] այդ գիտութիւնն անկատար է առանց Յիսուսը ճանչնալու: Եւ եթէ երբեք յաւիտենական կեանքին կը ձգտինք առանց Յիսուսը մեր մէջ առնելու, այդ յաւիտենական կեանքն է, որ մենք պիտի չուենանք, բան մը, որուն համար Յիսուս եկաւ աշխարհ:

- Եթէ Աստուած ստեղծած է մարդը, ինչպէս կ'ըսէ Ադամ եւ Եւայի պատմութիւնը, ինչո՞ւ կ'ըսուի թէ մարդը յառաջ եկած է կապիկէ:
- Աստուած շինած է աշխարհը եւ մարդը, սակայն գիտութիւնը կը փաստէ՞, որ մարդը ժամանակին կենդանի եղած է եւ ժամանակի ընթացքին վերափոխուելով վերածուած է մարդու: Աստուած, թէ՞ գիտութիւն: Գիտութիւնը որեւէ մէկ ատեն չ'ըսեր, որ մարդը կապիկէն

յառաջ եկած է: Առաջին անգամ այդ մասին խօսողն եղաւ անգլիացի իմաստասէր եւ կենդանաբան մը Չարլզ Տարուին կոչուած, որ 1871 թուին տպուած իր մէկ գիրքին մէջ մարդուն ծագման մասին, ըսաւ թէ մարդը կապիկէն յառաջ եկած է: Բայց ասիկա գիտական տեսութի՞ւն մըն էր: Գիտութեան եւ փիլիսոփայութեան տարբերութիւնն այն է, որ փիլիսոփայութիւնը ենթադրութիւններ կ'ընէ, այսինքն՝ միտքի ճամբով որոշ տեսութիւններ յառաջ կը բերէ, ըսելով այսպէս եղած պէտք է ըլլայ, կը փորձէ աշխարհի եւ երեւոյթներու մասին տրամաբանական բացատրութիւններ առաջարկել: Գիտութիւնը երբեք այդպիսի տրամաբանական բացատրութիւններ առաջարկելու մասին չի մտածեր: Գիտութիւնը կը գբաղի գործով: Ան տեսութիւն չէ, այլ փորձերու հիման վրայ եզրակացութիւններ կը հանէ: Կը փորձէ թէ ամէն մէկ արդիւնք ի՞նչ պատճառ ունի, եւ եթէ այդ փորձերը հաստատեն այդ մէկը, իբրեւ եզրակացութիւն կու տայ մեզի: Ատիկա տեսութիւն չէ. տեսութիւնը գիտութենէն տարբեր է ամբողջութեամբ:

Որպէսզի գիտնանք թէ Տարուինին ըսածը գիտութիւն չէ, 20-րդ դարու ամբողջ գիտութիւնը կու գայ մեզի հակառակը ըսելու, որովհետեւ Տարուինի տեսութիւնը կը հիմնուի հետեւեալ տրամաբանութեան վրայ: Կեանք ըսուած բանը յառաջ եկած է իր ամէնէն պարզ ձեւին մէջ եւ աստիճանաբար զարգացած է հասնելու համար իոն ինչ որ է այսօր: 20-րդ դարու գիտութիւնը անդադար փորձեց կեանքի մէկ տեսակէն ուրիշ տեսակի անցնիլ, բայց բոլոր փորձերն ալ ի զուր են: Որպէսզի մարդիկ մարդուն կապիկէն յառաջ եկած ըլլալու տեսութիւնը հաստատեն, հինէն մնացած բրածոներ փորեցին, զանոնք նմանցնել ուզեցին կապիկի. կապիկին զանկը եւ մարդուն զանկը որոշ ձեւերով փորձեցին իրարու նմանցնել: Աստիճանական զարգացում գոյութիւն չունի: Այսօր գիտական որեւէ նոր հանրագիտարանի կամ թերթի մէջ այդ տեսութիւնն իր տեղը չունի: Մէկ տեսակէն ուրիշ տեսակի կարելի չէ անցնիլ: Կարելի չէ երեւակայել որ ճանճը դառնայ կապիկ եւ կապիկը դառնայ մարդ: Ասիկա ցոյց կու տայ, որ եթէ երբեք կենդանական բոլոր տեսակները կան, կային սկիզբէն: Գիտութիւնը Աստուծոյ մասին չի խօսիր, այլապէս փիլիսոփայութիւն պիտի դառնար: Գիտութիւնը մէկ բան կը հաստատէ փորձով եւ այն է որ ճանճը ինչպէս որ էր 4 միլիար տարի առաջ, ճիշդ այնպէս է այսօր, կենդանական եւ բուսական բոլոր տեսակները այնպէս, ինչպէս որ էին առաջին անգամ աշխարհի վրայ իրենց յայտնուած ատենը, նոյնն են նաեւ այսօր: Իւրաքանչիւրն ինքն իր մէջ կրնայ պզտիկ փոփոխութիւններ ունեցած ըլլալ, բայց կենդանական որեւէ տեսակ ուրիշ տեսակի չի փոխուիր: Հետեւաբար, մարդն ալ կենդանիէ առաջ

եկած չի կրնար ըլլալ:

- Ի՞նչ փաստ, որ Աստուած գոյութիւն ունի:

Այս աշխարհը եթէ երբեք կայ ծելով մը՝ մենք պիտի ընդունինք որ կամ ինքնին կայ, կամ ստեղծուած է մէկու մը կողմէ, զոր մենք կը կոչենք Աստուած: Նիւթը ինքնին գոյութիւն չի կրնար ունենալ, որովհետեւ նիւթը փոխուող բան մըն է. նիւթը կը փճանայ ժամանակի ընթացքին, եւ ինչ որ փոխուող է, ինքզինք չի կրնար յառաջ բերել:

- Ադամ - Եւայի մասին:

Աստուածաշունչը մեզի կը ներկայացնէ Ադամի-Եւայի մասին [պատումը]: Առաջին, յիշեցէ՛ք որ Ադամ եւ Եւա անուններ չեն, այլ՝ Ադամ կը նշանակէ մարդ, նոյնպէս՝ Եւա եբրայերէն լեզուին մէջ կը նշանակէ կեանք: Այս առաջին մարդը եւ առաջին կինը, պէ՛տք է հաւատալ որ կային: Եթէ տիեզերքը յառաջ եկաւ նիւթէ մը, որ պայթեցաւ, ինչո՞ւ համար չհաւատանք որ մարդկութիւնը զոյգէ մը յառաջ եկաւ:

Ծննդոց գիրքին 5-րդ գլուխը իր 4-րդ համարով կ'ըսէ՝ երբ Ադամի օրերը Սէթը ծնանելէն ետքը 800 տարի եղան, բազմաթիւ տղաք եւ աղջիկներ ծնան Կայէնէն, Սէթէն եւ Աբելէն ետք: Աստուածաշունչը մարդկութեան պատմութիւնը իր ամբողջութեան մէջ չի ներկայացներ: Կու տայ կարելորդ դէպքեր, որոնք կարելորդ են մեզի՝ դաստիարակչական առումով: Օրինակ, Կայէնի եւ Աբելի դրուագը մեզի բան մը կը սորվեցնէ, նախ՝ թէ չարը առանց հետեւանքի չմնաց եւ այդ չարին մեծագոյն հետեւանքը եղբայրասպանութիւնն էր: Մարդ եւ Աստուած յարաբերութեան կարեւորութիւնը ո՞րն է: Աստուած ի՞նչ կ'ուզէ մարդ արարածէն, որպէսզի մարդը ընդունելի ըլլայ Իրեն: Կայէնի վարմունքը ընդունելի չէր Աստուծոյ, մինչդեռ Աբել իր բարի ընթացքով ընդունելի էր Աստուծոյ: Միւսներուն կեանքին մէջ կարելորդ իրողութիւններ եթէ ըլլային, անպայմանօրէն կը յիշուէին. կարելորդ երբ կ'ըսենք, պէտք է յիշենք որ Աստուածաշունչը հոգեւոր դաստիարակութիւն մը կ'ուզէ տալ:

- Մեր Եկեղեցին ինչո՞ւ չընդունիր Եհովայի վկաները: Ուրկէ՞ յառաջ եկած են անոնք:

Եհովայի վկաները հաւատացեալներու խումբ մըն են, որոնք հիմնականին մէջ մենք կը կոչենք աղանդ: Աղանդ կը նշանակէ Եկեղեցւոյ հիմնական մտածողութենէն տարբեր մտածողութիւն ունեցող մարդիկ: Աղանդները Եկեղեցւոյ կեանքին մէջ նոր չեն: Որովհետեւ

մարդկային միտքը ազատ է եւ քմահաճ, առաջին իսկ դարէն այդպիսի խմբաւորումներ կային:

Եհովայի վկաներուն կապը Եկեղեցւոյ կեանքին հետ. 3-4-րդ դարերուն յառաջ եկան աղանդաւորներ, առաջին հերթին Աղեքսանդրիոյ եպիսկոպոսի մը կողմէ, որ Արիոս կը կոչուէր, յետոյ իր հետեւորդներուն կողմէ, որոնք իրենց տեսութիւնները տարածեցին եւ Եկեղեցւոյ կեանքին մէջ բաւական շփոթ յառաջ բերին: Եհովայի վկաները նոր աղանդ մը չեն: Նոյն մտածողութիւնը նոր ձեւով մը կը փորձեն արտայայտել: 1870-ական թուականներէն սկսեալ իրենց ղեկավարն եղաւ Չարլզ Ռասըլ անունով անձ մը, որ մերժուած էր իր Եկեղեցիին կողմէ իր տարօրինակ գաղափարներուն համար, նաեւ կը մերժէր դժոխքի գաղափարը, որովհետեւ սարսափը ունէր անոր: Ժամանակ մը մերժեց հաւատալ Աստուածաշունչին, յետոյ վերստին մօտեցաւ, Աստուածաշունչը ուսումնասիրեց եւ սկսաւ ինքը իր բացատրութիւնները տալ՝ առանց մտիկ ընելու, թէ Եկեղեցին ի՞նչ ձեւով կը բացատրէ զայն: Իր այս սեփական բացատրութիւնները զինք աստիճանաբար հեռացուցին ճշմարտութենէն: Ասոր վկայութիւնը դարձեալ ինքն է, անոր համար որ տարիներու ընթացքին ինքը իր յայտարարութիւնները աստիճանաբար փոխեց: Սկիզբը կ'ըսէր թէ բուրգերը Աստուած Ինքը շինած է եւ այդ Աստուծոյ մեծագոյն վկայութիւնն է. ժամանակ մը ետք ըսաւ որ աստիկա սատանային գործն է եւ սատանային հնարքներէն մէկն է մարդիկը մոլորեցնելու Աստուծոյ: Աստուածաշունչի բազմաթիւ ճշմարտութիւններուն վերաբերող հակասական յայտարարութիւններ ըրաւ իր կեանքի տարբեր ժամանակներուն, ինչ որ ցոյց կու տայ, թէ ինք լրիւ համոզուած չէ, եւ պատահականօրէն այսինչ ժամանակին այսինչ տեսակի յայտարարութիւններ ըրաւ եւ ժամանակի ընթացքին փոխեց: Յետոյ ունեցաւ իր հետեւորդները, որոնք աստիճանաբար, ներկայ դարու 1930-ական թուականներէն սկսեալ աւելի կազմակերպուեցան եւ մեծցան:

Ամէնէն կարեւորը, որ գիրենք կը տարբերէ մեր Եկեղեցիէն Ս. Երրորդութեան հաւատքն է. իրենք չեն հաւատար Ս. Երրորդութեան: Ս. Երրորդութիւնը մերժելու համար՝ չեն հաւատար Ս. Հոգիին առանձին անձնաւորութիւն մը ըլլալուն եւ չեն հաւատար Յիսուսի Աստուածութեան: Իրենց համար՝ Յիսուս պարզ մարդ մըն էր եւ Աստուծոյ հետ Անոր կապը այն էր, որ Յիսուս Աստուծոյ եւ Անոր բոլոր մարգարէներուն կապն էր. մէկը որ կը ղրկուի Աստուծոյ կողմէ՝ վկայութիւն մը տալու համար աշխարհի մէջ: Հետեւաբար, Աստուած ըսելով իրենք կը հասկնան միայն Հայրը, մինչ Քրիստոսի Եկեղեցին կը հաւատայ Աստուծոյ երեք անձնաւորութեան:

Հաւատքը մենք չէ որ ստեղծած ենք, Քրիստոս Ինք տուած է մեզի: Քրիստոս վերջին անգամ երբ Իր յարութենէն ետքը Իր աշակերտները պիտի ղրկէր աշխարհի չորս կողմերը, որպէսզի անոնք ալ քարոզեն, անոնց ըսաւ. «Գացէ՛ք ամբողջ աշխարհ, բոլոր մարդոց քարոզեցէ՛ք, սորվեցուցէ՛ք անոնց ինչ որ ես ձեզի սորվեցուցի, մկրտեցէ՛ք զանոնք Հօրը, Որդիին եւ Ս. Հոգիին անունով եւ գիտցէ՛ք որ այսուհետեւ ես ձեզի հետ եմ միշտ»: Քրիստոս Ինքը մեզի սորվեցուց Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով մկրտութիւնը կատարել: Եթէ երբեք Աստուած միայն մէկ անձնաւորութիւն է, այնպէս ինչպէս Եհովայի վկաները կ'ըսեն, ինչո՞ւ Քրիստոս մեզի պիտի ըսէր որ Ս. Երրորդութեան անունով կատարենք մկրտութիւնը եւ ինչո՞ւ Քրիստոս Ինքը Իր անձին մասին շատ մը հաստատումներ պիտի կատարէր, որոնք ցոյց կու տան Իր Աստուած ըլլալը: Առիթով մը երբ կը խօսէր եւ Իր Աստուած ըլլալը յայտնեց, հրեաները, որոնք շատ նախանձախնդիր էին մէկ Աստուած ճանչնալու, պիտի քարկոծէին զԻնք՝ սպաննելու համար: Յովհաննէսի Աւետարանը իր առաջին տողին մէջ դարձեալ կը հաստատէ, որ Քրիստոս Աստուած է, զինք կը կոչէ Բանը՝ Աստուծոյ Խօսքը եւ կ'ըսէ, թէ Բանը սկիզբէն էր, սկիզբէն Աստուծոյ մօտ էր Անիկա եւ Բանը Աստուած էր:

Դարձեալ երկու ընտրութիւն ունինք: Կամ այն է որ կը մերժենք Նոր Կտակարանը, կամ կ'ընդունինք Նոր Կտակարանը եւ Յիսուսի ուսուցումները, ինչ որ ցոյց կու տայ, թէ Ս. Երրորդութեան վարդապետութիւնը - որ բոլոր քրիստոնէայ Եկեղեցիներուն հաւատամքն է - անիկա է ճշմարտութիւնը եւ Եհովայի վկաները հեռացած են այդ ճշմարտութենէն:

ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԻԺՈՒՄԸ

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԱՅԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ¹

«Մօրս արգանդէն իսկ քեզի յարեցայ, դեռ մօրս որովայնէն՝ Դուն ես իմ Աստուածս» (Սղ 22.10)

Արհեստական վիժումի մասին Հայց. Եկեղեցւոյ կեցուածքը վիժումի պարզելու համար անհրաժեշտ պիտի ըլլար անցնիլ մեր եկեղեցական գրականութեան բոլոր էջերէն, եւ մանաւանդ բոլոր դարերու Եկեղեցւոյ հայրերու ու վարդապետներու գրուածքներուն մէջէն ժողովել ամէն նիւթ որ սոյն հարցին կ'առնչուի: Այդպիսի աշխատանքի մը, այսինքն ուսումնասիրութեան մը բաւարար ժամանակը կը պակսէր ինձի. ուստի պիտի բաւարարուիմ ներկայացնելով նախ Աստուածաշունչին կեցուածքը այս մասին, ապա մեր Եկեղեցւոյ անցեալ կեցուածքը՝ արտացոլացուած մեր Եկեղեցւոյ Կանոնագիրքին մէջ, եւ Եկեղեցւոյ մտածողութիւնն ու կեցուածքը՝ արդի ժամանակներուն:

Որեւէ շփոթէ հեռու մնալու համար սկիզբէն ընդգծեմ, թէ ներկայ խօսքին մէջ «վիժում» բացատրութիւնը կը վերաբերի միայն վիժումի արհեստական, այսինքն կամաւոր փորձերուն կամ արարքներուն: Քննարկումէ դուրս կը մնայ բնական կամ ինքնաբեր վիժումը, որ արկածի արդիւնք է եւ որուն մէջ կինը կամ մայրը պատասխանատուութեան որեւէ բաժին չունի: Բնական վիժում մը բարոյական որեւէ հարց չի դնէր, եւ ուստի Եկեղեցին ալ յատուկ ըսելիք չի կրնար ունենալ այդ կապակցութեամբ:

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻՆ ԿԵՑՈՒԾՔԸ

Աստուածաշնչական ժամանակներուն անծանօթ բան էր վիրաբուժական գործողութիւնը, եւ ուստի այդպիսի միջամտութեամբ ար-

հեստական վիժումի մասին խօսքն ալ չէր կրնար ըլլալ: Գալով արհեստական վիժումի ուրիշ կերպերու, Աստուածաշունչը ուղղակիօրէն չի խօսիր այդ մասին: Ի՞նչն է արդեօք պատճառը. երեւո՞յթը անծանօթ է: Ոչ հարկաւ. վստահաբար, եղած են ու ծանօթ եղած պէտք է ըլլան նման պարագաներ: Իսկ եթէ նման պարագաներ կային եւ ծանօթ էին, ինչո՞վ եւ ինչպէ՞ս պէտք է բացատրել Աստուածաշունչին լռութիւնը, դրական, թէ՞ ժխտական, թե՞ր, թէ՞ դէմ:

Եթէ ուղղակի խօսք չենք գտներ, բայց ունինք անուղղակի պատասխան մը, որ կը քաղենք աստուածաշնչական որոշ տուեալներէ, եւ մանաւանդ կեանքին նուիրականութեան գերագոյն սկզբունքէն, որ կը դրուի այնտեղ:

Մեր պատասխանը փնտռենք երկու հարցումներով.

1) Աստուածաշունչը ինչպէ՞ս կը դիտէ դեռ չծնած երեխան: Ի՞նչ կը նկատէ մօրը որովայնին մէջ գտնուող սաղմը (embryo) կամ պտղածուն (fetus):

139-րդ սաղմոսը, խօսքը Աստուծոյ ուղղելով, կ'ըսէ. «Դուն էիր որ ստեղծեցիր մարմինիս բոլոր անդամները, եւ զիս կազմաւորեցիր մօրս որովայնին մէջ: ...Քեզի համար գաղտնիք չէր իմ կազմութիւնս, երբ տակաւին ես նոր սկիզբ կ'առնէի, մարդոցմէ ծածուկ խնամքով կը կազմաւորուէի [կը նկարակերպուէի] մօրս որովայնին մէջ: Քու աչքերդ տեսան զիս՝ երբ դեռ նոյնիսկ կազմաւորուած չէի. եւ ինձի տրուած կեանքի բոլոր օրերը Քու գիրքիդ մէջ գրուած էին՝ նոյնիսկ դեռ սկիզբ չառած» (հմբ. 13, 15-16): Ահա թէ ինչպէ՞ս կը ներկայանայ անծին երեխան՝ Աստուծոյ հայեացքին մէջ: Դեռ երեխային անդամները լրիւ կազմուած ալ չըլլան՝ բայց անոնք Աստուծոյ համար կան, Աստուծոյ գիրքին մէջ գրուած են, այսինքն՝ Աստուած սաղմը կամ պտղածուն կը դիտէ կատարելապէս կազմաւորուած մարդուն պէս, այնպէս՝ ինչպէս սերմանուած ցորենահատիկին մէջ մենք կը տեսնենք կազմաւորուող հասկը, բայց ոեւէ մէկս ալ չի կրնար հերքել, թէ ցորենահատիկը լիիրաւ եւ ինքնարժէք հացահատիկն է արդէն:

Այս կապակցութեամբ հետաքրքրական է Յիսուսի ծնունդին կապուած դրուագներուն մէջ դիտել հետեւեալ մանրամասնութիւնները: Երբ Մարիամի նշանածը՝ Յովսէփ կ'անդրադառնայ Մարիամի յղի ըլլալուն եւ կ'ուզէ լռելեայն արձակել զայն, Տիրոջ հրեշտակը տեսիլքի մը մէջ անոր կը յայտնէ Մարիամի գերբնական յղութեան մասին աստուածային ճշմարտութիւնը, սա բառերով. «Մի՛ վախնար քու կինդ՝ Մարիամը քու քովդ առնելու, որովհետեւ անկէ ՇՆԱԾԸ Սուրբ Հոգիէն է» (Մտ 1.20): Թէ այս դէպքը երբ տեղի կ'ունենայ, Մարիամի

յղութեան քանի երրորդ շաբթուն կամ ամսուն չենք գիտեր, բայց յատկանշական է, որ հրեշտակը Մարիամի որովայնին մէջ կազմաւորուող երեխային համար չ'ըսեր «յղացուածը», այլ կ'ըսէ «ԾՆԱԾԸ» (Յուն. το γεννηθέν) արգանդին պտուղը դիտելով իբրեւ արդէն կազմաւորուած մարդ:

Աւետարանէն առնուած շատ հետաքրքրական ուրիշ դրուագ մըն է հետեւեալը: Քրիստոսի մայրը Մարիամ, աստուածային աւետիսը ստանալէ եւ Սուրբ Հոգիով յղիանալէ ետք, այցելութեան կ'երթայ իր ազգականուհիին Եղիսաբէթի, որ վեց ամսուան յղի էր, եւ որ ծնունդ պիտի տար Յովհաննէս Մկրտիչին: Արդ, հազիւ Մարիամ Եղիսաբէթի տունը կը մտնէ եւ իր ողջոյնը կու տայ անոր, ահա Եղիսաբէթի արգանդին մէջ «մանուկը», այսինքն ապագայ Մկրտիչը ցնծութեամբ կը շարժի, եւ Եղիսաբէթ կ'ըսէ. «Երբ ողջոյնդ լսեցի, երեխասս [=մանուկս] ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ» (Դկ 1.41, 44): Դարձեալ յատկանշական է, որ Եղիսաբէթ իր արգանդին պտուղը արդէն «ՄԱՆՈՒԿ» կը կոչէ, ինչպէս մենք կ'ընենք, գայն նկատելով ոչ թէ բջիջներու անորոշ զանգուած մը, այլ թանկագին կեանք մը, որ իր խորհրդաւոր եւ սքանչելի նախապատրաստութիւնը կ'ապրի:

Վերադառնալով վերելք յիշուած 139-րդ սաղմոսին, անոր առաջին համարը անձին երեխային մասին աւելին կ'ըսէ. մեր յղութիւնը եւ մօրը արգանդին մէջ մեր կազմաւորումը եթէ մարդկային հայեցողութեամբ գուտ բնախօսական գործընթաց մը կը թուին, կրօնական հայեցողութեամբ՝ այդ գործընթացը նոյնինքն Աստուծմէ կ'առնէ իր մղումը, Աստուծոյ կամքին արտայայտութիւնն է, մարդկային զարմին աճման եւ բազմացումին համար սահմանուած աստուածադիր կարգը եւ օրէնքն է (տես Ծն 1.27-28), Աստուծոյ թէ՛ օրինութիւնը եւ թէ՛ գործակցութիւնը կայ անոր մէջ, եւ այդ պատճառով է, որ սաղմոսագիրը Աստուծոյ դիմելով կ'ըսէ. «Դուն ստեղծեցիր զիս» մարդկային ամէն ծնունդ դիտելով իբրեւ Աստուծոյ ստեղծագործական արարքին շարունակութիւնը, նոր ստեղծագործութիւնը:

Տակաւին, ոչ միայն անիկա Աստուծմէ ստեղծուած կեանք մըն է, այլ նաեւ Աստուծոյ ծրագիրին մէջ իր յատուկ տեղը եւ դերը ունի: Տեսէ՞ք թէ Աստուած ինչ կ'ըսէ Երեմիա Մարգարէին. «Քեզ որովայնի մէջ չստեղծած քեզ գիտցայ, դուն քու մօրդ արգանդէն չելած քեզ սրբեցի, քեզ ազգերուն մարգարէ ըրի» (Եր 1.5): Եսայի Մարգարէին բերանով մօտաւորապէս նոյնը կ'ըսէ Աստուած Իր ժողովուրդին. «Քեզ ստեղծող, քեզ արգանդի մէջ ձեւակերպող եւ քեզի օգնութիւն ընող Տէրը այսպէս կ'ըսէ... քու Փրկիչդ, քեզ արգանդի մէջ ստեղծո-

ղը» (Ես 44.2, 24): Աստուածային այդ յայտնութեան լոյսին տակ Եսայի Մարգարէ կ'ըսէ. «Տէրը զիս արգանդէն կանչեց, իմ անունս մօրս որովայնէն յիշեց...» (Ես 49.1, 5): Նոյնը կ'ըսէ Պօղոս Առաքեալ՝ յայտարարելով. «Աստուած մօրս որովայնէն զիս ընտրած եւ իր շնորհքովը զիս այս պաշտօնին կոչած էր» (Գղ 1.15): Ասոնք որոշապէս ցոյց կու տան, թէ աստուածաշնչական հայեացքով մօրը որովայնին մէջ եղող անձին երեխան յղացման առաջին օրէն սկսեալ Աստուծոյ յաւիտենական ծրագիրին մէջ ներկայ է իր անունով, իր կոչումով, իրեն վերապահուած առաքելութեամբ:

Աստուածաշունչին պատասխանը կ'ամբողջանայ երբ հարցնենք նաեւ.

2) Ինչպէ՞ս կը դիտէ անիկա՝ դեռ անձին մանուկի մը սպանութիւնը: Ելքի գիրքին օրէնքներու բաժինին մէջ այս կապակցութեամբ հետաքրքրական դատաւճիռ կայ: Հոն կը կարդանք. «Եթէ մարդիկ կռուին ու յղի կնոջ մը զարնուելով՝ անոր տղան անցընել տան, թէւ ուրիշ վնաս մը չըլլայ, անիկա անշուշտ այն կնոջ էրկանը իր վրայ դրած տոյժը պիտի քաշէ՝ դատաւորներուն դատաստանին պէս հատուցանելով: Բայց եթէ վնաս մը ըլլայ, անձի տեղ անձ պիտի տաս, աչքի տեղ աչք, ակռայի տեղ ակռայ, ձեռքի տեղ ձեռք, ոտքի տեղ ոտք, խարանի տեղ խարան, վէրքի տեղ վէրք, հարուածի տեղ հարուած» (21.22-25): Այս հրահանգը որոշապէս հաւասար գետնի վրայ կը դնէ անձին երեխան եւ անոր մայրը, հաւասարարժէք կը նկատէ երկուքին ալ կեանքը, վիժումով երեխային կորուստը կը նկատէ մանկասպանութիւն, եւ ըստ այնմ՝ կեանքի տեղ կեանք, այլ խօսքով՝ մահապատիժ կը սահմանէ ակամայ սպանութիւնը գործողին: Ստորեւ դարձեալ պիտի անդրադառնանք այս հատուածին, որ տեղ գտած է Մխիթար Գօշի Դատաստանագիրքին 62-րդ կանոնին մէջ:

Աստուածաշունչին կեցուածքը ամբարտելու համար ըսենք, որ անիկա որեւէ խօսք չունի հարկադրական կամ անհրաժեշտ վիժումի մասին: Այսինքն, երբ ինչ-ինչ պատճառներով յղութեան շարունակութիւնը կը սպառնայ մօր կեանքին, ի՞նչ պէտք է ընել, արտօնե՞լ վիժումը՝ փրկելու համար մօր կեանքը, թէ՞ չարտօնել: Այդ մասին պիտի անդրադառնանք վարը՝ Եկեղեցւոյ արդի մօտեցման մասին խօսած ստեն:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԵՑՈՒԾՔԸ ԱՆՑԵԱԼԻՆ

Եկեղեցւոյ անցեալ կեցուածքը արտայայտուած կը գտնենք թէ՛ Եկեղեցւոյ հայրերու գրութիւններուն մէջ եւ թէ՛ եկեղեցական համա-

ժողովներու կամ տեղական ժողովներու կողմէ առնուած որոշումներուն ու սահմանուած կանոններուն մէջ: Այսպէս, օրինակ, առաջին դարերէն եկող գործի մը մէջ, որ կը կոչուի «Վարդապետութիւն Երկոտասան Առաքելոց», վիժումը բացարձակ սպանութիւն կը նկատուի եւ կը դատապարտուի. «Չըլլայ որ սաղմը սպաննես վիժումով, եւ չըլլայ որ նորածինը ոչնչացնես» (2.2):

Ներկայ մեր գրութեան մէջ մենք պիտի բաւարարուինք միայն ակնարկ մը նետելով Հայ Եկեղեցւոյ Կանոնագիրքին վրայ, որ կը խմբէ մեր Եկեղեցւոյ կողմէ վաւերացուած եւ ընդունուած կամ իր իսկ կողմէ սահմանուած կանոնները:

Այդ կանոնները շատ քիչ կ'անդրադառնան արհեստական վիժումին, բայց ամէն անգամ որ կ'անդրադառնան զայն կը դատապարտեն առանց այլեւայլի: Ի միջի այլոց, անոնց մէջ չենք հանդիպիր «վիժում» բառին, որ կամքէ անկախ եղած անկում մը կ'արտայայտէ, այլ կը գործածեն բացատրութիւններ՝ որոնք արարքին կամաւոր ըլլալը եւ ուստի՝ գործողին պատասխանատուութիւնը կ'ընդգծեն: Այդ արարքը կը բնորոշուի իբրեւ «հեղուլ գորդեծնութիւնն» [որդեծնութիւնը թափել կամ հոսեցնել], կամ «անցուցանել զմանուկն» [մանուկը անցընել], կամ «մանկակորոյս լինել» [մանուկը կորսնցնել] եւ կամ «հեղձուցանել զտղայ» [մանուկը խեղդել], «սպանանել զմանուկն յորովայնի» [մանուկը որովայնին մէջ սպաննել], կամ պարզապէս՝ «սպանանել զմանուկն»:

Ի՞նչ կը գտնենք Կանոնագիրքին մէջ:

Կանոններուն ծանօթացումը ցոյց կու տայ, որ անոնք եւս, Աստուածաշունչին հետեւողութեամբ, յղութեան առաջին պահէն սկսեալ սաղմը կը կոչեն «ստեղծեալ» եւ «մանուկ»: Չի դրուիր տեսական հարցը, թէ՛ Ե՞րբ, յղութեան ո՞ր մէկ հանգրուանին կը սկսի «կեանքը»: Առաջին իսկ պահէն սաղմը եւ «պտղածու»-ն կը կոչուին «մանուկ» կամ «տղայ» (երեխայ): Այս առնչութեամբ հետաքրքրական է Բարսեղ Կեսարացիի կողմէ Ամփիլոքիոսին ուղղուած կանոններէն 3-րդը, որ կ'ըսէ. «Եթէ մէկը անակնկալօրէն էգ մը պղծէ, պէտք է իբրեւ մահապարտ դատապարտուի: Բայց պէտք է հաւաստի կերպով հասկնալ ու քննել կատարուածը, կինը բերել եւ օրերը [հաշուելով] տեսնել, թէ սաղմը արմատաւորուած է, թէ՞ ոչ [=թէ աննկար իցէ թէ նկարեալ]...»³: Վերջին բացատրութիւնը իր գրաբարեան ձեւին մէջ կը ներկայանայ «տեսանել աւուրքք զսաղմն թէ աննկար իցէ թէ նկարեալ»: Կանոնին մէջ վիժումի հարց դրուած չէ. անիկա յանցագործին պատիժով կը զբաղի միայն եւ ոչ թէ կնոջ պարագայով: Բայց եւ այնպէս կ'արժարժէ, թէպէտ միայն կողմնակի կերպով, ուրիշ հարց

մը: Արդարեւ, հետաքրքրական է գիտնալ թէ ի՞նչ ձեւով կը կատարուէր ստուգումը թէ արդեօք սաղմը «աննկար» է, թէ «նկարեալ», եւ ապա թէ ի՞նչ վերաբերում կը ճշդէին, եթէ սաղմը տակաւին «արմատաւորուած» չըլլար այդ պարագային արտօնելի՞ պիտի ըլլար ձերբազատուիլ անկէ: Անհրաժեշտ է, սակայն, լաւ հասկնալ «աննկար» եւ «նկարեալ» եզրերը: Ասոնք կու գան Ելից գիրքին վերելը քննարկուած հատուածին (Ելք 21.22-23) գրաբար թարգմանութենէն, որ իր կարգին յունարէն Եօթանասնից բնագիրին թարգմանութիւնն է: Իսկ այս թարգմանութիւնը բառացիօրէն նոյնը չէ՝ Եբրայական բնագիրին հետ: Եբրայերէնի «վնաս մը չհասնի» («չար ինչ ոչ պատահիցէ») բացատրութիւնը յունարէնի եւ հայերէնի մէջ թարգմանուած է «աննկար» (յուն. μη εξεικονισμένον), իսկ եբրայերէնի «վնաս մը հասնի» բացատրութիւնը «կերպարանեալ իցէ» (յուն. εξεικονισμένον ην): Ըստ երեւոյթին, սխալ հասկցուած է եբրայերէն բնագիրը, որ «նկարուելու» կամ «կերպարանուելու» մասին չի խօսիր: Կարելորդ երեխային կեանքն է. եթէ ողջ դուրս եկաւ՝ հարուածողը միայն տուգանքի կ'ենթարկուի, իսկ եթէ մեռաւ՝ անպայման մահապատիժ պիտի դրուի հարուածողին վրայ, որովհետեւ անիկա «կեանք» մըն էր, «անձ» մըն էր, նոյնիսկ եթէ տակաւին սաղմնային վիճակի մէջ էր եւ ոչ կազմաւորեալ. ուստի կեանքի տեղ կեանք, այսինքն՝ անձի տեղ անձ պիտի հատուցուի: Որեւէ զատորոշում չի կատարեր երկու պարագաներուն միջեւ, ինչ որ կը թելադրուի յունարէն եւ գրաբար թարգմանութիւններէն: Այս վերջինները, «աննկար» եւ «կերպարանեալ» զատորոշումները տեսնելով բնագիրին մէջ, եբրայերէնը բառացիօրէն կ'ըսէ՝ «եթէ երկու մարդիկ կռուին եւ յղի կնոջ մը զարնեն եւ անոր զաւակը դուրս գայ, բայց վնաս մը չպատահի, տուժելով պիտի տուժէ՝ ինչպէս որ իր վրայ դնէ կնոջ ամուսինը, եւ [ինք] պիտի տայ դատաւորներուն [որոշածին] համաձայն, բայց եթէ վնաս մը պատահի, այն ատեն անձի տեղ անձ պիտի տաս...»: Բայց ասկէ զատ երկրորդ սխալ մըն ալ սպրդած է գրաբար թարգմանութեան մէջ, որ այս օրէնքին յետագայ մեկնութեան մէջ իր կարելորդ դերը ունեցած է:

Մինչ եբրայերէնն ու յունարէնը կ'ըսեն, որ եթէ երեխան չվնասուի՝ հարուածող մարդը դարձեալ անպայման իր պատիժը պիտի կրէ. «Տուժելով տուժեսցի», «επιζημιον ζημισθησεται»:

Թարգմանութեան մէջ ուրիշ սխալ մը եւս տեղ գտած է: Եբրայերէնը բառացիօրէն կ'ըսէ՝ «եթէ երկու մարդիկ կռուին, եւ յղի կնոջ մը զարնեն եւ անոր զաւակը դուրս գայ, բայց վնաս մը չպատահի, տուժելով պիտի տուժէ՝ ինչպէս որ իր վրայ դնէ կնոջ ամուսինը, եւ [ինք] պիտի տայ դատաւորներուն [որոշածին] համաձայն, բայց եթէ վնաս

մը պատահի, այն ատեն անձի տեղ անձ պիտի տաս»:

Արդ, Առաքելներուն յաջորդող Հայրերուն վերագրուած կանոններէն առաջինը կ'ըսէ. «Եթէ մէկը [իր] զաւակը խեղդէ կամ խեղանդամ դարձնէ կամաւորաբար, շնութեան ընթացքին, անոր փոխարէն ինք պէտք է մեռնի, որովհետեւ ինչպէս որ հնարաւոր չէ [զաւակը] վերականգնել, այնպէս ալ [իրեն հնարաւոր չէ] ապաշխարել»⁴: Ճիշդ է որ այստեղ վիժում բառը չկայ, բայց վստահաբար, ակնարկուած մանկասպանութիւնը վիժումին առնչուած է: Նոյն որոշումին կ'ակնարկուի Կեսարիա գումարուած ժողովի մը 3-րդ կանոնին մէջ, որ սակայն մահապատիժին տեղ ծանր ապաշխարութիւն կը սահմանէ⁵: Նոյն ժողովին 4-րդ կանոնը կ'ըսէ, թէ նման սպանութիւնները կը կատարուին «կամաւորաբար, չար արուեստներով» (տես թիւ 2 ծանօթագրութիւնը):

Թաղէոս Առաքելին վերագրուած կանոններուն 18-րդին մէջ կը կարդանք. «Հարցում.- Երբ մէկը կը շնայ եւ որդեծնութիւնը կը թափէ, ի՞նչ պէտք է ընել: Պատասխան.- Եթէ քրիստոնէայ ըլլալով [հանդերձ] կը շնայ եւ որդեծնութիւնը կը թափէ՝ ոչինչ համարելով Աստուծոյ վախը, [այլ պարզապէս] որպէսզի մարդոց ջայտնուի, այնպիսին սպանողներուն կարգին պէտք է [դատուի եւ] երկար ատեն ապաշխարէ հառաչանքով»⁶:

Ինչպէս կանխեցինք ըսել, Եկեղեցւոյ անցեալի կեցուածքին մէջ չկայ արհեստական վիժումը արդարացնելու որեւէ փորձ, չկան պարագաներու մասնաւորումներ, չկան օրէնսգիտական խաղեր, «մեղմացուցիչ դէպք յանցանաց»-ներ: Պարզ ու մեկին կայ դատապարտութիւնը անձին երեխայ մը ոչնչացնելու արարքին, որ առանց այլեւայլի կը նոյնացուի սպանութեան հետ եւ ըստ այնմ կը վճռուի նաեւ Եկեղեցւոյ վերաբերումը վիժումը ի գործ դնողին նկատմամբ:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԵՑՈՒԲԾՔԸ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ինչպէս անցեալ, այնպէս ալ ներկայ ժամանակներուն Եկեղեցին չի կրնար չանդրադարձնալ այս հարցին, որովհետեւ մարդկային կամ բարոյական, եւ միաժամանակ ընկերային կամ գոյութեանական ու գործնական կարեւոր հարց մըն է անիկա, որուն դէմ յանդիման Եկեղեցին անհրաժեշտ կը զգայ վերստին մտածելու անոր մասին, նոր գիտութեանց՝ կենսաբանութեան, բժշկութեան, ընկերաբանութեան ու հոգեբանութեան [ոյսին տակ եւ անոնց հետ միասնաբար, առանց երբեք մոռնալու, սակայն, որ հարցը հիմնականին մէջ ոչ գիտութեան առնչուած է եւ ոչ ալ արդիականութեան, այլ՝ առնչուած է բարոյական մեր ըմբռնումներուն եւ մարդկային արժէքներու գնահատման կայուն

սկզբունքի մը, որուն մեկնակէտը Աստուածաշունչը կամ քրիստոնէական մեր հաւատքն է նախ, եւ այդ հաւատքին փորձառութիւնը ներկայ կեանքին մէջ:

Արդ, ի՞նչ է մարդկային իրաւունքներու մեր հիմնականագոյն սահմանումը, եւ այդ սահմանումին հիմքը հանդիսացող ամենատարական եւ ամենակենսական սկզբունքը: Այդ սկզբունքը սա՛ է, որ ըստ աստուածային եւ մարդկային սահմանադրութեանց, որեւէ մարդ անհատ, այլ խօսքով՝ որեւէ անձ, անձեռնմխելի իրաւունքն ունի ապրելու, կեանքի իրաւունք ունի:

- Այս սկզբունքէն ծագած հարցերը հետեւեալներն են.
 - 1) Անձին երեխայի պարագային ի գործ է վերոյիշեալ օրէնքը կամ սկզբունքը. այլ խօսքով՝ անիկա ա՞նձ մըն է, թէ՞ ոչ:
 - 2) Մարդուն կեանքը պէ՞տք է կախում ունենայ ուրիշներու կամքէն, ըլլան անոնք ծնողներ թէ բժիշկ, ընկերութիւն թէ պետութիւն:
 - 3) Ի՞նչ է բժիշկին դերը. խնամել ու պահել կեանքը յարգելով անոր նուիրականութիւնը, թէ՞ ըստ կամս պահել կամ վերջ տալ անոր:
 - 4) Ի՞նչ է մայրութեան հասկացողութիւնը եւ դերը այս պարագային: Մայրը կեանքի պահապանն է, թէ՞ դահիճը:

Ի՞նչ են Եկեղեցւոյ կողմէ այս հարցերուն պատասխանները:

1) Աստուածաշունչին հետեւողութեամբ, Եկեղեցին կ'ուսուցանէ, թէ տիեզերքի մէջ որեւէ աննպատակ գոյութիւն չկայ: Իւրաքանչիւր ստեղծուածի համար Աստուած նպատակ մը ունի: Արդ, յղութեան իսկ վայրկեանէն արգանդին մէջ սկիզբ առած սաղմը կամ պտղածուն գոյութեան եկած է արդէն, ապրող ու բաբախող բջիջներու իմաստաւորեալ գումար մըն է, կեանքի որոշակի կերպ մըն է, եւ ուստի որեւէ հանգրուանի զայն փճացնելը համագոր է կեանքի ոչնչացումին, կամաւոր սպանութեան:

2) Դժբախտութիւնն այն է, որ անձին երեխան կեանք մը ըլլալով հանդերձ անպաշտպան կեանք մըն է, գուրկ ինքզինք պաշտպանելու հնարաւորութենէն, եւ ատով իսկ ձգուած ընկերութեան կամ օրէնքին, կամ բժիշկին ու ծնողին խղճին ու կամքին:

Իսկ ի՞նչ կ'ընեն ընկերութիւնները, կամ պետութիւնները, որոնց դատարանները յաճախ քննարկած են ու կը քննարկեն արհեստական վիժումի հարցը՝ տարբեր որոշումներու յանգելով, բայց աւելի յաճախ տեղի տալով ընկերութեան մէջ որոշ հոսանքներու ծայնին եւ անպատասխանատու կերպով թոյլատրելով զայն:

Երեւոյթին ահաւորութիւնը չափելու համար լաւ կ'ըլլայ գիտնալ անոր ունեցած կամ ստացած ահարկու համեմատութիւնը: Անբողջա-

կան վիճակագրություններ չկան մեր ձեռքին տակ, բայց քանի մը տուեալներ արդէն բաւարար պատկերացում կու տան: Այսպէս, ըստ 1988-ի վիճակագրութեանց, Ամերիկայի Միացեալ Նահանգներուն եւ Չինաստանի մէջ արձանագրուած պաշտօնական վիժումներուն թիւը երկու միլիոն եղած է, որուն 50.000-ը միայն Լոս Անճելըսի մէջ, ուր վիժումի ծառայող 5,000 դարմանատուներ կը գործեն: 1990-ի տուեալներով Ֆրանսայի մէջ տարեկան մօտ 160,000 վիժումներ կ'արձանագրուին, ըստ պաշտօնական վիճակագրութեանց, առանց հաշուելու ծածկաբար կատարուածները: Իսկ 1993-ի տուեալներով ամբողջ աշխարհի մէջ ԵՐԵՍՈՒՆ ՄԻԼԻՈՆ-ի կը հասնի արիեստական վիժումներու տարեկան թիւը, դեռ առանց նկատի առնելու այն պարագաները, որոնք չեն հրապարակուիր:

Ի՞նչ կ'արտայայտեն այս թիւերը: Ի՞նչ կրնանք ըսել մեր աշխարհին եւ մեր բարոյական չափանիշներուն մասին: Երբ աշխարհի մամուլը ամէն օր մեծաշքին խորագիրներով կը ներկայացնէ հոս ու հոն կատարուած քաղաքական թէ քրէական ոճիրներու մանրամասնութիւնները, երբ ամէն օր հեռատեսիլներու բոլոր կայաններէն այնքան աղէտներու զոհեր ու սպանութիւններ ցոյց կը տրուին մեզի, ինչո՞ւ նոյն մամուլը եւ հեռատեսիլը առհասարակ լուռ կ'անցնին այս մեծագոյն աղէտին եւ լռիկ սպանութիւններուն վրայէն, որոնք իւրաքանչիւր տարի այսքան միլիոն զոհ կը խլեն աշխարհի վրայ:

Արդ, հարց է՝ պետութիւններն ու դատարանները իրաւունքը ունի՞ն անծին երեխային կեանքը ըստ կամս եւ քմահաճօրէն տնօրինելու: Պատասխանը ոչ է, գօրեղապէս: Պետական օրէնսդրութիւնը եւ դատարանական որոշումները ոչ մէկ նշանակութիւն ունին քրիստոնէական հայեացքին համար եւ որեւէ ձեւով արդարացում չեն կրնար բերել մեր արարքին: Որքա՞ն ոճիրներ կամ յանցանքներ կան, որոնց համար պետական օրէնսդրութիւնները ոչինչ կ'ըսեն, կամ որքա՞ն ոճիրներ ու յանցանքներ կան, որոնք կ'արդարացուին դատարանական որոշումներով, բայց ոչ Եկեղեցւոյ հայեացքով: Մարդկային մտածողութիւնը կրնայ այլափոխել որեւէ ճշմարտութիւն եւ արդարացնել որեւէ սխալ, սակայն աստուածային դատաստանը անկաշառ հայեացքով կը դիտէ ու կը դատէ ամէն բան իւրաքանչիւր երեւոյթի տալով իր իսկական անունը, բնոյթը եւ արժանիքը, այսինքն՝ գնահատումը եւ հատուցումը:

3) Նոյնն է պարագան բժիշկին դատումին կամ վերաբերումին, որոնք պէտք չէ՝ շփոթել Եկեղեցւոյ կեցուածքին հետ: Սկզբունքով բժիշկը դատաւոր մը չէ՝, եւ ինքը չէ՝ որ պիտի որոշէ կամ կ'որոշէ՝ արիեստական վիժում կատարե՞լ, թէ՞ ոչ: Բժիշկը իր հաւատքին (եթէ

հաւատացեալ մըն է) կամ համոզումներուն բերումով կրնայ ընդդիմանալ վիժումին զայն հակառակ գտնելով խիղճին ու բարոյականութեան, կրնայ ըլլալ չէզոք ու անտարբեր, եւ հարցին վճռումը ձգել ծնողին կամ ընկերութեան, ինք պարզապէս մասնագիտական իր գործակցութիւնը բերելով անոր, իսկ որոշ պարագաներու՝ կրնայ անծամբ քաջալերող մը ըլլալ վիժումին՝ բժշկագիտական տուեալներէ մեկնած կամ ինչ-ինչ դրդապատճառներէ մղուած: Այս պարագային, արդեօք պէ՞տք է բժիշկին կարծիքը որոշադրիչ ըլլայ ծնողներուն կամ ծնող մօր համար: Ոչ: Ինչպէս պետական օրէնսդրութիւնը կամ դատարանական որոշումը, այնպէս ալ բժշկական այս կարծիքը, թելադրութիւնը կամ վճիռը, ոչ մէկ նշանակութիւն ունին Եկեղեցւոյ եւ հաւատացեալ անծին քրիստոնէական հայեացքին համար: Արարքը ամէն բանէ առաջ բարոյական դատաստան մըն է, որուն պատասխանատուութիւնը չի՝ կրնար յանձնուիլ բժիշկին կամ ոեւէ մէկ ուրիշին:

Սխալ չհասկնանք: Եկեղեցին բժիշկին դէմ չէ՝: Եկեղեցին երախտագիտութեամբ կը նայի թէ բժշկութեան եւ թէ բոլոր այն գիտութիւններուն, որոնք կը ծառայեն մարդը եւ անոր բնութիւնը ճանչնալու իր ամբողջութեանը մէջ եւ աշխարհային միջավայրին յարաբերաբար, եւ մարդկային կեանքը պահելու իր աստուածային նշանակութեամբ, որպէսզի մարդը ներկայ աշխարհին մէջ իրագործէ իր կոչումը: Քրիստոնէական հայեացքով՝ բժշկութիւնը լաւագոյն մէկ գործիքը պէտք է ըլլայ աստուածային ստեղծագործութիւնը, այս պարագային՝ մեր մարմինները պահելու լաւագոյն վիճակին մէջ: Եթէ մնայ իր այդ դերին մէջ, բժշկութիւնը աստուածային սիրոյն թարգմանը կը հանդիսանայ մարմնաւոր կեանքի մակարդակին վրայ, որովհետեւ քրիստոնէական հայեացքին մէջ մարմինը նոյնքան կարելոր է՝ որքան հոգին, եւ արդարեւ կը հաւատանք, թէ «մարմինը տաճարն է հոգիին», մեզի տրուած՝ անով զԱստուած փառաւորելու համար (տե՛ս Ա. Կր 6.19-20: Հմմտ. 3.16-17): Ուստի լաւագոյն վիճակի մէջ պէտք է պահել զայն, եւ բժշկութիւնը այդ պէտք է փորձէ ընել, ատով իսկ դառնալով Աստուծոյ նախախնամութեան պատկերը եւ թանձրացումը, եւ օրինակը Քրիստոսի, որ մարդոց մարմինները բժշկեց՝ անոնց հոգիներուն եւս դարման ու փրկութիւն պարգեւելու համար:

4) Գալով մայրութեան եւ մօր դերին, առողջ մտածողութեան եւ առողջ դատումի պայմաններուն մէջ կարելի չէ՝ երեւակայել, որ ոեւէ կին, ամուսնացած կամ ոչ, կամաւոր թէ ակամայ յղութեան պայմաններու մէջ, ուզէ փճացնել իր մէջ սկիզբ առած կեանքը: Արտաքին պայմաններու առթած եւ ներքին զգացումներու եւ տագնապներու

պատճառած հոգեբանական ճնշումներն է որ յաճախ անցանկալի կը դարձնեն յղութիւնը, եւ կը մղեն գայն արհեստական վիժումի դիմելու որոշումին: Իսկ այդ որոշումը յաճախ աղիտաբեր կ'ըլլայ անծին համար, որովհետեւ, ինչպէս բժշկութիւնը կը հաստատէ, արհեստական վիժումը (մանաւանդ առաջին յղութեան պարագային) պատճառ կրնայ դառնալ շատ անելի անցանկալի բարդութիւններու ամլութեան, վաղահաս ծերութեան, սեռային գործարաններու մնայուն բորբոքումներու, եւ ընդհանուր տկարութեան, մարմինի դիմադրողականութեան նուազումին:

Ոմանց համար արդարանալի կը թուի վիժումը, երբ յղութիւնը արդինք է բռնաբարման, կամ արենապիղծ յարաբերութեան մը: Արդար գտնողները կը հիմնուին սա՛ առարկութեան վրայ, թէ վիժումը արգիլել կը նշանակէ անարդար գտնուիլ իր կամքին հակառակ մայրութեան կոչուած կնոջ մը կամ աղջկան հանդէպ: Սակայն անոնք կը մոռնան, որ այս պարագային վիժումը թոյլատրել կը նշանակէ անելի մեծ անարդարութիւն մը թոյլատրել, սպաննելով անմեղ կեանք մը, որ ո՛չ յանցանք ունի կատարուած անիրաւութեան մէջ, ոչ ալ որեւէ պաշտպանութիւն ունի կատարուելիք անելի մեծ անիրաւութեան մէջ: Անշուշտ մօրը համար կրնան հոգեբանական, ընկերային կամ միութեան դժուարութիւններ ծագիլ ու մնալ, բայց ատոնք, վերջ ի վերջոյ, անլուծելի հարցեր չեն, եւ նաեւ երբեք ալ չեն կրնար անելի ծանրակշիռ ըլլալ, քան անմեղ կեանքի մը ոչնչացումը, որ բացի ինքնին ծանր յանցանք մը ըլլալէ, յետագային կրնայ հոգեբանական անելի ծանր հարուած մը ըլլալ նոյնինքն ծնողին համար:

Արհեստական վիժումը թոյլատրելի է միայն մէկ պարագայի՝ երբ ինչ-ինչ պատճառներով, յղութեան շարունակութիւնը կը սպառնայ մօր կեանքին: Բարոյական հարցը որ կը դրուի՝ հետեւեալն է. ո՞րն է անելի թանկագին, մօ՞ր կեանքը, թէ՞ անծին երեխայինը: Նկատի ունենալով, որ յղութեան շարունակութիւնը չարիք կը դառնայ երկուքին համար ալ, հարկադրական կը դառնայ ընտրութիւն մը կատարել, գէթ փրկելու համար անոնցմէ մէկը: Եւ այս պարագային, բնական ընտրութիւնը կ'երթայ մօրը, որուն առողջութիւնը եւ կեանքը անհրաժեշտ են ոչ միայն իր անծին համար, այլ նաեւ իր ընտանիքին, իր անուսինին ու միւս զաւակներուն համար: «Չարեաց փոքրագոյնը» տրամաբանութիւնն է այս պարագային գործողը, որ սակայն իր ոյժը կ'առնէ երեք գործօններէ.

- 1) Արժէքներու գնահատման դրական չափանիշէ մը, որ ընտանիքին գերագոյն շահը կամ բարիքն է:
- 2) Բարոյական կեցուածքէ մը, որուն դիտումը կամ նպատակը

չէ կեանք մը առնելը կամ ոչնչացնելը, այլ ընդհակառակը՝ անելի անհրաժեշտ կեանք մը փրկելը:

3) Երկու կեանքերը միաժամանակ փրկելու անկարելիութենէն, երբ մօրը սպառնացող մահուան վտանգը ինքնին կը սպառնայ նաեւ անծին երեխային կեանքին, եւ այս վերջինը անկարելի է առանց առաջինին:

Այս պարագային, հարկադրական վիժումը չի՛ դադիր ինքնին չարիք մը ըլլալէ, որ սակայն կը թոյլատրուի՝ մեծագոյն չարիք մը կանխելու համար:

Ոմանք արհեստական վիժումը թոյլատրելի կը գտնեն նաեւ՝ երբ ժառանգական ծանր հիւանդութիւն մը փոխանցելու հարց կայ: Մտահոգութիւնը արդար կը թուի, բայց կախում ունի բժշկագիտական մեր մակարդակէն: Ինչ որ այսօր անբուժելի կը նկատուի, կրնայ յանկարծ վաղը բուժելի դառնալ, ո՞վ կրնայ երաշխաւորել ու պատասխանատուութիւն ստանձնել տուեալ պարագային:

Եկեղեցիին կողմէ արմատական այս կեցուածքը շատերու համար կրնայ շատ կարծր եւ անգիշող, կամ զուտ դատապարտողական թուիլ, հեռու այն սէրէն ու հասկացողութենէն, որ ինքը՝ Եկեղեցին կը քարոզէ անդադար: Բայց, պէտք է յստակ ըլլայ, թէ սէր չի նշանակեր թուլութիւն եւ ամէն բանի հանդէպ անպայմանաւոր կերպով թոյլատու կեցուածք: Եկեղեցւոյ մտածողութեան հիմնաքարը եւ մեկնակէտը՝ կեանքին նուիրականութիւնն է, եւ Եկեղեցին կը մերժէ արհեստական վիժումը իբրեւ կեանքի հիմնական իրաւունքին եւ մարդկային ազատութեան դէմ առնուած անթոյլատրելի քայլ: Այդուհանդերձ, Եկեղեցւոյ պարտականութիւնը դատապարտելը չէ, ատոր համար չէ՛ որ գոյութիւն ունի անիկա: Եկեղեցին կայ պարզապէս յստակացնելու եւ ճշդելու համար այն մտածողութիւնը, որ համաձայն է Աստուածաշունչին եւ Աստուծոյ յայտնութեան ամբողջութեան: Այդ յստակացումը կամ լուսաբանութիւնը Եկեղեցին կը կատարէ իր հաւատացեալներուն սիրոյն, որպէսզի անոնք կեանքէն ծագած հարցերուն կապակցութեամբ իրենց քրիստոնէական հաւատքին պատասխաններն ունենան եւ ըստ այնմ, առաւել գիտակցութեամբ եւ պատասխանատուութեամբ իրենց ընտրութիւնը կատարեն եւ քայլ առնեն:

Մարդկային կեանքին հանդէպ մեր անհատական ու հաւաքական պատասխանատուութիւնը կը բխի նոյնինքն Աստուծոյ կողմէ մեզի տրուած իշխանութենէն կամ կոչումէն: Աստուած մարդը կոչեց՝ զաւակներ ունենալու, բազմանալու եւ աշխարհը լեցնելու: Աստուած [մարդը] նաեւ տէր ու իշխան կարգեց ամբողջ ստեղծագործութեան,

աշխարհին, բնութեան, կենդանիներուն եւ իր նմաններուն, ինչպէս նաեւ իր անձին ու մարդկային գալիք սերունդներուն, որպէսզի «ՊԱՀԷ» ու խնամէ զանոնք (հմմտ. Ծն 2.15):

Եկեղեցիին կողմէ արհեստական վիժումի մեքենական եւ ապա-բարոյական տրամաբանութեան մը մերժումը ի վերջոյ կապ ունի շատ ատելի խորունկ հայեացքի մը հետ, որ մարդկայնական մտածողութիւնն է, մարդկութեան մարդկայնականութիւնը: Մարդը մեքենայ մը չէ՛, եւ մարդուն ներկայ եւ ապագայ կեանքը մեզի համար մեքենայի մը արժէքը չի ներկայացնէր պարզապէս, որ ուզած ատենդ կրնաս մէկդի նետել: Նման մտածողութիւն մը տեղ չունի սիրոյ համար, որ սակայն անհրաժեշտ տարրն է մարդուն իբրեւ մարդ աճումին ու զարգացումին համար: Քրիստոնէական աշխարհահայեացք իրեն հորիզոն ունի սէրը: [Մարդը] Աստուծոյ սիրոյն ծնունդն է, եւ Քրիստոսի մարդեղութիւնը նոյն այդ սիրոյն զօրեղագոյն եւ թանձրագոյն արտայայտութիւնը: Քրիստոնէական աշխարհահայեացքը այդ սիրով պայմանաւոր է, եւ սիրոյ այդ հայեացքով կը նայի աշխարհին, զոր պահելու կոչուած է, եւ մարդուն, որուն ինքնագործումը շատ ատելի անդին է՝ քան զուտ կենսաբանական իր գոյութիւնը, եւ որուն անհրաժեշտ սնունդը եւ պայմանը, ըսինք արդէն, դարձեալ սէրն է: Ահա թէ ինչո՞ւ քրիստոնէական աշխարհահայեացքին մէջ՝ կեանքին նուիրականութիւնը կը մնայ ամէն բանէ վեր: Եւ այդ կեանքը աստուածային սիրով պարուրելու, խնամելու եւ պահելու պարտականութիւնը կոչումն է մարդ անհատին, պետութեան ներկայացուցիչին թէ գիտութեան ներկայացուցիչին, իմաստասէրին թէ ընկերաբանին, բժիշկին թէ հոգեւորականին:

¹ Ղասախօսութիւն՝ խօսուած Հինգշաբթի, 8 Ղեկտեմբեր 1994-ին, Հայ Կրթական Բարեսիրական Միութեան կեդրոնին մէջ, Նոր Հաճըն, Պէյրութ:

² Այս կապակցութեամբ կարելի է յիշատակել նաեւ ուրիշ տուեալ մը, թէպէտ բնագիրը որոշ մթութեամբ մը կը ներկայանայ մեզի: Գաղատացիներուն գրուած նամակին մէջ Պօղոս Առաքեալ «մարմինին», այսինքն՝ մեղքով գրաւուած մարդկային մտածողութեան յատուկ գործերը թուած ատեն, կռապաշտութեան կողքին կը յիշատակէ «կախարդութիւն»՝ ըստ հայերէն թարգմանութեան, սակայն որուն յունարէնը (փարմակեիվա) ո՛չ միայն կախար-

դութիւն կը նշանակէ, այլ նաեւ՝ «դեղատուութիւն», ինչպէս թարգմանուած կը գտնենք Յայտնութեան Գիրքին մէջ (9.21 եւ 18.23: Հմմտ. նաեւ 21.8): Իսկ այս բառը զոյգ ձեւերով կրնայ հասկցուիլ, ըլլայ իսկական դեղի մատակարարում, ըլլայ թունաւորում, թոյնի մատակարարում (հարկաւ գիտենք, որ բժշկութեան մէջ շատ յաճախ ասոնք կը նոյնանան): Արդ, որոշ մեկնիչներ այս բառին ետին կը տեսնեն թունաւորման միջոցով ի գործ դրուած արհեստական վիժումները կամ փորձերը, եւ ուստի Պօղոս Առաքեալի կողմէ կամ Յայտնութեան Գիրքին մէջ խիստ դատապարտութիւն կը կարդան արհեստական վիժումին դէմ:

³ Տե՛ս Վազգէն Յակոբեան, *Կանոնագիրք Հայոց*, հատոր Ա., Երեւան, 1964, էջ 336:

⁴ Վազգէն Յակոբեան, *Կանոնագիրք Հայոց*, հատոր Ա., էջ 103: Աշխատասիրողը կ'ենթադրէ, որ այս կանոնախումբը թարգմանութիւն մը չէ՝ օտար լեզուէ, այլ հայկական շրջանակներու մէջ սկիզբ առած է նախքան 8-րդ դարը (տե՛ս Նախաբանը, էջ XLI): Այդ տեսակէտը քննարկելի կը մնայ, որովհետեւ, օրինակ, Կեսարիայի ժողովին 3-րդ կանոնը (տե՛ս յաջորդ ծանօթագրթ.) կը թուի թէ կը հիմնուի նոյնինքն այս կանոնին վրայ, որ ծանօթ պէտք էր ըլլար ժողովին մասնակիցներուն:

⁵ Տե՛ս անդ, էջ 170:

⁶ Տե՛ս Վազգէն Յակոբեան, *Կանոնագիրք Հայոց*, հատոր Բ., Երեւան 1971, էջ 33-34:

ԵՐԱԶ, ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆ, ՊԱՐՏՔ ԵՒ ՀԱՄԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

(Խօսք երիտասարդության)

Սիրելի՛ շրջանաւարտներ,
Մինչեւ հիմա պատանիներ էիք, փոքրեր՝ մեր աչքին, աննշանակ ազգին համար: Հիմա մեծցած, դարձած էք երիտասարդ-երիտասարդուհիներ, հասունութեան հասած, ազատ մտածողութեան տիրացած անձեր, եւ յատուկ կարեւորութիւն կը ներկայացնէք մեզի համար: Այդ իմաստով՝ այս շրջանաւարտութիւնը անկիւնադած մըն է, նշանակալից հանգրուան մը: Շուտով մեր ընկերութեան պիտի միախառնուիք եւ անոր լաւագոյն բաղկացուցիչ մասերը դառնաք: Մեծ ակնկալութիւններ կապուած են ու պիտի կապուին ձեզի: Հետեւաբար, այս հանգրուանը յարմարագոյն պահն է, որ քանի մը հիմնական մտածումներ առնէք ձեզի հետ, իբրեւ կտակ իմ կողմէս, եւ իբրեւ կեանքի ուղեգնացութեան պաշար ձեզի համար:

Կ'ուզեմ որ յիշէք միշտ, որ պատմական անկիւնադարձի մը, բացառիկ ժամանակաշրջանի մը սերունդն էք, եւ ըստ այնմ ալ պէտք է ըլլաք երազ ու տեսիլք ունեցող սերունդ, հերոսական ոգիի տէր եւ սխրանքներու ատակ սերունդ, պարտքի ու պարտականութեան գիտակցութեամբ օժուոն սերունդ, եւ մեր հայրենիքին ու մեր ազգային ինքնութեան եւ այդ ինքնութեան խորհրդանիշն ու կերտիչը եղող հաստատութիւններուն հաւատարմութեամբը կնքուած սերունդ:

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՍԵՐՈՒՆԴ

Երբ նկատի առնէք պատմական այն ժամանակաշրջանը, այն օրերը, որոնց մէջ դուք կ'աւարտէք երկրորդական վարժարանի ձեր ուսումը, չէք կրնար չանդրադառնալ, թէ որոշ իմաստով մը առանձ-

նաշնորհեալներ էք դուք, որովհետեւ անկախութեան սերունդն էք: Մեր հայրենի փոքրիկ աշխարհը անցեալ տարի վերստին հռչակեց 28 Մայիս 1918-ով ձեռք բերուած այն սրբազան անկախութիւնը, որ կորսնցուցեր էինք 1921 թուականէն ի վեր, եւ որուն համար վերջին երեք տարիներուն ոտքի ելած էր անկախասէր մեր ժողովուրդը:

Որքան բախտաւոր էք դուք, որ ներկայ այս բարեբաստիկ տարուան կը զուգահեռի ձեր շրջանաւարտութիւնը: Բայց գիտցէ՛ք, որ **ամէն առանձնաշնորհում պատասխանատուութիւն կ'ենթադրէ**, եւ այդ իմաստով, դուք, իբրեւ անկախութեան սերունդ՝ առաւել պատասխանատուութեան մը կոչուած էք: Որովհետեւ անկախութիւնը թէպէտ մեծագոյն պարգեւ եւ առանձնաշնորհում է՝ բայց, միաժամանակ, մեծագոյն պատասխանատուութիւն կը նշանակէ: Արժանիքի եւ դիրքի հարց չէ՛ այս պատասխանատուութիւնը, այլ՝ պարտքի եւ աշխատանքի կատարելու համար այն, ինչ որ այդ անկախութիւնը կը պահանջէ, իրագործելու համար այն, ինչ որ դարեր շարունակ երազեր ենք իբրեւ անկախ Հայաստանի փափաքուած պատկեր:

Երազեր ենք, անհրաժեշտօրէն եւ արդարօրէն, թէպէտ չենք բաւարարուած միայն երազելով: Նաեւ փորձեր ենք կերտել, ու կերտեր ենք շատ բան՝ դառն ու դաժան ճակատագիրին ճանկերէն կատաղօրէն խլելով ինչ որ կարելի եղած է:

ԵՐԱԶ ՈՒ ՏԵՍԻԼՔ

Քիչերու տրուած է ոչինչէն ինչ կերտել: Բայց ատիկա ընելու համար պէտք է երազ ու տեսիլք ունենալ: Քիչերու տրուած է՝ սերմնահատիկին մէջ տեսնել վաղուան բազմապատիկ հունձքին առատութիւնը, համեստ սկզբնաւորութեան մէջ տեսնել ապագայ մեծ գրաւականը: Քիչերու տրուած է՝ պարտութեան մէջ նոր յաղթանակի մը նախադուռը տեսնել, խորտակումին մէջ կանգնումի կարելիութեան նոր հորիզոնը, կարօտութեան մէջ՝ ապագայ ճոխութեան լիութիւնը: Այո, քիչերու տրուած է այսօրուան ցնցոտիներուն մէջ վաղուան շքեղանքն ու փառքը տեսնել: Սովորական մարդոց հայեացքը անմիջականօրէն տեսնուածին եւ ապրուածին վրայ կը սեւեռուի ու կանգ կ'առնէ: Բայց ես պիտի մաղթի որ դուք այն քիչերէն ըլլաք, որոնք ներկայի անբաւարար պատկերին ընդմէջէն կը տեսնեն գալիք օրերու կարելիութեան մը լուսատեսիլը եւ ազգային մեր անկատար տենչերուն կատարումը:

Երազ ունեցէ՛ք: Այժմու երիտասարդութեան ցաւն է՝ աներազ ըլլալը: Երազ բառը սխալ չհասկնաք: Խօսքը՝ անաշխատ կեանքի, դիրին հարստութեան եւ անվերջ վայելքի այն անիրականանալի

երազներուն մասին չէ, որ այսօրուան երիտասարդները առհասարակ իրենց միտքին մէջ կը սնուցանեն եւ կը սիրեն անոնցմով օրօրուիլ, երբեմն նոյնիսկ գուր եւ անմիտ բախտախնդրութիւններուն նետուելով այդ ուղղութեամբ: Երազ ըսելով կը հասկնամ սեփական կեանքին, ազգին եւ աշխարհին կամ մարդկութեան վերաբերեալ նոր, բարձրագոյն եւ ազնուագոյն մտապատկեր մը ունենալը, տեսիլք ունենալը, նոր կեանքի եւ գոյութեան նոր որակի տեսիլքը, գիտութեան եւ մտածողութեան նոր եւ առաւել բարձր մակարդակի մը տեսիլքը, առաքինութիւններով գինուած նոր մարդուն տեսիլքը, դժուարութիւններէն չընկճուելու, նեղութեանց դէմ պայքարելու, մարդկային ցաւերուն դարման գտնելու, տկարութեանց մէջ զօրութեան հասնելու, անկարելին կարելի դարձնելու, աննուաճելին նուաճելու տեսիլքները:

Երազ ունեցէք: Երիտասարդութիւնը կարողականութեան խորհրդանիշն է, որովհետեւ կարելիութիւններու բաց դուռն է: Հոն ուր մեծերը իրենց տեսիլքներուն իրականացումը չեն տեսներ այլեւս եւ ուստի եռանդն ու ճիգը կը պակսին, երիտասարդը անսպառ կարելիութիւններ կը տեսնէ, եւ իր աննկուն կամքով ու վճռականութեամբ, իր տաք շունչով ու խանդավառութեամբ, իր անսահման եռանդով եւ ուժականութեամբ կը փորձէ իրականութեան ափին մէջ բռնել ու բանտել բոլոր գեղեցիկ երազները՝ իրեն տրուած ժամանակին մէջ գանոնք կենսագործելով մէկ առ մէկ:

Երազ ունեցէք: Որովհետեւ առանց երազի՝ չկայ գործունէութիւն, եւ հետեւաբար, չկայ իրագործում: Իսկ մեզի համար երազը, գործունէութիւնն ու իրագործումը միայն անհատական չեն, ինչպէս լաւ գիտէք: Որեւէ ժողովուրդէ աւելի մեր ժողովուրդը իրագործելի այնքան երազներ ունի, ինչպէս այնքան լաւ բանաձեւած է վաղամեռիկ բայց անմեռ բանաստեղծը՝ իր երկաթակուռ բառերով.

«Մենք արեան կանչեր ունենք մեր սրտում,
Անկատար տենչեր ունենք դեռ շատ...»:

Մենք Արցախի ու Նախիջեւանի, Վանի ու Սիփանի, Կարս ու Արտահանի, Սիս ու Մասիսի անաղօտ տեսիլքը ունինք տակաւին, եւ այդ երազներուն կատարումին համար յանձն առած ենք ու պիտի առնենք ամէն տեսակի ընծայաբերում ու զոհողութիւն, ո՛չ թէ մէկ օրուան կամ մէկ տարուան համար, այլ, ի հարկին, ամբողջ կեանքի մը կամ սերունդներու կեանքին համար:

Մեծ է մեզմէ իւրաքանչիւրէս պահանջուած զոհողութիւնը, ինչպէս մեծ է մեր երազը: Սակայն երազին մեծութիւնը չի վախցներ մեզ, եւ թող չվախցնէ ձեզ, չտանի յոռետեսութեան եւ յուսահատութեան,

այլ ընդհակառակը, մղէ առաւել *պայծառաւտես հաւատքի* եւ *հերոսական ճիգի*:

Այո, երազ ունեցէք, որովհետեւ աներազ երիտասարդութիւն մը մահամերձ ժողովուրդի մը անզօր շունչին կը նմանի եւ անոր մահուան դատակնիքն է: Դուք, սակայն, մեր ցանքը եւ մեր հունձքն էք, մեր յոյսն ու մեր կեանքն էք, մեր սպասումն ու նոր արշալոյսն էք, մեր երգը եւ մեր խնդրութիւնն էք, մեր քայլքը եւ մեր յաղթանակն էք:

ՀԵՐՈՍԱԿԱՆ ՍԽՐԱՆՔ

Քիչ առաջ ըսի, թէ երիտասարդութիւնը լի է կարելիութիւններով. աննկուն կամքով ու վճռականութեամբ, տաք շունչով ու խանդավառութեամբ, անսահման եռանդով եւ ուժականութեամբ: Բայց երիտասարդութիւնը նաեւ փխրուն է: Խոչընդոտներն ու դժուարութիւնները շուտով կրնան դժգոհութեան, դառնութեան, թուլացման եւ ընկրկումի տանիլ ձեզ. աշխարհէն եկող մտահոգութիւններու, խտտորակ հետաքրքրութիւններու եւ պատրանքներու փուշերը դիւրաւ կրնան խեղդել ձեր մէջ սերմանուած ազնիւ սերմերը: Ձեր եռանդը տակաւին հանդիպած չէ այս աշխարհի անուղիղ, դարձդարձիկ, ոլորապտոյտ ճամբաներուն, որոնք ամէն վայրկեան կրնան եւ կը փորձեն ձեզ շեղել ձեր նպատակադրած ուղղութենէն իսկական փորձաքար դառնալով: Ձեր պատրաստակամ խանդավառութիւնը դեռ գրաւականը չունի նաեւ տոկոսնութեան, որ այնքան անգամներ դաժան փորձութեան կ'ենթարկուի, եւ կը սպառնայ փշրել ու ձգնել ձեզ, ձեր ինքնութիւնը, խորտակել ձեր երազները, ամլացնել ձեր ճիգերը: Այո, դեռ շիկացած ձեր կամքը կեանքի փորձառութեանց աւազանին մէջ պէտք է ջրդեղուի պողպատանալու համար: Եւ հերոսական ոգի եւ ճիգ պէտք է ի հեճուկս այդ բոլորին կանգուն մնալու եւ ձեր նպատակը յառաջ բերելու համար:

Հերոսական ճիգը, այո, իսկական հերոսութիւն կ'ուզէ: Իսկ այսօրուան աշխարհը հերոսներու պակասը ունի, տագնապը ունի: Որովհետեւ նոյն այս աշխարհը կը ձգնի մարդոց մէջ սպաննել բոլոր այն հարազատ ու վաւերական արժէքները, որոնց պահպանումը իսկական հերոսութիւն կը պահանջէ. պաշտպանել ու միշտ նորովի կերտել լաւը, ազնիւը, բարին, գեղեցիկը, առաքինին, մարդկայինը, հետապնդել ու պաշտպանել արդարութիւնը, իրաւունքը, խաղաղութիւնը, բարօրութիւնը:

Այսօրուան աշխարհը չունի այս արժէքներուն նուիրուած իսկական հերոսներ, եւ ատոր համար ալ կը ստեղծէ կեղծերը, որոնք ամէն օր կը տեսնէք հեռատեսիլներու թէ լայն պաստառներու կամ

հարթակներու վրայ: Բայց իսկական հերոսները ոչ ֆիլմերու հերոսներն են, ոչ բեմերը գրաւած կեղծ «աստղ»-երը. ասոնք նոյնինքն **հերոսի տազնապի** մը արտայայտութիւնն են, որ աշխարհը կ'ապրի:

Իրաւ հերոսութիւնը պահի մը արարք չէ եւ պահի մը համար չէ: Ատիկա դիրին եւ աժան հերոսութեան կեղծ եւ սխալ հասկացողութիւնն է: Լիբանանեան քաղաքացիական այս պատերազմին շատեր «հերոսութիւն»ներ ըրին, «հերոսական» պահեր ստեղծեցին: Պատերազմը վերջ գտաւ, իրենք ալ փուլ եկան:

Ես կ'ուզեմ որ դուք իսկական հերոսութեան ոգին եւ մնայուն ճիգը ունենաք: Բայց միաժամանակ կ'ուզեմ որ գիտնաք երկու բան.

ա) Նախ, **իսկական հերոսութիւնը կեանքի հերոսութիւնն է:** Ըսել կ'ուզեմ՝ ամէնօրեայ, յարատեւ եւ անդուլ հերոսութիւնը, որ աննահանջ կամքն է, յարատեւ ճիգը, տոկուն աշխատանքը, եւ քրտինք, քրտինք, քրտինք:

Քիչ առաջ ըսի որ երազ ունենաք: Բայց, գիտենք բոլորս, որ երազելը դիրին է, իրականացնելը՝ դժուար եւ անկարելի՝ առանց քրտինքի: Յիմարն է միայն, որ օդին մէջ սպանական դղեակներ շինելով կը բաւարարուի՝ առանց ձեռքը աշխատանքին տալու: Կեանքին մէջ ամէն մէկ իրագործում, մեր անծէն մեր շրջապատին ընծայուած եւ աշխարհի գանձանակին մէջ նետուած իւրաքանչիւր ներդրում ծանր աշխատանք կը պահանջէ, եւ աշխատանքը կրնայ յաճախ տաժանագին ըլլալ: Բայց չկայ աւելի ներշնչող, մարդկայնացնող ու հարստացնող բան, քան անծին իրագործումը. չկայ որեւէ բան որ բաւարարէ ու երջանկացնէ մարդս այնքան, որքան իրականացուած երազը՝ ի գին կեանքի հերոսութեան, որուն հատուցումն է երջանկութիւնը:

բ) Երկրորդ, **իսկական հերոսութիւնը՝ հերոս ըլլալու երազն է հրաժարիւն է:** Թերեւս հակասական թուի այս հաստատումը, եւ սակայն կեանքի կարեւոր գաղտնիք մը կը պարունակէ իր մէջ: Տարբեր բան է հերոսութեան ոգին ունենալը, եւ տարբեր՝ ինքզինք հերոս կարծելը կամ համարելը: Տարբեր բան է ամէն օր հերոսական ճիգ ի գործ դնելը, եւ տարբեր՝ մէկ անգամ կատարուած գործով մը՝ անմիտ յաւակնութեամբ հերոսի պատուանդանին կանգնիլը: Իւրաքանչիւրիս մէջ երեւելու, տեսնուելու, անուն հանելու, պաշտօն ու դիրք ունենալու, կարծիք յայտնելու, տեսակէտ պարտադրելու, ուրիշներուն վրայ առաւելութիւններ ձեռք բերելու եւ տիրապետելու տենչը եւ ձգտումը կան: Եւ ներկայ ժամանակներուն՝ այդ տենչն ու մարմաջը առաւել շեշտուած ձեւով կը ներկայանան եւ յաճախ աղէտ կը դառնան մեր ընկերային եւ մանաւանդ ազգային կեանքի շրջագիծէն ներս:

Մեր ժողովուրդը ներկայիս պէտք ունի մարդոց, որոնք պատրաստ ըլլան հերոսութիւն ընելու՝ առանց հերոսի պատմուճան տենչալու: Մեր ժողովուրդը պէտք ունի հերոսականօրէն ծառայողներու, առանց սակայն դիրք, պաշտօն, փառք եւ անուն հետապնդելու: **Խոնարհ հերոսութիւն:** Այս է փնտռուածը: Կրնա՞ք փառասիրութենէն հրաժարիլ. կրնա՞ք Ես-ի կամ խմբակցական նեղ, անիրատես, անհեռատես ու կործանարար տրամաբանութիւնը մոռնալ եւ ընդհանրական մտածողութիւն մը որդեգրել:

Դուք, սիրելի տղաք եւ աղջիկներ, որպէս մեր նորոգեալ անկախութեան ժամանակաշրջանի առաջին սերունդը, դուք պէտք է ըլլաք այդ նոր մտածողութիւնը ունեցող եւ անով գործող նոր Հայութիւնը:

Այսուհետեւ մեր կեանքի ուղեգիծը եւ նշանաբանը պէտք է ըլլայ **ո՛չ մեր անծը, այլ՝ մեր համայնը:**

Այսուհետեւ մեր առաջին եւ միակ փառասիրութիւնը պէտք է ըլլայ **թանկագին մասնիկը ըլլալ համայնին:**

Ամէն ինչ մենք անծամբ պիտի չընենք, եւ չենք կրնար ընել: Բայց կրնանք մեր անծին նպաստը բերել ընդհանրականին, որովհետեւ ազգային երազները մէկ կեանքի սահմանին մէջ չեն իրականանար: Ամբողջ սերունդ մը երազեց Հայաստանի անկախութիւնը, տազնապեցաւ, նուիրաբերուեցաւ, աշխատեցաւ ու զոհուեցաւ անոր համար, բայց չտեսաւ: Բայց մենք տեսանք: Այժմ, մեր կարգին, մենք պէտք է տքնինք նոր հանգրուաններու համար, որ կրնանք մենք չտեսնել, բայց որ մեր յետնորդները պիտի տեսնեն անպայման:

ՊԱՐՏՔ ԵՒ ՀԱՄԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

Պէտք է տքնինք նոր հանգրուաններ կերտելու համար, այո՛. բայց լաւ գիտցէք.

Ապագան այսօր կը կերտուի: Այսօր չսկսողը վաղը չի կրնար հասնիլ եւ աւարտել, այսօրը չկերտողը չի կրնար վաղը կերտել: Մեծ ապագան կը կերտուի փոքրիկ այսօրով: Աւօրեայ մանր գործեր են որ աստիճանաբար կ'իրականացնեն, կը կենսագործեն ապագային վերաբերող մեծ ծրագիրները՝ ապագան ներկայի վերածելով: Եւ յիշեցէ՛ք միշտ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի ուսուցած ճշմարտութիւնը. «Ով որ փոքր ծառայութեան մէջ հաւատարիմ է մեծին մէջ ալ հաւատարիմ է, իսկ ով որ փոքր ծառայութեան մէջ անհաւատարիմ է մեծին մէջ ալ անհաւատարիմ է» (Ղկ 16.10): Այսօր հաւատարմութիւնը չցուցաբերողը չի կրնար վաղը հաւատարիմ ըլլալ:

Ռեւէ մէկը չի կրնար, իրաւունք չունի ըսելու, թէ ինք ընելիք չունի իր ազգի կեանքին մէջ, իր ժողովուրդին եւ իր հայրենիքին համար:

Իրաքանչիւր ունինք պարտքի եւ պարտականութեան մեր բաժինը, որ հարկաւորապէս պէտք է բերենք իր ատենին եւ ամէն օր ըստ մեր շնորհքներուն ու կարողութիւններուն: Եւ մեր պարտքը կատարելու պէտք է սկսինք ոչ թէ վաղը, այլ այսօր իսկ, անյետաձգելիօրէն:

Ազգիս ու Հայրենիքիս հանդէպ իմ պարտքս ու պարտականութիւնս կատարելու համար պէտք չունիմ սպասելու որ ազգս ինձի դիմէ կամ հայրենի հողը ուտքերուս տակ ըլլայ: Ազգը իմ մէջս, իմ կողքիս եւ իմ շուրջս է. Հայրենիքը նոյնպէս: Ազգիս ու Հայրենիքիս իսկական մարմնաւորումն են հարազատ Եկեղեցիս «Հայաստանեայց» եւ «Առաքելական» կոչումներով բնորոշուած, հարազատ դպրոցս՝ իր անփոխարինելի ազգային շունչով ու դրոշմով, եւ իմ շուրջս գտնուող հարազատ ժողովուրդս՝ իտէլներու, ասանդութիւններու եւ կենցաղի նոյն հայրենական ժառանգութեամբը յատկանշուող:

Եթէ այսօր որեւէ պարտք կամ պարտականութիւն չզգամ այն Եկեղեցիին հանդէպ, որ զիս երկրորդ անգամ հոգեւորապէս ծնաւ եւ զիս դրաւ իմ հայրերուս առաքելական լոյս հաւատքին ազգաշող շաւիղին մէջ,

Եթէ այսօր որեւէ պարտք ու պարտականութիւն չզգամ այս դպրոցին հանդէպ, որ իմ երկրորդ տունս եւ դաստիարակս եղաւ, ազգային իմ գիտակցութիւնս, իմ ապրումներս եւ իրաւ հայու դիմագիծս տուաւ ինձի,

Եթէ այսօր պարտք ու պարտականութիւն չզգամ փոքրիկ այս գաղութին հանդէպ, որ հայրենիքի բացակայութեան պայմաններուն մէջ հայրենական հող եւ գիրկ եղաւ ինձի համար, եւ զիս պահեց միախումբ, կազմակերպ եւ ամուր,


Ի՞նչ պարտք ու պարտականութիւն կրնամ զգալ Հայրենիքիս հանդէպ, որմէ հեռու կ'ապրիմ մարմինով, ի՞նչ պարտք ու պարտականութիւն կրնամ զգալ վաղուան հանդէպ, որմէ հեռու եմ միջոցով ու ժամանակով, ի՞նչ պարտք ու պարտականութիւն կրնամ զգալ կեանքին ու մարդկութեան հանդէպ առհասարակ:

Մեր շուրջը չեն պակսիր անոնք, որոնք անձնական կամ հատուածական հաշիւներէ թելադրուած, հակառակասիրութենէ դրդուած, անհատական փառասիրութիւններէ տարուած՝ յաճախ կրնակ կը դարձնեն իրենց ազգային հարազատ հաստատութիւններուն, մայրենի Եկեղեցիին, դպրոցին ու համայնքին, մոռնալով նոյնիսկ, որ անոնք իրենց բուն ինքնութիւնը կը կազմեն, եւ մարդ չի կրնար իրաժարիլ իր սեփական ինքնութենէն: Բայց ոչ մէկ պատճառ կամ պատրուակ կրնայ արդարացնել մեր անհաւատարմութիւնը: Ո՛վ որ կրնակ կը

դարձնէ իր Եկեղեցիին ու դպրոցին հանդէպ իր այսօրուան պարտականութեանց՝ ոչ միայն գիտակցութենէ պարպուած ապերախտ մըն է, այլեւ դասալիք, դաւաճան:

Հաւատարմութիւնը պայման չի՝ ճանչնար: Հաւատարիմ պէտք է ըլլամ ոչ թէ ուզած ատենս միայն, երբ որ իմ գործիս կամ հաշուոյս կու գայ, երբ որ իմ ծայնս լսելի կը դառնայ, կամ երբ որ իմ սիրած կամ նախընտրած անձերս են գործի վրայ. ատիկա քմահաճոյք է եւ **կամապաշտութիւն** կը կոչուի: Այլ հաւատարիմ պէտք է ըլլամ անկախ պայմաններէն ու պարագաներէն, ինձի հաճելի կամ ոչ:

Հաւատարմութիւնը անհատական բոլոր հաշիւներէն, պատճառներէն կամ պատրուակներէն վեր մնացող, շահադիտական ամէն մօտեցում մերժող, Ես-ի ամէն տրամաբանութիւն վանող, եւ միայն սիրով ու նուիրումով բացատրուող եւ հասկցուող հոգեկան տրամադրութիւն է: Ջաւակ մը կը սիրէ իր ծնողքը ոչ թէ անոնց գեղեցիկ, երիտասարդ, առողջ, հարուստ կամ իմաստուն ըլլալուն համար անպայման, այլ՝ պարզապէս իր հարազատ ծնողներն ըլլալուն համար: Ճիւղը չի՝ կրնար ծառին մաս կազմել՝ եթէ կը մերժէ այն բունը, որուն վրայ աճած է ինք:



Այս մտածումները կը կտակեն ձեզի, եւ կը մաղթեն որ դուք, երիտասարդ-երիտասարդուհիներ, երբեք մտահան չընէք, այլ՝ արժեցնէք անկախութեան սերունդ ըլլալու ձեր հանգամանքը, եւ ձեր ապագայատեսիլ հայեացքով, ձեր դրական ու շինիչ տրամադրութիւններով, եւ անսակարկ հաւատարմութեամբ, մշտայօժար պատրաստականութեամբ ու հերոսական աննուագ սիրանքով գործի լծէք ձեր եռանդն ու կորովը՝ ազգին կեանքին թարմ շունչ եւ մեր պաշտելի Հայրենիքին ձեր թանկագին ծառայութիւնը բերելու տեսլականով:

Թող Աստուած անդրդուելի պահէ ձեր կամքը, անյողդողդ՝ ձեր քայլերը, անսասան՝ ձեր հաւատքը եւ անաղօտ՝ ձեր յոյսը, եւ մանաւանդ՝ անպայմանաւոր եւ անսահման ընէ ձեր սէրն ու նուիրումը, որպէսզի ձեր գնացքը ըլլայ միշտ դէպի վեր, դէպի լոյս եւ լուսեղէն գալիքը, որուն կերտիչներուն մէջ հպարտօրէն ու պայծառօրէն փայլին ձեր անունները:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ՀԻՄ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Սեպտեմբերին հետ կրթական մեր յարկերը կը վերաբացուին կրկին, դարձեալ բոլորին ուշադրութիւնը կը բեւեռուի ուսումնական հարցերու վրայ, ու տարուան մը դպրոցական կեանքին կծիկը ծայր կու տայ:

Որքան ալ տարօրինակ թուի, սակայն ճշմարիտ է թէ ներկայ աշխարհին մէջ եթէ հետզհետէ աւելի կը խորանան կարգ մը գիտութիւններ, միւս կողմէ՝ հետզհետէ աւելի եւ աւելի կը պակսի դաստիարակելու մտահոգութիւնը: Եւ ասիկա հակառակ այն երեւոյթին, որ միշտ աւելի շատ կը խօսուի դաստիարակչական հարցերու մասին, մանկավարժութեան եւ դաստիարակչական հոգեբանութեան մասին նորանոր տեսութիւններ եւ հրատարակութիւններ հրապարակ կու գան ամէն տարի:

Դպրոց, ուսում, կրթութիւն:

Դպրոցը յարկ մըն է պարզապէս, առաւել կամ նուազ ջերմ, ժամանակաւոր հանգամանքով մը կեանքին մէջ: Ուսումը միջոց մըն է միայն, օժանդակ գործիք մըն է մարդուն համար, զէնք մը՝ ինքզինք հաստատելու: Իսկ դպրոցին եւ ուսման նպատակն է կրթութիւնը, դաստիարակութիւնը: Ինչո՞ւ:

Պարզապէս որովհետեւ կրթութիւնը կամ դաստիարակութիւնն է որ մարդս կեանքին համար կը պատրաստէ: Հիմնական դերը որ ուսումն ու կրթութիւնը պէտք է ունենան մարդուն կերտումն է, մարդուն մտաւոր եւ հոգեւոր կազմաւորումը, մարդուն նկարագիրը, վարքագիծը: Այս է որ դաստիարակութիւն կը կոչենք:

Մարդը ընկերային էակ մըն է, ըսուած է: Մանուկը կամ երիտասարդը ընկերութեան մէջ ապրելու եւ դեր ունենալու կը պատրաստուին, եւ հետեւաբար, պէտք է ոչ միայն սորվին ու ճանչնան

բնութիւնը եւ բնութեան օրէնքները, այլեւ՝ անցնին բանականութեան եւ բանական օրէնքներու գիտութեան. ոչ միայն սորվին ու գիտնան լեզու մը կամ լեզուներ որպէս հաց ու դիրք վաստակելու զէնք, այլ սորվին լեզուներ որպէս մարդոց հետ յարաբերելու անհրաժեշտ կամուրջ. ոչ միայն սորվին ու գիտնան պատմութիւնը որպէս պատմական ծանօթութիւններու գումար, այլ նաեւ՝ որպէս մարդկային ընկերային շրջապատի եւ պայմաններու ծանօթութիւն, մարդուն իսկ հանդէպ խոր հետաքրքրութեան որպէս արտայայտութիւն. ոչ միայն խորանան հաշուագիտութեան, թիւերու աշխարհին մէջ, այլեւ՝ հասնին հաշուումներէն խուսափող մարդկային զարգացումներուն եւ զգացական աշխարհին խորքը. ոչ միայն ուսանին քիմիագիտութիւնը եւ փորձարկութեամբ տեսնեն քիմիական նիւթերու այլեւայլ ներգործութիւնները ուրիշ նիւթերու վրայ, այլեւ՝ ուսանին սիրոյ մասին եւ փորձեն ճանչնալ սիրոյ փոխակերպող ներգործութիւնները մարդու կեանքին վրայ. ոչ միայն տիեզերաբանութիւն ընեն եւ որոնեն երեւելի տիեզերքին գաղտնիքները, այլեւ՝ գիտնան փոքրիկ մարդուն մէջ պարփակուած ներքին հսկայ տիեզերքին մասին եւ որոնեն հոգիին խոր գաղտնիքները: Այլ խօսքով, դաստիարակութիւնը երկրորդ, բարձրագոյն մակարդակ մըն է «ուսման», որ սակայն ուսումնական նիւթերէն կախում չունի անմիջականօրէն:

*
* *

Դաստիարակութիւնը պարզ եւ դիրին գործ մը չէ, անշուշտ: Զանազան հանգամանքներ դեր կը խաղան անոր մէջ եւ բազմաթիւ երեսներ ունի անիկա:

Մեր նպատակը դաստիարակութեան ընդհանուր հարցերը եւ ուղղութիւնները քննարկելը չէ: Սակայն կ'ուզենք խօսիլ բանի մը մասին, որ մարդկային եւ քրիստոնէական առողջ դաստիարակութեան հիմքը կը կազմէ. ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ: Եւ, սկիզբէն իսկ ըսենք, մեր ըսելիքը կապուած չէ դպրոցին ու դպրոցական կեանքին այնքան, որքան ուղղակիօրէն ծնողներուն, հետեւաբար, ընտանեկան դաստիարակութեան:

Ծնողներ բնաւ պէտք չէ մոռնան մէկ բան, թէ իրենց գաւակին դաստիարակը ոչ դպրոցն է, ոչ ուսուցիչը եւ ոչ քահանան, այլ՝ իրենք իսկ: Անոնք կրնան օժանդակ ըլլալ պարզապէս. իրենք կը մնան տիրականը: **Ոեւէ զաւակի դաստիարակը ծնողքը ինքն է:**

Միշտ ալ այժմէական է ծնողներու ուշադրութեան բերուած դաս-

տիարակչական սա ուղեգիրը. «Կրթէ՛ մանուկը իր ճամբան սկսած ա- տենը, որպէսզի իր ծերութեան ատեն ալ չխոտորի անկէ» (Առ 22.6):

Բայց ի՞նչ ձեռով կրթել: Իրաւամբ, ծնողներ յաճախ շուարումի կը մատնուին թէ ինչ ձեռով վարուին իրենց գաւակներուն հետ: Ի՞նչ ձե- րով կարելի է դաստիարակել զանոնք:

Աստուածաշունչին պատասխանն է. «Նազանդութեան մէջ, Աս- տուծոյ գիտութեամբ եւ իմաստութեամբ:

Մարդկային առողջ ընտանիքի եւ ընկերութեան հիմքն է այս տի- պի դաստիարակութիւնը՝ հիմնուած սիրոյ եւ յարգանքի սկզբունքին վրայ: Հոն ուր չկայ յարգանք՝ չկայ հնազանդութիւն. եւ հակադարձա- բար, հոն ուր հնազանդութեան բացակայութիւնը կը տեսնենք, ան- պայմանօրէն բացակայ է յարգանքը:

Ինչո՞ւ կարելոր են յարգանքն ու հնազանդութիւնը:

Որովհետեւ բնութեան աստուածահաստատ տիեզերական օ- րէնքն է կարգը, կարգաւորութիւնը, որ կը հիմնուի ձգողութեան ան- շեղ սկզբունքի մը վրայ: Իսկ ձգողութիւն կը նշանակէ փոխադարձ կապ, փոխադարձ կախում: Վերցուցէ՛ք այդ ձգողական ոյժը կամ սկզբունքը, եւ կը կորսուի կարգաւորութիւնը, տիեզերքը կը դառնայ քաոս:

Նոյն սկզբունքը կը ղեկավարէ մարդկային կեանքը: Հոն ալ նոյն ձգողական բնատուր օրէնքը կայ, որ կը ղեկավարէ եւ կը կարգաւորէ մարդկային մեր կեանքը եւ փոխ-յարաբերութիւնները: Այդ սկզբունք- քը սէրն է: Վերցուցէ՛ք սէրը գաւակներուն մէջէն, եւ այլեւս ոչինչ կը մղէ զանոնք խնամելու եւ աճեցնելու իրենց «պտուղը»: Վերցուցէ՛ք սէրը գաւակներուն մէջէն, եւ այնուհետեւ ոչինչ կը կապէ զանոնք ծնողներուն, ընտանիքին: Վերցուցէ՛ք սէրը երիտասարդին մէջէն, եւ ոչ մէկ բան կը մնայ որ զինք շահագրգռէ եւ կապէ ուրիշին, իր նմա- նին, ընկերութեան, ազգութեան, պետութեան, հայրենիքին, ոչ մէկ կապ եւ, հետեւաբար, ոչ մէկ պատասխանատուութիւն կ'ունենայ կեանքին, մարդուն եւ գործին հանդէպ, ոչ մէկ զոհողութեան գաղա- փարի տեղ կը մնայ որեւէ բանի հանդէպ: Կը մնայ պարապ, կը մնայ քաոս, եւ ընդհակառակը, կը դառնայ ինքնակեդրոն եւ այլակործան այլանդակութիւն մը, հրէշ:

Սէրը բանալին է մարդկային կեանքին, եւ սիրոյ հիմնական ար- տայայտութիւնն է յարգանքը: Սիրող մարդը արժէք մը կը տեսնէ իր սիրած անձին կամ առարկային մէջ եւ, բնականաբար, կը յարգէ զայն, եւ անոր ընդմէջէն ինքզինք յարգած կ'ըլլայ: Սիրող ծնողը կը յարգէ իր գաւակները: Սիրող գաւակը կը յարգէ իր ծնողները: Սիրող ամու- սինը կը յարգէ իր կողակիցը: Սիրող ազգասէրը կը յարգէ իր ազգա-

կիցը: Եւ, բնականաբար, այդ յարգանքը կը թարգմանուի նաեւ գործ- նականօրէն, որուն առաջին արտայայտութիւնը հնազանդութիւնն է:

Հոս է որ, ահա՛, կարելորութիւն կը ստանայ սիրոյ, յարգանքի եւ հնազանդութեան դաստիարակութիւնը: Ինչ որ բնածին կերպով մար- դուն մէջ կայ որպէս անգիտակից մղում, պէտք է գիտակցութեան բերել. ինչ որ կայ որպէս սերմնահատիկ, պէտք է աճեցնել եւ հա- սունցնել, որպէսզի դառնայ ամբողջական, լիարժէք: Այլապէս՝ տար- բեր եւ վնասաբեր տունկեր արմատ կը նետեն, ճիշդ ինչպէս խոպան թողո՛ւած հողին վրայ փուշ ու տատասկ կը բուսնին: Այս իմաստով է որ Առակաց Գիրքը կ'ըսէ. «Մանուկին սիրտին մէջ յիմարութիւն կայ նստած, գոր խրատի գաւազանը միայն կը հեռացնէ անկէ» (Առ 22.15):

Ըսենք անմիջապէս, որ յիշուած «խրատիչ գաւազան» բացատ- րութիւնը չի նշանակեր պարզապէս ծեծ կամ ծանր նիւթական պա- տիժ, այլ՝ յորդոր, յանդիմանութիւն, ուղղիչ միջոցներ եւ, ի հարկին, նաեւ ֆիզիքական պատիժ: Կարելոր է գիտնալ, որ չկայ մէկ տեսակի մանկավարժութիւն, եւ մանկավարժական որեւէ սկզբունք կուրօրէն եւ մեքենականօրէն կարելի չէ պատշաճեցնել բոլոր մանուկներուն՝ նոյն ձեռով: Ինչ որ շատ արդիւնալից կրնայ ըլլալ մէկուն պարագա- յին, ամենեւին ապարդիւն կրնայ ըլլալ ուրիշի մը պարագային: Սկզ- բունքը, սակայն, կը մնայ նոյնը՝ սրբագրել եւ ուղղել:

Հնազանդութեան կրթել: Հնազանդութեան. բայց որո՞ւ:

Կարելոր չորս յարաբերութիւններ կան, գորս պէտք է նկատի առնել:

Առաջինը ԱՍՏՈՒԾ ԵՒ ՄԱՐԴ յարաբերութիւնն է, ուր մարդը (դաստիարակուող մանուկը, պատանին) պէտք է սորվի սիրել ու յար- գել զԱստուած եւ հնազանդիլ Անոր: Աստուծոյ հանդէպ այս յարգանք- քի եւ հնազանդութեան կեցուածքը Աստուածաշունչին մէջ յաճախ բանաձեւուած է կամ կոչուած «Աստուծոյ վախ» կամ «աստուածա- վախութիւն», որ համարուած է եւ կը մնայ ըլլալ ամէն ճշմարիտ դաս- տիարակութեան սկիզբը: «Իմաստութեան սկիզբը Տիրոջ վախն է» կը կարդանք քանիցս Առակաց Գիրքին մէջ (1.7): Այդ աստուածավա- խութիւնը իմաստութեան խրատը եւ առաջնորդութիւնը ընդունիլն է (15.33) եւ չարիքէն խորշիլը, զայն ատելը (8.13), ինչ որ Աստուծոյ հնազանդութիւնը յանձն առնողին համար արդէն կը դառնայ կեանքի կողմնացոյց, ուղիղ արելելում:

Բայց կայ շատ ատելի կարելոր բան մը, քան միայն իմաստութիւն չափիլը եւ բարի կեանք մը վարելը, բան մը, որ թէ՛ կը բացատրէ եւ թէ՛

կ'իմաստաւորէ այդպիսի կեանքի մը նպատակը: Եւ ատիկա նոյնինքն կեանքն է, լեցուն եւ իրաւ կեանքը այս աշխարհի վրայ, որպէսզի անիկա իր շարունակութիւնն ունենայ յաւիտենական կեանքով: Պետրոս Առաքեալ կը յայտարարէ. «Պէտք է Աստուծոյ հնազանդիլ, աւելի քան մարդոց» (Գրծ 5.29), որովհետեւ այդ հնազանդութեան կապուած է Աստուծոյ ըրած կեանքի խոստումը. անկէ կախում ունին թէ ներկայ եւ թէ հանդերձեալ մեր կեանքը: Քրիստոս յստակօրէն ըսաւ այս մէկը. «Ով որ չի հնազանդիր Որդիին պիտի չտեսնէ կեանքը, այլ Աստուծոյ բարկութիւնը պիտի գայ անոր վրայ» (3հ 3.36): Ահա թէ ինչու Պօղոս Առաքեալ կը գրէ իր աշակերտին Տիմոթէոսին. «Ինքզինքդ աստուածապաշտութեամբ ապրելու մարգէ. որովհետեւ եթէ մարմինի մարգանքները որոշ բաներու օգտակար են, աստուածապաշտութիւնը ամէն բանի օգտակար է, քանի կը խոստանայ կեանք տալ թէ այս աշխարհի եւ թէ հանդերձեալին մէջ» (Ա. Տմ 4.7-8): Այս ճշմարտութեան գիտակցող ռեւէ ծնող չի կրնար իր զաւակը հեռու պահել Աստուծոյ վախէն եւ զայն չկրթել Աստուծոյ հնազանդութեան մէջ:

Երկրորդը ԾՆՈՂ ԵՒ ԶԱԻԱԿ յարաբերութիւնն է, ուր ռեւէ զաւակ պէտք է սորվի սիրել ու յարգել իր ծնողները եւ հնազանդիլ անոնց: Ծնող մը իր զաւակին համար Աստուծոյ ներկայացուցիչն է, եւ ռեւէ զաւակ իր ծնողներուն ընդմէջէն պիտի ճանչնայ «Հայր» Աստուծոյ պատկերը եւ ճշմարտութիւնը: Հարկ կա՞յ ըսելու, թէ ասիկա կախում ունի ծնողներու զգացած պատասխանատուութենէն եւ իրենց զաւակներուն ջանքած դաստիարակութենէն:

Աստուած սիրոյ եւ քաղցրութեան Աստուածն է, բայց միաժամանակ արդարութեան եւ ուղղութեան Աստուածը: Ծնողներ նոյնպէս սիրոյ եւ քաղցրութեան տիպարներ պէտք է ըլլան, բայց միաժամանակ, պէտք է գիտնան, թէ առանց խստութեան եւ յանդիմանութեան՝ չեն կրնար իրենց զաւակները ուղղութեան մէջ պահել: Քաղցրութիւն եւ սէր չեն նշանակեր թուլութիւն, աչք գոցել թերուցումներուն, տեղի տալ լացին եւ պոռչտութիւն առջեւ: Թէ՛ քաղցրութիւնը եւ թէ՛ խստութիւնը իրենց տեղը պէտք է ունենան: Առանց քաղցրութեան՝ խստութիւնը կը դառնայ բռնատիրութիւն եւ դառնութիւններ կը ձգէ մանուկ հոգիներուն վրայ: Բայց նոյնքան եւ աւելի վտանգաւոր է առանց խստութեան քաղցրութիւնը, որ կը շփացնէ ու կ'այլասերէ, կը փձացնէ ու կը կործանէ տղուն ապագան: Դարաւոր փորձառութիւնը շատ լաւ կը սահմանէ այս ճշմարտութիւնը. «Գաւազանին խնայողը իր որդին կ'ատէ: Իր որդին սիրողը կանուխէն կը խրատէ զայն» (Առ 13.24):

«Գաւազանն ու յանդիմանութիւնը իմաստութիւն կու տան. բայց իր կամքին ձգուած տղան իր մայրը կ'ամչցնէ» (Առ 29.15):

Շատ ծնողներ այս բաները գիտնալով հանդերձ՝ չեն ուզեր իրենց զաւակը ցաւցնել, վախնալով որ պատիժն ու խստութիւնը կրնան իրենց զաւակը իրենցմէ հեռացնել կամ պաղեցնել: Մինչդէռ հակառակն է ճշմարիտը. այսինքն զաւակներ աւելի մեծ յարգանքով ու երախտագիտութեամբ կը կապուին իրենց ծնողներուն, երբ կը զգան (կը զգացուի իրենց) թէ արդար է իրենց տրուած պատիժը իրենց իսկ բարիքին համար: «Ճիշդ է որ որեւէ յանդիմանութիւն նոյն պահուն չ'ուրախացնէր, այլ կը տրտմեցնէ. բայց յետոյ անով կրթուածներուն արդար կեանքի մը խաղաղութիւնը կը պարգեւէ», կ'ըսէ Պօղոս Առաքեալ (Եբր 12.11): Մանուկն ու պատանին կրնան չտեսնել ապագայ բարիքը. ծնողներ պարտաւոր են զայն տեսնելու եւ նկատի առնելու: Աստուծոյ կողմէ իրենց վրայ դրուած պարտականութիւնն է ատիկա, զոր Առակաց Գիրքը կը յիշեցնէ՝ ընդգծելով. «Տղայէն խրատը մի կտրեր, որովհետեւ եթէ գաւազանով ծեծես չի մեռնիր: Մինչդէռ զայն գաւազանով պատժելով՝ անոր հոգին դժոխքէն կ'ազատես» (23.13-14): «Քանի յոյս կայ տղադ խրատէ՛, եւ անոր մահուանը կամակից մի ըլլար» (19.18): Իսկ անգամ մը որ մանուկը կամ պատանին սորվեցաւ հնազանդիլ, այնուհետեւ բաց է իր առջեւ դաստիարակութեան եւ իմաստութեան ճամբան:

Երրորդը ԱՅՐ ԵՒ ԿՆՈՋ ընտանեկան յարաբերութիւնն է: Ռեւէ զաւակ այժմէն պէտք է սորվի թէ ինք կը պատարաստուի ընկերային կեանքի մէջ մտնելու եւ այնտեղ շատ կարելոր դեր մը ունենալու: Այդ դերը ինք կրնայ ունենալ միայն ընտանիքէն ներս, ընտանիք կազմելով, իր անձը եւ իր կեանքը կապելով ուրիշի մը անձին ու կեանքին, սիրելով ու յարգելով զայն եւ հնազանդելով անոր: Սիրոյ եւ ամուսնութեան մասին զանազան հասկացողութիւններ կան եւ կրնան ըլլալ, բայց սիրոյ ընտանիք եւ յաջող ամուսնութիւն չի կրնար ըլլալ առանց փոխադարձ յարգանքի եւ հնազանդութեան: Քրիստոնէական կրթութեան անբաժան մէկ մասը պէտք է ըլլայ նաեւ ասիկա: Պօղոս հետեւեալ հրահանգով կը դիմէ այրերուն եւ կիներուն. «Քրիստոսի հանդէպ ձեր պատկառանքը արտայայտեցէ՛ք՝ իրարու հնազանդելով: Կիներ, հնազանդեցէ՛ք ձեր ամուսիններուն, ինչպէս Տիրոջ պիտի հնազանդէիք, որովհետեւ ամուսին մը իր կնոջ գլուխն է, այնպէս ինչպէս Քրիստոս գլուխն է Եկեղեցիին: ...Այրեր, սիրեցէ՛ք ձեր կիները այնպէս, ինչպէս Քրիստոս սիրեց Եկեղեցին եւ Իր կեանքը տուաւ անոր համար» (Եփ 5.21-23, 25): Այս հնազանդութեան գիտակցութիւնը

նը որքան ալ սիրոյ եւ յարգանքի բնական ծնունդը պէտք է ըլլայ, բայց կրկին դաստիարակութեամբ է որ կը զարգանայ, դաստիարակութեամբ մը, որ օդէն չի գար, որ դպրոցներու մէջ չի տրուիր, այլ որ պէտք է տրուի ծնողներուն կողմէ, եթէ ծնողներ կ'ուզեն իսկապէս իրենց զաւակը կեանքին պատրաստել, որովհետեւ, զաւակներուն համար այդ կեանքը ամուսնական բոյնը պիտի ըլլայ, եւ այդ բոյնին կայունութիւնը կախում ունի դարձեալ նոյն հնազանդութեան դաստիարակութենէն:

Ի վերջոյ, ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՀԱՏ յարաբերութիւնն է: Ոեւէ զաւակ պէտք է սորվի թէ ինք պիտի ապրի ու գործէ ազգի մը գիրկին մէջ, պետութեան մը սահմաններուն մէջ, եւ հետեւաբար, պէտք է ենթարկուի այն հրամայականներուն, որոնք այդ ազգինը կամ պետութեանն են, որքան ատեն որ անոնք չեն բռնաբարեր խիղճի իր ազատութիւնը: Դարձեալ, բնածին սէրը այդ հաւաքականութեան հանդէպ որ ազգ կը կոչուի, յարգանքը այն արժէքներուն հանդէպ որոնք անոր ստեղծագործութիւնն են, կը պահանջեն հնազանդութիւն այն հաստատութիւններուն կամ պետական կառոյցին կամ իշխանութեան հանդէպ, որոնք այդ հաւաքականութեան հասարակաց բարիքը, խնամքը եւ շահերու պաշտպանութիւնը կ'ապահովեն:

Քաղաքացիական առողջ կրթութիւն մը քրիստոնէական աշխարհահայեացքին մէջ իր տեղը ունի եւ մարդ անհատին կը սորվեցնէ հնազանդիլ հաւաքական շահերուն եւ իրաւունքներուն: Պօղոս Առաքեալ ընդհանրապէս հաւատացեալներուն վերաբերմամբ հետեւեալը կը գրէ Տիտոսին. «Յիշեցուր բոլորին, որ հնազանդին ու հպատակին պետական իշխանութիւններուն, եւ պատրաստ ըլլան ամէն տեսակի բարի ծառայութիւն մատուցելու» (Տիտ 3.1):

Պարզ է, թէ յարաբերութեանց յիշեալ բոլոր կալուածներուն մէջ ալ հնազանդութիւնը նպատակ չէ բնաւ: Նպատակը միշտ մարդուն կերտումն է կարգաւորեալ կեանքի մը շրջագիծին մէջ:

Շատերու համար թերեւս անախորժ թուի հնազանդութեան այս հասկացողութիւնը, որովհետեւ անիկա օրէնքի ենթարկում կը յուշէ: Ճիշդ է թէ հնազանդութիւնը անմիջականօրէն կապուած է օրէնքի հասկացողութեան: Չմոռնանք որ ամբողջ կեանքը ինք կապուած է մարդոց յարաբերութիւնները կարգաւորող օրէնքներու: Եւ սակայն, օրէնքին բեռը չեն զգար անոնք որոնք բնական հասկացողութեամբ ու վարժութեամբ կը յարգեն անոր տրամադրութիւնները:

Օրէնքը դաստիարակի դեր կը կատարէ մինչեւ այն ատեն, որ մարդիկ պէտք ունին անով կրթուելու եւ ուղղուելու, իսկ այսուհետեւ

կը դադրի այդ հանգամանքէն: Նոյնպէս է քրիստոնեային համար հնազանդութիւնը, որ դաստիարակի դեր կը կատարէ: Անգամ մը չափահասութեան հասնելէ ետք, ալ հնազանդութիւն չկայ որպէս օրէնք եւ բեռ, որովհետեւ չափահաս քրիստոնեան արդէն շնորհքի դաստիարակութեան անցած կ'ըլլայ:



1700-ԱՄԵԱԿԸ ԵՒ ԱՆՈՐ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ՎՐԱՅ

Այսօրուան խօսքը յատկապէս երիտասարդ-երիտասարդուհիներուն [ուղղուած է]:

Հոգիները լեցնող ու խայտացնող ի՞նչ գեղեցիկ երեւոյթ է տեսնել ձեզ բոլորդ մէկտեղ գումարուած՝ կարճ պահու մը համար ձեր մտածումները լեցնելու խորհրդածութեամբը այն կարեւորագոյն հանգրուանին, որ Քրիստոսի Ա. Եկեղեցին 2000-ամեակն է, եւ սերտօրէն անոր առնչուած այն միւս հանգրուանին, որ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետականօրէն ճանաչման եւ ազգային մեր Եկեղեցին կազմակերպման 1700-ամեակն է:

Ի՞ՆՉ Է 1700-ԱՄԵԱԿԸ

Ես պիտի փորձեմ ձեզի փոխանցել քանի մը մտածում այն ընդհանուր մտահոգութիւններէն եւ անոնցմէ ծնած առաջադրանքներէն եւ ակնկալութիւններէն, որոնք այս հանգրուանին մեր ամբողջ ժողովուրդինն են, գլխաւորութեամբը մեր Եկեղեցին եւ զօրակցութեամբը հայրենի մեր պետութեան:

1700-ամեակը պարզապէս գեղեցիկ ճառախօսութեանց եւ փառաշուք հանդէսներու առիթ մը պէտք չէ ըլլայ: 1700-ամեակը նախ առիթ մը պէտք է ըլլայ անդրադարձի եւ վերաբժեւորումի:

Արդ, առաջին հերթին, ի՞նչ կ'ըսէ 1700-ամեակը ձեզի՝ հայ երիտասարդին ու երիտասարդուհիին:

«Երբ երեխայ էի երեխայի պէս կը խօսէի, երեխայի պէս կը խորհէի եւ երեխայի պէս կը տրամաբանէի,- կ'ըսէ Պօղոս Առաքեալ, եւ կը շարունակէ,- իսկ երբ տղամարդ դարձայ՝ բոլոր երեխայական բաները մէկ կողմ դրի» (Ա. Կր 13.11):

Մանուկը ինչպէս ամբողջ աշխարհին, այնպէս ալ իր ծնողներուն

վերաբերեալ տարբեր, երեխայական մտածելակերպ մը ունի, որ աստիճանաբար կը փոխուի, երբ կը թեւակոխէ պատանութեան եւ ապա, երիտասարդութեան տարիքը: Նոյնն է մեր մտածողութիւնը՝ մեր Եկեղեցին հանդէպ: Երեխայական տարիքին՝ կը խորհինք, կը տրամաբանենք ու կը խօսինք երեխայի պէս, պատանի տարիքին՝ պատանիի պէս: Միայն երիտասարդութիւնը թեւակոխելէ ետք է, որ կը սկսինք խորհիլ, տրամաբանել ու խօսիլ հասուն մարդու պէս:

Դուք այժմ երիտասարդութեան սեմին հասած էք, եւ ուստի, որոշակի հասունութեան հասած խորհողութիւն մը եւ տրամաբանութիւն մը ունիք, եւ ձեր խօսքերը պէտք է այդ հասունութեան արտայայտութիւնն ըլլան: Արդ, ի՞նչ էր Եկեղեցին, մեր Եկեղեցին, ձեզի համար երբ երեխայ էիք, ինչպէ՞ս դիտեցիք ու հասկցաք զայն երբ պատանութեան հասաք, եւ հիմա որ արդէն պատանութիւնը կը թօթափէք ի՞նչ է, ինչպէ՞ս կը ներկայանայ անիկա ձեզի:

Թերեւս մինչեւ հիմա Եկեղեցի բառը ձեզի համար կը նշանակէր աչքերով տեսնուած պարզ շէնքը: Բայց ա՛յդ է Եկեղեցին: Եկեղեցին միակ Աստուծոյ մը եւ միակ հաւատքի մը վրայ հիմնուած եւ այդ հաւատքով ապրող ու շնչող հաւաքականութիւն մըն է, մարդոցմով կազմուած հոգեւոր մարմին մը. ես, դուն, եւ մեր բոլորին գումարը: Մեր պարագային ամբողջ ազգն է Եկեղեցին, որովհետեւ, ահա 1700 տարի է ի վեր քրիստոնէութիւնը այնպէս մը միախառնուած է մեր պատմութեան, մեր մշակոյթին, մեր առօրեայ կեանքին եւ ապրումներուն. այլ խօսքով՝ մեր ազգային ինքնութեան, որ դժուար է անոր մասին խորհիլ ու խօսիլ՝ «դուրսէն» դիտելով զայն: Անիկա մեր հարազատ ծնողն է, ինչպէս Վարդանանք Յազկերտին տուած իրենց գրաւոր պատասխանին մէջ կ'ըսէին. «Իբրեւ միակ հայր Աւետարանը կը ճանչնանք, եւ իբրեւ մայր՝ Առաքելական Եկեղեցին»:

Արդ, անգամ մը եւս, ինչպէ՞ս կը խորհէինք ու կը տրամաբանէինք մինչեւ հիմա «հոգեւոր մայր» կոչուած այս Եկեղեցին մասին. եւ ինչպէ՞ս կը դիտենք ու կը գնահատենք այսօր, կամ պիտի արժեւորենք վաղը:

Մեր ծնողներուն հանդէպ մեր սէրը, կապուածութիւնը. անոնցմով մեր հպարտութիւնը, մեր զգացումները, համակրանքը կամ երբեմն հակակրանքը, մեր նուիրումը կամ մերժումը անգիտակից եւ բնազդային են երբ երեխայ ենք. եւ սակայն պատանութեան ու երիտասարդութեան հասնելէ ետք նորովի կը խորհինք ու կը գնահատենք մեր այդ կապը, եւ շատ մը բաներ մեր գիտակցութենէն անցընելէ ետք մեր վերաբերումը կը փոխուի ու նոր յարաբերութիւն մը կը սկսի մեր ծնողներուն հետ:

Այսպէս է եւ պէտք է ըլլայ նաեւ Եկեղեցիին պարագային: Եկեղեցին մեր ծնողն է, մեր հասարակաց հոգեւոր ծնողը, որուն ծնունդը 2000 տարուան պատմութիւն ունի մեր Հայրենի Աշխարհին մէջ, եւ որուն յանկարծական աճումը, ամրապնդումը եւ կազմակերպումը տեղի ունեցան 1700 տարի առաջ Ս. Գրիգոր Լուսաւորիչի յանձն առած կամաւոր չարչարանքներով եւ առաքելական վիթխարի ջանքերով, որով քրիստոնէական հաւատքը, որ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս Առաքելներուն ձեռքով մուտք գործած էր Հայաստան, իր վերածնունդն ապրեցաւ եւ դարձաւ մեր աշխարհի պետականօրէն ճանչցուած կրօնքը եւ կարճ ժամանակի մէջ եղաւ ամբողջ մեր ժողովուրդին սեփականութիւնը:

1700 տարի այդ հաւատքով ապրեցանք ու գործեցինք. 1700 տարի այդ հաւատքով աճեցանք եւ ստեղծագործեցինք. 1700 տարի այդ հաւատքով մեր անհատական եւ ազգային դիմագիծը գտանք ու մեր ինքնութիւնը կերտեցինք. 1700 տարի այդ հաւատքով պայքարեցանք ու գոյատեւեցինք: 1700 տարի ետք, ահա մենք կը պատրաստուինք կարեւոր այդ տարեդարձը տօնելու: Կ'ուրախանանք իբրեւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ զաւակներ, կը հպարտանանք ազգովին, անցեալ բոլոր իրագործումները կը նշենք, արդարօրէն կը փառաւորենք:

Բայց կ'անդրադառնա՞նք, որ այս բոլորը այսօր կան, երկու-երեք տարի կրնան մեզ զբաղեցնել, բայց ի վերջոյ սպասուած հանգրուանը պիտի հասնի ու անցնի: Ի՞նչ պիտի մնայ անկէ ետք. ի՞նչ պիտի ձգէ մեզմէ իւրաքանչիւրին մէջ. ի՞նչ պիտի փոխէ մեր կեանքին մէջ:

Հարցումը դնեմ ուրիշ կերպով: Ամէն անգամ որ հարազատ անձի մը տարեդարձը կը տօնենք, մեզմէ բան մը կու տանք անոնց, սրտալից մաղթանք մը, սիրոյ շօշափելի արտայայտութիւն մը, նուէր մը: Իսկ մեր Եկեղեցւոյ այս տարեդարձին առիթով ի՞նչ նուէր կրնայ տալ մեզմէ իւրաքանչիւրը:

Նիւթական ո՛չ մէկ նուէր արժէք ունի, հարկաւ: Լաւագոյն նուէրը, որ կրնանք երբեւիցէ ընծայել, մեր իսկ անձն է, մեր սէրը, մեր նուիրումը, մեր կապուածութիւնը, մեր հաւատարմութիւնը, մեր նորոգուած հաւատքը:

Այս կէտին վրայ պահ մը կանգ կ'առնեն:

Կարելի՞ է երեւակայել, որ մարդս իր հայրը կամ մայրը չճանչնայ եւ փորձ ալ չընէ ճանչնալու: Բայց մեզմէ շատեր լաւ չեն ճանչնար իրենց ազգային պատմութիւնը, եւ յաճախ բնաւ չեն ճանչնար մեր Մայր Եկեղեցին, ինչպէս չեն ճանչնար մեր ինքնութիւնը կազմող քրիստոնէական մեր հաւատքը, թէ ո՞վ է Քրիստոս մեզի համար, ի՞նչ

է Եկեղեցին մեզի համար, ի՞նչ կապ ունի քրիստոնէական մեր հաւատքը՝ ամէնօրեայ մեր կեանքին, մեր անձնական, ընտանեկան թէ ազգային կեանքի դժուարութիւններուն ու տագնապներուն հետ, եւ ի՞նչ կարեւորութիւն եւ դեր ունի անոնց լուծման մէջ: Այս գետնի վրայ մեր անհոգութիւնը եւ մեր հաւատքը չճանչնալը պատճառ կը դառնան բազմաթիւ վտանգներու եւ տհաճ, անբաղձալի երեւոյթներու, որոնք ի վերջոյ մեզ կը կտրեն մեր Եկեղեցիէն, մեր Հայրենիքէն, մեր ազգէն:

Մենք նոյնպէս ականատես կ'ըլլանք, թէ ինչպէ՛ս քրիստոնէական կոչուած աղանդներ եւ մեզի համար ամբողջապէս օտար եւ խորթ համոզումներու կամ կրօններու պատկանող մարդիկ կը մօտենան եւ շատ դիւրին կերպով կը յաջողին իրենց ծուղակը ձգել մեր լաւագոյն երիտասարդ-երիտասարդուհիները՝ անոնց միտքը գրաւելով եւ հեռացնելով մեր ազգային հաւատքէն եւ իտէլաներէն: Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ մեր երիտասարդ-երիտասարդուհիները այդքան դիւրին զոհ կը դառնան անոնց, եւ կը գրաւուին անպաշտպան քաղաքի մը պէս:

Պատճառը շատ պարզ է՝ իր սեփական հաւատքը չճանչցող անձը, իր հաստատուն համոզումները չունեցող մարդը շուտով կը խորտակուի եւ որս կը դառնայ օտար յափշտակիչ գայլերուն: Այս դիւրին պարտութեան մէջ նոյնքան հիմնական դեր կը խաղայ մեր օտարասիրութիւնը, աւելի ճիշդ՝ օտարամոլութիւնը: Մենք շատ դիւրին կերպով կը հիանանք օտարին վրայ, անոր ամէն մէկ խօսքին եւ առած ամէն մէկ քայլին վրայ, եւ ընդհակառակը՝ պատրաստ ենք չհաւնելու եւ նոյնիսկ անտեղի կերպով քննադատելու եւ արհամարհելու ամէն բան, որ կու գայ մեզմէ եւ մեր եղբայրներէն ու քոյրերէն: Եւ նկարագրային այս մեծ տկարութիւնը պատճառ կը դառնայ որ այնքան շուտ հրաժարինք մեր սեփականէն, հեռանանք ազգայինէն եւ ժամանակի ընթացքին խորթանանք՝ ամբողջապէս իյնալով օտարին գիրկը:

Կարելի է երկարել շարքը սպառնացող վտանգներուն եւ մեր կորուստներուն, բայց աւելի կարեւորը դարմանն է: 1700-ամեակը լաւագոյն առիթն է որ այս հիմնական տկարութեանց առաջը առնենք մեր հաւատքին ճանաչումով:

Մեր հաւատքին վերանորոգութիւնը. ահա այս պէտք է ըլլայ առաջին եւ կարեւորագոյն մեր նուէրը, ո՛չ թէ Եկեղեցիին, որ նուէրի պէտք չունի, այլ՝ նոյնինքն մեզի եւ մեր ընտանիքներուն եւ ամբողջ ազգին: Ով որ չի ճանչնար իր հաւատքը, կը նմանի այն զինուորին, որուն ձեռքը հզօր զէնք մը տրուած է, բայց ինք չի գիտեր անոր կարողութիւնը, որովհետեւ չի գիտեր զայն գործածել: Հաւատքը, իրօք, հզօր զէնք մըն է, որ թէ՛ կը զօրացնէ մեզ եւ թէ՛ կը պաշտպանէ մեզ:

Մեր հայրենիքը նիւթական գէնքի կողքին եւ յաճախ անկէ աւելի հաւատքի գէնքով էր որ կռուեցաւ բազմապատիկ գերազանց ոյժերու եւ բանակներու դէմ, եւ շատ յաճախ յաղթող հանդիսացաւ: Նոյն այդ զօրութեան գաղտնիքը մենք պէտք է առնենք մեր կեանքին մէջ՝ մեր կեանքը յաջողութեան եւ յաղթանակի ընթացքի մը վերածելու համար:

Երկրորդ, 1700-ամեակը առիթ է, որ մենք, իբրեւ հարազատ զաւակներ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցիին, մեր **հաւատարմութիւնն արտայայտենք** անոր հանդէպ, եւ մեր զօրակցութիւնն ու կապուածութիւնը անոր գործին:

Երրորդ, 1700-ամեակը առիթ պէտք ըլլայ, որ մենք ունենանք **նորոգուած, զօրացած եւ իր լրիւ ազգային ծառայութեան մէջ եղող Եկեղեցի մը**, որ ատոր համար ալ պէտք է ներքնապէս փոխուի, բարեկարգուի, օժտուի նոր կառոյցներով ու միջոցներով եւ լայնագոյն հնարաւորութիւններով:

Չորրորդ, այս հանգրուանը առիթ մը պէտք է ըլլայ, որ մենք դուրս գանք մեր կրաւորութենէն եւ դառնանք մեր **Եկեղեցւոյ կեանքին մասնակից**՝ իր ամբողջական իմաստով: Այսինքն, մենք մեզ չզգանք իբրեւ պարզ հանդիսատես, հեռուէն կամ դուրսէն դիտող, դրսեցի, եւ հետեւաբար, իբրեւ անտարբեր անձեր, այլ՝ իբրեւ ընտանիքի հարազատ անդամ, որ գործնապէս մասնակից է իր տունին գործերուն, որ ինքզինքը տէր եւ պատասխանատու կը զգայ իր տան աճումին, զարգացումին, յառաջընթացին, բարեգարգումին, բարձրացումին, բարեկարգ պահպանումին: Եկեղեցին եկեղեցականին գործը չէ՝ [միայն]: Եկեղեցին մենք բոլորս ենք, եւ մեր բոլորինն է անիկա, ուստի նաեւ մեզմէ իւրաքանչիւրին գործն է անիկա, իւրաքանչիւրս դեր մը ունինք անոր մէջ: Այս գիտակցութիւնը մեզ պէտք է մղէ, որ տէր կանգնինք մեր դերին:

Արդ, հայ երիտասարդն ու երիտասարդուհին ի՞նչ կրնան եւ ի՞նչ պէտք է ընեն մեր Եկեղեցւոյ կեանքին մէջ, մանաւանդ 1700-ամեակի այս հանգրուանին:

Գիտենք, որ մեր ժողովուրդը արդարօրէն իր Եկեղեցիէն կը սպասէ ներքին վերանորոգութիւն մը, որ բազմաթիւ երեսներ ունի: Այդ երեսներէն այստեղ կ'ուզեն յիշել մէկ-երկուքը, որոնք անմիջականօրէն կապուած են մեր երիտասարդ սերունդին, ձեզի՝

Մարդկային որեւէ ընկերութեան, կազմակերպութեան կամ միութեան, կամ որեւէ հաստատութեան մէջ որեւէ առողջ գործունէութիւն եւ որեւէ դրական փոփոխութիւն կամ վերանորոգութիւն՝ պայմանաւորուած է մարդով: Մարդն է գործի մը յաջողութեան նախապայման-

նը: Եւ, անշուշտ, երբ կ'ըսենք «մարդ»՝ կը հասկնանք նկատի առնուած գործին համար յատուկ կարողութիւնը եւ իր պատրաստութիւնը ունեցող մարդը եւ ոչ թէ պատահական ռեւէ մարդ:

Մեր Եկեղեցին բոլոր ժամանակներուն համար ալ պատրաստած է իր գործին եւ առաքելութեան նուիրեալ անձերը՝ անոնց տալով իւրաքանչիւր ժամանակի բարձրագոյն ուսումը եւ գիտութեան գէնքերը, որպէսզի եկեղեցական անձը ըլլայ գիտութեան տէր, իր հաւատքին ճշմարտութիւններուն քաջածանօթ, զանոնք բացատրելու եւ իր ժողովուրդին ընծայելու կարող, նաեւ՝ հաւատքի ճշմարտութիւնները այլափոխող տեսութիւններու, այլակրօն յարձակումներու, աղանդներու եւ աղանդաւորներու դէմ զանոնք զօրեղապէս պաշտպանելու եւ սխալը հերքելու պատրաստ:

Նոյնը ի զօրու է այսօր եւս, այն տարբերութեամբ, որ ներկայիս շատ քիչ է թիւը եկեղեցականներուն, որոնք չեն հասնիր իրենց պարտականութիւններու լրիւ բաւարարումին: Ուստի, առաջին հերթին, Հայաստանեայց Եկեղեցին պէտք ունի երիտասարդ նոր սերունդի մը, որ կամաւորաբար ինքզինք նուիրէ իր մայրենի Եկեղեցիին եւ անոր ընդմէջէն՝ իր ժողովուրդին, երիտասարդ սերունդի մը, որ մեր դպրեվանքներուն մէջ իր առաջին պատրաստութիւնն ունենալէ ետք երթայ աշխարհի ամէնէն անուանի համալսարանները, ստանայ բարձրագոյն ուսում, նուաճէ գիտական տիտղոսներ, եւ լուսաւորեալ միտքով՝ գայ լոյս դառնալու իր շրջապատին մէջ, ոչ թէ խօսքով, այլ՝ գործով:

Գիտենք, դարձեալ, որ աշխարհը նոր մտածողութեանց հոսանքի մը մէջ բռնուած է այսօր, եւ Եկեղեցին պէտք ունի նոր ժամանակի պահանջներուն եւ հարցերուն պատասխան տալու: Այլ խօսքով, Եկեղեցին պէտք ունի նոր մտաւորականութեան մը, որ ամբօրէն կանգնած ըլլայ ժամանակակից գիտութեան տուեալներուն եւ Աստուածաշունչի խորագոյն ուսումնասիրութեան ապահով արդիւնքներուն վրայ: Ամբողջապէս նոր մտածողութիւն մը պէտք է կազմաւորուի եւ նոր գրականութիւն մը մշակուի՝ ժողովուրդին տրամադրութեան տակ դնելու եւ զայն ուղիղ առաջնորդելու համար:

Այսօրուան աշխարհէն եկող հարցերուն առաջին երեսը բարոյական կողմն է մեր կեանքին: Ամէն օր կը տեսնենք ու կը խօսինք ակքովամոլութեան եւ թմրամոլութեան մասին, միասեռականութեան կամ պրոնկութեան մասին: Յաճախ առիթը կ'ունենանք լսելու նոր երեւոյթներու մասին, որոնք իրենց հետ բարոյական ու կրօնական հարցումներ կը բերեն. ինչպէ՞ս պէտք է դիտել դիակիզումը, դիւրամահը, արուեստական վիժումները, ամլացումը, արուեստական յղութիւնը,

ամուսնալուծումները, մարմնական անդամներու փոխատուութիւնը կամ անոնց պատուաստումը, հոգեբուժութեան ստեղծած հարցերը, մարդոց վրայ կատարուած գիտական կամ բժշկական փորձարկումները, կենսոլորտի ապականումը, հիւլէական, կորիզային կամ քիմիական զէնքերու գործածութիւնը եւ անոնց ահռելի հետեւանքները, եւայլն, եւ ի՞նչ կեցուածք պէտք է որդեգրել ասոնց հանդէպ: Եկեղեցին ինք պէտք է պատասխանէ այս հարցումներուն, եւ այդ պատասխանները գիտցնէ նաեւ իր բոլոր հաւատացեալներուն՝ իբրեւ ուղեցոյց եւ առաջնորդ:

Այսօրուան աշխարհէն եկող հարցերու ուրիշ երես մը կը ներկայացնէ տարբեր կրօններէ եւ ընկերային վարդապետութիւններէ ազդուած մտածողութիւն մը, որ կարելի է սահմանել իբրեւ «միջազգայնականութիւն» կամ «մշակոյթներու խառնուրդ»: Տարբեր այդ ազդեցութիւնները մեր աշխարհը կը դնեն երկու ծայրայեղ հոսանքներու մէջ, որոնցմէ մէկը բացարձակ այլամերժութիւնն է, իսկ միւսը բացարձակ թոյլատու կեցուածքը: Մէկը կը դատապարտէ, կ'անտեսէ ու կը մերժէ իր սեփականէն դուրս գտնուող ամէն բան, իսկ միւսը չ'ուզեր որեւէ դատաստան ընել եւ անտարբերութեամբ կ'ընդունի որեւէ բան որ իրեն կու գայ աջէն ու ձախէն: Մէկը քարացած ուղղութիւն մը կը պարտադրէ, միւսը՝ որեւէ ուղղութիւն չունի: Եւ երկուքն ալ, իրենց ծայրայեղութեամբ, ահաւոր վնասներ կը հասցնեն մարդկային մտածողութեան եւ աշխարհին:

Քրիստոնէական ճշմարիտ կեցուածքը ասոնցմէ բոլորովին տարբեր է, հեռու ամէն չափազանցութենէ: Քրիստոնէութիւնը անսկզբունք կեցուածք մը չէ: Ունի իր յստակ կեցուածքը՝ Աստուծոյ, մարդուն, կեանքին եւ աշխարհին հանդէպ, կեցուածք մը, որ բարոյական որոշակի սկզբունքներու վրայ կը հիմնուի, կեցուածք մը, որ մարդուն բացարձակ արժէքին եւ մարդկային իրաւունքներու հասկացողութեան վրայ կը հիմնուի եւ որուն համար բացարձակ անհրաժեշտութիւն կը նկատէ մտածողութեան, կամքի եւ գործունէութեան ազատութիւնը: Այդ ազատութիւնը անիշխանութիւն չէ՝ սակայն, պէտք չէ՝ զայն շփոթել անսկզբունք կեցուածքներու հետ: Քրիստոնէան իր սկզբունքները պէտք է ունենայ եւ անշեղօրէն հետեւի անոնց՝ կատարեալ համոզուածութեամբ: Բայց, միւս կողմէ, իր այդ համոզուածութիւնն ու սկզբունքներուն կառչուածութիւնը չեն նշանակեր նեղմտութիւն, ուրիշներու հանդէպ լայնախոհութեան եւ հասկացողութեան պակաս: Ուրիշները յարգել չի՝ նշանակեր սեփական համոզումներէն հրաժարիլ, ոչ ալ սեփական համոզումներ ունենալը կը նշանակէ օտարամերժութիւն եւ անհանդուրժողութիւն: Հոս է քրիս-

տոնէութեան մեծութիւնը եւ բարձրութիւնը՝ հիմնուած սիրոյ վրայ, որովհետեւ սէրը չի կրնար մոլեռանդ եւ անհանդուրժող ըլլալ:

Իրենց Եկեղեցին ճանչցող հայ երիտասարդն ու երիտասարդուհին պէտք է գիտնան, թէ Հայց. Եկեղեցին իր 1700-ամեայ պատմութեան ընթացքին եղած է Եկեղեցիներու ընտանիքին մէջ ամէնէն լայնախոհը, ազատամտութեան պաշտպանն ու պիտոյեանը ունենալով հանդերձ իր ամուր սկզբունքներն ու կեցուածքները: Եւ ասիկա անհուն հպարտութեան աղբիւր է մեզմէ իւրաքանչիւրին համար, հպարտութիւն մը, որ նոյն կեցուածքին պահպանումը պէտք է ըլլայ մեր այսօրուան կեանքին մէջ, իւրաքանչիւրիս կեանքին մէջ՝ գիտակցական որդեգրումովը նոյն կեցուածքներուն եւ ամբողջական ու յանձնառու փարումով մը անոնց:

Անդրադարձա՞ք, թէ քանի՞ անգամ ըսի «պէտք է»: Բայց հիմա պիտի ըսեմ, չի բաւեր ըսել «պէտք է, պէտք է»: Այս բոլորն իրագործողը մարդիկ պիտի ըլլան: Իսկ մարդիկը երկինքէն չեն իյնար: Դուք էք մեր երիտասարդութիւնը, դուք էք տէրը մեր Եկեղեցիին եւ դուք պէտք է նախանձախնդիր ըլլաք այս կարեւորագոյն առաքելութեան: Ձեզմէ կը սպասենք այն նուիրեալները, որոնք քաջութիւնը պիտի ունենան Եսայի Մարգարէին բառերով պատասխանելու Աստուծոյ եւ մեր ժողովուրդի կոչին, եւ ըսելու «Ահա՛ ես, գիս դրկէ՛» (Ես 6.8): Շատ են Եկեղեցիին ծառայութեան կերպերը, որոնց համար ամէն տեսակի մարդու եւ բազմապիսի կարողութեանց կարիքը կայ:

Նախ, Եկեղեցին կայ իբրեւ **հաւատք**: Վերը ակնարկեցի, որ առաջին հերթին այդ հաւատքին առողջ, կենդանի եւ ամուր պահպանումը պէտք է ըլլայ մեր մտահոգութիւնը:

Հաւատքը կենդանացուցիչ հոգին է Եկեղեցւոյ մարմինին, այսինքն Եկեղեցւոյ անդամներուն: Առանց այդ հոգիին կը մեռնի մարմինը, առանց այդ աւիշին կը չորնան ու կը թափթփին տերեւները, ճիւղերը, եւ ի վերջոյ կը չորնայ ծառը: Եւ ինչպէս որ իսկական ծառին պարագային պարտիզպան պէտք է, որ հոգ տանի ծառին եւ ապահովէ անոր դալարութիւնն ու պտղաւորումը, նոյնպէս Եկեղեցին պէտք ունի պարտիզպաններու կամ մշակներու, որոնք խնամք տանին այդ հաւատքին եւ անով կենդանի պահեն ամբողջ ծառը:

Երկրորդ, Եկեղեցին իբրեւ **ծէս**: Ծէսը ամբողջութիւնն է մեր արարողութիւններուն, որոնք հաւատքին դրսեւորման եւ պաշտամունքի վերածման պահերն են: Սքանչելի եւ բացառիկ է մեր Սրբազան Եկեղեցւոյ ծէսը՝ իր ճոխութեամբ ու գեղեցկութեամբ: Ամէն անգամ որ օտարներ առիթ կ'ունենան ներկայ ըլլալու մեր ծէսին, մեր ժամերգութեանց կամ Ս.

Պատարագին, չեն կրնար զսպել իրենց հիացումը եւ յաճախ գրաւորապէս թէ բերանացի կ'արտայայտեն իրենց խոր տպաւորութիւնը: Բայց ծէսը ինք ապրեցնող կ'ուզէ: Եւ մեր երիտասարդութիւնը փոխանակ հեռու մնալու, պէտք է գայ, սորվի եւ հպարտութեամբ տէր կանգնի այդ սքանչելի ժառանգութեան մասնակցելով մեր ծէսին: Ուրիշ ազգեր իրենց չունեցածով գիտեն պարծենալ, մինչ մենք որ պարծենալու ամէն պատճառ ունինք յաճախ չենք իսկ ձանջնար մեր սեփական գանձերը, եւ ասոր համար ալ մեր սիրտերը հեռու կը մնան անկէ եւ կը կապուին ուրիշ, յաճախ անարժէք բաներու:

Երրորդ, Եկեղեցին կայ իբրեւ **աւետարանչութիւն**:

Կը պարծենանք որ Առաքելական Եկեղեցի ենք: Մեր Եկեղեցին կը կոչենք «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի»: Անցեալին անիկա իսկապէս «առաքելական» էր՝ բառին բովանդակ առումովը, ներքին թէ արտաքին ձակատներու վրայ...

Պարզապէս թուենք ամէնէն պարզ օրինակները.

- Ս. Գրիգոր Լուսաւորիչ ո՛չ միայն Հայաստան Աշխարհի քրիստոնէութեան դարձը իրագործեց, այլ նաեւ մտասելւեռում դարձուց Հայաստանի դրացի երկիրները եւս նոր հաւատքով լուսաւորելը: Այդ նպատակով ալ յատուկ քարոզիչ առաքելներ դրկեց. Հռիփսիմեանց խումբէն առաքելաշնորհ կոյս մը՝ Ս. Նունէն, ինչպէս նաեւ Սեբաստիայէն եկած Իրենարքոսը՝ Վրաստան, Սատաղէն եկած Թովմասը՝ Աղուանք, եւ Կապադովկիայէն եկած Սոֆրոնիոսը՝ Լազերու երկիրը: Աղուանքի երկրորդ նշանաւոր եպիսկոպոսը պիտի ըլլար Ս. Վրթանէսի որդին եւ Գրիգոր Լուսաւորիչի թոռնիկը՝ Գրիգորիսը, որ առաքելական քարոզութեան աշխատանք ծաւալեց նաեւ վայրենաբարոյ մազքութ ցեղին մէջ՝ բաւական յաջողութիւն ձեռք բերելով, բայց ի վերջոյ անոնց ձեռքով ալ նահատակուելով 337 թուին:

- Ս. Մեսրոպ Մաշտոց Հայոց Այբուբենի գիւտէն ետք աշխատեցաւ եւ այբուբեն ստեղծեց նաեւ վրացիներուն համար, եւ այդ այբուբենը ծառայեցուց Աստուածաշունչի թարգմանութեան եւ քրիստոնէութեան քարոզչութեան գործին:

- Նոյն 5-րդ դարու վերջը կամ 6-րդին սկիզբները, երկու հայ եպիսկոպոսներ եղան առաջին քարոզիչները Հիւսիսային Կովկասի բնակիչ հոներուն մէջ:

- 7-րդ դարու Բ. կէսին, Գրիգոր Մամիկոնեանի իշխանապետութեան օրով, Իսրայէլ Վարդապետի (յետագային՝ կաթողիկոս) գլխաւորութեամբ պատուիրակութիւն մը գնաց հոներուն եւ խազարներուն մօտ (Հիւսիսային Կովկաս եւ Խրիմ)՝ քրիստոնէութիւնը անոնց մէջ տարածելու համար: Ժամանակաւոր յաջողութիւն մը արձանագրուե-

ցաւ, որ սակայն շատ կարճատեւ եղաւ:

- Հայ քարոզիչներ տարբեր պատճառներով Եւրոպա ինկած, հասան մինչեւ Շուէտ եւ Նորվեկիա, մինչեւ Իսլանտա կղզին:

- 13-րդ դարուն, Հեթում Բ. թագաւոր երբ Մանգու խանին այցելութեան գնաց, իրեն հետ տարաւ նաեւ եկեղեցականներ, որոնք քրիստոնէութիւնը թաթարներուն մէջ տարածելու աշխատանք տարին:

- Տակաւին, հայ եկեղեցականներ հասան մինչեւ Հնդկաստան եւ Չինական Աշխարհի սահմանները...

- Վերջին դարերուն, հայ եկեղեցականներ առաքելական ոգիով քարոզութիւններ կատարեցին նաեւ թուրքերու, քիւրտերու եւ պարսիկներու մէջ, եւ Աստուածաշունչի, մանաւանդ Նոր Կտակարանի մասնակի թարգմանութիւններ ալ իրագործեցին՝ զանոնք քրիստոնէութեան դարձնելու իրենց ճիգին իբրեւ գործնական միջոց...

«Եկեղեցի»ն պէտք է դուրս գայ եկեղեցիի չորս պատերէն, քարէն, շէնքէն, սահմաններէն, դառնայ ապրող, շնչող, շարժուն, ամենասփիւռ եւ ամենաթափանց, մտնէ տուն, դպրոց, գործատեղի, կեանքի բոլոր բնագաւառները, մեր առօրեային բոլոր երեսները, եւ ամէն տեղ դնէ իր համբոյրը, իր դրոշմը, բերէ Ս. Հոգիին վերափոխիչ ու կենդանարար շունչը... Եւ ասիկա պիտի ընէք դուք, մեր երիտասարդութիւնը, ձեր ընտրանի ներկայացուցիչները:

Տակաւին, Եկեղեցին կայ իբրեւ **ընկերային ծառայութիւն**:

Ինչպէս մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս ցոյց տուաւ, հաւատքը անբաժան է սիրոյ ծառայութենէն: Եկեղեցին Աստուծոյ արքայութեան պատկերացումն է երկրի վրայ, եւ արքայութիւնը իրեն դրօշակ ունի Քրիստոսի սէրը, որ անդադար ինքզինք կը բաշխէ մարդոց: Այդ հասկացողութեամբ է, որ Եկեղեցին առաջին դարերէն մինչեւ այսօր միշտ ալ կայ ու կը մնայ մարդկային իրաւունքի եւ արդարութեան պաշտպան, աղքատին, որբին ու այրիին խնամատար, նեղեալին, թշուառին ու սգաւորին օգնական ու մխիթարիչ, հիւանդին, անկարին ու տառապեալին դարմանիչ ու ձեռնտու, մանուկին ու պատանհին, երիտասարդին ու տարեցին դաստիարակ եւ ուսուցիչ, բարեկամ եւ խորհրդատու, խոստովանահայր եւ փրկութեան առաջնորդ:

Այս ծառայութեան բոլոր երեսներն իրագործելու համար Եկեղեցին միշտ ալ խորհած է կազմակերպ ձեւերու մասին: Բոլորս ալ գիտենք, օրինակ, թէ ինչպէ՛ս Մեծն Ներսէս Կաթողիկոս դեռ 4-րդ դարուն Հայաստանի բոլոր կողմերը ո՛չ միայն դպրոցներ բացաւ, այլ նաեւ հիւանդանոցներ ու ծերանոցներ, բորոտներու յատուկ խնամքի տուններ հիւանդանոցներ...

Այսօր նոյնպէս Եկեղեցին այդ ծառայութիւնները կը պահէ եւ անհրաժեշտ է որ աւելի եւս զարկ տայ անոր: Ատոր համար ալ, եկեղեցիներու կողքին արդէն իսկ գործող ընկերային ու հոգեւոր ծառայութեան բջիջներուն առընթեր նոր բջիջներ եւս պիտի կազմուին՝ մասնագէտ անձերու, հոգեբաններու, ընկերաբաններու, բժիշկներու եւ գործարար մարդոց մասնակցութեամբ իւրաքանչիւր շրջանէ ներս ամէն կարելի օգնութիւն ընծայելու համար ազգին զաւակներուն, միաժամանակ, պայքարելու համար աղանդաւորական եւ միւս վնասաբեր, ապագայնացնող եւ այլասերիչ շարժումներուն դէմ: Այս կալուածին մէջ նոյնպէս Եկեղեցին պէտք ունի ձեզի երիտասարդ, հաւատաւոր եւ խանդավառ ոյժերու, որոնք իրենց հաւատքն ու նուիրումի կրակը ջահաւորած զայն հաղորդեն ուրիշներուն, բոլորը առնելու եւ միազանգելու համար նոյն ազգային շաղուածքին մէջ, առաջնորդելու եւ բարձրացնելու համար նոյն պատմութեան հորիզոնին, եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչին ու Ս. Տրդատ թագաւորին հրաշածին տեսլականով նոր Եկեղեցիի վերածելու եւ վերընծայելու Աստուծոյ:

Այո, սիրելիներ, այսօր եւ վաղը՝ դուք էք Եկեղեցին: Եւ մենք կ'ուզենք հաւատալ, որ մեր սպասումներուն, մեր բազմապիսի ակնկալութիւններուն մէջ չենք սխալած:

1700-ամեակին առիթով, կ'ուզենք տեսնել մեր սիրելի Եկեղեցին նոր եւ հրաշափառ պատմութեանով զարդարուած: 1700-ամեակին առիթով, կ'ուզենք տեսնել մեր երիտասարդութիւնը իր արժանավայել պատմական առաքելութեան լծուած: 1700-ամեակին առիթով, կ'ուզենք տեսնել մեր ժողովուրդը ներկայ պատկերէն դուրս եկած, եւ հայ մարդը՝ նոր դիմագիծ զգեցած, իր աչքերը նոր տեսիլքով ջահաւորուած: 1700-ամեակին առիթով, կ'ուզենք տեսնել մեր հայրենիքը՝ իր դժուարութեանց լուծը թօթափած եւ փառաւոր նոր հանգրուան մը թեւակոխած:

Այսօր եւ վաղը՝ դուք էք մեր Եկեղեցին: Եւ հիմա ասպարէզը ձերն է: Ժամանակը մեզմէ արագ կ'ընթանայ: Ուստի ժամանակն է՝ խօսքէն գործի անցնելով՝ ժամանակին հետ մրցելու եւ անոր վրայ ձեր սերունդին անջնջելի դրոշմը դնելու:

Ի՞ՆՉ Է ԵԿԵՂԵՑԻՆ

«Եկեղեցի» հասկացութիւնը տարբեր բան է քան շէնքը: Սկզբնական ընդհանուր իր իմաստին մէջ ԵԿԵՂԵՑԻ կը նշանակէր՝ հաւաքոյթ ժողովուրդի մը կամ գինուորներու, որ յետոյ մասնաւորուեցաւ եւ սկսաւ նշանակել՝ հաւաքոյթը հաւատացեալներուն, որոնք Աստուծոյ կոչովը կը հաւաքուէին. այդ իսկ պատճառով՝ «Եկեղեցի» եւ «Աստուծոյ ժողովուրդ» հասկացութիւնները հոմանիշ են իրարու: Պարզ է, ուրեմն, թէ Եկեղեցին ԱՍՏՈՒԾՈՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՒԱՔՈՅԹԸ կը նշանակէ. գումարումը այն մարդոց, որոնք, Աստուծոյ կոչով, առանձնաշնորհեալ դիրքի մը բարձրացած են, որովհետեւ Աստուած անոնց շնորհած է Իր անունը, Իր իմաստութիւնը տուած է անոնց, մարդոց փրկութեան Իր յաւիտենական ծրագիրը բացած է անոնց եւ Իր Հոգիին ամենառատ շնորհքները թափած անոնց վրայ: Այս առանձնաշնորհումի խոր գիտակցութեամբ էր, օրինակ, որ Հայոց Աշխարհի ամենամեծ նախարարները Վարդանանց հաւատամարտի նախօրեակին, Յազկերտի դիմաց կանգնած, խրոխտաբար կ'ըսէին. «Եկեղեցին մարդկային շինուածք չէ... Եկեղեցիները ոչ թագաւորներու պարգեւ են, ոչ ճարտար արուեստի արդիւնք են, ոչ իմաստուններու գիւտ, ոչ գինուորներու քաջութեամբ ձեռք բերուած աւար են եւ ոչ ալ դեւերու մոլար խաբէութիւն. երկրի վրայ չես կրնար ցուցնել որեւէ բան, որքան ալ վեհ ըլլայ անիկա կամ վատթար, որմէ որեւէ տեղ Եկեղեցի յառաջ գայ: Եկեղեցին մեծ Աստուծոյ շնորհքն է՝ տրուած ոչ թէ մարդոցմէ ուրեւ մէկուն, այլ՝ բոլոր բանական ազգերուն, որոնց վիճակուած է այս արեւուն տակ բնակիլ: Անոր հիմները հաստատուն վէմի վրայ դրուած են. ոչ մարդիկ կրնան շարժել, ոչ ալ հրեշտակները՝ սասանեցնել» (ԵՂԻՇԷ, Երկրորդ յեղանակ):

Աստուած Եկեղեցին պարգեւեց մեզի՝ որպէս ՆԱԽԱՕՐԻՆԱԿԸ ԻՐ ԳԱԼԻՔ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ: Այդ թագաւորութեան ժառանգորդները ներկայ Եկեղեցւոյ մէջ կը դաստիարակուին, կ'աճին ու կը պատ-

րաստուին մինչեւ հասնին հաւատքի կատարելութեան, Աստուծոյ իմաստութեան եւ ճշմարտութեան ճանաչումին: ԵԿԵՂԵՑԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՆ Է, իմաստութեան Քրիստոսի կողմէ շինուած տունը, որ Հոգիի եօթնարփեան շնորհքներու հիմերուն վրայ կանգնած է (Առ 9.1): Միաժամանակ, ԵԿԵՂԵՑԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՅԱՅՏՆԱՐԱՆՆ Է. հոն եւ անոր միջոցով է որ Աստուծոյ բազմատեսակ իմաստութիւնը կը յայտնուի մարդոց, հոգեւոր կատարելութեան հասած մարդոց (Ա. Կր 2.6-14: Եփ 3.10-11): ԵԿԵՂԵՑԻՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՍԻՒՆՆ Է ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ (Ա. Տմ 3.15), որովհետեւ հոն եւ անոր միջոցով է որ Աստուած Իր ճշմարտութիւնը կը յայտնէ եւ զայն Եկեղեցւոյ կեանքով կը հաստատէ ու կը ճշմարտէ՝ ընդդէմ աշխարհի երեւութական ճշմարտութեանց: ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՏԿԵՐՆ Է ԵՐԿՆԱՅԻՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ. անոր մէջ եղող խորհրդական կարգերը նմանութիւնն են հրեշտակներու կարգաւորութեանց, մեր օրհնութիւնները նմանողութիւնն են հրեշտակներու սրբասացութեանց, այնպէս՝ որ Եկեղեցւոյ ճշմարիտ կեանքին հաղորդ մէկը յաւիտենական կեանքի նախաձաշակն է որ կ'առնէ այնտեղ՝ ինքզինք դէմ յանդիման զգալով «Կենդանի Աստուծոյ քաղաքին՝ Երկնաւոր Երուսաղէմի եւ բիւրաւոր հրեշտակներուն ու Երկինքի մէջ գրուած Աստուծոյ անդրանիկ զաւակներու հանդիսաւոր հաւաքոյթին ու Եկեղեցիին, եւ Աստուծոյ, որ ամէնուն Դատաւորն է, եւ արդարներու հոգիներուն, որոնք կատարուեր են, եւ Յիսուսի, որ Նոր Ուխտին միջնորդն է...» (Եբր 12.22-24): ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՐՍՆ Է ԵՐԿՆԱՒՈՐ ՓԵՍԱՅԻՆ՝ Քրիստոսի, որ անոր սիրոյն Ինքզինք զոհաբերեց, եւ զայն մկրտութեան աւազանին լուացումով մաքրեց եւ Իր խօսքով սրբազործեց, որպէսզի Իր երկրորդ գալստեան Եկեղեցին գտնէ անբիծ եւ անարատ, պատրաստ՝ երկնաւոր առաքաստ մտնելու (Եփ 5.25-27: Յյտ 21.1-3):

*
* * *

Չմոռնանք, սակայն, թէ ըսինք, որ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՒԱՔՈՅԹՆ Է: Հետեւաբար, ինչ ալ ըսենք Եկեղեցւոյ մասին եւ ինչպէս ալ մտածենք անոր մասին, պէտք չէ մտահան ընենք, թէ կը խօսինք ՄԱՐԴՈՑ մասին, մեր եւ ձեր մասին: Իսկական Եկեղեցին դուք էք, ձեր մկրտութեան պահէն սկսեալ, ձեր քրիստոնէայ կոչուելովը. «Չէ՞ք գիտեր, թէ Աստուծոյ տաճար էք դուք, եւ Աստուծոյ Հոգին կը բնակի ձեր մէջ: Հետեւաբար, եթէ մէկը Աստու-

ծոյ տաճարը քանդէ՝ Աստուած ալ զինք կորուստի պիտի մատնէ, որովհետեւ Աստուծոյ տաճարը սուրբ է. եւ դուք էք այդ տաճարը» (Ա. Կր 3.16-17):

Այս հաստատումը ամէն բանէ առաջ յիշեցումն է ՉԵՐ ԿՈՉՈՒՄԻՆ, մարդուն եւ մարդկային կեանքի բարձր, գեղեցիկ, գերազանց կոչումին: Դուք «ընտրուած սերունդ մըն էք, թագաւորելու կոչուած քահանաներ, սրբուած նոր ազգ մը, Աստուծոյ սեփական ժողովուրդը» (Ա. Պտ 2.9): Այս կոչումին գիտակցիլ կը նշանակէ գիտնալ, թէ՛

1) Որպէս Եկեղեցի՝ ՄԵՆՔ ԿՈՉՈՒՄԻՆ ԵՒ ԸՆՏՐՈՒՄԻՆ ԵՆՔ: Աստուած Իր փրկութեան ծրագիրին մէջ տեղ եւ դեր տուած է մեզի: Պատահականօրէն Աստուծոյ ճամբուն վրայ ինկածներ չենք մենք, այլ՝ սկիզբէն իսկ Անոր գիտութեանը մէջ ներկայ եղած, եւ Իր կողմէ կանչուած ենք՝ Իրը ըլլալու համար, որովհետեւ Իր անսահման սիրով ու ներողամտութեամբ Աստուած մեզ ընտրած է՝ Իր զաւակները ըլլալու Իր ԵԿԵՂԵՑԻՆ մէջ:

2) Որպէս Եկեղեցի՝ ՄԵՆՔ ՏԱՃԱՐ ԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՍԱՐ: Երբ Քրիստոսի ձեռքով սրբած ենք մենք զմեզ՝ զԱստուած մեր մէջ կը կրենք եւ մենք զմեզ Անոր նուիրած ենք կատարեալ ընծայաբերումով: Քարեղէն որեւէ տաճարէ աւելի գեղեցիկ եւ գերազանց է մեր ներքին այս տաճարը, որուն քահանաները մենք ենք, մեզմէ իւրաքանչիւրը: «Այսպիսով դուք ալ, որպէս կենդանի քարեր, Քրիստոսի վէմին վրայ կը կառուցուիք՝ իբրեւ հոգեւոր տաճար. իւրաքանչիւր կը դառնաք անարատ քահանաներ եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ հոգեւոր ընդունելի պատարագ կը մատուցէք Աստուծոյ» (Ա. Պտ 2.5): Ասոր գործնական մէկ օրինակը մեզի կու տայ Եղիշէ՛՛ Վարդանանց հաւատամարտին եւ յետագայ անցքերուն ականատես երգիչը, որ սրբազան մեր պատերազմին անմիջապէս յաջորդող կացութիւնը ներկայացնելով՝ կ'ըսէ, թէ այն ատեն մեր աշխարհին մէջ իւրաքանչիւր մարդու «երգերն ու մրմունջները սաղմոսներն էին, իսկ անոնց իրաւ ուրախութիւնը Սուրբ Գիրքերու ընթերցումն էր: Ամէն մարդ ինքն իր մէջ Եկեղեցի էր եւ ինքն՝ իր քահանան. իւրաքանչիւր մարմին Սուրբ սեղան էր, եւ անոնց հոգիները՝ ընդունելի պատարագ» (Վեցերորդ յեղանակ):

3) Որպէս Եկեղեցի՝ ՄԵՆՔ ՄԱՍՆ ԵՆՔ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄԻՆԻՆ: Արդարեւ, Եկեղեցին Քրիստոսի մարմինն է: Չուտ վերացական, խորհրդապաշտական բացատրութիւն մը չէ ասիկա, այլ հասկացողութիւնը Քրիստոսի իսկական Եկեղեցիին եւ կեանքին: Քրիստոսի Եկեղեցին քրիստոնէական զանազան Եկեղեցիներու ընտանիքներէն կը բաղկանայ. ասոնք, իրենց կարգին, գումարն են ո-


րել է ժողովուրդի կամ հաւաքականութեան պատկանող անհատ հաւատացեալներուն. սակայն բոլորը միասին կը հասկցուին որպէս ՄԷԿ ԵԿԵՂԵՑԻ ունենալով մէկ ու միակ գլուխ մը, որ է Քրիստոս: «Ինչպէս մարմինը իր զանազան անդամներով մէկ ամբողջութիւն է, այսինքն բոլոր անդամները միասին մէկ մարմին կը կազմեն, նոյնպէս նաեւ Քրիստոս: Որովհետեւ մենք բոլորս հրեայ թէ հեթանոս, ծառայ թէ ազատ, նոյն Հոգիով մկրտուեցանք մէկ մարմին կազմելու համար, եւ ամէնքս ալ նոյն Հոգիէն խմեցինք» (Ա. Կր 12.12-13): Մենք անդամներն ենք այդ մարմինին, եւ մեր ամբողջութիւնը կը գտնենք միայն Քրիստոսի մէջ: Եկեղեցին, այս ծելով, Քրիստոսի ՄԱՐՄՆԱԻՈՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆՆ է այս աշխարհի վրայ, եւ ԼՐՈՒՄԸ կամ ԱՄԲՈՂ-ԶԱՍՏՈՒԾ կոչուած է Քրիստոսի (Եփ 1.22-23), որովհետեւ Անոր մարմնաւոր ներկայութեամբը կը լեցնէ այս աշխարհը անոր չորս ծագերուն: Եւ որովհետեւ մենք ենք այդ մարմինը, մենք աշխարհին կը ներկայանանք, ուրեմն, որպէս Քրիստոսի մաս, Քրիստոսի ներկայացուցիչ, Քրիստոսի դեսպան (Բ. Կր 5.20), կոչում մը այնքան բարձր, որ կը հարկադրէ մեզ ըստ այնմ կենցաղավարելու այս աշխարհին մէջ:

4) Որպէս Եկեղեցի ՄԵՆՔ ԸՆՏԱՆԻՔՆ ԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ: Ամէն մարդ պատկանելիութիւն մը ունի, որ իրեն կու տայ իր ինքնութեան դրոշմը եւ գիտակցութիւնը: Մենք գիտենք, թէ Եկեղեցւոյ Սուրբ Աւագանէն մեր ծնունդով ու կնունքով կը պատկանինք Քրիստոսի պատկանելիութիւն մը, որ հոգեկան կապ չէ պարզապէս, այլ շատ աւելի շօշափելի, մարմնաւոր յարաբերութիւն մը կը ցուցնէ: Արդարեւ, մեր այդ ծնունդով «մենք Անոր մարմինի անդամներն ենք, ԱՆՈՐ ՄԻՍԷՆ ՈՒ ՈՍԿՈՐԷՆ» (Եփ 5.30): Թանձրական, մարմնական զօրեղ հասկացողութիւն մը կայ այս պատկանելիութեան մէջ, զոր մենք այլ բացատրութեամբ կը կոչենք ԱՐԵՆԱԿՑՈՒԹԻՒՆ, ԱԶԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԸՆՏԱՆՈՒԹԻՒՆ: Քրիստոս Իր ծնունդով եկաւ մարդկային մեր ընտանիքին մէջ մեր եղբայրն ըլլալու, որպէսզի մեզի հոգեւոր ծնունդ շնորհելով մեզ Իրեն եղբայր ունենայ նաեւ Աստուծոյ ընտանիքին մէջ: Ահա թէ ինչու առաքեալը կը յիշեցնէ մեզի. «Այլեւս Աստուծոյ օտար եւ խորթ չէք, այլ Աստուծոյ ժողովուրդին հետ համաքաղաքացի էք եւ Աստուծոյ ընտանիքին հարազատ անդամները» (Եփ 2.19): Ո՞վ կրնայ աւելի ազնուական կոչում շնորհել մեզի, քան Եկեղեցւոյ շնորհած այս կոչումը:

Այս է Եկեղեցին. եւ այդ իսկ պատճառաւ՝ Եկեղեցին ՄԻՈՒԹԵԱՆ ԽԱՐԻՍԷՆ է ամբողջ մարդկութեան համար, ինչպէս իւրաքանչիւր ժողովուրդի համար: Անոր մէջ ամէն հոսանքներ եւ ամէն տարակար-

ծութիւններ կու գան ներդաշնակ միասնութեամբ նոր մարմին մը կազմելու, որովհետեւ Աստուծոյ սիրոյ հնոցին քուրան է անիկա, ուրկէ անցնող իւրաքանչիւր մարդ կը սրբուի եւ այդ սէրը կը փայլեցնէ իր անձին վրայ:

Այո, Եկեղեցին աշխարհի վրայ մարմնացեալ Սիրոյ մարմնացած վկայութիւնն է:



ՍՈՒՐԲԵՐՆ ՈՒ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԵԱՆՔԸ¹

Ինչո՞ւ այս նիւթը, եւ ինչո՞ւ այս նիւթը այս տարի, այս օրերուն, մեր երկրի քաղաքական եւ ընկերային կեանքի ներկայ տագնապալի դրութեան մէջ:

Որեւէ նիւթ գէթ իր անուանումով՝ պայմանական է, անշուշտ: Անիկա կրնայ վերաբերիլ տեսական ճշմարտութեանց կամ ապրուած փորձառութեանց, վերացական սկզբունքներու կամ գործնական կեանքի նայած անոր մեր մօտեցումին: Կ'ենթադրենք, ինքնին հասկնալի է, որ Հայց. Եկեղեցւոյ հոգեւոր եւ մշակութային ժառանգութեան նուիրուած դասընթացքի մը մէջ նման նիւթ մը տեղ չէր կրնար գտնել եթէ միայն գուտ տեսական, (teorique) եւ մտահայեցողական (contemplatif) մակարդակով հասկցուէր ու ներկայանար: Սրբութիւնը եւ անոր կապուած՝ քրիստոնէական վկայութիւնը, մարտիրոսութիւնը եւ նահատակութիւնը բաներ են, որոնք մեր ամբողջ պատմութիւնը կը լեցնեն եւ զայն կը յատկանշեն իբրեւ մարտիրոսութեան պատմութիւն՝ քրիստոնէութեան քարոզութեան առաքելական առաջին շրջաններէն մինչեւ 1915 թուականի Ապրիլեան Եղեռնով մէկուկէս միլիոնին նահատակութիւնը:

Բացէ՛ք հայոց հին գրականութեան որեւէ գործ, եւ, անկախ գործին ընդհանուր բնոյթէն ու նպատակէն, գրեթէ անկարելի է որ չհանդիպիք սուրբերու ոգեշնչող ներկայութեան, բացի տակաւին այն գործերէն, որոնք գրական յատուկ սեռ մը կը կազմեն՝ սրբախօսական գրականութիւն (=սուրբերու մասին խօսող, պատմող) անունով, եւ սուրբերու նուիրուած շարականները իբրեւ գեղարուեստական գրականութիւն:

Մտէ՛ք հայ եկեղեցական երաժշտութեան բազմահարուստ անդաստանէն ներս, եւ անկարելի է որ սաղմոսը, շարականը, երգը, տաղը, մեղեդին եւ ստեղին կարենաք անջատել սուրբերէն:

Գացէ՛ք մեր հին վանքերն ու եկեղեցիները, ուխտավայր մատուռներն ու վկայարանները, եւ շատ յաճախ՝ այդ վանքերը, եկեղեցիներն ու մատուռները ձեզի պիտի խօսին սուրբի մը, յաճախ՝ քանի մը սուրբերու անունով:

Դիտեցէ՛ք այդ եկեղեցիներուն ու վանքերուն պատերը զարդարող որմանկարներն ու մեզի հասած իւղանկարները եւ մանաւանդ՝ հայ մանրանկարչական ծեռագիր թէ տպագիր յուշարձանները զարդարող անթիւ նկարները, եւ ամէնուրեք ձեզի կը նային սուրբերը:

Անցէ՛ք հայ ազգագրական նիւթերու անհուն ծովէն եւ պիտի տեսնէք, թէ մեր ժողովրդական ասանդակէպերու, ասանդութեանց եւ առտնին սովորութեանց ընդարձակ ափերէն իւրաքանչիւրին կանգնած սուրբեր ունիք, որոնք ձեզ կ'ողջունեն:

Ամէն տեղ տիրական ներկայութիւն են սուրբերը, մեր սուրբերը:

Ձեր ականարկը անցեալէն դէպի ներկայ դարձուցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ հիմա՝ եւս մեր շրջապատին ու մեր անձնական կեանքին մէջ ամէն քայլափոխի կը հանդիպինք անոնց՝ սուրբերուն: Նայեցէ՛ք ձեր օրացոյցներուն, մտածեցէ՛ք ձեր անուններուն մասին, մտաբերեցէ՛ք անունները մեր շարք մը եկեղեցիներուն ու դպրոցներուն, յիշեցէ՛ք ընթացիկ տարուան մը գլխաւոր տօները եւ մանաւանդ՝ ձեր ու ձեր բարեկամներուն անուան տօները, եւ պիտի անդրադառնաք որ ամէն տեղ եւ ամէն կայուածի մէջ սուրբ մը կանգնած է մեր ճամբուն վրայ՝ իր բարի ժպիտով, իր խաղաղ նայուածքով, հոգեպնդիչ ներկայութեամբ:

Բնական կը գտնենք, հետեւաբար, առօրեայ մեր կեանքին մէջ այսքան տիրականօրէն ներկայ եղող սուրբերը եւ անոնց հետ նաեւ՝ սրբութեան անցեալ ու ներկայ հասկացողութիւնը եւ անոնց կապուած մշակութային մեր հարուստ ժառանգութիւնը լուսարձակի տակ բերել դասախօսութեանց ներկայ շարքով:

Իսկ թէ ինչո՞ւ այս նիւթը այս տարի, ներկայ կացութեան մէջ ուշադրութեան կը բերուի՝ կը բաւէ մատնանշել, թէ Լիբանանի այս օրերու տագնապը մեզի համար միայն քաղաքական անորոշ եւ խառնակ իրավիճակը չէ, այլ՝ անհատական-ընկերային-բարոյական տագնապն է, որ կ'ապրինք բոլորս:

1) Անհատական գետնի վրայ մեծագոյն տագնապը հաւատքի տագնապն է, քրիստոնէական մեր հաւատքը վաւերականօրէն ապրելու տագնապը:

Առհասարակ, նոյնիսկ բնականօրէն օրերու կեանքը ունի արդէն իր դժուարութիւնները, իր հոգերը, որոնք փուշերու պէս կը սպառնան խեղդել մեր հաւատքը. իսկ անբնականօրէն ժամանակները, ինչպէս

պատերազմի արհաւիրքներուն եւ մահուան շուքին տակ ապրուած մեր այս օրերն են, յաճախ աւելի մեծ չափով կը սպառնան խախտել ու չորցնել մեր հաւատքը, երբ ստեղծուած ողբերգական վիճակներուն եւ անոնցմէ ծագող հարցումներուն անմիջական բացատրութիւնն ու պատասխանները չենք կրնար գտնել:

Նման կացութեան մէջ, սուրբերու կեանքը երբեմն ուղղակի կամ անուղղակի պատասխանն է մեզ չարչրկող հարցումներուն, որովհետեւ անոնց կեանքը մեզի կու տայ նման արհաւիրքներու մէջ հաւատքի գործնականացման այնպիսի իրական օրինակներ, որոնք անհունօրէն դաստիարակիչ են եւ վերստին մեր առջեւ կը բանան տազնապին մէջ իսկ հաւատքը ապրելու կարելիութիւնը, եւ ասպարէզ ու հրաւեր կը կարդան մեզի:

2) Երկրորդ տազնապը բարոյականն է: Բոլորս ալ հաւասարապէս կը զգանք թէ ինչպէ՛ս անբնականոն այս տարիները իրենց հետ բերին եւ դեռ կը շարունակեն բերել բարոյականի ահաւոր անկում մը՝ բարոյականութեան եղծման այլազան ուղղութիւններով: Ամէն օր տեսանք ու կը տեսնենք՝ ոտնակոխումը պարկեշտութեան, խոնարհութեան ու բարութեան, բռնաբարումը սիրոյ եւ եղբայրութեան, թագաւորումը վայրագութեան, շղթան ոճիրներուն, եւ ասոնցմով նահանջը մարդկայնութեան, մարդկային յատկանիշներուն: Այս բոլորը կարծես եկան անվերականգնելիօրէն հերքելու թէ մարդը «պատկերն է Աստուծոյ»:

Բարոյական այս տազնապին մէջ՝ բարձր կը հնչէ ծայնը սուրբերուն, որոնք նոյնպիսի տազնապներու մէջ ապրեցան եւ իրենց կեանքին օրինակով հանդէս եկան իբրեւ առաքինութեան տիպարներ: Առաքինութիւն չի նշանակեր միայն բարոյական բարձր հասկացողութիւն ունենալ եւ լուրջ եւ զգաստ կեանք մը ապրիլ: Առաքինութիւն կը նշանակէ նաեւ ու մանաւանդ՝ քաջութիւն, տոկունութիւն, զօրութիւն: Եւ այս սահմանումները ամբողջապէս ճշմարիտ են սուրբերուն համար, որովհետեւ անոնք չեղան միայն ազնիւ, լաւ ու բարի՝ կրաւորական հասկացողութեամբ մը, այլ մանաւանդ՝ եղան քաջ պայքարողներ, որոնք իրենց հասկցած ազնիւն ու բարին զօրեղապէս պաշտպանեցին անազնիւին, վատին ու չարին դէմ, եւ ճշմարտութեան տոկունութիւնն իրենց բարոյական ամրութեամբ հաստատելով՝ ապահովեցին բարին յաղթանակը: Բարոյական իրենց մաքրութիւնը, այսինքն սրբութիւնը արտայայտեցին իրենց բնական ու սովորական կեանքին ընդմէջէն, ցոյց տուին իրենց խորապէս մարդկայնական դիմագիծը, եւ այդ խորունկ ու հարազատ մարդկայնութեան հայելիին մէջ պայծառօրէն շողացուցին նաեւ Աստուծոյ

պատկերը:

3) Երրորդը ոգեղէն արժէքներու նուիրուելու տազնապն է: Թէպէտ մեր դաստիարակութեամբ կը սորվինք թէ «ոգի առաւել է քան զմարմին», բայց այսօրուան մարդուն կեանքին մէջ քիչ տեղ ունին այդ արժէքները. թէպէտ մեր կեանքի գործնական փորձառութեամբ ալ կը տեսնենք ու կը զգանք, որ մարդ միայն հացով չի կշտանար, չի գոհանար, չի բաւարարուիր, բայց յաճախ գերին կը մնանք մեր առօրեային եւ կը դժուարանանք յաւելեալ ճիգով ձեռք բերելու անկէ աւելին, աւելի վերը, ոգեկանը: Մեզի կը պակսին կամեցողութիւնն ու վճռակամութիւնը ժամանակ եւ ճիգ նուիրելու նաեւ հոգին կշտացնող սնունդին, առանց որուն, նոյնիսկ հացի առատութեան մէջ, կը զգանք թէ մեր հոգին խոպան ու ծարաւ անապատ է, որուն կարծր քարերը փափուկ եւ սնուցիչ հացի փոխակերպող աստուածային ձեռքի հպումին պէտք ունինք:

Այս իմաստով, իրենց կեանքի օրինակով ուսուցանող լաւագոյն դաստիարակներն են սուրբերը, որոնք միայն իրենց արիւնը թափած նահատակներ չեն, այլ շատ յաճախ՝ կենդանի նահատակներ են, այսինքն՝ հոգեւոր-մշակութային աննիւթական արժէքներու համար իրենց կեանքը նուիրաբերած հաւատաւոր պատերազմիկ ակոյտաններ, որոնք ատով իսկ այսօրուան մեր կեանքը կրնան փոխակերպել իրենց օրինակին զօրութեամբ եւ առաջնորդութեամբ:

4) Ի վերջոյ, կայ նաեւ ուրիշ տազնապ մը, որ կու գայ ցաւին ու նեղութեան յաճախութենէն: Նկատի ունիմ ոչ միայն ֆիզիքական ցաւն ու նիւթական նեղութիւնները եւ անոնց կապուած անձկութիւնները, որոնց ենթակայ են բոլորը անխտիր, այլ նաեւ այն տառապանքը, որ հաւատացեալը, իր հաւատքը գործնապէս ապրիլ ուզող մարդը կը զգայ ոչ-հազուադէպ հեզմանքին, արհամարհանքին եւ բացայայտ կամ քողարկուած հալածանքին դիմաց: Եւ ասիկա նուազ չի կշռեր, քան մարմնական չարչարանքին պատճառած ցաւն ու կսկիծը: Նեղ սահմաններու մէջ եւ փոքրիկ չափով՝ ասոնք կրնան տանելի ըլլալ. բայց այն համեմատութիւններով որ անոնք երբեմն կը ներկայանան մեզի, մանաւանդ այս տարիներուն, եւ շարունակաբար, կրնան անտանելի թուիլ եւ անհանդուրժելի ըլլալ: Եւ հոս կը սկսի մարդուն տառապանքը, տազնապը, եւ այդ տառապանքին ու տազնապին մէջ կ'աղօտանայ կամ կը կորսուի քրիստոնէական հաւատքին բերած լոյսը՝ մեր կեանքի իրականութեան մասին, եւ յոյսը՝ տառապանքով շահուելիք կեանքի մասին:

Այս շրջագիծին մէջ առած, սուրբերը Եկեղեցւոյ կեանքին մէջ անոնք են, որոնք երկնաւոր Վարդապետէն սորված են չընկճուիլ

տառապանքէն, ցաւէն, չարէն, այլ յաղթահարել զանոնք համբերութեամբ, յոյսով, սիրով, բարեգործութեամբ եւ յաղթանակի վճռակամութեամբ: Եկեղեցւոյ հերոսներն են անոնք, ոչ միայն մէկ ճակատումով կամ վայրկեանի մը նահատակութեամբ հերոսացած, այլ ամբողջ կեանք մը յարատեւ ճակատամարտի վերածած եւ յաղթանակի դրօշ պարզած իսկական քաջերը, աննահանջ մարտիկները, որոնք իրենց շքանշանները երկրաւոր հրամանատարներէն չեն սպասեր, այլ իրենց ականարկը յառած են Հաւատքի Հրամանատարին՝ Քրիստոսի, եւ իրենց հիանալի համբերութեամբ, քաջութեամբ ու յաղթանակով պսակուած կեանքով սատար եւ քաջալերութիւն են տառապանքի բովին մէջ ապրողներուս համար:

Ահա՛ սոյն նիւթի ընտրութեան մեր պատճառներն ու մտահոգութիւնները: Եւ, կը կրկնենք, միայն տեսական նիւթեր չէ որ պիտի հրամցուին այս դասընթացքով: Նայեցէ՛ք դասախօսութեանց ցանկին եւ պիտի տեսնէ՛ք որ հոն ներկայ են մեր Եկեղեցւոյ պատմութիւնը, ժիւսական իւրայատուկ դրութիւնը, մեր մատենագրութիւնը, նկարչութիւնն ու երաժշտութիւնը: Ահա թէ ինչու կը հաւատանք որ բոլոր ներկաներուն համար ալ դասընթացքը իր ընդհանուր գիծերուն ու սահմաններուն մէջ կ'ըլլայ թէ՛ վայելք եւ թէ՛ հարստացում մեր Սրբազան Եկեղեցւոյ հոգեւոր ու մշակութային յաւերժական արժէքներով:

¹ 1984-ին Կաթողիկոսարանին մէջ տրուած դասախօսական շարքին առիթով տպուած առանձին պրակով, Անթիլիաս:

**ՈՒՍԱՆՈՒՄԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՄՈՒՆԻՒՆ ՍԱԿԸ

ԿԵՂԵՍՈՒՄԸ ... ԿԵՂԵՍՈՒՄ

ՅՐԱՄԱՆԵԱԿԸ ԵՒ ԴՐՈՒՄԱՆԵՑ

**ԵՐԻՇԷ ԵՐԻՄԱՒՈՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ
(Գրական դէմք)**

ԱՂԱՒՆԻՒՆ ՄԱՀՔ

Բակին մէկ անկիւնը դիզուած տախտակներուն մօտ, ուր շատ յաճախ կը փայլին կատուի մը ֆոսֆորային աչքերը, երկու աղանիներ քով-քովի կեցած խաղ կ'ընեն՝ իրենց կտուցները իրար միացնելով ու իրենց պարարտ վիզերը ետ ու առաջ շարժելով: Մերթ ընդ մերթ էգը կը փախչի, կիսաբոլոր շրջան մը կ'ընէ օդին մէջ ու կ'երթայ կանգ առնել նախկին տեղէն քիչ անդին: Արուն անմիջապէս կը հետեւի անոր ու դարձեալ կը սկսին իրենց խաղերուն:

Աշնանամուտի այդ արեւալից օրուան մէջ անոնց սպիտակ փետուրները կը փայլին արեւուն ճառագայթներուն տակ:

Արեւը հորիզոնէն կը սկսի բարձրանալ ու հետզհետէ շուքերը կը կարճնան:

Վերը, պալքոնէն Սերոբ կը դիտէ այս վերջին զոյգը թելով ճակատին քրտինքը սրբելով: Իր հոգիին խօսող եւ գինք շահագրգռող միակ բանն էր այս զոյգը, զոր կրցած էր փրկել կոտորածէ մը: Սակայն այժմ անմիջական վտանգ մը կը սպառնար էգին կեանքին, որուն Սերոբ անգիտակ էր:

*
* *

Ջարդարեաններու տան պատշգամին վերեւ, ճիշդ քիւն ներքելը կը գտնուէր աղանետունը, ուր կ'ապրէին քանի մը տասնեակ աղանիներ:

Ճիշդ աղանետան տակը կեցած էր Սերոբ ու կը դիտէր իր իսկ ձեռքով մեծցուցած աղանիները: Դեռ թարմ էր միտքին մէջ այն օրը, երբ երկու ծիւնասպիտակ աղանիներ առած գիրկը, եկաւ ու այս բոյնին մէջ դրաւ զանոնք: Ու ահա, մօտ տարի մը ետք, տասնեակ մը աղանիներ կը լեցնէին բոյնը:

Երկար ժամանակ մտիկ ընել է ետք աղանիներուն հանած կոկորդային խուլ ձայները Սերոբ մօտեցաւ աղանետան, բացաւ դռնակը ու ազատ արծակեց իր սիրելի աղանիները, որոնք դէպի անհուն կապոյտը երկար պտոյտներ գործեցին օդին մէջ ու ապա իջան մօտակայ տանիքներուն վրայ:

Քանի մը անգամ սուլել է ետք աղանիներուն ետեւէն, Սերոբ մուրճն ու աքցանը ձեռքն առնելով սկսաւ քանդել աղանետունը: Ճիշդ այդ վայրկեանին դուրս ելաւ իր մայրը՝ Տիկին Քնարիկ, ու տեսնելով տղուն ըրածը կրկին կանչեց.

- Էյ տղայ, ի՞նչ կ'ուզես բոյնէն, նորէն ի՞նչ ինկաւ միտքդ. ելի՛ր գործիդ գնա...

- Լաւ, լաւ, մի խօսիր, իմ գործերուս մի խառնուիր,- պատասխանեց Սերոբ կոպտօրէն:

- Ի՞նչ ըսել է իմ գործերուս մի խառնուիր, առտու կանուխ ի՞նչ գործ ունիս աղանիներուն հետ. մարդ ես խօճաման տղայ, ելի՛ր շէնք շնորհք գործի գնա, իրիկունն ալ գաս նէ ինչ զըխըմ կ'ուզես կեր: Քա ամա՛ն, ամա՛ն, խօսելէն ձանձրացայ,- գանգատեցաւ Տիկին Քնարիկ,- ու օձիքը թօթուելով, իր խոշորկեկ մարմինը շալկած, սկսաւ վար իջնել աստիճաններէն:

Սերոբ մօրը խօսքերուն ականջ չկախեց: Մինչեւ կէսօր քակեց աղանետունը ու զայն փոխադրեց տանիք:

Երեկոյեան դէմ բոյնը պատրաստ էր:

Ան կը պարունակէր բազմաթիւ խցիկներ աղանիներուն համար, ու նաեւ ամէն տեսակի յարմարութիւն: Դուռը դիտումնաւոր կերպով մեծ էր շինուած, որպէսզի Սերոբ կարենայ ուզած ատեն ներս մտնել ու հարկ եղած փոփոխութիւնները կատարել:

Աւարտել է ետք, քանի մը քայլ հեռացաւ բոյնէն ու սկսաւ հիացումով դիտել իր ձեռակերտը: Ապա ծայրը կարմիր լաթի կտոր մը կապուած երկար եղէզը ձեռք առաւ, ու սկսաւ զայն օդին մէջ շարժելով սուլել:

Անմիջապէս աղանիները շուրջը հաւաքուեցան: Ան կերը թափեց անոնց առջեւ, ու ձեռքերը մէջքին, սկսաւ դիտել իր խայտախռի աղանիները:

Նոյն վայրկեանին, վարէն լսուեցաւ մօրը ձայնը.

- Սերոբ, տղաս, տանի քը մնաս. ճաշդ ալ միտքդ չի գար...

* * *

- Քըշ... Քըշ... Քըշ...

Տիկին Լուսիկ մէկ կողմէն լուացուած լաթերը կը փռէր չուանետուն վրայ, միւս կողմէ՝ հեռու կը քշէր աղանիները, որոնք կ'ուզէին չուանետուն վրայ թառիլ: Տիկին Լուսիկ այնքան բարկացաւ աներես աղանիներէն, որ ձեռքը գտնուած անօթը նետեց անոնց վրայ, ու իր կէս մը առնական ձայնը մէջտեղ ձգեց:

- Քա Քնարիկ, եկու՛ր սա աղանիները հաւաքէ. անամ, ալ կը բաւէ քաշածնիս, աս ինչ պէլա է պէ...

- Ի՞նչ է նորէն, աղանիներս քեզի ի՞նչ ըրած ունին:

Նոյն վայրկեանին, աղանիներէն մէկը ծրտեց ձերմակեղէնի մը վրայ, որմէ կատարելապէս կատղած Տիկին Լուսիկ գոչեց.

- Դեռ ինչ պիտի ընէին...,- ու լաթը ցոյց տալով,- տեսար կերած ապուրնին, հը, գացին եկան ծրտեցին լաթիս վրայ, դեռ ալ կ'ըսէ կոր քի աղանիներս քեզի ի՞նչ ըրած ունին. տահա ի՞նչ պիտի ընէին Անցեալ օր ալ բուրդերս պալքոնին վրայ փռած էի, մէյ մըն ալ տեսնեմ աղանիներդ վրան ամէն ծրտեր, աղտոտեր են. եկու՛ր տէ նորէն լուա, ձեռքերդ մաշեցու՛ր, հոգիդ մաշեցու՛ր... Սա քաշուելիք քա՛ն է, անամ...

Տիկին Լուսիկ իրաւունքի մէջ էր: Միայն ինք չէր. բոլոր դրացուհիներն ալ կը գանգատէին:

Տիկին Քնարիկ ալ ձայն չհանեց: Իրիկունը երբ Սերոբ տուն վերադարձաւ, մայրը կարծ ու կտրուկ ըսաւ

- Վաղը սա աղանիներդ եա կը տանիս կը ծախես, եա կը մոր թես: Երկուքէն մէկը: Ատ աղանիներուդ երեսէն ես ամէն օր դուռ դրացիին հետ պոշ-լախըրդը՝ պիտի ընեմ: Գիտցած ոլլաս, դուն չընես նէ ես պիտի ընեմ...

Թէեւ Սերոբ շատ ընդդիմացաւ, բայց անօգուտ: Յայտնուելով օրը քանի մը զոյգ շուկայ տարաւ ու ծախեց, քանի մը զոյգ ալ մորթեց որդողացող ձեռքերով ու արցունքով լի աչքերով: Միայն մէկ զոյգ աղանի թողուց ամէնէն լաւը, ամէնէն սպիտակը:

* * *

Յաջող օրը Սերոբ երբ արթնցաւ, խորտուք մը կար ուղեղին մէջ: Գիշերը երազին մէջ տեսած էր իր աղանիները, որոնց վիզէն այրի նը ռոստը, իր անբողջ մարմինը կարմիրով կը թրչէր: Արժանեւ Սերոբ սաստիկ քրտնած էր, ու փշեղանոցը վերէն վար թռչուած:

Հապճեպով ու անփութորէն հագուեցաւ, ու առանց նախաճաշ ընելու՝ տանիք բարձրացաւ գինովի քայլերով: Հոն բացաւ աղանձ-տան դուռը ու ներս մտնելով կրկին գոցեց: Յետոյ, վայրկեան մը դիտել էտք իր գոյգ մը աղանինները, ծեռքերը բարձի նման գլխուն տակ դրաւ ու երկնցաւ բոյնին մէջ: Այս դիրքին մէջ անպատմելի հաճոյք մը կը զգար ան. այնպիսի հաճոյք մը, որ շուտով քուն բերաւ իր աչքերուն:

Սերոբ այս անգամ չունեցաւ գիշերուան մղջաւանջային երազն ու անհանդարտ քունը, այլ՝ շատ հանգիստ ու անխռով քնացաւ: Աղանինները երգեցին անոր օտորը...

Երբ արթնցաւ՝ արեւը երկինքի կեդրոնին կը մօտենար արդէն: Ան նստաւ բոյնին մէջ, եւ աղանինները իր գիրկը առնելով՝ սկսաւ շոյել ու համբուրել անոնց ծիւնանման փետուրները: Յետոյ անոնց կերտալէ էտք բացաւ աղանձտան դուռը ու զանոնք արձակեց անհունին մէջ:

Երկու աղանինները այս անգամ իջան ուղղակի գետին ու սկսան թաքնուած որսորդի մը ֆոսֆորային աչքերուն առջեւ խաղեր ընել ու իրարու ետեւէ թռչկոտիլ:

Աշնանամուտի այդ արեւաշող օրուան մէջ անոնց սպիտակ փետուրները կը փայլէին արեւուն վերջին ճառագայթներուն տակ:

Հետզհետէ արեւը հորիզոնէն վար կը թեքէր ու շուքերը կը սկսէին երկննալ:

Քիչ հեռու, Տիկին Լուսիկենց տան պատուհանին տակ երկնցած էր ձերմակ կատու մը, որ իր կռնակին վրայ քանի մը շէկ բիծեր ունէր: Դունչը դրած առջեւի թաթերուն վրայ, մարմինը կորացուցած՝ աղեղի մը պէս, յառաջ նետուելու դիրքին մէջ կը գտնուէր ան:

Պահ մը հետեւելէ էտք երկու աղանիններուն շարժումներուն, ան յանկարծ ցատքեց իրեն շատ մօտեցած աղանինին վրայ, ու անոր կրկորդէն խածնելով՝ քաշուեցաւ դիզուած տախտակներուն տակը, ուր, կատուին բացակայութեան, առնէտները պար կը բռնէին:

Սերոբ տանիքէն աղանիններուն շարժումներուն հետեւած պահուն նկատած էր էգ աղանինին յափշտակուիլը, ու տանիքին աստիճաններէն վար խոյացած: Անոր տենդոտ շարժումները տեսնելով՝ թաղեցի տղաք իր քով վազեցին ու սկսան օգնել անոր՝ տախտակները վերցնելու գործին մէջ:

Սերոբ տղոց օգնութեամբ յաջողեցաւ բռնել կատուն, զոր իր մատներուն ամբողջ ոյժովը խեղդեց: Ապա վերցուց նաեւ խեղդուած աղանին, որուն վիզէն հոսող արիւնէն ձերմակ փետուրները կարմիր ներկուած էին, ու աչքերէն հոսող արտասուքով ողողուած դէմքով՝

վերջին անգամ մըն ալ համբուրեց զայն:

Իսկ Սերոբին գլխուն վերեւ արու աղանին ցաւագին ճիչերով խելագար պտոյտներ կը գործէր օդին մէջ՝ ողբալով իր ընկերուհին մահը...

ՄԻՆԱՍ ԱԶՆԱԴՈՐԵԱՆ
(Դ. Ժառանգաւորաց)



ՎԵՀԱՓԱՌԷ ... ՎԵՀԱՓԱՌ՝

Փոթորիկներն ու ալեկոծութիւնները պատճառ կ'ըլլան որ նաւ մը խարսխուած մնայ իր նաւահանգիստին մէջ եւ կամ ծովուն բացերը յաճախ կորսնցնէ ուղղութիւնը իր սովորական ընթացքին:

Մեր միտքի փոքրիկ նաւը, հայ մշակութային նաւատորմին մէկ աննշան մասնիկ «Գլածոր»ը, ամբողջ տարի մը կապուած մնաց իր Դպրեվանք-նաւահանգիստին, որովհետեւ անփորձ նաւաստիներու՝ ժառանգաւորներու միտքերն ու սիրտերը ահաւոր փոթորիկի մէջ էին բռնուած:

Ջուրերը հետզհետէ կը խաղաղէին. բայց մեր փոքրիկ նաւը կարծէք կառչած կը մնար իր խարսխանքներուն եւ քարափին: Մինչ դուրսը ամէն ինչ ժամանակի ու կեանքի ճնշումին տակ դէպի անդորրութիւն կ'երթար, մեր հոգիները տակաւին կը մնային խռով: Ալեկոծութեան հոգեկան անդրադարձը մեր անվարժ կեանքերուն մէջ աւելի խոր էր կարծէք ու երկարածիգ:

*
* * *

Ճիշդ եօթը ամիս առաջ էր որ ծովը փոթորկեցաւ երբ յանկարծ անհետ կորսնցուցինք մեր սիրեցեալ նաւուն քաջալեր նաւապետը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԶԱՐԵՀ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԾԻ Տանն Կիլիկիոյ: Քամին չզգացինք: Իր տապալումը տեսանք: Պատանհի մեր աչքերը չկրցան հաւատալ: Չարմանահար մտածեցինք. ի՞նչ եղաւ որ յանկարծ ինկաւ կեդրոնական կայքի նման հաստակառոյց ու քաջառողջ մեր նաւապետը, որուն սլացիկ ու պարթեւ հասակի բարձունքն ի վեր այնքան առաքինութիւններ, ի՞նչ գեղեցիկ դրասանգներ էին հիւսած... Ո՞վ կրնար երեւակայել երիտասարդ ՀՍԿԱՅ-ին յանկարծա-

կան անկումը: Միտքին համար անկարելի եւ խիղճին համար անարդար մտածում մը կրնար ըլլալ այդ մտածումը՝ միայն չարագոյն ու մարդկային գիտակցութենէ պարպուած մարդուն միտքէն անցնելու ատակ: Ո՞վ է այն մարդը որ արեւուն բոլոր տեսակի բարիքները վայելած պահուն կարենայ խորհիլ անոր խաւարման կամ անհետացումին մասին...

Եւ սակայն մեր Արեւը խաւարեցաւ ճիշդ օրուան կէսին, իր ճառագայթներու բոլոր հրայրքին մէջ: Սուգը պատեց ամէն կողմ: Եկեղեցւոյ խորանէն սեւ շղարշէ կամար նետուեցաւ հայ մարդերու հոգիներուն մէջ ներկայ ու անտես խորաններուն: Մայր Տաճարի Հայրապետական Աթոռէն մինչեւ արժակները հայ մանկապարտէզի անմեղ փոքրիկներուն: Իսկ մեր սիրտերը սպունգներու նման քամուեցան արտասուքի շիթերէն ու սարսռաց մեր ողջ էութիւնը Անթիլիասի Մայր Տաճարի որբացեալ ու ողբացող զանգերու ընդվզեցուցիչ դողանջներուն սուր ու ծակող շեշտերուն տակ:

Պահ մը հանդարտութեան ցօղը իջաւ մեր հոգիներուն երբ մեր մեծերուն հետ մենք ալ մտածեցինք. «Նահատակ մըն էր» Քրիստոսի, Եկեղեցիին, Ազգին ու Հայրենիքին իր կեանքը ընծայած գերագոյն հերոսը: Ոչ ի պաշտօն, ոչ յանուանէ, այլ՝ էութեամբը համակ իր անծին: Փոթորիկի ամէնէն տագնապալի ու ճակատագրական պահուն երբ Աստուած ու հայ ժողովուրդը մարդ մը կը փնտռէին զայն ընելու համար մարդերու առաջնորդ, երբ ամէն կողմերէ ծայներ մարդերու ջիղերը կը թուլցնէին, ինք կանգ առաւ փոթորիկի ոլորտին կեդրոնը եւ մէկ աչքը դէպի երկինք եւ միւսը դէպի հայ ժողովուրդը ըսաւ մարգարէին լեզուով. «Ահաւասիկ ես. առաքեա՛լ զիս» (Ես 6.8):

Նահատակ...

Ու նահատակը թաղուեցաւ նահատակներուն մօտ...

Հոգելոյս Զարեհ Վեհափառին հողաթումբը Ապրիլեան նահատակներու Յուշարձանին մօտ... Տարբեր ճամբաներ նահատակութեան: Բայց Աստուծոյ եւ Ազգին սէրը, անոնց հանդէպ նախանձախնդրութեան եւ հաւատարմութեան ոգին միացման կէտը այդ ճամբաներուն:

Նահատակին շիրիմը մեր աչքերուն առջեւ՝ ամէն օր նորոգեց մեր խռովքը: Հանդարտութիւնը բացառիկ պահ մը եղաւ մեր անցնող տարուան կեանքին մէջ:

Ջուրերը իջան ջրհեղեղէն ետք: Շատ բան թաղուեցաւ ու անհետացաւ ջուրերուն հետ: Բայց իր յիշատակը մնաց մեր հոգիներու աշ-

խարհի ամենէն բարձր գագաթին վրայ ու դարձաւ յաւիտենական բնակիչ, ինչպէս Նոյեան Տապանը Արարատի կատարին...

*
* * *

Յիշատակին հետ քաղցրօրէն ալ սկսած էինք մտերմանալ, երբ յանկարծ օր մը Դպրեվանքի մեր պատուհաններէն դէպի Կաթողիկոսական Վեհարան դարձան մեր աչքերը աշխարհի չորս ծագերէն հայ մարդերու ընտրանի խումբ մը տեսանք: Հոգեւորական եւ աշխարհական անձերու համախմբումին իմաստը պարզ էր ու յստակ: Ժողովուրդին հսկայական բազմութիւնը որ խռնուած էր Մայրավանքին մէջ, յոյսի աչքերով հետեւեցաւ անոնց, երբ շքեղ թափօրով Մայր Տաճար ուղղուեցան: Հետզհետէ Մայր Տաճարէն ձայներ դուրս թրան: Բառերը կորսնցուցին իրենց այլազանութիւնը ու միացան մէկ բառի ու մէկ հնչիւնի մէջ՝ Խորէն Սրբազան:

Ձանգերը վերստին հնչեցին: Շեշտերը փոխուեցան: Արցունքներու տխրութեան գոյնին միացաւ ցնծութեան գոյնը: Ու երբ Տաճարին դռները բացուեցան՝ ԽՈՐԷՆ ՎԵՀԱՓԱՌԸ շքեղօրէն դուրս եկաւ ու բարձրացաւ Վեհարան:

Եռուզեռ ամէն կողմ: Խինդ ու ժպիտ: Դարձեալ մեր կեանքը իր սովորական պատկերը այլափոխեց: Օծում, ընդունելութիւններ, այցելութիւններ, շնորհաւորութիւններ, հանդէսներ իրենց արծազանգը լայնօրէն գտան մեր դպրեվանքեան կեանքին մէջ առաքելական գիտակցութեան եւ նուիրումի ոգեւորութեան ալիք մը տարածելով ժառանգաւորներուս հոգիներէն ներս: Այն պարզ բայց խորիմաստ իրողութիւնը թէ Ջարեհ Վեհափառին վախճանով մեր պաշտելի Աթոռին առաքելութիւնը կանգ չառաւ եւ ոչ ալ սասանեցաւ շնորհիւ Խորէն Վեհափառի նման քաջարի, նուիրեալ ու շինարար կաթողիկոսի մը ընտրութեան՝ դպրեվանեցի ուսանողներուս համար մեծ ուրախութեան աղբիւր էր, որովհետեւ կորսուած հօր մը տեղ կը գտնէինք նոյն սիրով վառուած հայր մը՝ յանձին մեր սիրելի Վեհափառին Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոսին:

*
* * *

Մայիսով բացուած այս յոյսի ու խանդի շրջանին անմիջապէս հետեւեցան ուսանողական մեր կեանքի ամենէն ծանր ու «արհամար-

հելի» օրերը ամապերջի քննութիւնները: Ու մեր «Գլածոր»-ը մնաց իր նաւահանգիստին մէջ խարսխուած...

Տարեշրջանը փակուեցաւ: «Գլածոր»-ի նոր նաւաստիներս մտածեցինք մեր փոքրիկ նաւը վերստին սահեցնել մեր Դպրեվանքէն դէպի հայաշխարհի կոչուող ծովուն բացերը: Ամառը Պիքֆայայի մեր հովոցին մէջ մնացած բուռ մը ուսանողներուս յանդանութեան ծնունդն է ներկայ հատորիկը:

Այս թիւը կամուրջ-թիւ մըն է Վեհափառէ Վեհափառ: Վկայութիւն մը Դպրեվանքի ԼԳ. տարեշրջանի բացառիկ նկարագիրին մասին: Նոր բացուող տարեշրջանին «Գլածոր»-ը այսպէս նաւահանգիստէն շարժած կը գտնէ իր հարազատ ուղղութիւնը եւ կ'ընթանայ իր առաքելութեան ճամբէն:

Նաւը իր սովորական ուղղութեան մէջ դնելէ առաջ ու վկայութեան այս բառերը կնքելու համար՝ մեզի կը մնայ աղօթախառն ձայնով ըսել.

«Յաւերժական փարոս դառնայ Ջարեհ Վեհափառին յիշատակը գալիք բոլոր նաւաստիներուն...»:

«Երկար, խաղաղ ու բարութեամբ առատ նաւապետութեան մը վերածուի մեր նոր նաւապետին՝ Խորէն Վեհափառին գահակալութիւնը»:

ՄԻՆԱՍ ՍՐԿ. ԱԶՆԱԿՈՐԵԱՆ

¹ Գրուած որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի «Գլածոր» պարբերաբերթի 1963 տարուան խմբագրական:

ՅԻՍՆԱՄԵԱԿԸ ԵՒ ԴՊՐԵՎԱՆՔԸ՝

Յիսուն տարիներու խորունկ խրամատ մը մեզ կը բաժնէ այն մահասարսուռ թուականէն, երբ թուրք մահիկը մեզ հնձեց մեր դաշտերէն, նախ ատո՞ք, լի՛ հասկերը, յետոյ՝ մնացեալները բոլոր:

Եւ հայ ժողովուրդը «որպէս ցորեան աստուածային գազանաց մանրեալ ժանեօք հաց սուրբ գտաւ Աստուծոյ»: Այո՛, հայ ժողովուրդը բզբտուեցաւ անյագ գազանին ժանիքներուն տակ: Բայց անոր բերանէն թափած հատիկները անապատին հրակէզ աւազներուն մէջ՝ ոռոգուելով թափուած յորդառատ արեամբ՝ օլեցան, ընծիւղներ արծակեցին եւ աճեցան, աճեցան յամառ կամքով ու անհնարին ճիգերով:

Անապատին հրդեհող տապէն վաղահաս դեղնած ու կիսովին չորցած ցօղուններուն վրայ դարձեալ երեւացին ատո՞ք հասկեր, որոնք շուտով հասունցան:

Փճացման դիմաց՝ առաջին հակազդեցութիւնն էր այդ՝ գոյատեւման պայքարը, զոր հայ ժողովուրդը քաջաբար յառաջ տարաւ:

*
* * *

Կէս դարու հսկայ խրամատ մը կը բաժնէ վաթսունհինգը տասնը-հինգէն: Սակայն ո՛չ տարիներ եւ ո՛չ դարեր կրնան խրամատ բանալ մեր հոգիներուն վրայ եւ կամ խզել կապը հոգիներուն մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն եւ մեր միջեւ: Այդ կամուրջը անխորտակելի է ու կը մնայ յաւերժօրէն կանգուն:

Դեռ երէկ էր, երբ կրկին անգամ զանազան տօնակատարութեանց եւ հանդիսութեանց ընդմէջէն կատարեցինք մեր ուխտը՝ այդ կապը անքակտելի պահելու:

Մենք ականատես եղանք թէ հաւատքի ինչպիսի՛ արտայայտութեամբ եւ ինչ խոր ու յուզումնալից ապրումներով մեր ժողովուրդը մեծ շուքով եւ վեհութեամբ տօնախմբեց յիշատակը մեր Ապրիլեան Չոհերուն: Անոր ջերմ ապրումներուն մենք ալ մասնակից եղանք, ու ձայնակցեցանք անոր արդարութեան կոչին ու պահանջքին: Մենք մեր համեստ, սակայն արդար եւ էական բաժինը բերինք ոգեկոչման արարողութեանց եւ հանդիսութեանց մէջ, եւ այս ձեւով լաւագոյնս ոգեկոչեցինք մեր նահատակներուն յիշատակը:

Խորապէս ապրեցանք անցեալը եւ կերտեցինք ներկան: Իսկ ապագա՞ն...

Մեր ապագան մենք պիտի շինենք մեր կոչումին կատարեալ գիտակցութեամբը: Միայն մեր կոչումի գիտակցութեամբ է որ կրնանք արդարացնել մեր վրայ դրուած յոյսերն ու պարտականութիւնները:

Իսկ ի՞նչ է մեր՝ հայ եկեղեցականին կոչումը. պարզ ու մեկին եւ շեշտակի – ծառայել Աստուծոյ եւ Ազգին:

Կը ծառայենք Աստուծոյ եւ Աստուծոյ Սուրբ Սեղանին՝ ամէն օր եւ ամէն ժամ: Այդ մեր գուտ հոգեւորական կոչումն է, որուն գիտակցելով է որ մենք մեր անձերը ընծայաբերած ենք Աստուծոյ Սուրբ Տաճարին սպասաւորութեան:

Սակայն հայ եկեղեցականին համար առաջինին չափ կարելոր է նաեւ երկրորդը: Եւ արդէն ազգ ու Եկեղեցի այնքան սերտութեամբ շաղկապուած են հայ իրականութեան մէջ, որ դժուար է զանոնք անջատել իրարմէ: Մէկուն ծառայողը անպայման կը ծառայէ եւ պէտք է ծառայէ միւսին, որովհետեւ մէկը միւսով է որ իմաստ կ'առնէ: Մեր ամբողջ պատմութիւնը կենդանի վկան է ատոր:

Գիտենք թէ այն օրէն ի վեր, երբ մեր պետականութիւնը կորսնցուցինք եւ մնացինք առանց քաղաքական պարագլուխի, օտարին լուծին տակ, այն օրէն պետութեան եւ քաղաքական իշխանութեան դերն ալ ստանձնեց մեր Եկեղեցին, եւ հայը իր հոգեւոր պետին՝ կաթողիկոսին մէջ տեսաւ, հոգեւորականէն անկախ, նաեւ իր արքան: Այն օրէն եկեղեցականը եղաւ հայ ժողովուրդին հոգեւոր եւ քաղաքական առաջնորդը:

Եկեղեցականութիւնն էր որ ազգապահպանման դժուարին գործը կը կատարէր, ու այսօր ալ կոչուած է, նոր թափով եւ ազդու միջոցներով կատարելու այդ պարտականութիւնը:

Ազգապահպանման մեծ գործը յառաջ տանելու համար նախ այս հաստատութիւնը պէտք է դարձնել ամբողջ սփիւռքահայութեան հոգեւոր եւ մտաւոր կեդրոնը, ուրկէ աստուածային օրհնութեան հետ ճառագայթէ նաեւ հայ դաստիարակութիւնը եւ հայ մշակոյթը: Եւ ի՞նչ

ընել այս վանքը դաստիարակութեան եւ բացարձակ մշակոյթի կեդրոն մը դարձնելու համար:

Նախ, ունենալ վանական սերունդ մը, որ ծանրաբեռնուած չըլլայ առաջնորդական կամ հովուական խճճող գործերով, վանական սերունդ մը, որ համալսարանական ուսում ստացած ըլլայ, եւ ըստ նախասիրութեան մասնագիտացած զանազան ճիւղերու մէջ, որպէսզի կարենայ այնուհետեւ խորհիլ, գրել եւ գործել որպէս մասնագէտ ուսուցիչ եւ մտաւորական:

Ստեղծել յատկապէս ուսուցչութեան համար պատրաստուած եկեղեցականներու ցանց մը մեր բոլոր ազգային վարժարաններուն մէջ աւանդելու համար ազգային եւ կրօնական դաստիարակութիւն հայ մանուկին սիրցնելու համար հայ ազգը, ճանչցնելու հայոց պատմութիւնը եւ հայ արժէքները եւ զայն կապելու Հայ Եկեղեցիին: Հայ մանուկին հոգեւոր երգ, շարական, մաղթանք ու աղօթք սորվեցնելու համար զարկ տալ կիրակնօրեայ վարժարաններու գործունէութեան:

Հաւաքել հայ երիտասարդութիւնը մեր արժէքներուն եւ մեր մշակութային շարժումներուն շուրջ, գրական, թատերական, երաժշտական եւ այլ շրջանակներու մէջ, եւ անոնց տալ գործօն դեր, մասնակցութիւն: Այս ձեւով է միայն որ հայ մանուկը կը մեծնայ որպէս հայ, եւ հայ երիտասարդը գիտակցօրէն կը փարի իր ազգային արժէքներուն:

Սփիւռքի լայնածաւալ տարածքին վրայ հայը հայ պահելու միակ ձեւն է այս: Օտար մարդակուլ ափերուն չծուլուելու համար՝ այս միջոցառումները հրամայականօրէն անհրաժեշտ են:

Եթէ կ'ուզենք փշուրի չվերածուիլ, չըլլալ հողմացրիւ աշխարհի չորս ծագերուն՝ ի վերջոյ փճանալու համար, մէկ ճամբայ մը ունինք հաւաքուիլ Հայ Եկեղեցոյ քառաթեւ հովանիին տակ եւ մէկ ոգիով, ծոյլ միասնականութեամբ մը յառաջ ընթանալ դէպի հոն, որ մեր հարեւորներն է եղած անցեալին եւ պիտի ըլլայ նաեւ ապագային:

Այն եղեւնը որ յիսնամեակ մը առաջ կատարուեցաւ առանց իր նպատակին հասնելու, ամենայն հաւանականութեամբ կը կրկնուի երբ թուրքին համար յարմար առիթ ստեղծուի: Անզգոյշ եղանք անցեալին, երազներով օրօրուն եւ գինով: Սակայն փորձառութիւնը կը մղէ զմեզ ասկէ ետք գէթ ըլլալ արթուն եւ պատրաստ՝ դիմագրաւելու ամէն անակնկալ:

Պայքար, այո. բայց ոչ թէ լոկ գէնքով, այլ նաեւ ու մանաւանդ՝ հոգեկան եւ մշակութային գերազանց արժէքներով, որոնց կերտումը մեր վրիժառութիւնն իսկ է:


Այս մեծ գործը յաջողցնելու կոչուած ենք մենք բոլորս, եւ այս գոր-

ծին համար պէտք է պատրաստուինք արժանապէս:

Այս կը թելադրէ մեզի յիսնամեակը Ապրիլեան Զոհերուն:
Եւ այս է արդէն մեր Դարեվանքին առաքելութիւնը:

ՄԻՆԱՍ ՍՐԿ. ԱԶՆԱԴՈՐԵԱՆ

¹ Գրուած որպէս «Գլաձոր»-ի 1965 տարուան խմբագրական:



ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ

(գրական դեմք)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Դուրեան ընտանիքին ամէնէն կրտսեր զաւակը եւ նշանաւոր բանաստեղծ Պետրոս Դուրեանի եղբայրը՝ Միհրան (աւագանի անունով) ծնած է 23 Փետրուար 1860-ին, Իւսկիւտար: Նախակրթութեան վարժարաններն են եղած Իւսկիւտարի Ս. Խաչը եւ Ճեմարանը, որ ժամանակի լաւագոյն կրթարաններէն մէկն էր:

1873-ին, երբ տակաւին տասներեք տարեկան էր, Միհրան կը սկսի ուսանաւորներ ու ճառեր գրել:

1876-ին ուսուցչական պաշտօն կը վարէ Ճեմարանին մէջ՝ իր տարեկիցներուն դասաւանդելով հայկաբանութիւն եւ գրաբար:

1878 Դեկտեմբեր 9-10-ին սարկաւազ կը ձեռնադրուի՝ եւ այդ վայրկեանին իսկ կը ստանայ Եղիշէ անունը: Տակաւին սարկաւազ իր առաջին քարոզը կը խօսի 1879-ի Ծննդեան օրը, բնաբան առնելով սաղմոսերգուին խօսքը. «Տէ՛ր, եթէ գշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»:

Նոյն տարուան Մայիսին, Հոգեգալստեան Կիրակիին, Իւսկիւտարի Ս. Կարապետ եկեղեցիին մէջ եւ Իզմիրլեան Մատթէոս Եպիսկոպոսին ձեռամբ կ'օծուի քահանայ եւ կը ստանայ վեղար:

Նոյն տարին ան կը բարձրանայ Ճեմարանի տեսչութեան եւ Յուլիս 1-ին կ'ընդունի մասնաւոր վարդապետութեան գաւազան:

1879-1888-ի շրջանին, Եղիշէ վարդապետ ուսուցչական պաշտօններ կը վարէ Իւսկիւտարի թաղային վարժարաններուն մէջ՝ միեւնոյն ատեն ամէն Կիրակի քարոզելով գանազան եկեղեցիներու մէջ: Բացառօրէն եղած է լաւ քարոզիչ մը. իր խօսքերուն մէջ այնպիսի հմայք մըն է դրած, որ ժողովուրդը յափշտակութեամբ եւ հիացումով մտիկ ըրած է զինք միշտ:

1880-ին, Դուրեան, իբրեւ հոգեւոր հովիւ, տասնամեայ շրջանի մը համար կ'երթայ Պարտիզակ: Հոս իր քարոզչական գործունէութեան երկրորդ ասպարէզը կ'ըլլայ կանանց լսարանը, զոր ինք կը հաստատէ: Ամէն Կիրակի կէսօրէ ետք հայ կիներ կը հաւաքուին վարժարանի սրահին մէջ. քահանաներ եկեղեցական երգեր եւ շարականներ կը սորվեցնեն եւ ինք անոնց կը խօսի կրօնական, ընտանեկան եւ բարոյական նիւթերու շուրջ: Այս ձեռնարկին օգուտը կ'ըլլայ կիներու բարեսիրական ընկերութեան մը հաստատումը, որ տնտեսապէս կ'օգնէ վարժարանի մատակարարութեան:

Իր գործունէութեան ամէնէն յիշատակելի կողմը կը մնայ կրթական գործին տուած մղումը: Առաջին անգամ ըլլալով ծրագրուած կազմակերպութիւն մը կը մտցնէ դպրոցէն ներս՝ ուսումնական դասընթացքի, կրթական ծրագիրի եւ կարգապահական կանոնագիրի հաստատմամբ: Ան ջանացած է նաեւ թատերական ներկայացումներու ճամբով մղում տալ ժողովուրդի դաստիարակութեան, ու այդ առիթով ալ գրի առած «Պատերազմ Վարդանանց» կոչուած տրամախօսութիւնը:

Առաջին տարիներուն կրթական գործը առանձին կը վարէ, ինչ որ անշուշտ շատ ծանր կը ճնշէ իր վրայ: Սակայն իր հասցուցած աշակերտներէն ուշիմները իրեն օգնական կ'առնէ ու կը ծաղկեցնէ վարժարանը՝ զայն հասցնելով նախանձելի դիրքի մը: Այս գործերը առիթ կու տան, որ ժողովուրդին սէրը իրեն հանդէպ հասնի պաշտումի:

Անխոնջ աշխատող եւ մոլի ընթերցող Դուրեան վարդապետ իր այդքան ծանր աշխատանքներէն դուրս կրկին պարապ չի մնար: Իր պաշտօնավարութեան ընթացքին կը հրատարակէ «Ընթացք ի գրոց բարբառ»-ի Բ. տարին: Կը հրատարակէ նաեւ «Ընտիր Ասացուածք»ը եւ «Պատմութիւն Հայ Մատենագրութեան» գրքոյկը: Նաեւ նուիրուելով ազգային մատենագրութեան ուսումնասիրութեան եւ բանասիրական պարապումներու՝ կը գրէ շարք մը քննադատական կարեւոր յօդուածներ:

Դուրեան վարդապետ կազմակերպել է կատարելագործել ետք Պարտիզակի վարժարանը - որ իր մեկնումէն ետք ալ իր աշակերտներուն եւ անոնց ալ աշակերտներուն շնորհիւ կը շարունակէ կրթական գործը - 1890-ի ամրան, հրաժարական տալով՝ կը մեկնի Կ. Պոլիս:

1890-ին Նիկոմեդիոյ մօտ կը հաստատուի Արմաշու Դպրեվանքը, որուն վերատեսուչ կը կարգուի Օրմանեան Սրբազան Աշըգեան Խորէն Պատրիարքին կողմէ: Օրմանեան Սրբազան իր կարգին զգա-

լով պետքը Եղիշէ Դուրեան Վարդապետի պէս օգնականի մը, զինք կը հրաւիրէ Արմաշ: Դուրեան Վարդապետ, որ Էրզրումի Սանասարեան Վարժարանէն ալ ստացած էր այդպիսի առաջարկ մը, կը նախընտրէ Արմաշը, ուր կը դասաւանդէ հայկաբանական, պատմական եւ գրագիտական, մատենագրական ճիւղերը մեծ ձեռնհասութեամբ:

1896-ին, երբ Օրմանեան պատրիարք կ'ընտրուի, Դուրեան Վարդապետ անոր տեղը կ'անցնի եւ իր ձեռնհասութեամբ, փորձառութեամբ եւ եռանդով կը շարունակէ եօթնամեայ սկսուած այդ գործը: Հասկնալի է իր ստեղծած մեծ խանդավառութիւնը, որուն համար զինք կոչած են «Արմաշու Հոգին»:

Հոս, Արմաշի մէջ է որ Դուրեան կը գրէ իր «Քննական Ազգ. Պատմութիւն»-ը եւ ընդարձակ «Հայ Մատենագրութեան Պատմութիւնը» (մինչեւ ԺԲ դար): Կը պատրաստէ նաեւ «Կրօնից Պատմութիւն» խորագիրով դասագիրք մը:

1898-ի Հոկտեմբեր 25-ին եպիսկոպոս կը ձեռնադրուի Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմեան Հայրիկէն:

1904-ին, 14 տարուան արդիւնաւոր պաշտօնավարութենէ մը ետք, կը թողու Դպրեվանքը եւ կ'երթայ Զմիւռնիա՝ որպէս թեմակալ Առաջնորդ:

Հոս է որ կը գրէ իր «Հովուական Սրինգ»-ը: Նոյնպէս այս շրջանին է գլխաւորաբար, որ Շնորհալիի եկեղեցական քերթուածները աշխարհաբարի կը վերածէ եւ կը հրատարակէ «Լոյս» կրօնական շաբաթաթերթին միջոցաւ:

Չորս տարի ետք, 1908-ի Յուլիսին, Կ. Պոլսոյ մէջ յեղափոխութիւնը ծնունդ կ'առնէ եւ Օրմանեան կը ստիպուի հրաժարիլ պատրիարքական աթոռէն: Դուրեան Սրբազան Պատրիարքական Տեղապահ կը նշանակուի ու կը մնայ մինչեւ Մատթէոս Իզմիրլեանի աքտրէն դարձն ու պատրիարքական աթոռ բարձրանալը: Ապա, երբ Իզմիրլեան կ'ընտրուի Ամենայն Հայոց Կաթողիկոս, Դուրեան Սրբազան կ'ընտրուի պատրիարք 1909-ի Մայիս 22-ին: Սակայն, աւա՛ղ, մէկ ու կէս տարուան շփոթ ու դժուարին ժամանակաշրջանէ մը ետք Դուրեան Արքեպիսկոպոս, թողլով պատրիարքական աթոռը, կ'երթայ նորէն ուսուցչութիւն ընելու:

Իզմիրլեան Կաթողիկոսին վախճանումէն ետք, Գէորգ Արք. Սուրենեանցին հետ 1911-ին կաթողիկոսական ընտրելի կ'ըլլայ, սակայն եպիսկոպոս կը մնայ քուէ մը նուազ ստանալով:

Դուրեան Սրբազան կրկին ուսուցչական ասպարէզ կը նետուի դասաւանդելով այլեւայլ վարժարաններու մէջ, մինչեւ 1921, երբ Երուսաղէմի Միաբանութիւնը եւ Կ. Պոլսոյ Ընդհանուր Ժողովը զինք

կ'ընտրեն պատրիարք Երուսաղէմի Աթոռին:

Իրմով, Սրբոց Յակոբեանց վանքը կը սկսի վերածաղկիլ եւ Ս. Յակոբեանց Ուխտին վարկը կը բարձրանայ օտարներու եւ ազգին աչքին: Մշակութային առաքելութիւն մը ընթացք կ'առնէ Երուսաղէմի հայոց դարաւոր վանքին մէջ՝ փառաւոր էջեր արձանագրելով անոր պատմութեան մէջ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ

Պետրոս եւ Եղիշէ եղբայրներ, երկուքն ալ բանաստեղծ, սակայն՝ տարբեր բնաւորութիւններ ու խառնուածքներ: Մին ըմբոստ Աստուծոյ իրեն համար սահմանած սեւ ճակատագիրին համար, իսկ միւսը՝ նոյն այդ Աստուծոյ հնազանդ ծառան, Անոր փառքին օրհներգուն:

Դուրեան Սրբազան կանուխէն ցոյց տուած էր իր բանաստեղծական շնորհները, երբ տակաւին աշակերտական գրասեղաններու առջեւ էր: Աշակերտութեան շրջանին գրած է իր վաղամեռիկ եղբոր՝ Պետրոս Դուրեանի տապանագիրը:

Իր ստեղծագործութեանց շրջանը, արժէքի տեսանկիւնէն դիտուած, երկու յատկանշական մասերու կարելի է բաժնել: Մինչեւ 1900, իր գրական գործերը կը մնան ժամանակի ըմբռնումին ազդեցութեան տակ: Նախ, լեզուն գրաբարախառն է, եւ յաճախ գրաբարին միջամտութիւնը տիրական է: Տանք քանի մը օրինակներ.

«Յուղարկաւորք՝ սիրտք ի հեծմունս ուռուցիկ՝
Հետեւէին սրգազդեցիկ դագաղին՝
Ուր կը խոնգէր խարտեաշ դիմօք գեղեցիկ
Քըսանամեայ հէք միամօր պատանին»
(«ՆԱՅԻՆԻ ՊԱՏԱՆԻՆ»)

«Տըղմուտի ափանց արինոտ ալիք,
Ո՛հ, ո՛րքան արդեօք բղխեցին լալիք,
Երբ իւր սիրելեաց գըրկերէն Վարդան,
Թաւալզոր ինկաւ ի լուռ գերեզման,
Կամ ինչպէ՞ս արդեօք նոճիք Արտագու,
Ողորմ մըռընչմամբ ձայն տուին մահու»
(«ՊԱՏԵՐԱԶՍ ՎԱՐԴԱՆԱՆՅ»)

Քերթուածներն ունին, ինչպէս ըսինք, ժամանակին տեսակ մը պահանջք դարձած հայրենասիրական ոգի (օր.՝ «Պատերազմ Վարդանանց»), խրատական («Ապագայն») եւ կրօնական («Նայինի

Պատանին») բովանդակություն:

Դուրեան Սրբազան առաջին շրջանին իր գրած բոլոր քերթուածները այրած է՝ հազիւ թողլով քանի մը նմոյշներ: Տակաւին, մինչեւ 1908 իր ստեղծագործութիւններուն մէջ կ'իյնան դասագիրքեր, բանասիրական երկեր եւ յօդուածներ:

1910-էն ետք Դուրեան Սրբազանի ստեղծագործութեանց մէջ վճռական բարեփոխութիւն մը տեղի կ'ունենայ: Այս շրջանէն սկսեալ, ան նոր ոգիով ու շունչով յառաջ կը տանի իր բանաստեղծական աշխատանքը, մինչեւ իր ծերութեան յետին վայրկեանները՝ հիւսելով բանաստեղծի իր արժանիքին փայլուն դափնեպսակը:

ԻՐ ԳՈՐԾԵՐԸ

Դուրեան Սրբազանի գործերը կարելի է բաժնել երկու մասերու.

ա) Պատմա-բանասիրա-քննական, եւ

բ) Քերթողական:

Անշուշտ, դուրս կ'իյնան իր կատարած թարգմանութիւնները:

Ասոնցմէ՛ գինք անմահացնող գործերը իր քերթուածներն են, որոնց մէջ գլխաւոր հատորիկը կը կազմէ «Հովուական Սրինգ»-ը: Ատկէ՛ գատ ունի «Վարդապետական Քերթուածներ», «Տոհմայինք», «Դրուագներ Մանուկ Յիսուսի Կեանքէն», «Քանդակներ Անապատային Կեանքէն» հատորիկները, ինչպէս նաեւ օտար զանազան հեղինակներէ եւ Ներսէս Շնորհալիէն (կրօնական քերթուածները) թարգմանութեանց հատոր մը: Այս գործերը, ինչպէս նաեւ «Այբուբենք Հայ Բանասիրութեան» ուսումնասիրութիւնը Դուրեան Սրբազան գրած է ընդհանրապէս իր ստեղծագործական գործունէութեան երկրորդ շրջանի ընթացքին (1900-էն ետք):

Մինչեւ 1900 իր գործերն են. «Ընտիր Ասացուածք», «Բառագիտութիւն», «Ընթացք ի Գրոց Բարբառ»-ի Ա. եւ Բ. տարիները (Գ. տարին հրատարակուած է Երուսաղէմի մէջ), «Պատմութիւն Հայ Մատենագրութեան», «Մեկնութիւն Մատթի Աւետարանին», «Ազգ. Քննական Պատմութիւն», «Կրօնից Պատմութիւն», եւ տակաւին բանասիրական եւ քննադատական այլ յօդուածներ՝ ցրուած զանազան թերթերու մէջ:

ԼԵԶՈՒ ԵՒ ՈՃ

Դուրեան Սրբազան ունի պարզ եւ խնամեալ լեզու, ճոխ՝ այլաբանութիւններով եւ պատկերներով: Ունի ճոխ բառամթերք, իրաբանչիւր բառ իր տեղին գործածուած, ճշգրիտ նշանակութիւն տուող:

Զմայլելի են իր գտած պատկերները՝ այնքան շատ իր քերթուածներուն մէջ: Ահաւասիկ հատ մը.

«Ա՛լ արծակէ՛ գիս, Տէ՛ր, եկաւ ժամանակ
Որ ոսկորներս խաղաղին,
Բայց մէյ մա՛լ Դուն գիս գրկէիր, որ համակ
Ողսը չըլլամ դագաղին»

(«ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ»)

Աստուծոյ գիրկը: Միակ յոյսն ու հեռապատկերն է ան դագաղին ու մահուան սարսռազդեցիկ երեւոյթին դիմաց՝ «հողին հարկատու», «անխռով մութի սիրահար» եւ «տիղմին անարգութիւնը» եղող անհաւատ մարդուն:

Դուրեանի հանճարեղ միտքը շուտով կը գտնէ հրաշալի այլաբանութիւն մը՝ Յիսուսի ակնարկուած, երբ Սիմէոն Ծերունին իր գիրկը կ'առնէ մանուկը.

«Յետոյ սեղմեց պինդ խառնումով ուժգնակի
Աստուածակիր զանգուածին կաւը բոսոր...»

(«ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ»)

Պաճուճանքէ՛ գերծ, սակայն, ատով հանդերձ, տարօրէն գեղեցիկ իր լեզուին ու ոճին, մտածումներուն եւ զգացումներու զուգակցութեան եւ լեզուի բծախնդիր մաքրութեան է որ կ'ակնարկէ Գարեգին Եպս. Տրապիզոնի, երբ կ'ըսէ. «Սեթեւեթէ՛՛ գգոյշ՝ իր ոճը կը զգենու մերթ վայելչութիւնը արշալոյսներու եւ վերջալոյսներու եւ մերթ մեծավայելչութիւնը հիւսիսայգերու: Անոր մէջ դուք կը տեսնէք կրկներեւոյթը իր հոգիի գեղեցկութիւններուն: Զգայութիւն եւ զգացում անխառն շարապատումով մը կը զուգակցին՝ քաղցրահնչիւն երաժշտութեամբ մը թրթռուն իր այս նկարչագեղ ոճին մէջ: Մաքրապաշտ ըլլալու աստիճան լեզուական բծախնդիր անբծութիւն մը նկարագիրն է այդ ոճին»²:

ՔԵՐԹՈՂԱԿԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Հոգեւորականի եւ ուսուցիչի ասպարէզները մեծ ազդեցութիւն ունեցած են Սրբազանին վրայ, եւ այդ ազդեցութեանց տակ է որ ան տուած է կրօնաշունչ եւ խրատական տաղեր:

Իր քերթուածներուն մեծամասնութիւնը թէեւ ունին զուտ սուրբգրային բովանդակութիւն եւ խորք, սակայն տրուած են արդիակա-

նացած տարագներով եւ այնպիսի ճարտարութեամբ, ճաշակի նրբութեամբ մը, որ անոնք եղած են արուեստի գոհարներ: Իր քերթուածներուն մէջ կը հաւասարակշռուին մտածումն ու զգացումը: Անոնք զուտ զգացական չեն եւ ոչ ալ մտածողական՝ զգացումէ գերծ:

Քերթուածները թէ խորքի, մտածման եւ թէ ձեւի տրամաբանական կարգաւորում մը ունին, ինչ որ յատուկ է դասական արուեստին: Իր բանաստեղծութիւնները երբեմն ունին հակադրութիւններ գրուած զուգընթացաբար եւ ըստ տրամաբանական կարգի: «Անառակը» առնենք իբր օրինակ.

«Անէ՛ծքըդ, Հա՛յր, փոխեց ոսկիս մութ պըղինծի,
Բայց քանի որ շամբուշ³ կուռք մը պէտք էր ինծի՛
Ես պըղինծով ալ պատրանքներ ըրս ծուլեցի»:
Ատոր հակադիր

«Օրհնութի՛ւնդ, Հա՛յր, փշրած եմ կուռքս անհանձար
որ գիս խաբեց չարաչար...»:

Նոյնպէս երկրորդ, երրորդ եւ մինչեւ եօթներորդ տունը, այսպէս շարունակական հակադրութիւններ կը պարզեն:

Աչքառու է իր բանաստեղծութեանց մէջ նմանահունչ բառերու գործածութիւնը, ինչ որ երաժշտականութիւն մը կու տայ քերթուածին: Այսպէս.

«Եթէ փըրկանք մը հայցողին
Տըլի պըրկանք մը չարաշուք...»

.....
Եթէ շաւիղ մը խնդրողին
Բաւիղ մը ցոյց տուի անհետ...»
(«ՊԱՏԻԺԸ»)

«Հառաչեց նա ծովու շառաչք մ'անսահման...»
(«ԱՊՐՈՒԾ ԵՐԱԶ ՄԸ»)

Ճիշդ այս նմանահունչ բառերու գործածութեան է որ կ'ակնարկէ Գարեգին Եպս. Տրապիզոնի. «Դուրեան երգ մը ունի ներդաշնակ, երաժշտութիւն մը գերզգայնացնող նմանահնչիւն եւ արտայայտիչ բառերու, որոնցմով կ'ընդելուզէ յաճախ անբռնազբօս ասընթերադրութեամբ մը իր տաղերը»⁴:

Ունի նաեւ տարագներու կրկնում, ինչպէս.
«Եթէ ինծմէ "հաց" ուզողին

Քար մը տուած եղայ երբեք...

.....
Եթէ ինծմէ "ծու" խնդրողին
Տըլի "կարիճ" մը փոխարէն...»
(«ՊԱՏԻԺԸ»)

«Թէ պաշտումի թափն ունենաս
Տէրն գոյգ մը թեւ քեզի կու տայ...

.....
Թէ բարծունքէ մ'խօսիս իր հետ
Ինքը քեզի շէշտ մը կու տայ...»
(«ԽԱԶԸ»)

Նոյնպէս, ունի նոյն մտածումը տարբեր գունաւորումներով եւ տարբեր տարագներով տալու սէր մը, որոնց լաւագոյն օրինակները կրնան հանդիսանալ «Կը սիրե՞ս գիս», «Խաչը», «Մի՛ մերծենար յիս», եւ այլն:

Վերջապէս, իր քերթուածները, նկարագարուած եւ լի վերելք մատնանշուած յատկութիւններով, պատկերներով եւ այլաբանութիւններով, ունին հաղորդականութիւն մը, այնպիսի հեշտալի եւ քաղցր զգայութեանց մթնոլորտ մը, որ ընթերցողը նիւթն կտրուելով կը փոխադրուի քերթուածին իր առջեւ բացած աշխարհը, եւ կը նոյնանայ այնտեղ գործող անհատներուն հետ: Մէկ խօսքով, ընթերցողը կ'ապրի՝ քերթուածը աւելի՛ քան կը կարդայ:

ԿՐՕՆՔԻ ՄԱՐԴԸ ՔԵՐԹՈՒԾՆԵՐՈՒՄ ՄԷԶ

Դուրեան Սրբազան իբրեւ կրօնական, ինքզինքը միշտ արթուն եւ զգօն կը պահէ եւ իբրեւ կրօնաւոր՝ նոյնիսկ այն բանաստեղծութեանց մէջ, որոնց նիւթը կինն է: Ան բնաւ իր ասպարէզին պահանջած լրջութենէն եւ անոր տուած բարծր դիրքէն չիջնար միշտ գիտակից մնալով իր կոչումին: Ինք «Քաջ հովիւ»-ն է իր ժողովուրդին, եւ Տէրը կը փորձէ զինք. «Կը սիրե՞ս գիս...»: Պատասխանը դրական է անշուշտ.

«-Այո, գիտես թէ կը սիրեմ ըզքեզ, Տէ՛ր.
Յորչափ դողդող իմ այս շուրթերս խօսին,
Յորչափ ծովուն այս ալիքները հոսին...
Քուկդ են բոլոր մեր տենչանքներն ու ուխտեր,
.....»

... Քուկդ են բոլոր մեր պաշտումներն ու վիշտեր,

... Քուկդ են բոլոր մեր հոգիներն ու սիրտեր»:

Զինք սիրող հովիւին Տէրը կը պատասխանէ.
«-Գնա արածել Իմ ոչխարներս անձանձիր,
Ու այս է վարձքդ եթէ գիս շատ սիրեցիր»:
(«ԿԸ ՍԻՐԵ՞Ս ԶԻՍ»)

Դուրեան Սրբազան շատ լաւ կը տեսնէ ապագան: Ան գիտէ թէ պիտի գան օրեր երբ կրօնքն ու պաշտամունքը պիտի ըլլան լոկ հաճոյք եւ հաճելիութիւն: Այս իրողութիւնն է որ կը յայտնէ Աբբայ Պամբոյի բերանով.

«...Աբբան ծեծեց կուրծքն, ըսաւ. “Վա՛յ մեզի,
Որդեա՛կ. պիտի գան օրեր այնպիսի
Ուր մարդիկ իրենց Աստծոյն պաշտօնն
Իրենց հաճելի ձեւովն, օն եւ օն,
Պիտի կատարեն, մոռնալով ինքնին,
Մեղքի ապաշաւն ու քօղն արցունքին...”»
(«ԱՅՐ ՊԱՄԲՈՅԻ ԿԱՐԾԻՔԸ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»)

Իբրեւ ճշմարիտ քրիստոնէայ եւ Յիսուսի Աւետարանին քարոզիչ, ան յոռետես չէ մահուան հանդէպ. ճշմարիտ հաւատացեալին եւ արդարին համար մահը ոչինչ է.

«Ի՞նչ է մահը արդարին, կարճ գիշեր մ'ուր,
Կը լուծուի խոր երկունք մը նոր արեւու...»
(«ԷՄՄԱՌԻՍԻ ԾԱՄԲՈՐՂՆԵՐԸ»)

Ընդհակառակն, ան կը փնտռէ մահը՝ փոխանակ անկէ սարսափելու, որովհետեւ կը գիտակցի թէ ան սկիզբ մըն է եւ ոչ վերջ.

«Թող հնչէ կոչմանս վայրկեանը յետին.
Զիս փառքերուդ մէջ ընդունէ՛ Քեզ մօտ.
Ինչ փոյթ թէ երկրի շողերն անհետին,
Կ'ողջունեն աչքերըս նոր առաւօտ»:
(«ԿԵՐԶԻՆ ԿԱՅՐԿԵԱՆԸ»)

Եղիշէ Սրբազան Դուրեան մեր կրօնական քերթողութեան առա-

ջին շարքերուն վրայ կու գայ Նարեկացիէն ու Շնորհալիէն ետք:
Ան տուած չէ ստուար հատորներ բանաստեղծութեանց, սակայն իր տուած «քիչ»-ը, արդէն ընտրուած ու ազնիւ, հասած է արուեստի բարձր մակարդակի մը:

Իր քերթուածներու հատորիկները այնքան խորութեանք դրոշմուած են իր անձի խառնուածքովն ու տիրական ներկայութեամբը, որ կարելի չէ զինք գրական որեւէ դպրոցի մէջ զետեղել.

Եթէ մեծ է իր արժէքը որպէս բանաստեղծ եւ ոչ նուազ որպէս պատմա-բանասէր, մեծ է նաեւ իր արժէքը ուսուցչական եւ հոգեւորական ասպարէզներուն մէջ իր գործունէութեամբ:

Ան սերունդներ դաստիարակած ու ներշնչած է անդադար աշխատելով ու քարոզելով յիսուն երկար տարիներ: Իր քարոզներով եւ ճառերով հմայած է ժողովուրդը եւ իր ամբողջ ունեցածը փոխանցած իր աշակերտներուն: Աստուծոյ հանդէպ իր սէրը իր վրայ պարտականութիւն է դրած հնազանդելու աստուածային պատուէրին:

«- Գնա արածել Իմ ոչխարներս անձանձիր,
Ու այս է վարձքդ եթէ գիս շատ սիրեցիր»,

Եւ ինք իրեն յանձնուած ոչխարներուն ճարակ է տուած իր միտքի գիտական ամբողջ պաշարը, ու որպէս քաջ հովիւ, այդ աշխատանքին մէջ գտած իր վարձատրութիւնը:

Ու այդ «վարձք»-ը իր անմահ անունը...

ՄԻՆԱՍ ՍՐԿ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ,
(Ընծայարան Ս)

3 Հոկտեմբեր 1963 – Պիքֆայա

ՄԱՍԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

- 1) «Եղիշէ Ս. Դուրեան, Բ. Շնորհալի»
- 2) «Մշակն Ու Վարձքը»:
- 3) Եղիշէ Ս. Դուրեան, «Սրբազան Քնար»

¹ Պաճուճանքէ («Գլածոր»ի խմբ.):

² «Եղիշէ Ս. Դուրեան, Բ. Շնորհալի» էջ 31-32

³ Մուշգնած վաւաշոտ («Գլածոր»ի խմբ.):

⁴ «Եղիշէ Ս. Դուրեան, Բ. Շնորհալի» էջ 32

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ	5
ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԴՈՐԵԱՆ (Կենսագրական գիծեր)	7
ԱՍՏՈՒԾԱԲԱՆԱԿԱՆ-ՄԵԿՆՈՂԱԿԱՆ	11
ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ (Աստուածաշունչ Մատեանը)	13
ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԸ ԵՒ ԶԱՅՆ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԵՐՊԵՐԸ	27
ԱԻԵՏԱՐԱՆ	39
ՀԱՅՐ ՄԵՐ	46
ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ	63
ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆ (26-28-րդ գլուխներու մեկնութիւն)	78
ՔԱՐՈՋԱԽՕՍԱԿԱՆ	137
ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ	139

ԾՆՈՒՆԴ, ԱՍՏՈՒԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ	145
ՈՐՊԷՍՁԻ ԶՄՆԱՆՔ ԱՌԱՆՑ ՄՍՈՒՐԻ ԵՒ ԽԱՆՁԱՐՈՒՐԻ	149
ԿԵԱՆՔԸ ՏԱԼՈՎ՝ ԿԵԱՆՔ ԳՏՆԵԼ	157
ՔԱՌԱՄՆՕՐԵԱՅ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ	164
ՅԱՐՈՒԹԵԱՄԲ՝ ՅԱՐՈՒՑԵԱԼԻՆ ՀԱՄԱՐ	169
ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ	176
ԱՆԾԱՆՕԹ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ	182
ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆԻ	187
ՎԵՐԱՓՈԽՈՒԻԼ ՏԻՐԱՄՕՐ ՀԵՏ՝ ՏԻՐՈՋ ՀԵՏ ԸԼԼԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՅԱԻՏԵԱՆ	192
ԱՍՏՈՒԾԱԾԻՆԸ՝ ԿԻՆ ԵՒ ՄԱՅՐ	199
ԹԱՐԳՄԱՆՉԱՑ	204
ԶԱՍՏՈՒԾ ՏԵՄՆԵԼ	207
ՍԷՐԸ	211
Ի՞ՆՉ ԲԱՆԵՐՈՎ ԿՐՆԱՅ ՊԱՐԾԵՆԱԼ ՔՐԻՍՏՈՆԵԱՆ	216
ԺԱՄԱՆԱԿԱՎՐԷՊ ԲԱՆԵՐ	225
ԿԵԱՆՔԸ ԱԶԱՏՈՒԹԵԱՄԲ Է ԿԵԱՆՔ	231

ՍՈՒՐՔԵՐ ԵՒ ՍՐՔՈՒԹԻՒՆ	237
ՀՈԳԵՒՈՐ ՏԱՊԱՆԸ՝ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ	242
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ	251
ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԸ ԵՒ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ	253
ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻՆ ՏԵՂԸ ԵՒ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ	262
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ 1700-ԱՄԵԱԿԻՆ ԴԻՄԱՅ ԵՒ 21-ՐԴ ԴԱՐՈՒ ՄԵՄԻՆ	286
1700-ԱՄԵԱԿԸ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ	302
ԻՆՉՊԷՄ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՍՐՔԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ	323
ՄԵԾ ԵՂԵՈՆ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՍՐՔԱԴԱՍՈՒՄ	345
ՁԱՅՆ ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ	347
(Ապրիլեան Եղեռնի 65-ամեակին առիթով)	
ՊԱՅՔԱՐԻ ԿՈՉ ՀԱՄԱՏԱՐԻՄ ՅԵՏՆՈՐԴՈՒԹԵԱՆ	350
ՏԵՍԻԼՔ ՈՉ ԵՂԵՈՆԻ, ԱՅԼ՝ ԿԵԱՆՔԻ	357

ՇԱՐԱԿԱՆ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ	361
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ	393
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԻՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ	395
ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ ՄԵՂԵՂԻՆԵՐՈՒՄ, ՏԱՂԵՐՈՒՄ ԵՒ ԳԱՆՁԵՐՈՒՄ ՄԱՍԻՆ	414
ՊԱՏՄԱԿԱՆ	435
ԿԻԼԻԿԻԱՆ՝ ԻՔՐԵՒ ՓՈՔՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՐԾԱԹԻ ԴԱՐԸ (ամփոփ կէտեր)	437
ԶՐՈՅՑՆԵՐ ԵՒ ԵԼՈՅԹՆԵՐ ԶԱՆԱԶԱՆ ՆԻԹԵՐՈՒ ՇՈՒՐՋ	443
ԿՐՕՆՔԻ ԵՒ ՀԱՄԱՏՔԻ ՎԵՐԱՔԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ	445
(աշակերտական հանդիպում-գրոյց)	
ԱՐՀԵՏՏԱԿԱՆ ՎԻԺՈՒՄԸ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ	462
ԵՐԱԶ, ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆ, ՊԱՐՏՔ ԵՒ ՀԱՄԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ	476
(խօսք երիտասարդութեան)	
ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ՝ ՀԻՄ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ	484
1700-ԱՄԵԱԿԸ ԵՒ ԱՆՈՐ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ՎՐԱՅ	492

Ի՞նչ է եԿեղեցիւն	503
Սոխոբերն ու սոբոթիւնն եւ սեր եԿեղեցիոՅ Կեանքը	508
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ	513
ԱՂԱԲՆԻԻՆ ՄԱՀԸ	515
ԿԵՀԱՓԱՈՒ Ե՛՛ ԿԵՀԱՓԱՈՒ	520
ՅԻՍՆԱՄԵԱԿԸ ԵՒ ԴՊՐԵԿԱՆՔԸ	524
ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ (գրական դէմք)	528
ԲՈԿԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	538

ՋԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

ԶԱՍՏՈՒԱԾ ՏԵՄՆԵԼ
(Ժողովածու)

Կազմելը, շարելը եւ յառաջաբանը՝	Յակոբ Քորթմոսեանի
Խմբագրումը եւ վերատեսումը՝	Գէորգ Եազըճեանի
Էջադրումը եւ ձեւաւորումը՝	Արամ Նազարեանի
Կողքին վրայի պատկերը՝	Սմբատ Ղազէլեանի

Տպագրութիւնը՝ օֆսեթ, թուղթը՝ book paper 80գր, չափը՝ 100x70^{1/16},
34 տպ. մամուլ, տպաքանակը 1000 օրինակ,
տպագրվել է « Վարդ Հրատ » ՍՊԸ տպագրատանը,
Էլ. հասցե՝ vardhrat@mail.ru